

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՕՐՊՈՒՄՆԸ ՈՒՆԵԱՆԱԸ, ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԱԿ
ՀՈՒՄԱՆԻՏԱՑՔԵԼԱՂԱՅԵԼԻ ԳՐՔԵՐ:

ԹՎՈՅՆ ԳՐՔԵՐԻ ՄՇԵՂՈՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԸ "ՀԱՄԱՀՈՅՔՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

www.freebooks.am

ԸՆԴՈՒՄ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:
ՑԱՆՎՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:



ԳՐՔԻՑ ՄԵՔ՝ freebooks@rambler.ru

ՔՐՈՆԻԿՆԵՐ

ՀԱՅԿԵՔԼԱՐԵՇՈՒՆՈՒԹՅԱՆ



1

ՇԵՔՍՊԻՐ

ՔՐՈՆԻԿՆԵՐ

ՌԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՅԻ
ԷՎ
ՀԵՆՐԻԿ ՍԵՎԱՆԻ

1

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1972

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ

Գ Ր Ա Կ Ա Ն Հ Ո Ւ Շ Ա Ր Չ Ա Ն Ն Ե Ր



SHAKESPEARE

CHRONICLES

TRANSLATED BY
KHACHIC DASHTENTZ
AND
HENRY SEVAN

1

PUBLISHING HOUSE
OF THE ARMENIAN ACADEMY OF SCIENCES
YEREVAN 1972

ՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐԻ

ԽՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՈՂԵԳԻԱ

Ա. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (նախագահ)
Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ, Ա. Բ. ԿԱՐԻՆՅԱՆ, Ռ. Վ. ԶԱՐՅԱՆ
Գ. Ն. ՀՈՎՆԱՆ
Գ. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (գլխ. փարապար)

Քարգմանությամբ խմբագրեց
ԱՐՈՒՍ ԹԱԳԵՎՈՍՅԱՆ և ԱՐՄԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ընդհանուր խմբագրությամբ
ՌՈՒԹԵՆ ԶԱՐՅԱՆԻ

Ш Е К С П И Р

Х Р О Н И К И

1


(на армянском языке)

Издательство АН Армянской ССР
Ереван 1972



ՌԻԶԱՐԴ ԵՐԿՐՈՐԴ





Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ե Ր

ՌԵԶԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԸ

ՋՈՆ ԳՈՆՏ, Լանկաստերի դուխը

ԷԴՄՈՆԻ ԼԱՆԳՆԻ, Յորքի դուխը

ՀԵՆՐԻ ԲՈՂԻՆԲՐՈԿ, դուխ Չերիֆուրդ,

ԴՈՒՔՍ ՕՄԵՆՈՒ, դուխ Յորքի որդին

ԹՈՄԱՍ ՄԱՌԻՐԻ, Եսթոնի դուխը

ԴՈՒՔՍ ՍՈՒՌԻ

ԿՈՄՍ ՍՈՂՍՔԵՐԻ

ԼՈՐԴ ԲԵՐԿԼԻ

ԲՈՒՇԻ

ԲԵԳՈՏ

ԳՐԻՆ

ԿՈՄՍ ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

ՀԵՆՐԻ ՊԵՐՍԻ, սրա որդին

ԼՈՐԴ ՌՈՍ

ԼՈՐԴ ՎԻՂՐԻ

ԼՈՐԴ ՖԻՅՎՈՏԵՐ

ԿԱՌԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

ՎԵՍՏՄԻՆՍԵՐԻ ՎԱՆՔԱՅՐԸ

ԼՈՐԴ-ՄԱՐՇՈՒ

ՍԸՐ ՍՏԻՎԵՆ ՍԿՐՈՒՊ

ՍԸՐ ՊԻՐՍ ԷՔՍՏՈՆ

ՄԵ ԳԵՂԱՊԵՏ վալեսական գորախմբի

ԹԱԳՈՒՂԻ, Ռիչարդ թագավորի կինը

ՅՈՐՔԻ ԴՔՍՈՒՂԻՆ

ԳՂՈՍՏԵՐԻ ԴՔՍՈՒՂԻՆ

ԹԱԳՈՒՂՈՒ ՆԱԺԻՇՏՆԵՐԸ

Ռիչարդ թագավորի հորեղբայրները

Ջոն Գոնտի որդին, հետագայում Հենրի Չորրորդ թագավորը

Ռիչարդ թագավորի սիրելիները

Հարյե, մոնեստիկներ, սպաներ, զինվորներ, երկու պարտիզայտն, բանտապահ, պատգամաբեր,
ախոռապետ և ուրիշ սպասավորներ

Տեսառանը՝ Անգլիա և Վալես



Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Լոնդոն: Ռիչարդ թագավորի պալատը:

Մտնում են՝ Ռիչարդ թագավորը իր շխմբով, Ջոն Գոնաթ
և սպասավորներ:

ՌԻՉԱՐԴ

1 Արժանահարգ Գոնա, ծերուկ Լանկաստեր,
Ըստ քո երդումի և կապվածության,
Բերե՛լ ես այստեղ դու Հերիֆորդին, Բաշարի որդուդ,
Որ նա վերստին բարձրագոչ կրկնի վերջին գանգատը
Քնդդեմ Նորֆոկի՝ Թոմաս Մաուրբու,
Որ անցյալ անգամ ազատ ժամ շեղավ ունկնդիր լինել:

ԳՈՆՏ

Բերել եմ, աեր իմ:

ՌԻՉԱՐԴ

Եվ ասա նաև, Բաշատեղյա՛կ ես,
Նրա բողոքը բխո՛ւմ է արդյոք հինավուրց սխից,
Թե՞ արժանապես, իբրև հպատակն իմ հավատարիմ,
Ուզում է կանխել գանի դեմ ուղղված մի որևէ դավ:

ԳՈՆՏ

Որքան շանացի ես մաղել նրան այդ խնդրի առթիվ,
Նա այդ դեսի մեջ շատ սոռչակի վտանգ է տեսնում
Ձեր դեմ ուղղված: Ոխից չէ. արքա:

ՌԻՉԱՐԴ

Այստեղ բերեմ նրանց: Երես առ երես
Եվ իբար վրա խոժոռ նայելով թող ազատուրեն
Բացվեն մեր առաջ և մենք կկշռենք
Ամբաստանյալին և ամբաստողին:
Նրանք երկուսն էլ ամբարտավան են և ցատումնակոծ,
Ծովի նման խուլ մոլեգնության մեջ և բունն՝ ինչպես բոց:

Մտնում են Բոլիբերուկը և Նորֆոկը:

ԲՈՒԽՆԲԲՈԿ

Թող երկա՛ր տարի բախտավոր ապրի ողորմած արքան,
Միակ գերագույն իմ սիրեցյալը:

ՆՈՐՅՈԿ

Օր օրի վրա թող բյուրապատկառ երջանկությունը,
Մինչև երկինքը խանդելով երկրի բախտավորության,
Չեզ անմահության փառքով սլակի:

ՌԻՉԱՐԴ

Մենք երկուսիդ էլ շնորհակալ ենք,
Բայց մեկը ձեզնից շողոմորթում է:
Այդ փաջ հայտնի է ձեզ այստեղ կոշող դրդապատեհառից,
Մեկը մյուսին ամբաստանելով անեղ դավի մեջ:
Չարմիկ Հերիֆորդ, երեսին ասա,
Թե ինչ հանցանք է մեր հանդես գործել
Թոմաս Մաուրերին՝ դուխը Նորֆոկի:

ԲՈՒԽՆԲԲՈԿ

Կասեմ նախապես, — երկի՛նք, դու վկա եղիր իմ խոսքին, —
Իբրև հպատակ ևս նվիրված եմ իմ բազավորին,
Մաղթելով նրան խիստ զգուշություն,
Եվ զերծ ապրեն ատելությունից
Ներկայացել եմ իբրև բողոքիչ այս վեհ սալանին:
Թոմաս Մաուրերի, այժմ իմ խոսք ևս քեզ և՛մ ուղղում,
Եվ իմ ողջույնը հիշիր անվրեպ. իմ խոսքի համար
Մարմինս պատրաստ է պատասխան տալու այս երկրի վրա,
Կամ երանելի հոգիս՝ երկնում:
Դու դավանան ևս և մի շարագործ,
Նենգության համար մի ֆիշ վեհ ծնված.

Բաժական ստոր՝ ապրելու համար:
 Որքան երկինքը ջինջ է ու բյուրեղ,
 Այնքան թխսերը սև են թվում այնտեղ:
 Գաժանան ես դու, խարդավան ես նենգ, ասում եմ կրկին,
 Այդ գարշ անունը ուժգին սեղմելով՝ քո պիղծ կոկորդին:
 Եվ իմ փափագն է, — այդ իրավունքը արքան է տալու, —
 Լեզվիս ստածը սրով փաստելու:

ՆՈՐՅՈՎ

Իմ ցուրտ բառերը թող չամբաստանեն սաստիկ հրայրքն իմ.
 Այստեղ կանացի կովատեղի չէ,
 Երկու բարկ լեզվի սուր բղավոցը
 Ձի կառող լուծել մեր միջև ծագած այս դատավենը:
 Հարկավոր է արչան ետքը գովացնել,
 Ինքս պարծենալ թեև շեմ կառող հեզ համբերությամբ.
 Որ ամենեկին ծպտուն չհանեմ.
 Ձեր հանդեպ տածած հարգանքը, արքա,
 Կաշկանդում է ինձ իմ ազատ խոսքի սանձերն արձակել
 Եվ մտրակները հարվածել այնպես,
 Որ այդ խոսքերը՝ մատնության մասին կրկնապատկվելով
 Վերադառնալին նրա կոկորդը:
 Երբ շիկներ նա արքայական արյունից սերված.
 Երբ շիկներ նա ազգականը իմ թագավորի.
 Մառտի կգոչելի, կքեի փրան
 Եվ կանվանելի գրպարտիչ, Երկշոտ և նենգ սրիկա:
 Փաստելու համար, որ այդպիսին է՝
 Կովի մեջ նրան ես կառտոնեի առավելություն.
 Բայց հատուցումից նա չէր իուսափի.
 Երբ ես նույնիսկ հարկադրվելի նրա ետևից
 Վազելու մինչև Ալպերի սառած գառիթափերը,
 Կամ անմարդաբնակ մի որևէ վայր.
 Որ անվախորեն անգլիացին է իր ոտքը դրել:
 Իսկ այժմ պաշտպան կանգնած իմ պատվին,
 Հոգուս փրկության հույսով երդվում եմ՝
 Ամենաստոր կերպով ստում է:

ԲՈՒՆԵՐՈՎ

Վատասիրտ Երկշոտ, ահա նետում եմ իմ ձեռնոցը քեզ,
 Ի բաց վանելով ազգակցությունը թագավորական,

Եվ մոռանալով իմ բարձր արյան իշխանությունը՝
Վախդ մեծարան՛ն՛ ներկայացնելով:
Երե հանցապարտ սաբափր քո մեջ
Գեո պահպանել է մի քիչ գորություն,
Որ իմ ձեռնոցի համար կռահաս՝ կռացի՛ր ուրեմն:
Երդվում եմ դրանով և ասպետական պարտ ու պատշանով,
Որ մեկամարտում ևս քեզ կհաղթեմ:
Գու աչն ևս, ինչպես արդեն կոչեցի,
Երե շես կարող վատբարը լինել:

ՆՈՐՖՈԿ

Ձեռնոցը վերցրի: Վկա այս սուրբ,
Որ ասպետություն դրեց ուներիս,
Քո հրավերին պատասխան կտամ ևս արժանապես:
Թող մեկամարտը մեր վեճը հարթի.
Երե նենգ լինեմ, դավանան, մատնիչ,
Երե կովի մեջ շիճեմ անբիծ.
Թող ևս կենդանի վար չիջնեմ քամրից:

ՌԻՉԱՐԴ

Բայց մեր զարմիկը ի՞նչ մեղադրանք է բարդում Նորֆոկին.
Հանցանքը պետք է շատ ծանր լինի, որ կարողանա
Մեզ նրա հանդեպ վատ բան ներշնչել:

ԲՈՒԿՆԲԲՈԿ

Լսե՛ք ուրեմն. և իմ ասածին ևս կյանքիս գնով ասպացույց կտամ.
Նա ստացել է ուղիղ ուր հազար արծաթե դրամ.
Իբրև թե ոռնիկ գերազանցության ձեռ գինվորներին.
Բայց այդ գումարը վատնել է խենեշ գործերի վրա.
Ինչպես ուխտադրուժ և նենգ սրիկա:
Դրանից բացի, — և իմ ասածը պատրաստ եմ գեներով
Ես հաստատելու՝ այստեղ կամ ուրիշ մի որևէ տեղ,
Թեկուզ ծայրագույն եզրում աշխարհի,
Որ թափանցել է որոնող աչքը բրիտանացու, —
Որ այս երկրի մեջ տասնևութ տարի ծածկորեն գործված
Բոլոր տեսակի ռնիր ու դավեր
Սկիզբ են առնում այս խարդախ դժբախտ,
Դրանց գլուխն ու ակունքը նա է:
Ավելին կասեմ, — և կապացուցեմ ևս իսկությունը,

Այս ստախոսի ժանտ կյանքի գնով, —
 Ուր նա է դավել Գլոստերի դեմ և մեռցրել նրան:
 Նա դրդեց նրա խիստ դյուրահավատ հակառակորդներին
 Այդ սպանության: Եվ հետևաբար
 Յաճոզի, երկշոտ դավաճանի պես դավեց նրա դեմ,
 Ու բռավ դիսի անարատ հագին հորդ արչան միջով,
 Արյուն, որ նույնիսկ երկրի անբարբառ քարանձավներից
 Արելի անմեղ արյունի նման ինձ կոչ է անում
 Արդար վրեժի և բիրտ հատուցման: Եվ այս բազուկը
 Իմ փառավորյալ ծագմանը պատշաճ
 Այդ բանը կանի, և կամ այս կյանքը պետք է ընկնի ցած:

ՌԻԶԱՐԴ

Օ՛, որքան բարձր է խոյանում նրա կամքը անհողողող:
 Իսկ դու ի՞նչ կասես այդ մասին, Նորֆոկ:

ՆՈՐՅՈՒ

Օ՛, թող իմ արքան երեսը շուտ տա
 Եվ նրամայի իր ականջներին խլանալ մի պահ,
 Մինչև հասկացնեմ նրա արյունը նշավակողին,
 Թե ի՞նչ սատիճան աստված և մարդիկ
 Ատում են նման գարշ ստախոսին:

ՌԻԶԱՐԴ

Մեր աչքն ու ունկը անկողմնակալ են.
 Եզրայրս լինե՛ր, ո՛չ, Էթե լինե՛ր ժառանգը գահիս, —
 Մինչդեռ ով է նա՛ հորեղբորորդի, —
 Երդվում եմ մականիս ահեղ հարգությանը,
 Ոչինչ չէ՛ր կարող արտոնել նրան
 Այդքան մեծձե՛նալ մեր արյունին սուրբ, ոչ կ սասանել
 Աննվանելի հաստատությունը իմ անբիժ հոգու:
 Լսի՛ր, Մաուրի, նա էլ քեզ նման մեզ է հայտտակ,
 Այժմ դո՛ւ խոսի՛ր և շատ համարձակ:

ՆՈՐՅՈՒ

Ուրեմն կասեմ. դու, Բոլինբրոկ, նվաստ սիրտ ունես
 Եվ սառում ես քո խարդախ կոկորդով:
 Ես այդ գումարի երեք բաժինը, ինչպես որ կարգն է,
 Վնարել եմ արքայի գործին կալեում,
 Իսկ մյուս մասը վերցրի ինձ համար, այն հավանությանը,

Որ իմ մեծ արժան պարտ էր վնասել
 Մնացորդը ինձ այն անգին հաշվի, երբ ես մեկնեցի
 Գեղի Ֆրանսիա նրա քաղաքում քերելու համար:
 Գե, այժմ կույ տուր այդ անարգ սուտը: Գանձանք Գլոստերին.
 Նրան ես շեմ սպանել: Ամաշում եմ սակայն,
 Որ հապաղեցի այդ առնչությամբ ուխտս կատարել:
 Գալով ձեր մասին, ազնիվ կանկաստե՛ր,
 Առաքինի հայր իմ ախոյանի,
 Մի անգամ, իրոք, դարան եմ մտել ես ձեր կյանքի դեմ,
 եվ այդ հանցանքը տանջում է անվերջ իմ վշտոտ հոգին:
 Բայց վերջին անգամ սուրբ հապորդությունն առնելուց առաջ,
 Խոստովան եղա, հուզված խնդրելով ձեզնից բողոքյուն.
 Եվ ես հույս ունեմ, որ շնորհված եմ:
 Այդ է իմ մեղքը: Մնացյալ բոլոր պարսավանքները
 Արգասիք են լույսի ոխակալ մտքին մի անուպայի.
 Վեհերոտ ու նեղ մի դավանանի:
 Եվ ես քաջարտ ինձ կպաշտպանեմ այդ հարձակումից.
 Փոխադարձաբար իմ ձեռնապանը վառ շպրակով
 Այս մեծախոսի ոտների առաջ, այս դուժմանի.
 Որ նրա լանջի ընտիր արյունով հաստատեմ, որ ես
 Մի հավատարիմ ազնվական եմ: Ուտի, տեր արժա,
 Խնդրում եմ շաալ մի շնորհ անե՛ք
 Եվ դատաստանի օրը սահմանե՛ք:

ԹԻՉԱՐԳ

Ազնվականներ ցատումնարորբոք, լսե՛ք վնիոն իմ.
 Թող անկարգ մաղձն այդ մա՛հրվի առանց արեանհեղություն.
 Մեր դեղը այս է. — քեկ բուժակ շենք. —
 Կույր շարությունը պարման չէ երբեք:
 Մոռացե՛ք, ներե՛ք, հաշտվե՛ք իրար հետ, ձեռք մեկնե՛ք միմյանց,
 172 Չէ՛ որ այս ամսին արյուն չեն որում, ըստ մեք բժշկաց:
 Բարի հորեղբայր. ծածկի՛ր այդ ռխը իր նախախորշում.
 Նորֆոլկի դիսին մենք կհամոզեմք, իսկ դու՛ քո ուղուն:

ԳՈՆՏ

Որժան պատշան է խաղաղ դաշինքը իմ ծեր հասակին:
 Վա՛ր նետիք, որդիս, դիսի ձեռնոցը:

ԹԻՉԱՐԳ

Իսկ դու էլ. Նորֆոլկ, նրանը նետիք:

Շտապի՛ր, որդիս,
Ես հրամանը կրկնել շեմ սիրում:

ՌԻԶՄԱՐԴ

Նորֆոկ, վա՛ր նեախր, համառել պետք է:

ՆՈՐՅՈՎ

Ինձս կնետվեմ ոտքերիդ առաջ, անեղ քագավոր.
Իշխել կարող ես դու կյանքիս վրա, բայց ոչ իմ պատվի.
Առաջիկը ես քեզ եմ պարտական, բայց սուրբ անունն իմ,
Որ պիտի ապրի իմ շիրմի վրա մահինն ռիւերիմ,
Անգոր ես ծածկել ժանա նախատինեով:
Ես անարգված եմ և ամբաստանված, այսպանված այստեղ,
Չբարտաշի թունտս նիգակով խոցված մինչև սրտիս խորք.
Այդ վեճի համար չկա բայասան, բացի թունալից
Այդ շարախոսի սրտի արյունից:

ՌԻԶՄԱՐԴ

191 Մի՛րե քեզ պարտ չէր իմ հրամանը:
Ե՛ս սուր ձեռնոցը: Առյուծն է զսպում միշտ ընձառյուծին:

ՆՈՐՅՈՎ

Բայց անկարող է
Նա ընձառյուծի բծերը փոխել: Պատիվս Լաւ առ,
Եվ ես կգիջեմ նրա ձեռնոցը: Թանկագին տեւ իմ.
Ամենաազնիվ զանձր աշխարհում
Անրիծ համբավն է: Առանց համբավի
Մարդիկ նման են ջրդեղված խեցու կամ դանված կավի:
Անեւկյուղ ոգին մի ազնիվ կեծում
Ճոխ մարգարիտ է՝ փակված սնդուկում:
Պատիվն իմ կյանքն է. համաձուլված են նրանք այնքան լավ,
Պատիվն ինձնից առ՝ կյանքս վերջացավ:
Արդ, անգին տեւ իմ, արտունիւ պատվիս համար մարտնչել.
Պատվով եմ սպրում և ի սեր պատվի պատրաստ եմ մեռնել:

ՌԻԶՄԱՐԴ

Հուրկրորոցի, նեախի՛ր ձեռնոցը. դո՛ւ օրինակ տուր:

ԲՈՒԽՆԵՐՈՅ

Յ՛, աստված, փրկի՛ր իմ հոգին մեղքից այսչափ խորախոր,
 էլ ինչպե՛ս պետք է ես իմ հոր աչքին նայեմ ակնկոր,
 Կամ ամբաստանեմ իմ վեհուրջունը
 Գունարափ դարձած մուրացկան վախով,
 Ի դեմ այս ժմերու ժանա վեհերոտի: Նախման իմ լեզուն
 Վերք կտա պատվիս այդպիսի շնչին անիրավուրջամբ.
 Կամ կարտասանի այդքան ցած մի խոսք, իմ ատամները
 Կոպատառուեն գերիշ սլատնառը նահանջող վախի
 Եվ արշունածոր ետ կշարտեն
 Այդ նախաախները նրա երեսին,
 Որ ամոքանիս պատուպարան է:

Գոնար գեռում է:

ՌԻՉԱՐԴ

Մենք հրամայելու համար ենք ծնվել, ո՛չ թե խնդրելու:
 Քանի որ շուտով ի վիճակի շենք ձեզ հաշտեցնելու,
 Պատուաստվեք ուրեմն,—իսկ կյանքով դրան պատասխան կտամ,—
 Քովենտրի գնալ սուրբ Լամբերտի օր.
 Թող ձեր սրերն ու նիզակներն այնանդ դառնան դատավոր,
 Եվ լուծեն ժայթֆող ձեռ ատելություն վեճը խորախոր:
 Չեզ միաբանել չեղավ մի հնար,
 Արդ քաջագույնի սուրբ թող վնդի, թե ով է արդար:
 Լորդ-Մարշալ, իսկույն հրաման տվեք մեռ սպաներին.
 Որ շտապ մեկնեն՝ կարգ հաստատելու այս դատամարտին:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Նույն վայրը:


Սենյակ Լանկաստերի դքսի պալատում:
 Մտնում են Գոնար և Գլաստերի դստերին:

ԳՈՆՏ

Ավա՛ղ, Վուդստոֆի արշունի ձայնը,
 Ավելի համառ, քան ձեր ողբերը,
 Փուրպցնում է ինձ վրեժի կոշեղ իր դահիճներին:



Ռիչարդ Երկրորդ



Լոմբարդի Կամպոնատիկոն

Բայց այդ պատիժը, եթե կախված է այն մարդու ձեռքից,
Ու այդ հանցանքի կատարածուն է,—
Մի սխալ, ու մենք շենք կարող ուղղել,—
Երկինքն, ու երևն, բոլ այդ դատն անի,
Իսկ նա, երբ տեսնի, որ երկրի վրա ժամը հասել է,
Կրակ բափելով վերջ կտա բոլոր այդ դահիճներին:

ԳՔՍՈՒՂԻ

Եղբայրությունը չի դրդում ևս մեջ կատաղի գրգիռ,
Կամ սիրո տապը պալե՞լ է արդյոք ծերացած սրտում,
Էզվարդի բոլոր յոթ ուղիները,— իսկ մեկը դու ես,—
Տոբ անոթ էին նրա սրբազան արյունով լցված,
Կամ յոթ պայծառ նյուղ միևնույն ծառի արմատից բուսած:
Այդ յոթ նյուղերից ոմանք բնության կամքով շոբացան,
Մի քանի նյուղը վերին տեսչության ձեռքով հատվեցին:
Մակայն Թոմասը, իմ ամուսինը, իմ Գլոսսերը, իմ կյանքի լույսը
Նա մի անոթ էր էզվարդի անգին արյունով լցված,
Մի ծաղկալից նյուղ՝ արժանի տոհմի արմատին կպած.
Անոթն է կոտրած և աստվածային հեղուկը քափված,
Թափ նյուղը դահիճի կացնով տապալված,
Եվ ամուսն կանաչ տերեր թռչնած:
Օ՛, Գոնա, նա համակ ևս արյունից էր, և այն արգանդը,
Նույն այն մետաղը, այն կաղապարը, որ քեզ է նույնը՝
Չույել էր նրան: Թեպետ դու այժմ ապրում ես, շնչում,
Մակայն նրա մեջ դու ես սպանված, դու, որ մեծապես
Կամակից եղար ևս հուր վախճանին,
Քո բշխա երբոր մահը տեսնելով:
Չէ՞ որ Գլոսսերը պատկերն էր ևս հուր:
Վհատությունը դու մի անվանիք համբերություն, Գոնա,
Այդպես անհատաչ տոհմով եղբոր սպանությունը,
Դու ցույց ես տալիս դեպի ևս կյանքը տանող մերկ նամական
Ուսուցանելով ժանա մարդասպանին,
Թե ինչ միջոցով վերջ տա ևս կյանքին:
Ինչ որ կոչում ենք մենք համբերություն նվաստ մարդկանց մեջ,
Ազնիվ մարդկանց մոտ՝ դժգույն ու պղերգ երկշտություն է:
Ուրիշ ի՞նչ տեսն: Կյանքը պահելու լավագույն ուղին,
Իմ Գլոսսերի՝ ևս եղբոր մահվան վրեժն առնելն է:

ԳՈՆՏ

Դատողն աստվածն է: Աստծո տեղապան,
Եվ նրա տեսնով յուղերով օծված մեծ փոխանորդն է
Այդ սպանության պատասխանատուն: Եվ թող երկինքն էլ
Վրեժխնդիր լինի, եթե սխալ է: Ես շեմ հանդգնի
Ձեռք բարձրացնելու նրա գերագույն սլաշտոնյայի դեմ:

ԴՔՍՈՒՆԻ

Ավա՛ղ, ես որի՛ն իմ գանգատն հայտնեմ:

ԳՈՆՏ

Գանգատվիր աստծուն,
Աստված է այրի կնոջ հովանին և հեներանը:

ԴՔՍՈՒՆԻ

Այդպես էլ կանեմ: Մնաս բարյա՛վ, Գոնտ,
Գու շտապում ես դեպի Քովենտրի դիտելու այնտեղ
Մեր Հերիֆորդի և նեղ Մաուրբու նակատամարտը:
Օ՛, իմ ամուսնու դժբախտությունը
Թող Հերիֆորդի նիգակին բազմի,
Որ քափով խրվի այդ մարդախոշոշ Նորֆոկի կուրծքը.—
Իսկ եթե դաժան բախտով ձախողվի հարվածն առաջին,
Թող նրա կուրծքը այնպես ծանրանա մեղքերի ներքո,
Որ փրփրակալած նծույզի մեջքը շարդվի այդ բեռից,
Եվ ստորագույն նրա հեծյալը գետին շարտված՝
Իր շունչը փչի զարմիկիս առաջ:
Մնաս բարյա՛վ, Գոնտ, քո եղբոր կինն էի մի ժամանակ ես,
Իսկ այժմ վիշտը դարձավ ընկերն իմ հավիտենապես:

ԳՈՆՏ

Մնաս բարով, քույր, ես պետք է շտապ գնամ Քովենտրի,
Երկնավոր տերը թող մեր երկուսի կյանքը պահպանի:

ԴՔՍՈՒՆԻ

Սակայն մի խոսք էլ. վիշտը վայր ընկնող գնդակի նման
Վերև է թռչում ոչ թե իր ներսի դատարկությունից,
Այլ ծանրությունից:
Նախֆան սկսելը հրաժեշտ եմ տալիս
Եվ սպառված ցավը կարծես նոր է գալիս:
Իմ ողջույնները իմ եղբորը տար՝ Յորքի էդմոնդին,

Այդ է ամբողջը: Քայց ո՛չ, սպասի՛ր.
Թեկուզ ամբողջն է, բայց այդքան փութով մի՛ գնա, լսի՛ր,
Դարձյալ նիշեցի: Դու Յորքին ասա,— ինչպե՞ս. մոռացա՞,—
Հա՛, բող Պլեշում ինձ շտապ կարգով այցելության գա:
Ավա՛ղ, նա այնտեղ ի՛նչ պիտի տեսնի. մի բշվառ պատկեր.
Դատարկված մի տուն և անշուք պատեր,
Ամայի մի բակ, ուր ոտք չի դիպչում,
Եվ չի լսելու դիմավորության ցնծագին ողջույն,
Քացի իմ տրտում հառաչանքներից:
Ո՛չ, դու պարզապես Յորքին հաղորդիր իմ հարգանքները
Եվ այնպես արա, որ այնտեղ չգա,
Ինչս՛ւ վիշտ փնտրել՝ վիշտ ամեն տեղ կա:
Եվ այնտեղ մենակ և անմխիթար օրս կողքամ,
Մինչև աչքերս ղեզ վերջին տխուր հրաժեշտը տան:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Պոստորդ-Գրին հարթավայրը Քովենտրու մոտ. դաշտ և գահ:

Մտնում են Լորդ-Մարշալը և Օմեոլը՝ մունետիկներ հետ:

ՄԱՐՇԱԼ

Դուրս Հերիֆորդը զինված պատրաստ է:

ՕՄԵՈԼ

Այո, պատրաստ է. և խիստ փափագ է մաւտադաշտ նետվել:

ՄԱՐՇԱԼ

Նորֆոկի դուրսը կորովի և քաջ ասպարեզ կիջնի.

Հենց որ թշնամու շեփուրը հնչի:

ՕՄԵՈԼ

Ախոյանները լրիվ պատրաստ են այս դատամարտին.

Լոկ սպասում են, որ ամենագոր արքան ժամանի:

Փողեր: Մտնում է Ռիչարդ քաղաքը Կոնտի, Քուչու, Քեզոտի,
Գրինի և այլ ազնվականների հետ: Երբ նրանք նստում են,
մտնում է Նորֆոկի դուրսը սպառազեն՝ մունետիկը առչկից.

ՌԻՉԱՐԴ

Մարշալ, պահանջե՛ք այն ախոյանից,
Ինչո՞ւ է գինված փութացել այստեղ:
Անունը հարցրե՛ք, ինչպես որ կարգն է, թող մեզ երդում տա,
Որ իր պաշտպանած գործը արդար է:

ՄԱՐՇԱԼ

Հանուն աստծո և թագավորի, ասա, ո՞վ ես դու,
Ինչո՞ւ ես գինված շտապել այստեղ,
Ո՞ւմ դեմ ես ուզում դու մենամարտել, վե՛նի նյութն ի՞նչ է,
Ճշմարիտն ասա, Բո ասպետության
Եվ Բո երդումի պարտ ու պատշանով,
Եվ թող երկինքը և արիությունդ պաշտպան կանգնեն քեզ:

ՆՈՐՖՈՒ

Ես դուստ նորֆոկն եմ,
Եվ իմ անունն է Թոմաս Մաուրիի.
Այստեղ եմ եկել հավասարիմ իմ տված երդումին, —
Վա՛յ այն ասպետին, որ կհանդգնի այդ ուխտը խախտել, —
Թե՛ պաշտպանելու իմ արդար դատը և թե՛ պատիվն իմ,
Իմ աստծո առաջ, իմ թագավորի, իմ ազգատոհմի,
Ընդդեմ ախոյան դուստ Հերիֆորդի,
Եվ աստծո շնորհով և իմ այս բազկով ինձ պաշտպանելիս
Ապացույց տալու, որ նա վատագույն մի դավանան է
Թե՛ աստծո հանդեպ, թե՛ իմ արժայի և թե՛ իմ հանդեպ:
Օգնի՛ր ինձ, երկինք, իմ դատն արդար է:

Փողեր: Մտնում է Բոլինբրոկը գինված՝ մունետիկը առջեից:

ՌԻՉԱՐԴ

Լորդ-Մարշալ, դու այդ ասպետից հարցնու,
Թե ո՞վ է ինքը և ինչո՞ւ համար այստեղ է եկել
Այդպես գինավառ,
Թող մեզ երդում տա բնդունված կարգով,
Որ իր պաշտպանած գործը արդար է:

ՄԱՐՇԱԼ

33 Անունդ ի՞նչ է, ի՞նչ նպատակով այստեղ ես եկել
Եվ կանգնել Ռիչարդ արժայի առաջ մարտադաշտի մեջ,
Ո՞ւմ դեմ ես գինվել, կովի նյութն ի՞նչ է,
Խոսի՛ր ճշմարիտ ասպետի նման,
Եվ թող երկինքը քեզ լինի պաշտպան:

ԲՈՒԻՆՅՐՈԿ

Ես Հենրիկոսն եմ, Հերիֆորդ Գերբին,
Լանկաստերի դուքս Ջոն Գոնտի որդին,
Որ սպառազեն կանգնած է այստեղ,
Աստծո շնորհիվ և իր սեփական բազկի արիությամբ
Ապացույց տալու, որ Թոմաս Մաուրբին
Մի բազմավտանգ, նենգ խարդավան է
Աստծո և Տիշարդ քաղաքների դեմ, նաև իմ հանդեպ:
Օգնի՛ր ինձ, Երկինք, իմ դատն արդար է:

ՄԱՐՇԱԼ

Մահվան երկյուղով խիստ արգելված է
Որևէ մեկին այս դաշտը մտնել,
Որքան էլ լինի հա ինքհավստահ և պնդամակառ,
Բացի Մարշալից և սպաներից,
Որոնք կանգնած են որպես հսկիչներ այս մենամարտին:

ԲՈՒԻՆՅՐՈԿ

Թույլ սուր, Լորդ-Մարշալ, համբուրել ձեռքը իմ քաղաքների,
Եվ ծունկ խոնարհել իր բարձրության դեմ,
53 Մաուրբին և Լս Բանգի նման ենք երկու նամփորդի,
Ելած մի երկար ու հոգնեցուցիչ ուխտագնացի.
Ուստի արտոնի՛ր մեզ հանդիսավոր հրաժեշտ տալու
Եվ մեր մի Բանի հարազատներին ողջերք մաղթելու:

ՄԱՐՇԱԼ

Մեծապատիվ տե՛ր, այս բողոքաբան
Շատ խոնարհաբար ողջունում է ձեզ:
Նա քախանձում է ձե՛ր ձեռքն համբուրել և հրաժեշտ տալ:

ՌԻՉԱՐԴ

ՄԼ՛նք կիջնենք հրան մեր գիրկն առնելու:
Հերիֆորդի դուքս, այս մենամարտին
Բախտ եմ ցանկանում քո արդար դատին:
Բարի երթ, գարմիկ, իմ արյունակից,
Երբ քո կյանքը դառնա գահավեժ.
Մեր բաժինը ողբ է, ոչ թե փոխվրեժ:

ԲՈՒԻՆՅՐՈԿ

Ոչ մի ազնիվ աչք թող ոչ մի կարթիլ
Արցունք չքափի իմ կյանքի համար,

Եթէ նորֆոկի տեգով ընկենմ վար:
Ինչպես բազեն է իր որսին նետվում
Այդպես կբախվեմ նսկաւամարտում իմ ախոյանին:

(Լորդ-Մարշալին)

Մնացել բարի. Լորդ-Մարշալ անգին,
Եվ դո՛ւ, Լորդ Օմեոլ, իմ ազնիվ զարմիկ,
Նետվում եմ սնու մահվան դեմ ի մարտ:
Բայց մահվան աշխին նայում եմ զվարթ,
Կենսախիհնդ, աշխույժ և ոգով հպարտ,
Անգլիայի մեջ այդպես լինում է մեր խնջույքներում.
Միշտ քաղցր գինին վերջում են ըմպում:

(Գոնտին)

Օ՛, դու իմ արչան հողե արարիչ,
Որի արյունը երակներիս մեջ վերաբարձվելով,
Ինձ երկասպառիկ զորութեամբ թափով բարձրացնում է վեր,
Ուրպեսզի հասնեմ ինձնից վեր նախրող մի հաղթանակի:
Քո աղոթքներով պրկի՛ր, ամրացրո՛ւ իմ լանջապանը
Եվ քո օրհնութեամբ նիզակն իմ կոփի՛ր,
Որ գոռ Մաուրբու զրահը նեղի՛
Խրվելով ինչպես մեղրամոմի մեջ,
Եվ Լանկաստերյան Գոնտի անունը
Որդու քաջութեամբ փայլի վերստին:

ԳՈՆՏ

Աստված զորավիգ քո արդար գործին:
Կայծակի նման սրնթաց եղիր զործադրության մեջ,
Եվ հարվածներդ թող երկասպառիկ կրկնապատկվելով՝
Շշմեցնող ու գոռ որոտի նման իջնեն նենգադավ
Թշնամուդ գլխին սաղավարտակիր,
Շարժի՛ր, գրգռի՛ր կայտառ արյունդ, քաջ եղիր և ժիր:

ԲՈՒԽՆԲՐՈԿ

Ո՛վ իմ արդար դատ և դու, սուրբ Գևորգ, օգնության հասիր:

ՆՈՐՅՈԿ

Աստված ինչպիսի բախտ վիճակի ինձ,
Ապրեմ թե մեռնեմ՝ հավետ կլինեմ նշմարիտ ասպետ,

Միշտ հավատարիմ Ռիչարդի գահին:
Եվ ոչ մի գերջալ բուռն ուրախությամբ չի հրնվել այնպես,
Երբ ստրկության շղթան դեն նետած
Փարվել է ոսկյա ազատությանը,
Ինչպես իմ նախորդ հոգին է տոնում
Ճակատամարտի այս խրախնանքը ախոյանիս հետ:
Զորավոր արեա, և բնկերակից իմ ավագանի,
Ընդունե՛ք վերջին մնալ բարովն իմ,
Ես ձեզ մաղթում եմ բախտավորության շա՛տ երկար տարի,
Եվ զվարթախինդ ու խաղաղ սրտով նետվում եմ մարտի,
Ում գործն արդար է, նա ալեկոծ չի:

ՌԻՉԱՐԴ

Բարե՛վ գնաս. միլորդ. քո աշխերի մեջ ես պարզ որսում եմ
Խիզախությունը և առափինին միատեղ բազմած:
Մարշալ, հրամայի՛ր թող մարտն սկսվի:

ՄԱՐՇԱԼ

Գու, դուքս Հերիֆորդ, Զոն Գոնտի որդի.
Ան քո նիզակը: Աստվա՛ծ, դու պաշտպան եղիր արդարին:

ԲՈՒՆԹՐՈՎ

Հույսով ամուր եմ աշտարակի պես: Օգնի՛ր, տեր աստված:

ՄԱՐՇԱԼ

(մի սպայի)

Գու այս նիզակը տար Թոմասին տուր՝ Նորֆոկի դքսին:

Ա. ՄՈՒՆԵՏԻՎ

Այստեղ կանգնած է Հերիֆորդի դուքս կանկասուր Դերբին,
Հանուն իր աստծո, իր բազավորի, հանուն իր անձի,
Այն մեծ երկյուղով, որ չհորջորջվի
Հավիտյան Երկչոտ և ուխտադրուժ,
Պատրաստ է այստեղ ապացուցելու, որ Թոմաս Մաուրբին
Նենգ խարդավան է իր աստծո հանդեպ,
Իր թագավորի, նաև իր հանդեպ,
Եվ խրոխտաբար նրան կոչում է նակատամարտի:

Բ. ՄՈՒՆԵՏԻԿ

Այստեղ կանգնած է Նորֆոկի դուխը՝ Թոմաս Մաուրիսն,
Այն մեծ երկյուղով, որ շնորհորշվի
Հավիտյան երկշոտ և ուխտադրուժ.—
Պատրաստ է պաշտպան կանգնել իր անձին և ապացուցել,
Որ Հերիֆորդը, Հենրիկոս Դերբին,
Նենգ է ու խարդախ իր ասածո հանդեպ,
Իր գերագույնի, նաև իր հանդեպ,
Եվ ազնվորեն նետվել է ուզում մեծամարտի մեջ
Ազդանշանի առաջին կանչով:

ՄԱՐՇԱՆ

Փշե՛ք փողերը, հառա՛ջ, ասպետներ:
(Մեծամարտի շեփոր)

Կացե՛ք, արևան իր մականը նետեց:

ՌԵՉԱՐԴ

Թող իսկույն նետեն սաղավարառ ու տեգ,
Եվ վերադառնան իրենց տեղերը:
Հետևեցե՛ք մեզ: Թող փողերն հնչեն,
Մինչև մենք վճռենք դևերի բախար և կրկին էտ գանձ.
(Երկար ցնձանվազ)

Մո՛տ եկե՛ք, ապա,
Եվ լսե՛ք, թե մենք մեր խորհրդի հետ ինչ վնիռ արինք:
Թագավորության մեր հողի վրա,
Որ սնուցված է անգին արյունով,
Չպետք է քափվի այլևս արյան և ոչ մի կարթիլ,
Եվ մեր աչքերը շպետք է պղծվեն
Եզրայրասպանի ժանտ տեսարանով,
Եվ արծվաքև հպարտությունը
Մին, երկնափափազ ու տեղապաց մտածմունքները
Եվ ձեր հակամարտ բենի նախանձը
Չպետք է ժայրհեն վրդովելու մեր խաղաղությունը,
Որ անմեղ մանկան երջանիկ բնով
Ննչում է երկրիս օրորոցի մեջ:
Որպեսզի ամենի, բիրտ քմբուկներից
Եվ դժոխքմբեր գոռ շեփորների անարկու ձայնից

Եվ ցասումնայի երկարքե զենքի անեղ շառաշից
Խաղաղությունը խույս չտա մեզնից սաստիկ անարեկ՝
Մեզ մինչև կոկորդ ազգակիցներս արյան մեջ խրած,
Մենք որոշեցինք ձեր երկուսիդ էլ ամուրել երկրից:
Արդ, դուք շերիֆորդ, — զգուշացնում եմ քեզ մանվան գնով, —
Երկու հինգ ամառ մինչև շինձենք մեր դաշտերը ծով,
Ոտքդ շանցկացնես մեր սահմաններով.
Արգելավայրդ օտար աշխարհն է և օտար նամփան:

ԲՈՒՆԹԵՐԵՎ

Խոսքդ օրենք է: Բայց այն է, միակ միփրարանք.
Ու նույն արևն է յուսավորելու իմ և քո կյանք.
Եվ նրա ոսկյա շողերը այստեղ քեզ գուրգուրելով՝
Կշողան վրաս տարագիր կյանքս ոսկեզօծելով:

ՌԻՉԱՐԻ

Քո պատիժը, Նորֆոկ, առավել ծանր է:
Ինձ համար դժվար է արտասանել այն:
Գողումի, դանդաղ ժամերն անգոր են
Սահման որոշել քո անթվական ախուր ամուրին:
Զուր է խոսքիս մեջ որսալ մեղմություն,
Գու հավիտյան ես վտարվում երկրից, չկա՝ փրկություն:

ՆՈՐՅՈՎ

Ծանր է վնիոր, գերագույն սեր իմ,
Եվ ձեր բարձրության բերնով արձակված խիստ անակնկալ.
Գերագույն ձեռքից չկա՞ր ավելի թանկագին պարզե,
Ոչ այդչափ անեղ անիրավություն ինձ շնորհելու,
Քան դատապարտել հավելա ամուրի.
Միքե՞ ևս այժմ պետք է մոռանամ իմ բնիկ լեզուն,
Ու սովորել եմ փաստուն տարի:
Եվ ի՞նչ է մարդը, երբ մտնո՞ւ է լեզուն.
Զարակ՝ առանց լարի, տավիղ՝ լարը պոկված,
Պատայանում փակված մի հեռա՞ գործիք.
Իսկ պատյանից դուրս՝ գործիք արտանված ապուշի ձեռքին,
Ու անտեղյակ է դյուրիչ նվագին:
Գուք բերանիս մեջ լեզուս բանտեցիմ կրկնակի նիգով՝
Զույգ ասամներես և իմ շուրքերի վանդակափակով,
Վրան կարգելով մի բուր բանտապետ՝

Անզգա, ամուլ Իզգիտութիւնը:

Քավակն ծեր էմ նորից դայակի ջանքին դիմելու,
Տարիքս կոխած՝ նորից աշակերտ դառնալու համար:
Քո վնիոն, ուրեմն, մի համբ մահ է.

Որ իմ մայրենի հնչելը բարբառից շորթում է լեզուս:

ՌԻՉԱՐԳ

Խոնարհվի՛ր բախտիդ, շենք կարող գրալ,
Մեր վնոից հետո շատ ուշ է ողբալ:

ՆՈՐՅՈԿ

Օ՛, ինչ մեծ ցավ է սուրբ հայրենիքի լույսից զրկվել
Եվ ախորի մութ գիշերում ապրել:

ՌԻՉԱՐԳ

Ե՛տ դարձիւ, երդվի՛ր և ուխտով գնա:

196 Ձեր ձեռքը դրեք թագավորական մեր սրի վրա
Եվ երդվե՛ք աստծո հանդեպ ունեցած պարտավորութեամբ, —
Քանզի մեր հանդեպ ունեցած պարտքը արդեն մերժված է, —
Որ չե՛ք խախտելու ձեր աված ուխտը: Տարագրության մեջ, —
Թող ձեզ օգնական լինեն աստված ու արդարութիւնը. —
Չպետք է միմյանց սիրով փայփայե՛ք, իրար երես նայե՛ք,
Մեկդ մյուսին նամակներ գրե՛ք ողջագուրանքի,
Զսպե՛ք, հաշտեցնե՛ք,
Ձեր ներքին քենի ու ատելության այս փոքրիկը,
Ոչ էլ որոնե՛ք հանդիպման պահեր հատուկ միտումով
Դավեր նյութելու, ապստամբության դաշինք կնքելու
Մեր պետության դեմ,
Մեր դեմ, երկրի դեմ, կամ մեր ենթակա հպատակների:

ԲՈՒԿՆԵՐՈԿ

Երդվո՛ւմ էմ, արքա:

ՆՈՐՅՈԿ

Երդվո՛ւմ էմ և ե՛ս:

ԲՈՒԿՆԵՐՈԿ

Նորֆոկ, հետայսու մենք թշնամի ենք:
Եվ եթե արքան արտոնած լինէր

Մեր մեկիս հոգին դարձած կլինեւ մի վտարանդի
Մարմնի դյուրաբեկ դամբանն այս լիւած,
Ինչպես երկուսիս մարմինն է այժմ երկրից ախարւլած:
Մեկնելուց առաջ գղչա մեղքերդ,
Չէ՛ որ գնալիք նամփադ երկար է. մի բառնա վրադ
Խափանիչ բեռը հանցալուր հոգու:

ԵՈՐՅՈՒ

Ո՛չ, Բոլիներոկ, Լքե երբեք դավանանել եմ իմ թագավորին,
Թող իմ անունը կյանքի մատչանից ջնջվի ամոթով,
Թող ես Լեկնից վտարվեմ այնպես, ինչպես այսաւելից:
Իսկ քե ինչ ես դու՝ ասածուն է հայտնի, նաև Բեզ և ինձ:
Ես վախենում եմ, որ թագավորն էլ շուտով կիմանա,
Ողբալով բախտն իր:
Մնաս բարո՛վ, արեա: Համայն աշխարհը բաց է ոտքիս տակ,
Լոկ Անգլիայի նանապարհն է փակ:

Դնում է:

ՌԻՉԱՐԴ

Անգին հուրկրայր, Լս քո աշխերի հայելու միջով
Նկատում եմ քո վշտացած սիրտը: Այդ տրտում տեսք
Նրա ախարի շափից կրնատեց ուղիղ շոքս տարի:

(Բոլիներոկին)

Ախարում կապրես դու վեց ցուրտ ձմեռ
Եվ կդառնաս սուն:

ԲՈՎՆԵՐՈԿ

Ի՛նչ հսկա ժամկետ,
Չորս երկար ձմեռ և չորս բոբր գարուն
Մեն մի խոսքի մեջ. այդպես է շունչը թագավորների:

ԴՈՆՏ

Շնորհակալ եմ իմ թագավորին, որ ինձ հարգելով՝
Որդու ժամկետից չորս տարի գեղջեց:
Սակայն իմ հունձքը քիչ է դրանից,
Քանզի վեց տարին լուսին առ լուսին
Իրենց ընթացքը դեռ չբոլորած՝
Այս խեղճ կանթեղի լույսը կմարի յուզը սպառած,

Պատույզիս մնացորդը այրված կհանգի
եվ աչքը կապած կույր մահը անգույր
Ինձ չի արտոնի տեսնել իմ որդուն:

ՌԻՉԱՐԴ

Ինչո՞ւ, հորեղբայր, դու կապրես Երկար:

ԳՈՆՏ

Բայց դու անգոր ես ինձ մի վայրկյան տալ:
Դու կարող ես իմ օրերը կարճել վշտերով ցավոտ.
Գիշերներ կորզել, բայց չնվիրել ոչ մի առավոտ:
Անգոր ես օգնել, որ ժամանակը
Իր կննիւններով դեմս չակոսի,
Ոչ էլ մի կննիւն քո հրամանով այնտեղ պակասի:
Իմ մահվան հարցում
Գառավնիւղ և ժամանակը մեկտեղ են գործում:
Իսկ երբ որ մեռա՝
Տուր քո բովանդակ արհայությունը՝ շունչս Լա չի գա:

ՌԻՉԱՐԴ

Քո որդին դատված է խորհրդի վնասով,
Որին քո լեզուն մասնակից եղավ,
Ի՞նչ հարկ կա այժմ մեր արգար դատի հանդեպ բնդվզել:

ԳՈՆՏ

Իսկ չի՞ պատահում, որ եփած ճաշը շես ուզում ուտել,
Իբրև դատավոր, վնիւն է արդար,
Դատեցեք, սակայն, դուք ինձ իբրև հայր:
Եթե հարազատ որդիս չլինեմ, այլ օտար լինեմ.
Ես կարող կի նրա հանցանքը քեքե բնդունել:
Դատավնոյի մեջ ես խուսափեցի աշտուրյունից
Եվ հենց դրանով կործանեցի ինձ:
Սպասում էի, որ մեկն ու մեկը կասեր անվրեպ.
«Դու խիստ դաժան ես քո որդու հանդեպ»:
Բայց ոչ ոք, ավա՛ղ, այդ խոսքը չասաց.
Եվ իմ անհոծար լեզուն մեղանշեց իմ իսկ կամքի դեմ,
Ու իմ խոսվեցի ևս հանգիստ շունեմ:

ՌԻՉԱՐԳ

Արդ. հրածեշտ քեզ, հորեղբորուդի:
Գու էլ. հորեղբայր, նրան մաղրիք բարով,
Նա ախարվում է երկրից վեց տարով:

Փողեր: Թագավորն իր շխարհով գնում է:

ՕՄԵՌ

Մնաս բարով, զարմիկ: Որանդ էլ լինես,
Անշուշտ համակով մեզ իմաց կանես:

ՄԱՐՇԱԼ

Ես քեզ հրածեշտ չեմ մաղրի, տեր իմ, ձիով կաղ՛ կողմի,
Քեզ հետ կընթանամ մինչև վերջնագույն ծայրը աշխարհի:

ԳՈՆՏ

Օ՛, պատճառն ինչ է, որ դու բառերը քո մեջ մըրում,
Այդպես մնջել ես բարեկամներիդ ողջերքի սուսը:

ԲՈՎՆԲԲՈՎ

Ես էիչ բար գիտեմ հրածեշտի համար,
Մի՛նչդևո լեզուն պետք է լինի սաստիկ շուայլ,
Որ ստի հուղուն կսկիծն արտահայտի:

ԳՈՆՏ

Քո վիշտն առժամյա քո անջատումն է:

ԲՈՎՆԲԲՈՎ

Ուրախությունը բացակայելիս, տեղը վիշտն է ներկա:

ԳՈՆՏ

Այդ վեց անուր շատ արագ կանցնի:

ԲՈՎՆԲԲՈՎ

Երջանկության մեջ: Վշտի մեկ ժամը տասնապատիկ է:

ԳՈՆՏ

Հաշվիր, քե գնում ես ուրախ համիորդության:

ԲՈՎՆԲԲՈՎ

Այդ յաթկանքն. ավա՛ղ, ցավ է իմ ստին,
Որանդ ախար կա, այնտեղ չկա վայելիք:

ԳՈՆՏ

Տեսում քայլերիդ անձուկ շավիղը
Մի նախամեծար փայլաթիթեղ է, որին դիպչելով՝

Ավելի պայծառ պիտի շողշողա
Տուն վերադարձիդ անգին գոհարը:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

Ո՛չ, ավելի շուտ. իմ ամեն դանդաղ ֆայլը փոխելիս.
Ես պիտի հիշեմ, թե որչափ շատ եմ հեռու գնացել
Իմ այդքան սիրած քանկագին գանձից:
Միթե՞ ես պետք է երկար սովորեմ
Դժնի արհեստը ասպնջականի, որպեսզի վերջում
Ձեռք բերելով իմ ազատությունը
Միայն մեկ բանով պարծենամ կյանքում՝
Որ ես եղել եմ վշտի ուղևոր:

ԳՈՆՏ

Ով իմաստուն է, այս երկնքի տակ ուզածդ վայրում,
Նա միշտ մի կայան կամ նավահանգիստ կգտնի կյանքում:
Դու քո կարծիքին այսպես դատել տուր.
Կարոտությունից ավելի բարձր արժանիք չկա:
Դու այսպես խորհիր. ոչ թե արքան է քեզ նետում ափսոս,
Այլ դու՝ արքային: Վիշտը նրան է սոսկալի ննջում,
Ով հեշտությամբ է ենթարկվում վշտին:
Դե՛ս՝ և ասա, որ ուղարկված ես փառքի ետևից
Եվ ոչ թե ուսուցիչ՝ արքայի կողմից: Եվ կամ ենթադրիր,
Որ մեր օդի մեջ կախված է հիմա մի անհագ ժանտախտ,
Եվ դու փախչում ես դեպի ավելի մի առողջ երկիր:
Պատկերացրո՛ւ քեզ, որ այն ամենը, ինչ քանկ է սրտիդ,
Ոչ թե թողնում ես քո ասպրած վայրում,
Այլ կհանդիպես այն նանապարհին, որով գնում ես:
Այնպես համարիր, որ թռչունները երաժիշտներ են,
Քո կոխած կանաչ մարգագետինը՝ խնջույքի սրահ,
Իսկ ծաղիկները՝ շենաղ բամբիշներ, և քո ընթացքը
Ոչ թե ափսոսի դժնի նամփա է, այլ ցնծագին պար:
Ազմկող ցավը խայրելու համար տկարանում է,
Ով որ հեզնանքով նրան խայթում է:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

Օ՛ր, ո՛վ կարող է կրակ պահել ձեռքում
Խորհելով սառցապատ Կովկասի մասին.
Կամ ազան ֆաղցի շուրթը հագեցնել,
Երևակայելով խնջույքի սեղան,

Նամ մերկ թավալվել ղեկտեմբերի պաղ օյունների գրկում,
հորհեյով ամռան տորերի մասին:
Ռ՛, ո՛չ, քա՛վ լիցի: Լավը հիշելիս,
Վատքարն ավելի սաստիկ էս զգում:
Վշտի ժանիֆը նրա համար է կծում սոսկալի.
Որ նրա վերհից արյուն չի գալիս:

ԳՈՆՏ

Ճամփա ել, որդիս: Թե երիտասարդ քեզ պես լինելի,
Մի վայրկյան այստեղ չէի հապաղի:

ՔՈՒԽՆԵՐՈՎ

Արդ, մնա՛ս բարով, երկիր Անգլիո, հաւազաւ իմ հող,
Մա՛յր իմ, դայա՛կ իմ, ինձ դեռ փայփայող.
Ուր էլ դեգերեմ, մի բանով, սակայն, հպարտ եմ ու գոհ.
Թեկուզ ախորշալ, բայց էս ի բնէ
Անգլիացի եմ իմ ամբողջ հոգով:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Չ Ո Ր Ր Ո Ր Դ

Արքունիքը

Մանամ են՝ մի կողմից Ռիչարդ թագավորը, Քեզուրը և Գրիֆը,
Վյաւ կողմից՝ Օմեուլը:

ՌԻՉԱՐԴ

Մենք նկատեցինք... — Օմե՛ուլ, զարմիկ իմ,
Գուր երկա՛ր եղաք մեր երևելի Հերիֆորդի հետ:

ՕՄԵՈՒ

Ես երևելուն, եթե այդպես եք դուր կոչում նրան.
Հասցրի մինչև հաշորդ պողոտան և բաժանվեցի:

ՌԻՉԱՐԴ

Եվ բաժանվելիս անշուշտ թափեցիք սուտ արցունքներ:

ՕՄԵՈՒ

Ես՝ ամենևին: Միայն սուր քամին հյուսիս-արևելից
Մեր երեսների վրա փչելով՝
Աշխուժացրեց իմ նիւսած հարբուխը և ղիպվածուրեն
Կեղծ անջատումը մեր պննազարդեց
Իմ աչքից թոցրած մեն մի արցունքով:

ՌԻՉԱՐԴ

Չարմիկն ի՞նչ ասաց, երբ բաժանվեցիք:

ՕՄԵՌԱ


Ասաց «Մնա՛ս բարով»: Սիրտս զարշում է,
երբ մարդու լեզուն հարկադրվում է այդ բառը պղծել,
Ոստի հմտորեն այնպես ձևացրի,
Իբրև թե վշտից այնքան ննշված եմ,
Որ իմ խոսքերը քաղել եմ ողբիս գերեզմանի մեջ:
Թե հնար լինե՞ր այդ հրաժեշտով՝ ժամերն Լեկարել,
Նրա կարճատև ակտորի վրա
Ավելացնելով մի փանի տարի.
Ես պատրաստ էի մի հատոր «մնաս բարով»ներ մաղթել,
Բայց փանի որ դա կարելի բան չէր,
Ոստի ես նրան նույնիսկ մի «մնաս բարով» չասացի:

ՌԻՉԱՐԴ


Նա մե՛ր զարմիկն է, բայց կասկածում եմ,
Թե երբ կավարտվի նրա ժամկետը: Մեր ազգականը
Արդյո՞ք եւս կգա՞ հանդիպելու իր բարեկամներին:
Նս՛ ինքս, Բուշին, Բեգոտն ու Գրին, որոնք այստեղ են,
Տեսանք ինչպիսի՞ շողոփորթությամբ
Նա մեծարում էր ռամիկ ամբոխին,
Ինչպես նզնում էր խորամուխ լինել նրա սրտի մեջ
Խոնարհ և քնտել ծեֆձև փամփռով,
Գլխով էր անում նա սարուկներին.
Տարբեր արհեստի գործավորներին հարտա՛ւ ժպտալով,
Ճգնելով ցույց տալ, որ ակտորյալ է,
Եվ նրանց սերը ակտորված է իր հետ:
Գլխարկը հաննեց մի ոստրեվանառ գեղջկուհու առաջ:
Մի զույգ սայլադան բարի նանապարհ մաղթեցին նրան.
Եվ նա նրանց դեմ ծունկը խոնարհեց բացակասնչելով.
«Շնորհակալ եմ, հայրենակիցներ՛, իմ սիրելիներ»,
Կարծես մե՛ր Անգրիան նրա կալվածքն է,
Եվ ինքն է միակ նույսը մե՛ր երկրի:

ԳՐԻՆ


Վերջ տանք, նա զնայց և այդ մտերն էլ գնացին իր հետ:
Եկե՛ք զբաղվենք այժմ Իսլանդիո ապստամբներով:
Մեզ պետք է շտապ գործ կազմել, արհա,



Վեստմինստերի արքայության շենքը



Սուրբ Պետրոսի եկեղեցին Վեստմինստերի արքայությունում: Հենրի Յոթերորդի մատուցած



Վեստմինստերի արքայության մի թևը



Վեստմինստերի դահլիճը, մուտքը՝ հրապարակից

Երբ հասյաղենք՝ գերակշիռը թշնամու կողմն է,
Իսկ կորուսար՝ ձեր:

ՌԻՉԱՐԳ

Ինքն կվարեմ մեր զորքը կովի:
Թայց այնքան, որքան մեծ արհունիքն ու շուայլ ծախսերը
Սաստիկ հյուծել են մեր գանձարանը,
Մենք ստիպված ենք երկիրը հանձնել վարձակալության
Եվ այդ գումարով այս արշավանքի ծախսերը հոգալ:
Թե այդ էլ շօգնեց, մեր ստորագրությամբ
Հատուկ ցուցակներ կուղարկեմ բոլոր տեղապահներին,
Իրավունք տալով, որ նրանք այնտեղ
Գրանցեն բոլոր ունեւորներին,
55 Բռնադատելով մեծ գումարներ տալ
Մեր կարիքները հոգալու համար:
Անհապաղ պետք է Իդանդիա շարժվենք:

Մտնում է Բուշին:

Ի՞նչ լուր կա, Բուշի:

ԲՈՒՇԻ

Տեր իմ, Ջոն Գոնտը ծանր հիվանդ է:
Հանկարծ եղավ այդ: Թանքեր է հղել, և ձեզ, տեր արքա,
Շտապ խնդրում է այցելել իրեն:

ՌԻՉԱՐԳ

Ռեալ՝դ է պատկած:

ԲՈՒՇԻ

Իլու դոյախում:

ՌԻՉԱՐԳ

Շուտ գլխի գցիր բժշկին. ասաված,
Որ այդ ծերուկին օգնի անհապաղ գերեզման իջնել:
Նրա գանձատունը այնքան հարուստ է,
Որ իդանդական այս արշավանքին
Մեր ամբողջ զորքը կարող ենք լրիվ հանդերձավորել:
Եկե՛ք, պարոններ, այցելենք նրան,
Բայց ես կարծում եմ՝ ինչքան էլ փութանք,
Աստծո օգնությամբ սաստիկ կուշանանք...

ԲՈՒՇԻ

Ամեն:

Գնում են:

— 33 —



ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԳ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Լոնդոն: Մի սենյակ Իլու դոյակում:

Մանուս էն Գոնտը՝ հիվանդ, Յորքի դևսի հետ, և ուրիշներ:

ԳՈՆՏ

Գալո՛ւ է արեան, որ կարողանամ իմ շունչը վերջին
Պիտանի դարձնել իր ջահելության անմիտ ընթացքին:

ՅՈՐԳ

Մի՛ շարշարեմ ձեզ, ոչ էլ մարտ մղեմ ընդդեմ ձեր շնչի,
Խորհուրդն իզուր է հրա ականջին:

ԳՈՆՏ

Մի՛րե այդպես է. սակայն ասում են,
Թե մահամերձի վերջին խոսքերը
Ներհուն երգի պես լարում են մարդկանց ուշադրությունը:
Ուր խոսքն է ժլատ՝ ականջը նրան արագ է որսում,
Նա է նշմարիտ, ով տանջանքով է իր խոսքը ասում:
Մեռնող ծերունու մեն մի շշուկը թանկ է ավելի,
Քան քե շողակրատ խոսքը ջահելի:
Մարդու վերջը միշտ իմաստալից է իր ապրած կյանքից,
Մեռնող արևի և երաժշտության վախճանն է հարզի,
Ուր դրոշմվում է հիշողության մեջ
Քաղցրավենիքի վերջին համի պես:
Թեպետ Ռիչարդը շուգեց ունկնդրել խորհուրդն իմ բարի.
Բայց իր ականջը մեռնողիս խոսքին պիտի խոնարհի:

Ո՛չ, այդ ականջը ամուր փակված է շողում խոսքերով
 Իր իշխանության փառաբանությամբ և նմանապես
 Շամբուշ տողերով սաղաշափական, որոնց թույնի պեմ
 Զահեկ ականջը մշտապես բաց է և պատրաստակամ,
 Աստիկ ուշադիր այն գրույցներին,
 23 Թե ինչ նոր մոդա կա Իտալիայում,
 Ռեին տակավին մեր դանդաղընթաց կապկային ազգը
 Խիստ հետամուտ է մի նվաստագին ընդօրինակումով:
 Ասենք ինչ-որ տեղ մի բան երևաց — մի անպեսուրյուն,
 Նոր է ուրեմն, որքան էլ լինի այդ նորը շնչին,
 Մի՛րե կարող է դրա համբավը
 Արագ շրջալ նրա ականջին:
 Իմաստուն խոսքին այն մարդն է ընդդեմ,
 Որի բիրտ կամբը ըմբոստանում է դատողության դեմ.
 Հորդորն իզուր է, նա ինքն է ընտրել իրեն ճանապարհ,
 Զուր մի տանջիւր Բեզ, Բիշ է մնացել ապրելուդ համար:

ԳՈՆՏ

Նոր ոգևոլնչված մարգարեի պես
 Իմ վերջին շնչում գուշակում եմ, արդ, Ռիչարդի բախար.
 Նրա խոռվի հախուտն, ամենի բացը չի կարող
 Տևական լինել,
 Քանզի մոլեգին հողենն ինքն իրեն արագ է լափում:
 Մանրիկ անձերը Եկարատն է,
 Իսկ հանկարծադեպ հորդ տարափր՝ կարն:
 Նա է շուտ խոնջում, ով մտրակում է իր ձին սաստկությամբ:
 42 Ազան ուտողի վերջը խեղդվելն է ազահությունից,
 Սնափառության որկորն անկուշտ է,
 Երբ որ ֆաղցած է՝ սկսում է արագ խժռել ինքն իրեն:
 Թագավորների այս շփեղ գահը,
 Այս փառի կղզին գավազանակիր.
 Երկիրն այս բարձրյալ, այս գահն Արեսի,
 Երկրորդ եղևմն այս, այս կես-դրախտը,
 Այս բերդ-ամրոցը բնության կողմից շինված իր համար
 Ընդդեմ վարակի և պատերազմի:
 Այս երանելի սերունդը մարդկանց, փոփոկ աշխարհն այս,
 Պատվական ֆարն այս՝ արժարե ծովում,
 Որ ծառայում է նրան որպես պատ կամ տան խրամատ

Նվազ երջանիկ այլ երկրների նախանձի հանդեսը:
 Այս հողը օրհնյալ, երկիրն այս, թագն այս, օ՛, այս Անգլիան,
 Այս դայակունին, բեղուն արգանդն այս պերն արժաների,
 Իրենց արժունի զարմով ահաբէկ, ծագմամբ անվանի,
 Քրիստոնեական և սաստակաւ սխրագործությամբ
 Հոշակված իրենց երկրից շատ հեռու,
 Մինչև շիրիմը խստապարանոց Հրեաստանի մեջ,
 Ռոտեղ աշխարհի փրկիչն է հանգչում,
 Բարենիշատակ որդին Մարիամի:
 Այս երկիրն այդքան վեհ հոգիների, թա՛նկ, թա՛նկ գետինն այս,
 Համայն աշխարհում սրբացած իր մեծ հոշակի համար:

65 Այդ երկիրն այժմ վարձու է տրված,—
 Ինձ համար մահ է արտասանել այդ,—
 Ինչպես մի կալվածք կամ ողորմելի նվաստ ազարակ:
 Եվ այն Անգլիան, որի գոտին է օվկիանն հաղքական,
 Որի ժայռակոտ ավին զարկվելով միշտ խորտակվում էր
 Խանդոտ գոհը խոնավ Նեպտունի,
 Նախատինձով է կաշկանդված այժմ,
 Ան անպատվությամբ և կապանքներով մագաղապների:
 Այն Անգլիան, որ բուրբին էր հաղթում,
 Ինձն է իրեն այժմ մի ամոթալի պարտության մատնել:
 Օ՛, Եթե ինձ հետ այդ նախատինձը գերեզման իջներ,
 Իմ մահը կլինէր բախտավորություն:

Մտնում Լե Ռիչարդը թագավորը և թագուհին. Օմեալը, Բուշին,
 Կրիներ, Քեզաթը, Ռաթը և Վիլորին:

ՅՈՐՔ

Ահա՛ և արժան: Հեզ վարվե՛ք նրա շահելության հետ,
 Կայտառ մտրուկին զայրացնելը խիստ աղետալի է:

ԹԱԳՈՒՀԻ

Ինչպե՛ս է ազնիվ մեր հուրեղբայրը:

ՌԻՉԱՐԴ

Ինչպե՛ս ես, ա՛յ մարդ: Ինչպե՛ս է իրեն զառամ Գոնան զգում:

ԳՈՆՏ

81 Օ՛, այդ անունը չարքան պատշան է ինձ այս վիճակում.
 Զառամ Գոնա, իրավ: Տարիքն ինձ այսպես դարձեց ուժասպառ.

Կսկիծր իմ մեջ երկար ծոմ պահեց,
Իսկ ծոմ պահողը մի՞թե չի հյուծվում:
Քնած Անգլիային երկար հսկեցի,
Իսկ հսկողը միշտ ուժասպառվում է:
Որդու հայացքը կենսատու հյութ է ծնողի համար,
Ես դրանից էլ իիստ ծոմ մնացի:
Դու գրկեցիր ինձ երշանկուրյունից,
Եվ ես դրանից հյուծվեցի իսպառ,
Գերեզմանի պես, գերեզմանի համար,
Որի արգանդը բան չի ժառանգում՝ ոսկորից բացի:

ՌԻԶԱՐԳ

Միթե զարմանի չի. որ հիվանդ մարդիկ այդքան հմտորեն
Կարող են իրենց անունը հեզմել:

ԳՈՆՏ

Ո՛չ, վիշտն է այդպես զվարճաբանում:
Դու ախրեցիր անգին ժառանգիս,
Որ իմ անունը աշխարհից ջնջես,
Եվ ես, մեծ արեա, անունս եմ հեզնում շողոմելով քեզ:

ՌԻԶԱՐԳ

Իսկ մեռնող մարդը ի՞նչ կարիք ունի ապրողին ֆժնել:

ԳՈՆՏ

Ո՛չ, ո՛չ, ապրողն է մեռնողին ֆժնում:

ՌԻԶԱՐԳ

Դու վերջին շնչում և ի՞նձ ես խոսում ֆժնելու մասին:

ԳՈՆՏ

Հիվանդը ես եմ, բայց դու ես մեռնում:

ՌԻԶԱՐԳ

Ո՛չ, ես առողջ եմ, իսկ էո վիճակը ծանր է իսկապես:

ԳՈՆՏ

Արարիչը վկա, դու ես հիվանդը,
Եվ ես աեսնում եմ՝ վիճակդ վատ է.
Իսկ դա ցավ է սրտիս:
Քո մահվան մահինը երկրիդ շափ մեծ է
Եվ դու պառկած ես այդ հսկա մահնում ախար համբավով:

Եվ սաստիկ անհագ հիվանդի նման
 Քո բալասառնված մարմնի բուժումը
 Հանձնարարել ես այն բժիշկներին,
 Որ առաջինը վերջ են տվել ինձ:
 Թագիդ մեջ բազում շողոփորք է նստած,
 Իսկ ըագի շափր մեծ շէ քո գլխից,
 Եվ փակված այդֆան փոֆրիկ թագի տակ
 Գու ամայացրի՛ր մեծդի մի Եկլիր:
 Օ՛, Եթե պապդ մարգարեանար,
 Տեսնելով ինչպես ի՛ր որդու որդին
 Կործանելու է որդիներին,
 Նա այդ ամոթը կարող է՛ր կանխել
 Քեզ թույլ շտալով տիրանալ թագին,
 Մի թագ, որ այնպես խայտառակ արի՛ր:
 Թեկուզ աշխարհին տիրէիր, գարմիկ,
 Անպատվություն է՛ր այս կղզին վարձու մի կալվածք դարձնել:
 Չէ՛ որ աշխարհի միակ հրեվանքը հենց այս կղզին է,
 Այդ է պատճառը, որ քո ամոթը անսարկեշտ է խիստ:
 Գու Անգլիայի կալվածատերն ես, և ոչ թե արքան:
 Երկիրդ օրենքի՛ ստրուկ է դարձել այժմ օրենքին:
 Իսկ դու ...

ՌԻՉԱՐԴ

Իսկ դու՛ մի լուսնոտ և ցնդած հիմար,
 Որ ապավինած գառանցող տենդիդ՝
 Համարձակվում ես քո ցուրտ ֆարոգով
 Մե՛ր ալտերն այսպես գունաթափելու,
 Մե՛ր արժայական ազնիվ արյունը մոլեգնուպյան հետ
 Հալածելով ի՛ր ապարանքից դուրս:
 Երդվում եմ գանիս մեծափառությամբ,
 Թե շիներ դու մեծն էղվարդի հարազատ որդին,
 Գլխիդ մեջ այդպես արագ թավալվող քո լեզուն այդ շար,
 Գլխիդ հետ մեկտեղ պիտի գլորվեր քո ուտերից վար:

ԳՈՆՑ

Օ՛, մի խնայիր դու ինձ, իմ եղբայր էղվարդի որդի,
 Որ ես որդին եմ ի՛ր հայր էղվարդի:
 Գու այդ արյունը հավալուսնի պես կտցահարելով,
 Թափել ես արդեն, արբել նրանով:

Եվ Գլուստերը, Լղբայրն իմ վեհանձն,
Որ երկնփում է, բարեհիշատակ հոգիների մեջ,—
Պերն օրինակ է և հավատարիմ վկա այն բանի,
Որ դու պատրաստ ես նաև էղվարդի արյունը թափել:
‘Իաջին՛ք կն՛խի իմ հիվանդության հետ,
Անգթությունը կեռ մանգաղի պես
Թող մի հարվածով վաղուց թորշոմած ծաղիկն այս հնձի:
Ապրի՛ր ամոթով և նախատին՛նով հավիտենական,
Թող այս խոսքերը բեզ դահին դառնան:
Ինձ մահին տարե՛ք, իսկ հետո՛ շիրիմ,
Երկար կյան՛ք ու սեր՛ պատվով ապրողին:

Գուրս է գնում՝ իր սպասավորներին կոթնած:

ՌԻՉԱՐԴ

Եվ թող մեռնի՛ նա, ով ծեր է ու շար,
Այդ մարդկանց համար շիրիմն է հարմար:

ՅՈՐՔ

Արևա, ինդրում եմ, նրա խոսքերը համարե՛ք արդյունք
Իր դժվարահան հիվանդությանը և ծեր հասակին:
Նա բեզ սիրում է, հաստատ գիտեմ այդ,
Ինչպես սիրում է դու՛քս Հերիֆորդին՝ որդուն հարազատ:

ՌԻՉԱՐԴ

Ո՛չ, նրանց սերը քաջ հայտնի է ինձ,
Իմ սերն էլ նրանց հանդեպ նույնփան է: Անցնեն՛ք այդ նյութից:

Մտնում է նորթեմբերլենդը:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Ես ծերուկ Գու՛տի վերջին ողջույնն եմ բերել ձեզ, արևա:

ՌԻՉԱՐԴ

Իսկ ի՞նչ ասաց նա:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Ո՛չ մի խոսք, տեր իմ:
Իր տավիղ լեզվի լարը կտրվեց,
Խոսք, կյան՛ք, ամեն ինչ՝ ծերուկն սպառեց:

Երանի՛ աշդպես Յորքը իր մանով հաջորդեր Գոնտին,
Մանս շնչին է, բայց գեր մի վախճան կտար իմ վշտին:

ՌԻԶԱՐԿ

Հասած պտուղը շուտ է ընկնում վար. աշդպես բնկավ նա,
Նրա ապրելու ժամը վերջացավ, մեր Լեթն է հիմա:
Այդ մասին այսօր: Այժմ Իռլանդիո մեր կովին դառնանք:
Մենք պետք է ճգմենք կոշտ, բրդազլուխ այդ հերիտներին,
Որ օձերի պես միշտ բնակություն է որոնում այնտեղ,
Ուր շկան ուրիշ բունավոր իժեր:
Բայց այդ ձեռնարկը պահանջում է ծախս,
Ուստի վնասում ենք հորեղբայր Գոնտի ողջ ունեցվածքը,
Նրա կալվածքը, շարժական կայքը, զենքերը, ոսկին.
Գրավել հօգուտ այդ արշավանքի:

ՅՈՐՔ

Որքան էս պետք է հլու համբերեմ: Օ՛, որքան պետք է
Անարդարությանը էս տոկամ խոհարհ պարսականությունը:
Ոչ Գլոստերի մահը դառնաղետ,
Ոչ Հերիֆորդի ասուրը դաժան,
Ոչ ձերուկ Գոնտի կշտամբանքները,
Ոչ Անգլիային պատնառած վիշար,
185 Ոչ ամուսնության արգելքը թշվառ Բոլինբրոկի,
Ոչ էլ սեփական իմ նախատինքնը
Բնավ չեն թխպել այտերն իր ժուժկալ,
Ոչ էլ մի հատիկ կենիո ոլորել առջայիս դեմքին:
Ես մեծն էղվարդի որդին եմ կրտսեր,
Հայրդ էղվարդի ավագ որդին էր, տերը Վալեսի.
Պատերազմի մեջ վայրագ առյուծից մոլեգին էր նա,
Խաղաղության մեջ՝ գառնուկից հեզ էր.
Այդպես էր ջանել ասպետ իշխանն այդ:
Դեմքը նրանն է: Այդ տարիքի մեջ նա նիշտ աշդպես էր:
Մի դեպքում էր նա հոնքերը կիտում,
Երբ խոժոռում էր ֆրանսիացոց դեմ,
Եվ ոչ թե բնդդեմ բարեկամների: Նա ծախսում էր այն.
Ինչ որ տիրում էր պատերազմի մեջ ֆաջագույն ձեռքով.
Առանց վատնելու իր հոր հաղթական ձեռքի վաստակը:
Նրա բազուկը հանախ շաղախվեց թշնամու արյամբ.

Բայց անբիծ մնաց հարազատների արյունի հանդեպ:
Օ՛, Ռիչարդ, Յորկը շատ հեռու մղվեց վշտին անձնատուր,
Որ համարձակվեց ձեզ համեմատել. դու ո՛ւր, հայրդ ո՛ւր...

ՌԻՉԱՐԴ

Լսի՛ր, հորեղբայր, ի՞նչ պատահեց քեզ:

ՅՈՐԿ

Օ՛, գերագույն իմ,
Ների՛ր ինձ, եթե հանելի է ձեզ, եթե տհաճ է.
Բավարարված եմ նույնիսկ այդքանով:
Գու՛մ կամենում եմ բանուրյա՛մբ կորզել
Ահարժամ դեսի իրավունքները,
Գոնար մեռած չլ՛. և Հերիֆորդը միթե՛ դեռ ողջ չէ.
Միթե՛ Ջոն Գոնար պատվագրկված է
Եվ Հենրին միթե՛ նրա որդին չէ:
Եվ միթե՛ Գոնար իրավունք չունի
Ժառանգությունը որդուն կապել,
Եվ նրա որդին խիստ արժանավոր ժառանգ չէ՛ միթե:
Ա՛ն Հերիֆորդի իրավունքները,
Ուրեմն խախտի՛ր նաև ընթացքը դու ժամանակի,
Խլի՛ր նրանից նրա մուրհակն ու օրենքը շարժման,
Թող շհաջորդի վաղը այսօրվան:
Դու էլ արժա չես, չէ՛ որ այդ գահը
Դու ժառանգել ես քո նախորդներից:
Արդ, երզվում եմ ես, և թող աստված օգնի,
Անարդարորեն եթե դու գրկես
Գու՛մս Հերիֆորդին իր իրավունքից,
Հրաժարվես այն հրովարտակներից, որոնց կարող է
Նա ներկայացնել դատախազներին՝
Ժառանգությունը ետ պահանջելու.
Եվ նրա տված երդումն ուրանաս, այդպես վարվելով
Դու հազար փորձանք կրե՛րես գլխիդ
Եվ հազարավոր սրտեր կկորցնես. որ քեզ սիրում են.
Եվ կմարսվես դու իմ դեռահաս համբերությունը
Այն մտածմունքին.
Ուր դադարում են խոհեկ պատիվն ու հնազանդ ոգին:

ՌԻՉԱՐԳ

Խորհիր. ինչ կուգես. մենք կգրավենք
Նրա գրահը. դրամը. կալվել և կալվածքները:

ՅՈՐՔ

Արդ ես գնացի. մնաս բարով, արքա,
Ոչ ոք չի կարող հուշել ապագան:
Հողի ընթացքը, սակայն, մի բան է կռահել տալիս,
Որ վերջաբանը շատ է սոսկալի:

ԳՆՈՒՄ Է:

ՌԻՉԱՐԳ

Բուշի, շաապիր կոմս Վիլտշերի մոտ.
Ասա, որ իրեն մենք սպասում ենք Իլու դոյակում,
Թող փութա այստեղ. որ վերգիր անենք Ջոն Գոնաթի տունը:
Վաղը մենք պիտի Իոլանդիա մեկնենք:
Մեր այդ բացակա ամբողջ միջոցին
Անգլիո վրա, որպես կառավարիչ,
Նշանակում եմ հորեդրայր Յոբին,
Նա ուղղամիտ է և միշտ նվիրված մեզ անկեղծ սիրով:
Երբանք, բազումի, վաղը ես պետք է բեզ հրաժեշտ տամ,
Շատ կարն է պահը մեր ուրախության:

Փողեր: Թագավորը. բազումին. Օմելը. Բուշին,
Գրինը և Թեգոտը դուրս են գնում:

ՆՈՐԹԵՄԲԵՐԸՆԵՐ

Գումս կանկաստերը մեռավ, իշխաններ:

ՌՈՍ

Սակայն նա ողջ է. որդին դումս է այժմ:

ՎԵՂՈՅԻ

Տիադոսով միայն, ոչ թե հասույթով:

ՆՈՐԹԵՄԲԵՐԸՆԵՐ

Նա այդ երկուսն էլ լրիվ կատանար,
Երբ մեր երկրում արդար կարգ լիներ:

ՌՈՍ

Սիրտս լցված է. թող պայթի սակայն նա լուսրյան մեջ,
ես ստիպված եմ փակ դնել լեզվիս:

ՆՈՐԹԵՄԹԵՐԼԵՆԳ

Ո՛չ, խոսի՛ր ազատ: Թող պտպանձվի նա,
Ով եռ ասածը ուրիշին կասի, որ բեզ վնաս տա:

ՎԻՈՅԻ

Մի գուցե խոսե՛ղ վերաբերում էր դուրս Հերիֆորդի՞ն
Երե այդպես է, համարձակ սկսի՛ր,
Ռոնկա փուրկոտ է այդ դիսի օգտին մի լավ բան լսել:

ՌՈՍ

Ինչո՞վ կարող եմ օգնել ես նրան.
Նրան խղճալո՞վ. ա՛յդ ե՛ք համարում դուր՝ օգտակար բան.
Երբ նա գրկված է իր հարևանական ժառանգությունից:

ՆՈՐԹԵՄԹԵՐԼԵՆԳ

Վկա է աստված, խիստ ամոթալի
Պարսավ է նյութված այդ արհայական իշխանի հանդեպ
Եվ նրա նման շատ շատերի դեմ,
Այս դեպի անկում գնացող երկրում:
Աբհան՝ արհա չէ: Նա ստորաբար
Կառավարվում է շողոփորթներով:
Բավական է որ ատելությունից
Նրանք շարախոսեն մեզնից մեկն ու մեկին.
Եվ թագավորը պատրաստ է դաժան դատաստան տեսնել,
Նրան գրկելով կյանքից, հասույթից, երեխաներից:

ՌՈՍ

Նա ուսմկի մեշֆին շատ անտանելի հարկեր կոտակեց,
Եվ ժողովուրդը պաղեց նրանից:
Տոհմիկ հինավուրց վեճերի համար
Տուգանեց երկրի ազնվականներին,
Անդարձ կորցնելով թե՛ ուսմկի սիրար և թե՛ իշխանի:

ՎԻՈՅԻ

Ամեն օր մի նոր տուրֆ է հնարում.
Մի նշանակետ պարապ տոմսերով,

Փոխառություն բռնի, ինչ գիտեմ էլ ինչ:
Ի՞նչ է լինելու սրա վերջը, աստված:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Երկրի ավերման պատճառը բնավ կոխվեց չեն,
Ոչ մի պատերազմ նա դեռ չի մղել:
Այն, ինչ որ նրա բաշ նախնիները
Նվաճել էին հաղթական սրով,
Նա ցրիվ տվեց կաշկանդված անմիտ դաշնագրերով:
Խաղաղությունը մեզ շատ սուղ նստեց, բան պատերազմը:

ՌՈՍ

Իվ կոմս Վիլտշերը վաճառկալությամբ
Թագավորությունը իր ձեռքը վերցրեց:

ՎԵԼՈՅԻ

Արքան կոստրն ընկած մի պարտապան է, խիստ սնանկացած:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Ամոթ և անկում իր վրա բարդված:

ՌՈՍ

Նա դրամ չունի այս իդլանդական արշավի համար:
Թեպետ հարկերը ծանր են չափազանց,
Նա որոշել է կողոպտել նույնիսկ ախորված դֆսին:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Իր եղբոր որդուն. անտոհմի՛կ արքա:
Սակայն իշխաններ, լսում ենք սուլոցը անեղ փոքրիկի,
Բայց չենք որոնում մի ապաստարան պատսպարվելու:
Տեսնում ենք ինչպես հողմը նեղում է մեր առադաստը,
Բայց չենք մահառում, այլ սպասում ենք ստույգ կործանման:

ՌՈՍ

Մեռ նավը ոսլիդ անդունդ է գնում, այդ մենք տեսնում ենք,
Որովհետև մենք հաշտվել ենք նրա պատճառների հետ:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Դու նիշտ ես ասում: Նույնիսկ մահվան կույր աշխարհի միջով
Ես նշմարում եմ ժպտացող կյանքը, բայց չեմ հանդգնում
Հաղորդելու ձեզ լուրը փրկարար:

ՎԻՂՈՅԻ

ՄԵՐ ՎԵՐԱՔԵՐՄԱՄԲ ԴՈՒ ԱՆԿԵՂԾ ԵՂԻՐ,
ԻՆՇԱԿԵՆ ՈՐ ՄԼՆՖ ԼՆՖ ԲՈ ԿԱՆՊԵՍՅԱՆ ԱՆԿԵՂԾ:

ՌՈՍ

ՄԵՂ ԿԵՄ ԱՅԱՐՉ ԽՈՍԻՐ, ԿՈՒՄԱ ՆՈՐՔԵՄՔԵՐԵԼԵՆՂ,
ԵՐԵՒԱ՝ ՄԵԿ ԵՆՖ: ՔՈ ԽՈՍԱՐՂ ՄԵՐՆ Է, ՄԵՐ ՄԱՍԺԱԺՐ,
ԽԱԿ ՄԵՐՆ ԷՂ՝ ԲՈՆԵՐ: ՀԱՄԱՐՃԱԿ ԽՈՍԻՐ:

ՆՈՐՔԵՄՔԵՐԵԼԵՆՂ

ԱՅՍԱԿԵՆ ՈՐԵՄՆ. ՓՈՐ-ԼԵ-ՔԼԱՆԻՅ,
ՈՐ ԾՈՎԱԽՈՐՉ Է ՔՐԵՒՈՆԻ ՄԵՉ, ԵՍ ՄԻ ԼՈՒՐ ԱՈՍ,
ՈՐ ՀԵՐԻՓՈՐՊԻ ԴՈՒՄԱ ՀԵՆՐԻԿՈՍՐ Ե ԼՈՐՂ ԿՈՐԵՄՐ,
ՈՐ զԺՈՎԵԼ ԷՐ ԷՖԱՄԵՐ ՂԲԱԻ ԿԵՄ,
ԵՂ ԿՄԱՆԱՅԱԿԵՆ ԿՐԱ ԵՂԲԱՅՐ, ՈՐ ՔԵՆՈՐՔՐՈՒ ԵՂԻՍԿՈՍՅՈՍՆ ԷՐ,
ՍՐ ԷՐԱՔԻՆՉԼՄՐ Ե ՋՈՆ ՌԵՄԱՄՈՆԵՐ,
ՍՐ ԶՈՆ ՆՈՐՔԵՐԻՆ, ՏՈՐԵՐՄ ՎՈՒՄԵՐՈՆ, ՖԵՆՆՍԻԱ ՔՎԼՆԱՐ, —
ՍԵԱՆՖ ԲՈՂՈՐՐ ՈՐ ԿՂՈՐ ԿԱՎՈՎ,
ԼՐԵՆՅ ԿԵՄ ԱՈՍԺ ԵՐԼԲ ԿԱՂԱՐ ՂՈՐԲ,
ՈՐՈՆՅ ԿԱՂՄԵԼ Է ԴՈՒՄԱ ՔՐԵՒՈՆԵՐ,
ԱՅՍԱԿԵՆ ԵՆ ԼՈՂՈՒՄ ԼՐԻՎ ԱՅԱՈՍԱՂԵՆ
ԵՂ ԿՄՈՂՈՐ ԵՆ ՄԵՐ ԿՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎԱՔԻՐ ԴՈՒՄԱ ՎԱԿ,
ԲԱՅՅ ԱՅԱՍՈՒՄ ԵՆ ՄԻ ԿԱՐՄԱՐ ԱՅԱԻ,
ԹԵ ԵՐՔ Է ԱՐԲԱՆ ԻՂՅԱՆՊԻԱ ՄԵԿՆՈՒՄ:
ԵՐԵ ՈՒՂՈՒՄ ԼՆՖ ԽՈՐՄԱԿԵԼ ԼՈՒԺՐ ՄԵՐ ՍՈՐԿՈՐՅԱՆ.
ՄԵՐ ԿԱՅՐԵՆԻՔԻ ԺԱՎՔԱԺ ՔԵՐԵՐ
ԱՐՃԱԿԵԼ ԿՂՈՐ ՔՈՒՉՖԻ ԿԱՄԱՐ,
ՄԵՐ ՂՐԱՎ ՂՐԱԺ Ե ԱՅԱԿԱՆՎԱԺ ՔԱՂՐ ԵՍ ՂՆԵԼ,
ԵՂ ԱՐՔԵԼ ՓՈՂՉՈՅ ՄԵՐ ԻՉԽԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՆԻ ՈՍԿԻՆ.
ՄԵՐ ՄԵԺԱՓԱՈՒՆ ԽՐ ՎԵՏՈՐՅՈՒՆՐ ՎԵՐՈՂԱՐՃՆԵԼՈՎ,
ԱՐՂ, ԿԵՅԵՖ ԻՆՃ ԿԵՄ ՂԵՂԻ ՌԵՎԵՆԱՅՈՐՈՐԳ:
ԵՐԵ ԱՅՂ ԱԼԵՍԱԿ ԱՐԵԱՆՖԻ ԿԱՄԱՐ ՔՈՅՂ Է ՃԵՐ ՈՂԻՆ,
ԵՍ ՄԵՆԱԿ ԿԵՐՔԱՄ, ԲԱՅՅ ԱՅԱ ՎԱՂԱՆԻՔՐ ՀԱՍԵՖ ՈՉ ՈՐԻ:

ՌՈՍ

ԹՎԱՐԵ՛Ֆ ՃԻԵՐՐ, ԱՄՈՐ ԵՐԿՉՈՒՄԻՆ: ՃԵՅԿԵ՛ՆՖ ՄԻԱՍԵՂ:

ՎԻՂՈՅԻ

ՇՈՒՄ ԻՄ ՃԻՆ ՔԵՐԼԲ. ԵՍ ԱՈՂԱՉԻՆՐ ԿԿԱՍՆԵՄ ԱՅՆԱԵՂ:

ԳՆՈՒՄ ԵՆ:

Արքունիքը

Մտնում են քաղունին, Բուշին և Քեզարը:

ԲՈՒՇԻ

Ձեր բարձրությունը շատ է տխուր, աիկին:
Դու՛մ քաղավորին հրաժեշտ տալիս, շէ՛՛ որ իռստացա՛մ
Մի կաղմ դնելու կյանքը վտանգող դառնությունները
Եվ ուրախության անձնատուր լինել:

ՔԱԳՈՒՂԻ

Ես դա խոստացա արժայի համար,
Նույնը կատարել ես անկարող եմ իմ վերաբեմամբ:
Տրամուրյո՛ւն, ինչո՛ւ դու ինձ հյուր եկար,
Պաանառը այն է, որ իմ Ռիչարդին,
Իմ անգին հյուրին հրաժեշտ տվի: Բայց ինձ թվում է,
Որ մի մեծ վիշտ է պահված ինձ համար բախտի արգանդում,
Եվ ես դողում եմ ինչ-որ մի բանի ակնկալելով,
Իսկ դա ավելի սարսափելի է,
Քան անջատումը իմ ամուսնու նեա, իմ քաղավորի:

ԲՈՒՇԻ

Ամեն վիշտ տասնյակ անդրադարձ ունի,
Ամեն անդրադարձ՝ վիշտ շէ ասանձին,
Բայց արտաֆնապես նման է վշտի,
Քանզի արցունքից մշուշված աչքում,
Ամեն առարկա կոտորակվում է բանգում մասերի,
Այն նկարի պես, որին մոտիկից հայացք նետելիս
Քեզ երևում են լոկ եղծված գծեր, իսկ շեղ նայելիս,
Տեսնում ես նրա պատկերը լրիվ:
Ճիշտ այդպես էլ դու՛մ, Բաղցրիկ քաղունի,
Կողքից դիտելով անջատումը ձեր անգին ամուսնու,
Վշտի տեսիլքը հայանվել է ձեզ ամբողջ պատկերով:
Ուղիղ հայեցե՛ք և կա կցնդի:
Հավասացե՛ք ինձ, անգին քաղունի,
Ձեր տրամուրյունը նրանից բխեց,
Որ քաղավորը ձեզնից անջատվեց:

Մյուսը ցնորք է լոկ մտացածին,
Ողբն է ակունքը աշփղ մշուշին:

ԹՄԳՈՒՂԻ

Գուցե այդպես է, բայց նոգիս նեւոսա
Համոզում է ինձ, որ ցավն ուրիշ է: Ու այդ ցավն այնպես
Ճնշում է սիրոս, այնքան ծանր է նա:
Իմ ցնորածը գուցե իսկապես ոչնչություն է,
Բայց ինձ տանջում ու գունարափում է:

ԲՈՒՇԻ

Պա մաքի ստեղծած տեսիլն է, աիկին:

ԹՄԳՈՒՂԻ

Ո՛չ, մաքի ստեղծած այդ տեսիլները
Բխում են ինչ-որ իրական վշտից. իմը այդպես չէ:
Իմը ծնվում է ոչնչությունից,
Կարծես այդ ոչինչ բանի մեջ ինչ-որ մի անհայտ բան կա,
Ուրիշ ես շուտով պիտի տիրանամ:
Թե այդ ինչ բան է, ես դեռ ծանոթ չեմ,
Պա մի անանուն տանջանք է. դիտեմ:

Մանում է Գրիեր:

ԳՐԻՆ

Աստվա՛ծ պահապան ձեզ, մեծ տիրուհի: Ողջույն, պարուններ,
Հուտով եմ արքան դեռ նավ շի նստել դեպի Իսլանդիա:

ԹՄԳՈՒՂԻ

Ինչո՞ւ ես կարծում: Ավելի լավ չէր.
Հուտայ, որ արդեն նավ է նստել նա:
Զէ՛ որ իր ամբողջ հույսը դրել էր հապնեպի վրա:
Այդպես հուսալուդ պաանառը հայտնիր:

ԳՐԻՆ

Ուրախ եմ արքան՝ մեք հույսը. աիկին,
Կարողանա՛ր իր գորքը ետ դարձնել՝
Հուսահատության դատապարտե՛լով հույսը բշնամու,
Ու ոտք է կոխել արդեն մեք էրկիր:
Բոլիբրոկը ամսուրավայրից ինճնակամ դարձած՝

Զորհով անվտանգ ասի է դուրս եկել
Ռեվենսպուրգի մեջ:

ԹԱԳՈՒՂԻ

Միթե՞ իրավ է: Փրկի՛ր մեզ, աստված:

ԳՐԻՆ

Ավա՛ղ, չափից դուրս իրավ է, տիկին:
Քայց կա ավելի մի սոսկալի լուր.
Նորթեմբերլենդը և Հենրի Պերսին՝ որդին այդ կոմսի,
Եվ նմանապես Ռոսը, Քոմենտը և լորդ Վիլոբին
Իրենց ազդեցիկ բարեկամներով, փախել են նրա մաս:

ԲՈՒՇԻ

Իսկ ինչո՞ւ դուք կոմս Նորթեմբերլենդին
Եվ նրա բոլոր համախոհներին
Զմեղադրեցի՞ք գահի դեմ ուզված դավադրության մեջ:

ԳՐԻՆ

Այդպես արեցինք, բայց կոմս Վուստերը
Հրամարվեց իր ծառայությունից,
Եվ տեսեսության ծառաների հետ
Փախավ Հենրիկոս Բոլինգբրոկի մաս:

ԹԱԳՈՒՂԻ

Գրի՛ն, ախրության իմ հոգաբարձու,
Բոլինբրոկը վշտիս շաբաղեմ ծնունդը եղավ,
Ա՛յ. քե ինչպիսի՛ սոսկալի հրեշ ժայրքեց իմ հոգին,
Եվ ես շնչասպառ դարձած նորամայր
Հին ողբիս վրա նոր ողբ բարդեցի, նոր վիշտ ու նոր ցավ:

ԲՈՒՇԻ

Մի՛ վհառվե՛ք, տիկին:

ԹԱԳՈՒՂԻ

Դո՛ւ ես խանգարում ինձ հուսահատվել
Եվ ռիերմանալ խաբուսիկ հույսին: Նա է շողոփորթ
Եվ մարդահանո մի պատառաբույծ, մահը ետ վանող,
Ով որ ուզում է հեզաբար քանդել կապանքը կյանքի,
Որին նենգ հույսը ծայրահեղ ճիգով դանդաղեցնում է:

Յորքի դուխն է գալիս:

ԹԱԳՈՒՂԻ

Ուազմի դրոշմեր իր ծեր վզի շուրջ,
Նրա հայացքը, օ՛, ի՛նչ ահավոր հոգսով է բխւած:

Մտնում է Յորքը:

Եկա՛ք, հորեղբայր: Ի սեր ասածո,
Կեր մխիթարիչ մի խոսք ասուցեք:

ՅՈՐԹ

Այդպես վարվելով ես կստեի.
Իսկ ստուրյունը դեմ է բնույթիս:
Մեզ մնաց միայն երկնում գտնել մխիթարություն,
Իսկ երկրի վրա խաչերից, հոգսից,
Ու ողբից բացի ուրիշ բան չկա:
Ձեր ամուսինը զնաց հաղթություն փնտրելու հեռվում,
Մինչդեռ քշնամին ներսից է ուզում տունը գրավել:
Ինձ այստեղ թողեց նեցուկ դառնալու իր երկրի համար,
Սակայն ծեր եմ ես ու ինքս կարոտ մի հենարանի:
Նրա գեխության հաջորդեց տհաճ ժամը փսխումի,
Այժմ կիմանա, թե իր շողոփոթք բարեկամները
Ինչ փորձանքի մեջ դրեցին իրեն:

Մտնում է մի սպասավոր:

ՍՊԱՍԱՎՈՐ

Մինչև իմ գալը ձեր որդին արդեն մեկնել էր, տեր իմ:

ՅՈՐԹ

Որդի՛ս: Մեկնե՛լ է: Արդ թող անխտիր բոլորը մեկնեն
Ուզած ուղղությամբ: Ազնվականները սկսել են փախչել,
Իսկ ժողովուրդը լուռ է տակավին: Բայց վախենում եմ,
Որ կապստամբոլի դուխս Հերիֆորդի կողմը բռնելով:
Դու իմ Գլոստեր քոջ մոտ փութա, դեպի Պլեշի,
Եվ ասա թող ինձ շտապ ուղարկի քան հազար շիլինգ:
Վերցրո՛ւ մատանիս:

ՍՊԱՍԱՎՈՐ

Միլլորդ, ներեցե՛ք, մոռացա հայտնել.
Այսօր, երբ գործով ես այնտեղ հասա...
Բայց վախենում եմ, որ մնացորդը ձեզ վիշտ պատճառի:

ՅՈՐՔ

Հը, ի՞նչ կա, պատմիր:

ՍՊԱՍԱՎՈՐ

Մեկ ժամ իմ այնտեղ հասնելուց առաջ դժտունին մեռավ:

ՅՈՐՔ

Ողորմա՛ծ աստված, վշտերի այս ինչ մակընթաց եղած
Ահեղամոռունչ օվկիան է խուժում այս դժբախտ երկրին:
Զգիտե՛մ ինչ անեմ: Երանի՛ թե արքան,—
Դավանանությանը թեև չեմ եղել դրան արժանի,—
Ինձ իմ եղբոր հետ զվաատած լինե՛ր:
Մարդ առաքվա՛ծ է դեպի Իոլանդիա:
Ինչպե՛ս դրամ գտնե՛նք այս կովի համար:
Եկ գեանք, բույր իմ,— ներեցե՛ք խնդրեմ,
Ուզում էի ասել՝ իմ եղբոր աղջիկ:
Իսկ դու մի քանի սայլ գտիր շտապ
Եվ մեր տան եղած բոլոր գեղեցիկ փոխադրի աշատեղ:

Սպասավորը գնում է:

Պարոններ, չգնա՛նք զորք հավաքելու,
Մեզ հարկավոր է աշխարհագոր կազմել:
Քննալ չհավատաք, թե ես կարող եմ որե՛նչ ձևով
Այս խիստ խնկված կծիկը փանդել,
Որ վստահված է տկար ձեռքերիս:
Դրանք երկուսն էլ ազգական են ինձ.
Մեկը գերագույն իմ թագավորն է, որին Երդումով,
Ես իմ պարտով ես պարտավոր եմ գորավիզ կանգնել,
Մյուսը դարձյալ իմ ազգականն է, որի հետ արքան
Անարդար վարվեց: Իմ խիղճն ու արյունը հրամայաբար
Առաջնությունը նրան են տալիս:
Պետք է մի բան անել: Երբա՛նք, զարմունի,
Ես ֆեզ կուղեկցեմ: Պարոնե՛ր, շտապ կազմե՛ք ձեր զորքը,
Եվ ինձ հանդիպե՛ք Բերկլի ամրոցում,
Ես որոշել էի Պլեշի մեկնել,

Քայց ժամը ուշ է: Մեր տերության մեջ
Ամեն ինչ անհարթ ու խառն է դրված,
Ամեն բան այժմ մազից է կախված:

Յորևր և բազումիև գնում են:

ԲՈՒՇԻ

Քամին հաջող է մեր երկրից դեպի
Իովանդիա թռչող լուրերի համար,
Քայց ոչ այնտեղից եկող լուրերի:
Այստեղ մեզ համար անկարելի է
Այնքան զորք կազմել, որ կարողանանք բախվել բշնամուն:

ԲԵԳՈՏ

Տգետ ամբոխը վարանամիտ է,
Նրա սերը իր ֆակի մեջ է. ով դատարկում է նրա ֆակը,
Նա նրա սիրտը լցնում է թունոտ մի ատելությամբ:

ԳՐԻՆ

Կա նաև մի բան. մեր մերձ լինելը թագավորի հետ
Կարող է մեր դեմ ուղղել այն մարդկանց ատելությունը,
Որ նրան չեն սիրում:

ԲՈՒՇԻ

Եվ թագավորին նրանք ատում են հենց դրա համար:

ԲԵԳՈՏ

Մենք էլ ճիշտ այդպես նրանց ենք ատում, չէ՞ որ շարունակ
Մենք մերձավոր ենք եղել արքային:

ԳՐԻՆ

Ես որոշել եմ Ֆրիստոլ փախչել
Եվ պատսպարվել այդ ամբողջի մեջ,
Վիլտշերի կոմսը արդեն այնտեղ է:

ԲՈՒՇԻ

Ձեզ հետ եմ և ես: Դու այդ ոխակալ տգետ ամբոխից
Լավ բան չսպասես: Ազատություն տուր և շների պես
Քեզ մաս-մաս կանի պատառուտելով:
Դուք մեզ հետ կգա՞ք:

ՔԵԳՈՏ

Ոչ, ես վնեւ եմ Իպանդիա մեկնել՝ թագավորի մոտ:
Մնացե՛ք բարով: Եթե դեպքերը սրտով գուշակենք,
Հազիվ թե նորից իրար հանդիպենք:

ՔՈՒՇԻ

Մի գուցե Յորժին հաջողվի հաղթել Բոլիներոկին՝
Ես շարեւելով նրա գրոհը:

ԳՐԻՆ

Ավա՛ղ, իմ խեղճ դուստ. փորձիր ավագի հատիկներն հաշվել
Կամ օվկիանոսի ջուրը դատարկել բուռ-բուռ խմելով,
Յորժի բռնած գործը դրան է նման.
Հագար գինվորից մեկն է հուսալի,
Այդպիսի կովում հնարավոր չէ թշնամուն հաղթել,
Մեզ պետք է առ միշտ հրաժեշտ մաղթել:

ՔՈՒՇԻ

Բայց ես հույս ունեմ հանդիպել ձեզ հետ:

ՔԵԳՈՏ

Ո՛չ, վախենում եմ գառված եմ հավետ:

Գնում եմ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Մի ամառի վաղը Գլուստերի դքսության մեջ:

Մտնում են Բոլիներոկը և նորթեմբերլենդը՝ գաբով:

ԲՈՎՆԲՐՈԿ

Դեռ շա՛տ կա, միլորդ, որ Թերկլի հասնենք:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Հավատացե՛ք ինձ, իմ թանկագին լորդ,
Օտարական եմ ես Գլուստերյան այս դքսության մեջ.
Վայրի, ամառի այս բլուրները,
Քարհարոտ, անհարթ ճանապարհներն այս,
Մեր մղոնները երկարացնում են, դարձնում դժնդակ,

Լոկ այս հաճելի գրույցը ձեզ հետ շափարի նման
Քաղցրացնում է մեր դժվարին ճամփան:
Իսկ որքան պետք է տանջալից թվա այն առապարը,
Որ Ռեվենսպուրգից Կոտավոլդ է ձգվում,
Որով անցնում են Ռոսն ու Վիլոբին,
Չրկված ձեր ավտոժ ընկերությունից:
Իմ դժվար ճամփից ես մնում եմ գոհ
Ձեզ հետ լինելու փաղցր պատրանքով:
Ինչ որ ես ունեմ՝ նրանք են տենչում,
Այդ հույսն է նրանց ուղին փաղցրացնում:
Հրեվանի հույսը նվազ վայելի է,
Քան թե այն հույսը, որ վերածվել է արդեն վայելի:
Հույսով փայլողի ճանապարհն է կարն,
Այդպես է ուղին այդ երկու հոգևած լորդերի համար.
Ինչպես որ դուք եք անհամբույր ուղիս
Գարձնում հեշտափայլ:

ՅՈՒՆԻՔՐՈԿ

Ձեր ուղեկիցը անարժան է խիստ
Այդ լավ խոսքերին: Բայց ո՞վ է գալիս:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Այդ իմ որդին է, Հենրիկոս Պերսին,
Ուղարկված անշուշտ իմ եղբոր կողմից:
Քո հորեղբայրը ինչպե՞ս է, Հենրի:

Մտնում է Պերսին:

ՊԵՐՍԻ

Ես ինքս էի ուզում ձեզնից իմանալ այդ մասին, տեր իմ:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Ինչպե՞ս: Միթե՞ նա բազումնու հետ շէ:

ՊԵՐՍԻ

Ոչ, ազնիվ տեր իմ: Նա պալատը լքեց,
Բազավորական ողջ անձնակազմը ազատ արձակեց
Եվ ինքն էլ փախավ:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Պատճառը ի՞նչ էր.

Այդպես շէր վնաս, երբ վերջին անգամ ես նրան տեսա:

ՊԵՐՍԻ

Պատճառը այն է, որ ձեզ դավանան հայտարարեցին,
Եվ նա Ռեվենսպուրգ շտապեց, տեր իմ,
Որ ծառայության առաջարկ անի դուրս Հերիֆորդին,
Իսկ ինձ ուղարկեց Բերկլի ամրոցը տեղեկանալու,
Թե Յորքի դուրսը որքան գործ ունի այնտեղ ժողոված,
Եվ վերադարձին գեկուցել իրեն:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Դուրս Հերիֆորդին շե՛ս հիշում, տղաս:

ՊԵՐՍԻ

Չեմ հիշում, տեր իմ: Ինչպես կարող եմ էս հիշել մեկին,
Որին իմ կյանքում չեմ տեսած բնավ:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Արդ ծանոթացիր, սա է այդ դուրսը:

ՊԵՐՍԻ

Ուրախ եմ, տեր իմ, ծառայելու ձեզ.
Ես դեռ անփորձ եմ, հում, անվարժ, չահել,
Քայց ժամանակին հասուն դառնալով՝
Ձեզ շատ ավելի նպաստ կբերեմ
Թե՛ ծառայությանը և թե՛ իմ սիրով:

ԲՈՒԼՆԲՐՈԿ

Շնորհակալ եմ, իմ ազնիվ Պերսի,
Լավ բարեկամին հիշելն ինձ համար
Միակ գերագույն հանույժն է կյանքում:
Քանի որ բախտն իմ հասունանում է սիրուդ զուգընթաց,
Քո ազնիվ սերը կարող կլինեմ լրիվ հատուցել:
Իմ սիրուն է կապում այդ դաշնագիրը,
Իմ ձեռքն է իջնում իբրև կնիք վրան:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Որքա՛ն է հեռու Բերկլին այստեղից: Եվ, առա, նույնպես,
Որքա՛ն գործ ունի ծերուկ Յորքն այնտեղ:

ՊԵՐՍԻ

Ամրոցը, տեսե՛ք, կանգնած է ահա թավուտից այն կողմ:
Զորքի ֆանակը երե՛ք հարյուր է, այդպես լսեցի,

Այնտեղ են Յորքը, Սեյմուրն ու Բերկլին,
Մրանք են, ուրիշ հայտնի իշխաններ և լորդեր շկան:

ՆՈՐԹԵՄԲԵՐԸՆՆԳ

Ահա գալիս են Ռոսն ու Վիլոքին,
Երաններն արևոտ և շտապելուց կաս կարմիր կտրած:

Մտնում են Ռոսն ու Վիլքին:

ԲՈՒՆԵՐՐՈԿ

Բարի՛ էկաք, լորդեր,
Գիտեմ ձեր սերը հետապնդում է
Մի անտրական դաժանան գտնել.
Ես եմ այդ մարդը: Իմ բոլոր գանձից
Ինձ մնաց միայն խոսք Երախտիքի,
Որ ևս արտաբուխ հվիրում եմ ձեզ:
Երե առավել գանձի տիրացա,
Ձեր սերն ու հիգը ևս առատորեն կփոխհատուցեմ:

ՌՈՍ

Մեր գանձը դուք եք, ազնվագույն լորդ:

ՎԵՂՈՐԻ

Եվ ինչպե՛ս պետք է այդ պարտքը փակենք:

ԲՈՒՆԵՐՐՈԿ

Ես ձեզնից անվերջ շնորհակալ եմ,
Մինչև իմ բախտը, որ դեռ մանուկ է, առնական դառնա,
Այդ միակ բառն է լինելու շուայլ իմ պարգևը ձեզ:
Այս Եկոդն ո՞վ է:

ՆՈՐԹԵՄԲԵՐԸՆՆԳ

Բերկլին է, կարծեմ:

Մտնում է Բերկլին:

ԲԵՐԿԼԻ

Լորդ իմ շերիֆորդ, ևս պատգամով եմ առաջված ձեզ մոտ:

ԲՈՒՆԵՐՐՈԿ

Ինձ կանկաստե՛ր ևն անվանում, միլորդ,
Եվ ես Եկել եմ, որ այդ անունը

Գտնեմ, հաստատեմ Անգլիայի մէջ:
Իմ պատասխանը ձեզ տալուց առաջ
Ձեր լեզուն պարտ է այդ տիտղոսն հնչել:

ԲԵՐԿԻՐ

Թյուր մի հասկացեմ իմ խոսքը, տեր իմ,
Նպատակ չունեմ մի հատիկ տիտղոս ջնջել ձեւ պատվից.
Ինչպէս էլ կոչվեմ,
Երկրիս վեհագույն կառավարիչն է ինձ ձեզ մոտ հղել, —
Յորքի մեծ դուքսը. — որ տեղեկանամ, թե պատնասոն ինչ է,
Որ դուք, օգտվելով մեր բազավորի բացակայությամբ,
Ահաբեկում եք երկրիս անդորրը մերկացած սրով:

ԲՈՒԼՆԲՐՈՎ

Ես կարիք չունեմ ձեւ միջնորդության:
Այստեղ է գալիս Յորքի դուքսն անձամբ:

Մտնում է Յորքը իր շխիւմբով:

Ազնի՜վ հորեղբայր:

(Ծունկ է խոնարհում)

ՅՈՐԹ

Խոնարհ սիրտ ցույց տուր, ոչ թե խոնարհ ծունկ.
Որի պաշտոնը կեղծ է, խաբուսիկ:

ԲՈՒԼՆԲՐՈՎ

Բարի՜ հորեղբայր:

ՅՈՐԹ

Ձեմ ուզում լսել,
Ոչ բարի ասա, ոչ էլ հորեղբայր.
Ես հորեղբայր չեմ մի դավանանի և «բարի» բռուն այդ
Վարկաբեկում է այն մարդկանց շուրթին, որոնք բարի չեն:
Ինչո՞ւ արգելված, երկրից վտարված այդ սրունները
Համարձակվեցին Անգլիո հողի սուրբ փոշուն դիպչել.
Դարձյալ մի ինչու. և հանդգնեցին
Նրա անխոռով լանջը արտել,
Նրա գունաղեմ գյուղերը ուզումով ահաբեկ արած,
Եվ գոռոզանալ Լլբայրասուպանի անիրավ գլնումով:

Մեր օծյալ արքան բացակայում է,
Ա՛յդ է պատճառը ինչպես գալուն:
Գու սխալվում ես, ո՛վ անմիտ մանուկ,
Նա շուտով կգա, — ուշանում է լոկ, —
Եվ նրա ուժը իմ հավատարիմ այս կրծքի մեջ է:
Եթե լինեի քեզ պես հրաբուր մի երիտասարդ,
Ինչպես այն օրը, երբ ես և Գոնար՝ անվեհեր հայրդ,
Քյուր ֆրանսիացոց շարքը նեղեցիով
114 Մահից փրկեցինք Սևուկ իշխանին, Արեսին այդ քաջ,
Օ՛, այն ժամանակ իմ այս բազուկը, —
Այժմ խեղության մի կալանավոր, — ինչպիսի՞ թափով
Քեզ պիտի սլառվեր հանցանքիդ համար:

ԲՈՒՆԲՐՈՎ

Սնգին հորեղբայր, ասա իմանամ հանցանքս ի՞նչ է.
Ի՞նչ մեղք եմ գործել. ինչպե՞ս, ի՞նչ բանում:

ՅՈՐՔ

Այնպիսի՞ մի մեղք, որ ծանրագույնն է բոլոր մեղքերից:
Մեղադրված եմ իբրև մի անարգ խաղաղարի
Եվ դավաճանի,
Ահաբար ես դու և դեռ շավարտած ժամկետն աստուծոյդ,
Այստեղ ես եկել զենք բարձրացնելու զերագույնիդ դեմ:

ԲՈՒՆԲՐՈՎ

Ես աստուծոյդ յոյսն անհաւատ
Բայց ես եմ եկել իբրև կանկաստեր:
Ազնիվ հորեղբայր, իմ սխալներին
Խնդում եմ հայեք անտարբեր աչքով,
Ձեր մեջ, հորեղբայր, ես հորս եմ տեսնում և ծերուկ Գոնար
Կարծես կենդանի կանգնած է իմ դեմ. այդ դեպքում, հայր իմ,
Մի՛րքե թույլ կտամ, որ դատասարտյալ և աստանդական
Ես այսպես հաճեմ օտար աշխարհում,
Իմ իրավունքն ու հարստությունը բռնությամբ խլված
Եվ արված շվայտ անտառակներին:
Էլ ինչո՞ւ եմ ես ծնվել աշխարհում:
Եթե իմ զարմիկ արքան արժա է Անգլիո գահին.
Այդ հույն օրենքով ես կանկաստեր եմ:
Գու՛ր ունեք որդի՝ անունը Օմեայ, ազնիվ զարմիկն իմ:

Եթէ պատահե՛ր, որ դուք մեռնեիք իմ հորից առաջ,
Եվ իմ փոխարենն ձեր որդին դառնար այսպես ռոմատակ,
Հորեղբայր Գոնար հարազատ հոր պէս նրան հրելով՝
Վեր կարտամղեր այդ կեղտոտ խորշից:
Ես ժառանգութեան իրավունք ունեմ,
Սակայն մերժում եմ հանաչել այստեղ
Աւրուսի քոքերն իմ իրավունքի,
Իմ հորենական ամբողջ բարիքը
Յոնի գրավված և վաճառված է:
Եվ այդ ամենը՝ գործածված ստոր նպատակների:
Ինձ ի՞նչ էր մնում անել, հորեղբայր: Ես հօլատակ եմ
Եվ որոշեցի օրենքին դիմել:
Պատասխանները հայցս մերժեցին,
Եվ ինձ շմեաց մի ուրիշ միջոց,
Քան զենքով անձամբ ասպարեզ իջնել
Իմ ժառանգութեան արդար պահանջով:

ՆՈՐԹԵՄԲԵՐԸՆԵՐ

Այս ազնիվ դուքսը շատ ծանր է խոցված:

ՌՈՍ

Տե՛ր կանգնե՛ք, տե՛ր իմ, այդ արդար դատին:

ՎԻՂՈՅԻ

Վատոզի մարդիկ նրա հասույթով դիրքի են հասել:

ՅՈՐՔ

Լորդեր Անգլիո, քույլ տվե՛ք խոսել:
Գիտեմ, զարմիկն իմ խիստ վշտացած է:
Ես նրա համար արել եմ, ինչ որ հնարավոր էր:
Սակայն այս ձևով շարժվել մեզ վրա,
Զենքի դիմելով տե՛ր կանգնել դատին՝
Խոռվարարի նանապարհ է դա,
Եվ դուք, դրդելով նրան հանցավոր այդ քայլին դիմել,
Ինքներդ ե՛ք սնում խոռվութիւնը,
Ուտի ամենե՛նի ապստամբներ ԼԲ:

ՆՈՐԹԵՄԲԵՐԸՆԵՐ

Քայց ազնիվ դուքսը մեզ երդվեց, տե՛ր իմ,
Որ նա Լկել է միայն իր դատը հետապնդելու

Եվ մենք հույժ կարի ուխտեցինք նրան օգնել այդ գործում,
Ռիստն այդ դրժողը թող երբեք խնդում չտեսնի կյանքում:

ՅՈՐՔ

Լա՛վ, լա՛վ, ինձ պարզ է, թե այդ գեներերի հետևանքն ինչ է,
Կանխել չեմ կարող, իսստովանում եմ:
Իմ գործք միչ է և փայփայլում է շուրջս ամեն ինչ:
Ուժ ունենայի, — վկա արարիչն ինձ կյանք պարգևույ, —
Քուրբիդ իսկույն կալանավորած
Կհարկադրեի գլուխ խոնարհել արժայի առաջ,
Գիւնկով նրա ողորմածության:
Քայց ես անուժ եմ, և հեռաբար,
Կֆաշվեմ մի կողմ: Արդ, հրաժեշտ ձեզ,
Մի գուցե կուզեք ամրոցը մտնել
Եվ հանգստանալ այնտեղ մի գիշեր:

ՔՈՒՆԵՐՈՒԿ

Այդ հրավերը շատ է հաճելի.
Իսկ դուք, հորեղբայր, չէի՛ք փափագի
Մեզ հետ Քրիստոս-ամրոցը երթալ:
Այնտեղ, ասում են, ամուս նստած են
Քուչին, Քեզոար և նրանց հարող դավակիցները,
Հասարակության մոլախոտերն այդ,
Եվ ես երդվել եմ նրանց փողհանել, պոկել արմատից:

ՅՈՐՔ

Հնարավոր է, որ ես մասնակցեմ ձեր արշավանքին...
Քիչ խորհեմ, սակայն.
Քանզի վայել չէ, որ ես դեմ գնամ Եկրի օրենքին:
Ոչ բնկեր եմ ձեզ, ոչ էլ թշնամի: Որոշեցի գալ:
Եղածն եղած է, շարժե ավտոսալ:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Զ Ո Ր Ր Ո Ր Դ

Բանակատեղի Վալեսում:

Մտնում են Սոլսբերին և գնդապետը:

ԳՆԴԱՊԵՏ

Լուրջ Սոլսբերի, արդեն սաս օր է, որ մենք այստեղ ենք,
Գծվառուրյամբ ես եմ վալեսական իմ գորհին պահում.
Իսկ թագավորից ոչ մի լուր չկա,
Մենք տուն կգնանք: Եկա, որպեսզի հրածեշտ մաղթեմ:

ՍՈԼՍԲԵՐԻ

Մեկ օր էլ կացեմ, իմ քաջ գնդապետ,
Իր ամբողջ հույսը արեան դրել է միայն ձեզ վրա:

ԳՆԴԱՊԵՏ

Ոչ, տուն կգնանք: Լուրեր են շրջում,
Որ թագավորը արդեն գտնվել է:
Մեր երկրում բոլոր դափնի ծառերը արագ թռչնեցին,
Աստղերն երկնում սկսել են դողալ
Օդախառների փայլատակումից:
Գունատ լուսինը արնածուր տեսնով հայում է երկրին,
Եվ բարակադեմ մարգարեները
Հուշում են անեղ փոփոխություններ:
Ունեվորները տխրել են սաստիկ,
Իսկ խաժամուժը պարում է, ցնծում,
Մեկն իր բարիքը կորցնելու վախից,
Մյուսը՝ վայելի՛ ակնկալելու գուռ պատերազմից:
Այս նշանները կանխագուժում են
Մահ կամ կործանում թագավորների:
Գե, մնա՛ք բարով. մեր զինվորները սկսել են փախչել,
Հաստատա ստում են, որ իրենց արեա Ռիչարդը ողջ չէ:

Գնում է:

ՍՈԼՍԲԵՐԻ

Օ՛, Ռիչարդ, Ռիչարդ. ծանրացած աչքով տեսնում եմ ինչպես
Փառեղ գահավեժ մի աստղի նման
Երկնականարից սահում է դեպի գծուժ երկիրն այս:

Քո արեգակը ողբով մանում է արևմուտքի մեջ:
Գալիք դրո՛ւմ է, ձյուն է, փոթորիկ,
Բարեկամներդ բռնախներին դարձան գորավիզ,
Ամեն ինչ շարժվեց բախտիդ հակընդդեմ,
Օ՛, օրեր խառնակ, ժամանակ դժխեմ:

Գնում է:



ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Յոյինքրոկի բանականդին Յրիստոյում:

Մտնում են Յոյինքրոկը, Յորքը, Եորքեմբերլենդը, Պերսին,
Վիլսքին. և Յուշին ու Գրինը իբրև կալանավոր:

ՔՈՒԻՆՔՐՈԿ

Առաջ բերեմ դրանց:

Յուշի և Գրին, ձեր հոգիները

Անհապաղ պետք է զատվեն ձեր մարմնից,

Ուստի շեմ ուզում ես նրանց տանջել

Ձեր հոռի կյանքի ողջ հանցանքները հատուկ շեշտելով.

Դա կարեկցության սահմանից դուրս է:

Բայց, կամենալով ձեր արյունը իմ ձեռքերից մաքրել,

Ի տես ամենքի, ուզում եմ այստեղ

Ձեր մահվան մի քանի պատճառը թվել:

Դու՛մ մուրեցրիք մի վեճ իշխանի, մի թագավորի,

Որ Երջանիկ էր, քե՛ր իր ծագումով, քե՛ր շքեղ տեսքով:

Դու՛մ դժբախտացրիք, տգեղացրիք նրան

Եվ ներհաշելով ձեր ապականյալ շրջանակի մեջ՝

Գժտեցրիք նրան իր քագուհու հետ,

Թագավորական մահնի անդորրը անդարձ փշրելով:

Ձեր անիծարան անիրավությամբ

Չքնազ քագուհու այտերի պայծառ գեղեցկությունը

Դու՛մ ավերեցիք նրա աշխարհից քափած արցունքով:

Մնունդիս բախտով ես մի իշխան եմ

Նվ իմ արյունով մերձ թագավորին, մերձ նաև սիրով,

Բայց դու՛ք նրա մոտ ինձ պարսավելով,

Իմ պարանոցը խոնարհեցրի՛ք ձեր հարվածների տակ
ե՛վ պատճառ դարձա՛ք, ու անզլիական
Իմ շունչը հե՛ամ օտարուրյան մեջ,
Ախորականի դառն հացը ծամե՛մ,
Իսկ դու՛ք սե՛վե՛ք իմ նոխ կալվածքներով,
Գաբաստաններիս և անտառներիս ծառերը կտրե՛ք,
ե՛վ իմ ամբողջի սյատունաններից
Կորզե՛ք տոհմական իմ պատմունանը,
Զինանշանիս կնիքը Լե՛րե՛ք,
Ինձ շքողներով ոչ մի հիշատակ
Իմ ազնվական պաականելության,
Քացի իմ կյանքից և մարդկանց սրտում առկայծող հուշից:
Այս հանցանքները և շատ ավելի՛ն,
Քան այս ամենի կրկնակի շափը
Գաաապարտում ե՛ն ձեզ մահապատժի: Շուտ հանձնե՛ք սրանց
Մահվան բազուկին ի գործադրություն:

ԲՈՒՇԻ

Դողա, Անզլիա, Բոլիներոկից,
Քո գահի համար ե՛ս շատ ավելի անեղ սարսափ է,
Քան մահվան հարվածն իմ պարանոցին:
Մնա՛ք բարով, լորդեր:

ԳՐԻՆ

Նս հավատում եմ՝ երկինքը կանի արդար դատաստան
Մեր հոգիները իր մոտ տանելով
ե՛վ անիրավին սպառունասելով անեղ դժոխիում:

ԲԱՂԵՆՐՈԿ

Դու՛քս Նորբեմբերլենդ, շուտ աաբե՛ք սրանց:

Նորբեմբերլենդը և մյուսները կալանավաճների հետ դուրս ե՛ն զնում:

Լսի՛ր, հորեղբայր, կարծե՛մ ասացի՛ր,
Ուր բազումին այժմ դղյակիդ մեջ է:
Ի սեր աստծո, հետը բնի ոչ վարվե՛ք,
Իմ ջերմ ողջույնը մատուցե՛ք նրան,
Հատուկ խնդրում եմ՝ իմ ջերմ ողջույնը...

ՅՈՐՔ

Ես թագոմու մտ թանբեր հղեցի մի համակ տալով,
Մեշը մանրամասն գրելով նրան ձեր սիրո մասին:

ԲՈՂԻՆԲՐՈԿ

Շնորհակալ եմ, ազնիվ հորեղբայր: Երթանք, իմ լսողեր:
Գլենդոլրի դեմ նետվենք դեպի մարտ,
Հանգիստը լավ է, երբ գործն է ավարտ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Վալեսի ծովափը: Դիմացը՝ մի ամրոց:

Ցնծանվազ բմբուկներով և դրոշակներ: Մանում են Ռիչարդ թագավորը,
Կառլայլի եպիսկոպոսը, Օմեոլը և զինվորներ:

ՌԻՉԱՐԴ

Սա՛ է Քերկլոլի ամրոցը, Օմեոլ:

ՕՄԵՌԷ

Սա է, տեր արքա: Ինչպե՛ս եմ գտնում ցամափի օղը
Ալբրախ ծովի ձեր վերջին անեղ ցնցումից հետո:

ՌԻՉԱՐԴ

Ցամափի վրա շնչելը հեշտ է: Հրնվանփից լալիս եմ,
Ոտքս վերստին իմ թագավորության վրա դնելով:
Ողջո՛ւյն քեզ, հող իմ, երկիր անձկալի,
Թեև ապստամբ ասպատակները տուրում են քեզ
Քիրա սմբակներով իրենց ձիերի:
Ինչո՞ւ ես շատ երկար անջատված մայրը
Իր մանկիկին է հանդիպում հորից,
Անզուսպ հրնվելով արցունքի միջից,
Այդպես էլ, հող իմ, ևս եմ կարոտիս սղջույնը պոռթկում՝
Իմ արևայական պապակ ձեռներով գուրգուրելով քեզ,
Իմ լացն ու խիհղը իրար շաղախած:
Երկիր իմ բարի, խստամբեր եղիր
Քո թագավորի ստիպաների հետ:

Մի՛ սնիր նրանց ազան փոփերը քո պտուղներով:
Թող քո սարդերը, որոնք քո կրծքի թույներն են ծծում.
Եվ ծանրագնա դողոշները գեջ,
Պատկելով նրանց նանապարհներին
Չանձիւր պատճառեն նենգ, ուխտադրուծ նրանց ոսկերին,
Որ հանիրավի կոխտուտ են քեզ:
Սուր եղիններով հանդիման էլիք իմ ոստիսներին.
Որ քեզ քո լանջից մի ծաղիկ պոկեն,
Եղիններին տակ դարաճած օձը, նո՛ղ իմ հայրենի,
26 Մաղկի փոխարեն թող իր երկնղված լեզվի խայրիչով
Վերջ տա արհայիդ թշնամիներին:
Մի՛ ծաղրեք, լուրդեր, անմիտ գյուրանքն իմ,
Հողն այս պատրաստ է կոշիս անսալով
Բոլոր ֆարերն այս վերածել զինված մի գորագնդի,
Քան բնաշխարհիկ իր քագավորին տեսնել դողալիս
Գարշ կրունկի տակ ստամբակ գործի:

ԿԱՌԱՅԷ

Պինդ կացեք, տեր իմ: Այն ուժը, որ ձեզ քագավոր կարգեց,
Զորութուն ունի ձեզ արհա պահել
Հակընդդեմ բոլոր փորձությունների:
Մի՛րով ընդունեք այն միջոցները,
Որ Լեկիսնքն է ձեզ առաքում վերից,
Նրա տվածից մի՛ հրաժարվեք, հակառակ դեպքում
Դուք կարհամարհեք երկնքի ընծան:

ՕՄԵՌԷ

Ուզում է ասել՝ մենք խիստ դանդաղ ենք,
Մինչդեռ ամեն ժամ Բոլիներոկը հզորանում է
Պարենով, զորքով, քարեկամներով:

ՌԻՉԱՐԳ

Վհատյալ զարմիկ, գուցե շգիտես.
Նրբ որ երկնքի խուզարկու աշխր,
Որ այս երկիրը լուսավորում է,
Թիկունքն է մտնում մեր հողագնդի,
Բոլոր գողերն ու հեյուզակները
Համարձակորեն ելնում են որսի,
Կատարելով բիրտ սպանություններ և վայրագություն:

Սակայն, հենց որ նա այս հողագնդի տակից շողալով
 Ոսկեգոծում է կատարներն հպարտ սեգ սոնիների,
 Հանցագործության բոլոր որջերը լուսավարելով,
 Ոնրագործություն, դավանանություն
 Եվ ամեն տեսակ գազրելի հանցանք,
 Ռոռնց վրայից մթության Բուր դեն է շարտված,
 Մերկանդամ կանգնած սկսում են դողալ իրենց ամոքից:
 Այդպես է նաև Բոլիներոկը,
 Այդ դավադիրն ու Բասկանատը,
 Որ գինարբույժաց այս ամբողջ գիշեր,
 Երբ հաճում էին մենք Երկրագնդի հակառակ կողմում:
 Նա պիտի տեսնի մեզ վերձագելիս մեր գահի վրա
 Եվ պիտի շիկնի դավանանության գազիր ամոքից
 Անկարող տոկալ արեի փայլը,
 Սեփական մեղքի ահից դողալով:
 Մոլեգնած ծովի բոլոր ջրերը
 Ի վիճակի շեն սրբելու անբիծ այն սայեղանին,
 Ռոռվ արեայի նակատն է օծված:
 Եվ նրա համար, որին աստվածն է ընտրել փոխանորդ,
 Սարսափելի շէ մարդկային ոչ մի խարդավանք ու դավ:
 Բոլիներոկի սաղրանֆին հլու,
 Նա, ով սողպատ է բարձրացրել ընդդեմ մեր ոսկյա թագի,
 Տերն իր Ռիչարդին գորավիզ կանգնած
 Ամեն մեկի դեմ մի գոռ հրեշտակ կիջեցնի սրով:
 Իսկ ուր կո՞վում են հրեշտակների գորագնդերը,
 Այնտեղ պարտված են շարագործները:

Մտնում է Սոլսբերին:

Դուր քարի եկաք: Ռեֆա՛ն է հեռու ձեր գորքը, միլորդ:

ՍՈՒՍՏԵՐԻ

Այ հեռու, ոչ մոտ, ողորմած տեր իմ,
 Քան այս թույլ բազկի Երկարությունը:
 Վհատությունը առաջնորդում է լեզվիս ծանուցել
 Լոկ աղետալի անցքերի մասին:
 Մեկ օր ուղացաք, և այդ մեկ օրը
 Մքազնեց բոլոր ուրախ օրերդ այս երկրի վրա:
 Օ՛, Ե՛տ կոչիր դու երեկվա օրը,

Հրաշքով հրիւր ժամանակը ետ,
Եվ դու կունենաս տասներկու հազար ֆաշարի ուսումիկ:
Այսօրը, ավա՛ղ, այսօրը, ավա՛ղ,
Մի դժբախտ օր է սաստիկ ուշացած.
Նա կործանեց քո խնդրությունները, բարեկամներին,
Քո բախտն ու փառքը: Լսելով, որ դու գոհվել ես կովում,
Ինչքան վալեսյան զինվորներ կային.
Փախան, միացան Բոլիեբրոկին:

ՕՄԵՌԷ

Արիացե՛՛ք, արքա, ինչո՞ւ ձեր դեմքը այդպես գունատվեց:

ՌԻՉԱՐԴ

Բայց իմ Լրեսը շոռագունած էր
Իմ ֆաան հազար զորքի արյունից, որ հիմա չկան:
Այդքան շատ արյուն մինչև վերստին իր տեղը ետ գա,
Մի՛թե պատճառ չէ, որ ես գունատվեմ, մահու տեսք առնեմ:
Վե՛րջ իմ զորության: Ովքեր ապրելու փափագ ունեն դեռ,
Թող իմ կողքերից անդարձ հեռանան,
Դարը նախատինք դրեց իմ փառքին ու հպարտության:

ՕՄԵՌԷ

Արիացե՛՛ք, արքա, հիշե՛ք՝ ո՛վ եք դուք:

ՌԻՉԱՐԴ

Ես ինձ մոռացա: Մի՛թե արքա չեմ:
Չարթի՛ր, վեհերոտ մեծափառություն, բավ է մեափես,
Ի՞նչ. թագավորի անունը միթե՞ թանկ չէ ավելի,
Քան ֆաան հազար կոշում և անուն:
Չինվիր՛, անուն իմ: Մի գարշ հպատակ
Պրոհում է քո մեծ փառքի վրա:
Է՛լ, դուք, արքայի հավատարիմներ,
Մի՛ նայե՛ք գետնին այդպես գլխահակ,
Չէ՛ որ մենք բարձր ենք,
Թող մեր խոհերն էլ բարձր սավառենն:
Հորեղբայր Յորքը դեռ շատ զորք ունի
Մեր դատին օգնող: Բայց ո՞վ է գալիս:

Մտնում է Սկրուպը:

ՍԿՐՈՒՊ

Ցանկամ արժայիս քաջառողջություն և երջանկություն,
Վշտի բանալին փակել է լեզուս, պատմել շեմ կարող:

ԹԻՉԱՐԴ

Ականջս բաց է և հոգիս պատրաստ.
Ուզում ես պատմել երկրային վատքար կորստի մասին
Ու լեզուդ փակ է: Ի՞նչ եմ կորցրել:
Թագավորություն՝ մ. բայց դա իմ հոգսն էր,
Հոգսից փրկվելը մի՞թե կորուստ է:
Բոլիներոկը մախտում է մեր բարձունքի՞ն հասնել:
Առավել բարձրին երբեք չի հասնի:
Բարձրում երկինքն է և ինքն էլ մեզ պես հպատակ ասածուն:
Իմ ժողովուրդը ապստամբվե՞լ է. ի՞նչ կարող եմ անել:
Նրանք խախտում են իրենց հավատը
Թե՛ ասածո առաջ և թե՛ մեր հանդեսը:
Դու մեզ ավերից, վշտից, կորստից, անկումից գոռա,
Վատքարը մանն է, իսկ մահը մի օր անպայման կգա:

ՍԿՐՈՒՊ

Ուրախ եմ. որ դուք այդպես զինված եք
Հանդիման կանգնել սողաթի բոթին:
Ինչպես անագան փոթորկից հանկարծ
Արծառյա գետերը հորդելով ուժգին
Իրենց ափերն են խեղդում ջրերով,
Համակ աշխարհը կարծես լուծելով արտասուքի մեջ,
Այդպես գայրույրը Բոլիներոկի ափերը քանդած
Իր հորձանները շարակել է վեր,
Ձեր ահաբեկյալ ցամաք ծածկած
Պողպատի, մարդկանց վայրագ հեղեղով:
Սպիտակամորուս ծերունիները
Ճաղատ գանգերին կորդակներ քաշած
Աստամբվել են ձեր կայսրության դեմ,
Եվ մանուկները նզնելով խոսել առնացի ձայնով,
Իրենց հասակից մեծ զենքեր կտպած,
Կնառ ծնկները հագիվ շարժելով այդ ծանրության տակ,
Մարտի են ելել բեղդեմ ձեր քաղի:
Եվ դպիրները նույնպես վարժվում են աղեղներ շինել
Խիստ աղետաբեր կարմրածառերից,

Նետ արձակելու քո պետության դեմ:
Եվ իլիկ մանող կիճերը նույնպես ժանգոտ սակրերով
Պատերազմի են Ելել գանիդ դեմ:
Ապստամբվել են թե՛ ծեր, թե՛ ջահել.
Իրականի մեջ պատկերն ավելի սարսափելի է,
Քան թե ուժ ունեմ խոսքերով պատմել:

ՌԻՉԱՐԳ

Գու լավ պատմեցիր, հաջող պատմեցիր
Այդ խիստ դժնդակ անցքերի մասին:
Ի՞նչ է պատահել Վիլտշերի կոմսին: Բեգոտից ի՞նչ լուր,
Բուշին ի՞նչ Եղավ, Գեինը ո՞ւր է:
Ինչպես թույլ տվին այդ վտանգավոր հակառակորդին
Առանց դիմադրության մեր հողը կոխել:
Եթե հաղթեցինք՝ մեզ իրենց գլխով պատասխան կտան:
Հավատացնում եմ, նրանք հաշտվել են Բոլիներոկի հետ:

ՍԿՐՈՒՊ

Արդարև, տեր իմ, նրանք դաշինք են կնքել նրա հետ:

ՌԻՉԱՐԳ

Օ՛, վարնոց մարդիկ, թունավոր իժեր,
Որոնց խայթոցից փրկություն չկա,
Շներ, որ դյուրավ լիզում են ձեռքը պատահած մարդու:
Ես կրժփս վրա օձեր տափացրի իմ շերմ արյունով
Եվ նրանք սիրտս խայթեցին ներսից,
Եե՛ք հուղաներ և ամեն մեկը երիցս հուղտ:
Հաշտվե՛լ նրա հետ. արդ դու ժանտ դժոխք պատերազմ գոռա
Նրանց Եղկելի հոգիների դեմ:

ՍԿՐՈՒՊ

Տեսնում եմ ինչպես Բաղրաբույր սերը
Իր էությունը սաստիկ դիմադարձ
Այլափոխում է մահաբեր ոխի:
Անեծփից նրանց ազատիր, տեր իմ. այդ հաշտությունը
Գլխով է կնքված և ոչ թե ձեռքով:
Այն մարդիկ, որոնց դուք նզովում եք
Կույ են գնացել դառնաղեա մահին
Եվ խուր ննջում են պաղ գրկում հողի:

ՕՄԵՌԼ

Մի՛ թե վիլտշերք, Բուշին, Գրինը ողջ շեն այլևս:

ՍԿՐՈՒՊ

Ո՛չ, գլխատված են Բրիստոլի մեջ:

ՕՄԵՌԼ

Իսկ իմ դուխ հայրը ո՛ւր է իր գործով:

ՌԻՉԱՐԴ

Այդ իզուր հարց է: Ով է խոսում, Օմեռլ, սփռփանփի մասին:

Եկե՛ք շիրիմներից, տապանագրերից ու որդերից խոսենք:

Հողը դարձնենք թուղթ և արցունքոտ աչքով

երկրի կրժփի վրա մեր ողբը գրենք:

Մեր զբաղմունքն ի՞նչ է. ընտրել կտակարար

ե՛վ խոսել միայն կտակների շուրջ:

Օ՛, ո՛չ, այդ շեղավ. իսկ ի՞նչ կարող ենք մենք հրիտակել

Հողին պահ տված մեր մարմնից բացի:

Բոլիներոկին են սլատկանում բոլոր կալվածքները մեր,

Կյանք և ամեն ինչ,

Մեր սեփականը միայն մեր մահն է,

Մեկ էլ՝ այս ամուլ պտղունցը կավի,

Որ ծառայում է որպես կափարիչ մեր ոսկորներին:

Եկե՛ք, ի սեր աստժո, այսպես նստենք գետնին

ե՛վ թվենք մեկ-մեկ տխուր մահերը թագավորների.

Սա գահից ընկավ, նա սպանվեց կո՛վում,

Մեկն իր գոհերի ուրվականներից հալածվեց կյանքում,

Մեկին թույն տվեց կինը սիրասուն,

Մյուսին լնած տեղը մորթեցին:

Բոլորն անխտիր այսպես մահ գտան: Օ՛, մահն է իշխում

Թագավորների այս մահկանացու ֆունքերն եզերող

Թափուր թագերում: Այդ թագի ներսում իր գահի վրա

Բազմած է մահը՝ այդ հին ծաղրածուն,

Այսպանելով մեր իշխանությունը

ե՛վ ֆրֆչալով մեր փառքի վրա,

Արտոնելով մեզ փուքանցիկ մի հեք, մի կարն տեսարան,

Ստուգելու, թե կարո՞ղ ենք խաղալ թագավորի դեր,

Սարսափ ներշնչել և հայացքներով կործանել մարդկանց,

Տոգորելով մեզ մտքի խաբուսիկ ինֆնացնորֆով,

Իբրև մարմինն այս մի անդրդվելի
Պղնձյա ուրմ է կյանքը պատենեշող:
Արքում ենք հագիվ մենք այդ հանույժով, տեսար նա եկավ,
Եվ գնդասեղ խրեց պղնձյա այդ պարսպի մեջ, և արքան չկա:
Դուխներդ ծածկեմ և մի հեզներդ դուր արշունն ու միսը
Խոնարհ հարգությամբ: Դե՛ն նետեմ դուր սարտ և ակնածություն,
Եվ ավանդական ծես ու մեծարանք,
Իմ հանդեպ դրանք ձեզ մոլորեցրին ամբողջ ժամանակ:
Ես էլ ձեզ նման հացով եմ սնվում և կրեմ ունեմ,
Կրում եմ ցավեր, կարիք եմ զգում բարեկամների,
Ինչպե՛ս կարող եմ ինձ արքա կոչել, երբ ես արքա չեմ:

ԿԱՌԱՅԼ

Իմաստուն մարդիկ շեն նստում իրենց վիշտը աղբալով,
Այլ իսկույն ողբի նամփան են փակում:
Նա է թուլամորթ, ով վախենում է հակառակորդից.
Նրա ուժը ձեր թուլության մեջ է:
Նա, ով անմիտ է, իր դեմ է ուղղում հարվածի ուժը.
Երկչոտի մահը նակատամարտի ամոթն է նսեմ,
Իսկ քաջի մահը՝ մահ է մահվան դեմ:

ՕՄԵՌԼ

Հայրս զորք ունի, նրանից զորք առ,
Մաս-մաս հավաքիր՝ կղառնա գումար:

ՌԻՉԱՐԴ

Քո կշտամբանքը արդարացի է: Գոռոզ Յոլինբերուկ,
Դու շոտով իմ դեմ կիջնես ծնկաչոք:
Իմ երկյուղն անցավ, տարտամը ցնդեց,
Ես առաջվա պես հզոր եմ և մեծ:
Աստ՝ ինձ, Սկրուպ, մեր հորեղբայրը ո՛ւր է իր գործով,
Ինձ ավետիս տուր, բեպեա հայացքդ լի է թխաբերով:

ՍԿՐՈՒՊ

Օրվա վիճակն ու փոփոխությունը
Մարդիկ դատում են երկնքի դեմքից,
Եթե իմ աչքը թխալով լեցուն է,
Ավետիս չկա իմ շրթունքներից:

Տակավ առ տակավ ես ձեզ տանջում եմ՝ խաղալով դահին,
Ձեզ վարժեցնելով իմ վերջաբանի վատքարագույնին:
Ձեր հոր եղբայրը միաբանել է Ֆոլիներոկին,
Ձեր հյուսիսային բոլոր բերդերը բնկած են արդեն,
Ձեր հարավային բոլոր գորհերը զինվել են ձեր դեմ:

ՌԻՉԱՐԴ

Բավական է, լո՛ւր:

(Օմեոլին)

Նզովյալ զարմիկ, դու խափանեցիր
Հուսալուծի իմ քաղցրիկ համվան:
Ինչպե՛ս: Լոնցի՛ր: Էլ ի՛նչ մնաց ինձ քո սիրովանքից:
Նրովում եմ հավետ առելու նրան,
Ով փորձի նորից մխիթարել ինձ:
Նրբան՛ Ֆլինդ-բերդ, որպեսզի արքան
Այդ բերդում մարի: Ես քազավոր եմ, բայց ողբի գերի,
Եվ պարտավոր եմ արքայավայել խոնարհովել վշտիս:
Չորքս արձակեմ, թող գնան վարեն և սերմեր շաղ տան,
Իրենց դաշտերում թող հույսեր ծփան,
Իսկ ես այլևս ոչ մի հույս չունեմ: Մի՛ փորձեմ խոսել,
Խորհուրդն իզուր է, ոչ ոք չի կարող վնիռն իմ վոխել:

ՕՄԵՈՒ

Տեր իմ, գեր մի խոսք...

ՌԻՉԱՐԴ

Կեղծավոր խոսքը
Կրկնակի վերք է իմ սրտի վրա:
Ձեզ արձակում եմ: Ռիչարդ արքայի խավարի միջից
Ռնդառաջ վազեմ արևածագին,
Դեպի մեծ օրը Ֆոլիներոկի:

Գնում եմ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Յ

Վալես: Ֆլինդ ամբոցի առաջ:

Քմբուկներով և դրոշակներով մտնում են Բոլիներակը,
Յորթը, Նորթեմբերլենդը և գորկեր:

ԲՈՒԼԻՆԲՐՈԿ

Այդ տեղեկությամբ մեզ հայտնի դարձավ,
Որ վալեսները ցրիվ են եկել,
Իսկ Սոլսբերին հանդիպելու է մեկնել արհային,
Որն իր մի ֆանի համակիրներով
Ափ է դուրս եկել այս ծովեզերքին:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Պատվական լուր է. ուրեմն, տեր իմ,
Ռիչարդն, անկասկած, այս մտաբերում է գլուխը թափցրել:

ՅՈՐԹ

Լորդ Նորթեմբերլենդ, ձեզ կայաաշաներ
Այսպես ասելու «Ռիչարդ թագավոր»:
Օ՛, ողբազին օր, երբ մի այդպիսի օծյալ թագավոր
Ստիպված է իր գլուխը թափցնել:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Չերդ մեծություն, ես այդ տիտղոսը կրճատեցի լոկ
Որ հակիրճ խոսեմ: Միտումնավոր շէր:

ՅՈՐԹ

Ժամանակն այն չէ,
Քե հանդգնեիք ավելի առաջ այդ բանը անել,
Նա ձեր գլուխը այնպես կրճատեր,
Որ ձեր ուսերին գլուխ չմնար իր դեմ ցցելու:

ԲՈՒԼԻՆԲՐՈԿ

Էսեֆ, հորեղբայր, դուք սահմանն անցաք:

ՅՈՐԹ

Սահմանն ո՞վ անցավ. Ե՞ս, թե՞ դու, զարմիկ:
Սակայն զգույշ կաց, վերև ասաված կա:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

Գիտեմ, հորեղբայր, և ասածն կամփին
Ես դիմադիր չեմ: Բայց ո՞վ է գալիս:

Մտնում է Պերսին:

Բարի գալուստ, Հարրի: Ի՞նչ է, այդ բերդը
Չի՞ ուզում հանձնվել:

ՊԵՐՍԻ

Նա արհայաբար ամրացված է, տեր իմ.
Ընդդեմ Լո մուտփի:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

Վա՛հ, արհայաբար.
Բայց չէ՞ որ այնտեղ թագավոր չկա:

ՊԵՐՍԻ

Կա, բարի տեր իմ,
Այդ ամրոցի մեջ մի թագավոր կա: Անգլիո արհա
Ռիչարդն է նրա պատերի ներսում,
Եվ նրա հետ են լորդ Մոլսբերին և լորդ Օմեռլը,
Պարոն Սկրուպը և նմանապես մի կղերիկոս
Բարձրագույն կարգի: Ով էր, չիմացա:

ՆՈՐԹԵՄՁԵՐՆԵՐ

Օ՛, դա Կառլայլի եպիսկոպոսն է. նա է, երևի:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

(Նորթեմբերլենդին)

Մոտեցեմ, միլորդ, այդ հին ամրոցի ժայռոտ կողերին
Եվ նրա ֆանդված ականջների մեջ
Պղնձյա փողով շեփոր հնչեցրեմ բանակցության համար
Եվ ասեմ այսպես.

«Քուլինբրոկը ծնկներին իջած
Չեմքն է համբուրում Ռիչարդ արհայի,
Հայտնելով խորին հպատակություն նրա մեծ գահին,
Պատրաստ է նրա ոտների առաջ
Վայր դնել և՛ զենք, և՛ իշխանություն,
Որի համար էլ այստեղ է եկել,

Բայց մի պայմանով. եթե ախորից նա ինձ ետ կոչի
 Եվ օրինական իմ կալվածքները վերադարձնի ինձ:
 Իսկ եթե մերժեց՝ օգտագործելով իմ ամբողջ ուժը
 Ամառվա փոշին ես կշաղախեմ բազում խողիտողված
 Անգլիացիների վերքերից ժայթփող արյան հեղեղով:
 Թե որքան շատ է թռչիներուկը հեռու այդ մտքից,
 Որ այդ ծիրանի հողմով ռոտքի
 Թարմ կանաչ լանջը այն շֆնաղ երկրի,
 Ռիկն Ռիչարդն է կարգված թագավոր,
 Ես խոնարհաբար սլառաստ եմ ցույց տալ:
 Գնացե՛ք, ուրեմն: Իսկ մեր զորքերը թող երթով բացվեն
 Այս հարթավայրի իռտավետ գորգին:
 Վե՛րջ այդ քմբուկի ահեղ որոտին,
 Որ այդ ամբողջ դողողոջ բուրգերի դիտարաններից
 Մեր բարի կամքը անվերայ դիտվի:
 Արքա Ռիչարդը և ես, կարծում եմ, հանդիպելու ենք,
 Եվ դա կլինի ոչ նվազ ահեղ,
 Քան թե բախումը Երկու տարբերքի՝ հրի և ջրի,
 Երբ նրանց բախման որոտն ահարկու
 Պատառոտում է թխպոտ այտերը Երկնակամարի:
 Թող նա շանթ լինի, ես կլինեմ ամպ,
 Թող ցասում դառնա, ես անձրև դարձած
 Վար կիջնեմ երկրին. հողին զով կտամ և ոչ թե իրեն:
 Հառա՛ջ. և Ռիչարդ արքայի գեմքը ուշադիր դիտիր:

Բանակցության շեփոք դրսից և պատասխանի փող ներսից: Ամբողջ
 պատերին երևում են Ռիչարդ թագավորը, Կառլայի եպիսկոպոսը,
 Օմեղը, Սկրուպը և Սոլբերին:

ՅՈՐՔ

Ահա և արքա Ռիչարդն երևաց:
 Նիկնած է գեմքը. արեն է այդպես զայրույթից շիկնում,
 Երբ արևելքի հրե կամարից վեր բարձրանալով
 Տեսնում է՝ խանդոտ ամպերը թեփված
 Ճգնում են նրա փառքը մթագնել, նսեմուցնելով
 Հաղթական երթի իր պայծառ ուղին:
 Եվ այնուհանդերձ նա թագավոր է: Հայացքը նրա
 Արծվալին է և ցուլացնում է
 Կատալարելու նամակ մեծություն:

Եվ սակայն, ավա՞ղ, նայիր շար բախտին
Ինչ բախի՞ծ դրեց այդ վեհ նակատին:

ՌԻՉԱՐԳ

(Նորթեմբերլենդին)

Մենք զարմացած ենք: Երկար սպասեցինք,
Որ դու այդ երկշուռ ծունկդ կիջեցնես
Քո օրինական արքայի հանդեպ:
Եթե արքա եմ, նվաստ արունդ
Ինչպե՞ս հանդգնեց մոռացության տալ
Իր երկյուղալի պատժի վնասը մեր ներկայության:
Եթե արքա չեմ՝ ապա ցույց տվե՞ք մեզ աստժո աջը,
Որ արձակված ենք իշխանությունից,
Քանզի քաջ գիտենք, մսից, արյունից շինված ոչ մի ձեռք
Կարող չէ մեր սուրբ մականը կորզել,
Քացի ամբարիշտ եղեռնագործից,
Հափշտակողից կամ ավազակից:
Եթե կարծում եմ՝ բոլորը մեզնից հրաժարվեցին
Շեղելով իրենց դավանան հոգին, ինչպես դուք արիք,
Որ մենք կողոպտված և լքված ենք մեր բարեկամներից,
Իմացե՞ք, սակայն, որ բարձրյալ տերն իմ ամենակարող
Մեր դատին սատար,
Ժանտաբեր զորք է արդեն ժողովում իր ամպերի մեջ,
Եվ այդ գնդերը պիտի կործանեն ձեր սերունդը ողջ
Եվ նույնիսկ նրանց, որ արգանդում են, կամ անգո են դեռ,
Այն բանի համար, որ ձեր հպատակ
Ձեռքը բարձրացրի՞ք դեպի գլուխն իմ
Եվ սպառնացի՞ք պատվական թագիս և նրա փառքին:
Ասա Քոլինբրոկին, — այնտեղ կանգնածը կարծում եմ նա է, —
Որ նրա ամեն քայլը մեր երկրով
Նրան դարձնում է վայրագ դավանան: Գուցե Լկել է
Կրկնու կարմիր կտակարանը այս պատերազմի:
Սակայն այն թագը, որին աչք ունի,
Նախքան իմ գլխից կո՞վով շորթելը,
Տաս հազար գլուխ գլորվելու է արյունաշաղախ,
Անգլիո դեմքը այլանդակելով
Եվ տրորելով նրա ծաղկունքը,
Նրա խառնվածքի կուսական դալուկ խաղաղությունը

Փոխարինելով շատագույն ցամառ,
Եվ արձանների նոխ դալարիք
Անգլիական սուրբ արյամբ ցողելով:

ՆՈՐԹԵՄԹԵՐԼԵՆԴ

Երկնային արքա, երկրիս արքային
'Ինչու եկո՞ւ պահիր, միջեղբայրասպան արհավիրքներից:
Յոլիներովը՝ երիցս ազնիվ քո եղբորորդին,
Շատ խոնարհաբար քո ձեռքն է պազնում,
21 Երդվելով վաճառ նախահայրերիդ
22 Անյունին կանգնած վեհ դամբարանով,
Եվ արքայական այն սուրբ արյունով, որ ազնվագույն
Մի ակունք ունի երկուսիդ համար,
Եվ քաջամարտիկ Ջոն Գոնտի բազկով գերեզման իջած,
Եվ իր սեփական պատվասիրությամբ ու արժանիքով,
Եվ այն ամենով, որ պահանջվում է երդումի համար,
Որ ինքր այստեղ եկել է միայն մի նպատակով՝
'Վերադարձնելու իր ժառանգական իրավունքները
Եվ անմիջապես իր քաղալորի առաջ ծունկ շոքած
Խնդիրք անելու՝ իրեն ւստից ազատ արձակել:
Եթե տե՛ր արքան այդ շնորհն անի,
Յոլիներովը պատրաստ է իսկույն
Փայլուն զենքերն իր հանձնելու ժանգին,
Եւ ասպավառյալ երիվարները քշելու ախտ,
Իսկ ազնիվ սիրտն իր հավատարմորեն
Ի սպաս դնել ձեր բարձրությանը:
Նա իջխանաբար այդպես է երդվել և դա ստույգ է,
Նրա երդումը էս հաստատում էմ,
Ինչպես վայել է ազնվականին:

ՌԻՉԱՐԴ

Արդ. նորթեմբերլենդ, մեր պատասխանը այսպես հաղորդիր.
Մեր քաջամարտիկ զարմիկին ասա,
Որ հա արքայի բազմալի հյուրն է, թող փութա այստեղ,
Եվ հրա բոլոր արդար պահանջը ի կատար կածվի,
Առանց որևէ հակահատության:
'Ինչ քո բովանդակ վայելուչ խոսքով
Մեր ջերմ ողջույնը հայտնիք մեր անգին հուրեղբորորդուն:

(Օմեդին)

Մի՞թե մեր պատվին նվաստութիւն չէ
Մեր այս ծայրահեղ խղճալի տեսն ու բարեկիրք խոսքը:
Լավ չէ՞ր ետ կանչել նորքեմբերլենդին
Եվ դավանանքին մարտի կոչելով
Կովելով մեռնել նակատամարտում:

ՕՄԵՌՈՒ

Ոչ, ազնիվ տեր իմ: Լավ է ժամանակ շահել հեզ խոսքով.
Մինչև հավաքվեն բարեկամները փրկարար զենքով:

ՌԻԶԱՐԴ

Օ՛, աստված, աստված, միթե՞ իմ լեզուն,
Որ դատապարտեց ահեղ ախտով այդ գոռոզ մարդուն,
Իր այդ վնիւր պետք է ետ վերցնի շողով խոսքերով:
Օ՛, երանի թե ես մեծ լինեի տառապանքիս չափ.
Կամ ավելի փոքր, քան իմ անունն է,
Կամ հնար լիներ գեր մոռանալու՝ ինչ էի առաջ.
Կամ շնիշելու. թե ինչ ողբալի օրի եմ հասել:
Օ՛, հպարտ սիրտ իմ, զայրանո՛ւմ ես դու. պայքեցիր գուցե,
Թշնամիները փշրել են ուզում, թե՛ ինձ և թե՛ քեզ:

ՕՄԵՌՈՒ

Նորքեմբերլենդը վերադառնում է:

ՌԻԶԱՐԴ

Ի՞նչ հրաման է բերել արքային. որ հնազանդվի՞:
Արքան պատրաստ է. որ փոխարինվի՞.
Արքան կլինի խիստ բովարտված: Իր արքայական
Տիտղոսից զրկվի՞. օ՛, տեր իմ աստված, այդ էլ չուզեցինք:
Պատրաստ եմ իմ ողջ գոհարելներ
Փոխարինելու ձեռքի համրիչով,
Շքեղ պալատն իմ՝ մի նզնարանով,
Իմ նոխ հանդերձը՝ սղխտի քուրձով,
Իմ գեղաբանդակ բնականակները՝ հովվական քասով,
Իմ գավազանը՝ մի ուխտավորի հասարակ ցուպով,
Հպատակներն իմ՝ մի գույգ ֆանդակված սրբապատկերով,
Եվ իմ լայնաբերդ արքայությունը մի փոքրիկ շիրմով,
Նեղ փոքրիկ շիրմով, մի մթին շիրմով:
Կամ թող ինձ թողեն մի բազմաբանուկ նանապարհի տակ,

Ու ժողովուրդը իր բազավորի
 Գլուխը վերից դոփի շարունակ,
 երբ կենդանի եմ՝ իմ սիրան ևն դոփում,
 Թաղվելիս՝ ինչո՞ւ խնայվի մի գանգ...
 Լալիս ևս, Օմեոյ, օ՛, իմ փափկասիրտ զգայուն զարմիկ,
 Եկ եղանակը անձեռնոտ դարձնենք մեր հարդ արցունքով,
 Հասաչով, լացով ամառվա բերքը պառկեցնենք դաշտում,
 Խառնակ երկիրն այս մատնելով սովի:
 Գուցե սկսենք սիրախաղ անել մեր վշտերի հետ,
 Մեր արցունքները զուգավարելով:
 Այսպես օրինակ. նույն կետի վրա
 Գրանք կարեցնենք այնքան ժամանակ,
 Մինչև որ նրանք մեզ համար փորեն երկու գերեզման.
 Եվ այսպես գրվի տապանափարին.
 «Աստ հանգչի մի զույգ սիրող ազգական —
 Երկու գերեզման դրված իրար հով,
 Երկուսն էլ փորված իրենց արցունքով»:
 Լավ կառակ է, չէ՞: Օհո՛, տեսնում եմ վրաս խնդում եմ,
 Եելիս բոցրի, իրավունք ունեմ:
 Նորքեմբերլենդ իմ, մեծագոր իշխան,
 Ի՞նչ հրամայեց Բոլիներոկ արքան: Իր բարձրությունը
 Կուզե՞ արտոնել, որ Ռիչարդն ապրի այնքան ժամանակ,
 Մինչև բնական իր մահով մեռնի:
 Մտունք թեկեցիք. իսկ դա նշան է,
 Ու սիրալիր է իր պատասխանը:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԳ

Ձեզ նետ ուզում է նա խոսել, տեր իմ,
 Բերդի պատի տակ: Կարո՞ղ եմ իջնել:

ՌԻՉԱՐԴ

Իջնե՛լ, վա՛ր իջնել: Ֆայտոնի պես կտուրամ ներքև
 Անկարող զսպել իմ հողմաբոխ էրիվարներին:
 Բերդի պատի տակ, այսինքն դրսում: Հրամայում եմ.
 Իջի՛ր, խոնարհվի՛ր դավանանքներին: Իջի՛ր, արքա, իջի՛ր,
 Արևն իր տեղը մութին է զիջել.
 Աստույտի երգին փոխարինել է բվի կսիճչը:

Ամբոցի պատերից իջնելով.

ՅՈՒՆԻՅՐՈՎ

Ի՞նչ ասաց արքան:

ՆՈՐՔԵՄՔԵՐԸ

Յավերից, վշտից

Կարծես ցնդել է անկայ է խոսում.

Ահա՛ և ինքը:

Մանում է Ռիչարդ բագավորը իր շխտմբով՝ ներկեց:

ՅՈՒՆԻՅՐՈՎ

Կանգնեցե՛ք մի կողմ

Եվ պարտ ու պատշան հարգանք մատուցե՛ք պայծառափայլին:

Բարեգուր տեր իմ: (Մունկի է իջնում):

ՌԻՉԱՐԴ

Շնորհաշում՝ զարմիկ, ձեր արքայական ծունկը ատուս է,

Մի անարգև աչև աչքան վար իջած.

Նվաստ գետինը կգոռոզանա նրան դիպչելով:

Իմ սրտի համար առավել լավ էր ձեր սերը գգալ.

Քան թե ձեզ տեսնել այս վիճակի մեջ:

Ոտի՛ ել, զարմիկ. ձեր սիրտը գիտեմ, շատ բարձր է թռչում,

Նվազագույնը, ա՛յ, մինչև այսուհ.

(Ձեռք տանում է դեպի գլուխը)

Միտք ուրիշ տեղ, ծունկը ուրիշ տեղ:...

ՅՈՒՆԻՅՐՈՎ

Ողորմած արքա, ևս ունեցածիս համար եմ եկել:

ՌԻՉԱՐԴ

Ձեր ունեցածն էլ, ևս էլ, ամեն ինչ— բոլորը ձե՛րն է:

ՅՈՒՆԻՅՐՈՎ

Օ՛, անեղ արքա, դուք իմն եմ այնքան,

Որքան իմ ազնիվ ծառայությունը

Արժանի լինի ձեր գորովանքին:

ՌԻՉԱՐԴ

Արժանի՞ լինի: Ո՛չ, ո՛չ, այդպես չէ:

Ամեն ինչ այժմ նրան է տրվում, ով գիտե հարթել

Ուժով վերցնելու հաստատուն ուղին:

Ապա, հորեղբայր, տուր ինձ ին ձեռքը: Արցունքդ սրբիւր,
Այդ կարիւնները սիրո նշան են,
Սակայն կարիք են գգում բուժվելու:
Ես շատ ջանել եմ, որ քեզ հայր կոչվեմ,
Գուր բավական ծեր, որ ժառանգ կոչվես:
Ինչ որ դու խնդրես՝ պատրաստ եմ տալու,
Իմ ժամն է ուժին հպատակվելու:
Ի՞նչ, դեպի կոնդոն. խսկասկե՞ս, գարմիկ:

ԲՈՒՆԲՐՈՒ

Այո, անք արհա:

ՌԻՋԱՐԳ

Ինձ «ոչ» ասելու պատասխան չկա:

Շեփորներ:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Չ Ո Ր Ր Ո Ր Դ

Լեմզի: Տորքի դքսի պարտեզը:

Մտնում են թագուհին և պալատական երկու տիկին:

ԹԱԳՈՒՂԻ

Ի՞նչ խաղ մտածենք, ինչո՞վ գրադվենք այս պարտեզի մեջ,
Որ մոռալ հոգսի խռիւրք վանենք:

Ա. ՆԱԺԻՇՏ

Թագուհի, եկեք գնդակ զլորենք:

ԹԱԳՈՒՂԻ

Այդ խաղը լավ չէ: Գնդակախաղը ինձ հիշեցնում է,
Որ այս աշխարհը խոչեռով է լի
Եվ իմ հարվածը խոտոր է գնում:

Ա. ՆԱԺԻՇՏ

Այդ դեպքում պարենք:

ԹԱԳՈՒՀԻ

Ինչպե՞ս կարող է ոտքս շափ պահել ուրախության մեջ,
Երբ իմ խեղճ սրտի վիշտը շափ չունի:
Ո՛չ, պարել պետք չէ: Մի այլ գրադմունք:

Ա. ՆԱԺԻՇՏ

Եկե՛ք, ուրեմն, իրար բան պատմենք:

ԹԱԳՈՒՀԻ

Վշտերի՞ մասին, թե՛ Երջանկության:

Ա. ՆԱԺԻՇՏ

Թե՛ մեկի մասին և թե՛ մյուսի:

ԹԱԳՈՒՀԻ

Երկուսն էլ պետք չեն:
Երբ Երջանկության մասին են պատմում, ևս տխրում եմ շատ,
Հիշելով, որ ևս դրանից զուրկ եմ,
Իսկ երբ վշտերի մասին են պատմում,
Իմ տխրությունը կրկնապատկվում է,
Իսկ ինչո՞ւ կրկնել, ինչ արդեն ունեմ,
Չուր հիշել մի բան. որից զրկված եմ:

Ա. ՆԱԺԻՇՏ

Ուրեմն, երգե՛մ:

ԹԱԳՈՒՀԻ

Հա՛, երգը լավ է,
Բայց լացն ավելի ախորժ է հոգուս:

Ա. ՆԱԺԻՇՏ

Ես կարող եմ լալ, եթե արցունքը օգտակար է ձեզ:

ԹԱԳՈՒՀԻ

Եթե դրանով վիշտս ամոքվե՛ր՝ ես կարտասպելի,
Առանց ի՞նչ աչքից արցունք խնդրելու:
Սակայն, սպասի՛ր, այստեղ են գալիս պարտիզպանները:
Եկ, այս ծառերի ստվերում պահվե՛նք:
Թշվառությունն պատրաստ եմ փոխել մի գնդասեղով.
Եթե այդ մարդիկ ասուլիս չանեն
Երկրի պետական գործերի մասին:

Ամենքի շուրթին նույն տազնապալի գրույցն է շրջում՝
երկրում սպասվող փոփոխությունը:
Այի ցավը մյուսից առաջ է բռնում:

Թագունին և պալատական տիկիները բախկնում են:

Մահում են պարտիզպանը և երկու ծառա:

ՊԱՐՏԻԶՊԱՆ

24 Գնա ծիրանի ծառերի կախված նյուղերը կապիր,
Ռոնն անուղղա զավակների պես
Թշվառ հայրերի մեջքերն են նկում
Իրենց անառակ ծանրության ներքո:
Իսկ դու շտապիր, և ինչպես հարկն է դահնի պաշտոնին,
Սրբնքաց անող այն ընծյուղների գլուխը բոցրու,
Ռոնն ձգտում են գոտոգ երևալ:
Ամեն ինչ պետք է հարթեցվի մեր այս արևայության մեջ:
Ձեր գործը այդ է. իսկ ես շտապեմ
Մոլախոտերը արմատից պոկել, որոնք անօգուտ
Մծում են հյուրը արգավանդ հողից
Խեղդելով անը բուրավետ ծաղկանց:

Ա. ՄԱՌԱ

Իսկ ինչո՞ւ պետք է մենք ցանկապատված
Հողի այս փոփոխ կտորի վրա
Պահպանենք օրենք, միաձևություն և ներդաշնակ կարգ,
Երբ հուժկու ծովով պատնեշավորված
Մեր այս պարտեզը, ողջ երկիրը մեր,
Լի է անպիտան վայրի խոտերով
Եվ գեղեցկագույն նրա ծաղկունքն է հեղձամահ արված,
Մրգատու ծառերը անխնամ լվված և վայրենացած,
Ցանկապատերը փլված, ավերված, տունկերը անկարգ,
Ողջ դալարիքը քրքուռով պատած:

ՊԱՐՏԻԶՊԱՆ

Լոի՛ր, անպիտան,

Նա, ով հանդուրժեց անկարգ մի պարտեզ. երբ որ գարուն է,
Նրա աշունը Եկած է արդեն:

Իր լայնատարած տերևների տակ
Նա պատսպարեց իրենով սնվող մոլախոտերին,
Իրև հենարան կարծելով դրանի:

Քոյինքրոկը այդ երեքին էլ արմատից պոկեց —
Չկան կոմս Վիլտշեր, Բուշի և Գրին...

Ա. ՄԱՌԱ

Նրանք մեռած են:

ՊԱՐՏԻԶՊԱՆ

Այո, երեքն էլ:

Քոյինքրոկը գերի է վերցրել նաև արքային:
Արքան շոպլ էր: Օ՛ր, ի՛նչ մեծ ցավ է,
Որ իր Երկիրը նա չխնամեց
Եվ չգուրգուրեց այնպիսի սիրով,
Ինչպես որ մենք ենք հոգ տանում մեր այս պարտեզի վրա:
Մենք ամեն գարնան թեթև հեղինում ենք
Մեր այս պտղատու ծառերի մաշկը, նրանց կեղևը,
Որպեսզի նրանք ավելորդ հյութից
Եվ գերավիշից բեռնաբափվելով՝ անկումից փրկվեն:
Եթե նա այդպես վարվեր մեծատոնում ավագանու հետ,
Նրանք կանեին ծանրաբեռ դարձած օգտակար բերքով,
Ինքն էլ այդ բերքից օգուտ կհաղեր:
Քոյոր ավելորդ հյութերը կտրում, դեն ենք շարտում,
Որ պտղաբերող շիվերն անկաշկանդ անեն, զարգանան:
Այդպես վարվելով ոչ ոք չէր խլի թագը իր գլխից.
Սակայն անհոգ է և զրկվեց թագից:

Ա. ՄԱՌԱ

Ձեր կարծիքն ի՛նչ է. ուրեմն արքան վա՛ր է իջնելու:

ՊԱՐՏԻԶՊԱՆ

Արդեն իջած է. և նա անկասկած գահընկեց կարվի:
Անցյալ գիշերը նամակ է եկել
Յորթի սիրելի մարդկանցից մեկին
Շատ վատ լուրերով:

ԹԱԳՈՒՇԻ

Քիչ մնա պայթևմ: Լուել շեմ կարող:

(Նածիշտների հետ թախտոցից դուրս գալով)

Օ՛ր, դու, որ ծերուկ Ադամի տեսքով
Մշակում ես այս դրախտի այգին

Ինչպե՞ս է քո բիրտ և դժոխքմբեր լեզուն հանդգնում
Քարձրագոչ հնչել դժնդակ բոթն այդ:
Այդ ի՞նչ եվա է, այդ ի՞նչ օձ է քեզ հրապու՛ելով
Մղել մի երկրորդ մեղսագործության:
Ինչպե՞ս ժպրհեցիր արտասանելու,
Որ Ռիչարդ արքան ներքև է իջած:
Դու, ոչնչություն, մի փիչ ավելի բնտիր քան ցեխը.
Ինչպե՞ս հանդգնեցիր նրա անկումը կանխածայնելու:
Պատասխան տուր ինձ,
Որտե՞ղ, ե՞րբ, ինչպե՞ս այդ լուրն իմացար:
Ես սի՛ր, անզգամ:

ՊԱՐՏԻԶՊԱՆ

Ներե՛ք, տիրուհի. միթե կարծում ե՛ք, թե ես ուրախ եմ
Այդ լուրի համար: Բայց իմ ասածը խիստ հավաստի է:
Քոլիներոկը Ռիչարդ արքային շատ պինդ է բռնել:
Երկուսի բախտը կշեռնե է դրված:
Մի կշռաթաթում՝ ձեր ամուսինն է, հետք մարդ չկա,
Բացի մի ֆանի փուչ էակներից:
Որոնք իր ֆաշը թեթևացնում են:
Մյուս նժարին նստած է հզոր Քոլիներոկը
Նվ անգլիական ուղչ ավագանին:
Այս տարբերությամբ Քոլիներոկը Ռիչարդ արքային
Ներքև կհիշեցնի...
Փութացե՛ք Լոնդոն և դուք կիմանաք,
Թե իմ ասածը որքան ստույգ է,
Այնտեղ ամեն ոք այդ մասին գիտե:

ԹԱԳՈՒՂԻ

Օ՛, դժբախտություն թեքևուսունք,
Միթե՞ այդ լուրը ինձ չէր պատկանում,
Որ ինձ թողեցիր ամենավերջում: Օ՛, դու այդ բոթը
Ինձ հավանորեն ուշ հաղորդեցիր,
Որ ես առավել երկար պահպանեմ
Այդ ցավն իմ սրտում: Երթանք, տիկիներ իմ պալատական,
Շտապենք Լոնդոն. աղետի մեջ է Լոնդոնի արքան:
Օ՛, բախտ իմ, մի՛թե ինձ էր վիճակված տեսնով տրտմագին
Պննազարդելու հազրական երբք Քոլիներոկի:

Քո ինձ հաղորդած այդ բարի համար, ծերուկ սլաւոփզպան,
Տաւ աստված բոլոր քո պատվաստները իսպառ շորանան:

Թագունիս եւ նաժիշտները գնում են:

ՊԱՐՏԻԶՊԱՆ

Թշվառ բագունի, քո անիծանքով,
Իմ ողջ վաստակը բող ոչնչանար,
Քէք քո վիճակը չվատարանար:
Ա՛յ, այստեղ կաթեց նրա արցունքը, այստեղ լաց եղավ,
Եվ այնտեղ, որտեղ այդ արցունքն ընկավ,
Մի թումբ կշինեմ լացող տունների,
Որ ով որ տեսնի թումբն այդ դառնաշիր
Թագունու այրող արտասուքն հիշի:

Գնում են:



Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Զ Ո Ր Ր Ո Ր Գ

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Վեսամինստրի գահասրահը:

Մանում են Բալինբրոկը, Օմեոլը, Նորթեմբերլենդը, Պերսին,
Ֆիցվուսերը, Սուտին, մի ազնվական, Կառլայլի Եպիսկոպոսը,
Վեսամինստրի վանահայրը և ուրիշներ:
Մունեսիկ, սպաներ և Բեգոսը:

ԲՈՒԽՆԲԲՈԿ

Բերե՛՛ք Բեգոտին:

Արդ խոսի՛ր, Բեգոտ, դու ազատորեն: Պատմի՛ր բոլորը,
Ինչ որ դու գիտես ազնիվ Գլոստերի սպանության մասին:
Ո՛վ արքայի հետ այդ դավը նյութեց,
Ո՛վ կատարեց այդ սեփրն արյունոտուշտ,
Նրան ապաժամ գրկելով կյանքից:

ԲԵԳՈՏ

Թող լորդ Օմեոլը կանգնի իմ առաջ:

ԲՈՒԽՆԲԲՈԿ

Չարմիկ, առաջ եկ և ուղիղ նրա երեսին նայիր:

ԲԵԳՈՏ

Լիլյուդ, ես գիտեմ, քո հանդուգն լեզուն
Թույլ չի առ իրեն նվաստանալու
Հրաժարվելով նախկին ասածից:
Այն անեղ ժամին, երբ Գլոստերի մահը նյութվում էր,
Ի՞նչ ինձ ասացիք «Միքե՛» բազուկն իմ երկար չէ այնքան,
Ու Անգլիայի պալատից անդուր:

Չկարողանամ կալե հասցնել,
Մինչև գլուխը... ծերուկ հորեղբոր»:
Շատ ասածներից հիշում եմ նաև այսպիսի մի խոսք,
Որ դուր կուզեի՜ք ձեզ առաջարկվող
Մեկ հարյուր հազար արծաթից գրկվել,
Քան Անգլիայում վերստին տեսնել Քոլինգբրոկին,
Միաժամանակ ավելացնելով,
Որ ձեր զարմիկի մանր զերագույն
Օրհնանք կլինե՞ր այս երկրի համար:

ՕՄԵՌԷ

Իշխաններ, և դուր, ազնիվ լորդեր իմ,
Ի՞նչ պատասխան տամ այս նվառ մարդուն.
Ինչպե՞ս կարող եմ պայծառ ասողերն իմ արասավորել,
Այս ստաբանին հավասարվելով:
Զրպարտիչ լեզվով նա ցեխ շպրտեց իմ պատվի վրա.
Մի՞թե կույ կտամ:
Ահա՛ ձեռնոցն իմ — մահվան ձեռագործ դատակնիք,
Որ քեզ նշում է դժոխքի համար.
Դու սուտ ես ասում, ինչ որ ասացիր բոլոր կեղծ է,
Այդ կհաստատեմ ես քո արյունով,
Քեպես սուկայի նվաստություն է
Իմ ասպետական սրի պողպատը պղծել դրանով:

ԲՈՒԵՆԲՐՈՒ

Սպասի՛ր, Բեգոա, Ե՛տ ֆաշիր ձեռնդ:

ՕՄԵՌԷ

Բացառությամբ մեկի, կուզեի որ ինձ
Այդքան սաստկորեն վիրավորողը
Գոնե ֆաջագույն ասպետը լինե՞ր այս ներկաներից:

ՖԻՅՎՈՏԵՐ

Եթե հավասար ֆաջի ես փնտրում,
Ահա ձեռնոցն իմ քո ձեռնոցի դեմ. բարձրացրո՛ւ, Օմեռ:
Վկա արևն այս, որի շողերով
Ես որոշում եմ քո կանգնած տեղը,
Ինքս լսեցի, և դու պարծանա՞նով այդ խոսքն ասացիր,
Որ Գլոստերի սպանությունը քո ձեռքի գործն է:
Եվ եթե ժխտես ֆանապատիկ,

Այդքան անգամ էլ կեղծած կլինես,
եմ ես պատրաստ եմ այդ ստորջուներ
Սուսերիս ծայրով քո կուրծքը խորել,
Որը կեղծիքի դարբնոցարան է:

ՕՄԵՌԻ

Այդ օրը բնավ չես տեսնի, երկշուտ:

ՏԻՅՎՈՏԵՐ

Իսկ ես պատրաստ եմ հենց հիմա բախվել. հոգովս եմ երդվում:

ՕՄԵՌԻ

Այդ ստի համար անելդ դժոխքն է:

ՊԵՐՍԻ

Ստում ես, Օմեոյ: Նրա պատիվը այս բողոքի մեջ
Նույնքան է արդար, որքան դու ես կեղծ:
Որ դու խարդախ ես, ես այդ պատրաստ եմ ապացուցելու
Քեզ հետ բախվելով մինչև մարդկային գերագույն հեկի
Մայրագույն կետը: Չեռնոցս նետվեց,
Հանդգնիր վերցնել, եթե քեզ ես դու:

ՕՄԵՌԻ

Թե չհանդգնեմ՝ քոյ այս բազուկը չորանա իսպառ.
Անկարող այլևս վրիժառույթյան սլոդպաս շողացնել
Ոստիս փայլուն կորդակի վրա:

ԱԶՆՎԱԿԱՆ

Օմեոյ, ուխտադրուժ, ի դեմ քո կյանքի,
Հրամայում եմ, որ հողն ընդունի իմ այս ձեռնոցը:
Քեզ գրգռելու համար պատրաստ եմ
Մագեժագ գոռալ անհավատարիմ ականջներիդ մեջ,
Որ դու նենգավոր մի սաաբան ես:
Վերցրո՛ւ իմ պատվի գրավակիանը. քե համարձակ ես:

ՕՄԵՌԻ

Էլ ուրիշը կա՞: Սիրով կրնեղունեմ ամեն հրավեր:
Հազար մարտիկի գորուրյուն ունեմ ես իմ կրծքի մեջ,
Պատրաստ ձեզ նման քսան հազարին պատասխան տալու:

ՍՈՒՌԻ

Միլորդ Ֆիցվուտեր, ես Բաջ հիշում եմ,
Որ դուք խոսեցիք դուք՝ Օմեոլի հետ:

ՖԻՅՎՈՏԵՐ

Այո, շատ նիշա է, դուք ներկա էիք մեր ասուլիսին,
Եվ դուք կարող եք վկայություն տալ, որ ես արդար եմ:

ՍՈՒՌԻ

Վկա երկնքի արդարությունը, դուք անարդար եք:

ՖԻՅՎՈՏԵՐ

Ստում ես, Սուրի:

ՍՈՒՌԻ

Լոի՛ր, գարշ լակուտ:

Այդ անեղ սուտը բարդվեց իմ արին,
Իսկ նա պատրաստ է այդ ծանր բեռը
Վրեժխնդրությամբ այնպես դատարկել, որ բացվի փոսը
Եվ այդ փոսի մեջ, հորդ գանգի կողքին,
Հանգչեն այդ սուտը և սաախոսը:
Ապացույց դրան՝ նետում եմ պատվիս գրավականը,
Թե համարձակ ես, վերցրու. պատրաստ եմ:

ՖԻՅՎՈՏԵՐ

Օ՛, Ին նժույզը ինչ արքնրաց է:
Երբ հանդգնեմ ուտել կամ խմել, շնչել կամ ապրել,
Միակ փափագս է հանդիպել, Սուրի, քեզ անապատում,
Եվ քեզ վրադ և կրկնել անվերջ,
Որ դու ստում ես, ստում ես, ստում:
Ահա հավաափիս պարտամուրհակը,
Որով կստիպեմ քեզ դաժանորեն սխալն այդ ուղղել:
Աշխարհն ինձ համար նոր է սկսվում
Եվ իմ երազն է հառաջադիմել այդ աշխարհի մեջ
Ուստի և արդար իմ վկայությամբ՝
Օմեոլի դուրսը խիստ նուրբապարտ է:
Բացի այդ, Օմեոլ, ինքս լսեցի Նորֆոլկի դեսից,
Որ դու կալե ես ուղարկել երկու սնուցործների,
Որ Գլոսսերի գլուխը կտրեն:

ՕՄԵՌԷ

Ու՛ այստեղ ազնիվ մի ֆրիստոնյա: Մի ձեռնոց տվե՛ք,
Իբրեւ երաշխիք նորֆոկի դֆսի անարգ ստի դեմ:
Ես կշարտեմ այդ գրավն այստեղ,
Եվ եթե նրան վերադարձ չի՛նք,
Թող ներկայանա իր պատվի դատին:

ԲՈՒԻՆԲԵՐՈԿ

Թողնենք վեներն այդ ձեռնոցների տակ
Մինչև նորֆոկը տուն վերադառնա:
Չնայած որ նա իմ թշնամին է, սակայն կարձակվի
Եվ ետ կստանա վերստին բոլոր իր կալվածքները:
Երբ վերադառնա, կնշանակենք ձեր դատի օրը
Երկուսի միջև:

ԿԱՌԱՅԷԼ

Օրն այդ պատվական Լերբեք չի գալու:
Ահա սուրջալ դուխը բազում անգամներ
Քաջաբար կովեց արբազան հողում ի սեր Հիսուսի,
Քրիստոնեական խաչի դրոշը հաղթ ծածանելով
Ընդդէմ սեամուրք կոսպաշտների,
Մարակիների և գազան թուրքի,
Եվ պատերազմի գործերից հոգնած ֆաշվեց Իտալիա,
Եվ վեներտիկում իր մարմինն հանձնեց
Այդ հրաշագեղ երկրի մայր հողին,
Իսկ իր սուրբ հագին Հիսուսին հանձնեց, իր գորապետին,
Որի դրոշով նա այդքան երկար կովեց ֆաջուրեն:

ԲՈՒԻՆԲԵՐՈԿ

Մի՛ յրև նորֆոկը մեռած է, սուրբ հայր, դուր հաստա՛ւ գիտե՛ք:

ԿԱՌԱՅԷԼ

Ինչքան հառտատ է, որ Լս ապրում եմ:

ԲՈՒԻՆԲԵՐՈԿ

Իր օրհնյալ հագին թող խաղաղությամբ
Հայր Աբրահամի գագի մեջ հանգչի:
Լորդեր հակամարտ. ձեր վեներն առժամ
Ի՛նքն պետք է թողնենք ձեռնոցների տակ,
Մինչև որ վեներն օրը ձեր դատի:

ՅՈՐՔ

Մեծ դուստր Լանկաստեր,
Քանքեր իմ խոնարհ Ռիչարդի կողմից: Նա բարի կամֆով
Քեզ ժառանգորդ է ընդունում գահին՝ իր վեհ մահանը
Քո արքայական ձեռքին գիշելով:
Քարձրացի՛ր գահին, Բանի որ ինքը վայր իջավ գահից
Եվ թող կեցցե մեր քաղաքը Հենրիին, շորբորդն այդ անվամբ:

ՅՈՒՆԲՐՈԿ

Աստծո անունով ես կրարձրանամ արքունի գահին:

ԿԱՌԱՅԻ

Մի՛ թե իսկապես, օ՛, փրկիր աստված:
Ավելի լավ է ես նշմարտության գործին ծառայեմ.
Քան թե աշխարհի բռնապետներին:
Օ՛, աստված, Եթե այս փառատոհմիկ ներկաների մեջ
Գտնվեր մեկը, գեթ այնքան ազնիվ,
Որ արդարամիտ դատավոր դառնար
Մեր առաքինի Ռիչարդի դատին,
Ապա անկասկած ազնվությունը նրան կհուշեր
Զգուշանալ այս սոսկալի մեղքից:
Ինչպե՛ս կարող է հպատակը իր արքային դատել,
Իսկ ո՛վ Ռիչարդի հպատակը չէ այս նստածներից:
Նույնիսկ գողերին տուանց լսելու
Թույլատրված չէ դատել հեռակա,
Թեկուզ հանցանքը հավաստի լինի:
Իսկ քաղաքի՞ն: Կարելի՞ բան է, որ հպատակը
Իր նվաստ շնչով դատի արքային,
Աստծո վեհությունը կերպավորողին,
Նրա ընտրյալին, մեծ գորապետին և տեղապահին,
Որ նրա կողմից քաղաքը լավ է,
Օժված, հաստատված Անգլիո գահին:
Եվ դատի ինչպես՝ հեռակա կարգով,
Երբ քաղաքը ինքը ներկա չէ.
Օ՛, փրկիր, աստված, դու մեզ այդ մեղքից:
Ո՛ւմ մտնով կանցնեք այդքան պժգալի ու ժանտ մի արարք,
Եվ այն էլ որանե՛լ՝ ֆրիստոնյա երկրում:

Ես հպատակ եմ և բարձրյալ տերն իմ հրամայում է
 Քաջորեն պաշտպան կանգնել արքային,
 Նույնը ես կոչ եմ անում Նաև ձեզ՝ հպատակներիդ:
 Լորդ Հերիֆորդը, որին դուր ալստեղ արքա կոչեցի՛,
 Խաղաղական է մեր թագավորին.
 Նա դավանան է և ոչ թե արքա:
 Եթե դուր նրա գլխին թագ դնեմ,
 Լսեմ, ուրեմն, իմ այս խոսքերը մարգարևակամ.
 Անգլիացիների արյունից հողը պիտի հագե՛նա,
 Եվ պիտի ողբան գալի՛ք դարերը այդ պիղծ արյունից,
 Խաղաղությունը անդարձ չվելով
 Ի՞նչ օրևանը պիտի որոնի
 Հեթանոսների և թուրքերի մոտ,
 Իսկ խաղաղության այս նստավայրում
 Պիտի բորբոքվեն միջեղբայրասպան գոռ պատերազմներ
 Եվ պիտի ելնեն՝ մերձավորը իր մերձավորի դեմ,
 Ազգը ազգի դեմ:
 Խառնակությունը, սարսափը, վախը, խոտվությունը
 Պիտի օրևան դարձնեն այս կղզին և այս Երկիրը
 Հեռայնու պիտի կոչվի Գողգոթա
 Եվ կառափնարան մարդկանց զանգերի:
 Օ՛, եթե զինեմ մի արհունի տուն ընդդեմ մյուսի
 Այդ գժտությանը աղետներով լի
 Չի հավասարվի ոչ մի գժտություն,
 Իր այս անիծյալ աշխարհն է տեսել իր ծագման օրից:
 Կանխե՛ք վտանգը, դիմադա՛րձ Եղեմ, ուշի՛ք՝ եկեմ շուտ,
 Եթե չեմ ուզում, որ ձեզ նզովեն սերնդե-սերունդ:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԳ

Կուր հրաշալի հառնցի՛ք, պարոն: Մեծ նիզ գործ դրի՛ք
 Չեզ մերկացնելու որպես մասնակից դավանանության,
 Որի համար ձեզ ձերբակալում ենք: Վեստմինստեր, լորդ իմ,
 Այս դավանանին ձեր ձեռքն ենք հանձնում,
 Հսկեցե՛ք վրան, մինչև դատի արվի:
 Իսկ այժմ, լորդեր, դուր համաձայն է՛ք
 Ի՛նչ համայնիների պալատի վնդին:

ԲՈՒԽՆԲԲՈԿ

Ռիչարդին բերե՛ք. որ հրաժարվի հանրության առաջ:
Այդ է միջոցը առանց որևէ տարակուսանքի
Բազմելու գահին:

ՅՈՐՔ

Գնամ բերելու:

Գնամ է:

ԲՈՒԽՆԲԲՈԿ

Պարոններ, դուք այժմ հսկողության տակ ե՛ք,
Պաշտպաններ գտե՛ք և միջնորդություն,
Որ դատարանին նիշտ պատասխան տա՛ն:

(Կառայլին)

Մենք ձեզանից սեր չենք ակնկալում,
Ոչ էլ կարոտ ենք ձեր պաշտպանության:

Մտնում են՝ Յոհն Ռիչարդ Բազմորի հետ և մի քանի
սպաներ՝ բերելով քաղը:

ՌԻՉԱՐԴ

Ավա՛ղ, կանչված եմ Բազմորի մոտ,
Եվ իմ ետևից մարդ է ուղարկված:
Իսկ ինչո՞ւ. չէ որ ինձ դեռ այդ գահին խոհեր են կապում,
Որոնցից լրիվ չեմ ձերբազատված:
Ես դեռ չեմ վարժվել դյուրահանության,
Շողոֆորթելու կերպը չգիտեմ,
Զգիտեմ ինչպես պետք է մեջք թեփել և ծունկ խոնարհել.
Օ՛. տխրությանը դադար տվե՛ք ինչ,
Որ այս բաները սովորեցնի ինձ:
Եվ սակայն ես այս մարդկանց դեմքերը
Շատ լավ հիշում եմ. իմ մարդիկը չե՞ն:
Այդ նրա՞նք չէին. որ գոչում էին «կեցցե՛ մեր արքան»:
Հուդան այդ ձևով դավեց Հիսուսին:
Սակայն Հիսուսը տասներկուսի մեջ
Բոլորին գտավ իրեն նմիրյալ, բացի այդ մեկից,
Իսկ ինձ դավեցին տասներկու հազար
Ու մեկը չեղավ գեթ հավատարիմ:
Տեր կեցցս զաբժայս: Իսկ ինչու ոչ ոք չի ասում «Ամեն»:

Տերտեր և դպիր՝ երկուսն էլ ն՞ս եմ:
Երե այդպես է, ես գոչեմ «Ամեն»:
Տեր կեցցո զարեայս: Թեպես արեա շեմ:
Եվ սակայն «Ամեն», երե երկինք
Տակավի՛ն ինձ է համարում արեա:
Ինչո՞ւ եմ կանչված:

ՅՈՐԲ

Ուր քո ցանկությունք և բարի կամքով
Արեունի բերք թոթափես քեզնից,
Քո տերությունք և թագր երկրի
Հանձնելով Հենրի Բոլիներոկին:

ԹԻՉԱՐԳ

Տվե՛՛ք ինձ թագր: Ա՛յ, այսպես, զարմիկ,
Թագն այսպես բռնիր: Չեղա՛վ, տե՛ս, զարմիկ,
Դու այն կողմից բռնիր, իսկ ես այս կողմից. հիմա բարձրացնենք:
Այս ոսկյա թագը այժմ նման է մի խոր ջրնորի,
Իսկ մենք երկու դույլ՝ կախված նրանից:
Երկու դույլերից մեկը դատարկ է և ցաակում է վեր,
Իսկ մյուս դույլը, որ լիքն է ջրով, իջնում է ներքև:
Այդ ծանր դույլը ես եմ՝ արցունքով ու ողբերով լի
Ու սուզվում եմ ցած,
Մյուսը դու ես՝ վեր ևս բարձրանում՝ թեթև, արընթաց:

ԹՈՒԽՆԵՐՈԿ

Հրածարվելը ձեռ բարի կամքն էր:

ԹԻՉԱՐԳ

Իմ թագից, այո, բայց ոչ վշտերից:
Տերություն ու փառք՝ բոլորը կաամ ևս սիրահոծար,
Իսկ ողբն ու վիշտը ինձ հեա ևն մնում,
Գեո այդ բոլորի թագավորն եմ ես:

ԹՈՒԽՆԵՐՈԿ

Հոգսի մի մասը և թագն ինձ տվե՛ք:

ԹԻՉԱՐԳ

Այդ ծանրությունք ինձնից վերցնելով՝
Իմ բերք բնավ չե՛ք թերևացնի:

Ինձ աւնչող հոգսք անդարձ կորուստն է նախկին հոգսերի,
Իսկ դուք ձգտում եք նորահոր հոգսի հաղթանակների:
Հոգսերի պարսք կայած է թագին,
Ինձ թորափում եմ հոգսերից թեպեա,
Քայց նրանք դարձյալ մնում են ինձ հետ:

ՔՈՒԻՆՅԵՐՈՒՄ

Իսկ դուք հոժա՞ր եք թագը հանձնելու:

ՌԻՉԱՐԴ

Այո՛, ո՛չ: Ո՛չ, այո՛. Բանգի ի՞նչ եմ ես՝ մի ոչնչություն:
Ինչպե՞ս, քե՞զ համար, կամ, քեզ կամ քաղաքացիություն:
Նայի՛ր, ինչպես եմ կործանում ես ինձ.
Այս անտանելի դժնդակ բեռը վայր կտանեմ գլխից,
Այս դժվարակիր մականը՝ ձեռքից,
Եվ արհայապահ գոռոգությունը կկորզեմ սրտից,
Եվ իմ արցունքով ես կլվանամ օժանելիքն իմ,
Եվ իմ ձեռքերով կհանձնեմ թագն իմ,
Անփական լեզվով ես վայր կգնեմ
264 Իշխանությունը իմ աստվածային:
Կհրաժարվեմ իմ իրավունքի բոլոր ծեսերից,
Կհրաժարվեմ բոլոր փառքերից ու վեհությունից,
Իմ տիրույթներից, եկամտաններից, հասույթից բոլոր,
Ես կառնեմ անդարձ իմ վնիւնները, հողված և օրենք,
Թող աստված բոլոր ինձ դավողներին թողություն անի,
Թող աստված քեզ էլ բոլոր դավերից անփորձ պահպանի:
Թագավոր էի՝ դարձա կարոտյալ, բարձրից բնկա ցած,
Գու կարոտյալիս վիշտ շատս, աստված:
Իսկ քեզ, որ դեպի բարձունք ես ձգտում, դեպի փառք ու թագ.
Քախա եմ ցանկանում, վերելք անսայթափ:
Կուզեմ շատ երկար դու թագավորես Ռիչարդի գահին,
Իսկ ինձ ինչ մնաց՝ մի փոս երկրային,
Եվ մի իզձ՝ շուտով այդ փոսը իջնել:
Եվ այս է իսուքը անթագ Ռիչարդի.
Աստվա՛ծ, ինչայի Հենրի արհային
Եվ նրան հաստատ պահիր այս գահին,
Օրերով երկար ու արեային:
Ուրիշ բան մնա՞ց:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Զմնաց, բայց դուք սա էլ կարդացե՛ք,

(Մի բողբ հանձնելով)

Այս պարսավները և ոճիւրները այս գարհուրելի,
Ու կատարել էք ինճներդ անձամբ,
Եվ ձեր համախոհ բարեկամները
Ընդդէմ պետության, ի վնաս երկրի:
Խոստովան եղե՛ք, որպեսզի մարդիկ դատեն անաչառ
Եվ ձեզ գրկելը Անգլիո թագից համարվի արդար:

ՌԻԶԱՐԴ

Ինչպե՛ս, ի՞նչ ասի՛ք: Միթե՛ ես պետք է բոլորի առաջ
Խենթություններիս կծիկը քանդեմ: Կոմս Նորթմբերլենդ,
Ասե՛նք թե խոսքը վերաբերում էր քո հանցանքներին,
Չէի՛ր ամաչի այսպիսի մի վեհ ատյանի առաջ
Մեկ առ մեկ կարդալ այդ մեղսանքները: Եթե կարդայիր,
Ապա դու այնտեղ պիտի գտնեիր սոսկալի մի մեղք.
Գահագրկումը մի թագավորի,
Եվ խորտակումը սրբազան ուխտի,
Ուրի համար դու հավետ կանիծվես երկնքի գրեմում:
Դուք էլ կանիծվե՛ք, դուք, որ ուշադիր կանգնած դիտում էք,
Թե ինչպես իմ մեծ ըզվառարյունը հողատում է ինձ:
Չեզանից ոմանք ձեռք են լվանում Պիղատոսի պես,
Առերեսուրեն կարեկցելով ինձ, բայց պիղատոսներ,
Այստեղ բերելով դուք ինձ գամել էք իմ դաժան խաչին.
Չուր՛ն օվկիանոսի անկարող է ձեր մեղքը լվանալ:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Կարդացե՛ք, միլորդ, դանդաղել պետք չէ:

ՌԻԶԱՐԴ

Չեմ տեսնում, աչքս լի է արցունքով:
Եվ, սակայն, այնքան դեռ շեմ կուրացել այդ աղի ջրից,
Ու անգոր լինեմ հստակ նշմարել
Իմ շուրջը խմբված դավանանքներին:
Եթե աչքերս հառեմ ինձ վրա,
Ինձ էլ կգտնեմ իբրև դավանան նրանց մեջ կանգնած,
Չէ՛ որ ես այստեղ համաձայն եղա,

Որ քագավորին կողոպտեն քագից,
Փառքը անարգվի, իշխանը դառնա ստրուկ ոտնատակ,
Պետությունը՝ գոմ, արքան՝ հպատակ:

ՆՈՐԹԵՄՔԵՐԼԵՆԻ

Միլո՛րդ...

ՌԻԶԱՐԻ

Ես, ամբարտալան, քեզ համար լորդ չեմ,
Ոչ էլ արքա եմ որևէ մեկին:
Ես կորցրի անուն և կորցրի տիտղոս,
Ավա՛ղ, ես նույնիսկ իմ մկրտության անունը կորցրի:
Վայ, իմ սև օրին, այսօր շատ ձմեռ մաշել աշխարհում,
Եվ չիմանալ թե ինչպես եմ կոչվում, անունս ինչ է:
Երանի թե ես լինեի ձյունից շինված քագավոր
Եվ լուռ հալչեի կաթիլ առ կաթիլ
Բոլիներոկի արևի առաջ:
Բարի քագավոր, օ՛, մեծ քագավոր, —
Թեպես բարությանը այնքան էլ մեծ չես, —
Եթե իմ խոսքը Անգլիայի մեջ
Ունի տակավին մի շնչին կշիռ,
Հրամայեցե՛ք, բող մի հայելի այստեղ բերվի շուտ,
Ուզում եմ տեսնել ինչի է նման արքայի դեմքը,
Երբ նա զրկված է իշխանությունից:

ԲՈՒԽՆՔՐՈԿ

Մեկն ու մեկը մի հայելի բերեք:

Մի սպասավոր դուրս է գնում:

ՆՈՐԹԵՄՔԵՐԼԵՆԻ

Հայելին կգա. դուր այդ ընթացքում թողթը կարդացեք:

ՌԻԶԱՐԻ

Ես դեռ դժոխք չընկած, ո՛ր ես տանջում, դե՛:

ԲՈՒԽՆՔՐՈԿ

Այլևս մի պնդիր, լորդ նոր թեմբերլենդ:

ՆՈՐԹԵՄՔԵՐԼԵՆԻ

Բայց ժողովուրդը կարող է դժգոհել:

ՌԻՉԱՐԴ

Նա գոն կմնա: Բավական բան կա կարդալու համար,
Երբ ես խկապես այն գիրքը տեսնեմ,
Որտեղ իմ բոլոր մեղքերն են գրված:
Այդ գիրքը ես եմ:

Մտնում է սպասավորը՝ բերելով հայելին:

Տո՛ւր ինձ հայելին և ես կկարդամ:
Ո՛չ, կնձիռները դեռ չեն խորացել: Զարմանալի՛ է:
Իմ դեմքը այդքան հարվածներ կրի վշտի զարկերից
Եվ վրան վերքի ոչ մի խորունկ նեոխ: Օ՛, կեղծ ապակի,
Դու նենգում ես ինձ, ինչպես նենգում են
Սրբանյակներն իմ հաշոյության մեջ: Մի՛ թե սա դեմքն է
Այն քաղավորի, որ իր հարկի տակ յուրաքանչյուր օր
Հյուրընկալում էր տաս հազար մարդու:
Սա՛ է այն դեմքը, որ արևի պես
Խոտու էր տալիս նայողի աչքին:
Դեմքը այն մարդու, որ եղավ աաստիկ անշրջահայաց
Եվ Բոլիներոկի ձեռքով տապալվեց:
Այս դեմքի վրա դեռ կա շողանք մի եղծված փառքի.
Դեմքն էլ եղծված է ճիշտ այդ փառքի պես:

(Շարտում է հայելին)

Տե՛ս, ընկած է նա, փշրված, ցրված,
Օ՛, հանգած արեա, այդ զվարճության իմաստն է շատ մեծ.
Թե անեղ վիշտն իմ ինչ արագությամբ դեմքս ավերեց:

ԲՈՒԿՆԲԲՈԿ

Վշտիդ սավերը ավերել է քո սավերը դեմքի:

ՌԻՉԱՐԴ

Այդ խոսքը կրկնիր,
Վշտիս սավե՛րը: Գուցե: Ե՛կ, տեսնեմ:
Իրավ, շատ ճիշտ է. իմ տխրությունը պառկած է խորում,
Եվ այս արտաքին ձևերը սղբի
Սավերներն են սոսկ մի անտես վշտի,
Որ ծվատում է խոշտանգված հոգիս:
Բուն պատճառն այդ է: Շնորհակալ եմ
Այդ առատաձեռն բաշխումիդ, արեա: Դու ոչ միայն ինձ
Պատճառ ես առթում սղբալու համար.

Այլև ինձ անձամբ ուսուցանում ես
Թե ինչպես ողբամ: Մի խնդրանք ես
Եվ ես կգնամ ու այլևս ձեզ նեղություն չեմ տա:
Կարո՞ղ եմ հուսալ, որ ինձ շեք մերժի:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

Խնդրանքդ ի՞նչ է, հարգարժան զարմիկ:

ՌԻԶԱՐԳ

Հարգարժան զարմիկ. մեծ եմ ավելի, քան թե թագավոր:
Երբ արքա էի՝ իմ հայատակն էր ինձ շողոփորթում,
Այժմ հասարակ մի հայատակ եմ
Եվ շողոփորթն իմ մի թագավոր է,
Ի՞նչ կարիք ունեմ այժմ խնդրանքի, երբ այսֆան մեծ եմ:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

Եվ սակայն խնդրեմ:

ՌԻԶԱՐԳ

Եվ ես կստանամ:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

Սյո, իհարկե:

ՌԻԶԱՐԳ

Արտոնեմ՝ գնալ:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

Ո՞ւր:

ՌԻԶԱՐԳ

Ուր որ ձեր կամքն է, միայն թե շուտով չփվեմ ձեր տեսիլից:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

Քերդ տարեմ նրան, նանապարհ դրեմ:

ՌԻԶԱՐԳ

Ճանապարհ դրե՞մ: Քոլորդ դարձել եմ նանապարհ դնող,
Երբոր նշմարիտ արքան ընկած է,
Իշխան են դառնում դավաճան ու գող:

Ռիչարդ թագավորը, մի ֆանի լորդեր և մի հսկող պահապան
դուրս են գնում:

ԲՈՒՆԲԲՈԿ

Գալ շորեֆշաբթի օրն է մեծաշուփ

Մեր քազադրման: Պատրաստվե՛ք, լորդեր:

Բարբր գնում են: Մնում են Կառլայլի էպիսկոպոսը,
Վեսամինտարի վանահայրը և Օմեոլը:

ՎԱՆԱՀԱՅՐ

Այս տեսարանը շատ էր ողբալի:

ԿԱՌԱՅԼ

Օրերը ողբի դեռ նոր պիտի գան, և այս ցավը խոր
Ինչպես փշի խայթ կանցնի բոռից բոռ:

ՅՄԵՌԻ

Սրբազան հայրեր, միթե՞ չկա ելփ,
Որ մեր երկիրը աղետից փրկենփ:

ՎԱՆԱՀԱՅՐ

Միլորդ,
Նախֆան մտֆերս ձեզ կհաղորդեմ ես ազատորեն,
Ոչ միայն պետփ է երդվեփ սրբությամբ
Իմ միտումները գաղտնի պահելու,
Այլև խստորեն իրագործելու իմ խորհուրդները:
Ձեր նակատներին ես դժկամության թխպեր եմ տեսնում,
Սրտերում՝ ցավեր, աչֆերում՝ արցունփ:
Գնա՛նփ ընթրիփի և ես ցույց կտամ,
Թե որն է ուղին երկրի փրկության:

Գնում են:



ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆՔԵՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Հոնորն:

Փողոց, որ տանում է դեպի թերդ:
Մտնում են թագուհին և նաժիշտները:

ԹԱԳՈՒՂԻ

Արեան գալու է այս նանապարհով. այսպես են էլնում
2 Դեպի ամրոցը Հուլիոս Կեսարի, որ նա է շինել
Ի տառապանք մեզ: Բոլիներոկի գոռ հրամանով
Իմ ամուսինը դատապարտված է
Տանջվելու նրա փառեղեն խորշում
Որպես բանտարկյալ: Ե՛կ, այստեղ նստե՛նք: Ո՛վ ստամբակ հող,
Քո օրինական թագոմուն թույլ տուր հանգչել քո կրծքին:
Բայց կացե՛ք, տեսե՛ք: Ավելի լավ է, սակայն, շտենել,
Իմ հրաշալի վարդը թոշնած է: Բայց, ո՛չ, նայեցե՛ք,
Որ կարեկցությամբ ցողի փոխվելով
Դովացնենք նրան նշմարիտ սիրո արտասույթներով:

Մտնում է Ռիշարդ թագավորը՝ պահակախմբով:

Դու տրոյական ավերակների կենդանի տիպար,
Դու պաավի փառանգ: Դու Ռիշարդը չես,
Այլ դամբարանը Ռիշարդ արեալի: Դու շննաղ պանդոկ,
Ինչո՞ւ ժանտ վիշտը պետք է բնակվեր այդ պալատի մեջ,
Իսկ գինետունը իջևան դառնար հաշտության համար:

ՌԻՉԱՐԴ

Դու մի դաշնակցիւր տառապանքի հետ, գեղանի տիկին,
Որ իմ վախճանը դարձնես շուտափույթ: Համարիւր, որ մեր

Նախկին վիճակը մի հրաշագեղ երազ է եղել,
 Ռեից արթնացած՝ մենք մեզ տեսել ենք իրական կյանքով:
 Ռիստի եղբայր եմ ես դաժան վշտին և մինչև շիրիմ
 Անբաժան ենք մենք: Փուրթա՛ Ֆրանսիա, ո՛վ իմ քաղցրիկ սեր,
 Փակվի՛ր որևէ մենաստանի մեջ,
 Մեր անսուրբ կյանքը երկրային քաղից մեզ զրկեց, անգին,
 Բարեպաշտությամբ ձգտենք տիրանալ երկնային քաղին:

ՔԱԳՈՒՇԻ

Այդ իմ Ռիչարդն է կազմով ու հոգով
 Այդքան նվաղած և այլափոխված:
 Բուլիներովը մի՛թե տապալեց
 Նաև բանական և միաբն հուժկու.
 Մի՛թե ներխուժեց նա և ուստի մեջ:
 Խոցված առյուծը մեկնելու պահին թաթը պարզելով,
 Երբ անկարող է ոսոխին նզմել,
 Կատաղությունից հողն է ծվատում,
 Իսկ դու մեղավոր աշակերտի պես
 Խոնարհ պագնում ես ևեզ հարվածողի գավազանը բիրտ,
 Նվաստ ցածությամբ փճնելով նրա մոլեգնության դեմ:
 Մի՛թե առյուծին վայել բան է դա,
 Իսկ դու առյուծ ես՝ գազանների արքան:

ՌԻՉԱՐԴ

Քազանների արքան. այդ նշմարիտ է.
 Ես կլինեի բախտավոր արքա,
 Եթե գերծ լինեի իմ շրջապատը մարդ-գազաններից:
 Անգին օրերիս նախկին թագունի,
 Պատրաստվի՛ր իսկույն Ֆրանսիա մեկնել:
 Համարի՛ր, որ ես արդեն մեռած եմ
 Եվ դու հենց այստեղ իմ մահվան մահնից
 Առնում ես վերջին հրաժեշտն ինձնից:
 Չմոռան տաղակալի երեկոների
 Նաիր պատվական ծերուկների հետ բուխարիկի մոտ
 Եվ լսի՛ր նրանց պատմությունները
 Վաղուց հուշ դարձած օրերի մասին՝ աղետներով լի:
 Եվ գիշեր բարի մաղթելուց առաջ,
 Լքե՛ն փոխհատույց նրանց վշտերին,
 Պատմի՛ր ողբալի իմ պատմությունը,

Ունկնդիրներէդ բարձերք քոչած ադի արցունքով,
Քանզի կիսավառ կոնդերն անզգա,
Լեզվիդ ողբագին շեշաերից ազդված,
Կարեկցութիւնից պիտի հեկեկան բովսարիկի մեջ
Մերք գունատվելով ինչպես գորշ մոխիր ու մերք սև ածուխ,
Գահրնկեց արված մի օրինական արհայի համար:

Մանում է նորթմբերլենդը՝ շխտմբով:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Միլոռդ, Բովիմբրոկը վնիսը փոխեց:
Որոշված է ձեզ ուղարկել Պոմֆրեդ
Եվ ոչ թե բերդը Հուլիոս Կեսարի:
Իսկ դուք, տիրունի, բարեհանեցեք Ֆրանսիա մեկնել,
Այն էլ շատ շտապ: Կարգադրված է:

ՌԻՉԱՐԴ

Ո՞վ նորթմբերլենդ, դու այն սանդուղն ես, որի օգնությամբ
Բովիմբրոկը բարձրացավ գահին,
Բայց մոտ է ժամը, երբ գարշ հանցանքիդ գագաքը դեղնած
Սաստիկ պայթյունով պիտի դուրս ժայթփի շարավն արնածոր՝
Եթե նա նույնիսկ իր բազավորության կեսը զիջի քեզ,
Այդ շատ շնչին է այն մեծ ամբողջի համեմատությամբ,
Որին տիրացավ նա քո օգնությամբ:
Եվ կհասկանա, թե դու, որ գիտես
Կեղծ բազավորներ հաստատել գահին,
Կիմանաս նաև, թե ինչ միջոցով
Քոնությամբ կորզած այդ գահից իրեն ներքև գլորես,
Հենց որ նա մի քիչ նեղություն տա քեզ:
Երկու շարագործ բարեկամների
Սերք փոխվում է նախապես վախի,
Վախն՝ ատելության, ատելությունը դառնում է վտանգ
Եվ վերջանում է մեկի կամ զույգի արժանի մահով:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Իմ մեղքը՝ գիխիս և դրանով էլ փակենք այդ հարցը,
Հրածեշտ առեք, չէ՞ որ դուք պետք է բաժանվեք իսկույն:

ՌԻՉԱՐԴ

Օ՞ր, դա կրկնակի ապահարզան է: Անզգամ մարդիկ,
Դուք երկապատիկ պսակ եք ֆանդում՝

Իմ և իմ քազի արդար դաշինքը,
Ապա դաշինքը իմ և իմ կնոջ:
Ե՛կ հրաժեշտի մի ջերմ համբույրով մեր ուխտը փանդենք,
Ո՛չ, հարկավոր չէ, չէ՞ որ համբույրով նա ամրապնդվեց:

(Նորբեմբերլենդին)

Արդ, անջատի՛ր մեզ: Ինձ հղիւ հյուսիս,
Ուր ցուրտ է սաստիկ և կլիման է տառասլած ախտով,
Իսկ իմ կնոջը հղիւ Տրանսիա: Այնտեղից եկավ
Նա իբրև շֆեղ մայիս կենսաբեր,
Վերադառնում է որպես անձեռնոտ տխուր նոյեմբեր:

ՔԱԳՈՒՂԻ

Մի՞քե մենք իրավ պետք է անջապվենք:

ՌԻՉԱՐԴ

Այո. ձեռք-ձեռքից, սիրա-սրտից զատվենք:

ՔԱԳՈՒՂԻ

Մի՛ անջատե՛ք մեզ. քազավորի հետ ինձ էլ ախորեք:

ՆՈՐԹԵՄԲԵՐՎԵՆԴ

Գա սեր կլինե՞ր, պետական ֆիշ խելիք:

ՔԱԳՈՒՂԻ

Թողե՛ք ուրեմն միասին երթանք:

ՌԻՉԱՐԴ

Որպեսզի մեկտեղ մեր ցավը ողբանք:
Մռաիկ լինելը կսկիծ է ահեղ,
Երբ հնար չկա լինել միատեղ.
Ավելի լավ է մորմոխե՛լ հեռվից,
Գու Տրանսիայում ողբա ինձ համար, ես ֆեզ՝ ալյատեղից:
Գու հառաչանքով շափիր ֆո նամփան, ես՝ հեկեկանքով:

ՔԱԳՈՒՂԻ

Նամփաս երկար է, ուրեմն լի է Լեկար արցունքով:

ՌԻՉԱՐԴ

Իմ նամփան կարն է, ամեն մի ֆալս ողբ է կրկնակի,
Կուրծֆս ֆիշ մնա վշտերից պայքի:

Բայց եկ մեր ողբի պատկն ավարտենք,
Որպեսզի Երկար այդպես շտանջվենք:
Էսկ մի համբույրով եկ բաժանվենք լուռ,
Իմը տալիս եմ, քո սիրտը ինձ տուր:

(Համբուրվում են)

ՔԱՅՈՒՆ

Ո՛չ, իմը ետ տուր, լավ բաժանում չէր,
Չեմ ուզում քոնր կրծքիս մեջ խեղդել:

(Նորից են համբուրվում)

Իմը ետ վերցրի, գնա անվարան,
Ես հառաչանքով կսպասեմ նրան:

ՌԻՉԱՐԴ

Վշտի հետ թեթև սիրաբանելով՝ ուշացանք, անգին,
Կրկին հրաժեշտ: Մնացյալ խոսքը թողնում ենք վշտին:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Յորքի դքսի պալատը:

Մտնում են Յորքը և իր դհուստին:

ԴԲՍՈՒՆԻ

Դուք հեկեկացիք և կիսատ մնաց,
Խոստացաք, սակայն, որ մնացյալը հետո կպատմեք,
Ավարտե՛ք, տեր իմ,
Մեր կոնդոն եկող երկու զարմիկի մասին էր խոսքը:

ՅՈՐԷ

Որտե՛ղ կանգ առա:

ԴԲՍՈՒՆԻ

Այն տխուր կետին, որտեղ տների
Պատուհաններից բիրտ, չար անոթերը Ռիչարդի գլխին
Շարտում էին հող, մոխիր և աղբ:

ՅՈՐՔ

Ինչպես ասացի, երևելի դու՛ս Բոլիներոկը
 շեճած էր մի տափ, կրակոտ նժույգ,
 Որ կարծես իր սեգ հեծյալով հպարտ,
 Քայլում էր դանդաղ իր շֆեղաշուփ ընթացքը պահած:
 Իսկ ժողովուրդը աղաղակում էր. «Փա՛ն՛ քեզ, Բոլիներոկ»:
 Թվում էր՝ բոլոր պատուհանները լեզու էին անել.
 Անել թե ջահել ազահ նայված՛նով
 Լուսամուսներին իրենց տենչավառ աչքերը սրած՝
 Նրան էին դիտում. նույնիսկ պատերը,
 Զուգված կախարդիչ ուրմագորգերով,
 Կարծես միաձայն բղավում էին. «Աստվա՛ծ պահապան»,
 «Բարի՛ գալուստ մեր Բոլիներոկին».
 Իսկ նա զլխարաց, մի կողմից դեպի մյուսը դարձած,
 Խրոխտ նժույգի պարանոցից էլ վար կռանալով՝
 Պատասխանում էր. «Շնորհակա՛լ եմ, հայրենակիցներ»
 Եվ իտե՛նարհվելով՝ ողջ նանապարհը այդպես ընթացավ:

ԳԲՍՈՒՂԻ

Ավա՛ղ, խեղճ Ռիչարդ.
 Իսկ այդ միջոցին ի՛նչ էր անում նա:

ՅՈՐՔ

Ինչպես թատրոնում սիրված դերասանը
 Խաղն ավարտելով թողնում է բեմը,
 Եվ հանդիսականի աչքերն անտարբեր
 Թեֆվում են դեպի հաջորդի մուտքը,
 Մտածելով, որ այդ շունդալից ծափերից հետո,
 Չարժի այլևս դիտել ուրիշի տաղտկալի իսաղը,
 Ճիշտ այնպես եղավ և Ռիչարդի հետ,
 Բայց նվաստությամբ առավել շեշտված:
 Եվ շեղա՛վ մեկը, որ բացականչե՛ր «Կեցցե՛՛ Ռիչարդը»
 Եվ շեղավ մեկը. որ բարի գալուստ մաղթե՛ր ցնծությամբ.
 Նույնիսկ շատերը ցեխ շարտեցին Ռիչարդի գլխին,
 Որը եւ ազնիվ տխրությամբ սրբեց,
 Օծյալ գլուխը թեթև ցնցելով:
 Նրա դեմքի վրա մարտնչում էին արցունք և ժպիտ՝
 Իր դրոշմները անավոր վշտի և համբերության:
 Եթե երկինքը ինչ-որ մի վերին դիտավորությամբ

Մարդկանց սրտերը չի դարձրել պողպատ,
Նրանք ակամա պիտի փափկեին և բռուրօյունը
Տաք արցունքներով պիտի հեկեկար՝ գրալով նրան:
Բայց այստեղ խառն է մատը երկնի,
Որի վեհ կամփին մենք պարտավոր ենք խոնարհ եկրարկվել:
Մենք այժմ երգվյալ հպատակներ ենք Բոլիներոկիսն,
Նա իմ արեան է. էս ծառա նրա պատվին ու քաղին:

ԴՔՍՈՒՇԻ

Այստեղ է գալիս, որդիս՝ Օմեոլը:

ՅՈՐՔ

Այդպես առաջ էր,
52 Դու պետք է այժմ Ռուսլենդ կոչես նրան,
Քանզի Ռիչարդին բարեկամ լինելով՝
Զրկվել է նախկին իր դստօրյունից:
Ես պառլամենտում երաշխիք տվի իմ պատվի վրա,
Որ նա հաստատուն և հավատարիմ ծառա կլինի
Նոր քաղաքին:

Մտնում է Օմեոլը:

ԴՔՍՈՒՇԻ

Բարով եկար, որդիս: Որո՞նք են այժմ
Այս նորեկ զարնան կանաչ հղանցքի մանուշակները:

ՕՄԵՈՒ

Զգիտեմ, աիկին, հետաքրքիր էլ չէ: Երկինքը վկա,
Ոչ էլ կուզեի գեթ մեկը լինել այդ ծաղիկներից:

ՅՈՐՔ

Այս նոր զարնան մեջ դու բեզ պահիր բաջ,
Թե չէ կհնձվես ծաղկելուց առաջ:
Ի՛նչ լուր Օֆսֆորդից: Նիզակախաղեր և հանդեսներ կա՞ն:

ՕՄԵՈՒ

Իբրև թե, տեր իմ:

ՅՈՐՔ

Դու գնալո՞ւ ես:

ՕՄԵՈՒ

Եթե երկինքը արգելի չդառնա՝ նպատակ ունեմ:

ՅՈՐՔ

Այդ ինչ կնիք է կախված քո լանջից:
Հր, գունատվեցիր: Տեսնեմ՝ ի՞նչ է գրված:

ՕՄԵՌԱ

Ոչինչ բան է, տեր իմ:

ՅՈՐՔ

Ինչո՞ւ ես թափեցում, եթե ոչինչ բան է:
Թույլ տուր գիրք տեսնեմ:

ՕՄԵՌԱ

Խնդրում եմ, տեր իմ, արտոնեմ գնամ,
Թղթի իմաստը շատ է աննշան,
Որոշ պատճառով չեմ ուզում, սակայն, որ դուք այն տեսնեք:

ՅՈՐՔ

Իսկ ես ուզում եմ որոշ պատճառով այդ թուղթը կարդալ:
Ես վախենում եմ, վախենում եմ շատ...

ԴՔՍՈՒՆԻ

Վախիդ պատճառ՞որ:

Այդ գիրք, անշուշտ, մի պարտաբույր է, որ շեղ հագնված
Դնա մասնակցի այդ հանդեսներին:

ՅՈՐՔ

Խե՛նթ ես, ա՛յ կնիկ, եթե ուրիշից դրամ է վերցրել,
Երուհակն անկասկած պետք է գտնվեր պարտատիրոջ մոտ,
Մինչդեռ սրա մոտ է: Ցո՛ւյց տուր այդ թուղթը:

ՕՄԵՌԱ

Ներե՛ք ինձ, հայր իմ, չեմ կարող ցույց տալ:

ՅՈՐՔ

Տո՛ւր ինձ, ասում եմ, ես պիտի կարդամ:

(Նրա ծոցից կորզում է գրությունը և կարդում):

Իսկանանություն՞ն, գարշ դավադրություն՞ն:

Ստո՛ր շարագործ, նենգավո՛ր մատնիչ:

ԴՔՍՈՒՆԻ

Բայց ի՞նչ պատահեց:

ՅՈՐՔ

Է՛յ, ս՛վ կա ներսում, այստեղ շտապեմ:

Մտնում է մի սպասավոր:

Շո՛ւտ քամքիւր իմ ձիւն:

Օ՛, տեր իմ աստված, ի՛նչ անարգ դավ է:

ԴՔՍՈՒՀԻ

Ի՛նչ բան է, տեր իմ:

ՅՈՐՔ

Ոտնամանե՛րս: Շո՛ւտ քամքիւր իմ ձիւն:

Սպասավորը գնում է:

Երդվում եմ պատվիս և կյանքիս վրա, նաև իմ ուխտով՝
ես կմերկացնեմ այդ սրիկային:

ԴՔՍՈՒՀԻ

Բայց ի՛նչ է եղել:

ՅՈՐՔ

Լո՛ի՛ր, հիմար կիւն:

ԴՔՍՈՒՀԻ

Իսկ ես չեմ լռի. պատասխանի՛ր, Օմեոյ,
Ի՛նչ է պատահել:

ՕՄԵՌ

Հանդարտվիր, մայր իմ, դրա պատասխանը
իմ կյանքի վերջն է:

ԴՔՍՈՒՀԻ

Ինչպե՛ս, քո կյանքի՞:

ՅՈՐՔ

Սո՛ղիկներս բե՛ր. ես պետք է գնամ թագավորի մոտ:

Մտնում է սպասավորը՝ բերելով սիրոջ ոտնամանները:

ԴՔՍՈՒՀԻ

Վանի՛ր նրան, Օմեոյ: Օ՛, իմ խեղճ մանչուկ,

Ինչպես սոսկալի շփոթված ես դու:

Կորի՛ր, սրիկա՛, և այսուհետև աչքիս շերևաս:

ՅՈՐՔ

Քեզ բան ասացի. կոչիկներս տո՛ւր:

ԳՔՍՈՒՂԻ

Կա՛ց, Յոր՛ք, միտե՛ղ ի՛նչ է:
Մի՛րե ուզում ես դու քո սեփական զավակին մատնել,
Մեր միևնույնն է, ուրիշը չունենք:
Մի՛րե կարծում ես, քե՛ս այս տարիքում
ես կարող եմ քեզ նոր որդի ծնել.
Ինչո՞ւ ես ուզում պատավիճ խլել իր անգին որդուն:
Մի կնոջ համար երջանկություն է մայր կոչվել կյանքում,
Գրանի՛ց ես ուզում դու ինձ կողոպտել:
Ռե՛՛ նման չէ քեզ, կամ զավակդ չէ:

ՅՈՐՔ

Գծվեցի՞ր, ինչ է,
Նածկել ես ուզում դու այս նենգ դավը:
Գավաղիբներից տասներկու հոգի գաղտնի երգվել են
Օխֆորդի մեջ սպանել արհային:
Սա նրանց ուխտն է, իրենց ձեռքերի դրոշմը վրան:

ԳՔՍՈՒՂԻ

Կպանենք այստեղ: Նա ինչ գործ ունի այդ բաների հետ:

ՅՈՐՔ

Հեռո՛ւ, ցնդած կին, քանապատիկ իմ որդիս լինի,
ես պարտավոր եմ մերկացնել նրան:

ԳՔՍՈՒՂԻ

Նքե՛ ինձ նման ցավեր կրեիր այդ որդու համար.
Դու նրա հանդեպ ավելի խղճով պիտի վարվեիր.
Այժմ քո միտքը ես հասկանում եմ. դու կասկածում ես,
Որ ես պղծել եմ անկողինը քո.
Եվ նա հարազատ քո զավակը չէ, այլ խորք մի ծնունդ.
Օ՛, իմ քաղցրիկ Յոր՛ք, անգին ամուսնյակ, վանի՛ր այդ միտքը,
Նա քո պատկերն է. իսկ և իսկ դու ես:
Ոչ ինձ է նման, ոչ էլ որևէ մեկին իմ առնմից.
Եվ սակայն անշարի սիրում եմ նրան:

Հեռու իմ նամակից, անկարգ, անսանձ կին:

Գնում է:

ԳՔՍՈՒՇԻ

Օմնուլ, հեծի՛ր ձիդ և արագ սուրա թագավորի մոտ:
 Նախապես ներում հայցիր արեալից,
 Քանի դեռ հայրդ չի ամբաստանել քեզ նրա առաջ:
 Շատ շեմ ուշանա: Թեպետ ծեր եմ ես,
 Հագիվ թե Յորքը դիմանա սակայն իմ ձիու վազիին:
 Եվ իմ ծնկները շեմ քաղի գետնից,
 Մինչև շների թագավորը քեզ: Շտապի՛ր, որդիս:

Գնում է:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Ղ

Վիճոր: Մի սրահ դղակում:

Մտնում են Քոլինբրոկը, Պերսին և այլ լորդեր:

ԲՈՒԽՆԲԲՈԿ

- 1 Ձեզնից ով կասի՝ թե որտեղ է իմ անառակ որդին,
 Երեք ամիս է՝ չեմ տեսել նրան:
 Եթե մեր գլխին աստծո պատիժ կա՝ հենց այդ տղան է,
 Որոնե՛ք, գուցե հաջողվի գտնել.
 Լոնդոնում փնտրեք, պանդոկների մեջ,
 Ասում են, թե նա գիշեր ու ցերեկ այնտեղ է լինում,
 Իր ցոփ, անառակ ընկերների հետ,
 Որոնք կանգնելով մութ ներանցքներում,
 Բռնում, ծեծում են մեր պահակներին,
 Եվ կողոպտում են մեր անցորդներին,
 Եվ նա՛ այդ անգուսպ հեշտասեր տղան
 Բարձր պատիվ է համարում իրեն գորավիզ լինել
 Այդման սանձարձակ մի խառնամբոխի:

ՊԵՐՍԻ

Երկու օր առաջ ես հանդիպեցի իշխանին, տեր իմ,
 Եվ Օֆսթորդյան այդ հանդեսների մասին պատմեցի:

ԲՈՒԻՆՔԲՈԿ

Իսկ դասարկապորտը ի՞նչ սլատասխանեց:

ՊԵՐՍԻ

Պատասխանն այս էր. — որ նա կմտնի մի պոռոնկատուն,
Եվ վերջին բոզից մի ձեռնոց կորզած՝
Նրանով կերթա այդ մրցությանը,
Ուզածդ հեծյալին գլորելով քամբից:

ԲՈՒԻՆՔԲՈԿ

Որքան անառակ, այնքան հանդուգն է: Այդ երկուսի մեջ
Տեսնում եմ սակայն ես որոշ կայծեր սփոփիչ հույսի,
Որ նա կտրող է մեծ փառքի հասնել,
Երբ շատ ավելի շափահաս դառնա:
Քայց ո՞վ է գալիս:

Մտնում է Օմեոլը հապշապ:

ՕՄԵՈՒ

Ուտե՛ղ է արքան:

ԲՈՒԻՆՔԲՈԿ

Մեր զարմիկը խիստ
Վայրագ տեսք ունի, ի՞նչ է պատահել:

ՕՄԵՈՒ

Ասաված, դու փրկիր մեր թագավորին: Կարո՞ղ եմ հայցել
Ձեզ հետ առանձին մի տեսակցություն:

ԲՈՒԻՆՔԲՈԿ

Մեզ մենակ թողե՛ք:

Պերսին և լորդերը գնում են:

Ի՞նչ է եղել, զարմիկ:

ՕՄԵՈՒ

(Մտնելի իջնելով) Թող իմ ծնկները խրվեն հողի մեջ,
Լեզուս բերանիս ձեղունին կաշի,
Եթե վեր կենամ կամ հնչեմ մի խոսք,
Մինչև որ ներում չստանամ ձեզնից:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

Իսկ այդ հանցանքը մտի՜ մեջ է դեռ, թե իրագործված:
Եթե առաջինն է՝ ինչքան էլ լինի անողորմ ու սև,
Ես կներեմ քեզ, որ ընկեր դառնաս ինձ այստե՛տև:

ՕՄԵՌԻ

Թույլ տվե՛ք, ուրեմն, ես դուր փակեմ,
Որ մարդ չմտնի, մինչև ավարտեմ:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

Փակի՛ր, ես դեմ չեմ:

ՅՈՐՔ

(*Խորքից*) Զգո՛ւյ՛ջ կաց, տեր իմ, արքուն հսկիր քեզ,
Քո դեմ կանգնածը մի դավանան է:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

(*Սուրբ մերկացնելով*) Սրիկա՛, ես քեզ դիակ կդարձնեմ:

ՕՄԵՌԻ

Ե՛տ պահիր ձեռքը քո ռխերմական,
Դու պատճառ չունես երկյուղի համար:

ՅՈՐՔ

(*Խորքից*) Բա՛ց արա դուր, արքա անզգույ՛ջ ե դյուրահավատ,
Ուզում ես որ քեզ սիրելուց գոռա՛մ, վիրավորե՛մ քեզ:
Բա՛ց արա դուր, թե չէ կկոտորեմ:

Մանում է Յորքը:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

Ի՞նչ կա, հորեղբայր, ի՞նչ է պատահել,
Մի քիչ շունչ քաշիր, ապա հայտնի՛ր մեզ,
Թե որտեղից է վտանգ սպառնում,
Որ կարողանանք զինվել դրա դեմ:

ՅՈՐՔ

Կարդա՛ այս գիրը.— ինքս չեմ կարող, շունչս կտրվեց,—
Եվ պարզ կդառնա այդ վտանգը մե՛ծ:

ՕՄԵՌԻ

Կարդալիս, սակայն, հիշիր խոստումդ.
Ես զզջացել եմ: Այնպես համարիր,

Որ իմ անունը գրված չէ այնտեղ.
Սիրուս ձեռքիս հետ անմիաբան էր:

ՅՈՐՔ

Քաղահայտ սուտ է. քո ձեռքից առաջ քո սիրուն է դավել.
Այդ գիրք, արքա, այս դավանանքի ձեռքից կորզեցի.
Եվ նա զղջում է ոչ թե ձեր հանդէպ ունեցած սիրուց.
Այլ լոկ սարսափից:
Նրան գրալով՝ դու կխնայես մի թունուս օձի,
Որ քեզ կսպանի սրտից խայթելով:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

Օ՛, դավադրություն, հանդուգն, անավոր և անազորույն.
Օ՛, ուղղամիտ հայր նենգամիտ որդու,
Դու հստակ ու ջիւնջ արծաթյա ակունք,
Որից անվակն այս սկիզբ առնելով և ընթացքի մեջ
Ճանապարհների ցեխին խառնվելով՝ ապականվել է:
Հորդահոս բարիք վերածվեց շարի այս զավակի մեջ,
Այդ հորդ բարին էլ կփոխհատուցի
Մահաոխր թիծն այս քո ժմերս որդու:

ՅՈՐՔ

Ազնվությունը կավա՞տ շարիքին, լավա՞ծ բան է այդ.
Եվ իմ պատիվը որդին վնարի իր ուխտի դիմաց,
Նման անառակ այն զավակներին,
Որոնք հայրերից գողացած ոսկով պարտքերն են փակում:
Անպատվությունն ու պատիվը հավետ վանում են իրար.
Անամոթ որդին՝ ման է հոր համար:
Սրան խնայելով՝ դու ինձ կսպանես:
Երբ դավանանք ազատվում է զարկից,
Ազնիվը պետք է գերեզմանում պառկի:

ԴՔՍՈՒՂԻ

(*Խորքից*) Որտե՞ղ է արքան: Օ՛, ի սեր ասածո,
Թույլ տվե՛ք ներս գամ:

ՔՈՒԽՆՔՐՈԿ

Ո՞վ է աղերսում սուր ձայնով այդպես:

ԴՔՍՈՒՀԻ

(*Խորքից*) Մի կին, մե՛ծ արֆա, մորաֆույրդ՝ Լս:
Քա՛ց արեֆ դուռը, Օ՛, գթացե՛՛ք ինձ,
Մի աղֆատ կին է եկել ձեր շեմքը,
Ուզում է տեսնել արֆայի դեմքը:

ՔՈՒԽՔՐՈԿ

Մեր ողբերգության պատկերը փոխվեց.
«Աղֆատ ու արֆա» տեսիլն սկսվեց:
Ներս թող քո մարը, զարմիկ սոսկալի, թող զա այցելուն,
Գիտեմ, գալիս է քո մեղքի համար ներում հայցելու:

ՅՈՐՔ

Ով էլ հայցի քեզ, երբե՛ք մի ներիւր,
Այդ ներողութամբ դու ձեռունդ կտաս նոր հանցանքների:
Փռած անդամը համարձակ հատիր, որ առողջն անի,
Մեկի վարակը մահ է ամբողջին:

Մտնում է դետմին:

ԴՔՍՈՒՀԻ

Օ՛, իմ քաղավոր, դու մի հավատա այս ֆարսիրտ մարդուն,
Ով ընդունակ չէ սիրել իր որդուն,
Երբեք չի կարող ուրիշին սիրել:

ՅՈՐՔ

Գու այստեղ ի՛նչ ես շինում, խելագար,
Քո այդ շուրացած պտուկները ձեր
Գարձյալ պատրաստ են դավանան սնել:

ԴՔՍՈՒՀԻ

Համբերի՛ր, անգին (*Ծուռկի իջնելով*) Օ՛, ազնիվ արֆա, եղիր ունկնդիր:

ՔՈՒԽՔՐՈԿ

Վե՛ր կաց, մորաֆույր:

ԴՔՍՈՒՀԻ

Ո՛չ, խոսքս լսիր,
Հավետ ծնկաչոք կշրջեմ այսպես,
Երբեք ուրախ օր էլ չեմ տեսնի ես,
Մինչև ներելով որդուս՝ թուալենդին,
Յերկրանք չբեւս իմ արտում սրտին:

ՕՄԵՌԷԼ

(Մունկի իջնելով) Իմ մոր աղերսին ես կմիացնեմ իմ ծունկը խոնարհ:

ՅՈՐՔ

(Մունկի իջնելով) Ընդդեմ այդ երկսի՝ ընդունի՛ր դու իմ սրունքներն արդ՛ Մի՛ ների՛ր, արքա, վտանգ է կյանքիդ:

ԴՔՍՈՒՉԻ

Նա լո՛ւրջ է փաստում.

Ուշադիր նայի՛ր այս մարդու դեմքին,

Մի հատիկ արցունք չի կաթում աչքից.

Նրա խոսքերը շուրթից են բխում, իսկ մերը՝ սրտից:

Այնպես է խնդրում՝ ապավինելով կարծես մերժումին,

Մինչդեռ մերժումը՝ մահ է հոգեբուխ մեր պաղատանքին:

Նրա ծնկները պատրաստ են թեթև ակնարկով ուղղվել,

Իսկ մեր ծնկները հանուն աղերսի՝ գետնում մխրեցվել:

Նրա խնդրանքը լի է կեղծավոր երեսպաշտությամբ,

Մերը՝ նշմարիտ հավատով և սուրբ մի անկեղծությամբ:

Անսա՛, տե՛ր արքա, մեր պաղատանքին հորդաբուխ ու խոր

եվ դեան վայել ներում շնորհի՛ր մի արժանավոր:

ՔՈՒՆՔՐՈԿ

Վե՛ր կաց, մորափույր:

ԴՔՍՈՒՉԻ

Մի՛ ասա վեր կաց:

Նախ հարկավոր է ասել «ներում եմ» և ապա, «վեր կաց»:

Թե՛ քո դայակը ես կլինեի,

Քո լեզուն երբեք չէր գործի սխալ,

Միշտ կիմանայի «Pardon»-ին պատշաճ առաջնություն տալ:

Ականջիս համար դրանից ուրիշ անուշ բառ չկա:

Ասա «ներում եմ», ողորմածությամբ գրա մեզ, արքա՛:

Այդ բառը կարճ է, բայց ոչ այնքան կարճ, որքան ըզնալի,

Կարծես ստեղծված շուրթերի համար թագավորների:

ՅՈՐՔ

3. Ֆրանսերենով այդ բառը ասե՛ք՝ Pardonez moi:

ԴՔՍՈՒՉԻ

Ուզում ես բառը բառով կործանել,

Օ՛, դու խստասիրտ ամուսին դժխեմ,

Որ գրգռում ես բառերն իրար դեմ:
Դու «ներում» բառը մեր լեզվով հենչիր,
Յաւորի լեզուն մեզ հարազատ չի:
Հայացնո՞ւ փափկեց, բող քո շուրթերն էլ դառնան սիրալիր,
Կամ լսելիքն քո գորովալիր սրտում հաստատիր,
Որ մեր աղերսի գորավոր թինդը այնտեղ լսելով
«Ես է՛նզ ներում եմ» կրկնես գրալով:

ՅՈՒՆՅԵՐՈՎ

Վե՛ր կաց, ասացի:

ԴՔՍՈՒՇԻ

Կանգնելու համար չեմ աղերսում ես,
Ոտքի չեմ կանգնի, մինչև չներես:

ՅՈՒՆՅԵՐՈՎ

Ներում եմ նրան և բող աստվածն էլ ինձ ների, տիկին,

ԴՔՍՈՒՇԻ

Օ՛, ծունկ չո՛ւսնու երջանկության գին:
Բայց սարսափում եմ: Դու երկրորդ անգամ այդ խոսքը հենչիր.
Որ ես հավատամ:

ՅՈՒՆՅԵՐՈՎ

Կրկնում եմ սրտանց.

Ներում եմ որդուդ:

ԴՔՍՈՒՇԻ

Օ՛, երկրի աստված:

ՅՈՒՆՅԵՐՈՎ

Իսկ հավատարիմ իմ աներձագին և վանահորը
Փրկություն չկա: Չկա փրկություն և նրանց խմբին:
Մահը անհապաղ պետք է արշավի նրանց ետևից:
Հորեղբայր, օգնի՛ր, որ դեպի Օֆսիորդ
Եվ ամենուրեք գորհեր ուղարկվեն,
Որոնելու այդ դավանանքներին:
Ես նրանց կարբեմ երկրի երեսից,
Դեթ իմանամ, թե որտեղ են թախնված:
Բարի նախապահ, ազնիվ հորեղբայր: Քեզ նույնպես, զարմիկ.

Մայրդ քեզ փրկեց իր աղերսանքով,
Արդ ծառայիր մեզ քո ազնիվ հոգով:

ԳՔՍՈՒՅԻ

Ե՛կ գնանք, որդիս: Ցանկամ քեզ նոր կյանք սուրբ աստծո կամքով:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Չ Ո Ր Ր Ո Ր Դ

Նույն վայրը:

Մանում են Պիտը, Էփատեր և մի լագասավոր:

ԷՔՍՏՈՆ

Գու շխեցի՞ր, արքան ինչ ասաց.
«Մի՞թե մի ազնիվ բարեկամ չունեմ,
Որ ինձ ազատի այս տանջող վախից»:

ՈՊԱՍԱՎՈՐ

Ճիշտ այդպես ասաց:

ԷՔՍՏՈՆ

«Մի՞թե մի ազնիվ բարեկամ չունեմ»,
Նա երկու անգամ այդ խոսքը կրկնեց,
Եվ երկու անգամ մի հատուկ շեշտով: Ինքն լսեցիր:

ՍՊԱՍԱՎՈՐ

Այո, լսեցի:

ԷՔՍՏՈՆ

Եվ այդ խոսքի հետ նա մտասուեռ նայեց երեսիս,
Կարծես ուզում էր դրանով ասել «Դո՞ւ չես այն մարդը,
Որ այդ սարսափը սլառուստ է կորզել իմ սրտի միջից».
Նկատի ունեւ այն բուզավորին, որ Պոմֆրետումն է:
Շաապի՛ր գնանք: Ինձ բարեկամ է սիրելի արքան,
Եվ ես ոսոխից կազատեմ նրան:

Գնում են:

Պոմֆրեստ ամրոցը:

Մտնում է Ռիչարդ բազավորը:

ՌԻՉԱՐԴ

Բանաում ապրելով խոկում եմ հանախ, ըն ինչ հնարով
 Բանար բաղդատեմ տիեզերքի հետ,
 Չէ՞ որ բանտի մեջ մեն-մենակ եմ ես,
 Իսկ տիեզերքում կա անքիվ էակ:
 Ինչպես բաղդատել. հնարավոր չէ: Կփորձեմ սակայն:
 Եկ պատկերացնեմ, թե հոգիս հայրն է,
 Իսկ իմ ուղեղը տիկիհն է հագուս, և այդ երկուսը
 Մի նոր սերունդ են ծնում մտքերի,
 Իսկ այդ մտքերն էլ դարձյալ նույն ձևով բազմապատկվում են,
 10 Եվ այս աննշան աշխարհը լցնում բնակիչներով:
 Իրենց բնույթով նրանք նման են այն էակներին,
 Որոնք ապրում են դրսի աշխարհում,
 Չէ՞ որ մտքերը նույնպես ըմբոստ են, հավիտյան դժգոհ:
 Եվ այդ մտքերից լավագույնները, ինչպես, օրինակ,
 Մտածումները գերասովածային,
 Միշտ միախառն են կասկածների հետ,
 Եվ հանախ մեկը հերքում է մյուսին:
 «Եկեք թզուկներ, ձեր մուտքն ազատ է».
 Բայց սրա կողքին, իսկույն դնում է ժխտական մի խոսք.
 «Ուղտի անցնելը ասեղի ծակով հեշտ է ավելի,
 Քան դուր կարող եմ մուտք գործել ինձ մուտ»:
 Պատվասիրության ծառայող միտքը
 Պատրաստ է դիմել անհավատալի մեծագործության:
 Խիզախ մտքերը հուշում են հրաշք,
 Որ իմ այս տկար փուլ էղունգները
 Կարող են մի նեղ բանալ կարծրակուտ
 Այս ժանտ ամրոցի կողերի միջով
 Փշրելով անհարբ պատերն իմ բանտի:
 Այդ բանը սակայն հնարավոր չէ, ուստի մտքերն այդ
 Մեռնում են իրենց հպարտ ճախրանքում:
 Իսկ խոնարհության ծառայող միտքը

Շողոփորքում է լինել հնազանդ, միշտ փարոզելով,
 Որ ստեղծական այս բախտի համար
 ես ոչ վերջինն եմ, ոչ առաջինը.
 Նման այն հիմար մուրացիկներին,
 Որ կոճղերի մեջ ոտները դրած
 Իրենց ամոթը պատասխարում են այս դատադուրյամբ,
 «Ե՛կ՝ շատերն են այդ կոճղերում նստել,
 Եվ շատ ուրիշներ դեռ պիտի նստեն,
 Մի տեսակ իրենց թերև զգալով,
 Որ դժբախտության իրենց բեռները
 Դնում են այդ խեղճ մարդկանց ուսերին,
 Ուրմն տանջվել են իրենցից առաջ:
 Այսպես մի անձով ես շատ դերեր եմ խաղում բանտի մեջ,
 Բոլորն էլ իրենց վիճակից դժգոհ: Մերք բազավոր եմ,
 Բայց ինձ դավում են և նախանձում եմ ես մուրացիկին:
 Դատնում եմ աղփատ: Սակայն սոսկալի կարոտությունը
 Հորդորում է ինձ, որ արեա լինելն ավելի լավ է,
 Եվ ես վերստին թագադրվում եմ: Հանկարծ հիշում եմ,
 Որ Քոլինբերոկը ինձ քաջից գրկեց
 Եվ ես դարձել եմ մի ոչնչություն: Բայց ինչ էլ դառնամ,
 Ոչ ես, և ոչ էլ որևէ մեկը, եթե նա մարդ է,
 Երբեք չի կարող կյանքից գոհ լինել և ոչ մի բանով.
 Քանի տակավին հանգիստ չի առել ոչինչ դառնալով:

Նվագ:

Ի՛նչ է սա, հվա՛գ: Հա՛, հա՛, խե՛ղճ եմ դուք, իսկ ո՛ւր է շավիր.
 Ամենափաղցր երաժշտությունը դժվարահասն է,
 Երբ շափն է խախտված:
 Այդպես է նաև երաժշտությունը մարդկային կյանքի:
 Իմ ականջն այստեղ շատ նուրբ է դարձել,
 Իսկույն որսում եմ. բե՛ որ գործիքն է անդաշնակ հնչում,
 Որ լարն է խարդալս,
 Իսկ իմ տերության համանվագի հնչյունները կեղծ
 Անկարող եղա ես ժամանակին ուշադիր որսալ:
 Ես շատ ժամանակ վառնեցի անշահ,
 Եվ ժամանակն է ինձ վառնում հիմա:
 Իսկ դարձել է ինձ պատի ժամացույց.
 Միտքս բոսքն է, իսկ ողբս՝ աչքիս լուսատախտակին

Մի բլից մյուս լսվող թիկ-բակր:
 Այդ ժամացույցի սլաֆն իմ մատն է. որ շարժվում է լուռ,
 Մաքրելով աշֆիս արտասուֆները:
 Իմ սիրտը զանգն է: Ժամի ավարտը
 Ես իմանում եմ այն խոր հոգոցով,
 Որի հարվածից զանգակատունը կարծես փլչում է:
 Այսպես, ողբալով, արտասուֆներով և հոգոցներով
 Ես ուռչում եմ բոպեն, թիկ-բակր և սահող ժամր:
 Իմ ժամանակը փութով նետում է
 Ֆոլիներոկի փառֆին բնդասաջ,
 Իսկ ես վերածված մի խեղկատակի և պատին սեղմված
 Քաշում եմ զանգը այդ ժամացույցի:
 Օ՛, այդ նվագը ինձ խենթացնում է. բա՛վ է, հոգնեցի,
 Թեպետ խենթերին նա բժշկում է,
 Քայց ևս ֆիչ մնա իմ խելքը թոցնեմ:
 Եվ այնուհանդերձ, թող օրհնյալ լինի այդ նվագածուն,
 Չէ՛ որ դա սիրո մի կարգախոս է, իսկ սեր իմ հանդես
 Դա արտասովոր մի աղամանդ է այս ժանս աշխարհում:

Մտնում է ախոռապետը:

ԱՆՈՌԱՊԵՏ

Ողջո՛ւյն արքային:

ՌԻՉԱՐԴ

Շնորհակալ եմ, պատվարժան սեպուհ,
 Երկուսով հագիվ տաս գրոշ արժենֆ և նույնիսկ սլակաս:
 Ո՛վ ես, և ինչպե՛ս դու այստեղ եկար,
 Ուր մուտֆ չի գործում ոչ մի մարդ բնավ,
 Քացի այն դժնի մենավոր գամֆոֆից,
 Ուր կերակուր է բերում իմ դժբախտ կյանքը պահելու:

ԱՆՈՌԱՊԵՏ

Ախոռապետ էի ևս ֆեզ մոտ, արքա,
 Երբ դու մեր երկրի քագավորն էիր: Ես գնում ևմ Յոբֆ,
 Մեծ դժվարությամբ իրավունֆ վերցրի,
 Ուր իմ երբեմնի արքունի տիրոջ երեսը տեսնեմ:
 Օ՛, սիրաս ինչպես նմվեց ցավից,
 Երբուր Լանդոնի ֆողոցների մեջ
 Այդ քագաղբման հանդեսին տեսա Ֆոլիներոկին

Խրոխտ անցնելիս քո ճարտուկ, դեղձան նժույզք հեծած,
Գու քո ճարքարին հիշո՞ւմ ես, աբխա,
Այն ձին, որին դու այնպե՛ս կաթոզին գուրգուրում էիր,
Այն ձին, որին ես այնքա՛ն հագասար խնամել էի:

ՌԻՉԱՐԳ

Եվ նա հեծե՛լ էր իմ ճարքարի ձին: Ասա՛, բարեկամ,
Իսկ ձին ինչպե՛ս էր քայլում նրա տակ:

ԱԵՈՌԱՊԵՏ

Այնպիսի գոռոզ մի հպարտությամբ,
Կարծես գետինը անարժան էր իր ոտքին դիպչելու:

ՌԻՉԱՐԳ

Այդքան հպարտ էր, որ Բոլինբրո՞կն էր իր մեջքին նստած:
Գրաստ անպիտա՛ն: Այս ձեռքից որքան հաց է կերել նա,
Այս ձեռքը նրան սաստիկ շոյելով դարձրել է գոռոզ:
Եվ նա չգայթե՛ց, չսայթափե՛ց վար,—
Ով պարծենկոտ է, չի կարող չքնկնել.— որ վիզը կտուրեր
Իր մեջքի վրա բռնությամբ հեծած ամբարտավանի:
Ների՛ր, նժույզ իմ. քեզ կշտամբելը սրդար չէ բնավ,
Քանզի կոշումդ է խոնարհվել մարդուն.
Այդպես ես ծնված: Իսկ Լս ծնունդով թևակա գրաստ չեմ,
Բայց բեռ եմ կրում ավանակի պես ծանր տնօրինով
Անգուր, անողորմ Բոլինբրոկի մտրակի ներքո:

Մտնում է բանասպանը՝ բեկելով մի աման կերակուր:

ԲԱՆՏԱՊԱՀ

(Ախոռասպետին) Գնա՛, բարեկամ, ժամդ լրացավ:

ՌԻՉԱՐԳ

(Ախոռասպետին) Թե սիրում ես ինձ, շտապ գնա դուրս:

ԱԵՈՌԱՊԵՏ

Ասելիք շատ կար, բայց փակ է լեզուս:

Գնում է:

ԲԱՆՏԱՊԱՀ

Չե՛ք հանի, տեր իմ, ոտակ կերակուր:

ՌԻՉԱՐԴ

Նախ դու նաշակիր, իսկ հետո ինձ տուր,
Ինչպես անում էիր դու սովորաբար:

ԲԱՆՏԱՊԱՀ

Չեմ կարող, տեր իմ: Սբր Պիրս էֆատներ,
Որ հոր է եկել արֆայի մտտից,
Հրամայել է փոխել այդ կարգը:

ՌԻՉԱՐԴ

Գրողը տանի ֆեզ և կանկաստե այդ Հենրիկոսին,
Համբերությունս միգարան դարձրի՛մ, արդեն հոգնեցի:

(Մեծում է բանապահին):

ԲԱՆՏԱՊԱՀ

Էհե՛յ, օգնեցե՛՛մ, շտապ օգնեցե՛՛մ:

Մտնում են Պիրս էֆատներ և սպասավորները՝ զինված:

ՌԻՉԱՐԴ

Օհո՛, այ քե ի՛նչ. մեռնել ենքարկված այս բիրտ գրոնի՛ն:
Անարգ շարագործ, մահո ընդունիր սեփական գեննով:

(Ելելով սպասավորներից մեկի գեներ և սպանելով նրան).

Գո՛ւ էլ գրավիր տեղդ դժոխսում:

(Սպանում է երկրորդ սպասավորին):

(էֆատներ հարվածելով ցած է տապալում Ռիչարդ բազավորին):

Այն ձեռքը, որ ինձ այդպես հարվածեց անողորմաբար,
Կայրվի դժոխսի անշեջ կրակում: Քո ձեռքը, էֆատն.
Արֆայի արյամբ նրա երկիրը ծածկեց ամոթով:
Ճախրի՛ր, իմ հոգի, դեպի քո բարձրյալ գահը լուսավոր,
Իսկ դու մեռնելով սուզվիր մայր հողում, մարմին մեղսավոր:

Մեռնում է:

ԷՔՍՏՈՆ

Ազնվածին էր նա իր արիությանը և իր արյունով.
Ես այդ երկուսն էլ ցրիվ տվեցի: Իմ այդ արարեով
Միքե՛ ես իրավ բարիք գործեցի,
Քանզի այն դեք, որ իմ հարվածին տվեց ուղղություն.

Այդ ոճի համար այժմ ինձ տեղ է հուշում դժոխում:
Մեռած արեային նվեր կտանեմ ևս թագավորին,
Իսկ մյուսներին հենց այս մտերեմում պահ տվեմ հողին:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

Վիճորի դղակը:

Շեփորներ: Մտնում են Բոլինբրակը, Յորբը,
յորդեր և սպասավորներ:

ԲՈՒՆԲՐՈԿ

Բարի հորեղբայր, ամենավերջին նորությունն այս է.
Ասյատամբները Գլոստեր զավառում
Հրկիզել են մեր Սայստեր փաղափր,
Իսկ մերոնք նրանց ջարդել են թե ոչ՝ այդ մեզ հայտնի չէ:

Մտնում է նորթերեղենդը:

Բարի եկամ, միլորդ, և ի՞նչ լուրերով:

ՆՈՐԹԵՐԵՐԵՂԵՆԴ

Առաջին լուրով քո տերությանը
Երջանկություն և մ փափագում անծիր.
Հաջորդ լուրն այն է, որ դեպի Լոնդոն ևս ուղարկեցի
Ջորս արևոտ կառափ: Չկան Ցլանար,
Կոմս Սոլսբերին, Օֆսֆորդն ու Քենտր:
Նրանց արաբն ու հանցանքը, արհա,
Հանգամանորեն շարադրված է այս թղթի վրա:

ԲՈՒՆԲՐՈԿ

Մենք, ազնիվ Պերսի, ջանքերիդ համար շնորհակալ ենք,
Եվ արժանիք գերարժանիքով պիտի հատուցենք:

Մտնում է Ֆիցվուտերը:

ՖԻՑՎՈՏԵՐ

Տե՛ր իմ, Օֆսֆորդից Լոնդոն հղեցի ևս երկու գլուխ,
Մեկը կառափն էր սբր Բրոֆասի, մյուսը՝ Միլու,

Երես վտանգավոր Երկու դավադիր,
Որ Յոսփարդի մեջ պատրաստվել էին ձեզ սպանելու:

ԲՈՒՆՆԵՐՈՎ

Քո այդ եռանդը, ազնիվ Ֆիցվոտեր, ես չեմ մոռանա,
Այդ վարձֆիդ դիմաց դու արժանավոր պարզև կատանաս:

Մտնում է Պերսին՝ Կառլայի եպիսկոպոսի հետ:

ՊԵՐՍԻ

Գավադիրների մեծ պարագլուխ
Վեստմինստերի վանահայրն, արքա,
Եղնի սուր խայրից և սեամաղծից սաստիկ տանջվելով՝
Մարմինը գիջեց մութ գերեզմանին:
Ահա՛ Կառլայր: Այստեղ բերեցի նրան կենդանի,
Որ արքան անձամբ դատաստան անի:

ԲՈՒՆՆԵՐՈՎ

Արդ, լսիր, Կառլայլ, դատաստանը քո,
Ընտրիւր մի սուրբ վայր, մի խուց մեծարգո,
Եվ ապրիր այնտեղ անհաղորդ կյանքին
Եվ աղոթքներով փրկիր քո հոգին:
Ապրի՛ր ու մեռիր առանձնության մեջ,
Հավիտյան լիաժ դավեր, քեզ ու վե՛ն:
ԹԼԱԿԵԱ Եղել Լս դու ինձ նենգ ոտըս,
Սակայն ես քո մեջ պատվի կայծեր եմ տեսել լուսաշող:

Մտնում է Պիրս էֆատներ՝ դագաղով:

ԷՔՍՏՈՆ

Մեծագուր արքա, անա դագաղը:
Այս դագաղի մեջ ամուր փակված է քեզ տանջող վախը.
Ռիչարդ Բորդոն է նրա մեջ պառկած համակ անկենդան,
Քո մեծ բշնամին ամենադաժան:

ԲՈՒՆՆԵՐՈՎ

Դժգոհ եմ, էֆատն: Անողորմ ձեռքով
Դու կատարել ես ո՞նի դժնդակ:
Ես և Անգլիան հավԼս մնացինք այդ արշունի տակ:

ԷՔՍՏՈՆ

Քայց դո՛ւք դրդեցիք ինձ այդ արարքին:

ՔՈՒԵՆՏՐՈՆ


Նա, ով դիմում է թույնի կարիքին,
Ձի նշանակում թե թույն է սիրում.
Այդպես էլ ես եմ: Ես նրա մանր թեպետ տենչացի,
Բայց ռեազորձը ասելի է ինձ, զոհը՝ սիրելի:
Վաստակիդ համար ոչ գովեստ, ոչ վարձք ինձնից պահանջիր,
Թող խղճի խայթը քո սիրտը տանջի.
Կայենի նման գիշերով քառչ էկ երկրի երեսին,
Հավիտյան կարոտ ցերեկվա լույսին:
Լորդեր, վշտերից պայթում է հոգիս,
Իմ անման համար մի՛ թե աշխարհում
Ինձ հարկավոր էր այսֆան շատ արյուն:
Ամենին ինձ հետ ցավն իմ ողբացեք,
Սև հագեք խկույն, արամատես դարձեք,
Ես պետք է ծովով Սուրբ Երկիր մեկնեմ,
Որ այս արյունը իմ ձեռքից մաքրեմ:
Վերցրե՛ք դագաղը և մեզ հետևեք արամագին երթով,
Եվ պատվեք սուգն իմ այս խիստ ապաժամ մահը ողբալով:

Պնում են:

ՀԵՆՐԻ
ՉՈՐՐՈՐԴ

Մանկապատկերներ





Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ե Ր

ՀԵՆՐԻ ՉՈՐՐՈՐԳ ԹԱԳԱՎՈՐԸ

ՀԵՆՐԻ, Վալեսի իշխան } քաղաքորի
ԶՈՆ, Լանկաստերի իշխան } արդիները

ԿՈՄՍ ՎԵՍՏՄՈՌՈՒԵՆԳ

ՎԱԼՏԵՐ ԲԼԱՆՏ

ԹՈՄԱՍ ՊԵՐՍԻ, կոմս Վոստեր

ՀԵՆՐԻ ՊԵՐՍԻ, կոմս Նորբեմբեյենդ

ՀԵՆՐԻ ՊԵՐՍԻ, սրա արդիներ, մականունը՝ ՀՈՏՍՊԵՐ

ԷԳՄՈՒՆԳ ՄՈՐՏԻՄԵՐ, կոմս Մարշ

ԻՌԶԱՐԳ ՍԿՐՈՒՊ, Յորքի եպիսկոպոսը

ԱՐԶԻՐՈՒԳ, կոմս Դուգլաս

ՍՎԵՆ ԳԼԵՆՌՈՎԵՐ

ԻՌԶԱՐԳ ՎԵՌԵՆՆԵ

ԶՈՆ ՖԱԼՍՏԱՏ

ԽԻՔԱՅԵԼ, Յորքի արևեպիսկոպոսի բարեկամը

ԵՌԻՆՍ

ՊԵՏՈ

ԳԵԳՇԻՎ

ԲԱՐԳՈՒՏ

ՖԲԵՆՍԻՍ

ԼԵԻՐ ՊԵՐՍԻ, Հասալերի կինը և քույրը Մարտիմերի

ԼԵԻՐ ՄՈՐՏԻՄԵՐ, Գլենդոմերի դուստրը և կինը Մարտիմերի

ՏԻՊԻՆ ՎՈՒՋ (Քուիկլի) Իսաչիփի պանդոկի տիրուհին

Կողեր, սպաներ, շերիֆ, զինեմանա, սենեկապետ, մատովակներ, Երկու կառապան, համվու
ներ և ծառաներ

Տեսարանը՝ Անգլիա:

1941
The following information was obtained from the records of the
Department of the Interior, Bureau of Land Management, at
Washington, D. C., on the date indicated below:
The land described in the foregoing is owned by the
United States of America, and is situated in the
County of _____, State of _____.
The land is more particularly described as follows:



Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Լոնդոն: Արքունիք:

Մտնում են քաղաքը Հենրի, Վեստմոուլենդը,
իշխան Վալտեր Բլանար և ուրիշներ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

- Քեզ կտեսնեմ ցնցված եմ, հոգսերից հյուսված,
Բայց գտնենք մի պահ, որ սարսափահար
Խաղաղությունը մի քիչ շունչ փառի,
Որ երբ վերստին մարտակոչ հենի,
Նրա թնդունը տագնապով պայթի հեռու ամերում:
Եվ բա՛վ է որքան հողն այս պապական
Շուրթերը նեղեց կարմիր արյունով իր գավակների,
Եվ բա՛վ է որքան գոռ պատերազմը
Նրա դաշտերում խրամներ փորի:
Եվ բա՛վ է որքան սմբակները բիրտ ոտիս նժույզի
Ճգմեն, տրորեն ծաղկունքն հայրենի,
Եվ ոխերմական աչքերն այս անեղ
Միևնույն նյութից և նույն բնույթի՝ բախվեն զայրույթով
Միջեղբայրասպան վայրագ նախնիներ կազմակերպելով:
Այդ մեր երկիրն էր:
Մեր խիստ հակամարտ իշխաններն այժմ
Բարեկամական կոտ շարքեր կազմած
Պետք է ընթանան մեկ հանապարհով՝
Այլևս երբեք չապստամբվելով
Ռնդդեմ ծանոթի, արյունամեծի և միաբանի:
Եվ պատերազմի արևոտ սուտերը

Պատշաճում փակված դաշույնի նման
 Պետք է դադարի իր արկնոջ կուրծքը պատառոտելուց:
 Արդ, բարեկամեն՛ր, դեպի հեռավոր
 Դամբանը շարժվենք մեր Քրիստոսի,
 Որի գործն էնք մենք. և որի օրհնյալ սուրբ խաչի ներքո
 Ուխտել ենք կովել, — այդ մեք կոչումն է, —
 Եվ անգլխական մեք զինվորները, որոնց ձեռները
 Իրենց մայրական արգանդների մեջ, ծնվելուց առաջ
 Ծալվել են հանուն այդ մեծ Երդումի —
 Պետք է անհապաղ հանապարհ ընկնեն,
 Որ այդ բովանդակ անհավատներին
 Հալածեն այն Սուրբ երկրի դաշաբեից,
 Որոնց վրայով Փրկիչն է փայլել օրհնյալ ռաֆերով,
 Որին դժնդակ խաչի գամեցին հանուն մեր սիրո,

36 Տասնչորս հարյուր տարիներ առաջ:

37 ԵՆԿ տարին անցավ, որ մենք վճռել ենք նանապարհ ընկնել:

Որ պետք է գնանք, — կրկնելն իզուր է, —

Մեր այս հավաքի նպատակն այդ շէ:

Այժմ դո՛ւ խոսիր, զարմիկ Վեստմոնլենդ,

Թե անցյալ գիշեր մեր խորհուրդը ինչ վճիռ արձակեց

Մեր այս բաղձալի սուրբ արշավանքը արագացնելու:

ՎԵՍՏՄՈՌԱԵՆԻ

Արեա, այդ հարցը մենք խիստ հրատապ բննության առանք

Եվ այդ արշավի ծախսի հետ կապված բազմաթիվ հարցեր

Լուծեցինք էրեկ: Սակայն Վալեսից

Մի նկատալաց սուրհանդակ էկավ

Տհան լուրերով սաստիկ ծանրաբեռ.

48 Վառքարագույնը դրանցից այս էր, թե Մորտիմերը,

Որ հերիֆորդյան գորհերն էր վարում

Ընդդեմ խուժադուժ Գլենդովերի, նակատամարտում

Գերի է ընկել այդ վալեսական վայրագ ռազմիկին:

Մոտ հազար զինվոր սոյանված է տվել.

Եվ դիակների վրա կոացած վալեսուհիներ

Այնպես վայրենի, անամոթ կերպով զազրախոսում են,

Որ ամաշում են ես կրկնել, արեա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ճակատամարտի այդ լուրը, ըստ իս,

Պիտի կասեցնի մեր արշավանքը դեպի Սուրբ երկիր:

ՎԵՍՏՄՈՌԱԵՆԴ

Մի ուրիշ էլ կա այդ լուրին ընկեր, ձերդ բարձրություն,
Առավել տհաճ և տագնապալի մի բոք է եկել
Հյուսիսի կողմից: Ահավասիկ այն. սուրբ խաչի օրը
Պատանի ասպետ Հոտսպեր Պերսին
Եվ Արչիբուդը, — այդ մշտակորով փաշ շոտլանդացին, —
Հոլմեդոնի մեջ բախվել են իրար,
Մի ժամ է տեւել մարտն այդ արյունոտ
Պատելով նրանց բնդանոթների համազարկերից
Եվ նույնանշան երեսույրներից: Աստծուն է հայտնի,
Թե ում օգտին է մարտը ավարտվել, ֆանգի բանրերը
Մարտի թեժ պահին հեծել է իր ձին և ասպանդակել,
Ճակատամարտի ելփին անտեղյակ:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Ահա՛ մեր անգին և հավատարիմ հարտար բարեկամ
Վալտեր Բլանտը: Նոր ձիուց իջավ,
Հագուստի վրա դեռ հանապարհի փոշին է նստած.
Նա Հոլմեդոնից կոնդոն է հասել սրարշավ վագֆով
Եվ ուրախագին լուրեր է բերել մեզ ռազմադաշտից:
Կոմս Դուգլասը մեծ պարտություն է կրել.
Տառ հազար կորին շոտլանդացիներ
Եվ ֆառներկու խիզախ ասպետներ
Իրենց սեփական արյամբ շաղախված
Վալտեր Բլանտը տեսել է պառկած ռազմադաշտի մեջ:
Պերսին գերի է վերցրել Մորդեկին՝ Ֆայվի մեծ կոմսին,
Պարտված Դուգլասի ավագ զավակին, կոմսեր Սթոլին,
Անգուսին, Մորին և կոմս Մենտիթին:
Մի՞թե պատվավոր կողոպուտ չէ սա,
Փառավոր ավար: Ի՞նչ կասե՛ք, զարմիկ:

ՎԵՍՏՄՈՌԱԵՆԴ

Անկասկած, արհա,
Դա հաղթանակ է իշխանին վայել:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Դու սրտիս կպար և ինձ դրդում ես մեղսագործության:
Ես հախանձում եմ նորթեմբերլենդին:
Նա երջանիկ է, որ ունի այլֆան ֆաշարի որդի,

Որի անունը երբեք չի իջնում պատվի շուրքերից:
 Նա մեր անտառի վերձիգ կաղնին է անբաղդատելի.
 Բախտի պարծանքն ու միակ սիրելին,
 Որի փառքին ու գովքին նայելով՝
 Ես կարմրում եմ, տեսնելով ինչպես նրա փոխարեն
 Իմ երիտասարդ Հենրու ճակատին
 Անառակություն և անպատվության սև բիծ է ընկած:
 Օ՛, երանի թե, ինչպես լինում է երբեմն հեփիաքում,
 Գիշերաջրջիկ մի բարի վիռուկ
 Փոփոխած լինե՞ր մեր զավակներին օրորոցի մեջ,
 Իմը կոչելով Հոսապե՛ր Պերսի,
 Իսկ նրա որդուն՝ Պլանտագենետ:
 Պարծանք էր այդպիսի որդի ունենալ.
 Բայց վանե՛նք նրան մեր խոնկերից դուրս: Հոսապե՛ր Պերսին
 Սաստիկ հանդուգն է. Բո կարծիքն ի՞նչ է այդ մասին, զարմիկ,
 Նա գերիներին, որոնց բռնել է այս պատերազմում,
 Հրաժարվել է մեզ վերադարձնել, հայտարարելով,
 Որ մեզ կհանձնի միայն մի գերի՝ Մորդեկի կոմսին:

ՎԵՍՏՄՈՌԱԿԵՆԴ

Վուստերի կոմսն է նրա կրթիչը, իր հորեղբայրը,
 Եվ նա գործում է նրա խորհրդով.
 Իսկ Վուստերն ո՞վ է, երդվյալ թշնամիդ,
 Ահա՛ թե ինչու հոխորտ է ձեր դեմ,
 Զանել կատարը այդպես անպատկառ վերև ցցելով:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ես պահանջել եմ, որ պատասխան տա,
 Այդ իսկ պատճառով մեր արշավանքը դեպ Նրուսաղեմ
 Մենք ստիպված ենք կասեցնել առժամ:
 Այս չարեհաբքի մենք Վինձորի մեջ
 Նորից նիստ ունենք: Այդ մասին, զարմիկ,
 Հայտնե՛ք լորդերին և անմիջապես շաապե՛ք մեզ մոտ.
 Շատ ասելիք կա և շատ անելիք,
 Հիմա ժամը չէ, ցասկոտ եմ սաստիկ:

ՎԵՍՏՄՈՌԱԿԵՆԴ

Լսում եմ, արքա:

Գնում եմ:

Լոնդոն: Մի պանդոկ:

Մտնում են իշխան Հենրին և Ֆայտաֆր:

ՖԱԼՍՏԱՅ

Է՛յ, քեզ հետ եմ, Հել, ժամը քանի՞սն է:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Քո ուղեւր այնպես նարպակալվել է հին գինի խմելուց և ընթրիֆի տո կոնակները արձակելուց և հաշելուց հետո նաաւրանների վրա քննոր մոռանում ես հարցնել այն, ինչ-որ իսկապես հարկավոր է գիտեց: Ի՞նչ ստանա է մտել փորդ, որ ուզում ես իմանալ, թե ժամը քանի է: Ա՛յ, եթե ժամերը վերափոխվեին գինու բաժակների, բուլկերած ափորների, ժամացույցի նոնանակը՝ կավատի լեզվի, քվացւ պոռնկատան ցուցանակի, իսկ օրհնյալ արեւը՝ բոցազույն մետախազած մի գեղեցիկ տափուկ օրիորդի, այդ դեպքում քո հարցնելը՝ թե քանիսն է, իմաստ կունենար:

ՖԱԼՍՏԱՅ

13 Իսկապես, Հել, դու իմ մտածածի նիշտ կետին դիպար, որով
մենք, քակների ետևից վազողներս, հաշվում ենք միայն գիշերային
14 մեր լուսնով և Մեծ արջի յոթ աստղերով և ոչ թե Ֆերով, այդ «քս
ոաշրջիկ հրաշալի ասպետով»: Եվ ահա թե ինչ խնդիր ունեմ քեզ
եկի բարեկամ, երբ թագավոր դառնաս,— ասաված ողորմի քեզ...
բողոքյուն, ուզում էի ասել՝ քո մեծապատվությանը, որովհետև
ասածն ողորմությունը երբեք չես ստանա:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Իսկ ինչո՞ւ չեմ ստանա:

ՖԱԼՍՏԱՅ

Չես ստանա, ասաված վկա, չես ստանա նույնիսկ այն չափով
հարկավոր է նախանաշից առաջ աղաթելու համար:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ինչ ես ուզում ասել, միտքդ կլորացրու, ավելի կլորացրու:

ՖԱԼՍՏԱՅ

Պե, ուրեմն, լսիր, շարաննի. երբ դու թագավոր դառնաս, բույլ
որ մեզ, գիշերային ասպետներես, ցերեկվա կողոպտիչներ անվանեն:

մեզ կոչեն Թիանայի անառնապահներ, սավերի ասպետներ, լուսնի սիրելիներ, և թող մարդիկ մեր մասին բարի համբավ տարածեն, որ մենք ծովի պես ղեկավարվում ենք մեր ազնիվ և ողջախոհ տիրուհու՝ լուսնի կողմից, և մեր կողոպտար կատարում ենք նրա հովանավորությամբ:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Ա՛յ, լավ ասացիր և դա շատ հիմնավոր է, որովհետև մենք բոլորս լուսնի ասպետներ լինելով և ծովի պես կառավարվելով լուսնից, մեր բախար մերք մակրնթացում և մերք իշնում է ինչպես ծովը: Քերեմ սպացույց. երկուշաբթի գիշերը մեր ամենաբարձրագույն մի հարվածով թոցրած ոսկու ֆաակը արագորեն դատարկվելով Երեֆշաբթի առավոտյան հասնում է իր նվազագույն կետին: Շարունակ երկու հաշորդական գոռոց է լսվում «լցրո՛ւ» և «դատարկի՛ր»: Երբևմն, երբ տեղատվություն է, դու սանում ևս մինչև սանդուղի ամենացածր աստիճանը, ուրիշ անգամ, երբ մակրնթացություն է, տեսար թուր գագաթը... կախաղանի:

ՖԱԼՍՏԱՖ

Աստված վկա, դու նիշտ ես առում: Իսկ մի՛թե իմ պանդոկի տիրուհին ֆաղցրագույնը չէ բոլոր ֆածերից:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

39 Հիբլայի մեղրի պես, — իմ հին պոռոտախոս: Իսկ մի՛թե բանասխցիկի
40 ամենանոխ պատմունքանը ցլակաշվից շինված բանկոնը չէ:

ՖԱԼՍՏԱՖ

Օ՛, ի՛նչ ես ասում, ի՛նչ ես ասում, ցնդած կատակախոս, այդ ի՛նչ երկդիմի ակնարկ Լր: Ես ի՛նչ գործ ունեմ ցլակաշվից շինված բանկոնի հետ:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Իսկ ե՛ս ինչ գործ ունեմ քո պանդոկի տիրուհու հետ:

ՖԱԼՍՏԱՖ

Ի՛նչպես թե շունես: Դու նրան շատ անգամ ես կանչել էեզ մոտ. որ հաշիվ մափրես:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Իսկ ևս երբևիցե ստիպե՛լ եմ քեզ, որ քո բաժինը ինձի վճարես:

ՖԱԼՍՏԱՖ

Ինչ-որ հիշտ է, հիշտ է, այդ բանը չի Լղել: Ամեն անգամ դու ես վճարել:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Այո՛. թե՛ պանդուկում և թե՛ ամեն տեղ իմ փողը բավարարել է: Ես
երբ հերիք չի արել, օգնության է հասել իմ պատիվը:

ՖԱԼՍՏԱՅ

Այո, և դու այդ պատիվը օգտագործել ես ինչպես օրինավոր ժառանգ.
Սակայն ասա՛ ինձ, անուշիկ խեղկատակ. մի՞թե Անգլիայում կախա
ղանները կանգնած են մնալու, երբ դու քաղավոր դառնաս: Մի՞թե օրեւ
մբ. այդ հին ծաղրածուն, իր ժանգոտ շղթայով առաջվա պես դարձյա
խեղդելու է ամեն մի բնդվզում արիության: Կտի՛ր, դու գողերին մի՛ կա
խի՛ր. երբ նստես գահին:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ո՛չ. այդ ինքի ես անելու:

ՖԱԼՍՏԱՅ

Ե՛ս: Օ՛, սփանչելի է: Աստված վկա, ինձնից կտրին դատավոր կատացվ

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Եվ դու արդեն սկսել ես կեղծ դատեր վարել: Ուզում եմ ասել, որ մե
կհամձնարարվի գողերին դատել և դու կդառնաս հազվագյուտ դահին:

ՖԱԼՍՏԱՅ

Ես դրան դեմ չեմ: Վատահացնում եմ մեզ, որ այդ գործը որոշ չափո
նույնիսկ մտ է իմ խառնվածքին: Ես պատրաստ եմ դահնի պաշտոն վա
րել եմ արհունիքում:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Պատիվ և պարգևներ ձեռք բերելու համար, այնպես չէ՞:

ՖԱԼՍՏԱՅ

Այո, չէ՞ որ դահնին է պատկանում սպանվողի հագուստը և ամեն
զիտեն, որ դահիերը շատ հոխ հանդերձարան ունի... Եվ սակայն, գրող
տակի. ես մոռալ եմ ինչպես մի ծերացած որձ կատու, կամ մի արջ, որի
մահն են անում բռնությամբ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Կամ զառամած մի առյուծ, կամ վիեր սիրահարի:

ՖԱԼՍՏԱՅ

Այո, կամ լինկոլնշիրլան միալար նվացող մի պարկապուկ:

72 Իսկ ի՞նչ կասես, երբ քեզ համեմատեմ նապաստակի կամ մեր քաղաքի պատերից դուրս գտնվող աղտեղի նահնափոսի հետ:

ՖԱՍՏԱՅ

Քո լեզվից շարունակ անպակաս են ամեն տեսակի գարշահոտ համեմատություններ, և շնայած դրան, իմ կարծիքով, դու ամենասիրելի և անբաղդատելի երիտասարդ իշխանն ես աշխարհում: Կսի՛ր, Հել, խնդրում եմ այլևս ինձ մի տանջիր ունայնությամբ: Վկա՛ է աստված, որ իմ փափագն է բարի անուն վաստակել, սակայն ոչ դու, ոչ էլ ես չգիտենք, թե որտեղ է վանառվում այդպիսի ապրանք: Անցյալ օրը Խորհրդարանի մի հին լորդ ինձ կշտամբեց փողոցում: Եվ սրտհաղ դու էիր, պարոն: Ես, իհարկե, ուշադրություն չդարձրի նրան, բայց և այնպես նա իմաստունի պես էր խոսում: Ճիշտ է, ես նույնիսկ չնայեցի նրա կողմը, և այնուամենայնիվ նա իմաստուն բաներ էր ասում և այն էլ որտե՛ղ՝ փողոցում:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

53 Դու ճիշտ ես վարվել, չէ որ, ասում են, իմաստությունը փողոցներում է գոռում, բայց ոչ ոք չի նայում նրա երեսին:

ՖԱՍՏԱՅ

Օ՛, դու ինչ անիծյալ հակում ունես դեպի այդ կարգի բաները: Դու իսկապես ընդունակ ես նույնիսկ որևէ սրբություն պղծել: Իմ մեղքերի մեծ մասը քո հոգու վրա է ծանրացած, Հել: Եվ քող աստված թողություն տա քեզ այդ մեղքերի համար: Մինչև քեզ հետ ծանոթանալը, ես անմեղ էի, Հել, իսկ այժմ, ճշմարիտն ասած, շատ քիչ բանով եմ տարբերվում կատարյալ ստահակից: Բայց ես պետք է ձեռք քաշեմ իմ կյանքի այս անասակ ընթացքից և ուղղեմ ինձ և, անկասկած, կուղղեմ: Վկա՛ է աստված, եթե այդ բանը շանեմ, ուրեմն ես ամենատմարդի սրիկան եմ: Ես չեմ ուզում դժոխք ընկնել քաղաքապետական մի ինչ-որ իշխանիկի համար:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Վաղը մեզ փող է հարկավոր, Ջեկ, որտեղի՞ց նարենք:

ՖԱՍՏԱՅ

Որտեղից ուզում ես՝ ճարիր, ես համաձայն եմ: Ինձ սրիկա անվանիր, թի՛ր իմ երեսին, երբ դրան հակառակ բան ասեմ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ես քո մեջ տեսնում եմ հրաշալի ելևէջ կյանքի՝ աղոթքից մինչև քաղաքապետություն:

ՏԱԼՍՏԱՏ

Ի՞նչ անեմ, Հել, իմ կոշումն այդ է կյանքում: Իսկ այն մարդը, որ կոշմանն է հետևում, նրա համար մեղք չկա:

Մտնում է Փոփնոր:

101 Ահա և Փոփնոր: Ասա տեսնենք, Գեղշիլն այդ գործը գույս բերե՞ց: Եթե մարդիկ փրկվեին ըստ իրենց արժանիքների, չգիտեմ, դժոխք կգտնվե՞ր արդյոք մի բավականաչափ տափուկ անկյուն այդ անպիտան համար: Ահա մի ամենակարող սրիկա, որ մի ազնիվ մարդ տեսնելու մշտապես գոռում է «կա՛նգ առ»:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

105 Բարև, Նեդ:

ՓՈՒՆՍ

08 Բարև, սիրելի Հել: Հը, ի՞նչ է ասում մոնսյոր խղճմտանքը: Ի՞նչ ասում պարոն Զոն Քաղցրահամ գինին: Ասա, Զեկ, դու և սատանան հ մաձայնության եկա՞ր՝ հո հոգու վերսրբերյալ, որին դու այս ուրբաթ մի բաժակ խեղճայան քաղցր գինով և սառած ափաղաղի սրունքով վ հառնցիր նրան:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Պարոն Զոնը իր խոստումը չի դժի: Սատանան, ըստ պայմանավ՝ վաճուրքյան, իր հասանելիքը լրիվ կատանա, չէ որ պարոն Զոնը միշտ վարվել է ժողովրդական ասացվածքի համաձայն՝ «Տո՛ւր սատանային բաժինը»:

ՓՈՒՆՍ

Ուրեմն, ուզես թե չուզես, պարոն Զեկ, դու պարտավոր ես սատանա՝ բաժինը վճարել:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Այլապես նրա տեղը դժոխքն է, սատանային խաբելու համար:

ՓՈՒՆՍ

121 Իսկ հիմա ինձ լսե՛ք, տղաներ, լավ լսե՛ք. վաղ առավոտյան ժամը չ սին մենք պետք է լինենք Գեղշիլի մոտ: Զմոռանա՛ք, առավոտ կանո ուղիղ ժամը չորսին: Քենտրբրի են ուղևորվելու ուխտագնացներ նվերներով, իսկ դեպի Լոնդոն՝ ձիավարելու է վանառականների մի խումբ՝ քսակները փողով լի: Գիմակներ՝ բոլորիդ համար ես կպատր 124 տեմ, իսկ ձիեր՝ ինձներդ ունե՛ք: Գեղշիլը գիշերելու է Աոչեստերում: Վ

մենք ընթրելու ենք Խաչիփում, արդեն պատվիրել եմ: Այդ գործը մենք պետք է գլուխ բերենք շատ ապահով, ինչպես լաւ շուքում: Եթէ դուք ինձ հետ գաք, ես ձեր ֆակները կլցնեմ փողով, ծա՛նր, ծա՛նր, իսկ եթէ չեք ուզում գալ, ուրեմն հատե՛ք տանը, դուք կախովելու եք արժանի:

ՖԱԼՍԱՖ

Լսիր, էդվարդ, ես ձեզ կկախեմ եթէ մնամ տանը և դուք առանց ինձ նանապարհ ընկնեք:

ՓՈՒՆՍ

Ուրեմն գալո՞ւ ես, փիված սյտերով նարպագունդ:

ՖԱԼՍԱՖ

Իսկ դո՞ւ, Հել, կընկերակցե՞ս մեզ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ո՞վ, ե՞ս: Ես զբաղվե՛մ կոկոպուտով: Ե՛ս դառնամ ավազակ. երբե՛ք, ո՛չ մի դեպքում:

ՖԱԼՍԱՖ

Քո մեջ ոչ ազնվություն կա, ոչ արիություն տղամարդու, ոչ ընկերական զգացմունք, ոչ էլ դու սերում ես թագավորական արյունից. եթէ ընդունակ չես թեկուզ մի տասը շիլինգ թոցնել որևէ տեղից:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ի՛նչ արած, բող ես էլ կյանքում խելացնորի մեկը լինեմ:

ՖԱԼՍԱՖ

Շատ դիպուկ սավեց:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ո՛չ, ինչ ուզում է լինի, ես տանը կմնամ:

ՖԱԼՍԱՖ

Իմացիր, ուրեմն. աստծով եմ երդվում, եթ լուր թագավոր դառնաս, ես էլ մեզ կդավանանեմ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Իմ փույթը չէ բնավ:

ՓՈՒՆՍ

Պարոն Ջոն, խնդրում եմ իշխանին և ինձ առանձին բողնես: Ես նրան այնպիսի հիմնավոր փաստարկներ կբերեմ հօգուտ մեր այս ձեռնարկի, որ նա կհամաձայնի մեզ հետ գալ:

ՖԱԼՍՏԱՅ

Լավ. աստված բող քեզ կորով տա համոզելու, իսկ նրան ականջ՝ դունելու, որ քո ասածները կարողանան ներս մտնել, իսկ նրա լսած՝ հավատք ներշնչելու, որ նշմարիա իշխանը ի վիճակի լինի հանուն կազդուրման մի կեղծ ավագակ դառնալ, քանզի ժամանակները այլ են և մի ինչ-որ բանով զվարճանալ է հարկավոր:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

152 Մնաս բարով, իմ ուշացած գարուն, մնաս բարով, նոխ ամաս հրաշալի եղանակով մինչև աշնան խորքերը երկարող:

Ֆալստաֆը գնում է:

ՓՈԻՆՍ

Դե, հիմա, իմ սիրելի, իմ անուշիկ իշխան, վաղը եկեք մեզ հետ ծրագրել եմ մի հրաշալի խաղ, որ ինքս մենակ չեմ կարող գլուխ քե
156 Ֆալստաֆը, Բարդուֆը, Պետոն և Դեղձիլը կողոպտելու են այն մեկանց, որոնց ճանապարհը մենք արդեն հետագուտել ենք: Ո՛չ դուք, ո ես այնտեղ չենք լինի: Բայց, հենց որ նրանք սկսեն ավարը բաժա մենք կհարձակվենք նրանց վրա և այդ ամբողջ կողոպուտը կհափշ կենք: Այս գլուխը բոցրու իմ ուսերից, եթե այդ բանը շահաշողվեց:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Իսկ մենք ճանապարհին գնալիս ինչպե՞ս պետք է անջատվենք նր ցից:

ՓՈԻՆՍ

Ինչպե՞ս: Մենք կնշանակենք հանդիպման վայր և կուղևորվենք նր ցից առաջ, կամ հետո: Այդ արդեն մեր ցանկությունից է կախված: Նր ստիպված կլինեն այդ հարձակումը առանց մեզ կատարել, որ իրենց ջությունը ցույց տան: Իսկ մենք, դեռ ավարը իրենց մեջ չբաժալ անմիջապես վրա կտանք:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Այո՛, բայց նրանք մեզ անմիջապես կնանաչեն մեր ձիերից, մեր գուստից և բոլոր տեսակի այլ նշաններից:

ՓՈԻՆՍ

Դատարկ բան է: Նրանք մեր ձիերին չեն տեսնի, որովհետև ես ձի կապելու եմ անտառում, իսկ դիմակները իսկույն կփոխենք, հենց որ

ծանվենք նրանցից: Այդ արշավի համար ես ի նկատի եմ ունեցել նաև կոշտ կտավից պատրաստած մոմլաթե շերտավոր թիկնոցներ, որ մեր վրայի ծանոթ հագուստները թափցնենք նրանց տակ:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Այո՛, բայց ես կասկածում եմ, որ նրանց հաղթելը դժվար կլինի մեզ համար:

ՓՈՒՆՍ

178 Ոչ մի դժվարություն էլ չկա: Նրանցից երկուսը բնածին վախկոտներ են և իսկույն կփախչեն, հավատացնում եմ, իսկ երրորդը եթե գեթ մի վայրկյան ավելի դիմադրեց մեզ, քան հարկավոր է, թող ես այլևս զենք չկրեմ վրաս: Այս խաղի մեջ տմենագլարնալին կլինեն այն հակասական ահավոր ստերը, որ փչելու է այդ միևնույն գեր դատարկասունը, երբ նանապարհին հանդիպենք իրար: Քե ինչպես ինքր իբրև թե դիմադրել է ամենափիշը երեսուն ախոյանի, ինչպես հարձակումներ է կատարել նրանց վրա, ինչպիսի հարվածներ է հասցրել, ինչպիսի վտանգների է ենթարկվել: Մենք կմերկացնենք նրա այդ փշոցը: Եվ հենց դրա մեջ է այդ զվարնալի խաղի ամբողջ հետափրփությունը:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Լավ, ես քեզ հետ կգամ: Բոլոր անհրաժեշտ պատրաստությունները տես և երեկոյան հանդիպիր ինձ Խաչիփում: Ես ընթրիֆին կլինեմ: Մնա՛ր բարով:

ՓՈՒՆՍ

Մնա՛ք բարով, տեր իմ:

Գնում է:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

191 Ես ձեզ բոլորիդ լավ եմ հանաչում, պատրաստ եմ սակայն Միածամանակ գորավիզ դառնալ
Ձեր զվարճության անգուսպ հողմերին:
Արևն է այդպես առժամ արտոնում, որ տարափոխիկ
Նվաստ ամպերը իր շֆեղ փայլը ծածկեն աշխարհից,
Որ երբ կամենա վերստին շողալ,
Ճեղփելով տձև գոլորշիների մշուշները գարշ,
Իբրև թե հզոր երթն իր խափանած,
Մարդկանց ավելի բաղձալի լինի,
Իր փառք ու փայլով աշխարհն հմայած:



Հենրի Չորրորդ



Հենրի Բոլինգբրոկ, Հերիֆորդի դուքսը
(Հենրի Չորրորդ)

Եթե ողջ տարին բաղկացած լինի միայն տոներից,
 Զվարճությունը աշխատանքի պես կդառնա տաղտուկ.
 Սակավ տոներն են սաստիկ բաղձալի,
 Եվ հազվադեպն է միշտ փափագելի:
 Առդ, դեն նետելով իմ այս ցոփ կյանքը
 Եվ վնասելով մի պարտք, որ երբեք խոստացած չկամ.
 Ես պայծառ դեմքով կերևամ մարդկանց,
 Բոլորի հիմար հույսերը հերքած:
 Եվ, ինչպես ոսկին մուգ հանձաբարում,
 Նսրոզիչ ուժերն իմ ջահելության
 Հին հանցանքներիս վրա փայլելով
 Ավելի պայծառ պիտի շողշողան՝
 Շատ մարդկանց աչքեր հրապուրելով,
 Քան արիությանը՝ առանց զորացնող փայլաթիթեղի:
 Իմ օգտի համար անխրավելով
 Զարիք բարի կդարձնեմ խելքով,
 Իմ նին մեղքերը անդարձ փակելով:

Կնում է:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Լոնդոն: Արքունիքը:

Մանուկ են քազավոր շներին, նորթեմքերենդր, Վուստերը, Հոտսպերը,
 Վալտեր Թլանար և ուրիշներ:

ԹՍԳԱՎՈՐ շներ

Խիստ սառնարյուն եմ եղել մինչև այդ և սաստիկ խաղաղ.
 Անհոծաբ այդ բիրտ անարգանքներից ավելոծվելու,
 Եվ դուք բռնելով իմ թույլ երակից
 Համբերությունս շարաշահել եք:
 Զգուշացնում եմ, սակայն, բոլորիդ, որ այսուհետև
 Կլինեմ դաժան, ահեղ, ահարկու,
 Իմ արժայական կոչմանն արժանի:
 Զիրապատուլից սաստիկ նուրբ Լդա, բմբուլից փախուկ,
 Ռատի և կորցրի ախողոսն հարգանքի,
 Առ ընդունակ է ներշնչել լուկ վեհ ու խրոխտ հոգին:

ՎՈՒՍՏԵՐ

Մեր տունը, արքա, քիչ է արժանի
Մեր գերագույնի սպառնալիքին,
Այն թագավորի, որ մեր ձեռքերը սանդուղ շինելով՝
Գահին բարձրացրին:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԻ

Գերագույն տեր իմ...

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Հեռացի՛ր, Վուստեր: Ես աչքերիդ մեջ
Վտանգ եմ տեսնում և քմբոստություն,
Ներկայությունը շատ է հանդուգն, պարոն, խի՛ստ ամբարտավան,
Իշխանությունը չի կարող տոկալ, որ մի հպատակ
Հոնքերն իր վրա այդպես խոժոռի:
Հեռացե՛ք շտապ, երբ կարիք զգանք
Ձեր օգնությանը և խորհուրդներին, մենք ձեզ կկանչենք:

Վուստերը գնում է:

(Նորթեմբերլենդին) Դուք ուզում էիք կարծեմ բան ասել:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԻ

Այո՛, տեր արքա:
Հրամայել էիք, որ ձեզ հանձնվեն այն բոլոր մարդիկ,
Որ Հարրի Պերսին գերի էր վերցրել Հոլմեդոնի տակ:
Ձեզ հաղորդել են, որ նա մերժել է գերիներին տալ:
Պերսին ասում է, որ ձեզ սխալ են հաղորդել, արքա,
Ձեր հրամանին ընդդեմ չի եղել,
Այստեղ մի ինչ-որ գանցառություն կա, կամ անեղ նախանձ,
Պատճառը այդ է, որդիս մեղք չունի:

ՀՈՏՍՊԵՐ

Գերագույն տեր իմ, ես գերիներին չեմ մերժել տալ ձեզ:
Հիշում եմ, երբ որ կոխվեց ավարտվեց,
Երբ ես սուկալի ջարդից մոլեգնած
Շնչասպառ, տկար, հագիվ էի կործնել արյունոտ սրիս,
Մոտենում է ինձ հանկարծ ինչ-որ լորդ,
Կոկիկ, պննագարդ, սեթևեթ հագնված,
Նորափեսայի թարմությամբ հստակ,
Մնուար սափրած, ինչպես նոր հնձված խոզանաղաշար:

Այնպէս էր բուրում, կարծես խնկաբույր
Օծանելիքի հորիւնիչ լինէր:
Միջնամատի և բքամատի մեջ բռնել էր մի տուփ,
Որ ստեպ-ստեպ էրին մտտեցնելով
Հեռացնում էր նորից,
Եվ փոշտալով՝ հոտոտում էր դարձյալ,
Հիմարաբար ժպտում և բարբաջում էր:
Իսկ երբ զինվորները սպանվածներէ դիակներն առած
Անցան մեր կողմով, նա նրանց կոչեց
Տմարդի, տգետ և անբարեկիրք.
Որ քարշ են տալիս այդ գարշ դիերը
Գերազանցութեան իր էրի տակով, քամու ուղղութեամբ:
Կանացի անհագ հետաքրքրութեամբ
Հարցախննեց ինձ և վերջում, հանկարծ, իմիջի այլոց.
Ինձնից պահանջեց, որ գերիներին ձեզ հանձնեմ, արքա:
Իսկ էս տանջվելով իմ սուր վերքերից,
Այդ փայտփորիկից սաստիկ գրգռված,
Համբերութունից, ցավից դուրս գալով,
Անուշադրութեամբ պատասխանել եմ, չգիտեմ թե ինչ:
Գուցե նա նիշտ է, գուցե և նիշտ չէ: Ինձ կատաղեցրեց
Նրա պերն տեսքը և այդ գրգռիչ օծանելիքը,
Եվ պալատական նաժիշտին հուշող դատողութեանը
Թնդանոթների, գոռ թմբուկների, վերքերի մասին.—
Ողորմած աստված, ինչե՛ր ենք լսում:—
Հավատացնում էր, որ երկրի վրա խոր վերքերի դեմ
Չկա ավելի գերազանց միջոց, քան կետանարայր:
Եխտ ցավալի է, համոզում էր նա,
Որ այս անարատ երկրի ընդերքը անդուլ քանդելով
Գարշելի բորակը արեղեմ են հանում,
Որ կործանել է բազում լավ մարդկանց այնքան նեկգորեն:
Որ նա կդառնար զինվոր անպայման.
Եթե շիներին թնդանոթները այս անիծաբան:
Այդ հաղատ, անկապ բարբաջանքներին
Նա անուղղակի պատասխանեցի, — սաացի արդեն:—
Եվ ձեզ խնդրում եմ հավատ չընծայել այդ կեղծ հաղորդման,
Որ իբրև հանցանք կարող է կանգնել
Իմ սիրո և ձեր բարձրութեան միջև:

ՔԱՆՏ

Իմ բարի արեա, այդ հանգամանքն և կատի առեմ:
 Արդեն տեսնում եմ, որ Հարրի Պերսին
 Ինքն էլ չի հիշում, թե ինչ է ասել,
 Նման մի անձի, նման մի վայրում
 Եվ մի այդպիսի դժվար ժամանակ:
 Լավագույնն այն է, թաղել այդ հարցը
 Եվ չբարձրացնել իբրև մեղադրանք նրա անձի դեմ,
 Կնքն էլ, մանավանդ, իր ասած խոսքի համար գղջում է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

87 Բայց համառում է ե չի կամենում
 Գերիներին տալ առանց պայմանի:
 Ուզում է, որ մենք արհուճի փողով իր աներձագին՝
 Հիմար Մորտիմերին անհապաղ փրկենք,
 Ուր կամովին, — հոգովս եմ երդվում, —
 Գավանանորեն ջախջախել տվեց իր ամբողջ գործը
 Մարտի նեավելով Գլենդոլերի,
 Կախարդ, նզովյալ այդ հրեշի դեմ,
 Ուրի դատեր հետ, ինչպես լսեցինք,
 Վերջերս Մարչը ամուսնացել է:
 Կարելի՞ բան է՝ մեր գանձարանի ոսկին դատարկել
 Մի դավանանի փրկելու համար.
 Դավանանությունը գնվելու՞ է բան է:
 Գործարքի՞ մտնենք մի Երկշոտի հետ,
 Ու կամովին է գերի հանձնվել:
 Ո՛չ, բող ամայի լեռներում հյուսվի:
 Նա, ով խնդրում է ընկուզ մի պենի
 Վտարանջ, ըմբոստ այդ Մորտիմերին փրկելու համար,
 Այլևս նա իմ բարեկամը չէ:

ՀՈՏՍՊԵՐ

Դավանա՞ն, ըմբո՞ստ: Ո՞վ, Մորտիմե՞րը:
 Գերագույն տեր իմ, նա պատերազմի դիպվածով միայն
 Չեզնից բաժանվեց: Այդ փայլուն կերպով կարող է փաստել
 Նրա արնածոր վերքերի լեզուն,
 Այն խոր վերքերի, որ նա բեղունեց
 Չֆհաղ Սեվերնի շամբոս եզերքին,
 Երբ մի ամբողջ ժամ, մենակ, կուրծք կրծքի,

Մարտնչում էր զոռ Գլենդովերի հետ՝
Քաշուրթյամբ նրան համահավասար:
Երեք անգամ կովին դադար ավեցին
Եվ երեք անգամ համաձայնությամբ
Խմեցին սրընթաց Սեվերնի ջրից,
Որ նրանց արևոտ տեսից սարսափած՝
Փախչում էր դողդոջ եղեգնի միջով,
Իր գանգուրները թափցնելով ափի դատարկ խորշերում՝
Այդ երկու հուժկու ախոյանների արյունով ներկված:
Գարշ նենգությունը դեռ երբևիցե
Զի պատասպարվել այդքան վերքի տակ,
Ոչ էլ կարող է լաջ Մորտիմերը դիտավորությամբ
Իրեն այդքան շատ վերքերով ծածկել:
Այդ սուտ է, արհա, գրպարություն է,
Նա դավանան չէ և ոչ էլ բմբուս:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Սառ՛ում ես, Պերսի, ինձի ես գրպարում,
Նա երբեք չի բախվել Գլենդովերին:
Լսի՛ր իմ խոսքը.
Նա ավելի շուտ կհամարձակվի դեի հետ բախվել,
Քան մենակ դուրս գալ այդ ոտխի դեմ:
Գու չե՛ս ամաչում: Արդ, շհանդգնես
Մեանից հետո խոսք բանալ ինձ մտա Մորտիմերի մասին:
Գերիներիդ էլ շտապ ուղարկիր,
Թե չէ այնպիսի կտուրկ միջոցի կարող եմ դիմել,
Որ շատ շեռ խնդա: Լորդ Նորթեմբերլենդ,
Գու՛մ ձեր որդու հետ կարող եմ գնալ:
Գու գերիներին շտապ ուղարկիր, թե չէ՝ զգո՛ւյշ կաց:

Թագավոր Հենրիև, Քլանտը և շխաումրը գնում են:

ՀՈՏՄՊԵՐ

Երբ դեր գա այդպես գոռալով՝ «Տո՛ւր գերիներիդ»,
Ես դարձյալ չեմ տա: Կգնամ իր մոտ
Եվ այդպես կստեմ: Գոնե իմ սիրտը կթեքեացնեմ,
Թեև կարող է՝ գլուխս կորցնեմ:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Հարեցի՛ր մալձից. կա՛ց, խորհի՛ր փոքր ինչ,
Ահա՛ գալիս է քո հորեղբայրը:

Մտնում է Վաստերը:

ՀՈՏՍՊԵՐ

Լո՛ւ՛, շխտս՛ լ Մորտիմերի մասին:
Իսկ ես կխոսեմ ե իհաս բարձրածայն.
Բող շարժանանա հոգիս դրախտին,
Երև շղատնամ ես նրան պաշտպան:
Այս երակներես անգին արյունը
Պատրաստ էմ քափել կաթիլ առ կաթիլ,
Որ Մորտիմերին, անաղարտեն ոտնատակ սրված,
Ես վեր բարձրացնեմ այն գահի վրա,
151 Որին բարձրացրինք Բոլիներոկին այս երախտամու.
Այս քաղաքիս՝ քունոտ, նենգավոր:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԻ

(Վուստերին) Արքան, եղբայր իմ, սաստիկ գայրացրեց քո եղբորդուն:

ՎՈՒՍՏԵՐ

Իսկ այդ գայրույթի դրդիչն ո՞վ էղավ:

ՀՈՏՍՊԵՐ

Պահանջեց հանձնել իմ գերիներին,
Իսկ երբ վերստին ես ակնարկեցի արքունի գանձով
Քո աներձագին փրկել անհապաղ, սաստիկ գունատվեց,
Անել ճայվածքը գամեց երեսիս,
Զայրույթից դողաց, երբ Մորտիմերի անունը տվի:

ՎՈՒՍՏԵՐ

Նա մեղավոր չէ, չէ՞ որ Ռիչարդը իր մահից առաջ
Նրան հռչակեց գահի ժառանգորդ:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԻ

Այո՛, Ռիչարդը նրան հռչակեց, ինքս էմ վկա եղել,
Եվ դա այն օրն էր, երբ դժբախտ արքան, —
Ների՛ր մեզ, ո՞վ տեր, նրան պատճառած մեր մեղքի համար, —
Իր իղանդական արշավին մեկնեց,
Որտեղից հանկարծ ետ կանչվեց շտապ
Գահընկեց արվեց ե սպանվեց շուտով:

ՎՈՒՍՏԵՐ

Եվ այդ օրվանից այդ ոճի համար
Մեր դեմ է գոռում բերանն աշխարհի:

ՀՈՏՍՊԵՐ

Կամա՛ց, խնդրում եմ: Մի՛թե իրավ է, որ Ռիչարդ արքան
Իր մանից առաջ էղմունդ եղբորս հոշակեց ժառանգ
Անգլիո թագին:

ՆՈՐԹԵՄԲԵՐԻԼԵՆԻ

Անձամբ լսեցի՛

Նրան հոշակեց:

ՀՈՏՍՊԵՐ

Ուրեմն, արժալին ես չեմ կշտամբում,
Որ Մորտիմերին մահ է ցանկանում լեռներում ամուլ:
Իսկ դուք, որ Անգլիո թագը դրեցիք
Եթատ դյուրամոռաց այս մարդու գլխին
Եվ հանուն նրա ձեզ վրա անարգ պիտակ եք կրում
Իբրև դրդիչներ այդ սպանության,
Կարելի՛ բան է, որ այժմ հանդուրժեք
Ձեզ վրա վերցնել անեծքի բեռներ,
Որ նրա ձեռքին դուք ծառայել եք
Իբրև գործակալ կամ ստոր գործիք,
Պարան եք եղել, սանդուղք կամ դահին:
Օ՛, ներեցե՛ք ինձ, համեմատելը սաստիկ կոպիտ էր,
Ես ուզեցի լոկ պատկերացնել ձեզ ձեր տեղն ու դիրքը
Այս նենգ, խորամանկ թագավորի մոտ:
Օ՛, ի՛նչ ամոթ է, չէ՛ որ կխոսվի այժմ ձեր մասին
Եվ պիտի գրվի գալիֆի բոլոր տաբերքներում,
Որ ձեզ պես երկու ազնվաբարո գորավոր այրեր
Ներհաշվել են մի անարգ դավի մեջ
Մասնակից դարձած Ռիչարդ արքայի զահրնկեցության:—
Օ՛, ների՛ր, աստված այդ մեղքի համար,
Որ անուշաբույր վարդը շորթելով
Տեղը այս նեխված ֆաղկեղն եք դրել,—
Այս խայթող փուշը՝ Բոլիմբրոկին:
Եվ կասեն նույնպես և դա կլինի ամոթ առավել,
Որ ձեզ շարաշար խարեց, անարգեց, դեն նետեց մի մարդ,
Որի համար դուք տոկացիք այդքան նախաստինք, ամոթ:

Սակայն դեռ ուշ չէ: Կորցրած սլափվը
Կարող է փրկել և վերականգնել
Աշխարհի աշխում ձեր փառքը նորից:
Այդ անարգանքի և ծաղրի համար
Վրեժխնդիր եղեք գոռոզ արֆայից,
Նա ձեր ջանքերով բարձրացավ զահին,
Բայց գիշեր-ցերեկ միջոց է փնտրում
Ձեր մահվան գնով այդ պարտքը փակել,
Ուստի կրկնում եմ...

ՎՈՒՍՏԵՐ

Լո՛ր, զարմիկ իմ.

Հիմա կբանամ մի գաղանի մատյան
Եվ ի պատասխան սքափ զայրույթիդ
Ես քեզ կկարդամ փառավոր էջեր
Արկածներով լի գործերի մասին,
Որ շատ ավելի վտանգավոր են,
Քան թե անհաստատ մի տեգի հենված
Անցնել գոռացող հեղեղի միջով:

ՀՈՏՍՊԵՐ

Ով խեղդվեց՝ խեղդվեց: Սուզվիր կամ լող տուր
Վերև բարձրացիր: Փորձիր վտանգը
Դու արևելքից արևմուտք ուղղել,
Պատիվն հյուսիսից կխուժի հարավ՝ բախվելով նրան:
Եթե ուզում ես սքափ արյունդ ուժգին բորբոխել,
Լավ է հարձակվել առյուծի վրա,
Քան նասպաստակի հետևից վազել:

ՆՈՐԹԵՄՐԵՐԸԵՆԻ

Մի՛թե չես կարող դու գեթ մի վայրկյան
Սառնարյուն խոսել քաջության մասին:

ՀՈՏՍՊԵՐ

Երկի՛նքը վկա, պատրաստ եմ ցատկել
Եվ Լուսնի գունատ եղջյուրից պոկել պատիվն հրաշոյ,
Կամ խորքը սուզվել անհատակ ծովի,
Խորության չափին սաստիկ անմատույց,
Եվ խեղդվող պատվի վարսերից բռնած՝ կորզել անդունդից,
Փրկեցիր՝ ուրեմն բռնն է պատիվը,
Առանց միջնորդի և ախոյանի.
Կիսովի պատիվն անպատվություն է:

ՎՈՒՍՏԵՐ

Մի ցնորք ունի՝ մտապատկերներ,
Գրանից այն կողմ ոչինչ չի տեսնում
Եվ չի զբաղվում իրական կյանքով...
Լսի՛ր, ուրեմն, սիրելի զարմիկ:

ՀՈՏՄՊԵՐ

Օ՛, ներողություն՝ն:

ՎՈՒՍՏԵՐ

Գու շոտլանդացի քո գերիներին...

ՀՈՏՄՊԵՐ

Ինձ մտա կպահեմ,

Մի հատիկ գերի չեմ հանձնի նրան:
Ո՛չ, եթե նույնիսկ մի շոտլանդացի
Նրա հոգու համար փրկություն դառնա, դարձյալ չեմ հանձնի:
Այս ձեռքը վկա:

ՎՈՒՍՏԵՐ

Գու կատաղել ես

Եվ իմ խոսքերին ահանջ չես դնում:
Այդ գերիներին կարող ես պահել:

ՀՈՏՄՊԵՐ

Ոչ բե կարող եմ, այլ պիտի պահեմ. դա վնոված է:
Նա շցանկացավ Մորտիմերին փրկել
Եվ արգելեց ինձ խոսել այդ մասին:
Քայց ես կմտնեմ մի կերպ նրա մտա, եթե բնած լինի,
Եվ կբղավեմ իր ահանջի մեջ «Էդմունդ Մորտիմե՛ր»:
Ո՛չ: Մի սարյակի ես կվարժեցնեմ,
Որ նա շարունակ «Մորտիմեր» կանչի.
Եվ կնվիրեմ սարյակը նրան,
Թող անվերջ լսի ու մտղձից տանջվի:

ՎՈՒՍՏԵՐ

Գեր մի բառ բույլ տուր:

ՀՈՏՄՊԵՐ

Վե՛րջ իմ բովանդակ զբաղմունքներին,
Ինձ մե՛ն մի հատիկ զբաղմունք մնաց.

Ինչպես գայրացնեմ, անխնա խայթեմ Բոլիներոկին:
Ես նրա որդուն, վայրագ, արյունոտ իշխան Վալեսին
Կարող էի վերջ տալ
Նրա գավաթը թունավորելով,
Գեթ չիմանայի, որ հայրը նրան բնավ չի սիրում
Եվ գոհ չէր մնա իր որդու մահով:

ՎՈՒՍՏԵՐ

Մնաս բարով. գարմիկ.
Քեզ հետ կխոսեմ ես ուրիշ անգամ,
Երբ դու ավելի ամոք կլինես ինձ ունկնդրելու:

ՆՈՐԹԵՄՔԵՐՆԵՐ

Ինչ է, պիժա՝ կը խայթեց քեզ, հիմա՛ր,
Որ կնավարի խոսում ես տաֆ-տաֆ
Եվ չես կամենում ուրիշին լսել,
Ականջդ կապած հենց քո լեզվի տակ:

ՀՈՏՈՊԵՐ

Այնպես է թվում, որ ինձ ձեռնում են գավազաններով,
Մտրակով ձաղկում, եղինջով խայթում,
Կամ մրջյուններ են արշավում վրաս,
Երբ այդ գարշ ու նենգ Բոլիներոկի անունն եմ լսում:
Ռիչարդի օրոք — չե՞ք հիշում միթե, — մի հին ամրոց կար,
Անունն ինչպես էր, գրո՞ղը տանի...
Դա գլոստերյան դեսուքյան մեջ է,
276 Ուտեղ այդ ցնդած Յորքի դուխն էր նստում, — իր հորեղբայրը:
Առաջին անգամ իմ ծունկը այդտեղ ես խոնարհեցի
Բոլիներոկի՝ ժպիտների այդ արփայի առաջ:
Մեղա՛ քեզ աստված. ինչպես մոռացա...
Երբ Ռեվենսպուրգից դուր վերադարձաք:

ՆՈՐԹԵՄՔԵՐՆԵՐ

Քերկլի ամրոցն էր:

ՀՈՏՈՊԵՐ

Հա՛. հիշո՞ւս ասացիր:
Եվ այդ ամրոցում շափարից անուշ ի՞նչ քաղցր ու քննուշ
Խոսքեր ասաց ինձ այդ քննող շունը.
«Երբ որ իր բախտը. որ դեռ մանուկ է, աննական դառնա»,

«Իմ ազնիվ Պերսի», և «բարի զարմիկ»,
Գրո՛ղբ տանի այդպիսի ստոր խաբեբաներին,— ների՛ր ինձ, ասաված,—
Խոսե՛՛ք հորեղբայր, ես ավարտեցի:

ՎՈՒՍՏԵՐ

Ո՛չ, ոչ, մի գուցե դեռ շեռ ավարտել,
Կասկածե՛նք, խոսի՛ր:

ՀՈՏՈՊԵՐ

Ո՛չ, ես վերջացրի:

ՎՈՒՍՏԵՐ

Վերստին դառնանք և շոտլանդացի այդ գերիներին:
Փրկանք մի ուզիր, շուտ հանձնիր նրանց,
Իսկ դու Կուզլասի որդու միջոցով
Շոտլանդյան գործին գրավիր ևս կողմ:
Տարբեր պատճառներ հիմք ընդունելով,—
Ես քեզ այդ մասին նամակ կգրեմ.— համոզված եղիր,
Որ մենք կհասնենք հաջող արդյունքի առանց փորձության:

(Նորթեմբերլենդին)

Ձեր որդին, միլորդ, գրադված կլինի
Շոտլանդյան գործին հեղաշրջելով,
Իսկ դուք էլ այստեղ ջանացե՛ք ծածուկ
Մտերմանալ այն հոգևոր հոր հետ,
Որ շատ հարգված է բոլորի կազմից,
Այն երևելի եպիսկոպոսի...

ՀՈՏՈՊԵՐ

Յորքի վանահո՛ր...

ՎՈՒՍՏԵՐ

Այո: Նա անեղ մաղձ ունի պահած արհայի հանդեպ,
Որ Բրիտանոլում նրա եղբորը գլխատել ավեց,
Այդ լորդ Սկրուպին: Մի կարծե՛ք, քե ես
Ինչ որ ասում եմ՝ ենթադրություն է կամ գուշակություն,
Յմենք բան լրիվ կշուսդատված է, գծված, վնոված,
Մնում է միայն մի հարմար առիթ,
Որ իրագործվի:

ՀՈՏՈՊԵՐ

Եվ կիրազործվի, կյանքովս եմ երդվում:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆՊ

Որսր շտեսած դու կրակում ես:

ՀՈՏՍՊԵՐ

Դա հրաշալի դավադրություն է և գլուխ կգա:
Ու Մորտիմերի գործերին իսկույն միանալու են
Այդ շտախանդական բոլոր ուժերը և Յորքի գործը:
Ճի՞շտ շեմ կռահում:

ՎՈՒՍՏԵՐ

Մեր ծրագիրը հենց այդպիսին է:

ՀՈՏՍՊԵՐ

Անկեղծ եմ ասում. գերազանցորեն մտասլաց է:

ՎՈՒՍՏԵՐ

Եվ շատ պատճառ կա, որ մենք շտապենք
Չորքի գլուխը վեր բարձրացնելով՝
Մեր գլուխները պահենք սպասեով:
Չէ՞ որ, ինչքան էլ մեզ պահենք համեստ,
Արքան շարունակ պետք է մտածի, որ պարտք ունի մեզ.
Եվ մենք իրենից դժգոհ ենք սաստիկ,
Մինչև մի հարմար ժամանակ գտնի
Եվ մեզ հատուցի... մեր գլուխներով:
Արդեն տեսնում եմ, որ նա սկսում է
Մեզ վրա նայել դժգոհ հայացքով:

ՀՈՏՍՊԵՐ

Տեսնում եմ, տեսնում: Մենք պիտի վրեժ լուծենք նրանից:

ՎՈՒՍՏԵՐ

Դնաս բարով, զարմիկ: Կգործեմ միայն այն սահմաններում.
Որ ես նամակով կհրահանգեմ:
Երբ ժամը հասնի, — իսկ դա շատ մոտ է, —
Ես կմիանամ Գլենդոլֆերին և Մորտիմերին.
Եվ գործը այնպես կղասավորեմ, որ Վալեսի մեջ
Դու և Դուզլասը և մեր զինական բոլոր ուժերը
Գան համախմբվեն: Օ՛, բախար այն ժամ
Մեր կոտ բազկի մեջ կլինի հասսատ,
Այժմ պահում ենք. սակայն խիստ տարտամ:

ՆՈՐԹԵՄԲԵՐՆԵՐ

Գնաս բարով, Լիբայր: Ես մեծ հույս ունեմ մեր հաջողության

ՀՈՏՍՊԵՐ

**Ողջ լեւ. հուրերայր: Օ՛, դանդաղ ժամեր, սլացեմ արագ.
Որ շանթ ու սրով ուզամի դաշտի մեջ կոփենմ հաղթանակ:**

Գնում եմ:



Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Ե Ր Կ Ր Ո Ր Յ

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ռոշեստեր: Պանդոկի բակը:

Մտնում է առաջին կտուպանը մի լապտեր ձեռքին:

Ա. ԿԱՌԱՊԱՆ

Օհո՛, բող ինձ կախեն, Լքե հիմա առավոտյան ժամը չորսը չէ: Մեծ արջը կանգնած է ուղիղ նոր ծխնելույզի վերևում. իսկ մեր ձին դեռ բեռնրված չէ: Է՛յ, ախոռապա՛ն:

ԱՆՈՌԱՊԱՆ

(Ներսից), Հիմա՛, հիմա՛:

Ա. ԿԱՌԱՊԱՆ

Խնդրում եմ. Թումաս. վար առ Չարհաշի բամբը, տակը մեկ Երկու քաղիք փոխր. խեղճ գրաստի մեջքը բոլորովին լողփել է:

Մտնում է երկրորդ կտուպանը:

Բ. ԿԱՌԱՊԱՆ

Գրող՛ք տանի, սխեռն ու բակլան այստեղ գարնուրելի խոնավ են, դրանից էլ խեղճ գրաստների փորի մեջ նիւսմեր են առաջանում: Այս պանդոկում ամեն ինչ տակն ու վրա է ելել ախոռապետ Ռոբինի մահից ի վեր:

Ա. ԿԱՌԱՊԱՆ

Խե՛ղճ մարդ, կլ Երբևք ժպիտ շերեաց նրա երեսին այն օրից, երբ վարսակի գնեւը բարձրացան: Եվ դրանից էլ նա մեռավ:

Բ. ԿԱՌԱՊԱՆ

Իմ կարծիքով, Լոնդոնի ամբողջ ճանապարհի վրա սա ամենագարշելի հյուրանոցն է... լվերի կողմից: Ինձ այնպես են կծել, որ մարմինս նման է կարմրախայտի:

Ա. ԿԱՌԱՊԱՆ

Կարմրախայտի՛: Իսկ ինձ ծակծկեցին հենց առաջին ափորական; սկսյալ: Գեո ոչ մի ֆոխտունյա քաղաքոր իր օրում այդպիսի հարձակմ չի Լնթարկվել:

Բ. ԿԱՌԱՊԱՆ

Նրանք մեզ երբեք միզաման չեն տալիս. ստիպված միզում ենք բ խարիկի մեջ, իսկ դրանից այդտեղ լվեր են գոյանում, ինչպես գեա ձկների վտանները ֆաբերի արանքում:

Ա. ԿԱՌԱՊԱՆ

է՛յ, ախոռապան, չէ՛ որ ես ֆեզ կանչեցի: Շուտ այստեղ եկ, կախվե արժանի մարդ: Քեզ հետ Լմ, շտապի՛ր:

Բ. ԿԱՌԱՊԱՆ

25 Ես դեռ պետք է մի բուդ խոզի ապխտած միս և երկու բեռ կանապղպ տանեմ Չերինգ-կրոս:

Ա. ԿԱՌԱՊԱՆ

Տե՛ր իմ աստված, հնդկահավերը ֆիչ է մնում ֆաղցից սատկեն լ գամբյուլի մեջ: է՛յ, ախոռապան, ժանտախտը քափվի վրադ, ի՞նչ եղս ֆեզ. դու աչք չունե՛ս գլխիդ վրա, իլացե՛լ ես, ինչ է: Թող ես վերջ լ սրիկան լինեմ, եթե ֆո խելապատակը շարդելը նույնպիսի առափնի ս բարք չէ, ինչպես կոնծելը: Ն՛կ այստեղ. գրողի տարած, մի՛թե դու իս չունես:

Մանում է Գեղշիլը:

ԳԵԳՇԻԼ

Քարի լույս, կառապաններ: Ժամը ֆանի՛սն է:

Ա. ԿԱՌԱՊԱՆ

Մոտ ժամը երկուսն է կարծեմ:

ԳԵԳՇԻԼ

Մի ֆո լապտերը տուր ինձ, խնդրում եմ, տեսնեմ իմ ձին ախոռումն

Ա. ԿԱՌԱՊԱՆ

Քաշի՛ր ձեռքդ, քե բանը ինձ ձեռ առնելուն հասնի, էնպես ֆեզ ձեռ ա նեմ, որ մոլորվես:

ԳԵԳՇԻԼ

խնդրում եմ՝ ֆոնը տուր:

Բ. ԿԱՌԱՊԱՆ

Ես քեզ լապտեր տա՛մ: Կտամ, ինչու չէ, բայց ե՛րբ: Երբ նախ տեսնեմ, թե քեզ ինչպես են կախում:

ԳԵԴՇԻԿ

Իսկ դուք ո՛ր ժամին էք մտադիր Լոնդոն հասնել:

Բ. ԿԱՌԱՊԱՆ

Այն ժամին, որ հասցնենք մոմի լույսով անկողին մտնել, հիշտ եմ ասում: Գնանք, հարեան Մեգս, ժամանակն է պարոններին արթնացնել: Նրանք ուզում են միասին ճանապարհվել, որովհետև մեծ համալրուկներ ունեն:

Կառապանները գնում են:

ԳԵԴՇԻԿ

Է՛յ, պանդոկի սենեկապետ:

ՍՆՆԵԿԱՊԵՏ

(Ներսից) Մի ակնբարք, այդպես կպատասխանեք քակահատը:

ԳԵԴՇԻԿ

Նույն բանն է, երև ասեիր. «Մի ակնբարք այդպես է պատասխանում պանդոկի սենյակների սպասավորը», որովհետև դու քակահատից նույնքան ես տարբերվում, որքան գողության կարգադրիչը՝ գողությունը կատարողից: Չէ՛ որ մտահղացման պատիվը բռնն է:


Մանում է պանդոկի սենեկապետը:


ՍՆՆԵԿԱՊԵՏ

Քաբի լույս, պարոն Գեղշիլ, ամեն ինչ ընթանում է հիշա այնպես, ինչպես երևի երեկոյան ես ձեզ ասացի: Մեր պանդոկն է իջել մի հառուստ կալվածատեր Քենաի կողմերի անտառներից, որ իր հետ բերել է երեք հարյուր մարկ ոսկով: Ինձ լսեցի, թե ինչպես ընթրիքի ժամանակ հա այդ մասին պատմում էր իր ճանապարհի ընկերներից մեկին: Իսկ այդ ընկերը շատ նման է դրամական ֆննիչի: Նա էլ մի ծանր համալրուկ ունի, աստված գիտի՝ թե ինչ կա մեջը: Նրանք արդեն վեր են կացել և նախաճաշիկի համար պահանջում են ձու և կաթազ: Շուտով ճանապարհվելու են:

ԳԵԴՇԻԿ

60 Ա՛յ, կտեսնես, նրանք հանդիպելու են Սուրբ Նիկաղոսի քակահատներին: Թե չհանդիպեցին՝ այս վիզը քեզ լինի:





Արմավուրի քաղաքը

ՍԵՆԵԿԱՊԵՏ

Ինչի՞ս է հարկավոր քո վիզը, լավ կլինի պահես դահնի համար: Չէ՞ որ դու Սուրբ Նիկողոսին պաշտում ես, ոչ թե ի սեր հավատքի, այլ նրա համար, որ խիղնղ մահուր չէ:

ԳԵԴՇԻԼ

Գահի՞ն... Եվ դու ուզում ես ինձ սարսափեցնե՛լ այդ անունով: Եթե ինձ վիճակված է դահնի ձեռքով կախաղան բարձրանալ, ապա իմացիր, որ ես միայնակ չեմ լինի: Իմ կողքին անպայման նոնվելու է նաև պարոն Ջոնը, և նրա պարանը ավելի հաստ է լինելու, չէ որ նա, ինչպես գիտես, սովալլուկ նիհար մարդ չէ: Եվ ինչ է Ջոնը ուրիշների համեմատությամբ:

70 Մեր մեջ այնպիսի տրոյացիներ կան, հարպիկ սղաններ, որ դու երազել անգամ չես կարող: Հանուն գվարնության նրանք պատրաստ են փայլ ու պատիվ տալ մեր արհեստին, իսկ եթե գործը բռնվելուն հասնի, իրենց բարի անունը փրկելու համար, նրանք կարող են վայրկեանապես ամեն ինչ հարբել: Ես քնկերություն եմ անում ոչ թե ինչ-որ անտուն քափառաչրիկների հետ, ոչ թե նրանց հետ, որոնք պատրաստ են վեց պենիի համար զավազան իջեցնել գլխիդ, ոչ թե ինչ-որ կարմրաբեղ հարբեցողների հետ, այլ ազնվականների և անխոռվ սայրողների, ֆալաֆապետների և մեծահարուստների հետ, որոնք ընդունակ են շեշտակի հարվածը գերադասել խոսքից, խոսքը՝ խմիչքից, խմիչքը՝ աղոթքից: Եվ, սակայն, սատանա՛ն տանի, ես սուտ ասացի, որովհետև նրանք շարունակ աղոթում են իրենց սրբին՝ պետությանը, կամ, ավելի նիշտ կլինե՞ր ասել, ոչ թե աղոթում, այլ խժոռում են նրան, որովհետև ելնում ու իջնում են նրա վրայով և նրա կաշին մաշկելով՝ իրենց համար ոտնամաններ են շինում:

ՍԵՆԵԿԱՊԵՏ

Ինչպե՞ս. պետությունից ոտնամա՛ն: Իսկ այդ ոտնամանները վատ Լղանակին ջրից չե՞ն թրջվում:

ԳԵԴՇԻԼ

Թրջվում են, թրջվում են, բայց արդարադատության շնորհիվ չոր են դուրս գալիս ջրից: Մենք կողոպտում ենք լրիվ անվտանգ դարձած, ինչպես նիւն ասպետները՝ ամրոցների մեջ: Մենք գտել ենք այն ծաղիկը, որ մարդուն անտեսանելի է դարձնում և շրջում ենք աներևույթ:

88

ՍԵՆԵԿԱՊԵՏ

Ո՛չ, ձեզ ավելի շուտ աներևույթ է դարձնում գիշերվա խավարը, քան թե ինչ-որ ծաղիկ:

ԳԵՂՇԻԿ

Տո՛ւր ձեռքդ. դու կստանաս քո բաժինը մեր ընդհանուր կողոպուտից, ազնիվ մարդու խոսք եմ ասում:

ՍԵՆԵԿԱՊԵՏ

Ո՛չ, անազնիվ գողի խոսքը ինձ համար ավելի ընդունելի է:

ԳԵՂՇԻԿ

95 Դե, կորի՛ր. homo-ն¹ միակ հանաչված կոչումն է բոլոր մարդկանց համար: Ասա ախոռապետին, որ իմ ձին դուրս քաշի ախոռից: Մնաս բարով, ցնդած ծառա:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Մանապարհ Գեղշիլի մերձակայքում:

Մտնում են իշխան Հենրին և Փոինսը:

ՓՈԻՆՍ

Շո՛ւտ թափնվե՛ք, շոտ թափնվե՛ք: Ես փախցրել եմ Ֆալստաֆի ձին ու Ֆալստաֆը բարկությունից ծոմովում, կուչ է գալիս ինչպես խեժից կարծ-
րացած թավիչ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Մի կողմ քաշվե՛նք: (Նրանք առանձնանում են):

Մտնում է Ֆալստաֆը:

ՖԱԼՍՏԱՖ

Փոի՛նս, Փոի՛նս: Գրողը տանի քեզ, Փոինս, որտե՞ղ ես:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

(Առաջ գալով) Լոիր, փխված երիկամ, ի՞նչ ես գոռոցդ գցել:

ՖԱԼՍՏԱՖ

Ո՛ւր է Փոինսը, Հե՛լ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Նա բարձրացավ դեպի այն բլրի գագաթը: Մի գնամ տեսնեմ, կարո՞ղ եմ գտնել:

Մեկուսանում է, իբրև թե փնտրում է Փոինսին:

¹ Մարդ (լատ.):

ՏԱԼՍԱՏ

Օ՛, ինչ անիծյալ պատիժ է՛ ընկերանալ այս աեսակ գողերի հետ զբաղվել մարդկանց կողոպուտով: Այդ սրիկան փախցրեց իմ ձին և ո գիտի, թե որտեղ է կապել: Բավական է, որ մի շորս ֆայլ էլ ոտֆով գնա և ես ուղղակի շնչասպառ կլինեմ, ու... վերջ: Իսկ ես մեծ հույս ունեւ արժանավոր մահով ավարտել իմ կյանքի ուղին. եթե կախաղանի վր շնոնվեմ այդ սրիկային սպանելու համար: Արդեն ֆաւներկու տարի ինչ ես ամեն օր և ամեն ժամ երդվում եմ, որ այլես ընկերություն չեւ անի դրա հետ և սակայն շեմ կարողանում ազատվել այդ սրիկայի ր՛ կերությունից, կարծես կախարդված լինեմ: Գլուխս կտամ, եթե այդ շսւրագործը ինձ չի հարբեցրել սիրողական մոզիչ դեղով: Այլ կերպ յինձ չէր կարող. ես սիրողական դեղ եմ ըմպել: Փոի՛նս: Հե՛լ, ժանտախա կպչի ձեզ: Բարդո՛լֆ, Պե՛տո: էլ հնարավոր չէ: Ես համաձայն եմ ֆազ ցամահ լինել, ֆան թեւ այսուհետեւ մի ֆայլ առաջ շարժվել կողոպուտ ետեից: Թող ես ամենավերջին սրիկան լինեմ, եթե այս գող-ավագուկ ներին լֆելը և օրինավոր մարդ դառնալը նույնպիսի առաֆինի գործ չ՛ ինչպես կոնծելը: Ինձ համար ութ ոտնաշաֆ տարածություն ֆայլելու անցնելը, այն էլ անհարթ գետնի վրայով, հավասար է ուրիշի անցա յորանասուն մղոնին, և այդ ֆարասիրտ անզգամները այդ ֆանը հրա շալի գիտեն: էլ ի՛նչ գողություն, թֆած այդ զբաղմունքի վրա, եթե գսւղերը իրենք շեն կարողանում միմյանց հանդեպ ազնիվ լինել: (*Նրան սուլում են*): Թո՛ւն: Ժանտախար կպչի ֆուրիդ էլ: Շուտ ավեֆ իմ ձին խաբեբա սրիկաներ: Տվե՛ֆ իմ ձին, դուք ֆուրդ էլ կախվելու եֆ արժանի

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

(*Առաջ գալով*) Լոի՛ր, հաստաֆոր. շուտ պառկի՛ր, ախանջդ ամուր սեղ միր գետնին և լսիր, թեւ անցորդների ոտնաձայն շե՛ս առնում արդյոք՛:

ՏԱԼՍԱՏ

Իսկ դուք լծակնե՛ր ունեֆ, որ ինձ նորից վեր ֆարձրացնեֆ իմ պառկա տեղից: Գրո՛ղը տանի, մյուս անգամ ես իմ մարմինը ոտֆով ֆարշ շեւ տա այսպիսի հեռավորության վրա, թեկուզ ֆո հոր արֆունի ամբող զանձը խոստահան ինձ: Եվ դուք շե՛ֆ ամաշում ինձ այսպես շարաշա խաբելու համար:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ստո՛ւմ ես, ֆեզ շարաշար շեն խաբել, այլ ձիուց եւ գրկել:

ՏԱԼՍԱՏ

Խնդրում եմ, ֆարի իշխան Հել, օգնիր ինձ իմ ձին գտնելու: Օգնի՛ր պատվական թագավորի որդի:

Կորի՛ր, սրիկա՛, ես քո ախոռապա՛նն եմ, ինչ է:

ՖԱԼՍՏԱՖ

43 Գնա ուրեմն և թող քո արհայական ժառանգության ծնկակապերը կախադանի պարան դառնան քեզ համար: Եթե բռնվեմ, ես ձեզ վրա տեղեկություն տալով՝ բոլորիդ էլ մեջտեղ կփաշեմ, լավ իմացե՛ք: Եվ թող մի գավաթ գինին թույն դառնա ինձ համար, եթե ես բոլորիդ վրա տաղեր գրել շտամ և ամենագարշելի եղանակներով Երգել շտամ ամենուրե՛ք: Ատում եմ, երբ կատակը այսֆան հեռու է գնում և այն էլ... ոտնով:

Մանում և՛ն Գեղշիլը, Բարդուիթը և Պեպոն:

ԳԵԳՇԻԼ

Վե՛ր կաց:

ՖԱԼՍՏԱՖ

Կամա ախամա պիտի ոտքի ելնեմ:

ՓՈՒՆՈՎ

(Բարդուիթի և Պեպոյի հետ տուաջ դալով) Օ՛, սա մեր որսկան շունն է, ես նրա ձայնը նանաշում եմ: Հը, ի՛նչ լուր կա:

ԳԵԳՇԻԼ

Երեսներդ թափցրե՛ք, երեսներդ թափցրե՛ք, շտապ հագե՛ք ձեր դիմակները: Թագավորական գանձը բլուրից ցած են բերում, ու արհունի գանձարան տանեն:

ՖԱԼՍՏԱՖ

Մտո՛ւմ ես, սրիկա՛: Այդ գանձը թագավորական գինետուն է գնալու:

ԳԵԳՇԻԼ

Այնքան շատ է, ու բոլորիս հերիք կանի:

ՖԱԼՍՏԱՖ

Այո՛, կախվելու համար:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Պարոններ, դուք շուրջ նրանց առաջը կտրե՛ք այն նեղ արահետի վրա, իսկ ես և նեղ Փոփեսը մի քիչ ցած կիջնենք: Եթե նրանք ձեր գրոհից նողարեն, ապա մեզ հանդիպելով՝ կբռնվեն մեր կողմից:

ՊԵՏՈ

Նրանք ինչքա՞ն են:

ԳԵԳՇԻԼ

Մոտ ուր-տաս հոգի:

ՅԱԼՍՏԱՅ

Գրողը տանի՛, իսկ երև նրա՞նք մեզ կողոպտեն:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Օ՛. ինչ վախկոտն է այս հաստափոր Ջոնը:

ՅԱԼՍՏԱՅ

Անկասկած, ես ինչպե՞ս պատմեմ Ջոն Գոնտի պես նիհար չեմ, Հելլ, և այնուհանդերձ վախկոտ էլ չեմ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Այդ մեկն է կտեսնենք գործի մեջ:

ՓՈԻՆՍ

Լսի՛ր, Ջոն, ինչ ձեռքով եմ քեզ կանգնած է այն ցանկապատի Լաևում: Նրք հարկավոր կլինի, կարող ես այնտեղ գտնել: Մնաս բարով, և ինչպե՞ս պահիր:

ՅԱԼՍՏԱՅ

Իսկ հիմա, թեկուզ կախեն ինձ, ձեռքս չի բարձրանա նրա վրա:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

(Փոխանակ) Նեղ, որտե՞ղ են մեր մոմլարե քիկնոցները:

ՓՈԻՆՍ

(Իշխան Հենրուն) Այստեղ են, ձեռքի տակ: Թափնվե՛նք:

Իշխան Հենրին և Փոխան գնում են:

ՅԱԼՍՏԱՅ

Այժմ, պարոններ, ով բախտավոր է՝ թող իր բաժինը բացի: Ամեն ով իր գործին:

Գալիս են մի քանի նամակագրեր:

Ա. ՃԱՄՓՈՐԳ

Գնա՛նք, հարևան, տղան մեր ձիերը կիջեցնի սարից: Մի քիչ ֆայլենք, որ մեր ոտները բացվեն:

ԳՈՂԵՐ

Կա՛նգ առեք:

ՀԱՄՓՈՐԴՆԵՐ

Օ՛, գթա մեզ, տեր աստված:

ՅԱԼՍԱՅ

Զա՛րկ, տապալի՛ր դրանց, կոկորդները կտրիւր այդ անզգամների: Ախր զո՛ւք, պոռնկողիք քրքուտներ, հաստափոռ սրիկաներ: Դրանք մեզ՝ երիտասարդությանը ատում են: Իսկ մենք ապրել ենք ուզում: Զա՛րկ, կոկորդալի՛ր դրանց:

ՀԱՄՓՈՐԴՆԵՐ

Ա՛խ, մենք ավերվեցինք, ընդմիջտ գրկվեցինք ապրուստից, քե՛ մենք և քե՛ մեր բնաանիքները:

ՅԱԼՍԱՅ

Բոլորիդ կախել է հարկավոր, մեծափոռ սրիկաներ: Այդ դո՛ւք եք ապրուստից գրկվողը: Օ՛, դուք գեր, բթամիտ համբակներ: Երանի՛ թե դուք ձեր ամբողջ գանձն ու կարողությունը ձեզ հետ վերցրած լինեիք: Դե՛ շարժվե՛ք, խոզի ապուխտներ, շարժվե՛ք: Մի այս սրիկաներին տեսեք, շարժվե՛ք ասում եմ: Մենք՝ երիտասարդներս նույնպես ապրել ենք ուզում: Դուք գերագույն երդվյալ դատավոր եք, այնպես չէ՛: Հիմա մենք ձեր դատը կտեսնենք: *(Նրանք կողոպտում են ճամփորդներին և կապտում են նրանց: Մտնում են իշխան Հենրին և Փոինսը՝ ծպտված):*

ԻՆՏԱՆ ՀԵՆՐԻ

Գողերը կապել են այդ ազնիվ մարդկանց: Այժմ ես և դու կարող ենք գողերին կողոպտել և ուրախ ստով հանապարհվել Լոնդոն: Այդ մասին եղած խուսակցությունը կտեի մի շաբաթ, ծիծաղը՝ մի ամիս, իսկ հմայիչ կատակը՝ դարեր:

ՓՈԻՆՍ

Թափնվենք, ոտնաձայն եմ առնում: Նրանք գալիս են:

Թափնվում եմ:

Գողերը վերադառնում են:

ՅԱԼՍԱՅ

Դե՛, բարեկամներ, եկեք այժմ շտապ բաժանենք մեր կողոպուտը, որ լույսը չբացված՝ ձիերի վրա լինենք: Այդ իշխանը և Փոինսը փամփենք երկշտաներ են: Եթե ես նիշտ չեմ նրանց վերաբերյալ, ուրեմն, աշխարհի երեսին արդարություն չկա: Այդ Փոինսը նույնիսկ ավելի վախկոտ է, քան վայրի բաղը:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

ՁԼԵ ՎՈՂԵՐ՝Ր:

ՓՈԻՆՍ

ՍԵՐԻԿԱՆԵ՛Ր:

Կողոպտար բաժանելու միջոցին իշխան Հենրին և Փոինսը հարձակվում են նրանց վրա: Բոլորը փախչում են՝ ավարը թողնելով: Ֆալստաֆը մեկ-երկու հարվածից նեղա նույնպես փախչում է:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Օ՛, ինչ հեշտությամբ տիրացանք գանձին,
Գե՛, այժմ ուրախ դեպի ծիերը:
Գողերն անաբեկ այնպես ցրվեցին,
Որ շեն հանդգնի իրար գլխի գալ,
Ընկերն ընկերոջ կարծելով իրեն հսկող գործակալ:
Երբա՛նք, ազնիվ Նեդ: Ջոն Ֆալստաֆը սոսկումից Լրտնած
Փախչում է հիմա իր հալած նարայով
Ամուլ երկիրը պարարտացնելով:
Կարող էի գրալ, եթե շիներ նա ծիծաղելի:

ՓՈԻՆՍ

Այդ անզգամը ինչպե՛ս էր գոռում:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Վարկվորության ամբողջ:

Մտնում է Հոասպերը մի նամակ կարդալով:

ՀՈՏՍՊԵՐ

«Ինչ վերաբերում է ինձ, տեր իմ, ապա հավատացե՛ք, որ ինձ համար չափազանց հանելի կլինե՛ր լինել այդտեղ, հանուն այն սիրո, որ ես տա՞ծում եմ ձեր տան հանդեպ»: Օ՛, այդ նրա համար չափազանց հանելի է: Եթե իսկապես նա հարգանք է տա՞ծում մեր տան հանդեպ, ինչո՛ւ հասլա չի երևում այստեղ: Նա դրանով ցույց է տալիս, որ իր սեփական մարագր ավելի է սիրում, քան թե մեր տունը: Շարունակությունը տեսնենք. «Այն նպատակը, որ դուք ձեռնարկում եք՝ վտանգավոր է»: Դե, դա հայա՛նի բան է. մրսելը, քնելը, նույնիսկ խմելը վտանգավոր է: Սակայն թույլ

տվե՛ք ձեզ ասել, պարոն համբակ, որ եղիւնչներով ծածկված այդ վտանգների միջից մենք պոկու՛մ ենք այն ծաղիկը, որի անունն է ապահովութիւն: «Այն նպատակը, որ դուք ձեռնարկու՛մ եք՝ վտանգավոր է, ձեր հիշատակած բարեկամները անհուսալի են, ժամանակը անբարեկամաւ է և ձեր ամբողջ դավադրությունը թեթեւաշ է հակակշռելու այդքան ուժեղ մի դիմադրության»: Ահա՛ թե ինչ. իսկ ես ստում եմ նորից, որ դուք դատարկացուիս մի երկչուտ եք և ստում եք շարաշար: Ձեր գանգի մեջ ուղեղի նշույլ չկա: Վկա՛ է աստված, որ դավադրությունը ավելի լավ է մտահոգացված, քան մինչև այժմ Եղածները, մեր բարեկամները հավատարիմ են և հուսալի: Լավ ծրագիր, լավ բարեկամներ և ակնառու հույսեր: Հոյակա՛յ ծրագիր և հուշալի՛ բարեկամներ: Այս ի՛նչ անհոգի սրիկա է: Ձե՛՛ որ ինքը՛ Յորժի Եպիսկոպոսն է հավանություն ավել դավադրության ծրագրին և գործողության հիմնական ընթացքին: Երգվում եմ, եթե ես հանդիպեի այդ սրիկային, գանգը կփշրեի հենց իր կնոջ հովանոցով: Մի՛թե իմ հայրը, իմ հորեղբայրը և ես մասնակից չենք այդ գործին: Իսկ լորդ Էդմունդ Մորտիմե՛րը, Յորժի Եպիսկոպո՛սը, և Օվեն Գլենդովե՛րը: Նաև Գուլլա՛սը: Մի՛թե նրանք իրենց նամակներում չխոստացան, որ իրենց զօրքերով կմիանան ինձ Եկող ամսվա իննիս: Մի՛թե մի քանիսը նրանցից դեռ չեն ճանապարհավել իրենց զօրքով: Ի՛նչ կուսպաշտ, խառնագնաց է այս մարդը, մի կատարյալ անհավատ: Ահա՛ թե ինչ. նա իր վախի անկեղծությունից և իր փոքրոգությունից կարող է գնալ թագավորի մոտ և մեր ամբողջ մտահոգացումները մատնել նրան: Օ՛, քիչ է մնում զայրույթից սլայրեմ այդ կաթնաշիջուկին այսպիսի մի պատվավոր սխրագործության մղելու համար: Անիծյա՛լ լինի: Թող գնա զեկուցի թագավորին: Մենք լրիվ կազմ ու պատրաստ ենք: Ես հենց այս գիշեր մեկնում եմ:

Մտնում է Լեդի Պեռսին:

Եկա՛ր, տիկինս, գործերն ինչպես են,
ես երկու ժամից պիտի բաժանվեմ:

ԼԵԴԻ ՊԵՐՍԻ

Օ՛, իմ ամուսին, ասա՛, ինչո՞ւ ես դու այդպես մեճակ,
Ի՛նչ մեղք եմ գործել, որ ուղիղ երկու ծանրագին շարք
վտարված եմ ես քո առագաստից:
Օ՛, առա՛, տե՛ր իմ, այդ ի՛նչ հոգսեր են
Կողոպտել քեզնից քո ախորժակը,
Քաղցրիկ հահույժն ու ոսկեղեն քունը:
Ինչո՞ւ աշխերդ դու միշտ պահում ես գետնին խոնարհած

Եվ երբ նստած ես, հանախ ցնցվելով
 Ոնգոսանում ես վեր ին նստած տեղից:
 Ինչո՞ւ ես կորցրել դու ին այտերի վառ քարմուրջունը
 Եվ, ինձ գրկելով իմ հանույժներից ու իրավունքից,
 Գրանի հանձնել ես մտալ խոհեիին ու ժանտ տրամուրջան:
 Ես կողմիդ նստած՝ հսկել եմ հանախ վրդովված փունդ
 Եվ լսել բոլոր պատմություններդ ռազմերի մասին.
 Բարկանում էիր գեպի ետ ուսնող նժույզիդ վրա
 Եվ բարձր գոռում. «Անեկյոտ հառա՛ջ, դեպի ռազմի դաշտ»:
 Հարձակո՛ւմ, նեղֆո՛ւմ, խրամա՛տ, վրա՛ն,
 Պատնեշնե՛ր, նակա՛տ, գետակամուրջնե՛ր,
 55 Բազիլի՛սկ, քնդանո՛ր, վիշապ-հրանո՛ր,
 Գեռիճե՛ր, փրկա՛նի, և դիճե՛ր, դիճե՛ր,
 Գծնի տեսիլներ գահավեժ կովի.
 Այդ մասին էիր անվերջ բարբաջում:
 Ոգիդ այնպես էր կովով համակված
 Եվ դու ֆնիդ մեջ այնպես զրգոված,
 Որ ին հակառին ֆրտինի էր կանգնել մարգարտանման,
 Ինչպես վրդովված գեաակի մանրիկ պղպջակները:
 Խիստ տարօրինակ փոխվում էր դեմֆդ
 Եվ շունչդ հանկարժ կարծես հատնում էր,
 Այն մարդու նման, որ մի հապշտապ գործով վազելիս
 Զայում է շունչը: Այս նշանները ինչի՞ արդյունի են:
 Ես նկատում եմ, որ ֆեզ սոսկալի մի հոգս է տանջում,
 Կինդ այդ մասին պետք է իմանա,
 Բա՛ց արա իմ դեմ ամեն վիշտ ու ցավ,
 Այլպես դու ինձ չես սիրում բնավ:

ՀՈՏՄՊԵՐ

Հե՛յ, ո՛վ կա այդտեղ:

Մտնում է ծառան:

Զիլյամսը մեկնե՛ց, նամակս տարա՛վ:

ՄԱՌԱՆ

Նոր մեկնեց, տե՛ր իմ. նիշտ մի ժամ առաջ:

ՀՈՏՄՊԵՐ

Զիերն ի՞նչ եղան. Բեռլերը Եկա՛վ շերիֆի մոտից:

ՄԱՌԱՆ

Նոր եկալ, տեր իմ, բայց ընդամենը մի ձի է բերել:

ՀՈՏՍՊԵՐ

Ո՞րն է բերածը. ականջ կտրա՞ծն է, շիկակարմի՞րը:

ՄԱՌԱՆ

Այդ ձին է, տեր իմ:

ՀՈՏՍՊԵՐ

Իմ բախտի գահը նրա քամբին է:
79 Իսկույն կհեծնեմ: O espérance!¹
Բառլերին ասա, թող պուրակ տանի:

Մտռան գնում է:

ԼԵԴԻ ՊԵՐՍԻ

Բայց լսի՛ր, տեր իմ:

ՀՈՏՍՊԵՐ

Ի՞նչ կա, իմ տիկին:

ԼԵԴԻ ՊԵՐՍԻ

Ի՞նչն է քեզ տանում այսանդից հեռու:

ՀՈՏՍՊԵՐ

Իմ ձին, սիրելիս, իմ ձին է տանում:

ԼԵԴԻ ՊԵՐՍԻ

Ա՛խ, դու, շորգլուխ, կամակոր կապիկ,
Դու շատ ավելի դյուրագրգիռ ես և ամահանո,
Քան թե աֆիսը: Կատակ չեմ անում,
Պարտ եմ գիտենալ, թե ինչ բան է քեզ այդպես տազնապում,
Եվ ես կիմանամ: Մի երկյուղ ունեմ,
Գուցե Մորտիմեր Էդբայրս է վնոել ափսոսալ թագին
Եվ քեզ խնդրել է, որ օգնես իրեն: Եթե դու գնաս...

ՀՈՏՍՊԵՐ

Ոտքով այդպիսի հեռավորություն, կհոգնեմ. անգին:

ԼԵԴԻ ՊԵՐՍԻ

Հերի՛՛ֆ է, հերի՛՛ֆ, թուրա՞կ ես, ինչ է:

¹ Հույս (ֆրանս.):

Դու հարցիս կարգին մի պատասխան տուր,
Հաստատ եմ ասում, ես քո նկույթը կկտրեմ, Հարրի:
Եթե ամեն քան դու ինձ նշտուրեն շիտտովանես:

ՀՈՏՍՊԵՐ

Գնա, ժամագող, մի՛ սիրաշահիր, գնա՛, իմ անգին,
Ես քեզ չեմ սիրում. իմ հոգսը դու չես,
Ժամանակ չունեմ տիկնիկ խաղացնել,
Ոչ էլ զբաղվել շուրթերի անմիտ նիզակախաղով:
Ահնաշաղ աչտեռ. գլուխսներ նեղված
Եվ անքի՛վ, անթի՛վ: Իմ սիրածն այդ է: Ի՞նչ եղավ իմ ձին:
13 Ուրիշ ի՞նչ ունես դու ինձ ասելու, իմ Կատարինե:

ԼԵՂԻ ՊԵՐՍԻ

Դու ինձ չե՞ս սիրում, իրա՞վ չես սիրում:
Շատ լավ, մի սիրիր: Եթե այդպես է,
Ես էլ իմ հանդես կլինեմ անսեր: Դու ի՞նձ չես սիրում,
Բայց ո՛չ, ասա ինձ, դու կատակո՞ւմ ես, թե՛ խոսքդ լուրջ է:

ՀՈՏՍՊԵՐ

Ուզո՞ւմ ես տեսնել աշտանակելն իմ, երթանք ուրեմն,
Երբ իմ նժույզի թամբին բարձրանամ՝ պատրաստ եմ երգվել,
Թե ես ինչպիսի՞ անհուն սիրով եմ քեզ սիրում, անգին:
Մի նզնի սակայն հարցուփորձել ինձ,
Թե ուր եմ գնում և ինչու համար:
Եթե գնում եմ, պարզ է ուրեմն, որ պետք է գնամ
Եվ ավելորդ է խոսել այդ մասին: Արդ, ևկ ամփոփենք.
Ես այս երեկո պետք է լքեմ քեզ, իմ ազնիվ տիկին:
Եմաստուն կին ես, ես այդ քաջ գիտեմ,
Բայց ոչ առավել, քան Պերուս կինը: Անդրդվելի՛ր ես:
Բայց կին ես դարձյալ: Գաղտնապահությամբ
Դու քո սեռի մեջ մրցակից չունես: Եվ ես վստահ եմ,
Որ դու չես պատմի ինչ որ չգիտես:
Ա՛յ թե ինչ շարիվ հավասարում եմ քեզ:

ԼԵՂԻ ՊԵՐՍԻ

Ինչպե՞ս: Օ՛, վայ ինձ, չափդ այդքա՞ն է:

ՀՈՏՍՊԵՐ

Ոչ մի մատնաշափ ավելի հեռու: Բայց լսի՛ր, անգին,
Ուր ես եմ գնում, դու էլ պիտի գաս և անմիջապես:

Այսօր ես կերթամ, վաղը դու մեկնիր.

Գո՛հ ես: Պիտի գա՛ս:

ԼՆԳԻ ՊԵՐՍԻ

Այո՛, ստիպված:

Գնում էն:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Զ Ո Ր Ր Ո Ր Դ

Ծառչիփ: «Վարազի գլուխ» պանդոկը:

Մտնում է իշխան Հենրին:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Նեղ, խնդրում եմ՝ դուրս եկ այդ նարպահոտ սենյակից, որ միասին մի լավ ծիծաղենք:

Մտնում է Փոփոսը:

ՓՈՒՆՍ

Ուտե՛ղ էիր, Հել:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Երեք հաստագլուխ ապուշների հետ, երեք-չորս տասնյակ տակաոների միջև սեղմված: Ես այդտեղ հնչեցրի նվաստության ամենասուտի՞ն լարը: Ես այնտեղ եղբայրացա պանդոկի մի ֆանի ծառաների հետ, որոնց անունները կարող եմ մեկ առ մեկ թվել, Թումաս, Դիկ և Ֆրենսիս: Նրանք հանուն իրենց հոգու փրկության երդվեցին, որ թեպետ ևս իշխանն էմ Վալեսի, բայց թագավորն եմ խոնարհության և համարձակորեն հայտարարում են, որ ես իսկական կորնթական եմ, մի աշխույժ և քնկերասեր տղա, զուրկ Ֆալստաֆի գոռոզությունից. որ, երբ ես Անգլիայի գահին բարձրանամ, «Ծառչիփի» ամբողջ այդ զվարթ երիտասարդությունը կանգնած կլինի իմ թիկունքին: Թունդ կոնծելը նրանց մոտ կոչվում է բուսրագույն ներկվել և եթե դու խմելիս շունչ ես ֆաշում, նրանք բղավում են. «Կոնծի՛ր մի շնչով» և ստիպում են ֆեզ գավաթը մի քափով մինչև վերջը դատարկել: Մի խոսքով, ընդամենը մի ֆառորդ ժամում ես այնպիսի առաջադիմության կատարեցի. որ կարող եմ նստել և կոնծել ուզածդ կարասյազործի հետ և խոսել նրա հետ իր սեփական լեզվով իմ ամբողջ կյանքում: Հավատացնում եմ ֆեզ, Նեղ, դու շատ բան կորցրիր, որ ինձ

հետ շմասնակցեցիր այդ պատվաւոր զբաղմունքին: Բայց, սիրելի նեղ, որպեսզի ավելի փաղցրացնեմ ինձ անց այդ էլ փաղցր անունը, վերցրու այդ գրոշանոց սառնաշաֆարը, որ հենց նոր իմ բուրը կոխեց ծանօթ մատովակներից մեկը, մի մարդ, որ իր ամբողջ կյանքում երբեք ուրիշ անգլերեն չի խոսել և գործածել է ընդամենը երկու-երեք նախադասութիւն «Ուր շիլինգ և վեց պենի» և «Քարի գալուստ» հետեյալ բարձրակող հավելումով. «Իսկո՛ւյն, իսկո՛ւյն, պարոն», «Դուք պարտք եք մի շիշ մուսկատ կուսնեղջյուրի սենյակից» և այլն: Բայց, լսի՛ր, նեղ. մեզ հարկաւոր է մի կերպ ժամանակ վատնել մինչև Ֆայստաֆի գալը: Խնդրում եմ, գնա հարեան սենյակը, որ ես հարցուփորձ անեմ իմ մատովակին. թե նա ինչ նպատակով այդ սառնաշաֆարը իմ բուրը կոխեց: Դու այդտեղից շարունակ բարձրաձայն կկոչես «Ֆրենսի՛ս», առանց ընդհատելու, որպեսզի նա չկարողանա ինձ որևէ պատասխան տալ, բացի կրկնելուց «Իսկույն, պարոն»: Դե՛. շո՛ւտ գնա: Ես մեզ կսովորեցնեմ. թե դա ինչպես պետք է արվի:

Փոփեսը գնում է:

ՓՈՒՆՍ

(Ներսից) Ֆրենսի՛ս:

ԻՇԽԱՆ ԶԵՆՐԻ

Հրաշալի է:

ՓՈՒՆՍ

(Ներսից) Ֆրենսի՛ս:

Մտնում է Ֆրենսիսը:

ՖՐԵՆՍԻՍ

Իսկո՛ւյն, իսկո՛ւյն, պարոն: Մի տես՝ ինչ է հարկաւոր «Նաու» սենյակին, Ռալֆ:

ԻՇԽԱՆ ԶԵՆՐԻ

Այստեղ եկ, Ֆրենսի՛ս:

ՖՐԵՆՍԻՍ

Ի՛նչ կհրամայե՛ք, պարոն:

ԻՇԽԱՆ ԶԵՆՐԻ

Քեզ ինչֆա՛ն է մնացել ծառայելու, Ֆրենսիս:

ՖՐԵՆՍԻՍ

Հինգ տարի, պարոն, այնքան որքան...

ՓՈՒՆՍ

(Ներսից) Ֆրենսի՛ս:

ՖՐԵՆՍԻՍ

Իսկո՛ւյն, իսկո՛ւյն, պարոն:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Հինգ տարի՛: Սուրբ կույսը վկա, դու դեռ երկար պիտի շարշարվես անագե ամանները զնգացնելով: Ասա՛ ինձ, Ֆրենսիս, մի՛թե դու այնքան փառաբան չունես վախկոտ ձեռնալ քո պայմանագրի հանդեպ և նրան մի զույգ կրունկ ցույց տալով՝ փախչես ազատվես նրանից:

ՖՐԵՆՍԻՍ

Օ՛, պարոն, պատրաստ եմ երդվել Անգլիայում եղած բո՛լոր սուրբ գրքերի վրա, որ իմ սրտում ես այդքան փառաբանում...

ՓՈՒՆՍ

(Ներսից) Ֆրենսիս՛ս:

ՖՐԵՆՍԻՍ

Իսկո՛ւյն, իսկո՛ւյն, պարոն:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Դու ֆանի՛ տարեկան ես, Ֆրենսիս:

ՖՐԵՆՍԻՍ

55 Հապա մի տեսնեմ, Միխայել հրեշտակապետի տանին կլինեմ...

ՓՈՒՆՍ

(Ներսից) Ֆրենսիս՛ս:

ՖՐԵՆՍԻՍ

Իսկո՛ւյն, պարոն: Տե՛ր իմ, խնդրում եմ, մի՛ բռայե սպասե՛ք, ես հիմա կգամ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

59 Բայց, ո՛չ. լսի՛ր, Ֆրենսիս, այն սառնաշափարք, որ դու ինձ տվիր՝ հագիվ մի պենի արժեք:

ՖՐԵՆՍԻՍ

Օ՛, տե՛ր ասաված, երանի՛ քե երկու պենի արժե՛նար:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ես դրա համար պատրաստ եմ փանհագար շիլինգ տալ լեզ: Պահանջի՛ր, երբ լեֆո ուզի և դու կստանաս:

ՓՈՒՆՑ

(Ներսից) Ֆրենսիսի՛ս:

ՅՐԵՆՍԻՍ

Իսկո՛ւյն, իսկո՛ւյն:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Իսկո՛ւյն, Ֆրենսիս: Ո՛չ. Ֆրենսիս, վաղը կամ հինգշաբթի, Ֆրենսիս: Մի խոսով, երբ քեզ հարմար է: Բայց, լսի՛ր, Ֆրենսիս:

ՅՐԵՆՍԻՍ

Ի՞նչ կհրամայե՛ք, տեր իմ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Գու համաձա՛նջն ես կողոպտելու կաշվեբանկոն, բյուրեղափայլ կոճակներով այն պարոնին, որ մաքուր սափրված է, որի մատին ազաթե մատանի կա, սրունքներին՝ գորշ գույպաներ բողբոջա կապիչներով, որ փաղցրաբերան է և իսպանական ֆակ ունի:

ՅՐԵՆՍԻՍ

Օ՛, տեր իմ աստված, դուք ի՞նչ ե՛ք ուզում ասել:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Է՛, ես տեսնում եմ, որ դու միայն մի բանի ես ընդունակ՝ մուգ կաւմիւր գինի մատուցել: Բայց, զգո՛ւյշ կաց, Ֆրենսիս, որ ես կտավե սպիտակ բանկոնը շկեղտոտվի: Բարբառի երկրում այդ բանը ավելի քիչ է պատահում նույնիսկ:

ՅՐԵՆՍԻՍ

Ի՞նչը, պարոն:

ՓՈՒՆՑ

(Ներսից) Ֆրենսիսի՛ս:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Դե կորի՛ր, անզգամ, մի՛քե չես լսում, որ քեզ կանչում են:

Նրանք երկուսով սկսում են կանչել Ֆրենսիսին: Վերջինս շժմած կանգնում է և չի իմանում դեպի որ կողմը գնալ:

Մտնում է գինեվաճառը:

ԳԻՆԵՎԱՃԱՌ

Ի՞նչ ես շժմած կանգնել: Մի՛քե չես լսում, որ քեզ կանչում են: Մի տես, ներսում եղած այն հյուրերը ի՞նչ են պահանջում: (Ֆրենսիսը գնում)

է): Տեր իմ, Զոն Ֆալստաֆը իր կես դյուժինը բնկերներով կանգնած է շեմֆին: Թույլ կտա՞ր դուր բանամ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Մի քիչ թող սպասեն, հետո բաց կանեն: (Գլխեկաճառը գնում է):
Փոխու:

Մտնում է Փոխու:

ՓՈՒՆՍ

Իսկո՞ւյն, իսկո՞ւյն, պարոն:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Լսիր, Ֆալստաֆը և մյուս զոդերը կանգնած են դռան առաջ: Ա՛յ թե կգլարնանան, հա՛:

ՓՈՒՆՍ

Ուրախ, անհոգ ծղրիղների պես: Բայց ասա՛ դու ինձ, թե այդ ամբողջ նարպիկ խաղը, որ սարքեցիր այդ ծառայի գլխին, ի՞նչ նպատակ ուներ և ինչով վերջացավ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ես հիմա տրամադիր եմ բոլոր տեսակի զվարճությունների, որ ձեռնարկվել են նախահայր Ադամի հինավուրց ժամանակներից ի վեր մինչև այս կես գիշերային տասներկուերորդ նորածին ժամը: (Մտնում է Ֆրենսիս-սիսը): Հիմա ո՞ր ժամն է, Ֆրենսիս:

ՖՐԵՆՍԻՍ

Իսկո՞ւյն, իսկո՞ւյն, պարոն:

Գնում է:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

102 Եվ սրան կին է ծնել: Թուրակի բառսպաշարն ավելի շատ է, քան մարդ կոչվող այդ թշվառականի: Նրա միակ զբաղմունքն է սանդղուներով վեր ու վար վազել, իսկ բովանդակ պերճախոսությունը՝ հաշիվ ներկայացնելը: Այս բոլորն էս հոգեկան ավելի ուրախ տրամադրության մեջ եմ, քան թե Պերսի Հոտսպերը Շոտլանդիայում: Նա նախահաշից առաջ վեց-յոթ դյուժին շոտլանդացի է սպանում, լվանում է ձեռքերը և ասում է կնոջը. «Կու՛շի՛ այս խաղաղ կյանք, էլի՛ գործ տվե՛ք»: Կինը հարցնում է. «Յ՛, իմ բանկագին Հարրի, դու այսօր քանի՞ մարդ սպանեցիր»: «Իմ ձիուն ջուր տվե՛ք, — ասում է նա և մի ժամ հետո պատասխանում է կնոջը. «Մոտ քառասուն մարդ, մի մեծ բան չէ»: — Խեղում եմ Ֆալստաֆին ներս կանչիր: Ես ինձ կձեռնարկեմ իբրև Պերսի, իսկ այդ անիծյալ մսագունդը

բող ներկայացնի նրա կնոջը՝ լեզի Մորտիմերին «Rivo»—այսպես են գոռում հարբածները: Ներս կանչիր այդ կողոսկրին, այդ խոզանարային նրավիրի ներս:

Մտնում են Ֆայստաֆը, Գեդշիլը, Բարդոլֆը և Պետուն:
Նրանց ետեից գալիս է Ֆրենսիսը՝ ձեռքին գինի:

ՓՈՒՆՍ

Բարի գալուստ, Ջեկ. որտե՞ղ էիր այս ամբողջ ժամանակ:

ՅԱԼՍԱՆ

Ժանտախար լափի բոլոր վախկոտներին, և վրեժ, և շանթ նմանապես: Ամե՛ն, ամե՛ն: Մի բաժակ գինի տո՛ւր, տղաս: Լավ է գնամ գուլպա գործեմ, գրադվեմ դրանք կարկատելով և ներբաններ լցնելով, քան թե այսպիսի կյանք վարեմ: Ժանտախար լափի բոլոր վախկոտներին: Մի գավար գինի տուր, սրիկա: Մի՛թե էլ ոչ մի առափնի մարդ չմնաց :

Խմում է:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

11. Եթե ուզում ես տեսնել, թե ինչպես է Տիտանը համբուրում կարագով լի ամանը (օ՛, գրասիրտ Տիտան) և կարագը հալչում է արևի փողջ ակնարկներից, այդ դեպքում հայացի՛ր այս նարայի զանգվածին ուղղի՛ր:

ՅԱԼՍԱՆ

10. Ա՛խ դո՛ւ, սրիկա՛, գինու մեջ դարձյալ կիր ես խառնել: Սրիկայից ինչ կարելի է սպասել, միայն սրիկայություն: Եվ սակայն երկչոտ մարդը ավելի վատ է, քան թե այն մի բաժակ գինին, որի մեջ կիր է խառնված. նողկալի՛ երկչոտ, գնա՛ քո նանապարհով, ձերուկ Ջեկ, մեռի՛ր, երբ ուզում ես: Թող ինձ փորի խավյարը դատարկած աղածուկ կոչեն, եթե արիությունը, իսկական արիությունը չի անհետացել երկրի երեսից: Ամբողջ Անգլիայում միայն երեք կարգին մարդ է գերծ մնացել կախաղանից, որոնցից մեկը շատ գեր է և սկսել է ձերանալ, և բող սատված օգնի նրանց: Չէ՛, փչացել է աշխարհը, ասում եմ ես: Նրանի՛ թե ես ջուլհակ լինեի, կարողանայի սաղմոսներ . երգել կամ որևէ ուրիշ բան: Ժանտախար լափի բոլոր վախկոտներին, կրկնում եմ նորից:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Հր, ի՞նչ կա, բողյա հակ, ի՞նչ ես ֆթիդ տակ մրթմրթում:

ՅԱԼՍԱՆ

Մի սրա՛ն տեսե՛ք: Եվ սա թագավորի որդի է: Թող իմ երեսին այլևս

մագ չբուսնի, էրէ ես փայտյա սրով քեզ շվտարեմ քո քաղաքը ուր յու-
նից և բոլոր հայատակներիդ վայրի սագերի հոտի պես շփշեմ քո առջևով:
Եվ քեզ են անվանում վալեսի իշխան:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Մի ասա տեսնենք ի՞նչ է պատահել, պոռնկորդի ցմփոր:

ՅԱԼՍՍԱՅ

Եվ դու վախկոտ չե՞ս, պատասխանիր ինձ. և Փոփոսն էլ նմանապես:

ՓՈՒՆՍ

Օ՛, գրողը տանի: Լսի՛ր ինձ, հարափ որովայն, էրէ մեկ անգամ էլ
հանդգնես ինձ վախկոտ կոչել, վկա է աստված, ես քեզ կխոցեմ:

ՅԱԼՍՍԱՅ

Քեզ վախկոտ կոչեցի: Ո՛չ, դու դժոխքի բաժին կդառնաս ավելի վաղ,
քան թէ ես ժամանակ կունենամ քեզ վախկոտ անվանել: Ես սիրով հա-
զար ֆունտ կտայի, որ սովորեի քեզ պես արագ վազել: Դուք երկուսդ էլ
բավականաչափ ուղղածից ուտե՛ր ունեք և ձեր փույթը չէ, թէ ով կտեսնի
ձեր մեջքը: Այդպե՛ս եք հասկանում ընկերներին օգնելը: Անիծվի՛ այդ-
պիսի օգնությունը: Ձեզնից ո՛վ կհամարձակվի ուղիղ նայել երեսիս: Մի
բաժակ գինի տվե՛ք ինձ: Ամբողջ օրը մի կարթիլ խմած չկամ, սրիկա լի-
նեմ, թէ սուտ եմ ասում:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Օ՛, սրիկա: Դու դեռ նույնիսկ քո շուրթերը չես սրբել վերջին խմածից:

ՅԱԼՍՍԱՅ

Միևնույն է: Դարձյալ կրկնում եմ, ժանտախտը լափի բոլոր վախկոտ-
ներին:

(Խմում է):

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Թայց ի՞նչ է պատահել:

ՅԱԼՍՍԱՅ

Ի՞նչ է պատահել: Պատահել է այն, որ մեզնից շոքս հոգի այս առա-
վոտյան հափշտակել են հազար ֆունտ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Իսկ ո՞ւր են այդ փողերը, Ձեկ: Ո՛րտեղ են:

ՅԱԼՍԱՅ

Որտե՞ղ են: Խլեցին մեզնից: Մի հարյուր մարդ ըստ վեց մեռ խեղճ չորս հոգու վրա:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ինչպե՞ս: Հարյուր մա՞րդ:

ՅԱԼՍԱՅ

Սրիկա՞ լինեմ, եթե ես ամբողջ երկու ժամ նախատ նախառի մարտ շեմ մղել մի դյուծին հափշտակիչների դեմ: Հրաշխով փրկվեցի: Ուր անգամ իմ բանկոնը խոցվեց, չորս անգամ՝ իմ անդրավարտիք: Իմ վահանը կտոր-կտոր եղավ երկայնքով ու լայնքով, իմ սուրբ բրազավ ձեռքի սղոցի պես, ecce signum¹: Ես դեռ երբեք այսքան փառաբար շեմ կրովել տղամարդ դառնալու օրից ի վեր: Հարցե՛ք. եթե նրանք ունեւ բան ավելացնեն եղածի վրա, կամ պակաս ասեն, ուրեմն նրանք սրիկանե են և վիժվածքներ խավարի:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ասացե՛ք, պարոններ, դեպքը ինչպե՞ս է եղել:

ԳԵՊՇԻԼ

Մենք չորսով հարձակվեցինք մի դյուծինի վրա:

ՅԱԼՍԱՅ

Նրանք առնվազը տասնվեց հոգի էին, միլոնդ:

ԳԵՊՇԻԼ

Եվ կապեցինք նրանց:

ՊԵՏՈ

Ո՛չ, ո՛չ, մենք նրանց չկապեցինք:

ՅԱԼՍԱՅ

Ստո՛ւմ ես, խաբեբա, մենք նրանց բոլորին էլ կապոտեցինք: Թող ես սրիկա լինեմ, և այն էլ երբեական, եթե ճիշտ շեմ ասում:

ԳԵՊՇԻԼ

Սկսել էինք ավարտ բաժանել, երբ վեց-յոթ նոր մարդիկ հարձակվեցին մեզ վրա:

¹ Ահա նշան (լատ.), այսինքն՝ ահա ապացույց:

ՖԱԼՍՏԱՅ

Նրանց էլ կապեցինք: Ապա ուրիշներ էլ եկան:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Նվ գոմբ բոլորի դեմ նակատամարտ մղեցիք:

ՖԱԼՍՏԱՅ

Այո՛, բոլորի դեմ: Զգիւմք թե դու «բոլորի դեմ» ասելով քանի մարդ ես հասկանում, բայց որ ես նակատամարտ տվեցի հիսունի դեմ, այդ արդէն անժխտելի է: Թող ես մի փունջ բողկ լինեմ, թե սուտ եմ ասում: Ես կհրաժարվեմ ինձ երկոտանի կակ համարել, եթե խեղճ Ջեկի վրա անվազն հիսուններկու կամ հիսունեքեք մարդ շհարձակվեց:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Աղոթի՛ր աստծուն, որ նրանցից ոչ մեկին չես սպանել:

ՖԱԼՍՏԱՅ

Ո՛չ, աղոթքի համար արդէն ուշ է: Նրանցից երկուսին պղպեղ դարձրի: Երկուսի հետ, վստահ եմ, հաշիվը մաքրեցի: Դրանք երկու սրիկաներ էին մոմլաթե թիկնոցներ հագած: Թե սուտ եմ ասում, Հել, ըսիր իմ երեսին, ձի անվանիր ինձ: Դու ծանոթ ես իմ հարձակողական հին ձևերին. ա՛յ, այսպես ամուր կանգնեցի և սրով այսպես հարվածեցի: Այդ շորս սրիկաները մոմլաթե թիկնոցներով շարժվեցին վրաս:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ինչպե՛ս թե շորս: Հենց նոր ասացիր, որ երկուսն էին:

ՖԱԼՍՏԱՅ

Չորս էին, Հել, ես քեզ ասացի, որ շորս էին:

ՓՈՒՆՍ

Այո՛, այո՛, նա ասաց, որ շորս էին:

ՖԱԼՍՏԱՅ

Այդ շորսն էլ դիմացից հարձակվեցին վրաս և սկսեցին հարվածել: Ես առանց երկար մտածելու, միանգամից իմ վահանի վրա ընդունեցի նրանց: յոթ սեբեր. ա՛յ, այսպես:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Յո՛րք: Բայց նրանք ընդամենը շորս էին:

ՅԱԼՍՏԱՅ

Մոմլարթով:

ՓՈՒՆՈ

Այո, շորս հոգի մոմլարթե թիկնոցներով:

ՅԱԼՍՏԱՅ

Յոթ հոգի էին, Երզվում էմ այս դաստապաններով: Արիկա լինեմ, Երև աչդպես չէ:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Էլ նրա նեա մի խոսիւր, խնդրում էմ, թե չլ դարձյալ կավելանա:

ՅԱԼՍՏԱՅ

Լսո՞ւմ ես, Հել:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Լսում էմ, Զեկ, լսում էմ:

ՅԱԼՍՏԱՅ

Այո՛, լսի՛ր, որովհետև արժե լսել: Այս ինը հոգին մոմլարթե թիկնոցներով, որոնց մասին ես քեզ պատմեցի...

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Երկուսով ավելացավ:

ՅԱԼՍՏԱՅ

206 Հենց որ նրանց սրերը փշրվեցին...

ՓՈՒՆՈ

Վարտիֆները ցած ընկան:

ՅԱԼՍՏԱՅ

Սկսեցին նահանջել, բայց ես սուրը ձեռքիս կրնկակոխ հետապնդեցի նրանց և վայրկենապես տասնմեկից յոթին զլորեցի ցած:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Օ՛, ի՛նչ հրեշավոր բան է. Երկու մարդուց առաջացան տասնմեկ թիկնոցավոր:

ՅԱԼՍՏԱՅ

207 Բայց որտեղից որակդ սատանայի թելադրությամբ թիկունքից ինձ վրա հարձակվեցին Եթե պոռնկորդի, կենդալյան կանաչ մահուդի հագուստներով և սկսեցին ինձ նեղել: Այնքան մուր էր, Հել, որ դու չկիւ կարող նույնիսկ քո սեփական ձեռքը տեսնել:

ԻՇԽԱՆ ԼԵՆՐԻ

Այս սաեբը նման են իրենց հորը, որի ծնունդն են իրենք. սարի պես վիրխարահակա, անբազույց և շոշափելի: Ա՛խ դու, տխմարագույն հաստափոր, դո՛ւ, ավանակի գլուխ, դո՛ւ, սոռնկորդի, գարշելի՛, կեղտոտ նարպագունդ:

ՅԱՍՏԱՅ

Ինչ է, խեղճ բոցրի, խելճ բոցրի՛ր: Թե՛՛ նշմարտությունը դադարել է նշմարտություն լինելուց:

ԻՇԽԱՆ ԼԵՆՐԻ

Գու ինչպե՛ս կարող էիր նկատել, թե այն երեքը կենդանյան կանաչ մահուդ էին հագած, երբ այնքան մուր էր, որ դու անկարող էիր նույնիսկ բռնել տեսնել: Բացատրի՛ր, հնարավո՞ր է այդպիսի բան: Ինչպե՛ս:

ՓՈՒՆՍ

Բացատրի՛ր, Ջեկ, բացատրի՛ր:

ՅԱՍՏԱՅ

Ինչպե՛ս: Գուք ինձ ստիպում եք բացատրություն տալ: Գրո՞ղը տանի: Թեկուզ աշխարհում հայտնի բոլոր տեսակի գանձակոծության էնթարկեիք ինձ, միևնույն է, ես ձեզ հարկադրաբար ոչինչ չէի ասի: Բացատրություն տալ ստիպողաբա՛ր: Եթե իմ արդարացման պատճառները նույնքան առատ լինեին, ինչպես մորին անտառում, դարձյալ ես ոչ մի մարդու սուսչ չէի համաձայնի բացատրություն տալ ննչման տակ:

ԻՇԽԱՆ ԼԵՆՐԻ

Ո՛չ. ես այս մեղքը չեմ հանդուրժի հոգուս վրա: Ես կմերկացնեմ այս Լուսնդուն երկշտին, անկողինը նզովդ այս ծույլ, ալարկոտ մարդուն, ձեռու մեջքը փշրող այս զանգվածին, այս վիրխարի մաբլրին:

ՅԱՍՏԱՅ

Կորի՛ր դու, կմախք, դու օձաձկան կաշի, դու, կովի շորացած լեզու, դու, ցուլի պոչ, դու, աղանուկ: Օ՛, մի շնչով անհնարին է թվել այն ամենը, որ նման է քեզ: Ա՛խ դու, դերձակի առջին, դու, դատարկ գինապատյան, դու, մաշված կապարն, բրացած սուտեր:

ԻՇԽԱՆ ԼԵՆՐԻ

Մի քիչ շունչ առ և դարձյալ շարունակիր ու երբ կհոգնես այդ սուտ համեմատություններն անելուց, այդ ժամանակ լսիր, թե ինչ եմ ասում:

ՓՈՒՆՍ

Ի նկատի առ, Ջեկ:

Մենք տեսանք, թե ինչպես դուր չորս հոգով հարձակվեցիք չորսի վրա. կապեցիք նրանց և տիրացաք նրանց ունեցվածքին: Այժմ լսիր, թե ինչպես իմ հասարակ պատմությունը ոչնչացնելու է քեզ: Այնուհետև մենք երկուսով հարձակվեցինք չորսիդ վրա և մի հատիկ խոսքով ստիպեցինք ձեզ նետել կողոպուտը, որին մենք տիրացանք: Այդ ավարը այժմ մեր ձեռքին է և ես կարող եմ այն ցույց տալ ձեզ, թեկուզ հենց հիմա: Դու, Տալուտաֆ, քո փորը այնպիսի ճարտարությամբ թոցրի մեջտեղից, այնպիսի արագությամբ փախար և այնպես էիր գոռում, որ քեզ խնայեն և շարունակում էիր անդադրում վազել ու գոռալ, որ նմանվում էիր բառաչող ցուլի: Եվ մի՞թե սրիկա չես դու, ինքդ բթացրել ես քո սուրը և հավատացնում ես, թե կովի մեջ է հալից ընկել, փչացել: Այժմ տեսնենք, թե դու ի՞նչ խորամանկության ու հնարամտության պիտի դիմես, ինչպիսի՞ խուսանցք պիտի գտնես, քեզ թափանցելու այս բացահայտ ու ստույգ խայտառակությունից:

ՓՈՒՆՍ

Դու այդ հնարքի մասին խոսիր, Ձեկ, լսում ենք քեզ:

ՏԱԼՍՏԱՏ

Վկա է սատված, ես քեզ անմիջապես նախաչեցի, ինչպես որ կնանաչեր նառազատ հայրը: Լսեցե՛ք, պարոններ, մի՞թե ես կարող էի սպանել իսկական զահաժառանգին, իմ սուրը ուղղել նշմարիտ իշխանի դեմ: Քեզ հայտնի է, որ ես քաջ եմ Հերկուլեսի պես, բայց իմ բնագոր արթուն է, նույնիսկ առյուծը զգուշանում է դիպչել նշմարիտ իշխանին: Բնագոր մեծ բան է և ես բնագորեն համակվեցի վախով: Իսկ դա չի կարող փոխել իմ լավ կարծիքը ոչ իմ մասին, ոչ էլ քո մասին իմ ամբողջ կյանքում: Առաջվա պես ես մնում եմ քաջարի առյուծ, իսկ դու նշմարիտ իշխան: Բայց, տղաներ, սատված վկա, ուրախ եմ, որ փողը ձեզ մոտ է: Տիրուհի, դարպասները փակի՛ր, գիշերը հսկի՛ր, վաղը աղոթի՛ր: Կորովի քաջեր, տղաներ, բարեկամներ, ոսկե սրտեր, ահա՛ այդ է իսկական ընկերությունը: Եկե՛ք ուրախանանք: Չխաղա՛նք արդյոք մի հանպատրաստի կամեղիս:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Համաձայն եմ: Եվ կամեղիայի նյութը բող քո փախուստը լինի:

ՏԱԼՍՏԱՏ

Բավական է, Հեկ, այդ մասին այլևս ոչ մի խոսք, եթե սիրում ես ինձ:

Մանում է տիպին Վազը՝ պանդոկի տիրուհին:

ՏԻՐՈՒՂԻ

Օ՛, տեր իմ Հիսուս, ահա՛ և իմ իշխանը:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Յո՛ւն՛, պանդոկի տիրումին է: Ինձ բա՛ն ունես ասելու:

ՏԻՐՈՒՂԻ

Դուանք մի ինչ-որ պաշտական կա, տեր իմ, որ ուզում է խոսել ձեզ հետ: Ասում է, որ ձեր հոր մոտից է եկել:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Նրան դրամ տուր իմ հոր պատվերով և ես ուղարկիր իմ մօր մոտ:

ՖԱԼՍԱՅ

Ի՛նչ տեսակ մարդ է:

ՏԻՐՈՒՂԻ

Մի ձերունի է:

ՖԱԼՍԱՅ

Ի՛նչ է ստիպել այդ պատվական ձերուկին անկողինը լքել այս կես գիշերով: Ես նրան իր պատասխանը շտա՛մ արդյոք:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Տո՛ւր, խնդրում եմ, Ձեկ:

ՖԱԼՍԱՅ

Աստված վկա, ես նրան վայրկենապես նամփու կդնեմ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Սուրբ կույսը վկա, պարոններ, դուք քաջաբար կովեցիք, իմ խոսքը քո մասին է, Պետո, իմ խոսքը քո մասին է. Բարդուխ: Դուք նույնպես առյուծներ եք: Դուք նույնպես բնազդի շնորհիվ փախուստի դիմեցիք, որպեսզի չսպանեք ճշմարիտ իշխանին: Թո՛ւն:

ԲԱՐԴԱԼՅ

Նրզվում եմ, ես փախուստի դիմեցի միայն այն ժամանակ, երբ տեսա, որ մյուսները փախչում են:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Այժմ լրջորեն ասացեք, ինչպե՛ս պատահեց, որ Ֆալստաֆի սուրբ այդպես քաջաբար քաջաբար ընկավ:

ՊԵՏՈ

Նա սրի բերանը իր դաշույնով բքացրեց, հայտարարելով, որ թեկուզ նշմարտությունը Անգլիայից վտարվի, ինքը բոլորիդ հավատացնելու է Լեդվելով, թե դա պատահել է նակատամարտում: Մեզ էլ համոզում էր, նույն կերպ վարվել:

ԲԱՐԳՈՒՅ

Եվ բացի այդ, համոզում էր մեր քրոները Լեկայնաձև քրայտներով խառել, որ արյուն հոսի, ապա մեր շորերը կեղտոտել դրանով և երզվել. որ դա ազնիվ մարդկանց արյուն է: Այստեղ ինձ հետ պատահեց մի բան, որ վերջին յոթ տարվա մեջ չէր պատահել. ես կարմրեցի նրա այս հեշտավոր նենգությունը լսելով:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ստո՛ւմ ես, սրիկա: Տասնյոթ տարի առաջ դու մի բաժակ գինի րոցրիւր և բռնվեցիր իրեղեն ապացույցը ձեռքիդ և այն օրվանից սկսել ես հանպատրաստից կարմրել: Դու կարող էիր գործել հրով և սրով, սակայն դիմեցիր փախուստի: Այդ ի՞նչ բնագղի մասին է խոսքը:

ԲԱՐԳՈՒՅ

Տեր իմ, տեսնո՞ւմ եմ այս օղային երևույթները, այս ժայթքումները իմ դեմքի վրա:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Այո՛, տեսնում եմ:

ԲԱՐԳՈՒՅ

Ձեր կարծիքով ինչի՞ հետևանք են դրանք:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Բորբոքված լյարդի և դատարկ ֆակի:

ԲԱՐԳՈՒՅ

Մաղձոտության հետևանք է, աեր իմ, եթե ուղիղը կուզեք իմանալ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ո՛չ, դա հետևանք է կախաղանի պարանի, ուղիղը այդ է: Ահա գալիս է մեր լղարիկ Ջեկը, գալիս է մեր քզվառ կմախքը: (Մտնում է Ֆալատաֆը): Հր, ի՞նչ կա, փխված խրտվիլակ: Քանի՞ տարի կլինի, որ դու եռ սեփական ծնկները չես տեսել, Ջեկ:

ՅԱԼՍԱՅ

Իմ ծնկները: Քո տարիքին իմ մեջքը արծվի մագիլից բարակ էր: Ես կարող էի հեշտությամբ սողոսկել ուզածդ արդեամանի բրամատի մատանու միջով: Թող կորչեն հառաշանհն ու վիշտը, դրանցից մաքրը փուշիկի պես ուտչում է: Հոտի լուրեր են ստացվել դրսից: Քո հոր մոտից պարոն Ջոն Բրեսին էր եկել: Վաղը առավոտյան դու պետք է արևունիք ներկայանաս: Պերսին, հյուսիսի այդ կապը կտրած գիծը, և այդ վախճանակներ, որ գավազանով ծեծել է Ամամոնին, սատանային մղել է դավանանության և ստիպել է դեին իրեն հավատարմության երդում ստանալ վախճանական տապարածն տեգի խաչի վրա: Գրողը ասանի, ինչպես է նրա անունը:

ՓՈՒՆՍ

Օ՛, Դյենյովե՛ր:

ՅԱԼՍԱՅ

Օվե՛ն, Օվե՛ն, այո՛ նա ինքը և Մորտիմեր՝ նրա փեսան, և ծեռուկ նորբեմբերենդը և բոլոր շատլանդների կարովի շատլանդ Գուզլասը, ո՞ր ձին հեծած ուղղահայաց դիրքով բշում է լեռնիվեր:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Նա, որ արագությամբ աշտանակում է և ատրեանակի մի հարվածով սպանում է թռչող նենդուկին:

ՅԱԼՍԱՅ

Հենց դա է որ կա, նշանին դիպար:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Բայց նրա նշանը երբևք չդիպավ նենդուկին:

ՅԱԼՍԱՅ

Այդ սակաճեր սակայն վախկոտ չի, նա չի դիմի փախուստի:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Տակաճեր դու ես, չէ՛ որ հենց նոր գուլեցիր նրա արագաշարժությունը:

ՅԱԼՍԱՅ

Նա արագաշարժ է, երբ ձիու վրա է, հիմար կկու, իսկ երբ հեռիտան է՝ ոչ մի ֆայլ չի նահանջի:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Այո՛, Ջեկ, բնագորուն:

ՅԱԼՍԱՅ

338 Համաձայն եմ, թող բնազդորեն լինի: Ուրեմն նա էլ նրանց հետ է: Նրանց հետ են նաև ինչ-որ Մորդեկ և հազարի շափ կապտագլխարկ շալանդացիներ: Վուստերն այս գիշեր փախել է նրանց մոտ: Այդ լուսերից է՞ն հոր մորուր սպիտակել է: Դու այժմ կարող ես հող գնել հոտած բորատակի գնով¹:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Իսկ էթե այդ ներքին պատերազմները շարունակվեն մինչև հուլիս ամսվա շոգերը, սպա կույս աղչիկներն այնքան կեծանանան, որ նրանց կարելի կլինի հարյուրներով գնել, ինչպես մարդիկ զամեր են գնում ձիերը պայակալու:

ՅԱԼՍԱՅ

Պատարագը վիս. դու նիշտ ես ստում և հրաշալի առևտուր կլինի այդ սպրանքի համար: Բայց խոստովանիր, չե՛լ, մի՞թե դու սարսափելի վախեցած չես: Դու գահաժառանգ ես և աշխարհը չի կարող գտնել քեզ համար երեք ավելի վայրագ հակառակորդ, քան այդ սատանա Դուզասը. մոլեգին Պերսին և այդ պիվական Գլենդոլները: Մի՞թե դու սարսափելի վախեցած չես և է՞ն աշխարհը չի սարսոտում դրանից:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ամենևին, հավատացնում եմ քեզ. ես մասամբ զուրկ եմ է՞ն բնազդից:

ՅԱԼՍԱՅ

Վագր դու գնալու ես հորդ մոտ և քեզ անավուր հանդիմանություն և սպասվում: Նքե սիրում ես ինձ. վարժվիր պատասխանի համար:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Պատկերացրու քեզ. որ դու իմ հայրն ես և ինձ մանրամասն հարցեր տուր իմ կյանքի վերաբերյալ:

ՅԱԼՍԱՅ

Այդպե՛ս ես ուզում: Բայց ո՛չ. թող այս աթոռը իմ գահը լինի, այս դաշույնը՝ իմ մականը, իսկ այս բարձր՝ իմ բազը:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Լավ, այս ծալովի արոտը ընդունենք գահի փոխարեն, այս կապարյա դաշույնը՝ է՞ն ոսկյա մականի փոխարեն, իսկ այս նաղատ գագարը՝ է՞ն ադամանդյա նոխրագի փոխարեն:

¹ Ձկան տեսակ՝ բյուֆիկ:

ՅԱԼՍԱՅ

365 Եթե առափնուրջան կրակը դեռ իսպառ չի մարել քո մեջ, դու հենց հիմա պիտի հուզվես: Ինձ մի բաժակ գինի տուր, որ իմ աչքերը կարմրեն և այն տպավորությունն ստեղծվի, թե ես արտասվել եմ: Չէ՞ որ ես պետք է կրֆոտությամբ խոսեմ, Կամբիզ թագավորի յուրահատուկ ոնով:

(Խմում է):

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Դե, սկսի՛ր, իմ սրունքը, տես, խոնարհված է:

ՅԱԼՍԱՅ

Անա՛ և իմ խոսքը:— Լորդե՛ր, փոքր ինչ հեռու կանգնեցե՛ք:

ՏԻՐՈՒՂԻ

Օ՛, տեր իմ աստված, ի՞նչ հրաշալի գվարնություն է:

ՅԱԼՍԱՅ

«Լաց մի լինիր, անգին թագուհի, արցունքի կայլակներն իզուր են»:

ՏԻՐՈՒՂԻ

Օ՛, իսկ և իսկ հայրն է: Ճիշտ նրա կերպարանին ընդունեց:

ՅԱԼՍԱՅ

«Օ՛, լորդեր, դուրս տարե՛ք վշտահար թագուհուն,
Արցունքից վակվել ևն դարպասներն աչքերի»:

ՏԻՐՈՒՂԻ

Օ՛, տեր իմ աստված, նա հոր դերը խաղում է այն քափառաշրջիկ անպիտան դերասանների պես, որ պատրաստ են ամեն անպետքություն բեմ հանել:

ՅԱԼՍԱՅ

Լոր՛ր, իմ բարի բմպանակ, լոր՛ր, իմ հրաշալի ըմպելիք: Հարրի, ինձ զարմացնում է ոչ միայն այն վայրը, ուր դու վատնում ես քո ժամանակը, այլև այն մարդիկ, որով շրջապատված ես դու. ֆանգի երիցուկը ուրբան շատ է տրորվում, այնքան արագ է անում, միևնույն ջահելությունը ուրբան շատ է տրորվում, այնքան արագ է սպառում իրեն: Որ դու իմ որդին ևս, այդ ես գիտեմ մասամբ քո մոր խոսքերից, մասամբ էլ իմ սեփական համոզմունքից, բայց գլխավորապես ինձ այդ բանը համոզում է քո աչքերի տմարդի փայլը և վարի շրթունքի անհեթեթ կախված լինելը: Եթե դու իմ որդին ես, և հույսը Անգլիայի, ինչո՞ւ ևս այդպես անհուսորեն

ցած իջել, ա՛յդ է բուն խնդիրը: Հնարավո՞ր բան է, որ երկնի օրհնյալ յուսատուն դատարկապորա դառնա և իր գոյությունը փառշ տա մորի ուտելով: Այսպիսի հարց չի կարող տրվել: Կարո՞ղ է Անգլիայի թագավորի որդին գող դառնալ և գրադվել ֆաակներ կտրելով: Սա մի հարց է, որ կարող է տրվել: Կա մի նյութ, Հարրի, որի մասին դու հաճախ լսած կլինես և դա մեր թագավորության մեջ շատերին հայտնի է կուպր անունով: Այդ կուպրը, հին հեղինակների վկայությամբ, կեղտոտելու հատկությունն է: Այդպես է նաև մարդկանց այն խումբը, որի հետ դու շփվում ես: Ես այս բանը էեզ ասում եմ, Հարրի, հարբած ոչ թե գինով, այլ արցունքով, ոչ թե հանույնով, այլ դառնությամբ, ոչ միայն խոսվով, այլև հառաչներով նույնպես: Եվ, այնուամենայնիվ, կա մի արժանավոր մարդ, որի հետ, ինչպես ես հաճախ նկատել եմ, դու ընկերություն ես անում, բայց ես նրա անունը մոռացել եմ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ձերդ բարձրությունը չէ՞ր բարեհաճի ասել, թե ինչպիսի մարդ է նա:

ՖԱԼՍՏԱՆ

Դուրեկան, վեհատեսիլ մի տղամարդ է, հավատացնում եմ էեզ, և մեծամարմին: Հանելի աշֆ ունի, զվարթագին հայացք և շափագանց սգնրվաբարո կեցվածք: Տարիքը, իմ կարծիքով, հիսուն է կամ, ավելի հիշա. վարսունին մոտ: Այժմ հիշեցի. նրա անունը Ֆալստաֆ է: Երև այդ մարդը անձնատուր է անառակության, ուրեմն նրա արտափեր խարուսիկ և, Հարրի, որովհետև ես նրա աշխերի մեջ առափնություն եմ տեսնում: Երև ծառը իր պտուղից են նանաչում, իսկ պտուղը՝ ծառից, ուրեմն ես վնասկանորեն հայտարարում եմ, որ այդ Ֆալստաֆի մեջ առափնություն կա: Նրա հետ ընկերություն արա, իսկ մյուսներին վոնդի՛ր: Այժմ ասա՛ ինձ, դատարկասուն, որտե՞ղ էիր կորել ամբողջ մի ամիս:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Մի՞թե թագավորը այդպես կխոսի: Դու կանգնիր իմ փոխարեն, իսկ ես կխաղամ իմ հոր դերը:

ՖԱԼՍՏԱՆ

413 Ինչպե՞ս, դու ուզում ես գահընկե՞ց անել ինձ: Երբ դու կիսով չափ նույնիսկ ինձ նման հանդիսավոր և փառահեղ լինես թե՛ խոսվով և թե՛ շարժումներով, քող ինձ ոտներից կախեն ճագարի կամ նապաստակի պես:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Շատ լավ, ես բազմեցի:

ՅԱԼՍԱՅ

Իսկ ևս վերկացա: Պարոննե՛ր, դո՛ւմ դատավոր եղեմ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Այժմ սլատասխանիր՝ որտեղի՞ց ևս գալիս:

ՅԱԼՍԱՅ

Իստչիփից, տեր արքա:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ես շատ ծանր գանգատներ ևմ լսել և՛ մասին:

ՅԱԼՍԱՅ

Ձրպարտանք է, տեր արքա, բոլորը սուտ է: Ա՛յ բե ևս կզվաբնացնեմ ձեզ երիտասարդ իշխանի դերում:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Եվ դու Լրդվո՞ւմ ևս, անջնորհակա՞լ տղա: Եվ դու դեռ հանդգնո՞ւմ ես սչֆերիս մեջ նայել: Մի վայրագ ուժ շեղել է քեզ առափնություն նանայարհից: Մի դե և քեզ սիրել հաստամարմին ծերունու երևույթով: Քո բնկերը մարդ կոչվող շրջիկ տակառն է: Ինչո՞ւ ևս դու բարեկամացել այդ աղբակույտի հետ, այդ առևտրի կրպակի հետ, ամեն տեսակ գարշահատությանը լի այդ ուռած ջրգողության հետ, այդ գինու հսկա տակառի հետ, ամեն տեսակ անպետությունը խնուված այդ պարկի հետ, մե-
429 նինգտրեսյան այդ խորոված արջառի հետ, որի լիցքը փորի մեջ է, այդ հարգաբաժան մոլության հետ, այդ ալեխառն անաստված անօրենի հետ, այդ հայրացած Լյեոնագործի հետ, այդ տարիքն առած ունայնության հետ: Եվ ի՞նչ օգուտ քեզ նրանից, բացի գինի լցնելուց և կոնծելուց: Ինչո՞վ է նա վայելուչ ու մաքուր. միայն անսպաղներ պատառոտելով և խժոռելով: Ինչի՞ մեջ է նա նարպիկ. միայն խաբեության մեջ: Ինչի՞ մեջ է նա նարտար՝ տմարդության: Ինչի՞ մեջ է նա տմարդի՝ ամեն ինչում: Ինչո՞վ է նա արժանավոր՝ ոչնչով:

ՅԱԼՍԱՅ

Ձերդ բարձրությանը կխնդրեինք ավելի պարզ արտահայտվել: Ձեր խոսքը ո՞ւմ մասին է, արքա:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Երիտասարդությանը մոլորեցնող այդ տմարդի, գարշելի Ֆալստաֆի մասին է, այդ սպիտակամորուս սասանայի:

ՅԱԼՍԱՆ

Տեր իմ, ես նանաշում եմ այդ մարդուն:

ԻՇԵԱՆ ՀԵՆՐԻ

Գիտեմ, որ նանաշում ես:

ՅԱԼՍԱՆ

Բայց սուտ կլինի, եթե ասեմ, թե նրա մեղքերը իմ մեղքերից շատ են: Որ նա, ցավոք սրտի, ծեր է. դրա վկան են նրա սպիտակ մազերը, բայց որ նա, — բող ներվի ինձ ասել, — բողբարած է, ես այդ բուրովին ժխտում եմ: Եթե քաղցր գինի խմելը հանցանք է, բող աստվածն, ուրեմն, ավելի վատթարին փրկի: Եթե ակառ և զվարթ լինելը մեղք է, ուրեմն իմ բազում ծանոթ ծեր պանդոկապետների տեղը դժոխքն է: Եթե շաղությունը ատելի է, ուրեմն պե՛տ է սիրել փարավոնի նիհար կովերը: Ո՛չ, իմ բարի արքա, վոնդե՛ք Պետոյին, վոնդե՛ք Բարդուլֆին, վտարե՛ք Փոլինսին, բայց ինչ վերաբերում է սիրելի Ձեկ Ֆալստաֆին, բարի Ձեկ Ֆալստաֆին, հավատարիմ Ձեկ Ֆալստաֆին, քաջամարտիկ Ձեկ Ֆալստաֆին, — որի քաջությունը առավել պետք է գնահատել, որովհետև նա ծեր է, — նրան մի վտարե՛ք: Ձեր Հարրին Ֆալստաֆի ընկերն է: Դուք այդ երկուսին մի բաժանե՛ք իրարից: Վտարել գեր, պարարտ Ձեկին՝ այդ նշանակում է բովանդակ աշխարհը դեն շարտել:

ԻՇԵԱՆ ՀԵՆՐԻ

Ոչ, որոշված է, ես նրան կվոնդեմ, անպայման կվոնդեմ:

(Դուրք բախում են):

Պանդոկի տիրուհին, Ֆրենսիսը և Բարդուլֆը դուրս են գնում:

Բարդուլֆը վազելով վերադառնում է:

ԲԱՐԳՈՒՅ

Օ՛, տեր իմ, տեր իմ, շերիֆը մի հրեշավոր պահակախմբի հետ կանգնած է շեմֆին:

ՅԱԼՍԱՆ

Կորի՛ր, դատարկասուն: Մենք խաղը դեռ չենք ավարտել: Ես դեռ շատ բան ունեմ ասելու ի պաշտպանություն Ֆալստաֆի:

Մտնում է պանդոկի տիրուհին հեկհեկ:

ՏԻՐՈՒՀԻ

Օ՛, Հիսուս Քրիստոս: Տե՛ր իմ, տե՛ր իմ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Վա՛հ, սատանա՛ն է արշավում ջուրակի նիպոտին հեծած: Ի՛նչ է պա-
տահել:

ՏԻՐՈՒՂԻ

Շերիֆը և բոլոր պահակները կանգնած են շեմֆին: Նրանք ուզում են
մեր տունը խուզարկել: Թույլ տա՛մ ներս մտնել:

ՅԱՍՄԱՅ

Լսո՛ւմ ես, Հել, երբեք ազնիվ ոսկին կեղծ չի դառնա: Գու իսկական
խելագար ես, քեպեա տեսնով խելամիտ ես երևում:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Իսկ դու բնածին վախկոտ ես առանց որևէ բնագրի:

ՅԱՍՄԱՅ

Ես մերժում եմ քո գլխավոր դրույքը: Եթե դու էլ քո հերթին մերժես
շերիֆի մուսրը՝ հեաշալի կլինի, իսկ եթե ոչ՝ արտոնիր ուրեմն թող ներս
գա: Եթե ես իմ անձը չպիտի կարողանամ արժանապատիվ պահել ինձ
դեպի կախազան առաջնորդող բանտակառֆի մեջ, արդ, գրողը տանի,
իմ ամբողջ դաստիարակությունը: Հուսով եմ, որ պարանի օղակը նույն-
քան արագությամբ ինձ կխեղդի, որքան բոլոր մյուսներին:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

477 Գու գնա քաֆնվիր պատի վարագույրի ետևում, իսկ մյուսները թող
վերև բարձրանան: Այժմ, պարոններ, հարկավոր է ազնիվ մարդկանց
տեսնել ընդունել և երևալ խղճով մաքուր:

ՅԱՍՄԱՅ

Նս ըն՝ խիղճ ունեի, քե՛ր ազնվություն, բայց Երկուսն էլ թուան գնացին.
Հետևաբար լավ է, որ քաֆնվեմ:

Թողորը գնում են, մնում են միայն իշխանը և Պետոն:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Շերիֆին ներս կանչեմ:

Մտնում են շերիֆը և կառապանը:

Գուր, պարոն շերիֆ, գո՛րծ ունեմ ինձ հետ:

ՇԵՐԻՖ

Ներեցեք, միլորդ, մի քանի մարդիկ դրսից փախչելով՝
եկել քաֆնվել են այս պանդոկի մեջ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ինչպիսի՞ մարդիկ են:

ՇԵՐԻՖ

Նրանցից մեկը հանրածանոթ է, գեր է, հաստափոր:

ԿԱՌԱՊԱՆ

Ասես մի հսկա հարսպագունդ լինի:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

455 Ձեր ասած մարդը, այստեղ չէ, պարոն, վստահացնում եմ,
 Ես նրան գործով տեղ ուղարկեցի:
 Բայց ես ձեզ անձամբ, խոստանում եմ, շերիֆ,
 Վաղը կեսօրին նրան ձեզ մոտ հղել՝
 Ձեզ կամ ուրիշին պատասխան տալու
 Իր դեմ հարուցվող մեղադրանքի համար:
 Այժմ խնդրում եմ տունը ազատել:

ՇԵՐԻՖ

Իազատենեմ, միլորդ: Իողերը երկու պարունի մասից
 Հափշտակել են երեկ հարյուր մարկ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Հնարավոր է: Եթե այդ մարդն է նրանց կողոպտել՝
 Պատասխան կտա: Այժմ՝ բարի երբ:

ՇԵՐԻՖ

Բարի գիշեր, միլորդ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Լավ չէ՞ր լինի արդյո՞ք «բարի լույս» ասել:

ՇԵՐԻՖ

Իսկապես, աեւ իմ, կարծեմ գիշերվա ժամը երկուսն է:

Շերիֆը և կառապանը գնում են:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

02 Այս հարպատ սինկֆորը նույնֆան հանրածանոթ է, որքան սուրբ Պու-
 դոսի տանաւրը: Ասա, թող դուրս գա:

ՊԵՏՐ

Ֆալստա՛ֆ: Նա խորը բնած է վարագույրի ետևում և խոնչում է ձիու
 պես:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Լսո՛ւմ ես, թե՛ որքան ծանր է շնչում: Գրպանները խուզարկիր:

(Պետոն խուզարկում է Ֆալսաաֆի գրպանները
և գանում է մի ֆանի թղթեր):

Ի՞նչ գտար:

ՊԵՏՈ

Մի ֆանի թղթեր, տեր իմ, ուրիշ ոչինչ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ի՞նչ թղթեր են, կարդա տեսնենք:

ՊԵՏՈ

(Կարդում է) «Եվս՝ մի ափոր... երկու շիլինգ և երկու պենի:

Եվս՝ համեմունք չորս պենի,

512 Եվս՝ երկու գալոն գինի հինգ շիլինգ, ուր պենի:

Եվս՝ մանր ձուկ և ֆաղցր գինի ընթրիֆից հետո . . . երկու շիլինգ, վեց
պենի:

Եվս՝ հաց կես պենի»:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Օ՛, սուկալի է, ընդամենը մի պատառ հաց այդ անհավատալի ֆանա-
կուրյամբ գինու հետ: Մյուս թղթերը թափցրու, կկարդանք մի ավելի
ազատ ժամանակ: Նա թող այստեղ ֆնի մինչև լուսաբաց: Ես առավոտ-
յան պետք է արժուհիք ներկայանամ: Մենք բոլորս ուղևորվելու ենք պա-
տերազմ և դու ստանձնելու ես պատվավոր պաշտոն: Ես ամեն ճիգ կգոր-
ծադրեմ, որ այդ հաստափոր թափթփուկին հետևակ վերցնեն, և գիտեմ,
որ երկու հարյուր ֆայլ ոտքով անցնելը ստույգ մահ է նրա համար: Փո-
ղերը վերադարձվելու են հավելումով: Առավոտ կանուխ շուտ ինձ մոտ
եկ, իսկ այժմ բարի գիշեր:

ՊԵՏՈ

Բարի գիշեր, իշխան:

Գնում են:



ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Բանգոր: Ավագ սարկավագի տունը:

Մանուկ ևն Հոսպիտեր, Վուստեր, Մորտիմեր և Գլենդոլերը:

ՄՈՐՏԻՄԵՐ

Բարեկամները հավատարիմ են, խոստումները շատ,
Եվ մեր սկիզբը վառ հույսերով լի:

ՀՈՏՍՊԵՐ

Դուք, լորդ Մորտիմեր և Գլենդոլեր,
Պիտի նստե՛ք, թե ոչ:
Դուք նույնպես, Վուստեր, հարգո հարեղբայր: — Դուողը սանի,
Ես մտապել Լմ ֆարտեզը վերցնել:

ԳԼԵՆԴՈՎԵՐ

Քարտեզն այստեղ է:

Նստե՛ք, գարմիկ Պերսի, եղբայր Հոսպիտեր,
Լանկաստերն երբ այդ անունն է լսում, գունատվում է շուտ
Մի խոր հառաչով կամենալով ձեզ երկինք ուղարկել:

ՀՈՏՍՊԵՐ

Իսկ ձեզ էլ՝ դժոխք,
Երբ Գլենդոլեր անունն է հնչում նրա ականջին:

ԳԼԵՆԴՈՎԵՐ

Նա պատճառ ունի: Երբ ես ծնվել Լմ.
Համակ երկինքը ակոսվել է հուր շանք ու կայծակով:
Մնունդիս ժամին երկրի վիթխարի շինվածքն ու կազմը
Դողացել է ինչպես ողբալի երկչոտ:

ՀՈՏՍՊԵՐ

Քայց նա կրողար, եթե այդ միևնույն պահին ձեր մոր կատուն ցնկնկլիս լիներ և դուր ամենևին էլ չծնվեիր:

ԳԼԵՆԳՈՎԵՐ

Ես ասում եմ, որ երկիրը դողացել է, երբ ես ծնվել եմ:

ՀՈՏՍՊԵՐ

Իսկ ես ասում եմ, երբ կարծում եմ, որ երկրագունդը, Տնցվել է վախից, երբ դուր ծնվել եմ, երկիրն, ուրեմն, բնավ նման չէ ինձ:

ԳԼԵՆԳՈՎԵՐ

Համակ երկինքը հրավառվել է, երկիրը ցնցվել:

ՀՈՏՍՊԵՐ

Տնցվել է ոչ թե ձեզնից սարսափած,
Այլ հրավառված երկնի տեսից:
Մերկ բնության մեջ սակավադեպ շեն
Շատր, անսովոր արտավիժումներ.
Նդի երկիրը, որ ջղաձգության ցավերի մեջ է,
Հանախ է տանջվում այն Բամիներից,
Որ ներկայված են նրա արգանդում,
Պրոնի ձգանդով ազատագրվել,
Այնպես են ցնցում պառաված երկրին,
Որ կործանվում են զանգակաաներ
Եվ աշտարակներ մամոապատ ու հին:
Մնունդիդ ժամին մեր մայր երկիրը
Տնցվել է անեղ ջղակծկումից:

ԳԼԵՆԳՈՎԵՐ

Լսի՛ր, եղբայր իմ, ևս ֆշերին եմ
Արտոնում այդպես հականառել ինձ: Թույլ տուր վերստին
Կրկնել իմ խոսքը, որ իմ ծնունդին
Երկնի դեմքը լի էր հրեղեն Լեռույթներով,
Այծերն անարեկ փախել են սարից,
Եսխրի բառաչից դաշտերն են սարսել,
Այս նշաններով կանխորոշվել է
Իմ Լուսնի ծնունդն աշխարհում,
Եվ իմ բովանդակ կյանքի ընթացքը պարզ ցույց է տալիս,
Որ ևս հասարակ մահկանացու չեմ:

Ուռնի՞ն է ապրում այն համարձակը, —
Անգլիայո՞ւմ, Վալեսո՞ւմ կամ Շոտլանդիայո՞ւմ. —
Ուռնեց ժայռերին ծովն է շառայով հարվածում անվերջ. —
Ու կհանդգնի վարժապետել ինձ:
Կնոջից ծնված մի Բաշի բերեմ,
Ու կաւոդանա իմ Ետեից գալ
Արվեստի դժնի ոլորաններով,
Կամ գիտության մեջ ոտմ մեկնել ինձ հետ:

ՀՈՏՍՊԵՐ

Ես կարծում եմ, որ վալեսական լեզվի մեջ դու այստեղ մրցակից չունես:
Ես գնացի նաշելու:

ՄՈՐՏԻՄԵՐ

Օ՛. լոի՛ր, Պերսի, մի՛րք ուզում ես խենթացնել նրան:

ԳԼԵՆԳՈՎԵՐ

Ես խոր անդունդից կաւոդ եմ իսկույն ոգիներ կոչել:

ՀՈՏՍՊԵՐ

Ես էլ կաւոդ եմ: Ամեն մարդ կաւոդ է,
Բայց խնդիրն այն է, թե կգա՞ն արդյո՞ւմ:

ԳԼԵՆԳՈՎԵՐ

Ես քեզ կաւոդ եմ սովորեցնել ինչպես հրամայել դիմն:

ՀՈՏՍՊԵՐ

Իսկ ես կաւոդ եմ դիմն շիկնելու դասը սերտել քեզ.
Նշտախոս եղիր և նա կամաշի:
Նքե զորու ես անհատակ վիհից բարձրացնել նրան,
Այստեղ բեր դիմն և ես երդվում եմ նրան վռնդել,
Այդքան ուժ ունեմ:
Նշմարտությունը հզոր է բոլոր սատանաներից:

ՄՈՐՏԻՄԵՐ

Արդ բավ է, վերջ տանմ անօգուտ վեճիմ:

ԳԼԵՆԳՈՎԵՐ

Բոլիներովը երեմ անգամ շարժվեց
Իմ զորքերի դեմ և երեմ անգամ ես նրան Վալի,
Նակ Սեվերնի ժայռոտ ասիերից դեմ շարտեցի.
Ու նա տուն գնաց առանց ավարի, մեղին մորիկներ:

ՀՈՏՍՊԵՐ

Օ՛, ոտաբոցիկ, նաև հողմածեծ,
Սատանան տանի, ինչպե՛ս է փրկվել սոսկալի տենդից:

ԳԼԵՆԴՈՎԵՐ

Ահա՛ քարտեզը: Ամբողջ երկիրը
Քաժանելու ենք բառ մեր եռյակի համաձայնությամբ:

ՄՈՐՏԻՄԵՐ

Ավագ սարկավազը երկիրը արդեն
Քաժանել է երեք հավասար մասի:
Ամբողջ Անգլիան Տրենտից Սեվերն, Սեվերնից այստեղ,
Դեպի արևելք և դեպի հարավ, ինձ է անցնելու:
Սեվերնի ափից դեպի արևմուտք ամբողջ Վալեսը
Եվ այս բովանդակ բերրի երկիրը
Քաժին է դարձել Գլենդոլերին: Քեզ, անգին Լոբայր,
Պատկանելու է Սեվերնից հյուսիս
Մենացյալ ամբողջ տարածությունը:
Մեր եռաբաժին դաշնադրությունը արդեն կազմված է,
Մենում է միայն դրոշմը դնել,
Մի գործ. որ պետք է այս գիշեր անենք, իսկ վաղը, Պերսի,
Մեր լորդ Վուստերը, նաև դու և ես
89 Անհասպաղ պետք է մեկնենք Ծրուսերի, ինչպես սոված է,
Ձեր հայրը այնտեղ սպասում է մեզ շառվանդյան գուրմով:
Գլենդոլեր հայրս դեռ պատրաստ չէ լրիվ,
Մենք երկու շարաք դեռ կարիք չենք զգա նրա օգնության:

(Գլենդոլերին)

Այդ միջոցի մեջ դուք ծողովեցեք
Ձեր վարձկաններին, բարեկամներին
Եվ ազնվական մերձավորներին:

ԳԼԵՆԴՈՎԵՐ

Ես ձեզ մոտ կգամ շատ ավելի վաղ,
Ինձ հետ բերելով ձեր տիկիներին:
Ձեզ հարկավոր է թափուն հեռանալ՝
Առանց հրածեշտ մաղթելու նրանց,
Թե չէ կարող է ծով արցունք թափվել
Ձեզ ու ձեր կանանց անջատման պահին:

ՀՈՏՍՊԵՐ

Ո՛չ, ինձ քվում է, որ իմ բաժինը Բերտոնից հյուսիս
Իր շափով փոփր է ձեր բաժիններից:
Այս գետը, տեսե՛ք, ինչպես պտույտ ապրով
Հատում է հսկա մի կիսալուսին իմ տիրույթներից,
Բերրի հողերի մի ընտիր հատված:
Գետի այս մասում պատվար կֆաշեմ
Եվ արծաքսափայլ Տրենտն այստեղից
Կհոսի մի նոր ուղղահարթ հունով,
Էլ չի ոլորվի այսֆան ֆմահան
Ինձ կողոպտելով այս նոխ դաշտերի հարստությունից:

ԳԼԵՆԳՈՎԵՐ

Էլ չի ոլորվի՛: Նա իր բնթացքը երբեք չի փոխի
Եվ պիտի հոսի ոլորապտույտ, ինչպես եղել է:

ՄՈՐՏԻՄԵՐ

Այո՛, բայց նայիր,
Իր հուսանքի մեջ մի այլ պտույտով,
Այս գետը նույնֆան բերրի հողեր է հատում իմ բաժնից
Քո ողջ կորուստը հակակշռելով:

ՎՈՒՍՏԵՐ

Մի փոփրիկ ճիգով հունը կփոխենք,
Եվ դեպի հյուսիս այս հրվանդանը հաղթահարելով
Գետը կհոսի ուղիղ, անկաշկանդ:

ՀՈՏՍՊԵՐ

Այդպես էլ կանեմ, շատ քանկ չի նստի:

ԳԼԵՆԳՈՎԵՐ

Տրենտի հունը չպետք է փոխել, ես դեմ եմ դրան:

ՀՈՏՍՊԵՐ

Ինչպե՛ս: Դու դե՛մ ես:

ԳԼԵՆԳՈՎԵՐ

Այո՛, թույլ չեմ տա:

ՀՈՏՍՊԵՐ

Ինձ ո՛վ կարգելի:

ԳԼԵՆԴՈՎԵՐ

Ո՞վ: Ե՛ս կարգէլեմ:

ՀՈՏՍՊԵՐ

Ձեզ շեմ հասկանում:

Բացատրվեցե՛ք վալեսերենով:

ԳԼԵՆԴՈՎԵՐ

Անգլերենը ձեզ շափ խաչ գիտեմ,
Դաստիարակվել եմ ես անգլիական արքունիքի մեջ,
Ուր, պատանուքյան իմ տարիներին, տավրդի համար
ես հորինել եմ անգլիական շատ հիաստանչ երգեր,
Ձեր լեզվին տալով նոխարություն ու փայլ,
Մի վսեմություն, որ չկար ձեր մեջ:

ՀՈՏՍՊԵՐ

Հոգով ուրախ եմ այդ բանի համար:
Լավ է կատու լինեմ՝ մլավեմ անբան,
Քան թուղթ մրտող թշվառ հանգարան:
Ախորժելի է պղնձյա հաստոցի շոինդր լսել,
Կամ անվի նոռոցը իր սոնակի շուրջ,
Քան թե շպարված ոտանավորներ:
Ոչինչ չի առնում ատամին այնպես,
Ինչպես սեթևեր հագող սյուզիան,
Որ հագիվ շարժվող մի ֆնձոռտ նիու
Սնգսնգոցներն է անվերջ հիշեցնում:

ԳԼԵՆԴՈՎԵՐ

Դե լավ, փոխե՛ք հունը:

ՀՈՏՍՊԵՐ

Խնդիրը այդ չէ: Ազնիվ բարեկամին
Ես միշտ պատրաստ եմ եռակի հող տալ,
Իսկ եթե գործը հասնի սակարկման, նկատի առե՛ք,
Պատրաստ եմ նաև մի հատիկ մազի
Իններորդ մասի արժեքից կառչել:
Դաշնագիրն ո՞ւր է: Կարո՞ղ եմք գնալ:

ԳԼԵՆԴՈՎԵՐ

Լավ լուսնկա է. կարող եմք ճամփա ելնել գիշերով:
Գնամ գրագրին շտապեցնելու, միաժամանակ

Ձեր օրհիւններին տեղյակ դարձնելու ձեր հրաժեշտին:
Իմ խնկն ազջիկը, ևս վախենում եմ գովի վշտերից,
Շատ բուռն է սիրում իր Մորտիմերին:

Գնում է:

ՄՈՐՏԻՄԵՐ

Ամո՛ր Բեգ. Պերտի, հորս նեղացրիր:

ՀՈՏՍՊԵՐ

Այլ կերպ չեմ կարող: Նա երբեմն-երբեմն
Ինձ զայրացնում է պատմելով մկան, խլուրդի մասին,
158 Գուշակ Մեպիների իմաստությունից,
Պուշատ ձկնիկի, վիշապ-հրեշի.
160 Առյուծի մեջքով կոնատ արծվի
Եվ նորափետուր ազուսի մասին,
Քնած առյուծի և սրսին ցատկող ժանտ կատվի մասին,
Եվ ամեն տեսակ փուշ, անմիտ բաներ:
Իսկ երեկ գիշեր. գրեթե ինք ժամ,
Նա հոգիս հանեց մեկ մեկ րվելով
Անունները այն սատանաների,
Որ ենթակա են իր իշխանություն:
«Հր՛մ». «ջա՛տ յալ, հետո՛», —
Ասում էի ես սուանց լսելու իր ասածները:
Օ՛. հա ահավոր ձանձրալի մարդ է:
Քոստոս գրաստի, կովան կնոջ պես խիստ անտանելի,
Ավելի վատ է, քան մի ծխատուն: Նա համաձայն էմ,
Ապրել հեռավոր մի հողմադացում,
Եվ ծամել միայն պանիր ու սխտոր,
Քան քե համադամ պատառներ կույ տալ
Եվ լսել նրա պատմությունները
Որևէ չճնադ ամառանոցում:

ՄՈՐՏԻՄԵՐ

Նա արժանավոր մարդ է, Եղվում էմ.
Շատ խոր կարդացած, հմուտ գիտություն
Գաղտնիքների մեջ. առյուծի պես քաջ,
Անշափ մարդամտ ու քաղցրաբարո
Եվ շոռյլ հնդկաց նոխ հանքերի պես:
Նա քո իստակած էր բարձր է գնահատում,

Եվ երբ դու նրան հակաճանաչում ես,
Զսպում է իրեն, որ չբորբոքվի, այո՛, զսպում է:
Եվ շի գտնվի աշխարհում մեկը, վստահեցնում եմ,
Որ համարձակվեր քեզ նման այդպես գայրացնել նրան
Եվ դաժանորեն շենթարկվեր պատժի:
Մի՛ շարաշահիր այդ բանը, գաւմիկ, Ես քեզ խնդրում եմ:

ՎՈՒՍՏԵՐ

Իսկապես, տեր իմ, դուք արժանի եք խիստ պարսավանի,
Ձեր միակ գործը այստեղ եղել է
Նրան դուրս բերել համբերությունից:
Ձեզ հարկավոր է այդ սխալն ուղղել,
Թեպետ երբեմն դա ցույց է տալիս գերակայություն,
Արիություն, հրաշք և տոհմիկ արյուն...
Մի անգին պարզե՛, որ պննում է ձեզ,
Շատ հանախ, սակայն, դրսևորում է վայրագ կոպտություն,
Վարվեցողության, շնորհի պակաս,
Զսպվելու կարոտ բնավորություն,
Պարժենկոտություն, ամբարտավան դիրք. մեծակարծություն,
Եվ արհամարհանք այլոց նկատմամբ:
Այս արատներից նվազագույնը
Ազնվականին կարող է վանել բարեկամներից,
Կործանել գովի արժանի ամբողջ հրաշալիքը:

ՀՈՏՈՊԵՐ

Օգտակար դաս էր բարեկրթության:
Մեր կանայք եկան, շտապենք նրանց հրաժեշտ տալու:

Մտնում է Գլենդոպերը տիկիճների հետ:

ՄՈՐՏԻՄԵՐ

Մահացու ցավ է. կինս անգլերեն
Չի կարող խոսել, Ես՝ վալեսերեն:

ԳԼԵՆԴՈՎԵՐ

Աղջիկս չի ուզում ձեզնից բաժանվել, տխուր լալիս է:
Եվ իբրև գինվոր ձգտում է մեկնել պատերազմի դաշտ:

ՄՈՐՏԻՄԵՐ

Ասացե՛ք նրան, որ շուտով իրեն
Գու՛մ իմ մորափույր Լեդի Պերսու հետ կրե՛րե՛ք մեզ մոտ:

Գլենդոլերը լեղի Մորտիմերի հետ խոսում է վալեսերեն,
նա էլ նույն լեզվով պատասխանում է նրան:

ԳԼԵՆԳՈՎԵՐ

Նա ուղղակի հուսամհառ է այստեղ. մի դժվարահան, կամակոր և
անզգամ կին է, որին ոչ մի հորդոր չի կարող խելի բերել:

Տիկիները խոսում են վալեսերեն:

ՄՈՐՏԻՄԵՐ

- 15 Բո նայվածքների իմաստը պարզ է:
Այն հրաշալի ուելսերենը,
Որ հորդորում է այդ սուած աշխերից,
Գերազանցորեն ես հասկանում եմ: Բայց ամաշում եմ,
Որ անկառող եմ այդ նույն բարբառով մեզ պատասխանել:

Տիկիները նորից խոսում են վալեսերեն:

Մեր համբույրները հասկանալի են,
Դա դյուրագորով մի բանավեն է:
Բայց ես, սիրելիս, հանգիստ չեմ մնա,
Մինչև եռ լեզուն չսերտեմ կարգին,
Վալեսերենը այնպես է ծորում եռ շրթունքներից,
Ինչպես դիցանույ թագուհու Լեզը
Ամուսն պուրակում վինի նվազով:

ԳԼԵՆԳՈՎԵՐ

Երե առաասվես. նա բոլորովին խելի կթոցնի:

Տիկիները նորից խոսում են վալեսերեն:

ՄՈՐՏԻՄԵՐ

Օ՛, Լս այդ բանում որ փա՛ն անգետ եմ:

ԳԼԵՆԳՈՎԵՐ

- 16 Աղջիկս խնդրում է, որ քնկողմանես այս եղևզների՞,
Դուխդ նրա գոգի մեջ դրած,
Ու նա մեզ համար սիրո Լեզ ասի,
Քնի աստվածը եռ քարթիչները փակի շոյելով,
Արյունը թոված բերկրալի նիրհով,
Մի Եգերագիծ փաշելով մեի, արքնուրյան միջև,
Նման գիշերվա և օրվա միջի Եգերագծին,
Այն կանուխ ժամը, երբ Այգաբացի Երիվարները
Այսում են իրենց հրեղեն երբը առևելի մեջ:

ՄՈՐՏԻՄԵՐ

Ես ամբողջ սրտով պատրաստ եմ նստել և լսել նրան.
Մի՛նչև որ գրվի մեր դաշնաբույրը:

ԳԼԵՆԻՈՎԵՐ

Այո՛. քե՛ք բնկե՛ք,
241 Երածիշտները, որոնք ձեզ համար պիտի նվազեն,
Սղում նախընտրված այստեղից հարյուր մղոններ հեռու
Մի ակնբարբում կնեկայանան: Նստե՛ք և լսե՛ք:

ՀՈՏՍՊԵՐ

Ն՛կ այստեղ, Կատարինե, քո պտուկերը կատարելությունն է
Գե շուտ եկ, շուտ եկ, որ ես իմ զլուխը գոգիդ մեջ դնեմ:

ԼԵԳԻ ՊԵՐՍԻ

Կորի՛ր, հիմար սագ:

Երածիշտները նվազում են:

ՀՈՏՍՊԵՐ

Այժմ տեսնում եմ, սատանան գիտե՛ վալեսի լեզուն,
Պետք է զարմանալ, որ դեր այդման ամարառն է:
Նա հրաշալի նվազածու է, հագուլս եմ երդվում:

ԼԵԳԻ ՊԵՐՍԻ

Այդ դեպքում դու պետք է արտակարգ երածիշտ լինեիր, որովհետև
շարունակ ֆոնյոններով ես դեկավարվում: Հանգիստ նստիր, գող, և լսիր
քո աիկնոջ վալեսերեն երգը:

ՀՈՏՍՊԵՐ

Ես կգերադասեի լսել իմ լեղի շնիկի ոռնոցը իռլանդերեն:

ԼԵԳԻ ՊԵՐՍԻ

Գլուխդ ջարդե՛մ:

ՀՈՏՍՊԵՐ

Ոչ:

ԼԵԳԻ ՊԵՐՍԻ

Ուրեմն՝ լո՛ր:

ՀՈՏՍՊԵՐ

Ոչ էլ կլոեմ, դա կանացի քերությունն է:

ԼԵԳԻ ՊԵՐՍԻ

Թող աստված օգնի քեզ:

ՀՈՏՍՊԵՐ

Որ վալեսունիս անկողի՞ն մտնեմ:

ԼԵՂԻ ՊԵՐՍԻ

Այդ ի՞նչ բան է:

ՀՈՏՍՊԵՐ

Կոխի՛ր, նա երգում է:

Լեղի Մուսիմերը երգում է վալեսական մի երգ:

Այժմ Բո հերթն է, Կատո, դու էլ պետք է երգես:

ԼԵՂԻ ՊԵՐՍԻ

Ոչ մի պայմանով չեմ երգի, երդվում եմ:

ՀՈՏՍՊԵՐ

«Ոչ մի պայմանով չեմ երգի»: Հոգյակ իմ, դու այնպես ես երդվում, կարծես հեուշակագործի կին լինես. «ասաված վիշա, այդ դու չես» կամ թե «ասաված օգնական» և կամ թե «օրվա լույսի պես պարզ է»:

7 Այնպես ես երդվում, կարծես ֆիննրերյան

Դաշաեթից այն կողմ աշխարհ չես տեսել:

Դու երդի՛ր, Կատո, ինչպես վայել է Բեզ ցման տիկնոջ,

Մանուկչիո երգվի՛ր, հեուշակային այդ երդումները

Հարմար են միայն զուգված զարդարված բաղբենիներին:

Գե, այժմ երգի՛ր:

ԼԵՂԻ ՊԵՐՍԻ

Չե՛մ երգի:

ՀՈՏՍՊԵՐ

1 Երկ վախենում ես, թե կարող եմ Բեզ դերձակուհի կարծել, կամ կարմրալանջ վարժեցնող: Երկու ժամ հետո,

Երբ մեք դաշնագիրը ստորագրված կլինի, ես կմեկնեմ:

Եկ ինձ մոտ, երբ ուզում ես:

Գնում է:

ԳԼԵՆԻՈՎԵՐ

Երբա՛նք, Մուսիմեր: Որքան փութկոտ է կրակոտ Պլեսին,

Այնքան դանդաղ է, որոգյակ իմ, Բո ձին:

Թամբերի վրա, — հրատապն այդ է, —

Մեք դաշնագիրը կնքելուց հետո:

ՄՈՐՏԻՄԵՐ

Մտանց ուրախ եմ:

Գնում եմ:

Լոնդոն: Արքունիքը:

Մտնում են քաղաքը Հենրին, իշխան Հենրին և լորդեր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Լորդեր, մեզ մի պահ բողբ անանձին,
Իշխան Վալեսը և ես մասնավոր ատուցիս ունենմ:
Շատ շնեանամ, քանզի կարող եմ ձեր կարիքն զգալ:

Լորդերը գնում են:

Զգիտեմ ինչու արարիչն այդպես վարվեց իմ հանդեպ,
Ինչո՞վ գայրացրի արդյո՞ւ ես նրան,
Որ գաղապարի յու դատավճռով իմ իսկ արշուներ
Իմ դեմ գեներ ընտրեց քինախնդրության և պատուհասի:
Քո արարքներով դու ստիպում ես ինձ հավատալու,
Որ դու երկնքից նախանշված ես իբրև խարազան
Եվ անեղ վրեժ իմ զանցանկները ձաղկելու համար:
Այլապես ասա, ինչպե՞ս կարող էին
Այդպիսի անկարգ, նվաստ բազմանկներ,
Այսպիսի գծուծ, ստոր. անտուհ. պիղծ կյանքի ընթացք,
Ամուլ հանույքներ, քիրտ քարեկամներ,
Որոնց գուզվել էս և մերձ պատվաստվել,
Ռնկերանային վսեմ արշունիք
Իրենց պահելով քո իշխանական սրտին հավասար:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ողորմա՞ծ անի իմ, երանի թե ես կարողանայի
Զմեղել բոլոր իմ արարքները,
Եվ, անտարակույս, ի վիճակի եմ շատ բաներ հեբել,
Որոնց մեջ մարդիկ մեղադրում են ինձ:
Եվ, արդ, մեծելով շատ փուչ հեբիաքներ,
Որ նեղ, ժպտադեմ երկերեսանին և մատնախոսը
Հանախ արքայի տկանջն են խցկում,
Մի քանի մեղքեր հանձն եմ առնում իրավ,
Որոնք արդյունք են իմ ջանելության
Անզուսպ ընթացքին և մոլորության,
Եվ, քաջ զղջալով, ապավինում եմ
Ձեր մեծահոգի ներողությանը:

Երողն ասովածն է: Եվ այսուհանդերձ ինձ զարմացնում են
 Քո հակումները, որ շատ հեռու են
 Քո նախնիների հպարտ սլացքից:
 Վայրագ բրտուրյամբ քո տեղը կորցրիւ մեր խորհրդի մեջ,
 Կրտսեր եղբայրդ է այդ տեղին բազմած,
 Եվ դու գրեթէ օտարական ես ողջ արևունիքի
 Եվ ազգատոհմիկ իմ իշխանների սրտերի համար:
 Այն վառ հույսերն ու ակնկալիքը,
 Որ ասածու՞մ էինք քո վերաբերմամբ՝ գահավեժ Լոյան:
 Ամեն մարդ այժմ իր հոգու խորհում
 Քո անկման ժամն է նախագուշակում մարգարեի պես:
 Երբ ես այդքան շռայլ լինեի, իմ ներկայությամբ,
 Այդքան գոհիկ բոլորի աշխին,
 Այդքան անպիտան և էժանագին ռամիկ տականքին,
 Հանրակարծիքը, որը ինձ օգնեց թագի տիրանալ
 Նախորդին երկար կարող էր պահել իր գահի վրա
 Ինձ լքած անարգ աստուածայրում,
 Անունից, պատվից և վաստակից գուրկ:
 Մականվ երևացի սակայն ես մարդկանց,
 Եվ նրանք ապշած նայում էին վրաս,
 Ինչպես նայում են գիսավոր աստղին,
 Եվ ինձ ցույց տալով «սա է» ասում է հայրը գավակին:
 Ոմանք հարցնում էին «սրտե՞ղ է, ո՞րն է հոյիներոկը»:
 Ապա երկնից հափշտակեցի
 Ես հեզահամբույր վարվեցողություն
 Եվ խոնարհության այնպիսի նարայիկ երևույթ առա,
 Որ սեր կորզեցի մարդկանց սրտերից,
 Իսկ բերաններից՝ բարձրագոչ կեցցե, ցնծալի ողջուն,
 Այն էլ այն դեպքում, երբ օրինական արքան էր ներկա:
 Իմ անձը մնաց միշտ բարձ ու նորոգ,
 Իմ հանդես գալը՝ քրմայեական պատմունանի պես
 Միշտ առաջ բերեց խանդավառություն:
 Եվ որքան սակավ ես Երևացի ամբոխի առաջ,
 Այնքան իմ անձը դարձավ բաղձալի,
 Եվ իմ հազվադեպ ներկայանալը
 Վերածվեց շֆեղ տոնախմբության:
 Ոստոստող արքան ցատկոտեց անվերջ

Այդ քերեամբա խելկատակների
 Եվ հրաբորբաք ցախախածի հետ,
 Որ բռնկվելով՝ մոխրանում է շուտ:
 Իր պետությունը խառնեց աղբի հետ,
 Գահասենյակը գոմատուն դարձրեց շրջմուխիկների,
 Իր մեծ անունը անարգեց նրանց նախատինկներով,
 Եվ իր երեսը իր արհայական համբավին ներհակ
 Հանձնեց աղսյոց ծալրուծանակին, թիրախ դառնալով
 Ամեն անմորուս և նախանձավոր անբան անցորդի,
 Անդրդ հանախորդ հոծ փողոցների,
 Հանրակարծիքին հոնոյանալով:
 Այդպես ամեն օր ազահ աշխերով կույ տալով նրան
 Մարդիկ հագեցան, մեյրք սրտին զարկեց
 Եվ նրա համը դարձավ զարշելի.
 Շատ էիշ չափ է պեւաք, որ քաղցրությունը զգվելի դառնա:
 Երբ առիքն էկավ, որ ժողովրդի սուսը երեւ,
 Կա հուլիս ամսվա կկվին հիշեցրեց,
 Որի կանչը շատ նվաղ է հնչում, աննկատելի:
 Մարդիկ նայում էին արհայի վրա
 Սակայն հափրացած, մութ հայացքներով,
 Եւ չէր հարուցում ոչ մի արտակարգ խանդավառություն,
 Ինչպես լինում է, երբ շփեղափայլ
 Արեւն է էլնում արեւի նման,
 Որ հազվապէս է հիացնողների աշխին Երևում:
 Կես բուն, կես արբուն, կոպերը կախած
 Մարդիկ նայում էին նրա երեսին այնպիսի տեսնով,
 Ինչպես նայում են սոսիսի վրա —
 Կերած, կշտացած, սրտխառնուքի չափ զգված նրանից:
 Այդ նույն Եզերին դու ես կանգնած, Հարրի,
 Եվ դու զրկվել ես քաղալութեական բո շնորհներից
 Տակասնների հետ շփվելուդ համար:
 Բոլորի աշխը կուշտ է մեզանից և խիստ ձանձուրացած,
 Իմ աշխից բացի, որ միշտ պատրաստ է քեզ նորից տեսնել
 Բնդդեմ փափագիս, դարձյալ կուրացած
 Քո հանդէպ տաճած անմիտ անհշանկից:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Իմ Լուսապատիկ բարեշնորհ տեր,

Հետապսու կլինեմ ես իմ կոչմանն ո. անվանն արժանի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Քն այս վիճակում.

Թիչարդն էր քվում բոլորին այդպէս,

որք ես Ֆրանսիայից Ռեվենսպուրգ դարձա:

Ինչպէս որ ես էի, նույնն է Պերսին այսօր:

Շողվում եմ հոգով և իմ մականով,

Որ Հարրի Պերսին շատ ավելի է արժանի գահին,

Քան ղու՝ ուրվական գահաժառանգի:

Առանց իրավունքի և իրավունքի նշույլի անգամ

Ի՛նչ տերութունը նա դրդացրեց գեներեի շաշով,

Ինչպէս շքեմած ժանիք բացած առյուծի հանդեպ:

Եվ քեպետ տարիքով մեծ չէ քեզանից,

Բայց հին լուրերին և շատ մեծարգո եպիսկոպոսի

Առաջնորդում է դեպի ռազմադաշտ արյունոտ մարտի:

Ինչպիսի՜ անմահ պատիվ վաստակեց

Ես հոչակավոր Դուգլասի կովում,

Այն հաղթ Դուգլասի, որի սխրանքն ու արշավանքները

Եվ ռազմագետի համբավը փայլուն

Քաջագույն հերոս հոչակեցին նրան՝

Արժանացնելով մեծ գորաստի պանծալի կոչման

Քրիստոնէական համայն աշխարհում:

1) Եվ Հոտսպերը, այդ ծծկեր Մարսը բարուրների մեջ,

Մանուկ ռազմիկն այդ, երեք արշավում

Այդ մեծահզոր Դուգլասին հաղթեց, գերի բռնեց նրան,

Եվ արձակելով՝ ընկեր դարձրեց իրեն,

Որ հին գժտության երախը փակած՝

Յնցի մեր գահի խաղաղությունը:

Մեա՛ն ինչ կասես. նորթեմբերլենդը,

Պերսին. Դուգլասը և Մորաիմերը

Եվ Յորքի հարգո եպիսկոպոսը

Ինչպիսի կնքելով էլել են մեր դեմ:

Բայց ինչո՞ւ եմ քեզ այս բաներն ասում,

Ինչո՞ւ եմ իգուր ես քեզ հետ խոսում թշնամու մասին,

Նոր իմ մերձավոր և վտանգավոր թշնամին ղու ես:

Իտրկական վախը, նվաստ կրքերն ու ցայտերը մաղձի

Ի գորու են քեզ մարտի կոչել իմ դեմ:

Ինչո՞ւ Հոտսպերին վարձկան դառնալով՝

Պատրաստ ես նրա ոտները լիզել,
Աչքդ միշտ պահած նրա հայացքին,
Ապացուցելով, թե ի՞նչ աստիճան այլասերված ես:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Մի՛ խորհե՛ք այդպես, այդ բուռն շի՛ լինի:
Տեր արարիչը թող ների նրանց,
Որ արժայական ձեր վեհ մտքերը
Կարողացել են այդքան շեղել ինձնից:
Բոլոր մեղքերս երդվում եմ քեզի ես Պերսու գլխով,
Եվ այդ փառավոր օրվա ավարտին
Քաջաբար ասել, որ ձեր որդին եմ,
Երբ ես կհագնեմ արնածոր զգեստ,
Գեմքս կծածկեմ արյան դիմակով,
Որոնց մաքրելով՝ անդարձ կմաքրեմ իմ նախատիններ:
Այդ օրն հեռու չէ, երբ էլ նա շողա,
Քաջ Հոտսպերը՝ պատվի և փառքի այդ սիրված որդին,
Այդ գովարանված ասպետն Երեելի
Եվ ձեր անհայտ Հարրին պիտի բախվեն իրար:
Նրա կորդակին բազմած փառքերը թող բյուրապատկվեն,
Գլխիս ամոքը կրկնակի դառնա,
Կհասնի ժամը և ես կստիպեմ այդ շուտանդացուն
Իր փառքը փոխել նախատինների հետ:
Պերսին, տեր արքա, իմ գործակալն է,
Եվ զբաղված է այժմ ինձ համար փառքեր դիզելով:
Նրանից պիտի այնպիսի դաժան հաշիվ պահանջեմ,
Որ նա իր բոլոր փառքերը ետ տա,
Ամենաշնչին գովեստը նույնիսկ,
Կամ այդ հաշիվը ևս նրա սրտից դուրս պիտի կորզեմ:
Աստժո անունով Երդվում եմ այստեղ.
Թե բարձրյալն ուզեց, որ այս վեհիդ ես իրագործեմ,
Իմ հին խոցերը, որոնք արդյունք են իմ շվայտ կյանքին,
Կբուժվեն, արքա: Իսկ էթե չուզեց՝
Մահը կջնջի բոլոր պարտքերը:
Ես բյուրապատիկ պատուստ եմ մեռնել,
Քան թե այս ուխտը մազաշափ խախտել:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օ՛, այդ ուխտի մեջ կա հարյուր հազար ապստամբի մահ:
Քեզ կվստահվի լիազորություն և բարձր պաշտոն:

Մտնում է վալաներ թլանալ:

Ի՞նչ լուր ես բերել, իմ ազնիվ թլանա, տեսնո՞վ փութկոտ է:

ԲԱՆՏ

Պատնաւոր, արեա, իմ բերած լուրն է:

Լոբո Մորտիմերը, այդ շոտլանդացին, տեղեկացել է.

Որ կունս Գուլլար և անգլիացի ապստամբները

Այս ամսի տասին միավորվել են Շոտլանդի մեջ.

Ահեղ ուժ են կազմել,

Եվ, եթե մնան իրենց ուխտի՞ն հաստատ.

Հազիվ թէ այդքան անարկու վտանգ

Մեր տերութունը սասանած լինի:

ԹԱԳԱՎՈՐ ՀՅՆՐԻ

Այդ լուրը հին է, հինգ օր կլինի.

Եվ մեր գործերը արդեն մեկնում են.

Այսօր արշավեց վեստմոնթենդ կոմսը

Լանկաստեր ուղուս՝ իշխան Ջոնի հետ:

Հաջորդ շրեֆշարքի դու կերթաս, Հարրի,

Իսկ հինգշարքի՝ մենք:

Պու Գլոստերով կիջնես Բրիչնորը,

Այդ է գործերի հավաքաւորին: Եվ Լս հաշվել Լմ,

Մոս տասներկու օր ժամանակ է պետք.

Որ մեր գլխավոր բոլոր ուժերը Բրիչնորը հասնեն:

Գործերը շատ են, շտապե՛նք հիմա,

Փութալը կլանք է, դանդաղելը՝ մահ:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Իստշիփ: «Վարագի գլուխ» պանդոկը:

Մտնում են Ֆալստաֆը և Բարդոլֆը:

ՅԱՎՍԱՅ

Ճիշտ է, չէ՞. Բարդոլֆ, որ մեր վերջին գործողությունից հետո ես սկսել
Լմ խայտառակ կերպով նիհարել: Մի՞թե Լս չեմ հալչում: Մի՞թե Լս չեմ
Եվստում և ուսփի վրա շորանալով՝ կուշ զալիս: Իմ մաշկը կախվել է վրաս

ինչպես պատավ կնոջ փոնրված հագուստը: Կննտովել էմ բորշումած խնձորի պես: Չէ՛, ես պետք է մեղքերս քաղցած և այն էլ շուտով, քանի որ դեռ մի բանի նման եմ, այլապես կարող էմ բոլորովին վհապակել և այլ ժամանակ ուժ էլ չեմ ունենա գոչալու համար: Ես նույնիսկ մտապահ եմ, թե եկեղեցու ներսը ինչից է շինված, թե սուտ էմ ասում, թող պղպեղի հատիկ լինեմ կամ գարեջրավանառի փոստ գրաստ: Այո՛, եկեղեցու ներսը: Եվ ընկերները, իմ այդ սրիկա ընկերները ի վերջո կործանեցին ինձ:

ԲԱՐԴՈՒՅ

Պարոն Ջոն, լավ չէ, որ մոայլվելով՝ ձեր սեամադրությունը այդպես փշազնում եք: Երկար չեք ապրի:

ՅԱՆՍԱՅ

Այդ այդպես է: Մի լկո՛խ, անառակ երգ երգիք ինձ համար և գվարթացրու ինձ: Կար ժամանակ, որ ես էլ օժտված էի առափնի հակումներով, ինչպես վայել է ազնվականին: Հագվադեպ էի երդվում, խաղում էի շաքաթը ոչ ավելի քան յոթ անգամ, բոզանոց էի հանախում ոչ ավելի քան քառորդ ժամը մեկ անգամ: Հիշում եմ, երեք քե շորս անգամ վնասել էմ իմ վերցրած պարտքը: Ապրում էի հիանալի և սահմաններ չէի խախտում: Իսկ այժմ ապրում եմ բոլորովին անկանոն, խախտելով ամեն շափ ու սահման:

ԲԱՐԴՈՒՅ

Դուք այնպես եք հաստացել, պարոն Ջոն, որ դուրս եք եկել ամեն բանական սահմանից: Դուք դարձել եք անսահման, պարոն Ջոն:

ՅԱՆՍԱՅ

Դու ուղղի՛ր քո դեմքը, ես էլ կողողեմ իմ կյանքը: Դու մեր նավի դռնակակիրն ես՝ լապտերը խելին: Իսկ լապտերը քո ֆիթն է: Դու հրակիր ասպետն ես մեր լուսատու:

ԲԱՐԴՈՒՅ

Իմ դեմքը, պարոն Ջոն, ձեզ ոչ մի վնաս չի տալիս:

ՅԱՆՍԱՅ

Ընդհակառակը, ինձ օգուտ է տալիս, պատրաստ եմ երդվել, — ինչպես շատերին օգուտ է տալիս մեռածի գանգը կամ memento mori-ին¹: Ամեն անգամ, երբ ռեխիդ եմ նայում, իմ միտքն են ընկնում դժոխքի կրակները և այն հարուստը, որ կյանքում միշտ վառ ծիրանի էր հագնում, չէ որ նա

¹ Հիշիր, որ դու մեռնելու ես (լատ.):

այժմ այնտեղ վառվում է. վառվում իր վառաց զգեստների մեջ: Երե դու գեր փոքր ինչ առաքի՞նի լինելի, ես քո քրոջ վրա երդվելով հետևյալը կառնի. «Երդվում եմ այս կրակի բոցով, որ հրեշտակն է ասած», բայց դու բոլորովին անհուսալի ես դարձել և երև այդ լույսը շիներ դեմքիդ, մեզ հեշտությամբ կարելի էր շփոթել խավարի վիժվածքի հետ: Երբ դու գիշերով դեպի Գեղշիլ կիր վազում, որ իմ ձին բռնես, ես կառնում ելի. քե մթության միջով մի բռն հարց է վառվելով բոցում կամ հրե մի զբն-ցակ: Թե սուս եմ ստում, բող փողի մեջ խեռ շմեա: Օ՛, դու հաղթահակի տեղափոխան եր ես, հավերժ անհանգչելի հրավառությամբ: Քո շնորհիվ ես հազար մարկ խնայեցի, որ անպայման ծախսվելու էր մումերի և ջա-մերի վրա, մեռ հանապարհը լուսավորելու՝ մեզ նես գիշերով պանդոկից պանդոկ քրեկիս: Սակայն դու իմ հաշվին այնքան գինի կոնծեցիր, որ դա ինձ վրա ավելի քանկ նստեց, քան քե բոլոր մումերն ու հրագեները. երև դրանք գնված լինեին եվրոպայի ամենաքանկ հրագանցներում նույնիսկ: Արդեն երեսուներկու տարի է. ինչ ես այս դեմքի վրա վառ եմ պահում այդ կարմիր հուրը: Եվ բող ասավածն ինձ արժանի դարձնի վառձատրության:

ԲԱՐԴՈՒՅ

Գրո՛ղը տանի, երանի քե իմ քիթը քո փոքի մեջ լինեռ:

ՅԱԼՍԱՅ

Ասաված ոչ անի, ես այրվածքներից կմեռնեի իսկույն:

Մանում է տանտիրումին:

Գե, հիմա ասա ինձ, տիկին Հավ մարիկ, դու որոնեցի՞ր, գտա՞ր, քե ավ և մաքրել իմ գրպանները:

ՏԱՆՏԻՐՈՒՄԻ

Այդ ի՞նչ եմ ստում, պարոն Զոն: Մի՛քե կարծում եմ, քե ես գողե եմ պահում իմ տան մեջ: Որոնեցի, հարց ու փորձ արեցի բոլոր մարդկանց, ապաներին ու ծառաներին, առանձին առանձին: Իմ ամուսինը նույնպես հարց ու փորձ արեց: Դեռ մինչև հիմա իմ պանդոկից մի հատիկ մազ կտրած չկա, նույնիսկ դրա մի տասնորդականը:

ՅԱԼՍԱՅ

Դու ստում ես, տանտիրումի: Բարդուֆին սափրեցին և նա շատ մազ կտրեց այստեղ: Ինչով ուզում ես՝ պատրաստ եմ երդվել, որ իմ գր-պանները պանդոկում դատարկեցին: Լո՛ի՛ր, գալում կնիկ: Լո՛ի՛ր:

ՏԱՆՏԻՐՈՒՇԻ

Ո՞վ է զալում կնիկ: Ե՞ս: Ինչպե՞ս եմ հանդգնում ինձ այդպիսի խոսք ասել: Արարչի լույսը վկա, դեռ մինչև այսօր ինձ ոչ ոք այդպես չի անվանել պանդոկիս մեջ:

ՅԱԼՍՏԱՅ

Լոի՛ր, ասում եմ: Ես ին ամբողջ ներքինն եմ նախաշում:

ՏԱՆՏԻՐՈՒՇԻ

Չեզա՛վ, պարոն Ջոն: Դուք ինձ չեք նախաշում, պարոն Ջոն: Իսկ ես ձեզ գիտեմ: Դուք ինձ փող եմ պարտք և այժմ դիտմամբ վեճ եմ հրահրում, որ այդ պարտքը չվճարեմ: Ես ձեզ համար մի դյուծին շապիկ գնեցի, որ ձեր մեջքը ծածկեմ:

ՅԱԼՍՏԱՅ

Այդ շապիկները կոշա կտավից էին, գարշելի կտավից: Տվեցի հացբուխների կանանց և նրանք դրանցից իրենց համար մադեր շինեցին:

ՏԱՆՏԻՐՈՒՇԻ

Ո՞չ, ես ազնիվ կին եմ և հավատացեմ խոսքիս, այդ շապիկները հստակապես կտավից էին, որի արշիներ ուր շիլինգ արժեք: Բացի այդ, պարոն Ջոն, դուք ինձ պարտք եմ ուտելու և խմելու արժեք, նաև այն Լասնչուս ֆունտը, որ փոխարինաբար տվեցի ձեզ:

ՅԱԼՍՏԱՅ

(Բարդոլֆին մատնացույց անելով) Նա նույնպես օգտվել է այդ բուրբից, քող նա վճարի:

ՏԱՆՏԻՐՈՒՇԻ

Նա՞: Այդ խեղճ մարդը աղֆատ է, ոչինչ չունի:

ՅԱԼՍՏԱՅ

Նա՞ է աղֆատ: Նայիր նրա երեսին: Երե աղֆատը նա է, սպա ո՞վ է հարուստը: Թող այդ դեմքը նրա քից ու այտերից կտրեն, միևնույն է, ես ոչ մի գրոշ չեմ վճարի: Ինչ ինձ երեխա՞յի սեղ ես դրել, ինչ է: շեկոս որ ուզում ես մի քիչ հանգստանալ պանդոկում, գրպաններդ իսկույն մաքրագործում են: Իսկ քեզ հայտնի՞ է, որ այս պանդոկում անհայտացել է իմ պապի մատանին, որով կնկում են: Քառասուն մարկ արժեք:

ՏԱՆՏԻՐՈՒՇԻ

Օ՞, տեր իմ շիսուս, իշխանը իմ ներկայությամբ ասել է, և այն էլ մի ֆանի անգամ, որ այդ մատանին պղնձից էր շինված:

ՅԱԼՍՏԱՅ

Ինչ ասացի՞ր: Քո այդ իշխանը հիմարի գլուխ է և շարակամի մեկը. եթե նա համարձակվեր այդ բանը իմ ներկայությամբ ասել, ես նրան չան պես կծեծեի:

Հանդիսավոր երթով մտնում են իշխան Հենրին և Պետոն: Ֆարստաֆր ընդառաջում է նրանց իր գավազանը շուրթերին դրած՝
սրնգի պես նվագելով:

Հը, ի՞նչ կա, սիրելի բարեկամ: Գրողը տանի, տեսնո՞ւմ ես քամին որ կողմից է փչում: Չլինի՞ թե բոլորս պետք է արշավի էլնենք:

ԲԱՐԳՈՒՅ

Այո և գույգ-գույգ, ինչպես նյութեյտ բանտի կալանավորները:

ՏԻՐՈՒՂԻ

Խնդրում եմ ինձ լսե՛ք, իշխան իմ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Դու ինձ բա՞ն ունես ասելու, տիկին Վոագ: Ամուսինդ ինչպե՞ս է: Ես նրան սիրում եմ, նա ազնիվ մարդ է:

ՏԻՐՈՒՂԻ

Իմ բարի իշխան, լսե՛ք ինձ:

ՅԱԼՍՏԱՅ

Դու նրան քող և ինձ լսի՛ր, խնդրում եմ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ի՞նչ կա, Ջեկ, խոսի՛ր:

ՅԱԼՍՏԱՅ

Անցյալ գիշեր ես քնեցի այստեղ՝ վարագույրների ետևում: Հագիվ էի աչ՛կես փակել, երբ իմ գրպանները մաքուր սրբեցին: Այս պանդոկը կատարյալ հանրատուն է դարձել, այստեղ գրպաններ են դատարկում:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Քո մոտից ի՞նչ են գողացել, Ջեկ:

ՅԱԼՍՏԱՅ

Կհավատա՞ս, եթե ասեմ, Հել. երեք թե չորս տոմսակ յուրախանչյուրը Բառասուն ֆունտ արժողությամբ և իմ պապի մատանին՝ կնիքը վրան:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Այդ մատանին ոչինչ բան է, հազիվ ուր պենի աճողութեամբ: Մեծ կորուստ չէ:

ՏԻՐՈՒՂԻ

Ես այդպես էլ ասացի նրան, տեր իմ: Հայտնեցի նաև, որ դուք եք այդպես ասել: Սակայն, տեր իմ, ես այնպիսի անարգական խոսքեր ասաց ձեռ մասին, որ միայն իր պես շարալեզու մարդը ընդունակ է ասել: Սպաննաց նույնպես գավազանով ձեծել ձեզ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ի՞նչ: Ես այդպիսի բան ասած չի լինի:

ՏԻՐՈՒՂԻ

Թող ես անագնիվ և անհավատարիմ լինեմ, այսուհետև անարժան լինեմ կին կոչվելու, բե սոռա եմ ասում:

ՖԱԼՍՏԱՅ

Քա մեզ նույնքան ազնվություն կա, որքան հյուր կա շորացած սև սալորի մեջ: Դու նույնքան հավատարիմ ես, ինչքան իր որչից հալածված աղվեսը, իսկ ինչ վերաբերում է բո կանացիությանը, ապա դոճապանուհի Մարիանան բո համեմատությամբ կարող է տիկնաց տիկին լինել Իդանդիո պահակագորաց հրամանատարի: Կորի՛ր, փուշ արարած: Կորի՛ր:

ՏԻՐՈՒՂԻ

Իսկ ի՞նչ արարած եմ: Քո կարծիքով ի՞նչ տեսակ արարած եմ ես:

ՖԱԼՍՏԱՅ

Ի՞նչ արարած. մի այնպիսի անպետքություն, որ պետք է շնորհակալ լինես աստծուն քեզ ստեղծելու համար:

ՏԻՐՈՒՂԻ

Ես ոչ մի փուշ արարած կլ չեմ, իմացած եղիւր: Ես մի ազնիվ մարդու կին եմ, իսկ դու թեպետ և ասպետ ես համարվում, բայց իբրև մի ստոր մարդ ես, էթե հանդգնում ես այդպես կոչել ինձ:

ՖԱԼՍՏԱՅ

Իսկ դու թեպետ կին ես կոչվում, իբրև մի կենդանի ես. այլ կերպ ասած:

ՏԻՐՈՒՂԻ

Ի՞նչ տեսակ կենդանի, բացատրիւր, դու, ստո՛ր մարդ:

ՅԱԼՍՏԱՅ

Տեսա՞կն ես ուզում. ջրշուն:

ԻՇԵԱՆ ՀԵՆՐԻ

Ջրշո՞ւն, պարոն Ջեկ: Իսկ ինչո՞ւ հատկապես ջրշուն:

ՅԱԼՍՏԱՅ

Որովհետև նա ոչ ձուկ է, ոչ միս, և տղամարդը չի իմանում, թե որ կողմից մտանա նրան:

ՏԻՐՈՒՂԻ

Եվ դո՞ւ ես ինձ այդ բանը ասում, անիրավ. դու և ուրիշ ամեն տղամարդ հրաշալի գիտի, թե որ կողմից մտանա ինձ: Ա՛խ, դու, անզգա՛մ:

ԻՇԵԱՆ ՀԵՆՐԻ

Գու իրավացի ես, տիրուհի, նա քեզ շարաշար գրպարտում է:

ՏԻՐՈՒՂԻ

Նա ձեզ էլ է գրպարտում, տեր իմ. մի ֆանի օր առաջ ասաց, որ դու՛ր իրեն պարտք էի հազար ֆունտ ոսկով:

ԻՇԵԱՆ ՀԵՆՐԻ

Մի՞թե Լս քեզ հազար ֆունտ Լմ պարտք, փուչ անպիտան:

ՅԱԼՍՏԱՅ

Հազար ֆո՞ւնտ: Ո՛չ, միլիոն ֆունտ, Հեյ: Քո սերը միլիոն արժե, իսկ դու քո սերը պարտք ես ինձ:

ՏԻՐՈՒՂԻ

Բացի այդ, տեր իմ, նա ձեզ անվանեց հիմարի գլուխ և սպառնաց գավազանով ծեծել:

ՅԱԼՍՏԱՅ

Ես այդպիսի բա՛ն ասացի, Բարդոլֆ:

ԲԱՐԴՈԼՖ

Անշուշտ ասացի՞ք, պարոն Ջոն:

ՅԱԼՍՏԱՅ

Այո, բայց այն դեպքում, երբ նա պնդեց, որ իմ մատանին պղնձից է:

ԻՇԵԱՆ ՀԵՆՐԻ

Հաստատապես ասում եմ, որ պղնձից է. տեսնե՞մ, կհանդգնե՞ս խոսքդ գործ դարձնել:

ՖԱԼՍՏԱՅ

Պիտես ինչ, Հել, եթե դու սովորական մարդ լինեիր՝ կհանդգնեի, բայց
քանի որ դու իշխան ես, հետևաբար ես քեզնից վախենում եմ: Եվ դա
նման է այն վախին, Լեր ատյուծի կորյունն է մոռնում:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Կորյուն. գուցե ատյուծ կասեիր:

ՖԱԼՍՏԱՅ

Կարող էի ատյուծ ասել, եթե խոսքը թագավորից վախենալու մասին
լիներ: Մի՞թե կարծում ես, որ դու և քո հայրը հավասար չափով եմ
սարսափ ազդում: Ո՛չ, թող իմ գոտին պայթի, եթե ես ձեր երկուսից հա-
վատարապես վախենամ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Օ՛, եթե այդ բանը պատահեր, քո հսկա փորը ինչպե՞ս պիտի կախվեր
ծնկներին: Ա՛խ, դու, փուշ անպիտան, քո այս որովայնում ոչ հավատար-
մության համար տեղ կա, ոչ էլ՝ նշմարաւորյան և ազնվության համար:
Նա համատարած աղիք է ու փորոտիք և այն էլ պինդ խճողված: Ինչպե՞ս
ես հանդգնում մի ազնիվ կնոջ այդպես ամբաստանել հայտարարելով,
թե քո քոզանը դատարկել է: Ախ դու, պոռնկորդի, դու, գրպարտիչ,
դու, փված խառնագնաց: Պանդոկի հաշվեթղթերից, հասարակաց տնե-
րի հասցեներից և շունչը վրադ պահող կես-գրոշանոց արժողութամբ
սառնաշափարից բացի քո գրպաններում եղե՛լ է արդյո՞ք ուրիշ բան: Սուտ
ասողը սրիկա լինի, թե այդ անպետություններից բացի ուրիշ բան է
եղել այնտեղ: Իսկ դու դեռ շարունակում ես պնդել քո ասածը և չես
ուզում այդ սուտը գրպանդ կոխել, որ աչքից հեռու լինի: Մի՞թե չես ա-
մաշում:

ՖԱԼՍՏԱՅ

Էսի՛ր, Հել, քեզ հայանի է, որ Ադամն ընկավ այն ժամանակ, երբ ան-
մեղության վիճակում էր: Արդ, ի՛նչ անի խեղճ Ջեկ Ֆալստաֆը, որ կա-
րողանա կործանումից փրկվել մեր այս սրիկայական դարում: Դու տես-
նում ես, որ իմ վրա ավելի շատ միս ու նաբլ է կուտակված, քան ուրիշ-
ների և հետևաբար իմ տկարություններն ավելի շատ են: Պիտի խոստո-
վանե՞ս, ուրեմն, որ իմ գրպանները դու ես դատարկել:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Այո, պատմածից երևում է, որ այդպես է:

ՅԱԼՍԱՅ

Ես ինչ ներում եմ, տանտիրուհի: Գնա նախանաչ պատրաստիր: Սիրի՛ր քո ամուսնուն, հսկի՛ր քո ծառաներին, հո՛գ տար հյուրերիդ: Գու պետք է ընդունես, որ ես միշտ էլ բարեհամբույր եմ համոզիչ փաստեր հանդես: Տեսնում ես, ես արդեն հանդարտվեցի: Ո՛չ, գնա ի սեր աստծո, բավական է: (*Պանդոկի տիրուհին գնում է*): Ասա տեսնենք, Հել, ի՞նչ նորություններ կան արժանիքում: Ինչո՞վ վերջացավ կողոպուտի գործը:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Օ՛, իմ անգին առջառ, ես քո պահապան հրեշտակն եմ Եղել և այդպես էլ կլինեմ այսուհետև: Փողը վերադարձված է տերերին:

ՅԱԼՍԱՅ

Գրո՛ղր տանի, ինչպես շեմ սիրում, երբ վերցված փողը ետ են տալիս: Գա կրկնակի աշխատանք է:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ես հաշտվել եմ իմ բազավոր հոր հետ և այժմ կարող եմ ազատուեն իմ ուզածն անել:

ՅԱԼՍԱՅ

Կողոպուտի՛ր, ուրեմն, արժունի գանձարանը մախ և առաչ և այն էլ հեկց հիմա:

ԲԱՐԴՈՒՅ

Կողոպուտի՛ր, տեր իմ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ես ինչ համար, Ջեկ, ծառայության տեղ եմ արել հետևակում:

ՅԱԼՍԱՅ

Իսկ ես կգերադասեի հեծելազորում ծառայել: Որտեղի՞ց գտնեմ այնպիսի մեկին, որ կարողանա հարպկուեն զողանալ: Այի հիանալի զոդ, տաբիքը մոտավորապես լսանեկու, կամ մի էիչ ավել, կամ պակաս: Ես փողի ահավոր կարիք եմ զգում: Շնորհակալ եմ աստծուց, որ այս խոսվարարները կարգին մարդկանց դեմ են բնթառացել և ես նրանցից վախենալու պատճառ չունեմ: Փա՛նք ու պատիվ նրանց:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Բարդո՛ւլֆ:

ԲԱՐԴՈՒՆ

Տէ՛ր իմ:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Այս նամակը իմ եղբայր Ջոնին տար, Լանկաստերի իշխան Ջոնին, իսկ այս մյուսը՝ կոմս Վեստմոուլէնդին: (Բարդուղէք գնում է): Իսկ այժմ, Պետո, դեպի ձիերը, քանզի ես և դու պետք է երեսուն մղոն նանապարհ կտրենք մինչև կեսօր:

(Պետոն գնում է):

Ջեկ, վաղը ուղիղ ժամը երկուսին

Ես իեզ կապտեմ Թեմպլ-սահում: Շտապ այնտեղ եկ,

Որ ծանոթանաս քո նոր պաշտոնին,

Հրաման և փող վերցնես մեր զորքին:

Նրկիրն այրվում է: Պերսին է կանգնած իր բարձունքին նենգ.

Նրկուսից մեկը պետք է տապալվի՝ կամ Պերսին, կամ մենք:

Գնում է:

ՅԱԼՍՏԱՆ

Օ՛, խոսի՛ր անգին, աշխարհ անվեհեր:

Շտապ նախանաջ մատուցիր, վնուկ,

Որոտա, պանդոկ՝ իմ ուզմի քմբուկ:

Գնում է:



Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Զ Ո Ր Ր Ո Ր Դ

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

Ապստամբների ուղմանամբարը Շրուսթերի մտ:

Մտնում են Հոսսպեր, Վոստեր և Գուգար:

ՀՈՏՍՊԵՐ

Այդ լավ է ասված, ազնիվ շոտլանդացի,
Այս հարտար դարում նշմարիտ խոսքը
Եթե չդիտվեր շողոճորություն,
Ձեզ կձոնեի այնպիսի գովեստ,
Որին չի հասել դեռ ոչ մի գինվոր փառքի շուկայում:
Վկա է աստված, ես ընդունակ շեմ շողոճորքելու,
Շողոճարարի փաղափուշ լեզուն ատելի է ինձ,
Սակայն իմ սրտում ձեզ գերապատիվ տեղ է հատկացված,
Եվ կոչ եմ անում, որ դուրս իմ խոսքը գործով ստուգեմ:

ԴՈՒԴԼԱՍ

Յ՛, պատվի արքա,
Պատրաստ եմ նկատել հակահարվածի
Համայն աշխարհի ֆաջագույնի դեմ:

ՀՈՏՍՊԵՐ

Այդպես էլ պետք է, հրաշայի է:
Մտնում է մի բանբեր՝ նամակով:
Այդ ի՞նչ նամակ է:

(Գուգլասին)

Ես ձեզնից անշափ շնորհակալ եմ:

ԲԱՆԲԵՐ

Ձեր հայրն է ուղարկել:

ՀՈՏՄՊԵՐ

Նամակ իմ հորի՛ց: Ինքն ինչո՞ւ շեկավ:

ԲԱՆՔԵՐ

Նա շի կարող գալ, ծանր հիվանդ է:

ՀՈՏՄՊԵՐ

Գրո՛ղր տանի, ժամանակ գտավ անգործ պառկելու
Շաշուշառաշի այս քեժ օրերին:
Իսկ ո՞վ է նրա գորհն անաչնորդում, զորապետն ո՞վ է:

ԲԱՆՔԵՐ

Չգիտեմ, տե՛ր իմ, նրա մտքերը համակի մեջ եմ:

ՎՌԻՍՏԵՐ

Ուրեմն կոմսը անկողի՞ն բնկավ:

ԲԱՆՔԵՐ

Արդեն չորս օր է, որ նա պառկած է:
Եվ չորբորդ օրը, երբ մեկնում էի,
Իր բժիշկները հուսահատ էին, սաստիկ վախեցած:

ՎՌԻՍՏԵՐ

Նախ թող օգնե՛ր մեզ դարը բուժելու
Եվ ապա հանգիստ անկողին մաներ: Նրա ողջությունը
Առավել շատ էր այժմ պիտանի, քան երբևիցե՛:

ՀՈՏՄՊԵՐ

Տկարանալ, պառկել, այն էլ այս պահին: Այդ հիվանդությամբ
Նա մեր ձեռնարկի ոգին վարակեց,
Եվ այդ վարակը կհասնի նույնիսկ մեր ռազմահամարը:
Նա ինձ գրում է, որ նիվանդացավ,
Անկարող եղավ բարեկամներին շտապ հավաքել.
Ոչ էլ խորհում է պատասխանատու և վտանգավոր
Այդպիսի մի գործ ուրիշ ուրե՛կ մեկին վստահել:
Մեկայն քաջաբար խորհուրդ է տալիս,
Որ մենք մեր սակավ ուժերով քեկուզ այդ գործը վարենք.
Բախտի քմայքին ապավինելով,
Քանզի շատ ուշ է այժմ նահանջել, գրում է հայրս,
Եվ քաղավորք տեղյակ է անշուշտ
Մեր ամեն տեսակ դիտավորության: Ձեր կարծիքն ի՞նչ է:

ՎՈՒՅՏԵՐ

Ձեր հոր պառկելը մեծ հարված է մեզ:

ՀՈՏՈՊԵՐ

Առսկալի մի վերք. կազմից անշատվեց մի ուժեղ անդամ,
Բայց այդ կորուստը. ըստ իս, այնքան էլ սարսափելի չէ,
Ինչպես թվում է: Խելացի՞ բան է մեր ինչքը բողբոջել
Մենք մի հարվածի անտոշ ելքին, այդքան նոխ մի հանք
Անստույգ պահի կույր խաղին հանձնել: Ո՛չ. խելացի չէ:
Վշտպես վարվելով մենք մի՞նչև հառակ
Պիտի պարպելնք մեր հույսերն անգին,
Անգարձ լքելով մեր երջանկության վերջին սամմանք:

ԳՈՒԳԱՍ

Գուր հիշտ եմ ասում.
Մեզ ապավեն է մի նեցուկ այժմ.
Որին հենվելով՝ համարձակորեն
Կարող ենք հուսալ բախտավոր մի ելք ապագայի մեջ.
Գա հահանջելու սփոփանքն է անշուշտ:

ՀՈՏՈՊԵՐ

Մի ապաստարան մեզը մտնելու,
Եթե սատանան կամ շարիքն անևղ
Փորձեն աչքով տալ մեր այս սուրբ գործի անմեղությունը:

ՎՈՒՅՏԵՐ

Փափագելի է. որ հայրդ լինե՛ր այստեղ մեր կողքին,
Մեր այս նեղնարկին հանգուրժելի չէ անշատվածություն:
Կոմսը բացակա՞. ոմանք անգիտակ դրա պատճառին,
Կարող են կարծել, թե նա արհային հավատարիմ է,
Շրջահայաց է, և կամ. պարզապես,
Չարակամ է մեր առաջընթացին.
Չգալու պատճառը այդ կհամարեն:
Իսկ մի այդպիսի մտածողություն,
Կարող է կանխել բարեկամների հորձանքը մեզ մոտ.
Նրանց սրտերում առաջացնելով կասկած և երկյուղ,
Քանզի քաջ գիտենք. զենք բարձրացնելիս
Մենք պարտավոր ենք վերջակե՛ս դնել
Մտերի խափվ հարցասիրության.

Եցանել բոլոր ծակ ու հեղեբը,
Որ գգոն աշխր բանականության
Չհետապնդի մեզ դարանակալ:
Ձեր հոր այդպիսի բացակայելը՝ մի բացված փեղկ է
Անհայտ սարսափներ մեզ ցուցադրելու,
Որ ամենևին երագած չկանք:

ՀՈՏՄՊԵՐ

Գու՛մ շատ հեռացա՛մ,

Մինչդեռ ես կոմսի բացակայելը
Գիտում եմ իբրև օգտակար մի բան:
Գա մեր ձեռնարկին շֆեղ փայլ կտա և շատ ավելի
Կերագանց կարծիք ու հերոսություն,
Քան երև կոմսը այնտեղ գտնվեր:
Մարդիկ կսկսեն այսպես մտածել.
Եթե մենք առանց նրա օգնության
Վե՞րել ենք հանդուգն սլայֆարի էլենել
Ընդդեմ մի ամբողջ քաղաքություն, նրա օգնությամբ
Ի վիճակի ենք համայն երկիրը հիմնիվեր շուտ տալ:
Ձեր վախն իզուր է: Ամեն ինչ լավ է,
Բոլոր հողերը միաբան, առողջ:

ԳՈՒԳՂԱՍ

Իմ ուզածն այդ է: Եվ Շոտլանդիայում
Մարդիկ չգիտեն, քե վախն ինչ բան է:

Մտնում է Ռիչարդ Վեռնոնը:

ՀՈՏՄՊԵՐ

Ահա զարմիկն իմ: Բարի գալուստ, Վեռնոն:

ՎԵՐՆՈՆ

Շնորհակալ եմ: Իմ բերած լուրը սակայն բարի չէ,
Կոմս Վեսամոդլենդը յոթ հազար զորով
Այս կողմն է շարժվում իշխան Ջոնի հետ:

ՀՈՏՄՊԵՐ

Փույթ չէ: Ուրի՛շ լուր:

ՎԵՌՆՈՆ

Իմացա նույնպես,

Ու արեան անձամբ մի սպանագեն հգոր բանակով
Մեծ արագությամբ այստեղ է գալիս:

ՀՈՏՍՊԵՐ

Թող գա, բարով գա: Իր որդի՞ն ուր է,
Այդ խելացնոր իշխան Վալեսը,
Ու որդի աշխարհի հոգսերը բողած թրև է գալիս
Ընկերների հետ:

ՎԵՌՆՈՆ

Զարդարված, զինված,

Հողմերին բոշող բազենների պես,
Սեծիվների պես, որ նոր լողացած
Ետենց քներ բախահարում են սլացֆի պատրաստ,
Փայլում են ոսկյա գրահների մեջ,
Փարձ. ինչպես մայիս, և շոայլ, ինչպես արևն ամառվա,
Ուլի պես տարօրտ, ցուլի պես վայրագ:
Եւ երիտասարդ իշխանին տեսա պերնաշուք զինված
Պլիսին սողավառտ, գիսուերին գրահ,
Հարատ, քևավոր Մերկուրիոսի պես
Եւ սչնպես բերև նետվեց իր թամբին,
Ասես ամպերից հրեշտակ իջավ
Անզուսպ Պեգասին սանձահարելու
Եվ հիացնելու աշխարհը մի սուրբ ձիավարությամբ:

ՀՈՏՍՊԵՐ

Մի շարունակե՛ք: Այդ գովասանք
Ավելի վատքար տենդ է բորբոքում,
Իսն՝ թե մարտ ամսի դալուկ արևը: Թող գան, շուտ թող գան,
Զսեր միշտ պետք է զարդարված լինի,
Մենք հրանց տաք-տաք
Կրճճաչենք իսկույն գոռ սպտերագմի հրաշյա կույսին
Եվ սպանագեն Մարսը կբագմի իր գահի վրա
Սինչև ծոծրակը արյան մեջ բաղված: Այրվում են տենդից,
Ու ալպչափ հուռթի հունձք մերձ է շատ,
Շույց դեռ մերը չէ: Շո՛ւա իմ ձին բերե՛ք,
Ու կայծակի պես սուրալով արագ

Իշխան Վալեսի կրծքի դեմ շողամ:

Ձին՝ ձիուն բախվի, մենք իրար բախվենք՝ սուր սրի զարկած,

Մինչև որ մեկիս դիակն ընկնի ցած:

Օ՛, երանի քե Գլենդովերը շուտ այստեղ հասներ:

ՎԵՌՆՈՆ

Մի լուր էլ ունեմ.

Աշտանակելիս Վուստերով անցա:

Գլենդովերը, — այդպես լսեցի, — այս երկու շաբաթ

Ի վիճակի չէ գորհեր ժողովել:

ԴՈՒԳԼԱՍ

Դա այդ լուրերից վատքարագույնն է:

ՎՈՒՍՏԵՐ

Այո, երդվում եմ, սառնամանիք է փշում դրանից:

ՀՈՏՍՊԵՐ

Իսկ թագավորը որքա՞ն գորհ ունի:

ՎԵՌՆՈՆ

Երեսուն հազար:

ՀՈՏՍՊԵՐ

Թեկուզ ֆառասուն:

Իմ հայրը և նա բացակա են արդ,

Մեզ սպասում է անհավասար մարտ:

Շտապենք այժմ և մեր գորհերի տողանցքն ստուգենք,

Երև մեռնել է վիճակված վերուստ՝ ցնծությամբ մեռնենք:

ԴՈՒԳԼԱՍ

Մի խոսե՛ք մահից: Անվախ եմ, արի:

Մահից պաշտպանված ամբողջ կես տարի:

ԳՆՈՒՄ ԵՆ:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Ճանապարհ Քովենտրու մուտ:

Մտնում եմ Ֆալստաֆը և Բարդոլֆը:

ՖԱԼՍՏԱՅ

Բարդոլֆ, դու մեզանից առաջ շտապիր Քովենտրի և ինձ համար մի շիշ սպիտակ գինի նարիր: Մեր զինվորները անցնելու են Բաղաֆի միջով առանց կանգ առնելու: Մենք այս գիշերը պետք է Սետոն-Կոֆիլում լինենք:

ԲԱՐԴՈՂ

Իսկ փողը, գնդապետ:

ՖԱԼՍՏԱՅ

Քո հաշվին գնիր, քո հաշվին:

ԲԱՐԴՈՂ

Բայց մի շիշ գինին մի ամբողջ հրեշտակ արժե:

ՖԱԼՍՏԱՅ

Եթե ձեռքդ հրեշտակ ընկնի, վերցրու, իբրև քո աշխատանքի վարձատրություն, նույնիսկ եթե Բասն հատ լինեն, վերցրու՛ր բոլորն էլ: Կրոջմացի համար ինքս պատասխան կտամ: Իմ լեյտենանտ Պետոյին ասա, որ Բաղաֆի ծայրին հանդիպի ինձ:

ԲԱՐԴՈՂ

Լսում եմ, գնդապետ: Մնաք բարով:

Գնում է:

ՖԱԼՍՏԱՅ

Ես ամաչում եմ իմ զինվորներից և իմ խիղեր ինձ տանջում է: Աղածիսն պես չորանամ, թե սուտ եմ ասում: Հրեշտակը կերպով ի շար գործադրեցի քազավորական հրամանը զինվորագրության մասին: Հարյուր նիսան զինվորի վոխարեն ես հավաքեցի երեք հարյուր ֆունտ ոսկեդրամ, դեռ մի բան էլ ավելին: Զինվորագրեցի հարուստ սնատերերին, սնեւոր հողագործների զավակներին, նշանված ջահելներին, որոնք երկու ամիս արդեն խոստովանվել են Եկեղեցում, կամ գուրգուրանքի վարժված այնպիսի երկշտաների, որոնց համար քմբուկի թնդյունը սատանայից

սարսափելի է և նրանք վառողի պայքրունից ավելի են վախենում, քան մորթված հավը կամ խփված վայրի բաղր: Ես հավաքագրեցի միայն մեկը ու կարագով մեծացած այնպիսի որդիների, որոնց սրտերը ոչ թե իրենց կրծքի տակ են, այլ փորոտիքում և նրանք բոլորն էլ փող վնարելով՝ ազատվեցին ծառայությունից, և այժմ իմ զորագունդը բաղկացած է դրոշակակիրներից, ավագ ենթասպաններից, լեյտենանտներից և էֆրեյտորներից, ազատ Ղազարոսի պես ցնցոտիներ հագած ստրուկներից, հիշտ այն պահը հիշեցնող, երբ որկրամուլ շները Ղազարոսի վերերն են լիզում, և այնպիսիները, իսկապես, որոնք երբեք զինվոր չեն եղած, գողության մեջ հմտացած ծառայողներ, կրտսեր եղբայրների կրտսեր որդիներ, ըմբոստացած մատովակներ և այլ գործազուրկ պանդակապաններ, թրթուրները անդորր աշխարհի և երկարատև խաղաղության, որոնք տասնապատիկ ավելի գոյություն ունեն, քան թե մի հին դրոշակ: Այդ տակաճեցում էս լցրի զինվորական ծառայությունից փախուցած ավագանիների տեղերը: Կարող ես մտածել, թե ես բնույթով եմ հարցուհիսուն ցնցոտիներ հագած անառակ որդիների, որ մինչև վերջերս խոգ էին արածացնում՝ ուտելով խոզակաղին և լակ: Խենթի մեկը ինձ նանապարհին հանդիպելով ասաց, որ ես բռնաբարափել եմ բոլոր կախաղանները, և հավաքագրել ննջեցյալներին: Աշխարհը դեռ այդպիսի խրավիչակներ տեսած չկա: Պարզ բան է, որ ես չեմ կարող նրանց Քովենտրու միջով անցկացնել, որովհետև այդ անպիտանները շարժվում են շատ դանդաղ, քայլերը լայն բացած, կարծես իրենց ոտներին շղթաներ կան, և իսկապես նրանցից շատերին ես բանտից եմ վերցրել: Իմ ամբողջ զորամասում հազիվ մեկ և կես շապիկ նարվի. կեսշապիկը երկու տնձառոցիկ է մի կերպ իբրև կարված և ուտերին նետված այն անթև վերարկուի նման, որ մունետիկն է հագնում, իսկ շապիկը, նշմարիտն ասած, գողացված է սուրբ Օլբենսի տանուտերի կամ Դեվենտրի կարմրափայլ պանդակապետի մոտից: Փույթ չէ սակայն. նրանք ինչքան ասես սպիտակեղեն կնարեն ուզածդ ցանկապատին:

Մտնում են իշխան շներին և վեսամոլեները:

ԻՇԽԱՆ ՇՆԵՐԻ

Հը՛, գործերն ինչպես են, փկված Ձեկ, բամբակի ներհնակ:

ՅԱԼՍՅԱՅ

Ա՛, այդ դո՛ւ ես, շել, իսկ քո գործերն ինչպե՛ս են, իմ խենթ դատարկաշրջիկ: Այդ ի՛նչ սատանա է քեզ վորվիկշիբ բերել: Պատվական միլորդ վեսամոլե՞նդ, ներե՛ք ինձ, խնդրում եմ. ես կարծում էի, թե դու վաղուց Շրուսբեր էի հասել:

ՎԵՍՏՄՈՌԱԵՆՔ

Հմարիտն ասած, պարոն Զոն, ես վաղուց պետք է այնտեղ հասած լինեի, դուք հույնայես: Ի դեպ, իմ զորքերն արդեն այնտեղ են: Եվ բող հայտնի լինի ձեզ, որ թագավորը բոլորիս սպասում է: Մենք ամբողջ գիշեր պետք է արագ երթով շարժվենք առաջ:

ՅԱԼՍԱՅ

Իմ վերաբերմամբ կարող եք միանգամայն ապահով լինել: Ես զգույշ եմ այն կառավի հման, որ պատրաստվում է դուռնը կարի սերուցֆին մեկնել:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Այո, կարի սերուցֆին մեկնել իսկապես: Եվ դու այնքան սեր ես գոլացել արդարև, որ դարձել ես կարագի գունդ: Բայց, ասա ինձ, Զեկ, այդ ի՞նչ բշվառ կակներ են մեր ետևից շարժվում:

ՅԱԼՍԱՅ

Այդ իմ զորքն է, Հեյ, իմ զորքը:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ես դեռ այդպիսի ողորմելի աականք տեսած չկամ:

ՅԱԼՍԱՅ

Դեռնք հրաշալի են նիզակի ծայրին ցցելու և թափահարելու համար: Վատողի կեր են, վառողի կեր: Կարող են նաև գերեզմանը լցնել ուրիշներից ոչ պակաս հաջողությամբ: Մահկանացունե՛ր են, եղբայր իմ, մահկանացունե՛ր:

ՎԵՍՏՄՈՌԱԵՆՔ

Այո, բայց ինձ թվում է, պարոն Զոն, որ նրանք ահավոր ֆաղցած են և հյուսված: Մայրահեղ աղֆատների են հիշեցնում:

ՅԱԼՍԱՅ

Թե այդ աղֆատությունը նրանք որտեղի՞ց ձեռք բերեցին, չգիտեմ, իսկ ինչ վերաբերում է նրանց հյուսվածությանը, ապա վստահորեն կարող եմ ասել, որ այդ հարցում ես նրանց երբևէ օրինակ չեմ ծառայել:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Այո, ինքս էլ պատրաստ եմ երդվել, որ չես ծառայել, եթե նիհարություն ասելով դու ի նկատի չունես երեք մատի հաստությամբ մի հարստաբեր կողերի վրա: Եվ, սակայն, հարկավոր է շտապել, բարեկամներ: Պե՛տքն ուղղադաշտ է իջել արդեն:

ՅԱԼՍԱՅ

Ինչպես, արժան արդեն բանա՛կ է գարկել:

ՎԵՍՄՈՌԻԵՆԴ

Այո, պարտն Ձոն: Վախենում եմ, որ մենք կարող ենք շատ ուշանալ:

ՅԱԼՍԱՅ

Այո. գալիս են, անպետք գինվորը՝
Միշտ մարտի վերջին, երբ չկա շառաշ,
Իսկ նարպիկ հյուրը՝ խնջույքից առաջ:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Ապստամբների բանակատեղից Շրուսերի մոտ:

Մտնում են Հոսուպերը, Վուստերը, Գուգլասը և Վեսնոնը:

ՀՈՏՍՊԵՐ

Մարտի կմտնենք մենք հեկց այս գիշեր:

ՎՈՒՍՏԵՐ

Հնարավոր չէ:

ԳՈՒԳԼԱՍ

Երե ուշացնենք՝ բշնամին կօգտվի:

ՎԵՌՆՈՆ

Մազաշափ անգամ:

ՀՈՏՍՊԵՐ

Օ՛, ի՛նչ եք ասում, նա կհավաքի օժանդակ ուժեր:

ՎԵՌՆՈՆ

Նույնը մենք կանենք:

ՀՈՏՍՊԵՐ

Նրանք որոշ է, մերը՝ անստույգ:

ՎՈՒՍՏԵՐ

Ճմ խորհուրդն է ձեզ, որ դուք այս գիշեր տեղից շջարժվեք:

ՎԵՌՆՈՆ

Մի շարժվե՛ք, տեր իմ:

ԳՈՒԳՎԱՍ

Այդ վառ խորհուրդ է,

Գու՛ր այդ ասում ե՛ք տկարությունից, երկյուղից դրդված:

ՎԵՌՆՈՆ

Մի ամբաստանե՛ք դուք ինձ, կոմս Գուգլաս:

Կյանքովս եմ երդվում և այդ երդումը

Պատրաստ եմ ես իմ կյանքով հաստատել:

Եթե սլատիվն է իմ առաջնորդը, կասե՛մ ուրեմն,

Որ դժգույն վախը ինձ համար նույնքան խորհրդաատու է,

Որքան ձեզ համար,

Ինչպես և ամեն մի շոտլանդացու:

Ճակատամարտը վաղը ցույց կտա,

Թե մեզնից ով է առավել երկյուղ:

ԳՈՒԳՎԱՍ

Մի գուցե այսօր:

ՎԵՌՆՈՆ

Ինչպես ուզում ե՛ք:

ՀՈՏՍՊԵՐ

Եվ հենց այս գիշեր, արդեն ասացի:

ՎԵՌՆՈՆ

Լսե՛ք, այդ բանը հնարավոր չէ: Ես զարմանում եմ,

Որ դուք լինելով մեծ առաջնորդներ,

Չե՛ք կանխատեսում այն արգելիները,

Որ խոչընդոտ և՛ն մեր արշավանքին:

Չարմիկ Վեռնոնի մի քանի հեծյալ դեռ տեղ չեն հասել,

Եսկ և՛ հորեղբայր Վուստերի զորքը քիչ առաջ եկավ:

Քիվորների մեջ քնած է այժմ

Երանց եռանդն ու հպարտությունը:

Եվ արիությունը սաստիկ տհնությանը սանձահարված է,

Հեծյալը հոգնած՝ ֆառորդ մարդ հագիվ:

ՀՈՏՍՊԵՐ

Այդպես է նաև թշնամու զորքը,

Արշավից հյուժված, թուլացած սաստիկ,

Մեռ ընտիր զորքը լավ հանգստացավ:

ՎՈՒՍՏԵՐ

Արքայի զորքը բազմաբանակ է,
Ի սեր աստժո, սպասենք, զարմիկ,
Մինչև մեր բոլոր ուժերն հավաքվեն:

Փողահարություն բանակցության համար: Մանուս է Վալտեր Բյանտը:

ԲԼԱՆՏ

Ես ժամանում եմ բարի լուրերով արքայի կողմից,
Եթե հանձ է պատվով ընդունել և ունկնդրել ինձ:

ՀՈՏՍՊԵՐ

Բարի գալուստ ձեզ, սրբ Վալտեր Բյանտ:
Վկա է աստված, իմ փափագն այն է, որ մեզ հարեիք:
Մեզանից ոմանք բուն են սիրում ձեզ և նախանձում են,
Որ ունենալով այդքան արժանիք և սնուն անցին
Դուք մեր կողմը չեք, այլ կանգնած եք մեր թշնամու կողմին:

ԲԼԱՆՏ

Աստված զորավիգ. այդպես կկանգնեմ ես նրանց կողմին
Այնքան ժամանակ, երբ դուք ամեն չափ.
Եվ արդար օրենք ունահարելով՝
Ըմբռնացել եք մեր օրինական թագավորի դեմ:
Բայց գործին դառնանք: Արքան ինձ հղեց,
Որ ձեր ցավերի պատճառն իմանամ:
Դուք խաղաղության լուսավոր լանջից ինչո՞ւ բովեցիք
Այսպիսի անլուր հակամարտություն, խոհարհ երկիրն իր
Մարզելով վայրագ բռնությանների: Մի գուցե արքան
Մոռացել է ձեզ արժեքավորել ըստ ձեր վաստակի:
Ձեր արժանիքը նա բարձր է դասում, —
Ձեր դժգոհության պատճառը ասեք,
Եվ նա ձեր բոլոր ցանկություններին կատարում կտա,
Կների թե՛ ձեզ, թե՛ բոլոր նրանց,
Ովքեր մոլորված ձեր առաջարկով՝ միացել են ձեզ:

ՀՈՏՍՊԵՐ

Արքան բարի է: Եվ մենք քաջ գիտենք,
Որ թագավորը հմտո՞ւն գիտե
Իր խոստանալու և հատուցելու ժամերը որսալ:
Իմ հորեղբայրը, իմ հայրը և ես

Օգնեցի՞նք, որ նա տիրանա թագին:
 Երբ նա մենակ էր, էսանվեց մարդով
 Աշխարհի աշխին թույլ, ուղորմելի,
 Մի խեղճ տարագիր, որ ելք էր փնտրում զարտուղի տուն գալ,
 Իմ հայրը նրան ափին ուղջունեց:
 Իսկ երբ նա Եղվեց արարչի առաջ
 Անմեղ արցունքով, կրակոտ խոսքով,
 Որ Եկել է լոկ իբրև Լանկասաետ,
 Իր ավատները Ետ ստանալու
 Եվ իր դեսական իրավունքները վերականգնելու,
 Իմ բարի հայրը այդ քախսանձանքից սաստիկ ազդվելով՝
 Եղվեց օգնության ձեռք մեկնել նրան և օգնեց իրոք:
 Երկրի լորդերը և ավատները հենց որ իմացան,
 Որ իմ կոմս հայրը նրա կողմն անցավ,
 Ամենքը Եկան և նրա առաջ վար խոնարհվեցին,
 Ռժեղն էլ, թույլն էլ: Եվ հանդիպեցին
 Նրան գյուղերում ու Բաղախներում, ավանների մեջ.
 Եվ կամուրջների վրա խմբվեցին, նահապարհներին.
 Նվերներ ավին. Եղումներ արին հավատարմության,
 Իրենց մանչերին առաջարկեցին իբրև մանկավարժի,
 Եվ կրեկակոխ հետևեցին նրան
 Իրենց ոսկեգոծ բազմություններով:
 Եվ այստեղ, իսկույն, նա գիտակցելով իր մեծությունը
 Կոխելով անցավ այն մեծ կամուրջը,
 Որ Ֆեվենապուրգի ամայի ափին
 Տվել էր հորս. երբ ինքը մի խեղճ ափսոսական էր:
 Եվ այնուհետև ձեռնամուխ Եղավ բարեփոխելու
 Մի շարք խոտագույն հրովարտակներ, վնիռ, որոշում,
 Որ ննչում էին Երկիրը սաստիկ:
 Մի օր էլ հանկարծ սկսեց գոռալ,
 Թե Երկրում ահեղ անիրավություն և բռնություն կա,
 Ատերես ողբալ իր հայրենիքի դառնագին բախտը.
 Եվ արդարության դիմակով ծածկված՝
 Իրեն գրավեց նրանց ստեղծ,
 Ուսնց որսալու կարքը նետել էր...
 Ես շարժվեց առաջ: Գլխատեց հերքով
 Առժայի բոլոր սիրելիներին,
 Ուսնց բացակա արժան ավել էր լիազորություն

Երկրի գործերը կառավարելու,
Իդիանդիո կովիին մեկնելուց առաջ:

ՔԼԱՆՏ

Փո՛ւմ, բավական է. Ես շեկա աշատեղ դրանք լսելու:

ՀՈՏՍՊԵՐ

Հիմա կավարտեմ:
Կարն միջոց հետո նա քաղավորին գահրնկեց արեց,
Դեռ դադար չառած՝ անջատեց կյանքից,
Ապա հեծին՝ երկիրը բեռնեց ծանր հարկերով:
Վատքարն էլ արեց. հանդուրժեց, որ իր ազգական Մարչը,
Որն ավելի շատ իրավունք ուներ բազմելու գահին,
Տանջվի Վալեսում իբրև պատժապարտ՝ վրկանի կարոտ:
Հաղթանակներն իմ միշտ անպատվությամբ նա փոխհասուցեց,
Իր լրտեսներով փորձեց որսալ ինձ,
Իմ հորեղբորը Խորհրդարանի դահլիճից վանեց,
Իսկ հորս ցասմամբ պալատից հանեց:
Մի երդում մյուսի ետևից դրժեց,
Չարիք չարիքի ետևից գործեց,
Եվ մեզ հարկադրեց փրկություն փնտրել պատերազմի մեջ:
Խորամուտ եղանք իր իրավունքին.
Այդ իրավունքը մեկ գտանք սաստիկ անհաստատ, Երևր,
Եվ նրան երկար գահին հանդուրժել անկարելի է:

ՔԼԱՆՏ

Ձեր պատասխանը ա՛յդ է արժային:

ՀՈՏՍՊԵՐ

Ո՛չ, պարոն Վալաեր, այդ խնդրի վրա մենք դեռ կխորհենք,
Կարող եմ գնալ: Եթե արժան մեզ գրավական տա,
Որ մեր դեսպանը ապահովարար ետ կգա նորից,
Իմ հորեղբայրը առավոտ կանուխ
Նրան կբերի մեր պայմանները: Այժմ բարի երթ:

ՔԼԱՆՏ

Սեր և հաշտություն, իմ ուզածն այդ է:

ՀՈՏՍՊԵՐ

Հնարավոր է, որ այդպես լինի:

ԲԱՆՏ

Տա ստոված՝ լինի:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Զ Ո Ր Ր Ո Ր Դ

Յորք: Արքեպիսկոպոսի ապարանքը:

Մանում են Յորքի արքեպիսկոպոսը և Միխայելը:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

1 Փութա, Միխայել, դուք այս կնքվածը
Հավից էլ արագ Մարշալին հասցրե՛ք,
Իսկ այս ծրար՝ Եղբայր Ակրոպին, մնացյալները՝
Ըստ հասցեների: Եթե իմանա՛ք,
Թե ինչ կարևոր թղթեր են դրանք՝ շտապօրով կերպա՛ք:

ՄԻՔԱՅԵԼ

Դրանց իմաստը ես կրահում եմ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Հնարավոր է:

Բարի Միխայել, վաղը մի օր է,
Որ պե՛տք է վնո՛ր տասնազար մարդկանց նակատագիրը:
Հաստատ իմացա ես նամակներից, որ քագավորը
Մերկնրաց անով մեծ գործ գումարած
Հակատամարտ է ապու Պերսու դեմ Շրուսբերի տակ,
Եվ ևս, Միխայել, վախենում եմ շատ:
Նախնիքները չեն կարողանում հույսը, իսկ նա հիվանդ է,
Գլխապարտներ, որ նույնպես նրանց ամրակուռ ջիղն էր,
Բացահայտում է, կանխասացներից զգուշացված է:
Արդ, վախենում եմ, որ Պերսու գործը տկար է սաստիկ
Եվ չի դիմանա արեալի մղած նակատամարտին:

ՄԻՔԱՅԵԼ

Չե՛ր վախն իզուր է, ով իմ ազնիվ տեր,
Այնտեղ են Դուգլաս և կոմս Մորտիմեր:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Վերջինն այնտեղ չէ:

ՄԻՔԱՅԵԼ

Սակայն այնտեղ եւ Մարդէկն ու Վեռնոն և Հարրի Պերսին,
Վուստերը նույնպէս, և քաջակրօով անդրանիկների
Եվ սեպոմաների մի ամբողջ փաղանգ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Այդպէս է, այո, արեւոյի գորհը սակայն ուրիշ է:
Նա ժողովել է երկրի ծաղիկը,
Իշխան Վալեսին, Ջոն Լանկաստերին,
Կոմս Վեստմոնդերօրին, Վալտեր Յլանտին
Եվ բազմասլաւիկ զինակիցների
Ու մեծահամբավ ռազմագետների ամբողջ ընտրանին:

ՄԻՔԱՅԵԼ

Մի տարակուսեմ, հեռնմ կստանան խիստ հակահարված:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Հույս ունեմ, սակայն զգուշորոյունը հարկավոր բան է:
Վառքարագույնը կանխելու համար
Շտապել է պետք, պարոն Միքայել:
Երե այս կովում Պերսին ձախողվեց,
Արևան, իր գորհը ցրելուց առաջ, մեզ վրա կգա.
Քանզի լսել է, որ մասնակից ենք մենք դավադրության:
Խելացի կլինի պատրաստվել ուժեղ ինքնապաշտպանման:
Ուտի, փութացեմ: Ես պետք է գնամ
Մնացյալներին համակ գրելու,
Արդ, ձեզ, Միքայել, հեռժեշտ մաղրեմ:

Գնում եմ:



ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Թագավորի բանակը Շրուսերի մոտ:

Մտնում են Հենի բազավորը, Վալեսի իշխան Հենիկե,
Լանկաստերի իշխան Ջոնը, Վալտեր Բլանտը և Ջոն Յալտուաֆը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օ՛հ, ահա՛ք ինչպես այն անտառախիտ բլրի Լաեից
Արևն է ելնում արշան նապաղում,
Եվ օրը ինչպես դժգունանում է
Նրա շաբազույժ ահառ ցոլերից:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Հարավի համին

Փողափարում է գոռ դատավճիռ արևի համար,
Եվ խուլ սուլելով տերևների մեջ
Կանխաձայնում է անհղ փոքրիկ, ամպրոպաբեր օր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Փող համին ողբա պարտվողի վրա,
Հաղթողի համար սառսափելի շեն մրրիկ ու ամպրոպ:

Փողսմարտություն:

Մտնում են Վուստերը և Վեռները:

Ի՛նչ կա, կոմս Վուստեր: Կա՛վ չէ, անկասկած,
Որ մենք այսպիսի պաշմաններում ենք հանդիպում միմյանց:
Գու՛մ դավեցի՛ք մեր վատահուրյունը,
Եվ ստիպեցի՛ք դեն շարտել մեր խաղաղ հագուստը
Եվ մեր ծերացած մարմինը սեղմել բիրտ պողպատի մեջ:
Այս ամենը խիստ ցավալի է, կոմս, շատ է ցավալի:

Ձեր կարծիքն ի՞նչ է: Համաձայն է՞ր դու՞մ
Արգահատելի այս պատերազմի հանգույցը Բանդել
եվ վերադառնալ խաղաղ վիճակին,
Ուր դու՞ք ձեր պայծառ բնական փայլով շողշուրում էլիք.
Եվ կդադարե՞ք մի շարագուշակ Երևույթ լինել,
Երկյուղի հրաշք և սհեղ գուժկան
Գալիք դժնդակ արհավիրքներէ:

ՎՈՒՍՏԵՐ

Լսե՛ք, տեր արքա,
Իմ մասին կասե՛մ, որ Լս մեծապես ուրախ կլինե՛ի,
Կյանքիս մնացորդը սնցկացնել խաղաղ.
Այս պառակաու՛մը իմ փնտրածը չէ, հավատացե՛ք ինձ:

ՔԱԳՅՎՈՐ ՀՆՆՐԻ

Ձեր փնտրածը չէ՞, իսկ ինչպե՞ս ծագեց:

ՅԱՍՍԱՅ

Քնկած էր նամփին. կոացավ վերցրեց:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Լռի՛ր, կաշաղակ:

ՎՈՒՍՏԵՐ

Դու՛ք, գերագույն տեր. ձեր սիրող աշխր
Հեռացրի՛ք ինձանից, մեր բնտանիքից,
Մինչդեռ մենք. տեր իմ. պարտ եմ հիշեցնել,
Եղանք առաջին և ամենամերձ բարեկամը ձեր:
Հանուն ձեզ, տեր իմ, Լս բեկանեցի
Պաշտոն և պատիվ Ռիչարդի օրով.
Եվ քաջընթացա գիշեր և ցերեկ.
Ու հանդիպե՛մ ձեզ, ձեր ձեռքն համբուրե՛մ,
Թեպետ իմ դիրքով և ստիճանով
Չեզնից անհամեմատ Լս բարձր էի կանգնած:
Այդ երեխ էինք. Լս, իմ Եղբայր և Լղբորոդին.
Ու ձեզ տուն բերինք. համարձակորեն դիմագրավ էլած
Ժամանակի ժանտ վտանգների դեմ: Դու՛ք մեզ Լեղվեցի՛ք, —
Դանկաստերի մեջ այդ Լեղումն արի՛ք, —
Ու պետության դեմ չե՛ք անի ոչ մի ոտնձգություն.
Եվ մտադիր ե՛ք պահանջել միայն ձեր իրավունքը. —
Դո՛ւստի կալվածքը և դժությունը ձեր լանկաստե՛րյան:

Երդվեցին օգնել: Սակայն, շատ շանցած,
 Չեր գլխին բախտի հեղեղ տարափեց,
 Փառքի, մեծության այնպիսի հորձանն ընկավ ձեզ վրա,
 Որ քարեհաջող գնաց ամեն ինչ:
 Մեր օգնությունը, բացակա արքան
 Եվ գրկանքները սանձագերծ դարձած այդ ժամանակի,
 Եվ ձեր կարծեցյալ տառապանքների լուսապսակը,
 Հակընդդեմ հողմը, որ թագավորին
 Այնպես տեարար ափին կաշկանդեց
 Իրանդիոն ձախորդ արշավանքներում,
 Որ Անգլիայում ամենքը նրան մեռած կարծեցին,—
 Հաջողությունների այդ պարսր ճարտար օգտագործելով՝
 Արագ սիրվեցիք բոլորի կողմից,
 Աբխազի գահը հափշտակելու դիտավորությամբ:
 Չե՞ր դրնկասաբեյան ուխտը մտացաք,
 Մեզնից սնվելով դուր մեզ հետ, սակայն, վարվեցիք այնպես,
 Ինչպես նենգամիտ կկվի ձագն է վարվում
 Իրեն կերակրող խեղճ ննդուկի հետ.
 Սկսեցիք ճնշել մեզ մեր բույնի մեջ:
 Մեր տված կերից այնպես գորացաք,
 Որ մեր սերն սկսեց խույս տալ ձեզանից,
 Վախենալով թե իրեն կույ կաաք: Ստիպված եղանք,
 Ի սեր փրկության, շուտ թռչել փախչել
 Չե՞ր աչքից հեռու և գինվել ձեր դեմ:
 Այսպես ուրեմն, ինքներդ ձեր դեմ գենքեր կոնցիք
 Չե՞ր անարգ վարեք, սպառնալիքով,
 Գրծելով բոլոր այն Երդումները, որ մեզ ուխտեցիք,
 Երբ ձեր ձեռնարկը նոր էր տակավին:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այդ մասին արդեն դուր բարձրաբարբառ
 Ազգաբարեկ էք հրապարակներում, եկեղեցիներում,
 Կամենալով ձեր ապստամբության
 Հանդերձը ներկել ավելի գունեղ,
 Ապուշ տականքի և դժգոհների աչքին հանելի.
 Որ հորանջելով արմունկ են փռում:
 Ամեն փոթորկոտ խառնաշփոթին:
 Խռովությունը իր նստատակը նախշելու համար.
 Կարող չի եղել այդպիսի էծան ջրաներկերի,

Ոչ էլ սխալալ մուրացիկների,
Որ միշտ ծարավ են բիրտ արնահեղի և անկարգությաւն:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Մեր Երկու կողմի բանակների մեջ քիչ մարդիկ չկան,
Որ դաժանորեն պիտի հատուցեն այս վեճի համար,
Եթէ խնդիրք բախումի հասնի: Պերսուն ասացե՛ք,
Որ իշխան Հենրին՝ Վալեսի տերը,
Միաբանելով համայն աշխարհին
Պատրաստ է իրեն փառաբանելու: Հոգավս Լմ Երդվում,
Այս ներկա վեճը մի կողմ թողնելով,
Գծվար բե գանվի ավելի խիզախ մի ազնվական,
Մի արի կարին կամ հանդուգն ասպետ,
Որ Պերսու նման քնդունակ լինի
Մեր ժամանակը վեհացնել ազնիվ սխրագործությամբ:
Իմ մասին կասե՛մ. — ասելն է ամօք, —
Ես մի՛նչե այսօր դատարկաշրջիկ ասպետ Լմ Եղել,
Ըն՛ն էլ հույն կարծիքն ունի իմ մասին:
Սակայն խոսք ունե՛մ արքա հոր առաջ.
Ես քնդունում Լմ, որ Հենրի Պերսին
Իր մեծ անունով, սխրանքով, փառքով բարձր է ինձանից:
Երկու կողմերի արնահեղությունը կանխելու համար,
Առաջարկում եմ, որ ես նրա հետ
Իմ բախարք փորձեմ մեհամարտի մեջ:

ԹԱԳՍՎՈՐ ՀԵՆՐԻ

Այդ առաջարկին մե՛նք համաձայն ենք, Վալեսի իշխան,
Թեպետ մերժելու քիչ հիմքեր չկան: Օ՛, ո՛չ, Վուստեր, ո՛չ,
Մեր ժողովրդին մենք խորն ենք սիրում, և նույնիսկ նրանց,
Որ Հենրի Պերսին մոլորեցրել է՝
Շեղելով իրենց նշմարիտ ուղուց:
Մենք նրանց ներում առաջարկեցի՛նք, եթե քնդունեն,
Նա էլ, նրանք էլ, դուք էլ, ամեն ոք,
Իմ բարեկամն է լինելու դարձյալ, իսկ ես էլ՝ նրա:
Այդպես ասացե՛ք դուք ձեր զարմիկին
Եվ ինձ լուր բերե՛ք որոշման մասին: Եթե համառեց,
Մեր ձեռքի մեջ կա սուկալի սլատիժ, ահեղ հատուցում,
Եվ դրանք իրենց պաշտոնը կանեն: Այժմ գնացե՛ք,

Չեմ ուզում լսել ես ձեր առարկը,
կենդանի ընդունեմ մեր առաջարկը:

Վաստերը և վեռնոսը գնում են:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Պատրաստ եմ երգվել, որ շեն ընդունի,
Չէ՛ որ Գուգլասը և Հասասիերը միաբանելով
Չխնվել են ընդդեմ համայն աշխարհի:

ԹԱԿԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Սրդ, գնդասպետներ, անցեմ գորհի մոտ,
Մենք կհարձակվենք, հենց որ հրանցից պատասխան եկավ,
Մեր զորձն է արդար, մեր տերն է աստված:

Թագավորը, Բլանարը և իշխան Ջոնը գնում են:

ՅԱՍՍՍԱՅ

Հել, երե տեսնես, որ ես ընկել եմ հակաաամարտում, բո մարմնով
ձածկիր ինձ, իմ դիակը սրունքներիդ մեջ առնելով: Դա ընկերական օգ-
նություն կլինի:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Թիայն Հողոսի հսկա արձանը կարող է այդպիսի ընկերական օգնու-
թյուն ցույց տալ հեզ: Կարդա բո աղոթքները և հրաժեշտ տուր:

ՅԱՍՍՍԱՅ

Որքան կուզենայի այդ աղոթքից հետո անկողին մտնել և բնել հան-
գիտ: Խաղաղությունը, Հել, պատերազմից լավ է:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ես այց դու պարտավոր ես մահվան տուրք վճարել ասածս:

ՅԱՍՍՍԱՅ

Իսկ չէ՛ որ տակավին ժամանակը չէ և ես հոժար չեմ իմ կյանքը հրան
վճարել ժամկետից շուտ: Ինչո՞ւ շտապել, երե նա դեռ չի պահանջում ի՞նչ
տուրք: Ո՞վ է ինձ խրանում, որ ընկնեմ առաջ: Պատի՛վը: Իսկ երե նա
բնձ խրանելով ռազմադաշտ նետի ուղիղ մահվան վրա: Ինչպե՞ս վարվել
սուղ դեպքում: Պատիվը կարո՞ղ է ինձ մի սրունք կպցնել: Ո՞չ: Կամ մի
բազակ: Ո՞չ: Կամ անկացնել վերքի ցավը: Ո՞չ: Պատիվն, ուրեմն, վա՛ռ
վիտարույժ է: Անհասկած: Ուրեմն ի՞նչ է պատիվը: Բառ: Ի՞նչ կա պա-
տիվ կաշվող այդ բառի մեջ: Օդ: Ուրեմն պատիվը օ՞դ է: Ա՛յ հեզ հրաջա-
րի վտատակ: Իսկ ո՞վ ունի պատիվ: Նա, որ ուղանվել է շոբեֆշարքի օրը:

Իսկ սպանվողը զգո՞ւմ է, թե ինչ բան է պատիվը: Ո՛չ: Լսո՞ւմ է պատվի ձայնը: Ո՛չ: Պատիվն, ուրեմն, անշոշափելի բա՞ն է: Այո՛, մեռածի համար: Իսկ կարո՞ղ է պատիվն ապրել նրանց հետ, որ մեռած չեն: Ո՛չ: Ինչո՞ւ: Բամբասանքը խանգարում է նրան ապրել: Հետևաբար ինձ պատիվ հարկավոր չէ: Պատիվը պարզապես մի փայլաթիթեղ է, որ տանում են ննջեցյալի դագաղի հետևից կամ տնկում են նրա գերեզմանին: Ահա՛ և իմ ամբողջ հավատո հանգրուակը:

Գնում է:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Ապստամբների բանակատեղին:

Մտնում են Վուսերը և Վեռնոնը:

ՎՈՒՍԵՐ

Ո՛չ, պարոն Ռիչարդ, արժայի բարի այդ առաջարկը
Չպե՛տք է հայանենք իմ եղբորորդուն:

ՎԵՐՆՈՆ

Շատ լավ կլինե՞ր, եթե իմանար:

ՎՈՒՍԵՐ

Ուրեմն կործանված ենք:

Անկարելի է, հնարավոր բան չի,
Որ թագավորը անսասան մեա իր տված խոսքին,
Նա դեռ մեզ վրա կասկածելու է և պիտի փնտրի՝
Հարմար ժամանակ վրեժ լուծելու ըմբոստության համար:
Կասկածանքն անվերջ մեզ հսկելու է շոած աշխերով,
Գավառանին, Բանգի, վստահում են նույնքան, որքան աղվեսին,
Որին ինչքան էլ փակի տակ պահես, վարժեցնես, սիրես,
Իր նախնիների վայրի բնույթը երբեք չի փոխի:
Որքան էլ նզնենք տրտում երևալ կամ զվարթերես,
Մեր նայվածքները կմեկնաբանվեն իբրև վրիպակ,
Եվ մեզ կպահեն գոմում գիրացվող արջառների պես,
Որքան շատ խնամք, այնքան՝ մահը մոտ:
Իմ եղբորորդու գործած մեղքերը գուցե մոռացվեն,
Իր շահելության, հրայրքի համար,
Եվ այն արտոնյալ մականվան համար, որ կրում է նա

Հոտսպեր— այսինքն տախարյուն, հախուռն,
Որին վարում է մի սաստիկ ցավոտ մոլեգին խառնվածք:
Այդ ամբողջ մեղքը իմ և նրա հոր գլխին է ընկած,
Մենք նրան այդպես դաստիարակեցինք:
Նրա ախտերը մեզնից են բխում,
Եվ մենք լինելով շարիֆի ակունք
Այդ մեղքի համար պիտի հատուցենք.
Այդ է պատճառը, որ ես չեմ ուզում. որ Հարրի Պետսին
Այդ առաջարկի մասին իմանա:

ՎՅՆՆՆ

Ինչ կուզե՛ս ասե՛ք, ես կհաստատեմ, որ այդ այդպես է:
Բայց ահա և նա:

Մտնում են Հոտսպերը և Գուգլասը, ետևից՝ սպաներ և զինվորներ:

ՀՈՏՍՊԵՐ

Իմ հորեղբայրը վերադարձել է.
Լորդ Վեսամոուլենդին ազատ արձակե՛ք:
Ի՛նչ լուր, հորեղբայր:

ՎՈՒՍՏԵՐ

Արքան պատրաստ է իջնել ռազմադաշտ:

ԳՈՒԳԼԱՍ

Շտապ մարտակոչ ուղարկե՛ք նրան Վեսամոուլենդի հետ:

ՀՈՏՍՊԵՐ

Այդ մասին, Գուգլաս, դուք հայտնե՛ք նրան:

ԳՈՒԳԼԱՍ

Լավ, ինքս կասեմ, հոժար եմ սաստիկ:

Գնում է:

ՎՈՒՍՏԵՐ

Արքայից ներում մի ակնկալե՛ք:

ՀՈՏՍՊԵՐ

Ներո՛ւմ խնդրեցի՛ք: Օ՛, գրա՛, աստված:

ՎՈՒՍՏԵՐ

Շատ մեղմ ասացի, որ մենք իրենից վիրավորված ենք,
Ու դրժել է իր տված երդումը: Բայց դարձյալ խաբեց,

Վերստին երգվեց, որ իր երդումը անխախտ է պահել,
Մեզ խոսվարար, դավանան կոչեց,
Մաստիկ սպառնաց իր ձեռքում եղած անարկու զենքով
Կործանել թե՛ մեզ և թե՛ անունը մեր այդ ատելի:

Մտնում է Գուգլաք:

ԴՈՒԳԼԱՍ

Ի զե՛ն, ասպետներ: Ի զե՛ն, դեպի՛ ուզմ,
Հենրի արքային ևս նետեցի մի խոթա մարտակոչ,
Կոմս Վեստմոուլենդը այդ կոչը տարավ, նա որ պատանդ էր,
Արքան անհապաղ հարձակման կանցնի:

ՎՈՒՍՏԵՐ

Իմ եղբորորդի, իշխան Վալեսը արքայի առաջ
Քեզ մենամարտի առաջարկ արեց:

ՀՈՏՈՊԵՐ

Օ՛, երանի թե մենամարտությամբ կարելի լիներ
Մեր վեճը հարթել: Գեթ մեզ վիճակվեր՝ ինձ և իշխանին՝
Ճակատամարտում մեր շունչը կարճել: Բայց ասա՛, ասա՛,
Այդ հրավերը նա ինչպե՛ս արեց — արհամարհանճով:

ՎԵՌԵՌԵ

Ո՛չ, հոգիս վկա: Իմ կյանքում երբեք ևս լսած չկամ,
Այդպիսի համեստ մարտահրավեր:
Այդպես եղբայրն է եղբորը կոչում
Զինավարժությամբ շարիվել իրար հետ:
Ձեզ պարտ ու պատշան մատուցեց լրիվ,
Իր իշխանական պերճաշուք լեզվով փառաբանեց ձեզ,
Ժամանակագրի նշապահությամբ
Թվեց ձեր բոլոր արժանիքները,
Բոլոր գովերից բարձր դասեց ձեզ և ավելացրեց,
Թե չկա գովեստ, որ ձեր սխրանքին արժանի լինի:
Բայց իշխանական իր վեճ արյունը շեշտվեց ավելի,
Երբ նա, շիկնելով, կշտամբեց իրեն,
Եվ իր սանձարձակ ջահելությունը այնպես պարսավեց,
Նրա մեջ ասես միաժամանակ
Մի ուսուցիչ կար և մի աշակերտ: Այստեղ նա լռեց:
Ի լուր աշխարհի կարող եմ ասել,
Եթե այսօրվա նակատամարտից նա անփորձ ելավ,

Ոչ ոք, ուրեմն, դեռ Անգլիային
Ներշնչած չկա այդքան քաղցր հույս,
Մի հույս, որ այդքան հակընդդեմ լինի
Նրա բիրտ, անզուսպ ջանելուքյանը:

ՀՈՏՍՊԵՐ

Զարմիկ, կարծում եմ, որ դու այդ մարդու
Հիմարությունը սիրահարված ես: Դեռ լսած չկամ,
Թե մի որևէ իշխան կարող է
Այդքան անզուսպ ու անառակ լինել:
Վատ լինի, թե լավ, ես նրան այսօր
Այնպես կգրկեմ զինվորի բազկով,
Որ նա սարսոի իմ գուրգուրանքից:
Շուտ ի գե՛ն, ի գե՛ն: Զորքե՛ր, ընկերնե՛ր և բարեկամնե՛ր,
Գու՛ք առավել ե՛ք ձեր պարտին գիտակ,
Քան ես կարող եմ իմ նարտար խոսքով
Չեզ մղել դեպի պատերազմի դաշտ:
Հսկանական շնորհից գուրկ եմ:

Մտնում է առաջին սուրհանդակը:

Ա. ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Նամակներ, տե՛ր իմ:

ՀՈՏՍՊԵՐ

Ես դրանք այժմ չեմ կարող կարդալ:
Մ՛, բարեկամներ, կյանքը շատ կարճ է,
Բայց էթե կյանքը ժամացույցի վրա աշտանակելով
Ի՞նչ վազքն ավարտեր մի ժամից հետո,
Այդ կարճ միջոցը դարձյալ չափազանց երկար կլիներ,
Եթե ապրեինք անարժանությամբ:
Ազրելիս՝ ապրենք, վար տապալելով թագավորներին,
Մեռնելիս՝ մեռնենք քաջարի մահով, իշխանավայել:
Մե՛ր խիղճն է հուշում. գենքերը սուրք են,
Երբ գենք վերցնողի դատը արդար է:

Մտնում է երկրորդ սուրհանդակը:

Բ. ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Պատրաստվե՛ք, տե՛ր իմ, արժան շատ մոտ է:

ՀՈՏՍՊԵՐ

Շնորհակալ եմ, որ ինձ ընդհատեց:
 Ես խոսքի մարդ չեմ. Երկու բառ միայն.
 Ամեն ոք թող իր սյարտքը կատարի: Սուրս մերկացրի,
 Նրա սուրսայրը ևս մտադիր եմ
 Ամենահարգի արյունով ներկել դեմ առ դեմ գալով
 Այսօրվա վայրագ ճակատամարտում:
O Espérance! Պերսի', և հառա՛ջ:
 Ռազմի թմբուկները թող ահեղ թնդան,
 Արդ, գրկախառնվենք այդ որոտի տակ,
 Քանզի, ով գիտե, շատերը մեզնից
 Այլևս իրար չեն հանդիպելու:

Թմբուկներ:

Նրանք գրկախառնվում են և զնում:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Հարթավայր երկու ռազմաճամբարների միջև: Ռազմի շաչ ու շառաչ:

Մտնում է քաղավորը իր գործով: Ապա մտնում են
 Դուզլասը և Վալտեր Բլանտը:

ԲԼԱՆՏ

Ասա, ո՛վ ես դու, որ համառորեն
 Հեռամուտ ես ինձ ճակատամարտում: Ի՞նչ փառք ես փնտրում,
 Իմ գլխի վրա:

ԴՈՒԳԼԱՍ

Ես կոմս Դուզլասն եմ,
 Եվ համառորեն լեզ եմ որոնում,
 Քանզի ասել են, որ դու արժան ես:

ԲԼԱՆՏ

Ճիշտ են ասել լեզ:

ԴՈՒԳԼԱՍ

Լորդ Ստեֆորդին շատ քանի նստեց այդ նմանությամբ.
 Այս սուրը նրան վերջ տվեց կովում,
 Կարծելով նա է քաղավոր Հենրիին: Քեզ էլ վերջ կտա,
 Եթե շհանձնվես ինձ իբրև գերի:

ՔԼԱՆՏ

Իսկ ես շեմ ծնվել, որ գերի հասնանվեմ, գոռ շոտլանդացի,
Քո դեմ արքան է, վնարի՛ր կյանքդ
Լորդ Ատեֆորդի թանկ կյանքի դիմաց:

Նրանք սրամարտում են: Գուզլասը Բլանտին սպանում է:

Մտնում է Հոսսոսները:

ՀՈՏՍՊԵՐ

Օ՛, Գուզլաս, եթե այդքան փառքուն
'Ինչ մարտնչելիք Հովմեդոնի մեջ
Ինձ չէր հաջողվի գերի վերցնել գեթ մի շոտլանդացի:

ԳՈՒԳԼԱՍ

Պրծա՛վ, հաղթեցինք: Արքան սպանվեց, տեսե՛ք ընկած է:

ՀՈՏՍՊԵՐ

Իսկ որան՞դ:

ԳՈՒԳԼԱՍ

Այստեղ:

ՀՈՏՍՊԵՐ

Ասածդ սա՞ է: Ո՛չ, սա արքան չի,
ես նրա դեմքը լավ նանաշում եմ:
Սա մի անվեհեր ասպետ էր, Գուզլաս, անունը Բլանտ,
Բայց թագավորի ասպար էր հագած:

ԳՈՒԳԼԱՍ

'Ե՛կ, սուրա, հիմար, հոգուդ ետևից,
'Ինչ այդ տխրոսին շատ թանկ գին տվիր.
Ինչո՞ւ ասացիր, որ դու արքան ես:

ՀՈՏՍՊԵՐ

Շատերն են հագած թագավորի պես:

ԳՈՒԳԼԱՍ

Երգվում եմ փշեկ արքայի ամբողջ հանդերձարանը,
Ինչքան գրան կա՛ շարդել անխնա,
Մինչև դեմ առ դեմ չեկնեմ արքային:

ՀՈՏՍՊԵՐ

Հառա՛ջ: Մեր գործը

Ըստ փայլ է կալում և օրը մե՛րն է:

Գնում են:

Աղաղակներ: Մտնում է Ֆայտաֆը մենակ:

ՅԱԼՍԱՅ

Քեպետ ես կարողացա լոնդոնից ծլկել ատանց հաշիվներս մաքրելու, բայց այստեղ վնար կա և ես վախենում եմ: Այստեղ հաշիվները փակում են ուղղակի գագաթիդ գարկելով:— Կանգնի՛ր: Ո՞վ է սա: Վալտեր հլանտն է: Անա և Բեզ իսկական պատիվ, այստեղ խաբկանք չկա: Ես տաք եմ ինչպես հալած կապար և նույնքան էլ ծանր: Տեր աստված, դու իմ փորը հեռու պանիր կապարից: Իմ սեփական ընդերքն այնքան ծանր է, որ դրա կարիքը չունեմ: Ես իմ գլխուներին սուաջնորդեցի մի այնպիսի տեղ, ուր նրանց պղպեղի պես մանր աղացին: Հարյուրհիսունից ողջ մնացին միայն Լեեֆ հոգի, նրանք էլ իրենց մնացյալ կյանքը փաղափ դարպասների մոտ ուղորմածությամբ փառշ տալուց բացի, ուրիշ բանի պետք չեն: Բայց այս ո՞վ է գալիս:

Մտնում է իշխան Հենրի:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ինչո՞ւ ես անգործ դու կանգնել այստեղ, տո՛ւր ինձ քո սուրը,
Բազում ասպետներ ընկած են անշունչ
Գոռոզ ռոսիսի սմբակների տակ,
Որոնց վրեժը դեռ չի հատուցված:
Տո՛ւր ինձ քո սուրը, պաղատում եմ Բեզ:

ՅԱԼՍԱՅ

48 Օ՛, Հել, աղաչում եմ, քույլ տուր ինձ մի ֆիչ շունչ առնեմ: Նույնիսկ Պապ Գրիգոր յոթերորդը Երբև այնպիսի սխալագործություն չի գործել պատերազմում, ինչպես ես կատարեցի այսօր: Ես փակեցի Հենրի Պերսոնի հաշիվը: Նա շարքից դուրս եկավ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Մի՛թե: Իսկ ես կարծում եմ, որ նա դեռ ողջ է և մտադիր է սպանել Բեզ: Խնդրում եմ՝ տո՛ւր ինձ քո սուրը:

ՅԱԼՍԱՅ

Ինչպես թե ողջ է: Վկա է աստված, Եթե նա ողջ է՝ դու իմ սուրը չես ստանա: Վերցրու իմ ատրճանակը, եթե ուզում ես:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Լավ, ատրճանակը ինձ տուր: Ինչպե՞ս, պատյանի մե՞ջ է:

ՅԱԼՈՍԱՅ

Այո՛, Հել, և տա՛մ է, այնքան տա՛մ, որ կարող է մի ամբողջ փաղափ
հրկիզել:

Իշխանը պատյանի միջից դուրս է փաշում մի շիշ գինի:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ինչ, մի՞թե զվարճուրյան և կատակի ժամանակ է հիմա:

Նա շիշը շարժում է Ֆալստաֆի վրա և գնում:

ՅԱԼՈՍԱՅ

Լավ, էրե՛, Պերսին ողջ է, ևս նրան կդադեմ այս սրով, էթե, իմարկե, իմ
սրի վրա բնկնի: Իսկ էրե՛ չրնկավ՝ աստված ի՞ր հետ: Եթե ևս ընկա՛ր քոդ
տապակա պատրաստի իմ մսից: Բայց ևս կաշխատեմ նրա սրի վրա
չրնկնել: Անդրշիրիմյան պատիվը, որին արժանացավ Վալսե՛ր Բլանտը,
ինձ հարկավոր չէ: Նս սուրբել եմ ուզում և էրե՛ կարողացա կյանքս փոկել՝
հրաշալի բան կլինի, իսկ էրե՛ շկարողացա, սպա պատիվը առանց հրա-
վերի կգա և այդ ժամանակ՝ վե՛րջ ամեն ինչին:

Գնում է:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Չ Ո Ր Ր Ո Ր Դ

Թագմադաշտի մի այլ մասը:

Կովի շաչ ու շառաչ: Կարճատև մարտեր: Մտնում են բազավորը,
իշխան Հենրին, իշխան Զոնը և Վեստմոլենդը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Խնդրում եմ, Հարրի,

Գնա այստեղից, արճափամ կդար:

Իշխան Զոն, դո՛ւ էլ նրա հետ գնա:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Ե՛ս: Երբե՛ք, սրբա, մինչև շղառնամ ևս էլ արճափամ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Խնդրում եմ, արբա, շտապ ևս դուրձեք.

Ու՛ր ձեռ գործերի կորովը շրնկնի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Հիմա կգնամ,

Վեստմոլենդ՝ նրան ի՞ր վրանը սար:

ՎԵՍՏՄՈՌՈՒԼԵՆԳ

Երբանք, իշխան իմ, ձեզ վրան տանեմ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ի՞նձ տանեք, իշխան: Ձեր օգնությունը ինձ հարկավոր չէ,
եվ աստված շանի, որ մի աննշան վերծվածքի համար
Իշխան Վալեսը դուրս մղվի դաշտից,
Ուր ասպետների դիերն են փոխած սաստիկ ոտնակոխ,
եվ մեր թշնամին ցնծում է արյան նախնիներին մեջ:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Երբանք, Վեստմոռլենդ, երկար շունչ առանք,—
Մեզ պարտքն է կանչում: Ե՛կ, ի սեր աստծո:

Իշխան Զոնը և Վեստմոռլենդը գնում են:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ես քեզ, կանկաստեր, լավ չեմ հանաչել,
Անձանոթ էի պայծառ հոգուդ, Զոն,
Առաջ սիրում էի քեզ որպես եղբոր,
Այժմ հոգուս շափ թանկ ես ինձ համար:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Տեսա թե ինչպես համարձակուրեն
Նա Պերուս սուրբ ետ վանեց սրով: Դեռ դիտած չկամ
Այդքան դեռահաս ուզմիկի գրոհ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Օ՛, այդ մանուկը
Մեզ իր քաջությանը թեավորում է:

Գնում է:

Մտնում է Դուգլասը:

ԴՈՒԳՂԱՍ

Եվս մի արքա: Նրանք անում են
Վիշապ-հիդրայի գլուխների պես:
Քաջ Դուգլասն էմ ես: Հազար վա՛յ նրան,
Ով ինձ հանդիպի այդ տարազի մեջ:
Ասա, ո՞վ էս դու,

Որ քազավորի երևույթ ունես:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Նույն ինե՛ր՝ արևան: Ողբում եմ, Դուգլաս,

Որ մինչև այսօր դու հանդիպել ես իմ ստվերներին,
եվ ոչ թե ինձ հետ: Իմ երկու որդին ռազմադաշտի մեջ
Քեզ են որոնում և Հենրի Պերսուն,
Քայց, Բանի որ դու այս ճոխ առիթով իմ հանդեսը ելար,
Կշափվեմ քեզ հետ: Արդ, պաշտպանի՛ր քեզ:

ԴՈՒԳԼԱՍ

Մի երկյուղ ունեմ, որ դու արքան չես,
եվ սակայն փույթ չէ, դու քեզ պահում ես արքայավայել:
Դու իմն ես հաստատ, ով էլ լինես դու,
ես քեզ կհաղթեմ:

Նրանք մարտնչում են: Այն պահին, երբ բազմօրին
վտանգ է սպառնում, մտնում է Վալեսի իշխանը:

ԻՇԵԱՆ ՀԵՆՐԻ

Բարձրացրու գլուխդ, պիղծ շոտլանդացի,
եվ վերջին անգամ երկնքին նայիր,
Քաջ Ստեֆորդի, Շիոլի, Բլանտի
Հոգիներն են իմ բազկում ամբարված:
Վալեսի իշխանն է սպառնում կյանքիդ,
Նա իր երդմանը հավատարիմ է:

Նրանք մարտնչում են: Դուրսը փախչում է:

Արիացե՛ք, արքա, ի՛նչ պատահեց ձեզ,
Նիկոլաս Փաուսը օգնություն է խնդրել.
Կլիֆտոնը նույնպես: Ես շտապում եմ Կլիֆտոնի մոտ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Կա՛ց, մի քիչ շունչ առ:
Վտանգի ժամին օգնության գալով
Կորած կարծիքը վերականգնեցիր,
Ապացուցելով, որ կյանքիս հանդեսը դու անտարբեր չես:

ԻՇԵԱՆ ՀԵՆՐԻ

Ո՛ր, տե՛ր իմ աստված, ինչպես շարաշար գրպարտել են ինձ,
Պենդելով, որ ես ձեր մահն եմ տենչում:
Թե այդպես լինե՛ր, ես կարող էի
Վուդլասի անգուսպ բազուկը ուղղել ձեր գլխի վրա,
Որ վերջ կտար ձեզ նույնքան արագ,
Որքան մահաբեր թույներն աշխարհի,
Որքան փրկելով դավադիր նիգից:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Դու շաապ գնա Կլիֆտոնի մօտ, իսկ ես՝ Գաուսի:

Գնում է:

Մտնում է Հոտսպերը:

ՀՈՏՍՊԵՐ

Ելքն սխալ չեմ, դու Մոնմաուրն ես:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Այնպես ես խոսում. կարծես պատրաստ եմ անունս ժխտել:

ՀՈՏՍՊԵՐ

Իսկ իմ անունը Հարրի Պերսի է:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Իմ դիմաց, ուրեմն

Մի ֆաշամարտիկ ըմբոստ եմ տեսնում ես այդ անունով:

Ես վալեսական երկրի իշխանն եմ: Մի խորհի՛ր. Պերսի.

Այլևս ինձ հետ փառք կիսել կյանքում:

Երկու արևներ չեն կարող շողալ նույն պարունակում.

Ոչ էլ կարող է Անգլիան երկու իշխող հանդուրժել.

Մի Հարրի Պերսի և իշխան Վալես:

ՀՈՏՍՊԵՐ

Դու նիշտ ասացիր: Արդ, հնչեց ժամը

Մեզանից մեկին վախճան դնելու: Գեթ արարիչը

Տեսներ քո փառքը փառքիս հավասար:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Չառվելուց առաջ ես այն կդարձնեմ առավել հզոր:

Կորդակիդ վրա նոխուրյամբ անող փառքերն հնձելով

ես հաղթանակի պսակ կհյուսեմ ճակատիս համար:

ՀՈՏՍՊԵՐ

Բավ է այդքան փուշ խոսքերդ հանդուրժեմ:

Նրանք մարտնչում են:

Մտնում է Ֆալստաֆը:

ՖԱԼՍՏԱՖ

Այդ լավ խոսք էր. չել: Վրա՛ տուր, դա մանկական խաղ չէ. վատահեց-
նում եմ:

Մտնում է Գուգլասը: Եւ մարտնչում է Ֆալստաֆի հետ, որը փոփում է գետնին՝ իրեն մեռած ձեացնելով: Գուգլասը գնում է: Իշխան Հենրին սպանում է Հենրի Պերուն:

ՀՈՏԱՊԵՐ

Օ՛, Հա՛րրի, Հա՛րրի, դու կողոպտեցիր պատանուքունն իմ:
Սիրահոծար եմ բաժանվում ես իմ դյուրաբեկ կյանքից,
Քան փառքի ցոլքից, որից գրկվեցի:
Մտքի տանջանք սարսափելի է մարմնական ցավից:
Մտածությունը կյանքի ստրուկն է,
Կյանքը՝ խեղկատուկ բիրտ ժամանակի,
Իսկ ժամանակը, որ տիրակալն է ողջ տիեզերքի,
Մի օր կհասնի իր վերջաբանին: Ավա՛ղ, կարող էի
Գեւ մարգարեանալ, սակայն հողեղեն ցուրտ ձեռքը մանվան
Սևզմել է լեզուս: Ո՛չ, դու փոշի ես,
Եվ կերակուր լոկ...

Մտնում է:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Հիճուհների համար, անվեհեր Պերսի: Հավե՛տ հրածեշտ,
Ո՛վ մեծապանծ սիրտ: Փառասիրություն, ինչպես կուշ եկար
Անայիտան հյուսված կտավի նման:
Երբ այս մարմնի մեջ ոգի ու շունչ կար
Նրան մի ամբուլջ բազալորություն շատ նեղ էր քվում,
Զագրելի հողի Լեկու ֆայլն այժմ
Բավական արձակ տարածություն է:
Այս հողը, որ ֆեզ կրում է մեռած
էլ չի անսնելու այսֆան ֆաջագույն հերոս իր վրա:
Թե ողջ լինեիր, ես այսֆան խանդով չէի գովի քեզ:
Թույլ տուր քո եղծված դիմացձերը
Իմ գինվորական փողնոցով ծածկեմ,
Եվ այս կարոզին բարեկամության ծեսն ախարակով
Նույնիսկ քո կողմից գոհունակություն մատուցեմ ես ինձ:
Մեղ, հրածե՛շտ քեզ, փառքը Լեկինեմ սար,
Իսկ նախատինքն քող ննջի քեզ հետ գեշեզմանի մեջ
Մտանց հիշվելու տապանաճարիդ:

(Նկատում է Ֆալստաֆին գետնին պահած):

Ա՛հ, էին ծանոթս է: Մի՛քե վիրիտա՛թի այս մաագունդը
Անգոր էր մի ֆիչ կյանք պահել իր մեջ: Գնաս բարով, Զեկ,

Գու արժանավոր բոլոր այրերից բանկ եղար սրտիս,
Ես քո կորուստը կարող էի ողբալ սաստիկ դառնագին,
Եթե կառչեի ունայն պատրանքին:
Քիրտ մահը այսօր այսֆան գեր այծյամ դեռ զարկած չկա,
Թեպետ շատ անգին կյանքեր լափեց նա:
Քո փորձաքննող դուրս պիտի քափվի, այդ լավ իմացի,
Մինչ այդ՝ արյան մեջ Պերսու իմ կանգչի:

Գնում է:

Ֆալստաֆը պատկած տեղից վեր է կենում:

ՖԱԼՍՏԱՖ

Փորձաքննող դուրս քափել է: Եթե դու իմ փորձաքննող այսօր դուրս քափես, ես բույլ կաամ, որ վաղը դու ինձ ապխտես և ուտես նմանապես: Գրո՛ղը տանի, մի կարճ միջոցով ես ինձ մեռած ձևացրի, այլապես այդ տաֆ-գլուխ շարադե շոտլանդացին իմ հաշիվը մաքուր փակած կլիներ: Կեղծի՛ք կատարեցի: Սո՛ւտ է: Ես չեմ կեղծել: Մեռնե՛լ — այ դա՛ է նշանակում կեղծել, որովհետև այն մարդը, որի մեջ կյանք չկա — մարդու կեղծված պատկերն է: Իսկ մեռած ձևանալ, երբ մարդը ողջ է, այդ ամենին էլ չի նշանակում կեղծել, այլ՝ լինել իսկապես ճշմարիտ և կատարյալ մարմնացումը կյանքի: Քաջության գլխավոր արժանիքը ողջամտությունն է և ես, հենց դրանով էլ փրկեցի իմ կյանքը: Գրո՛ղը սանի, այս ավազակ Պերսուն քեպես մեռած է, բայց ես նրանից վախենում եմ: Իսկ եթե նա՞ էլ ինձ պես մեռած է ձևացել և հանկարծ վեր կենա՛: Ասովա՛ծ վկա, վախենում եմ, որ նա սպացուցի, թե ինքը ավելի հմուտ կեղծարար է, քան թե ես: Ուտի լավ կլինի, եթե նրան անվտանգ դարձնեմ ինձ համար, այո, և հետո էլ երդվեմ, թե ե՛ս սպանեցի նրան: Ինչո՞ւ չկարծել, որ նա էլ կարող է ինձ պես իր պատկած տեղից վեր կենալ: Աչքերից բացի ինձ ոչինչ չի կարող մատնել, իսկ այստեղ ինձ ոչ ոք չի տեսնում: Հետևաբար առ քեզ, անզգամ (*խոցելով դիակը*) և քո ազդրի մեջ բացված այս նոր վերնով հետևիր ինձ, գնանք:

(Նա Հոտսպերի դիակը առնում է մեջքին):

Մտնում են Վալեսի իշխանը և Լանկաստերի իշխան Ջոնը:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Երթանք, եղբայր Ջոն, քո անբիծ սուրը
Գու խիզախորեն արյամբ ներկեցիր:

Քայց կաց, այս ո՞վ է:

Մի՞թե շասացիր. որ այս գեր մարդուն տեսել ես մեռած:

ԻՇԽԱՆ ԷՆՆԻ

Այո՛, ասացի: Ես նրան այսօր մեռած եմ տեսել.

Անշունչ, արնածո՛ւ տարածված գետնին:

Դու ո՞ղջ ես, ա՛յ մարդ. թե՛ այս ամենք մտացնորք է.

Որ խաղ է անում մե՛ր աշխերի հետ: Խոսի՛ր. խնդրում եմ.

Աշխ տեսածը հաստատել է պետք՝ հա՛կ ականջով:

Դու այն չես, ինչ որ երևում ես մեզ:

ՅԱՂՍՏԱՅ

Ո՛չ, հաստատապես այն եմ: Ես կրկնակ մարդ չեմ: Եթե Ձեկ Ֆայտա-
ֆր շիկեմ, ուրեմն անպայման Ձեկն եմ: Իսկ սա Պերսին է (*գիտկը վայր
նետելով*). Եթե ձեր հայր իմ ծառայությունը վարձատրեց՝ լավ, շվար-
ծատրեց՝ երկրորդ Պերսին ողջ է. քող ի՛նքը սպանի նրան: Իմ աշխերն
այժմ սողված են կոմսության կամ դեսպության աստիճանին, համար-
ձակվում եմ վտանեցնել ձեզ:

ԻՇԽԱՆ ԷՆՆԻ

Ինչպե՛ս: Քայց Պերսուն ես սպանեցի, իսկ ինչ տեսա մեռած:

ՅԱՂՍՏԱՅ

Դու ինձ տեսա՛ր մեռա՛ծ: Օ՛, աստվա՛ծ, այս աշխարհը որքան խաբե-
րա դարձավ: Ձեմ ժխտում. որ ես անշունչ պառկած եմ եղել գետնին.
սա նույնպես, և դու մեզ տեսել ես այդ վիճակում: Քայց երկուսս էլ
նույն ակնբարթին վեր քանակ և մի ամբողջ ժամ մարտնչեցինք՝ ըստ
շրուսբերյան ժամացույցի: Կհավատաս՝ լավ, չես հավատա, ուրեմն ա-
նե՛ծ՝ նրանց գլխին, որոնց պարտականությունն է պարզևատրել հաղ-
թողներին: Այս վերջը ես բաց արի նրա ազդրի մեջ, սուտ ասողը մեռնի:
Եթե այս մարդը ողջ լիներ. և ժխտեր, ինչ որ ասացի, ես կստիպեի, որ
հա կույ տաւ մի կտոր իմ սրից:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Այսպիսի մեծ սուտ դեռ լսած չկամ:

ԻՇԽԱՆ ԷՆՆԻ

Երբեք չեմ տեսել այսպիսի հրաշք — արտասովոր մարդ:

Դե. վայելչորեն շայակիր բեռդ,

Իմ մասին կասեմ. էթե ստելք օգնում է գործիդ,
Ռսկեգօծելը՝ իմ պարտքը լինի:

Նահանջի ազդանշան:

Նահանջի շեփոր. կոիվն ավարտվեց մեր հաղթանակով:
Սիրելի եղբայր, եկ ռազմադաշտի այն բարձունքն էլնենք,
Տեսնենք մերոնցից ովքեր են փրկված և ովքեր մեռած:

Իշխանները գնում են:

ՖԱԼՍՏԱՅ

Ես կհետևեմ սրանց. կարծեմ խոսքը պարզենեւ շնորհելու մասին է:
Ինձ պարզե շնորհողը թող ստածո պարզելիս արժանանա: Եթե ինձ աս-
տիճանով մեծացնեն, ես ծալալով կփոխանամ, որովհետև կսկսեմ լու-
ծողական ընդունել. կթողնեմ զինի խմելը և կապրեմ օրինավոր կյանքով,
Ինչպես վայել է ազնվականին:

Գնում է՝ տանելով դիակը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

Ռազմադաշտի մի ուրիշ մասը: Շեփորներ:

Մտնում են թագավոր Հենրիին, Վալեսի իշխանը, Լանկաստերի իշխան
Ջեքը, Վեստմոսթերը և ուրիշներ: Նշանց հտեից՝ Վուստերը
և Վեռնոնը՝ կալանավորված:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Խռովությամբ միշտ հատուցում կա. նրա վերջն այս է:
Չարանենգ Վուստեր, մի՞թե մենք բոլոր ապստամբներիդ
Չառաջարկեցինք ներում շնորհել սիրալիբ խոստով:
Գու մեր ուղերձը ինչո՞ւ կեղծեցիր,
Քո ազգականի վատահուրյունը շարաշահելով:
Մեզնից գոհվել են երեք ասպետ այսօր.
Մի Իաչագնիվ կոմս և շատ ռազմիկներ
Կարող կին անշուշտ ողջ լինել այժմ,
Եթե դու երկու կողմերի միջև,
Ինչպես նշմարիտ մի բռիստոնյա,
Վառելի ազնիվ մի բանակցություն:

ՎՈՒՍՏԵՐ

Ինչ որ արել եմ՝ ինձ ստիպել է իմ փրկությունը,
եվ էս հանգիստ եմ այս բախտին փարվում,
Քանի որ խույս տալն անկարելի է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Վուստերին տարև, Վեռնոնին նույնպես,
Նրանց վնիդը մանապատիժ է,
Իսկ մյուսների մասին՝ կխորհենք:

Վուստերը և Վեռնոնը պահակների հսկողությամբ
դուրս են աարվում:

Դաշար ինչպե՛ս է:

ԻՇԵԱՆ ՀՆՆՐԻ

Ներ կոմս Դուգլասը, քաջ շատլանդացին
Տեսավ, որ բախտը երեսը կտրուկ փախցրեց իրենից,
Որ խիզախ Պերսին սպանվեց արդեն և իր գորբերը
Սոսկանաւ եղած փախչում են դաշտով,
Ինքն էլ ստիպված դիմեց փախուստի մյուսների հետ,
Նայց մի բլուրից վայր գլորվելով այնպես ջախջախվեց,
Որ գերի բնկավ: Կոմս Դուգլասն այժմ
Իմ վրանումն է: Խնդրում եմ, արեա, ինձ շնորհ արեմ
Նրա վինակի կարգադրությունը:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Մրտանց հոժար եմ:

ԻՇԵԱՆ ՀՆՆՐԻ

Լանկաստերյան Ջոն, Լորայր սիրելի,
Ես այդ պտտիվր հեզ եմ վստահում:
Շուտ ուղևորվիր կոմս Դուգլասի մոտ
Եվ նրան շտապ ազատ արձակիր, առանց վրկանքի:
Այն բաշությունը, որ այս կովի մեջ
Ես դրոշմեց մեք սաղափարտներին, սովորեցրեց մեզ
Հարգելու նաև հերոսությունը մեք ոսխանների:

ԻՇԵԱՆ ՋՈՆ

Վրդ պատվի համար շնորհակալ եմ,
Ես նրան իսկույն ազատ կարձակեմ:

ՔԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Արդ մի բան մնաց՝ գորքը բաժանել:
Դու, կոմս Վեսամոպենդ և դու, որդի Ջոն,
Ուղևորվեցե՛ք շաապ դեպի Յորք
Նորթեմբերլենդի և Սկոուպի դեմ,
Որոնք, ինչպես մեզ հայտնի է դարձել, գինվում են փութով:
Ես և դու, Հարրի, շաապենք Վալես,
Գլենդոլփերի և կոմս Մարչի դեմ:
Բավ է մի երկրորդ հարված ֆաշարի,
Որ խռովության հրդեհը մարի:
Մենք մեր զենքերը շենք խոնարհի ցած,
Քանի լիովին չենք հաղթանակած:

Գնում են:

ՀԵՆՐԻ
ՉՈՐՐՈՐԴ

Մասնի երկրորդ



1947

1948

1949

1950

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ե Ր

ՀԱՄԲԱՎ (Նախերգակ)

ՀԵՆՐԻ ՉՈՐՐՈՐԳ ԹԱԳԱՎՈՐԸ

ՀԵՆՐԻ, Վալեսի իշխան, հետազայում Հենրի հինգերորդ թագավորը

ԹՈՄԱՍ, ԳՈՒՔՍ ԿԼԱՐԵՆՍ

ՋՈՆ, ԼԱՆԿԱՍՏԵՐԻ ԻՇԽԱՆ

ՀԵՄՅՐԻ, ԻՇԽԱՆ ԳԼՈՍՏԵՐ

} Հենրի Չորրորդ թագավորի արդիները:

ԿՈՄՍ ՎՈՐՎԻԿ

ԿՈՄՍ ՎԵՍՏՄՈՌՈՒԼԵՆԳ

ԿՈՄՍ ՍՈՒՌԻ

ԳՈՎԵՐ

ՀԱՐՔՈՐՏ

ԲԼԱՆՏ

} Թագավորի կողմնակիցները:

ՌԳՆԱԿԱՆ, Գլխավոր դատավորի:

ԳԼԽԱՎՈՐ ԳԱՏԱՎՈՐ

ԿՈՄՍ ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԳ

ՌԻՉԱՐԴ ՍԿՐՈՒՊ, Յորի արևելյան կողմը

ԼՈՐԳ ՄԱՌԻՔՐԻ

ԼՈՐԳ ՀԵՍՏԻՆԳ

ԼՈՐԳ ԲԱՐԳՈՒՅ

ՋՈՆ ՔՈՒՎԻԼ

ՏՐԱՎԵՐՍ

ՄՈՐՏՈՆ

ՋՈՆ ՑԱՒՏԱՅ

ՄԱՆԿԼԱՎԻԿ

ԲԱՐԳՈՒՅ

ՊԻՍՏՈՒ

ՓՈՒՆՍ

ՊԵՏՈ

ՇԵՂՈ

ԳԱՅԼԵՆՍ

ԳԵՎԻ

ԲՈՐԲՈՍ

ՍՏՎԵՐ

ԳՈՐՏՆՈՒԿ

ԱՆՃԱՐԱԿ

ՅԼԻԿ

} Թագավորի հակառակորդները:

} Նորթեմբերլենդի մերձավորները:

} Գյուղական հաշտաբուր դատավորներ:

Շեղլոյի ծառան:

} Զորակոչիկներ:

ՏԵՆԴ

ԱՆԵՐ

ԼԵԴԻ ԵՌՐԹԵՄԲԵՐԸԼԵՆԴ

ԼԵԴԻ ՊԵՐՍԻ

ՏԻԿԻՆ ՎՌԱԶ

ԳՈՒ ՏԵՐՇԻՏ

ՎԵՐՋԵՐԳԱԿ

Ներիֆի օգնականները:

Իստշիֆի պանդոկի ախուհին

Լորդեր և հետևորդներ, սպաներ, զինվորներ, դոնապան, ոստ
սպասավորներ և այլն

Տեսարանը՝ Անգլիա:

Ն Ա Խ Ա Մ Ո Ւ Տ Ք

Վորկվորթ: Նորթեմբերլենդի ամրոցի առաջ:

Մտնում է Համբավը՝ վրան անհամար լեզուներ եկարված:

ՀԱՄԲԱՎ

Ամենեղ լսեմ. ո՞վ է հանդգնում ականջը փակել,
Երբ որոտածայն Համբավն է թնդում:
Հողմը փոստային նժույգ արած ինձ՝
Ես արշավում եմ արևակողմից մինչև արևմտք
Ամենին ի լուր ազդարարելով այս երկրի վրա
Հարածամ բացվող դեպքերի մասին:
Իմ լեզուներով աշտանակում է գրպարտանք անդույ,
Որոնց գոռում եմ բյուր բարբառներով
Մարդկանց ականջը խնդած խարդախ հաղորդումներով.
Ես խաղաղության մասին եմ խոսում,
Մինչդեռ դարանած թշնամությունը
Ապահովության ժպիտով ծածկված՝ աշխարհն է փանդում:
Ուրիշ ոչ մեկը, միայն Համբավը, միայն ես եմ ձեզ
Բարձրունայն գոռում մեծ պաշտպանության գործ կազմել անեղ,
Երբ ժամանակի արգանդն հղի է,
Ոչ թե անողորմ գոռ պատերազմով, ինչպես կարծում եք,
Այլ մի ավելի անհայտ աղետով: Ես ի՞նչ եմ — շեփուր,
Կռահումներով, տազնայով, խանդով, կասկածներով լի,
Եվ այնքան հեշտ է, այնքան դյուրալի շեփուրով փշել,
Ու բուր հրեշք բազմագլխանի,
Այդ ամբոխն երկմիտ ու անմիաբան,
Կարողանում է վրան նվագել: Սակայն ի՞նչ հարկ կա
Ինքն ինձ այսպես անդամազննել
Ի տես ենթակա հպատակներիս: Ինչո՞ւ եմ եկել:
Ես հաղթանակի ավետաբերն եմ,

Եվ սլացել եմ արժայից առաջ: Եկա հայտնելու,
Որ Շրուօբերյան արչունուտ դաշտում
Արժան չախջախեց գոռ Հոտսպերին և նրա գորհին,
Խոռվարարների արչամբ մարելով
Քոցերն այդ հանդուզն տպստամբության: Խելիս ի՞նչ փշեց,
Որ հեկեց սկզբից սյսֆան հիշա խոսեմ: Չէ՞ որ ես պետք է
Շեփարեմ ի լուր, որ Մոնմաուրը
Հոտսպերի գոռ սրով տապալվեց.
Որ քազավորը Գուզասից պարտված՝ օծյալ գլուխը
Խոնարհեց նրա մոլեգնության դեմ՝ բնդունելով մահ:
Այդ մասին սուղեն ևս համբավել եմ ավանից ավան,
Շրուօբերյան հաղթ արժայազաշտից
Միևչև այս խարխուլ պատը որդնակեր,
Որ Հոտսպերի ծերունի հայրը՝ Նորթեմբերլենդը,
Հիվանդ պառկած է խորամահկուրեն: Մուրհանդակները
Հոգնած նեպում են դեպի ամրոցը՝ բերելով լուրեր,
Որ հանապարհին ինձնից լսեցին:
Նրանք բերում են կեղծ, սփռփ լուրեր,
Քաղած Համբավից հազարաբարբառ,
Ճշմարիտ վատից առավել վատթար:

Գնում է:



ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Նույն վայրը:

Մտնում է լուրջ Բարդուղիք: Գանապանը կանգնած է դառապանի առջև.

ԲԱՐԳՈՒՅ

Գարպասն ա՛վ է հսկում: Կումար որտե՛ղ է:

ԳՌԵԱՊԱՆ

Ի՞նչ ասեմ կումսին, Եկողը ա՛վ է:

ԲԱՐԳՈՒՅ

Դու կումսին հայանի՛ր,

Որ լուրջ Բարդուղիքն է սպասում իրեն:

ԳՌԵԱՊԱՆ

Նա պարտեզ գնաց քերե պտույտի:

Թե հանն է ձեզ դառապար քակե՛ք

Եվ ինե՛ք անձամբ պատասխան կտա: Ահա և կումար:

Գանապանը գնում է:

Մտնում է Նորքեմբերյենզը:

ՆՈՐՔԵՄԲԵՐՅԵՆԶ

Ի՞նչ լուր կա, Բարդուղիք. ամեն ակնքարք

Հայր է արշունոտ մի դավադուրյան.

Փամանակները քիւտ են, ամենի: Գժաուրյանը, լուրդ,

Կուշտ, լավ խնամված նժուլգի նման

Խելանեղորեն կարել է սանձը

Եվ սլանում է ամեն ինչ համփին ոտնատակ տալով:

ԲԱՐԳՈՒՑ

Ազնիվ կոմս, ես ձեզ
Շրուարերից ստույգ լուրեր եմ բերել:

ՆՈՐԹԵՄԲԵՐԱԵՆՏ

Բարի լինեին գեր աստծո կամոմ:

ԲԱՐԳՈՒՑ

Ավելի լավք ցանկալ դժվար է,
Արեան մահացու վիրավորված է: Ձեր խիզախ ուղին
Իշխան Վալեսին տապալեց մարտում,
Երկու Յլանար Գուգլասի ձեռնով արախող եղան,
Իսկ իշխան Չոնր խույս տվեց դաշտից
Կոմս Վեսամոդենդի և Ստեֆորդի հետ:
Գեր, հաստամարմին Չոն Ֆալստաֆր
Գերի է վերցված ձեր արդու կողմից: Օ՛ր, այսպիսի օր,
Մարտ և հաղթություն այսֆան փառավոր
ժամանակները դեռ տեսած չկան
Կեսարից ի վեր:

ՆՈՐԹԵՄԲԵՐԱԵՆՏ

Կարիդ ակո՛ւնք:
Գոմ դաշար տեսա՛ր. Շրուարերի՛ց եմ:

ԲԱՐԳՈՒՑ

Ո՛չ, ես խոսեցի այնտեղից եկող
Մի ազնվական և բարեհամբավ մարդու հետ, տեր իմ,
Որն ազատորեն այս լուրը հայտնեց որսյես հավաստի:

ՆՈՐԹԵՄԲԵՐԱԵՆՏ

Տրավերսն եկավ. ոյս երեքշաբթի ես նրան շտապ
Ուղարկել էի լուրեր բերելու:

ԲԱՐԳՈՒՑ

Աշտանակելով ես հասա նրան, իր համփի վրա,
Եվ նա ուրիշ բան չունի հայտնելու,
Քան դիսլվածուրեն ինձնից լսածը:

Մտնում է Տրավերսը:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Ասա, Տրավերս, ի՞նչ ուրախալի լուր ես բերել մեզ:

ՏՐԱՎԵՐՍ

Ձոն էմֆրեկիլը ինձ հանապարհից ետ դարձրեց, միլտրդ,
Ուրախ լուրերով, և որովհետև բնութիւն ձի ունեւ,
Իմ ձիւն ետ մնաց: Նրա ետեից տեսնեմ գալիս է
Մի ուրիշ հեծյալ, հեասպառ, տանջված,
Նա ձիւն կանգնեցրեց, որ խեղճ կենդանին մի քիչ շունչ քաշի:
Եվ ինձնից հարցրեց Ձեւտերի համփան: Ես էլ հարց տվի,
Թե Շրուսթերից ի՞նչ նորություն կա:

Պատասխանեց, որ խռովությունը պարտվեց շարաշար.

44. Որ Հարրի Պերսոն խթանը պաղեց...

Այս խոսքի վրա նա սանձը թողեց
Եվ, կոանալով, իր խթանները, որքան ուժ ունեւ,
Թափով խարանեց իր խեղճ գրաստի հեքոտ կողերին
Եվ սրաւշավեց՝ ասես խժոնելով իր հանապարհը
Եվ չսպասելով նոր հարցումներին:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Հա՛, ինչպե՛ս: Կրկնի՛ր:

Ասաց, որ Պերսոն խթանը պաղե՛ց,
Որ Հոասպերը ստու՛ց, վերջացա՛վ,
Խռովությունը պարտվե՛ց շարաշար:

ԲԱՐԴՈՒՑ

Ձեզ բան եմ ասում,

Եթե ձեր ուղին չի հաղթել, տեր իմ, պատվովս եմ երդվում,
Պատրաստ եմ ամբողջ իմ աստիճանը
Փոխել մետաքսե մի կապիչի հետ: Մի՛ խոսեք այդ մասին:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Իսկ Տրավերսին հանդիպած մարդը
Ինչո՞ւ է ասել, թե նա պարտվել է:

ԲԱՐԴՈՒՑ

Ո՛վ. նա՛, այդ մա՛րդը,
Չիջտ է, այդպիսի մի փուշ մարդ անցավ,
Գողացած ձիով և վայրիվերո ինչ-որ բան ասաց:
Տեսե՛ք գալիս է, սակայն, նոր բանքեր:

Մտնում է Մարտներ:

ՆՈՐԹԵՄԹԵՐԼԵՆԴ

61 Եվ նրա դեմքը ինչպես մի գրֆի տիտղոսաքերքիկ՝
Կանխաձայնում է մի ողբերգական հատորի մասին:
Այդպիսի մի տեսք ունի ծովափը
Գոռ ալիֆների հարվածից հետո:
Մորտոն, ասա՛ ինձ, դու պատերազմի դաշտի՞ց ես գալիս:

ՄՈՐՏՈՆ

Հա, ազնիվ տեր իմ, Շրուսերից փախա,
Ուր դժխեմ մահը իր ագեղագույն դիմակն է հագել,
Ուր զարհուրեցնի մերայիներին:

ՆՈՐԹԵՄԹԵՐԼԵՆԴ

Որդիս ինչպե՞ս է, իսկ իմ եղբա՞յրը:
Ինչպես դողում ես և քո այտերի սպիտակությունը
Դյուրապատրաստ է քո լեզվից առաջ ամեն ինչ պատմել:
Ճիշտ մի այդպիսի վեհերոտ բանքեր, անարի, անգոր
Դանդաղ, մահադեմ, վշտին կույ դարձած
Խոր գիշերվա մեջ Պրիամի մահին ծածկույթը քաշեց,
Ու հայտներ նրան. քե, տե՛ս, Տրոյան բոցերի մեջ է:
Սակայն Պրիամը, հախճան կրացվե՞ր լեզուն բանքերի,
Կարմիր բոցերը տեսավ հեղեհի:
Այդպես էլ որդուս մահը ես տեսա քո խոսքից առաջ:
Պիտի ասեիր. «Ձեր որդին այսպես խոցեց թշնամուն,
Ձեր եղբայրն այսպես. ազնիվ Դուզլասը այսպես մարտնչեց.
Անկուշտ ականջն իմ խլացրած նրանց քաջության գովելով,
Սակայն ավարտին, որպիսի իսպառ դու ինձ խլացնես
Գովեն այդ պայքեցնես մի հառաչանով, որպես վերջաբան,
«Եղբայրդ, որդիդ. ով ունե՛ք-չունե՛ք՝ բոլորը մեռան»:

ՄՈՐՏՈՆ

Դուզլասը ողջ է և ձեր եղբայրը ողջ է սակավին,
Ձեր որդին, սակա՞յն...

ՆՈՐԹԵՄԹԵՐԼԵՆԴ

Որդիս մեռած է:

Տե՛ս. ինչ սրափ է կասկածի լեզուն:
Նա, ով սուկում է վատ լուրեր լսել,
Ուրիշի աչքից ներհուսա գգում է,
Ուր կատարվել է այն սարսափելին, ինչից սուկում էր:

Քայց խոսի՛ր, Մորառն, սաս, որ կամսդ
Խարված է, դյուրված մի հրաշխ ստով,
Ես այդ կընդունեմ որպես ըղձալի մի անպատվություն
Ինձ այդ սխալով շոյելու համար:

ՄՈՐՏՈՆ

Գուց անշափ բարձր եմ, որ ընդդիմանամ,
Ձեր վախն հիմմ ունի, դուք սխալված չեմ:

ՆՈՐԹԵՄԲԵՐԿԵՆԴ

Եվ այնուհանդերձ, դու մի՛ սաս թե Պերսին մեռած է:
Քո աշխերի մեջ ես նկատում եմ
Մի գարհուրեյի խոստովանություն.
Գլուխդ ես թաթվում, ասես ուզում ես իսկությունն ասել,
Քայց վախենում ես. կամ մեղք ես սեպում:
Եթե սպանված է, այդպես էլ սաս,
Ինձ չի դառնացնի իմ որդու մահը գուժկանող լեզուն:
Ով որ ստում է մեռածի համար, հա մեղք է գործում.
Հանցանք չէ ասել մեռածը ողջ չէ:
Սակայն առաջին վատ լուր բերողի պաշտոնն է արտուր
Եվ նրա լեզուն հնչում է որպես դժնդակ մի գանգ
Ազդարարելով մեզնից հեռացող ընկերոջ մասին:

ԲԱՐԴՈՒՑ

Չեմ կարծում, որ ձեր որդին մեռած է:

ՄՈՐՏՈՆ

Գառն է ինձ համար, որ ստիպված եմ համոզելու ձեզ
Հավատալ դրան, մի բան, որ երբեք աչիս արտուր չէր.
Քայց անձամբ տեսա: Ես նրան տեսա արյունաշաղախ.
Հոգնած, շնչասպառ, մեծ դժվարությամբ
114 Մենամարտելիս Մոնմաութի դեմ,
Գրի մոլեգին գրոհը նրան գետին ապսպլեց.
Իսկ Պերսին մինչ այդ դեռ պարտված չկար,
Ռեալեդից հա ողջ ոտքի շկանգնեց:
Կարն՝ նրա մահը հագիվ տարածված,
Նախկին արիության հրայրեր մարեց նրա գործի մեջ:
Նրա ոգին էր Բաջությամբ վառում
Ամենաներկչու ռազմիկի սիրտը,
Նրա կրակն էր իր գործը դարձնում պողպատի պես կուռ:

Երբ այդ հուրն իջավ՝ բոլորը դարձան բուք, ծանր կապար:
 Ինչպես ծանրաբաշ մի առաւկա են մղում հարվածով
 Եվ նա բռչում է մեծ արագությամբ,
 Այդպես մեր գորհն էր: Հոտապերի խոր մանով ծանրացած,
 Սարսափից իրենց կշիռը կարգրին,
 Եվ այնքան քերք, փութաշարժ դարձան,
 Որ ուզումաղաշտից մեր գորհը փախավ ավելի արագ.
 Քան նետն է ստրում դեպի նայատակ:
 Վուստերն այդ սլանին գերի բռնվեց. —
 Թեև լիչ վաղ էր. իսկ այդ արնախում վայրագ Գուգլասը,
 133 Ֆիւտ սկսվածացին, որ երեք անգամ շմենի սրով
 Խոցեց արհալի կեղծ երևույթը,
 Ուժարափ եղած գնաց միացավ մեր փախչող գորհին
 Նրանց ամոթը պննազարդելով և փախուստի մեջ
 Վախից գայրելով՝ գերի բռնվեց:
 Ամփոփը այս է. թագավորն հաղթեց
 Եվ ձեր դեմ շտապ գորհ է ուղարկել
 Զոն կանկաստերի և Վեստմոսթենդի առաջնորդությամբ:
 Ես ավարտեցի:

ՆՈՐԹԵՄՈՆԵՐԵՆԵՐ

Ժամանակ կգանեն ևս ողբի համար,
 Թույնն է սպեղանին: Առողջ լինեի,
 Այդ լուրը կարող էր ինձ հիվանդացնել,
 Սակայն տկար եմ և որոշ շափով նա ինձ կազդուրեց:
 Զերմախտից հյուծված աղֆատի նման. որի ստֆերը
 Կյանքի բեռի աակ ծավում են անգոր, և հա ինչպես բոց
 Հանկարծ պակվում է հիվանդապանի ձեռքերի միջից
 Յավից ձանձրացած. նիշտ այդպես եմ ես:
 Յավերից հյուծված Լուսկի ուժ եմ գտնում ցավի մեջ:
 Կորի՛ր, անարգ ցուպ.
 Այդ քեփուկածածկ պողպատյա թաթպան կհագցնեն ձեռքիս:
 Գու էլ ցած իջիր, հիվանդի կորդակ,
 Երես տկար պաշտպան մի գլխի համար,
 Որին նոր հաղթած գոռ իշխանները նշան են բռնել:
 Երկարե թագով պննեք նակատն իմ,
 Գլխին մուկեզնած Նորթեմբերլենդի
 Թող պայրի ահեղ ժամը դժբախտի:
 Երկինք ու երկիր թող բախվեն իրար.

Եվ բող բնության ձեռքով արձակվեն
Ամենի ջրերն օվկիանոսների: Քող կարգը խախտվի,
Բող այս աշխարհը շլինի մի բև
Գանդալ ծավալվող արարվածների:
Նախածին մարդու՝ Կայենի ոգին
Քող քաղափորի բուրբի կրժնում,
Ու մի արյունոտ հակառակարտով
Վերջ տան այնտեղ այս աեսարանին,
Եվ մթությունը դառնա բուրբին գերեզմանափոր:

ՏԲԱՎԵՐՍ

Ձեզ խիստ վնաս է այդքան զայրանալ:

ԲԱՐԳՈՒՅ

Կամ. խոհեմության եզրը մի կոխեմ:

ՄՈՐՏՈՆ

Կյանքը ձեր բուրբ կողմնակիցների
Ձեր ստորջրյան վրա է կարճած: Կործանված եմ դուք,
Երե ձեզ հանձնեմ բուռն կեֆերին:
Դուք, ազնիվ լորդ իմ. «դեպի զԵ՛ն, ի զԵ՛ն» սակուց առաջ
Կշառդաակցի՛ կովի ընթացքն ու փարձությունները:
Դուք կասկածեցի՛ք, որ նա կարող էր հարվածից ընկնել,
Գիտեի՛ք, որ ձեր որդին ֆայլում է անդունդի եզրով
Եվ նրա համար հեշտ էր ավելի գլորվել անդունդ.
Քան քե ազատվել: Խոհական էի՛ք,
Ու իր մարմինը դյուրամատուց է վերքերի համար
Եվ սպիների:
Ու հանդուգն ոգին նրան կնկտեր
Վտանգի անեղ հորձանուտի մեջ.
«Դեմ» ստացի՛ք սակայն դուք նրան: Այս երկյուղներից
Ոչ մեկը, տեք իմ, ի գորու շեղավ
Ձեր այդ հաստատուն վնիոր սանձել: Է՛, ինչ պատահեց,
Կամ այդ կոխվր բերե՛ց ինչ-որ բան,
Ու ուսասածից ավելին լինեք:

ԲԱՐԳՈՒՅ

Ամեննա ձեզ հետ, որ այս կորստի կակիծն ենք ապրում,
Մի բան գիտեի՛ք, որ մեզ նետում ենք
Անեղ, ավելո՞ծ այնպիսի մի ծով,

Որից փրկվելու հույսն էր՝ տասից՝ մեկ:
 Քայց հանդգնեցինք, քանզի հաղթելու երջանկությունը
 Գերակշիռ էր կործանման ահից:
 Չհաշողվեց մեզ: Խիզախենք նորից,
 Վտանգի դրած թե՛ կյանք, թե՛ բարիք:
 Ժամանակը խիստ բարենպաստ է: Գերագնիվ տե՛ր իմ,
 Էս էլ եմ ստույգ, — նիշտ բան եմ ասում, —

- 199 Որ Յուրի ազնիվ եպիսկոպոսը
 Զինել է մեծ զորք և վստահության կրկնակ կապերով՝
 Միացրել է իր համախոհներին:
 Ջեր ուղին, տե՛ր իմ, իր հեռ վարում էր ոչ թե կովոզ զորք,
 Այլ յուկ դիակներ, սովերներ մարդկանց,
 Քանզի այդ բարը, — ապստամբություն, —
 Նրանց մարմինը գատել էր հոգուց,
 Մարտնչում էին նրանք տաղտուկով. ստիպողաբար,
 Ինչպես հիվանդն է խմում դեղանյութ: Այնպես էր րվում,
 Որ միայն նրանց սերն են մեր կողմ,
 Իսկ Լականը, — մարմինն ու հոգին, —
 «Ապստամբ» բառից սառել էին ինչպես *
 Մրսած ձկները սառցապատ լնում: Այժմ ուրիշ է.
 Եպիսկոպոսը իր մասնակցությամբ
 Խոտվությունը դարձրել է հավատք,
 Իր արդար իսախոյ, օրհնանքով իր սուրբ
 Նա գրավում է բոլորին իր կողմ, հագով և մարմնով:
 Ապստամբությունը նա ծավալում է մեծն Ռիչարդի
- 217 Պոմֆրետի պատից ֆերված արյունով,
 Երկնային պատժի մի բնույթ տալով իր անևզ դատին,
 Կարծես երկինքը, նրան նշել է
 Վերականգնելու խաղաղությունը իր արնոտ Երկրում,
 Որ հենում է գոռ Թուրքերուկի կրունկի ներքո:
 Եվ ամբոխավելով թե՛ ձեռ, թե՛ ջահել
 Հախտուն գնում են նրա Եսեից:

ՆՈՐԹՆԵՐԵՐԸ

Նս այդ գիտեի, բայց ներկա ցավը, նշմարեան ասած.
 Ուշքս ասեի էր մոռացնելով այն:
 Այժմ ներս գնանք և թող ամենն սք
 Իր խոսքը ասի՝ մեր մեծ վրեժի և պաշտպանության
 Կավագույն ուղին գտնելու համար:

Նամակ ուղարկենք և սուրհանդակներ,
Բարեկամներին ասենք՝ շաապեն,
Պահը շաա լուրջ է, իսկ նրանք քիչ են:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Լոնդոն: Մի փողոց:

Մտնում է Ֆարտաֆր իր մանկավիճի ուղեկցությամբ,
որը կրում է նրա սուրբ և վահանը:

ՅԱՂՍՏԱՅ

Լսի՛ր, հսկա, ի՞նչ ասաց բժիշկը իմ մեզի մասին:

ԽՈՆԿՎԱՎԻԿ

Պարոն, բժիշկն ասաց, որ մեզը ինքնին լավ. առողջ մեզ է, իսկ ինչ
վերաբերում է նրա տիրոջը, այսպես նա կարող է շատ ավելի հիվանդու-
թյուններ ունենալ, քան իրեն հայտնի է:

ՅԱՂՍՏԱՅ

Ամեն տեսակ մարդիկ իրենց պատիվ են համարում իմ հաշվին ծիծա-
ղել: Մարդու ուղեղը հիմաբուն շաղախված մի գունդ է կավի, եթե ես
չլինեմ, նա բնորոնակ չէ որևէ սրամիտ բան հնարել ծիծաղի համար:
Ինձ ոչ միայն սրամիտ եմ, այլև հետևեմ եմ ուրիշների սրամտության:
Ա՛յ օրինակ, ես այժմ գնում եմ քո առջևից մի վարագի պես, որ խժռել է
իբր բոլոր ձագերին՝ բացառությամբ մեկի: Կամ ես ոչինչ չեմ հասկանում.
կամ իշխանը քեզ դիտմամբ ծառա է կարգել ինձ, որ քո կողմին իմ մա-
12 մինը ավելի աչքի գարնի: Այս դու պսակորդի մանրագոր: Քեզ ավելի
կսազեր իմ գլխարկի վրա ցցվել, քան թե քո գալ իմ կրունկները էտե-
վից: Առաջին անգամ է, որ իմ ծառայի հասակը մատանու շողակին
15 դրոշմված մարդուկի շափ է: Բայց ես քեզ ոչ ոսկով կպատեմ, ոչ էլ ա-
ծարով, այլ ամենահնամաշ շորերը հագցնելով հորից ետ կուղարկեմ
17 իբրև գոհար քո սլատվական գոհար իշխանին. որի կզակին դեռ աղվա-
մազ չի բուսնել: Իմ ձեռնափի մեջ ավելի շուտ մտնում կբուսնի, քան թե
նրա երեսին աղվամազ, մի՞նչդեռ ինձ չի երկմտում հայտարարելու, թե
20 իբր տեսքը քաղափորական է: Հավանորեն մի օր այդպիսի տեսք ունենա-
լիք ես աստված մտադրվի ավարտել այն, իսկ մինչև այդ վարսավիթին
Երբեք չի հաջողվի վեց գրուշ վաստակել դրանից: Եվ ինչպե՛ս է ափսոսա-

նում. կարծես թե ինքը տղամարդ էր դեռ այն ժամանակ, երբ իր հայրը դեռ ամուրի էր: Թող նա իր անձի մասին մեծ համարում ունենա, իմ աշխում նա անշուշտ ընկավ,— այդ բանում թող վստահ լինի: Հը՛, իսկ ի՞նչ ասաց վարպետ Դամբլդոնը իմ թիկնոցի և անդրավարտիֆի աստանի մասին:

ՄԱՆԿԱՎԻԿ

Նա ասաց, պարոն, որ դուք պետք է մի ավելի վստահելի պատվիրատու գտնեք ձեզ համար, քան Բարդոլֆն է, որ ինքը չի ուզում ընդունել ո՛չ նրա և ո՛չ էլ ձեր ստորագրությունը: Նրան այդպիսի ապահովությունը չի է:

ՖԱԼՍՏԱՑ

Դժոխիքի բաժին դառնա նա, ինչպես որ այն որկրամուրը դարձավ: Տա աստված, որ նրա լեզուն չորանա կոկորդում: Ա՛խ դու, նզովյալ Աֆլատոֆել: Ա՛խ դու, «խնդրեմ համեցեք» ստահակ: Ազնվականին աանել-բերել խոստումներով և հանկարծ ապահովություն պահանջե՛լ: Այդ ֆաղցրաբերան սրիկաները այժմ այլ կերպ ման շեն գալիս, քան բարձրակրունկ ոտնամաններ հագած և բանալիների տրցակը գոտուց կախած: Իսկ երբ որևէ մեկը ազնվորեն պարտով ապրանք է ուզում վերցնել նրանցից՝ ապահովություն են պահանջում: Ես ավելի շուտ կհանդուրժեմ իմ բերանը մինչև կոկորդ մկնդեղով լցնել, քան թե կույ կտամ այդ «ապահովություն» բառը: Սպասում էի, որ նա ինձ նման ազնիվ ասպետին ֆասներկու յարդ աստառ կուղարկեր, բայց, տեսեք, փոխարենը ինչ է ուղարկում — ապահովություն: Դե, իհարկե, նա կարող է 44 հանգիստ և ապահով լինել, չէ՛ որ առատության եղջյուր՝ ունի նակատին, որի միջից երևում է իր կնոջ անբարոյականությունը: Եվ, այնուամենայնիվ, նա այդ բանը չի կարողանում տեսնել, շնայած, որ իր սեփական լապտերն ունի: Այդ Բարդոլֆն ի՞նչ եղավ:

ՄԱՆԿԱՎԻԿ

48 Նա գնացել է Սմիթֆիլդ ձերդ բարձրության համար մի ձի գնելու:

ՖԱԼՍՏԱՑ

Ես իրեն գնեցի ս. Պողոսի եկեղեցում, իսկ ինքը ինձ համար ձի է գնում Սմիթֆիլդում: Եթե կարողանայի մի կին էլ գտնել բոզանոցում, ես կունենայի հրաշալի ծառա, հրաշալի ձի և հրաշալի կին:

ՄԱՆԿԱՎԻԿ

Պարոն, այստեղ է գալիս այն ազնվականը, որը իշխանին կալանքի վերցրեց իր ականջակոթին մի հարված հասցնելու համար, որի պատճառը Բարդոլֆն էր:

Մտնում է գլխավոր դատավորը իր օգնականի հետ:

ՖԱԼՍՏԱՅ

Եկ շուտ գնանք, ես շեմ ուզում նրան տեսնել:

ԳԼԵ. ԳԱՏԱՎՈՐ

Ո՞վ է այդ գնացող մարդը:

ՑԳՆԱԿԱՆ

Ֆալստաֆն է, ձերդ բարձրություն:

ԳԼԵ. ԳԱՏԱՎՈՐ

Այդ նա՞ է, որ մեղադրվել է կողոպուտի համար:

ՑԳՆԱԿԱՆ

Նա է, միլորդ. բայց նա այնուհետև կարևոր ծառայություն է ցույց տվել Շրուսբերիում, և այժմ, ինչպես լսեցի, ինչ-որ հանձնարարությամբ ուղևորվում է իշխան Ջոն Լանկաստերի մոտ:

ԳԼԵ. ԳԱՏԱՎՈՐ

Ինչպե՞ս, Ֆո՞րբ է գնում: Ե՛տ կանչե՞ք նրան:

ՑԳՆԱԿԱՆ

Պարոն Ջոն Ֆալստաֆ:

ՖԱԼՍՏԱՅ

Ա՛յ տղա, սաս իրեն, որ ես խուլ եմ:

ՄԱՆԿԱՎԻԿ

Մի ֆիչ բարձր խոսե՛ք, իմ տերը խուլ է:

ԳԼԵ. ԳԱՏԱՎՈՐ

Գիտե՛մ, հենց որ մի լավ բան է լսում, իսկույն խուլ է ձևանում: Ար-մունկից բռնած ես բերե՛ք նրան. ես պետք է խոսեմ նրա հետ:

ՑԳՆԱԿԱՆ

Պարոն Ջո՛ն...

ՖԱԼՍՏԱՅ

Ինչպե՛ս. այսֆան երիտասարդ և ողորմություն է խնդրում: Մի՞թե այժմ պատերազմի ժամանակ չէ. մի՞թե ֆեզ համար աշխատանք չկա: Չէ՞ որ քաղավորին հպատակներ են պետք, իսկ խոռվարարներին՝ զին-վորներ: Թեպետ՝ խայտառակություն է քաղավորի թշնամիների կողմ պահելը, բայց ողորմություն խնդրելը ավելի մեծ խայտառակություն է. շատ ավելի մեծ, քան թե աշխարհի վատթարագույն ապստամբության կողմնակից լինելը:

ՕԳՆԱԿԱՆ

Դուք ինձ ուրիշի տեղ եք ընդունում, պարոն:

ՖԱԼՍՏԱՖ

Ինչպե՞ս. մի՞թե ես ասացի, թե դուք ազնիվ մարդ եք: Եթե ես այդպիսի բան եմ ասել, ապա մի կողմ դնելով իմ ասպետական և զինվորական պատիվը, կարող եմ վճռաբար ասել, որ ես շարաշար ստել եմ:

ՕԳՆԱԿԱՆ

Խնդրում եմ, պարոն, մի կողմ դրե՛մ ձեր ասպետական և զինվորական պատիվը և թույլ տվե՛ք հայտնել ձեզ, որ դուք շարաշար ստում եք ասելով, թե ես անազնիվ մարդ եմ:

ՖԱԼՍՏԱՖ

Ե՛ս թույլ տամ քեզ այդ բանը ասել: Եվ մի կողմ դնե՛մ իմ ասպետական ու զինվորական պատիվը, որ իմ միսն ու արյունն է: Թող կախեն ինձ, եթե այդ բանը արտոնեմ քեզ: Եվ թող քեզ կախեն, եթե ինձ հանդրգնես կրկնել այդ խոսքը: Կորի՛ր, շուն անպիտան. շո՛ւտ շփվիր այստեղից:

ՕԳՆԱԿԱՆ

Պարոն, իմ գլխավորն ուզում է խոսել ձեզ հետ:

ԳԼԵ. ԴԱՏԱՎՈՐ

Պարոն Զոն Ֆալստաֆ, մի խոսք միայն:

ՖԱԼՍՏԱՖ

Ա՛, իմ բարի լուրդ: Ասածո ողորմածությամբ երկար, շատ երկար ապրե՛ք: Որչափ ուրախ եմ, որ ձերդ պայծառափայլությանը տեսնում եմ մաքուր օդում գրոսնելիս: Լսեցի, որ հիվանդ եք եղել: Հուսով եմ, որ դուք գրոսանքի եք ելել բժշկի խորհրդով: Թեև դուք, ձերդ ողորմածությունը, դեռ չի կորցրել իր երիտասարդական թարմությունը, այսուամենայնիվ, արդեն հասուն տարիքումն եք և, այսպես ասած, նաշակել եք տարիքի դառնությունները. հետևաբար, ես ձեր ողորմածությանը խոնարհաբար խնդրում եմ հոգ տանել ձեր թանկագին առողջությանը:

ԳԼԵ. ԴԱՏԱՎՈՐ

Պարոն Զոն, ես ձեր Լսեցից մարդ ուղարկեցի, նախան ձեր Շրուսթերյան արշավանքը:

ՖԱԼՍՏԱՖ

Իսկ ես լսեցի, միլորդ, որ նրա վսեմությունը վալեսից փոքր ինչ դրժգոն է վերադարձել:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Խոսքը նրա վստահության մասին չէ: Դուք չցանկացաք ներկայանալ, եւրք ձեր Լակից մարդ ուղարկեցի:

ՖԱԼՍՏԱՅ

Լակցի նույնպէս, որ այդ անիծյալ կաթվածը նորից հարվածել է նրա մեծապատվությանը:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Տա աստված, որ առողջանա: Այժմ թույլ տվե՛ք խոսել ձեզ հետ:

ՖԱԼՍՏԱՅ

Այս կաթվածը, որքան ես լսել եմ, մի տեսակ լնափություն է, թույլ տվե՛ք ասել, արյան թմրության նման մի բան, կամ ավելի ճիշտ՝ անիծյալ ֆորախա կամ բորոտություն:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Դուք ինչո՞ւ ե՛ք այդ մասին պատմում, խոսքը այդ մասին չէ:

ՖԱԼՍՏԱՅ

113 Այդ հիվանդության ահունքը ծանր վիշտն է, մտավոր զբաղվածությունը ե ուղեղի գրգռվածությունը: Ես դրա ծագման պատմաւոր մասին Գալենի մոտ եմ կարդացել. ըստ նրա՝ դա խլության մի տեսակն է:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Ես կարծում եմ, որ դուք տառապում ե՛ք այդ հիվանդությամբ, որովհետեւ չե՛ք լսում, թե ես ինչ եմ ասում ձեզ:

ՖԱԼՍՏԱՅ

Միանգամայն ճիշտ ասացի՛ք, պարոն: Բայց, ավելի շուտ թույլ տվե՛ք ասել, ես տառապում եմ շլտելու հիվանդությամբ, ուրիշների ասածին ուշադրություն չդարձնելու ախտով:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

120 Միակ բուժիչ միջոցը ձեր ախանջների անուշադրության դեմ ձեր ուսերը կոնդերի մեջ դնելն է: Ես սիրով կբժշկեի ձեզ:

ՖԱԼՍՏԱՅ

121 Ես Հորի պէս աղփատ եմ, միլորդ, բայց ոչ նրա շափ համբերատար: Չեղբ բարեբարությունը իմ աղփատությունը ի նկատի ունենալով կարող է ինձ մի բաժին բանտարկություն նշանակել, այդ չի նշանակում, սակայն, թե ես բավականաչափ համբերություն կունենամ այդ դեղանյութը ընդունելու: Այդ բանում իմաստունը կարող է սխալվել ոչ թե մի ինչ-որ գրոշի, այլ մի ամբողջ ոսկեդրամի չափով:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Ես ուղարկեցի ձեր ետնից, երբ ձեզ այնպիսի մեղադրանք էր հերկարացված. որ մահ էր սպասնում ձեր կյանքին: Եվ դուք չեկաք ինձ հետ խոսելու:

ՖԱԼՍՏԱՖ

Ես չեկա մի փորձված օրենսգետի խորհրդով, որ գիտակ է ցամաքային ծառայության օրենսդրության:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Թանն այն է, պարոն Ջոն, որ դուք չափազանց վատահամբավ, սանձարձակ կյանք եք վարում:

ՖԱԼՍՏԱՖ

Այսպիսի գոտի կապողը չի կարող սեղմված ապրել. թող մեկն առ մեկը փորձի:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Ձեր միջոցները սուղ են, իսկ ծախսը անագին:

ՖԱԼՍՏԱՖ

137 Երանի թե հակառակը լիներ՝ միջոցներս անագին, իսկ ծախսը սուղ:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Դուք երկաասարդ իշխանին մոլորեցնելով՝ շեղել եք հշմարիտ անասարհից:

ՖԱԼՍՏԱՖ

4) Երիտասարդ իշխանը ինքն է ինձ մոլորեցնելով շեղել անասարհից: Ես մի կույր հաստափոր մարդ եմ, իսկ նա իմ առաջնորդ — շունը:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Լավ. ես մտադիր չեմ դիպչել նոր փակված վերքին: Ձեր ծառայությունը Շրուսբերի հակատամարտում փոքր-ինչ ողորկել է ձեր գիշերային անառակությունները Գեղջիլում: Շնորհակալ եղեք այս խառնակ ժամանակին, որ օգնեց ձեզ այդքան էժան դուրս պրձնել պատասխանատվությունից:

ՖԱԼՍՏԱՖ

Միլո՛րդ...

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Քանի որ ամեն ինչ հարքված է, խորհուրդ կտամ՝ չարթնացնել բնած գայլին:

ՅԱԼՍՏԱՅ

Քնած գայլին արթնացնելը նույնքան անդուր է, որքան աղվեսին որոնելը՝ նրա հետքը հոտոտելով:

ԳԼԽ. ԳՍՏԱՎՈՐ

Գուր նման է մոմի, որի մեծ մասը այրված է:

ՅԱԼՍՏԱՅ

Խրախնամքի մոմի, միլորդ, և այն էլ մի ամբողջական նարայից: Ինն կարելի է համեմատել մեղրամոմի հետ, որովհետև ես այժմ գործի ստաջնորդ եմ:

ԳԼԽ. ԳՍՏԱՎՈՐ

Գոնե մի սպիտակ մորուխ լինե՛ր ձեր վրա, որ այդ հսկա գանգվածը չամաչեր:

ՅԱԼՍՏԱՅ

Այո, և բոլորին գերազանցել եմ իմ մարմնի ֆաշո՛վ, ֆաշո՛վ, ֆաշո՛վ:

ԳԼԽ. ԳՍՏԱՎՈՐ

Գուր ամենուրեք հետևում է երիտասարդ իշխանին, կարծես նրա շար հրեշտակը լինե՛ք:

ՅԱԼՍՏԱՅ

161 Ճիշտ չէ, միլորդ, շար հրեշտակը թեթևաբալ է, իսկ ինձ վրա նայողը, հույս ունեմ, այդ բանը չի ասի: Թեպետ ես լիաբալ դրամ եմ, պետք է խոստովանեմ, սակայն, որ իմ գնողական արժեքը որոշ չափով ընկել է: Ի՞նչ կարող ես անել: Առափնուքյունը այնքան էիչ գին ունի մեր այս առևտրական դարում, որ իսկական ֆաշերին մնում է միայն արջերին պար ածել: Մտփի նարտարությունը վերածվել է պանդոկապետի, որն իր հնարագիտությունը վատնում է հաշվեթղթեր կազմելու վրա: Մարդուն հատուկ բոլոր մյուս ունակությունները մեր ժամանակի ախտերով այնպես են վարակված, որ դարձել են մկնայլոհից էժայն: Գուր, ծերերդ, ի վրնակի շեք հասկանալու, թե ինչի ենք ընդունակ մենք՝ երիտասարդությունը: Գուր մեր արյան ետքը չափում եք ձեր լեղապարկի դառնությամբ: Եսկ մենք, պետք է խոստովանեմ, գտնվելով մեր երիտասարդ սերնդի ստաջապահ շարքերում, Երթմն անձնատուր ենք լինում երիտասարդական խենթություններին:

ԳԼԽ. ԳՍՏԱՎՈՐ

Եվ դուր ձեզ դնո՞ւմ եք երիտասարդների շարքը, երբ ծերությունը ձեզ վրա իր անջնջելի կնիքն է դրոշմել: Նայեցե՛ք ձեզ. մի՞թե ձեր աչքերը չեն արցունքոտվում, ձեր ձեռքերը մի՞թե չորացած չեն, այտերը դեղ-

նած, մորու՛ք սպիտակած, սրունքները դողող, փորը դուրս ընկած: Մի՛-
քե ձեր ձայնը կուտրված չի, շնչառությունը կարնացած, կզակը երկնդ-
ված, խելքը կիսված: Ձեր մարմնի ամեն մասից հնություն հոտ է փչում
և դուրս դեռ համարձակվում է՛ք ձեզ երիտասարդ համարել: Ամաշեցե՛ք,
սլառն Ջոն, ամաշեցե՛ք:

ՅԱԼՍՏԱՅ

Միլորդ, ես ծնվել եմ կեսօրից հետո, մոսավորապես ժամը երեկին,
սպիտակ գլխով և բավականաչափ կլոր փորով: Ընչ վերաբերում է իմ
ձայնին, ես իմ ձայնը կորցրի ողջույններ աղաղակելուց և եկեղեցական
սաղմոսներ երգելուց: Այլևս իմ երիտասարդությունը հաստատող նոր
ապացույցներ չեմ բերի: Բանն այն է, որ ես ծեր եմ միայն խելքով և
ըմբռնելու կարողությամբ: Նա, ով ցանկանում է մրցել ինձ հետ լավա-
գույն ցատկի մեջ, բող հազար մարկ գրավ դնի ինձ մոտ և ասպարեզ
գա. տեսնեն՛ք մեր երկսից ո՛վ կհաղթի: Ընչ վերաբերում է ապտակին,
որ իշխանը ձեր ականջակոթին հասցրեց, դա նրա կողմից կուպություն
էր, իսկ ձեր կողմից՝ խոհեմություն եղավ, որ դիմացա՛մ: Ես նրան լր-
ջորեն կշտամբեցի դրա համար և առյուծի կոշտներ գղջում է, բայց,
իհարկե, ոչ քե ֆուրձերի մեջ և գլխին մոխիր շաղ սալով, այլ հագած
մետախայա նոր զգեստ և իսպանական հին գինի կոնծելով:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Տե՛ր աստված, դու մի ավելի լավ բնկեր ուղարկիր մեր իշխանին:

ՅԱԼՍՏԱՅ

Տե՛ր աստված, դու մի ավելի լավ իշխան ուղարկիր իշխանի բնկերօջր:
Ոչ մի կերպ չեմ կարողանում նրանից բաժանվել:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Ի դեպ, թագավորը ձեզ և իշխան Հարրիին բաժանել է: Լսել եմ, որ դուր
իշխան Ջոն Լանկաստերի հետ ուղևորվում ե՛ք արևելսկսկոպոսի և կամս
Նորթեմբերլենդի դեմ:

ՅԱԼՍՏԱՅ

Այո՛, և դրա համար ես պարտական եմ ձեր սիրալիւ. ազնիվ հիգերին:
Խնդրում եմ. սակայն, ձեզ բոլորիդ, որ մնալու ե՛ք տանը տիկին խաղա-
ղության զգվանքների մեջ, աղոթե՛ք, որպեսզի մեր բանակները իրար
չբախվեն շոգ ժամանակ, ֆանգի, Եղվում եմ ասածով, ևս ինձ հետ
վերցնում եմ ընդամենը երկու շապիկ և ամենևին չեմ ցանկանա սովո-
րականից շատ ֆրանել: Երև օրը շոգ լինի և ես շշից բացի մի որեկ սուխ
բան հոնեմ պատերազմի դաշտում, բող բու՛ք հավիտյան շուրանա կո-

կորդիս մեջ: Հենց որ մի վտանգավոր դրուրյուն է ստեղծվում, ինձ իսկույն շարտում են այնտեղ: Գե, դա միշտ էլ մեր անգլիական ազգի հին վատ սովորությունն է Լոլել, մի լավ բան ունենալիս սկսում ենք անխնայ մաշեցնել: Ինքներդ եք ասում, որ ես ծեր եմ. Լքե այդպես է, ուրեմն թողեք հանգիստ մնամ: Ի՞նչ է իմ ինկորաները ասածուն, որ իմ անունը այդքան սարսափելի շիներ թշնամու համար, ինչպես որ է՝ իսկապես. Ավելի լավ է ժանգը ինձ ուտի, քան թե մաշվելով ոչնչանամ մշտական գործածությունից:

ԳԼԽ. ԳՍՏԱՎՈՐ

Պարկե՛շտ եղեք, պարկե՛շտ եղեք և թող աստված հաշողություն տա ձեր արշավանքին:

ՅԱԼՍՍԱՅ

Ձերդ բարեբառությունը ինձ փոխարինաբար մի քան հազար շիլլինգ չէ՞ր տա գինվորական հագուստ-կապուստի համար:

ԳԼԽ. ԳՍՏԱՎՈՐ

Ո՛չ մի գրոշ, ո՛չ մի գրոշ: Ձեր խիղճը այնքան ծանրաբեռնված է, որ կարելի չէ պարտքի նոր բեռ ավելացնել ձեզ վրա: Բարի՛ նախապահ: Իմ ողջույնը հաղորդեք իմ զարմիկ Վեստմոուլենդին:

Գլխավոր դատավարը և օգնականը գնում են:

ՅԱԼՍՍԱՅ

224 Թող իմ քիթ ու պոունգը ջարդեն երեք մարդաբեռ քակիչով, թե քո ողջույնը հաղորդեմ: Մեռությունը նույնքան անբաժան է ընչափաղցությունից, որքան երիտասարդությունը՝ ցոփությունից: Մեկին ոտնացավն է տանջում, մյուսին՝ վեներան... այնպես որ, երկու հասակին էլ բաժին է հասնում առանց իմ անեծքի: Ա՛յ տղա՛:

ՄԱՆԿԱՎԻԿ

Պարոն, ես այստեղ եմ:

ՅԱԼՍՍԱՅ

Իմ հասկում ինչքան փող կա:

ՄԱՆԿԱՎԻԿ

251 Յոթ գրոթ և երկու պենի:

ՅԱԼՍՍԱՅ

Ոչ մի կերպ չեմ կարողանում մի բուժում գտնել զրպանի այս նյութախտի դեմ: Շարունակ պարտք տանելը միայն Լեկարաձգում է սյղ հի-

վանդությունը, իսկ դա անբուժելի ախտ է: Այս համակը տար կանկա-
տերի իշխանին, սա՛ իշխանին, սա՛ լորդ Վեսամոուլենդին, իսկ այս մե-
կը՝ տիկին Ուոսուլային, որի հետ ես ամեն շաբաթ երդվում եմ ամուսնա-
նալ այն ժամանակից ի վեր. երբ իմ կզակի վրա երևաց առաջին սպիտակ
մազը: Դե գնա: Թե որտեղ պետք է գտնես ինձ՝ ինչ հայտնի է:

Մանկավիկը գնում է:

Երանի՛ թե այս ոտնացավը կպչեր անիծյալ Վեներային, կամ Վենե-
րան՝ ոտնացավին. որովհետև այդ երկու ցավերից մեկը շարաննի իս-
ղում է իմ ոտի բրամատի հետ: Մակայն փույթ չէ, եթե սկսեմ կաղալ:
Ամեն ինչ կվերագրեմ պատերազմին և խոհական կերպով կկարգավո-
րեմ իմ կենսաթոշակի գործը: Խելոք մարդը պետք է ամեն բանից օգ-
տվել իմանա: Ես իմ հիվանդությունը շուտ կտամ իմ օգտին:

Գնում է:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Յ

Յորք: Արքեպիսկոպոսի պալատը:

Մտնում են Յորքի արքեպիսկոպոսը, Հեսթինգսը, Մաուրիս
և լորդ Բարդոլֆը:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ձեզ հայտնի դարձան մեր նպատակը և միջոցները,
Այժմ, գերագնիվ իմ բարեկամներ,
Թող ամեն մեկը պարզ, անկեղծ կերպով իր կարծիքն հայտնի,
Կունենանք արդյոք մենք հաջողություն:
Նախ դու՛ր լորդ-մարշալ. ձեր կարծիքն ի՞նչ է:

ՄԱՍԻՅԵՐԻ

Ասլատամբությունը խիստ հիմնավոր է:
Բայց ես կուզեի մեր միջոցների և ուժի մասին
Իմանալ փոքր-ինչ մանրամասնորեն:
Հնարավո՞ր է ներկա վիճակով, վատահ, փաշարար
ելնել արևայի գոռ բանակի դեմ:

ՀԵՍՏԻՆԳՍ

Ըստ զորաշարքի մենք այժմ ունենք
Քսաննիկզ հազար փաշրնաիր զինվոր.

Մի մեծ հույս էլ կա. բավականաչափ օգնական ուժեր
Մենք սպասում ենք նորթեմբերլենդից,
Որին լսվում է անհագ վրեժի մոլեգին հուրը:

ԲԱՐԳՈՒՑ

Այժմ. լորդ Հեստինգս, հարցը այսպես է:
Քսանհինգ հազար մեր ներկա զորքով
Մենք մենակ, առանց նորթեմբերլենդի
Կկարողանա՞նք ժարտի մեջ մտնել:

ՀԵՍՏԻՆԳՍ

Նրա հետ կարող ենք:

ԲԱՐԳՈՒՑ

Բուն խնդիրն այդ է:
Եթե առանց կոմսի մենք սաստիկ թույլ ենք,
Իմ կարծիքն այս է. ոչ մի ֆայլ առաջ,
Սպասենք մինչև հա օգնության գա.
Քանզի այսպիսի արյունոտ զործում
Գուշակություն, հույս և երկմտություն
Տարտամ, անհաստատ օգնության մասին վստահավար է:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Գուր շատ նիշտ եմ, լորդ. և Հոսսպերի
Միակ կործանման պատճառը այդ էր Շուսբերի կոլում:

ԲԱՐԳՈՒՑ

Իսկապես այդ էր. իրեն զորացրեց դատարկ հույսերով,
Փուշ խոստումներով օղբ կոպ տվեց,
Եվ հրապուրվեց սին հաշիվներով մի անհայտ զորքի,
Որ իրականում նվազ եղավ շատ
Նվազագույնից իր երազանքի:
Եվ այդպես հախստն. խենթերին հատուկ
Երևակայությամբ տարված անագին,
Իր զորքը վարեց դեպի ստույգ մահ
Եվ աչքը փակած՝ ցատկեց խոր անդունդ:

ՀԵՍՏԻՆԳՍ

Թույլ տվե՛ք ասել, ոչ մի ժամանակ
Հաշիվն ու հույսը օգնության մասին վնաս չեն տվել:

Գա ներկա կովում վտանգավոր է:
 Իրավ, երբ արդեն մենք կազմ ու պատրաստ ընկնում ենք նամփա.
 Հույսին կառչելը՝ ազեաաբեր է:
 Այդպես լինում է վաղահաս գարնան բողբոջների հետ.
 Հուսալ, քե դրանք հասունանալով մեզ պտուղ կտան,
 Երկյուղալի է. քեև ոչ սխալ,
 Քանզի կուլ կերթան սառնամանիկին: Շենք կառուցելիս,
 Հետագոտում ենք մենք նախ գետինը,
 Ապա գծում ենք հատակագիծը:
 Երբ տան պատկերը լրիվ պատրաստ է,
 Մենք պարտ ենք հաշվել, քե շինությունը
 Մեզ վրա որքան ծախս է նստելու:
 Երև այդ ծախսը գերակշիռ է մեր միջոցներից,
 Ի՞նչ էլ է մնում. շենքի ծավալը փոխել, փոքրացնել
 Կամ հրաժարվել մեր այդ կառույցից:
 Իսկ մի այսպիսի հսկա գործի մեջ,
 Երբ կամենում ենք կործանել մի մեծ քաղաքություն
 Եվ նորը հիմնել, մենք պարտավոր ենք աշարհորեն
 Զննել տեղանքը, հատակագիծը,
 Ընտրել ամուր հիմք.
 Շինարարներին հարցուփորձ անել,
 Չափել, իմանալ մեր միջոցները —
 Որքան կարող ենք տոկալ, դիմանալ,
 Գերակշիռը ո՞վ է մեզանից, մե՞նք, քե՞ քշնամին,
 Թե՞ մենք հզոր ենք լոկ քղթի վրա,
 Որ անուններ կան, բայց չկան մարդիկ,
 Այն անկշռադատ շինարարի պես,
 Որ տան պատկերը նախագծում է,
 Բայց երբ տեսնում է, որ կառուցումը վեր է իր ուժից,
 Կես նանապարհից լինում է գործը
 Իր անավարտ տան խղճուկ կմախքը
 Թողած անձրևի Լմանանույթին,
 Եվ ձմռան վայրագ ավերածության:

ՀԵՍՏԻՆԵՍ

Նույնիսկ կարծում եմ.
 Որ երբ բոլոր մեր վառ հույսերը խորտակվեն անկարձ,

Մեզ շողարկելով մի հաաիկ զինվոր օգնության համար,
Մեր գորհը այնքան հակակշիռ է արքայի գորհին,
Որ մենք կարող ենք շափվել նրա հետ:

ԲԱՐԳՈՒՅ

Ի՛նչ. մի՞թե արքան քանհինգհազար գորհ ունի միայն:

ՀԵՍՏԻՆԴՍ

Մեր ուժի հանդեպ՝ ավելին չունի. նույնիսկ պակաս է:
Ժամանակները տազնապալի են.
Եվ նա իր գորհը պետք է բաժանի երեք մասերի.
Մի զորամասը պետք է ուղարկի ֆրանսիացոց դեմ,
Երկրորդը հանի Գլենդովերի, երրորդը՝ մեր դեմ:
Անհաստատ արքան այսպես բաժանված երեք մասերի, —
Պաակերացնում էք նրա դուրսը, —
Իսկ գանձատան մեջ մի բան է գնդում՝ դատարկությունը:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Որ նա իր ցրված գորհը ժողոված
Իր ամբողջ ուժով կգա մեզ վրա, այդ անկասկած է.
Պետք է վախենալ:

ՀԵՍՏԻՆԴՍ

Այդպես վարվելիս

Նրա քիկունքը կմնա անգեն,
Վալեսցիներին և ֆրանսիացոց իրավունք տալով.
Որ կրնկալիս հետևեն իրեն:
Նա այդ չի անի:

ԲԱՐԳՈՒՅ

Իսկ ո՛վ է նրա գորհը վարելու մեր այս նակատում:

ՀԵՍՏԻՆԴՍ

Գու՛մս կանկատները և Վեստմոուլենգը:
Իսկ ինքը՝ արքան և Մոնմաուրը
Զորք են շարժելու Գլենդովերի նակատի վրա:
Ֆրանսիացոց դեմ ով է գնալու՝
Հաստատ չգիտեմ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Սկսենք, ուրեմն:

Ազգաբարենք նախ մեր նպատակը ապստամբության:
Բոլորն անխափր այնպես հագուրդ են իրենց ընտրյալից,

Որ նախկին սերը առատությունից սկսել է փսխել:
 Անհաստաա է միշտ այն շինությունը,
 Ով նրա հիմքը ապավինում է ամբոխի սրտին:
 Օ՛, հիմար ամբոխ. երկինք բնդացնող
 Ինչ որտղնդոստ ծափահարությամբ
 Գու վեր բարձրացրի՞ր Բոլիներոկին,
 Ինչ էր, ինչ դարձրի՞ր այդ անարժանին:
 Իսկ այժմ, երբ նա պննագարդված է ըստ ևճաշակի,
 Գու անհագ խժոռոդ, այնպես ես լափել ևճ քագավորին,
 Որ կամենում էս դուրս ժայթքել նրան:
 Օ՛, շուն, անա՛րգ շուն, նիշտ այդպե՛ս, այդպե՛ս.
 Գու ևճ որկրամոլ ազան ընդերհից
 Արտավիժեցի՞ր մեծն Ռիշարդին:
 Այժմ ոռնալով դու որոնում ես ևճ դուրս փսխածին,
 Որ նորից խժոռես: Այս ի՛նչ օրեր են, որի՛ն հավատալ:
 Այն մարդիկ, որոնք փափագում էին Ռիշարդի մահը,
 Երբ նա դեռ ողջ էր, այժմ խենթի պես
 Սիրահարված են նրա շիրիմին:
 Գու, որ գոռալով ցեխ էի՞ր նետում Ռիշարդի գլխին,
 Երբ ամբարտավան Լոնդոնի միջով
 Ծա հառաչելով փայլում էր հզոր
 Բոլիներոկի ոտնահեռափերով,
 Այժմ գոռում էս «Հո՛ղ. էտ տուր կրկին այդ քագավորին,
 Իսկ սրան վերցրու»: Օ՛, դու, անիծյալ մարդկային հոգի:
 Անցյալ ու գալիք, այս երկուսն են միշտ հավետ բաղձալի,
 Իսկ ներկան. ավա՛ղ, ցավերով է լի:

ՄԱՌԻՅԵԹ

Դուրս բերե՛նք զօրերը արշավի համար:

ՀԵՍՏԻՆԳՍ

Ժամանակն է մեր իշխանավորը,
 Իսկ նա ասում է՝ բնկե՛ք նանապարհ:

Գնում են:



ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Լսնդոն: Մի փողոց

Մտնում է Իստիփի պանդոկի տիրուհին՝ Տիկին Վազը Ֆենգի
և նրա մանուկ ծառայի հետ. ետևից՝ Սները:

ՏԻՐՈՒՆԻ

Պարոն Ֆենգ, դուք իմ գանգաւոր մտցրի՞ք մենուքյան:

Ֆենգ

Այո՛, մտցրել եմ:

ՏԻՐՈՒՆԻ

Ձեր օգնականն ո՞ւր է: Պի՞նդ, ամո՞ւր տղա է. կարո՞ղ է պաշտառն
կանգնել իրեն:

Ֆենգ

Ա՛յ տղա, մի տես Սներն ո՞ւր է:

ՏԻՐՈՒՆԻ

Օ՛, տեր իմ աստված, ի՞նչ եղավ պարոն Սները:

Սներ

Ես այստեղ եմ, այստեղ եմ:

Ֆենգ

Սներ, մենք պետք է ձերակալենք Ջոն Ֆալստաֆին:

ՏԻՐՈՒՆԻ

Այո՛, պարոն Սներ, ես նրա վրա գանգաւ եմ հարուցել:

ՈՆԵՐ

Իսկ դա կարող է մեզնից մեկնումեկին զրկել կյանքից, որովհետև նա զենք կբանեցնի:

ՏԻՐՈՒՇԻ

Վա՛յ այդ սև օրը. զգուշացե՛ք նրանից: Նա իմ տան մեջ դաշույնով հարձակվեց վրաս, այն էլ գազանաբար: Ազնիվ խոսք, բավական է, որ նա զենք ֆաշեց, այլևս ոչ մի բան աչքին չի գալիս. դեի պես նետվում է բոլորի վրա, շինայելով ոչ տղամարդու, ոչ կնոջ, ոչ երեխայի:

ՖԵՆԳ

Գեթ հնար լինե՛ր իրար կաշեխնձ. ես նրանից վախեցողը չեմ:

ՏԻՐՈՒՇԻ

Ո՛չ էլ ես. անվախ կանգնած եմ ձեր արմունկի մոտ:

ՖԵՆԳ

Միայն թե մեկ անգամ նանկս ընկնի, այլևս նրան ուզաավել չկա:

ՏԻՐՈՒՇԻ

Երե խույս ավեց՝ ես կործանված եմ: Հավատացնում եմ, նա ինձ այն-
ֆան շատ պարտքեր ունի... ազնիվ պարոն Ֆենգ, ամուր բռնե՛ք նրան.
դուք էլ, ազնիվ պարոն Սներ, շքողնե՛ք, որ Ֆալստաֆը փախչի: Ձերդ
բարձրության բույլտվությամբ նա հիմա գնալու է կարկանդակների խա-
նութք ձիու թամբ գնելու, որից հետո նա նաշի է հրավիրված «Ջնձառ-
յուծի գլուխը» Լոմբարդյան փողոցի վրա, մետաղափ վանառական պարոն
Սմուրթի մոտ: Թախանձագին խնդրում եմ, ֆանի որ իմ գանգառը ըն-
դունված է և արար աշխարհը գրտե իմ վիճակի մասին, շտապ դա-
տական պատասխանատվության կանչե՛ք նրան: Հարյուր մարկը քիչ փող
չի մի ազգատ, միայնակ կնոջ համար: Եվ ես համբերել եմ, համբերել,
իսկ նա անվերջ ձգձգել է մեկ օրից մյուսը, այնքան տարեկ-բեկ է,
որ նույնիսկ ամաշում եմ իրսել այդ մասին: Մի՛թե կարելի է այդպես
անազնիվ վարվել կնոջ հետ: Ի՞նչ է, ես ավանա՞կ եմ, թե մի այլ անասուն,
որ ամեն մի սրիկայի վիրավորանքը հանդուրժեմ: Տեսե՛ք, գալիս է և նրա
հետ է Քարդոլֆը, այդ կարմրափր հանրահայտ խաբեբան: Ձեր գործին
անցե՛ք, ձեր գործին անցե՛ք, պարոն Ֆենգ և պարոն Սներ: Խնդրում եմ
ձեզ, շատ եմ խնդրում՝ ձեր գործին անցե՛ք:

Մտնում են Ֆալստաֆը, մանկլավիկը և Քարդոլֆը:

ՏԱՂՍՏԱՑ

Այս ի՞նչ բան է. ո՞ւմ գամբիկն է սատկել, ի՞նչ է պատահել:

ՖԵՆԳ

Պարոն Զոն, տիկին Վոագի գանգառի համաձայն ես ձեզ ձերբակալում եմ:

ՏԱՂՍՏԱՑ

Կորե՛՛ք, դատարկասուններ: Մերկացրու սուրդ, Բարդուլֆ: Այս սրիկայի գլուխը թոցրու, իսկ այս պոռնիկին ջրանցքը նետիր:

ՏԻՐՈՒՀԻ

Ի՞նձ ջրանցքը նետել. ե՛ս մեզ ջրանցքի մեջ կնկտեմ: Ապա փորձի՛ր, ապա փորձի՛ր. պոռնկորդի անզգամ: Օգնեցե՛՛ք՝ սպանում եմ: Դու նզովյալ մարդասպան: Եվ դու ուզում ես աստժո և քաղաքի ծառաների՞ն սպանել: Ա՛խ դու, մարդասպան ավազակ. դու արյունարբու ես, ամուսնապան ես և կնասպան:

ՏԱՂՍՏԱՑ

Դո՛ւրս շպրախի դրանց, Բարդուլֆ:

ՖԵՆԳ

Օգնույ՜՜ն, օգնույ՜՜ն:

ՏԻՐՈՒՀԻ

Բարի մարդիկ, մեկ-երկու օգնող ուղարկե՛ք: Չե՛ս ուզում վնարել, հա՛: Չե՛ս ուզում: Վնարի՛ր, վնարի՛ր, սրիկա՛: Պարտիզ վնարի՛ր, մարդասպա՛ն:

ՏԱՂՍՏԱՑ

Կորի՛ր, աման լվացող աղախին, փողոցային անզգամ, կին պարտա և անպիտան, քե չէ ես քո ստորին մասը կխտամ:

Մանում եմ գլխավոր դատավորը և ոստիկանները:

ԴԼԵ. ԴԱՏԱՎՈՐ

Ի՞նչ է պատահել, հանդարտվեցե՛՛ք:

ՏԻՐՈՒՀԻ

Բարեգո՛ւթ աեր իմ, ողորմա՛ժ եղե՛ք իմ հանդեպ: Աղաչում եմ, պաշտպան կանգնե՛ք ինձ:

ԴԼԵ. ԴԱՏԱՎՈՐ

Օհո՛, պարոն Զոն,

Այդ դո՛ւմ ե՛ք այդպես աղմկում այստեղ:

Ձեր աստիճանին, պատվին վայել է այս տեսարանը,
Եվ այն էլ որտե՞ղ և ի՞նչ ժամանակ.
Դուք պետք է վաղուց Յորկում լինեիք:
Հեռացի՛ր, ա՛յ կին, ինչո՞ւ ևս այդպես կախվել նրանից:

ՏԻՐՈՒՀԻ

Օ՛, մեծապատիվ տեր իմ, շնորհ արե՛ք մի խոսք: Ես մի շփավոր կին
եմ Իստչիփից և նա ձերբակալված է իմ գանգառի համաձայն:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Որքա՞ն գումար է ձեզ պարտք:

ՏԻՐՈՒՀԻ

Ի՞նչ գումար. գումարը քիչ է: Նա ինձ պարտք է ամեն ինչ.— ինչ-որ
ունեմ: Նա իմ ամբողջ տունն ու տեղը խժոնեց: Իմ ամբողջ ունեցվածքը
լցրեց իր այդ նարպատ անհատակ փորի մեջ: Կալ իմացիր. կամ ես դրա
մի մասը նորից դուրս կկորզեմ այդտեղից, կամ գիշերները կշո՛քեմ բկից
չար ոգու պես:

ՖԱԼՍՏԱՅ

Իսկ եթե ե՛ս ընկնեմ այդ շար ոգու վրա իմ մարմնի ամբողջ ծանրու-
թյամբ:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Ամաչեցե՛ք, պարոն Ջոն, այդ ինչե՛ր եք ասում: Օրինավոր մարդը մի՞-
թե կարող է հայհոյանալներով այդպիսի փոքրիկ հանդուրժել: Ձե՛ք
ամաչում, որ մի աղքատ այրի կնոջ ստիպում եք այդպիսի ծայրահեղ
միջոցի դիմել՝ ձեր փորից դուրս փաշելով իր ունեցվածքը:

ՖԱԼՍՏԱՅ

Ամենամեծ գումարը, որ ևս պարտք եմ քեզ, որքա՞ն է:

ՏԻՐՈՒՀԻ

Տե՛ր իմ աստված, եթե դու իսկապես ազնիվ մարդ ես, ապա պետք է
ընդունես, որ դու ինձ պարտք ես թե՛ քո անձը և թե՛ անագին ֆանալու-
թյամբ փող: Հիշո՞ւմ ես, կիսառսկեզօժ գավաթով դու ինձ երդում ավիր
80 ծովահարսի իմ սենյակում, կլոր սեղանի մոտ, ծովածուխով վառվող
բովսարիկի առաջ նստած. չորեքշաբթի էր, Հոգեգալուստից հետո, երբ
իշխանը քո գլուխը կտարեց իր հորը վիճաճորյան մի երգչի նմանեցնելու
համար: Եվ ահա, Լեք ես քո վերին էի լվանում, դու ինձ շերտվեցի՞ր մի-

քէ, որ կամուսնանաս ինձ հետ, ինձ կդարձնես ին կինը, Երեկի մի տիկին: Կարո՞ղ ես այդ բանը ժխտել: Հիշո՞ւմ ես, այդ ժամանակ ներս մտավ մեր հարեանունի կիշը, մագործի կինը և ինձ անվանեց կնիմայր տիկին Վուզ: Նա եկել էր ինձնից մի քիչ Լացախ վերցնելու փոխարինաբար և ասաց, որ հրաշալի կերակուր է պատրաստել կարիտուսից՝ և դու ցանկացար մի քիչ հաշակել դրանից, իսկ ես քեզ ասացի, որ կարիտուսները վտանգավոր են նուր վերքի համար: Հիշո՞ւմ ես, դու ինձ ասացիր, որ ես չպետք է ինձ այլևս մտերմական, հասարակ պահեմ այդ աղքատ մարդկանց հետ, ավելացնելով, որ նրանք շուտով ինձ պետք է տիկին Ֆալսաաֆ կոչեն: Մի՞թե դրանից հետո դու ինձ չհամբուրեցիր և չխնդրեցիր, որ քեզ երեսուն շիլինգ տամ: Ես քեզ կամիպեմ ավետարանի վրա երդվել: Ապա փորձիր ուրանա՛լ:

ՖԱԼՍԱՖ

Միլորդ, սա աղքատ շփավոր կին է և Լացախի բոլոր խաշմեռակներում բզավում է, որ իր ավագ որդին շատ հման է ձեզ: Առաջներում նա հարուստ է եղել, իսկ այժմ, ճիշտն ասած, շփավորությունից խելքը քրոցրել է: Ինչ վերաբերում է այս հիմար ոստիկաններին, խնդրում եմ ինձ ազատեք նրանցից:

ԳԼԽ. ԳՍՏԱՎՈՐ

Պարոն Զոն, պարոն Զոն, ինձ քաջ հայտնի է, քեզ դուք ինչ հմտությամբ կարողանում եք կեղծել ճշմարտությունը: Ոչ ձեր ինքնախստան տեսքը, ոչ բառերի կույար, որ դուք շաղ եք տալիս այդքան անպատկառ անամոթությամբ, չեն կարող ստիպել ինձ նահանջելու հավասարակշիռ բնությունից: Դուք, ինչպես ես համոզված եմ, չարաշահել եք այս հեշտությամբ զիշող կնոջ վստահությունը, հարկադրելով նրան ծառայել ձեզ քե՛ր իր քաղցր և քե՛ր սեփական անձով:

ՏԻՐՈՒՆԻ

Այո, ճիշտ այդպես է եղել, տեր իմ:

ԳԼԽ. ԳՍՏԱՎՈՐ

Դու լո՛ւր, խնդրում եմ: Վերադարձրե՛ք նրա ամբողջ պարտքը և քաղցր վե՛ք ձեր մեղքը նրան պատճառած անգործության համար. մեկի համար հարկավոր է լիարժեք դրամ, իսկ մյուսի համար՝ անկեղծ զղջում:

ՖԱԼՍԱՖ

Միլորդ, ես չեմ կարող այդ կշտամբանքը անպատասխան քողնել: Դուք

¹ Խեցցեաթին:

արժանավոր փառաբանումը անպատկառ անամորթություն կոչեցիք: Ըստ
ձեզ, եթե մեկը խոնարհարար լուծ է, ուրեմն նա առաքինի՞ է: Ո՛չ,
միլոդ, ձեր հանդես տաժած իմ խորին հարգանքով հանդերձ, ես ձեզ
համար մի ինչ-որ հասարակ խնդրարկու չեմ: Կրկին պահանջում եմ, որ
դուք ինձ ազատեք այս ոստիկաններից, որովհետև ես ծառայության եմ
չտապում քաղաքական կարևոր հանձնարարությամբ:

ԳԼԵ. ԳԱՏԱՎՈՐ

Այնպես եմ խոսում, կարծես թե դուք ի զորու եմ օրենքը կոխել: Խոր-
հուրդ եմ տալիս ձեզ, հանուն ձեր արժանապատվության, այս խեղճ
չնոջը բավարարել:

ՖԱԼՍՏԱՖ

Այստեղ ե՛կ, տանտիկին:

(Նրան մի կողմ է տանում):

Մտնում է Գովերը:

ԳԼԵ. ԳԱՏԱՎՈՐ

Ձեր լո՛ւրը, պարոն:

ԳՈՎԵՐ

Արքան շատ մոտ է. նրա հետ է և իշխան Վալեսը,

Մնացյալը, տե՛ր իմ, այս թուղթը կասի:

(Հանձնում է մի նամակ):

ՖԱԼՍՏԱՖ

Ազնվականի խոսք:

ՏԻՐՈՒՅԻ

Աստված վկա, դուք առաջ էլ ինձ նույն բանը ասացիք:

ՖԱԼՍՏԱՖ

Ազնվականի խոսք: Դե, լո՛ի՛ր, ինչ-որ ասացի՛ մեր մեջ կմնա:

ՏԻՐՈՒՅԻ

Երդվում եմ այս երկնային հողով, որի վրա փայլում եմ, ես ստիպված
եմ գրավի դնել ամանեղենը և իմ նաշասենյակների պատաստները:

ՖԱԼՍՏԱՖ

Գավաթներ՛, գավաթներ՛—ահա՛ թե ինչ է հարկավոր կոնծելու համար:
Իսկ ինչ վերաբերում է պատերին, ասյա նրանց վրա կարելի է ջրաներ-
կով մի ինչ-որ գվարնալի նկար ծեփել, կամ թե անտակ որդու պատ-

մուրշունը, կամ գերմանական որսի՝ սէսարանը: Դա հազար անգամ
ավելի լավ կլինի այդ բոլոր վարագույրներից և ցեցը կերած պաստա-
ներից: Տո՛ւր ինձ թեկուզ մի երկու հարյուր շիլինգ, եթե կարող ես: Ես
միշտ էլ ասել եմ, շիլներ քո այդ անիծյալ կամակորոթությունը, Անգլիա-
յում չէր գտնվի քեզնից ավելի լավ կին: Գնա լվա երեսդ և քո գանգաւոր
ետ վերցրու: Քեզ հարկավոր չէ ինձ հետ գծավել: Մի՛թե դու ինձ շե-
նանաչում: Վե՛րջ տուր, վե՛րջ տուր. Ես գիտեմ, որ քեզ գրգռել Լեն իմ
դեմ:

ՏԻՐՈՒՆԻ

142 Խնդրում եմ, պարոն Ջոն, բավարարվե՛ք միայն քան արծարագրա-
մով: Հավատացնում եմ, այնպես չեմ ուզում ամանեղենը գրավ դնել:
Վկա՛ է աստված՝ չեմ ուզում:

ՖԱԼՍՏԱՖ

Լավ, բող քո ասածը լինի. ինձ հարկավոր փողը ես ուրիշ միջոցով
կհարեմ: Դու առաջվա հիմարն ես դարձյալ:

ՏԻՐՈՒՆԻ

Լավ, ես ձեզ այդ փողը կտամ, թեկուզ ստիպված լինեմ իմ շուրերը
գրավ դնել: Հուսով եմ, որ դուք ընթրելու կգաք: Եվ միանգամից կվճա-
րե՛ք ձեր ամբողջ պարտքը, այնպես չէ՞:

ՖԱԼՍՏԱՖ

Զվճարողը բող տեղնուտեղը մեռնի: (*Բարդուիֆին*) Նրա հետ գնա, նրա
հետ: Կրկակոխ հետևի՛ր նրան, հետևի՛ր նրան:

ՏԻՐՈՒՆԻ

Ձեր կարծիքն ի՞նչ է. Դու Տերշիտին չհրավիրե՞մ ընթրիփի:

ՖԱԼՍՏԱՖ

Էլ ոչ մի խոսք: Անպայման հրավիրիր:

Տանտիւսմին, Բարդուիֆը, ոստիկանները և մանկավիկը գնում են:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Ես ավելի լավ լուրեր եմ լսել:

ՖԱԼՍՏԱՖ

Ի՞նչ լուրեր են, միլորդ:

ԳԼԽ. ԳԱՏԱՎՈՐ

Թագավորը երեկ որտե՞ղ է գիշերել:

ԳՈՎԵՐ

Թեզինգստովում. տեր իմ:

ՏԱԼՍԱՏ

Հուտով եմ. որ ամեն ինչ բարեհաջող է, միլորդ: Ձեր լսածը ինչպիսի՞ լուրեր են:

Գլե. ԴԱՏԱՎՈՐ

Թագավորը իր ամբողջ գործով է վերադառնում:

ԳՈՎԵՐ

Ոչ, նա իր գործից հազար հինգ հարյուր հետևակ զինվոր,
Հինգ հարյուր հեծյալ
Շտապ ուղարկել է Լանկաստեր Զոնին
Ընդդեմ ապստամբ Նորթմբերլենդի
Եվ խռովաբար եպիսկոպոսի:

ՏԱԼՍԱՏ

Ասացե՛ք, ազնիվ միլորդ, թագավորը Վալեսից վերադառնո՞ւմ է:

Գլե. ԴԱՏԱՎՈՐ

Ի՞նչ շուտով նամակ կատանա՞ք ինձնից:
Ե՛կ ինձ հետ, Գովեր:

ՏԱԼՍԱՏ

Միլո՞րդ:

Գլե. ԴԱՏԱՎՈՐ

Ի՞նչ կա:

ՏԱԼՍԱՏ

Պարոն Գովեր, կարո՞ղ եմ խնդրել, որ ինձ հետ նաշե՛ք:

ԳՈՎԵՐ

Ես պետք է իմ պարոնի հետ գնամ: Շնորհակալ եմ, սրբ Զոն:

Գլե. ԴԱՏԱՎՈՐ

Պարոն Զոն. դուք այստեղ երկար մնացի՛ք: Չէ՞ որ ձեզ հանձնարար-
ված էր զինվորներ հավաքագրել ձեր ճանապարհին ընկած կոմսություն-
ներից:

ՏԱԼՍԱՏ

Զե՛ի՛ք բարեհաճի ընթրել ինձ հետ, պարոն Գովեր:

Գլե. ԴԱՏԱՎՈՐ

Այդ ո՞ր հիմարն է ձեզ այդ ձևերը սովորեցրել, պարոն Զոն:

ՏԱԼՍԱՆ

Պարոն Գովեւ, եթե այդ ձևերը ինձ սազական չեն, ուրեմն ինձ սովորեցնողը հիմար է եղել: Այդպես է սրամտության կարգը մեզ մոտ, միւրդ, հարվածին՝ հարված: Մնա՛ք բարով:

ՔԼԵ. ԴԱՏԱՎՈՐ

Աստված քող միտքդ պայծառացնի, ո՛վ մեծ հիմար:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Լոնդոն: Մի ուրիշ փողոց:

Մանուկ են իշխան Հևերին և Փոփնար:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Վկ՛ա է աստված, ահավոր հոգնած եմ:

ՓՈՒՆՍ

Մի՛թե. իսկ ես կարծում էի, թե հոգնածությունը չի համարձակվի դիպչել այդքան ազնվարյուն, բարեծնունդ մի անձի:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Հավատացե՛ք. դիպավ և այն մտածումից, որ ես ստիպված եմ այդ բանը խոստովանել, իմ փառքը ամոթից շիկնում է: Արդյոք անարգալի չի՞ թվա հասարակ գարեջուր խմելու իմ ցանկությունը:

ՓՈՒՆՍ

Իշխանին վայել է բավականաչափ լավ դաստիարակված լինել այդպիսի անպետք մի խմիչքի անունը շհիշելու համար:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Հավանորեն իմ նաշակը թագավորական չէ, որովհետև, անկեղծորեն ասած, այդ թույլ, անպետք խմիչքը հենց նոր անցավ իմ մտքով. բայց իսկապես, այդպիսի ստուր մտքերը սաստիկ ներհակ են իմ մեծությանը: Գիտես, թե ինչպիսի անպատվություն է ինձ համար քո անունը հիշելը. կամ առավոտյան քեզ դեմքով նանաչելը, կամ նկատելը, թե դու քանի զույգ մետաքս գուլպաներ ունես, նաև քո հագին Լոնդոնները և դեղձան գույնի այն գուլպաները, որ արդեն ունեցել ես: Կամ քո շապիկների ցուցակ կազմելը, թե որը նրանցից տոնական օրերի համար է և որը՝ յի

օրերի: Բայց թե՛նիսի խաղաղաշտի պահակը այդ ամենը ավելի լավ գիտե, քան թե ես: Չէ՞ որ երբ դու այնտեղ շես երևում քո գնդակահարով, նշանակում է սպիտակեղենիդ գործը վատ է. իսկ դու վաղուց է, որ այնտեղ շես երևացել, որովհետև քո ներքին զավառները կույ են ավել հուլանդական ներմակեղենիդ ամբողջ պահուստը: Աստծուն է միայն հայանի, թե քո սպիտակեղենի ցնցոտիներով բարուրված այդ անհարազատ նդհան երեխաներից, որը կարծանանա երկնային արքայության: Ի միջի այլոց, մանկարարձուսի կանայք ասում են, թե երեխաները ի ծնե հանցավոր շեն, որի շնորհիվ աշխարհի բնակչությունը ավելանում է և ազգակցական կապերը հզորապես ամրապնդվում են:

ՓՈՒՆՍ

Օ՛, որքան անհարիր են պատերազմի դաշտում քափած ձեր այդքան հերոսական նիզերը և ձեր այս փուլ դասարկաբանությունը: Մի՞թե վայել է, որ դու՛մ ձեզ այդպես պահեք, երբ ձեր հայրը ծանր հիվանդ է: Ասացե՛ք, աշխարհում ձեզ պես քանի՞ երիտասարդ իշխան կգտնվի, որ կարող է այդպես վարվել, երբ իր հայրը հիվանդ է:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Քեզ մի բան ասե՛մ, Փոփնս:

ՓՈՒՆՍ

Ասացե՛ք, միայն թե մի գերազանց բան լինի:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Քո միջակ խելքին շատ հարմար մի բան:

ՓՈՒՆՍ

Կա՛մ. պատրաստ եմ քո հարվածին:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Լսի՛ր, ուրեմն. ինձ վայել չի այժմ տխուր երևալ, երբ իմ հայրը հիվանդ է, և սակայն, խոստովանում եմ քեզ իբրև ընկերոջ,— քանի որ ավելի լավը չունենալով՝ հարմար է քեզ ինձ ընկեր անվանել,— որ ես տխուր եմ, չափազանց տխուր իսկապես:

ՓՈՒՆՍ

Մի՞թե. դժվար է հավատալ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ներվում եմ այս ձեռքով. դու կարծում ես թե ես սասանայի գրեմ եմ գրված իմ խստասրտության և անկեղծության համար, ինչպես դու և

Ֆալստաֆն ե՛մ և այն էլ՝ խոշոր տառերով: Մարդու լավն ու վատը վերջում կերևա: Հավատացնում եմ քեզ, որ իմ սիրտը ներհուսաւ արյուն է ծորում այն մտածուրդունից, որ իմ հայրը այդքան ծանր հիվանդ է և միայն իմ այս նվաստ ընկերությունն է քեզ հետ, որ ետ է մղում իմ վիշտըն արտահայտելու նվազագույն ցանկությունը:

ՓՈՒՆՍ

Պատե՛հ՝ որ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ասե՛նք քե լայ եղա, դու ի՞նչ կմտածես իմ մասին:

ՓՈՒՆՍ

Կմտածեմ, որ դու արեւայական ամենամեծ կեղծավորն ես:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ամեն ոմ այդպես պետք է մտածեր և դու երանելի մարդ ես, որ մտածում ես այնպես, ինչպես ամենքն են մտածում: Քո մտքերը շարունակ շարժվում են մտածուրդան ամենամաշված հանապարհով: Ամեն մարդ ինձ կեղծավոր կհամարէ իսկապես: Բայց եո ամենահարգարժան միտքը ինչի՞ց դրդված է այդպիսի եզրակացության հանգել:

ՓՈՒՆՍ

Ինչի՞ց. բո առաջվա զեխ, անառակ կյանքից և Ֆալստաֆի հետ ունեցած շափազանց մեծ կապերից:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ես կապված եմ նաև քեզ հետ:

ՓՈՒՆՍ

Այս լույսը վկա, իմ մասին շատ լավ են խոսում: Ես դա սեփականականջներով եմ լսում: Վատքարագույներ, որ նրանք կարող են իմ մասին ասել, այդ այն է, որ ես կրտսեր եղբայրն եմ՝ և իմ հույսը իմ ձեռքերի վրա է: Խոստովանում եմ, որ քե՛ մեկը և քե՛ մյուսը ստղել չեմ կարող: Պատարագը վկա, Լկազը Բարդոլֆն է:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Նրա հետ զայիս է նաև այն տղան, որ ես սովեցի Ֆալստաֆին: Իմ սովածը մի Լեիստոնյա մանուկ էր, սակայն, նայի՛ր, քե ինչ տեսակ կապիկ է շինել նրանից այդ հաստամարմին անզգամը:

Մտնում եմ Բարդոլֆը և մանկավիհը:

ԲԱՐԴՈՒՖ

Աստվա՛ծ պահապան, ձերդ բարձրություն:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ձեզ նմանապես, գերազնիվ Բարդուղիմ:

ԲԱՐԳՈՒՅ

(Մանկկլավիկին) Մի այս առաքինի իշուկին, այս ամոթխած հիմարին տեսե՛ք: Ինչո՞ւ էս կարմրում: Հենց հիմա ինչո՞ւ շիկնեցիր: Դու գորակաշի՛կ էս, թե նորահարս: Մի՞թե անմեղությունը մի շորս բաժակ գարեջուր խմելով իսխտելը մե՛ծ բան է:

ՄԱՆԿԼԱՎԻԿ

74 Ես հենց հիմա նրա մտքից եմ գալիս, միշտ: Սկզբում էս նրան շհանաչեցի, որովհետև նա ինձ ձայն տվեց պատուհանի կարմիր հաղերի միջից, իսկ նրա դեմքը այդ հաղերի պես կարմիր էր: Հետո, երբ էս որսացի նրա աչքերը, ինձ թվաց, թե նա երկու ծակ է բաց արել պանդոկապետուհու նոր կարմիր շրջազգեստի վրա և դրանց միջով է նայում ինձ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Չե՛ք տեսնում, որ տղան բավական առաջադիմել է:

ԲԱՐԳՈՒՅ

Կորի՛ր, երկոտանի խառնածին նապաստակ, կորի՛ր:

ՄԱՆԿԼԱՎԻԿ

80 Կորի՛ր, նվաստ Ալթեի երազ, կորի՛ր:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ա՛յ տղա, դու մեզ բացատրիր, թե դա ինչ երազ է:

ՄԱՆԿԼԱՎԻԿ

Տեր իմ, Ալթեն երազում տեսել է, որ ինքն ծնել է մի հրավառ կանդորա համար էլ էս նրան անվանեցի Ալթեի երազ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Այդ լավ բացատրությունը մի կրոն արժև, վերցրու քո վարձը:

ՓՈԲՆՈՒ

Յ՛, եթե հնար լինե՛ր քրքուռներից փոկել այս սփանչելի բողբոջը: Այս վեց մանրադրամն էլ վերցրու իբրև պաշտպանություն այդ վտանգի դեմ: (Փող է տալիս):

ԲԱՐԳՈՒՅ

Պաշտպանության մասին զուր մի մտածիր: Նրա տեղը քո կապիկն է կախադանի վրա:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Իսկ քո տերը ինչպե՞ս է, Բարդուղիմէ:

ԲԱՐԴՈՒՄ

Նա լավ է, միլորդ: Իմացավ, որ ձերդ բարեբարությունը շուտով քաղաք է ժամանում և այս նամակը տվեց, որ հանձնեմ ձեզ:

(Հանձնում է մի նամակ):

ՓՈԻՆՍ

Մատուցված է ամենախորին հարգությամբ: Իսկ ինչպե՞ս է սպրում սուրբ Մարտիրոսի առջադր — ձեր տերը:

ԲԱՐԴՈՒՄ

Մարմնապես առողջ է, պարուն:

ՓՈԻՆՍ

Այո, բայց նրա անմահական մասը բժշկի խիստ կարիք ունի: Իսկ դա նրան չի մտահոգում. չէ՞ որ հոգին չի մեռնում, քեկուզ հիվանդանա:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ես այդ հսկա ջրաղղմին բույլատրում եմ իմ շան պես մաշկմական լինել ինձ հետ, իսկ նա դրանից օգտվելով՝ արդեն չափը անցնում է: Մի առեսք բե ինչ է գրում ինձ:

ՓՈԻՆՍ

(Կարդում է) «Ասպետ Ջոն Ֆալստաֆից...» Ամեն կերպ հարմար առիթ է որոնում, որ մարդկանց աչքը կոխի իր ասպետական կոչումը, իսկ և իսկ թագավորի այն ազգականների հման, որոնք երբևէ իրենց մատները ասեղով չեն ծակում՝ առանց բացականչելու «Մի բիշ թագավորական արյունը թափվեց»: Իսկ երբ դիմացինը ձեռացնելով, քե նրա ասածը շնապացավ, հարցնում է «Այդ ինչպե՞ս». — և պատասխանը հաջորդում է նույն արագությամբ ինչպես խնդրարկուն է իր գլխարկը հանում. «Ես թագավորի խելըն ազգականն եմ, պարուն»:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

109 Այո, նրանք այնպես են փափագում մեզ արենակից դառնալ, որ պատրաստ են հասնել մինչև Հարեթի ժամանակները: Սակայն վերադառնա՞նք նամակին:

ՓՈԻՆՍ

(Կարդում է). «Ասպետ Ջոն Ֆալստաֆից Վալեսի իշխան Հարեթին — թագավորի ավագ որդուն և գահաժառանգին՝ ողջունե՛ք» Կարծես պաշտոնական գրություն լինի:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Շարունակի՛ր:

ՓՈՒՆԱ

(Կարդում է) «Հակիրճությամբ ես կհետևեմ արժանապատիվ հոռմեացուն»: Հակիրճություն ասելով նա անշուշտ նկատի ունի իր կարն շունչը, շնչարգելությունը: «Ինձ հանձնում եմ քո ողորմածությանը, քեզ՝ աստծո ողորմածությանը և ձեռք եմ փաշտում քեզնից. Շատ մի մտերմացիր Փոփոսի հետ: Նա չարաշահում է քո վստահությունը և այնքան է լրբացել, որ երգվում է, թե դու խոստացել ես ամուսնանալ նրա քոջ՝ Նելլի հետ: Քո պարապ ժամերին զոչա մեղհեցի՞ր համար, եթե հոժար եո, և մնաս բարով: Մեամ քոնր, կամ գուցե ոչ քոնր, (նայած թե դու ինչպես կվերաբերվես ինձ), Ձեկ Ֆալստաֆ՝ իմ բոլոր մտերիմ բարեկամների համար, Ձեկ՝ իմ եղբայրների ու փոյրերի համար և պարոն Ջոն՝ համայն եվրոպայի համար»: Միլորդ, ես այս նամակը կբարբախեմ գինու մեջ և կստիպեմ Ֆալստաֆին կուլ ասալու իր գրածը:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ասենք թե իր գրած փառն բառերը կուլ տվեց, հետո ի՞նչ: Իսկ դու, Նեդ, մի՞թե այդպիսի քան ես տարածել իմ մասին: Ես պետք է ամուսնանամ քո քոջ հետ:

ՓՈՒՆԱ

Ես իմ քոջը դրանից ավելի լավ բախտավորություն չեմ ցանկանում, բայց երբեք այդպիսի քան ասած չկամ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Մակայն մենք հիմարների պես իզուր ժամանակ ենք վատնում այստեղ, իսկ իմաստունների հոգիները ամպերի մեջ նստած ծիծաղում են մեզ վրա: Քո տերը Լոնդոնումն է:

ԲԱՐԴՈՒՑ

Այո, միլորդ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

136 Որտե՛ղ է բնթրում. այդ ծեր վարագր դարձյալ այն հին բոզանո՞ցն է հանախում կերակրվելու համար:

ԲԱՐԴՈՒՑ

Դարձյալ նույն տեղը, տեր իմ, Իստչիփում:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ի՞նչ ընկերների հետ:

ԲԱՐԳՈՒՅ

Ի՞ր նախկին ընկերներն են՝ ուրախ զվարք առնեմ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Իսկ ի՞ր հետ կանայք լինո՞ւմ են ընթրիքին:

ՄԱՆԿԱՎԻԿ

Ոչ մի կին, միլոդ, բացի պառավ տիկին Վազգից և տիկին Գոլ ՏԵՐ-
շիտից:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Այդ մեկն ի՞նչ արարած է:

ՄԱՆԿԱՎԻԿ

Մի վայելուչ տիկին է, տեր իմ, և իմ տիրոջ ազգականուհին:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Նա նրան ազգականուհի է նույնքան, որքան Եկեղեցապատկան Երինչ-
ները քաղաքային ցույին: Ծածուկ մուտք գործելով շրոնե՛նք նրանց ընթ-
րիքի վրա: Քո կարծիքն ի՞նչ է, նեղ:

ՓՈՒՆՍ

Ես ձեր սավերն եմ, միլոդ. ձեր Լաևից կգամ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Լսիր, մանկավիհ, դու էլ լսիր, Բարդուլֆ, ձեր պարոնին ոչ մի խոսք
չասեմ, թե ես վերադարձել եմ քաղաք: Վերցրե՛ք ձեր լոռիքյան համար:

(Փող է տալիս նրանց)

ԲԱՐԳՈՒՅ

Ես իմ լեզուն կուզ տվեցի, պարոն:

ՄԱՆԿԱՎԻԿ

Ինչ վերաբերում է իմ լեզվին, նրա տերը ևս եմ. ամուսն կփակեմ բե-
րանիս մեջ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ցտեսությո՛ւն: Դե՛պի գործ:

Բարդուլֆը և մանկավիհը գնում են:

Այդ Գոլ ՏԵՐշիտն անկասկած մաշված նաճապարհի պես մի բան պետք
է լինի:

ՓՈՒՆՈՒ

Վատահեցնում եմ ձեզ, այնքան մաշված-տրորված, ինչպիսին է սուրբ Օլբենի և Լոնդոնի միջև եղած անցուղին:

ԻՇԵԱՆ ՀԵՆՐԻ

Իսկ ինչպե՞ս հաշոդացնենք այս երեկո Ֆալսաաֆին դիտելու իր բնական գույների մեջ, առանց նրա կողմից նկատվելու:

ՓՈՒՆՈՒ

Կհագնենք մեկական կաշվե բանկոն և զագնոց և կդառնանք մատովակ նրա սեղանին: Եղա՞վ:

ԻՇԵԱՆ ՀԵՆՐԻ

Աստված և հանկարծ ցո՞ւլ, ի՞նչպիսի ահավոր անկում: Այդպես եղավ Արամազդի հետ: Իշխան և հանկարծ համբակ, ի՞նչպիսի նվաստ այլակերպություն: Այդպես կլինի ինձ հետ, քանզի ամեն գործի մեջ ինչ-որ չափով խելահեղություն է պետք: Հետևի՛ր ինձ, Նեղ:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Գ

Վորկվորթ: Ամրոցի առաջ:

Մանում են Նորթեմբերլենդը, լեդի Նորթեմբերլենդը և լեդի Պերսին:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Կին իմ սիրելի և դուստր իմ քննուշ,
Ես ձեզ խնդրում եմ, արգելք մի՛ ելեք իմ դմնյա երբին,
Մի՛ ձանձրացրեք ինձ ձեր տրտում տեսքով,
Ժամանակները առանց այդ էլ խիստ տագնապալի են:

ԼԵԴԻ ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Ես վերջ տվեցի, իմ խոսքը պրծավ,
Վարվիր ինչպես զիսես, բայց խելիք միշտ քեզ առաջնորդ կարգիր:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Ավա՛ղ, քաղցրիկ կին, անբիծ պատիվն իմ գրավ է դրված,
Լոկ մի միջոց կա որպես փրկագին, այդ իմ գնալն է:

Օ՛, սակայն հայր իմ, ի սեր սասածո,
 Այս պատերազմին դու մի մասնակցիր:
 Կար մի ժամանակ, երբ քո զնալը
 Շատ էր կարևոր, քան քե՛ս այս անգամ.
 Քայց դու դժեցիր քո խոսքը, հայր իմ,
 Երբ Պեքսի որդիդ, իմ անգին շենքին,
 Հայացքը դեպի հյուսիս սևեռած
 Երկար սպասեց, որ զու՛ր կբերես, բայց չե՛րեացիր:
 Ո՛վ է՛նզ հորդու՛եց, որ տանը մնաս:
 Այդ օրը երկու մեծ պատիվ կորավ՝ քոնք և որդուդ:
 Ատուված քո պատվին թող փայլ սա կրկին:
 Որդուդ պատիվը պայծառ շուրում էր.
 Ինչպես արևը կապույտ երկնքում, իր շառլ լույսով
 Անգլիո թուր ասպետությունը
 Մղելով ազնիվ սիրագործության:
 Հայելի էր նա, որին նայելով՝
 Երիտասարդությունը շահում էր իրեն:
 Նրա քայլվածքը մի կաղապար էր բոլորի համար,
 Բացի այն մարդուց, որ զուրկ էր ստիճ,
 Նա փութախոս էր և այդ բնածին պակասությունը
 Քաշերի համար առողանության օրինակ դարձավ.
 Իբրև հատկանիշ համարձակության:
 Հարք, հասկանալի դանդաղ խոսողը
 Հրամարվելով այդ արժանիքից
 Արատավորը ընդօրինակեց,
 Որ ամեն ինչով նմանվի նրան: Խոսքով, քայլվածքով,
 Քիմքի, հանույքի իր հակումներով,
 Մարտական խստիվ կարգ ու կանոնով, արամադրությամբ
 Եվ ամեն ինչով — նա հայելի էր, տիպար էր, մատյան,
 Միակ անքերի պատկերացույցը: Եվ նրան, ավա՛ղ,—
 Օ՛, սմանչելիք, օ՛, միակ հրաշք մա՛րդ արարածի.—
 Այդպիսի մեկին, որ եզակի էր —
 Եվ իբրև որդի մնաց Եզակի,
 Ռոդեցի մեհակ պատերազմի բիրտ սասածո ժանիքին,
 Որ նրա միակ պաշտպանը մարտում
 Իր անեղագոշ սնունը Եղավ՝ շենքի Հատսպեր:
 Այդպես գոհվեց նա: Եվ մեղքը քոնքն էր:

Օ՛. երբե՛ք, երբե՛ք մի անպատվիր, հայր,
Հիշատակը սուրբ մեր նահատակի,
Ապստամբներին տված երդումը իրագործելով:
Նրանց մենակ թող:
Արքեպիսկոպոսն ու մարշալն հգոր են.
Իմ անգին Հարրին եթե ունենար կեսը նրանց գորհի,
Ես այժմ նրա վզից կախվելով
Գուցե պատմեի լուրդ Մոնմաուրի շիրիմի մասին:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Անե՛ժք քո սրտին,
Ինչո՛ւ ևս փոճում իմ ոգին ընկնել
Հին սխալներս վրաս ողբալով:
Իզուր է, դուստր իմ, ես պետք է գնամ,
Պետք է ընդառաջ ելնեմ վտանգին,
Կամ նա, մի այլ տեղ ինձ որոնելով,
Երբ ևս կլինեմ սաստիկ անպատրաստ, —
Վերջ կաա կյանքիս:

ԼԵԴԻ ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Թո՛ղ՛ր Շոտլանդիա,
Սպասիր սակայն քո հարմար ժամին,
Մինչև լորդերն ու գորհերը իրենց ուժը կփորձեն:

ԼԵԴԻ ՊԵՐՍԻ

Եթե հաջողվի, որ նրանք կոտրեն արքայի ուժը,
Քեզ զօղիր նրանց, կուտ պողպատի պես
Նրանց կորովը ամրապնդելով: Հանուն մեր սիրո
Խնդրում եմ, սակայն, որ նախ և առաջ
Գու նրանց թողնես սեփական բախտին:
Այդպես զոհվեց նա, այդպես մնացի ես որբևայրի,
Դեթ հենար լինեմ մնացյալ կյանքիս հորդ արտասուքով
Ոռոգել ծաղիկն իմ հիշողությամբ,
Որ նա բարձրանար, հասներ երկնքին,
Անգին ամուսնուս վեհ հիշատակին:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Գնա՛նք, նե՛րս գնանք: Իմ հոգին այժմ
Մակընթաց էլած ծովի է նման,

Որ իր բարձրության կատարին հասած՝
Մի պան հանգչում է մոլեգնությամբ լի:
Կուզեի անսնել եպիսկոպոսին, միանալ նրան,
Բայց բազում պատնառ ետ են պահում ինձ:
Կերթամ Շուրաւնդիա, վնիոս այդ է, այնտեղ կսպասեմ,
Մինչև որ պատեն ժամը ինձ կանչէ:

Դեռում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Զ Ո Ր Ր Ո Ր Դ

Լոնդոն: «Վարազի գլուխ» պանդոկը Խաչիփում:

Մտնում են երկու մատովակ:

Ա. ՄԱՏՈՎԱԿ

Դու այս ի՞նչ ես բերել, գրողը տանի. հին, թոռմած խնձորնե՛ր: Մի՛-
թե դու չգիտես, որ պարոն Զոնը թոռմած խնձոր չի սիրում:

Բ. ՄԱՏՈՎԱԿ

Պատարագը վկա, նիշա ես ասում: Իշխանը մի անգամ նրա առաջ մի
աման հին. թոռմած խնձոր գրեց և ասաց. ահա հինգ ասպետ ես, պարոն
Զոն և գլխարկը հանելով ավելացրեց. «Պատիվ ունեմ հրաժեշտ առնել
այս վեց կլորիկ, դեղնած, թոռմած ասպետներից»: Այդ բանը սաստիկ
զայրացրեց նրան, բայց հետո մոռացության տվեց:

Ա. ՄԱՏՈՎԱԿ

Դե, ուրեմն, սփոոցը պարզիւր և խնձորները դիւր սեղանին: Ման արի
9 տես, կարող ես գտնել Անիկի երաժիշտներին: Տիկին Տերշիար կուզենար
մի ֆիշ Երաժշտություն լսել: Շտապի՛ր: Այն սենյակը, ուր նրանք բնթ-
րել են, շատ շոգ է և նրանք հիմա այստեղ պետք է գան:

Բ. ՄԱՏՈՎԱԿ

Լսի՛ր, իշխանը և պարոն Փոինը շուտով գալու են պանդոկ: Նրանք
հագնելու են մեր բանկոնները և կապելու են մեր զոգնոցները, միայն
թե պարոն Զոնը այդ մասին չպետք է իմանա: Բարդոլֆն է զգուշացրել
ինձ:

Ա. ՄԱՏՈՎԱԿ

Պատարագը վկա, արտակարգ զվարճություն է լինելու, ինչպես հին
օրերում: Ա՛յ թե կուրախանա՛նք:

Բ. ՄԱՏՌՎԱԿ

Գնամ տեսնեմ որտե՞ղ կարող եմ գտնել այդ Սնիկին:

Գնում է:

Մտնում են պանդոկի տիրուհի տիկին Վազը և Դոլ Տերշխար:

ՏԻՐՈՒՇԻ

Հավատա, անուշիկս, ես կարծում եմ, որ ձեր մարմնա-բնական վիճակը գերազանց է, ձեր զարկերակի խիոցը մի արտակարգ բան է, ավելի լավը ցանկանալ՝ կարելի չէ: Իսկ երեսի գույնը՝ վարդ է կարմիր, իսկական վարդ, ճիշտ եմ ասում: Քայց դու չափազանց շատ եմ կոնծել կանարյան գինի, իսկ այդ գինին շատ փաղցր է և թունդ: Այդ գինին խմողը մինչև կհասցնի հարցնել «Այս ի՞նչ սյատահեց ինձ հետ», նրա ամբողջ արյունը կգուրշանա գինու հոտից: Ինչպե՞ս եմ զգում ձեզ:

ԴՈԼ

Մի ֆիշ ավելի լավ: Հը՛մ:

ՏԻՐՈՒՇԻ

Կնշանակե ամեն ինչ կարգին է: Բարի սիրտը ոսկուց թանկ է: Ահա՛ և պարոն Զոնը:

Մտնում է Ֆալստաֆը:

ՖԱԼՍՏԱՖ

29 (Երգելով) « Ե ր ք Ա ր թ ու ր ր ք ա գ մ ե ց գ ա հ ի ն »:

Միզամանը դո՛ւրս տարեմ:

Առաջին մատուակը գնում է:

« Ա ր ք ա ք ր ն ա ա ր ժ ա ն ա վ ո ր »:

Հը՛, ինչպե՞ս եմ ձեզ զգում, տիկին Դոլ:

ՏԻՐՈՒՇԻ

Խեղճը սրտի նվաղում ունեցավ, հավատացնում եմ:

ՖԱԼՍՏԱՖ

Կանանց ամբողջ սեռը այդպես է: Հենց որ մի ֆիշ հանգիստ ես թողնում, իսկույն նվաղում են:

ԴՈԼ

Ա՛խ դու, անպիտան նարպագունդ, այդպե՞ս ես միսիթարում ինձ:

ՖԱԼՍՏԱՖ

Ես ձեր պատճառով եմ այսպես գիրացել, տիկին Դոլ:

ԳՈՒ

Ի՛մ պատճառով: Գրա պատճառը շատակերությունն է և մեկ էլ՝ հի-
վանդությունները: Ես չեմ:

ՖԱԼՍՏԱՅ

Եթե շատակերությամբ մենք պարտական ենք խոհարարին, ապա հի-
վանդությունները ձեզ ենք պարտական. Գոլ. դուք եք մեզ վարակում:
Այո՛, դրա վարակը ձեզնից է: Գոնե այդ մեկը խոստովանի՛ր, իմ բշխա
առաքինի, խոստովանի՛ր:

ԳՈՒ

Իսկ դուք կողուցտում եք մեր մանյակներն ու մեր գոհարեղենը. ա՛յդ
էլ խոստովանեմ:

ՖԱԼՍՏԱՅ

45 «Ձեր ոսկին, ձեր զարդերն ու մարգարիտը»: Չէ՞ որ Բաշաբար կովողը
հակատամարտից կաղ է դուրս գալիս: Դուք այդ գիտեք: Նախ համարձակ
նետվում ես խրամատի մեջ՝ Բո նիզակը արիաբար բարձր ցցած, իսկ հե-
տո արիաբար գնում ես վիրաբույժի մոտ: Արիաբար գրոհում ես և կրա-
կում լիցքավորված ուժածիք քնդանորը...

ԳՈՒ

Լո՛ի՛ր, կեղտոտ օձաձուկ, դու կախվելու ես արժանի:

ՏԻՐՈՒՂԻ

Ամեն անգամ նույն սլառմությունը: Հանդիպում եք թե չէ՝ սկսում եք
կովել, կարծես շուն ու կատու լինեք: Մեկը մյուսի քերությունը չի հան-
դուրժում: Ա՛յ թե ինչ օրի հասանք: Մեկնումեկը ձեզանից պետք է զիջի
մյուսին, և այդ մեկը դուք պետք է լինեք, Գոլ, որովհետև ավելի թույլ
անորը դուք եք, ինչպես ասում են, ավելի դատարկ անորը:

ԳՈՒ

Կարո՞ղ է մի թույլ դատարկ անոր դիմանալ մի հսկա լիքը տակառի
ծանրության: Սվ այն էլ՝ բորդո գլնով բեռնված մի տակառի: Նույնիսկ
ստորին նավախորշը կհրաժարվեր այդ բեռը ընդունել: Դե, լա՛վ, ե՛լ
հաշտվենք, Ջեկ: Դու պատերազմ ես գնում և ով իմանա, կհանդիպե՞նք
մենք նորից Բեզ հետ:

Մտնում է առաջին մատովակը:

Ա. ՄԱՏՈՎԱԿ

Պարոն ձեր գրոշակակիր Պիստոլն է եկել և ուզում է խոսել ձեզ հետ:

ԴՈՒ

Կախել է պետք այդ կովագան անգգամին: Չթողնե՛ք ներս գա: Դա Անգլիայի ամենատուջնակարգ հայհոյաբերան մարդն է:

ՏԻՐՈՒՇԻ

Եթե կովարար է, ի սեր աստծո, շրողնե՛ք որ պանդոկ մտնի: Ես հարե-վաններ ունեմ և պարտավոր եմ նրանց հետ խաղաղ ապրել: Ինձ կովա-րարներ հարկավոր չեն: Ամենալավ մարդիկ փառնով ու պատվով են շր-ջապատել իմ անունը: Փակեցե՛ք դուռը. այս պանդոկը կովարարների տեղ չի: Այսֆան տարի պատվով ապրել եմ աշխարհում, որ այժմ կովա-րարների՝ ներս թողնեմ: Փակեցե՛ք դուռը, խնդրում եմ:

ՅԱԼՍՏԱՅ

Բայց լսի՛ր, տիրուհի...

ՏԻՐՈՒՇԻ

Աղաչում եմ, պարոն Զոն, ձեզ հանգիստ պահե՛ք: Ես թույլ չեմ տա, որ աղմկարար մարդիկ ոտք դնեն իմ պանդոկը:

ՅԱԼՍՏԱՅ

Բայց լսի՛ր, ա՛յ կին, նա իմ դրոշակակիրն է:

ՏԻՐՈՒՇԻ

Միևնույն է, լսել չեմ ուզում. ին կովարար դրոշակակիրը չպետք է մտնի իմ պանդոկը: Մի ֆանի օր առաջ ես մեր թաղամասի ոստիկանապետ պարոն Տիգիկի մոտ էի. նա ասաց, — դա եղավ անցյալ շորեֆշաբբի: — «Հարևանուհի տիկին Վոագ, ասաց նա, — մեր ֆահանա պարոն Դոմբեն էլ այնտեղ էր, — ձեզ մոտ, ասաց նա, արտոնե՛ք միայն վայելուչ վար-մունք ունեցող մարդկանց, որովհետև, ասաց նա, ձեր մասին շատ վատ համբավ է տարածված»: Ես, իհարկե, հասկանում եմ, թե ինչու նա այդ-պես ասաց. «որովհետև, ասաց նա, — դուք ազնիվ կին ե՛ք և լավ կողմից հայտնի, ուստի, զգույշ եղե՛ք հյուրեր ընդունելիս: Ոչ մի ղեպֆում ներս շրողնե՛ք անկարգ, աղմկարար մարդկանց», — ասաց նա: Եվ ես նրանց իմ պանդոկը չեմ թողնի: Մեր թաղային ոստիկանապետի ասածները ինձ-ներդ ձեր ականջներով լսեցի՛ք: Ո՛չ, ինձ կովարար մարդիկ հարկավոր չեն:

ՅԱԼՍՏԱՅ

Նա կովարար չի, տիրուհի, այլ մի շափագանց անվնաս խաբեբա, այն էլ թղթախաղի մեջ: Մեջքը փաղափշի՛ր՝ տնական շան պես հեզ է: Նույ-

նիսկ հնդկահավին չի նեղացնում, երբ նա փետուրները ուռեցնելով՝ սկսում է կատաղի դիմադրել: Նրան վեր կանչիր, ա՛յ տղա:

Առաջին մատովակը դուրս է գնում:

ՏԻՐՈՒՂԻ

Խաբեքա՛ է, ասում եմ: Իմ տան դուռը բաց է բոլոր ազնիվ մարդկանց առաջ, նույնիսկ խաբեքաների, բայց կովարարներին տանել չեմ կարող: Աստվա՛ծ վկա, հեևց որ այդ «կովարար» բռն էմ լսում, սիրտս սկսում է խառնել: Ապա ձեռք տվե՛ք ինձ, պարոններ, տեսե՛ք ինչպես եմ ցնցվում. ամբողջ մարմինս դողում է, հավատացնում եմ: Ապա ձեռք տվե՛ք:

ԳՈՒ

Իսկապես որ դողում եմ, տիրուհի:

ՏԻՐՈՒՂԻ

Գողո՞ւմ եմ. և այն էլ ինչպե՞ս. բարդի ծառի տերևի պես: Կովարարներին ուղղակի հանդուրժել չեմ կարող:

Մտնում են Պիստոլը, Բարզոլֆը և մանկավիկը:

ՊԻՍՏՈՒ

Աստված սլահապան, պարոն Զոն:

ՖԱԼՍՏԱՅ

Բարի եկար, դրոշակակիր Պիստոլ: Ե՛կ այստեղ. ևս լեզ կլիցֆավորեմ մի գավաթ գինով, իսկ դու կրակիր իմ տիրուհու վրա:

ՊԻՍՏՈՒ

Ես նրա վրա կսլարսլեմ ատրնանակի երկու լիցֆ, պարոն Զոն:

ՖԱԼՍՏԱՅ

Նա ատրնանակի կրակոցներից վախեցողը չի, պարոն: Այդպիսի լիցֆերով նրան չես ծակի:

ՏԻՐՈՒՂԻ

Վե՛րջ տվե՛ք ձեռ կատակներին ու կրակոցներին: Եթե խմելը իմ սրտովը չի, ևս չեմ խմի, այն էլ մանավանդ ուրիշների հանույքի համար:

ՊԻՍՏՈՒ

Այդ դեպքում գուցե ձեզ վրա պարսլեմ իմ լիցֆերը, տիկին Գուրոբես:

ԳՈՒ

Ի՛նձ վրա: Կորի՛ր, ֆոստա անպիտան, ստո՛ր, կեղտո՛ւտ փծուն խաբեքա, անվարտի՛՛ք քշվառական: Չհամարձակվե՛ս ձեռքդ դիպցնել ինձ: Կո-

րի՛ր, ոչլոտ անգգամ. կորի՛ր: Ես քո տիրոջ համար եմ կերակուր, ոչ քե-
ֆեզ համար:

ՊԻՍՏՈՒ

Դե, լավ, հերիք է կտառաավեֆ, ևս ձեզ գիտեմ, աիկին Դորոթեա:

ԴՈՒ

Կորի՛ր, քակահատ սրիկա, զգվելի աղբակոյտ: Վկա այս գինին, ևս
այս դանակը քո կեղտոն կոկորդը կցցեմ, եթե հանդգնես լրբաբար վար-
վել ինձ հետ: Չֆվի՛ր իմ աշֆից, դու, գարեջրի գարշելի շիշ, դու, սրա-
խաղության ձեռնածու: Մի սրա՛ն տեսեֆ, երկու կապիշ է ամրացրել ու-
սերին և իրեն արդեն քաջ զինվոր է երեակայում: Այդ ո՛ր օրվանից, պա-
րոն:

ՊԻՍՏՈՒ

Թող աստվածն ինձ գրկի կյանֆից, եթե ևս ուժգին կրակոցով քո շա-
պիկը շպատառուտեմ այդ խոսքերիդ համար:

ՖԱԼՍՏԱՅ

Վե՛րջ տուր, Պիստու, շհամարձակվես այստեղ կրակել: Հեռացի՛ր այս-
տեղից:

ՏԻՐՈՒՉ

Իսկապես. բարի գնդապետ Պիստու, այստեղ լիցֆեր պարպելու տեղ
չի: Մի ուրիշ տեղ ընտրեֆ, անուշիկ գնդապետ:

ԴՈՒ

Գնդապե՛տ: Նա գնդապե՛տ է: Ա՛խ դու, գարշելի անիծյալ խաբեբա և
դու շե՛ս ամաշում ֆեզ գնդապետ կսշելու համար: Ես գնդապետների տեղը
լինեի, գավազաններով ջարդոսիշուր կանեի ֆեզ նրանց պատվավոր կո-
շումը յուրացնելու համար, առանց սեֆական սխրագործությամբ ար-
ժանի դատնալու դրան: Դու գնդապե՛տ. այդ ո՛ր արժանիֆներիդ համար,
սարո՛ւկ: Հասարակաց տներում թշվառ աղջիկների շորերը պատառուտե-
լու՛ համար: Գնդապետի՛ս տեսեֆ: Ձեզ կախել է հարկավոր, անգգամ:
133 Եվ ի՞նչ ես ծամել քո ամբողջ կյանֆում—չորացած թթու սալորից և
կոշտացած կարկանդակներից բացի: Գնդապե՛տ: Շանթի՛ր ինձ, աստ-
ված, այս սրիկաները շուտով այդ բառը պիտի դարձնեն նույնֆան ատե-
136 լի, որֆան «տիրել» բառը, որ առաջներում մի գերագանց հրապույր
ունեի, բայց հետագայում գարշելի դարձավ: Հետևաբար, իսկական գո-
րապետները պատրտավոր են պաշտպան կանգնել իրենց պատվին:

ԲԱՐԴՈՒՅ

Խնդրում եմ, գնա՛ այստեղից, բարի դրոշակակիր:

ՏԱԼՍՏԱՆ

Գեթ մի խոսք, տիկին Դոլ:

ՊԻՍՏՈՒ

Ձե՛մ գնա: Լսի՛ր, ենթասայա Բարդուֆ, ես կարող էի նրան պատառ-
պատառ անել: Եվ ես վրեժխնդիր կլինեմ նրանից:

ՄԱՆԿԱՎԻԿ

Խնդրում եմ՝ գնա՛ այստեղից:

ՊԻՍՏՈՒ

Երդվում եմ այս ձեռքով, մինչև ես նրան դժոխք չուղարկեմ՝ Պլուտոնի
անիծյալ լինը, զարհուրելի անդունդը տարտարոսի, որ Երեբոսի հետ
տանջվի այնտեղ, ես այստեղից գնացողը չեմ: Տվե՛ք ինձ երկծանին ու
առասանը: Դե, բռնե՛ք, շներ, վա՛ր փաշեք նրան, վա՛ր փաշեք նրան,
148 իջեցրե՛ք խորք տարտարոսի: Այս Հիրենը չէ՞ մեր առաջ կանգնած:

ՏԻՐՈՒՋԻ

Հանդարտվեք, գնդապետ Պիստոլ: Աստված վկա, շատ ուշ է: Զսպեք
ձեր ցասումը, խնդրում եմ:

ՊԻՍՏՈՒ

Քաշվի՛ր իմ մոտից: Մի այս ասիական հալումաշ եղած,
Օրական հագիվ երեսուն մղոն
Քայլ անող ֆուստ գրաստներին տես,
154 Որ հանդգնում են շափվել մեծահաղթ Հանիքալների,
Վեհ Կեսարների և արոյական փաշ հույների հետ:
Ո՛չ, ո՛չ, ձեր միակ տեղը դժոխքն է,
157 Որի դռանը Ցերբերն է հսկում,
Ձեր քազավորը: Եվ թող ուժգնորեն երկինքը թնդա,
Որ շփոթել եմ ձին իշուկի հետ:

ՏԻՐՈՒՋԻ

Օհո՛, գնդապետ, երդվում եմ, դուր շատ դառը խոսքեր ասացիք:

ԲԱՐԳՈՒՆ

Գնա՛, բարի դրոշակակիր. թե չէ գործը կարող է կովի հասնել:

ՊԻՍՏՈՒ

Թող մաւրդիկ սատկեն շների նման,
Թագերը հանձնեն ինչպես գնդապետ,
Այս Հիրենը չի՞ մեր առաջ կանգնած:

ՏԻՐՈՒՇԻ

Ազնիվ խոսք, զնդապետ, այստեղ այդպիսի կին չկա: Ա՛յ թե ինչ ժա-
մանակների հասանք: Մի՞թե կարծում ե՛ք, թե նա նրան քաֆցնում եմ:
Ի սեր աստծո, հանդարտվե՛ք:

ՊԻՍՏՈՒ

168 Կե՛ր և զիրացի՛ր, իմ Կալիպոլիս:
Էհե՛յ, մատուվակ, զինի տվե՛ք ինձ:

170 Si fortune me tormente,
Sperato me contento.—
Մենք թնդանորից վախեցուր շենք, ոչ էլ դեերից:
Ինձ գինի տվե՛ք, իսկ դու իմ անգին, լուտ պառկիր այստեղ.

(Սուրբ սեղանին դնելով)

Մենք կետին հասանք առանց «և այլնի»:

ՖԱՍՏԱՑ

Պիստուլ, ևս քեզ խորհուրդ կտայի հանգիստ մնալ:

ՊԻՍՏՈՒ

176 Միրելի ասպետ, համբուրում եմ քո դաստակը: Ինչպես: Մի՞թե մենք
քեզ հետ միասին չենք հիացել Մեծ արշի աստղերով:

ԴՈՒ

Ի սեր աստծո, սանդուղներից վար շարտե՛ք դրան: Տանել չեմ կարող
ևս այդ պարծենկոտ սինկուրին:

ՊԻՍՏՈՒ

Ինձ սանդուղներից վար շարտե՛ք: Եվ հալից ընկած այս գրա՞ստն է
ուզում սանդուղներից վար շարտել ինձ:

ՖԱՍՏԱՑ

Բարդուլֆ, դրան վար հրիւ մանրադրամի պես: Այս պանդոկը կովի
վայր չէ:

ԲԱՐԴՈՒՇ

Ապա սանդուղներից ցած իջիր:

ՊԻՍՏՈՒ

Օհո՛, մեր գործը հերձվելուն հասավ. սուրճուն եմ ուզում:

(Սուրբ հափշտակելով)

Մահ, հանգիստ քուն քեր, առում օրերիս բանվածքը կարեհիր:
Դառնաղետ, ցավոտ, խորունկ վերբերն իմ

188 ժամն է արձակեն երեք փուլերին: Շուտ եկ, Ատրուպոս:

ՏԻՐՈՒՇԻ

Ա՛յ թե գործ բացվեց:

ՖԱԼՍՏԱՖ

Սուսերս տո՛ւր. տղաս:

ԴՈՒ

Խնդրում եմ. Ջեկ, աղաչում եմ, սուրդ մի մերկացրու:

ՖԱԼՍՏԱՖ

Ապա ցած իջիր:

(Սուրբ մերկացնելով՝ Պիստոլին դուրս է վանում)

ՏԻՐՈՒՇԻ

Ահա՛ քեզ աղմուկ ու շփոթ: Ավելի լավ է՝ փակել պանդոկը, քան թե հանդուրժել այսֆան վրդովմունք ու սարսափ: Եվ կտեսնեմ, մարդ կբարանվի անայայման, հավատացնում եմ: Վա՛յ ինձ, վա՛յ իմ սև օրին: Ջեք գեներեր պատյան դրեք, խնդրում եմ: Պաղատում եմ՝ ձեր գեներեր պատյան դրեք:

Պիստոլը և Բարդոլֆը դուրս են գնում:

ԴՈՒ

Խնդրում եմ, Ջեկ, հանդարտվի՛ր, այդ գարշելին գնաց: Ա՛խ դու, խառնածին վախկոտ սրիկա, ինչպես պարծենո՛ւմ էր իր ֆաջուրյամբ:

ՏԻՐՈՒՇԻ

Դուք վիրավորված շե՛ք վորատակից: Ինձ թվաց, թե նա մի մահացու նենգ հարված հասցրեց ձեր փորին:

Մանում է Բարդոլֆը:

ՖԱԼՍՏԱՖ

Դու նրան դուրս շարունակիր:

ԲԱՐԴՈՒՖ

Այո՛, պարոն: Անպիտանը հարբած էր: Դուք ուսից վիրավորել եք նրան:

ՖԱԼՍՏԱՖ

Խառնազնաց սրիկա՛: Եվ հանդգնում է դիմադրել ինձ:

ԴՈՒ

Ա՛խ դու, իմ անուշիկ, փոքրիկ անզգամ: Ավա՛ղ, դու իմ ինչո՞ն կապիկ: Ի՛նչպես ֆրանկ էս: Սպասի՛ր, երեսդ սրբեմ: Տեսնեմ մոուրդ: Ա՛, իմ

խառնածին: Աստված վկա, ես ինչ սիրում եմ: Դու տրոյական Հեկտորի
պես ֆաչ ես. մենակդ արժես հինգ Ագամեմնոն և տասնապատիկ լա-
210 ես, քան ինչ արժանավորները:

ՖԱԼՍՏԱՅ

Ա՛խ դու, սրիկա՛: Վատատոհմի՛կ ստրուկ: Մյուս անգամ ես այդ
անզգամին վերմակի տակ պիտի ֆաչեմ:

ԴՈՒ

Քաշիր և հանգստացրո՛ւ հոգիդ: Եթե դու այդ բանը անես, ես ինչ
կտաֆացնեմ վերմակի տակ իմ ծոցի մեջ:

Մտնում են երաժիշտները:

ՄԱՆԿԱՎՈՒԿ

Երաժիշտները եկան, պարոն:

ՖԱԼՍՏԱՅ

Թող նվագեն: Նվագեցե՛՛ք, պարոններ: Նստի՛ր իմ ծնկին, Դու: (Նվագ)
Վատատոհմիկ պարծենկոտ ստրուկ: Սրիկան սնդիկի պես փախավ ինձ-
նից:

ԴՈՒ

Այո, իսկ դու եկեղեցու գմբեթի պես փուլ եկար նրա վրա: Ա՛խ դու,
իմ խառնածին գիրուկ խոնկոր բարթողիմեոսյան տոնավանառի: Դու
Ե՛րբ պետք է դադարես կոիվներ սարքել ցերեկով և սուսերամարտել գի-
շերով, Ե՛րբ պետք է սկսես կարկատել քո հնացած մարմինը դեպի երկ-
նային արֆայություն ուղարկելու համար:

Քեմի խորհից մտնում են իշխան Հենրին և Փոինսը՝
ծայրված իբրև մատովակներ:

ՖԱԼՍՏԱՅ

224 Լոի՛ր, անգին Դու, մի բարբառիր մեռածի գանգի պես, մի հուշիր ինձ
իմ վախճանի մասին:

ԴՈՒ

Լավ, խոսենք իշխանի մասին: Ի՞նչ տեսակ մարդ է այդ երիտասարդ
իշխանը:

ՖԱԼՍՏԱՅ

Քարի մարդ է, բայց ծանծաղամիտ: Լավ հացագործ կարող է լինել-
այդքան խելք ունի:

ԴՈՒ

Ասում են թե Փոինսը շատ խելացի է և սրամիտ:

ՖԱԼՍՏԱՅ

Փոխնար խելացի՛: Կորցրո՛ւ կախվելու արժանի այդ շնագլուխ կապկին: Երա խելքը Տյուկսբերյան շուկայի մանանեխի պես թանձր է, իսկ սրամրտուրյան կողմից այնքան բուր է, որ տարբերություն չկա նրա և փայտյա մուրեհի միջև:

ՊՈՒ

Ապա ինչո՞ւ է իշխանը նրան այդքան սիրում:

ՖԱԼՍՏԱՅ

237 Որովհետև Երկուսի սրունքներն էլ նույն շախսի են: Նա էլ նրա պես հրաշայի գնդակ խաղացող է և ուտում է ծովային օձաձուկ և սամիթ: Պինու հետ կուլ է տալիս վառված մոմի մնացորդներ, բոնոցի է խաղում մանուկների հետ, ցատկում է նստարանների վրայով, պղծաբերան է և այն էլ շատ նուրբ: Կոշիկներն այնպես կոկ է հագնում, կարծես իր սրունքը կոշկակարի ցուցափեղկ լինի: Կոիվ, վեճ չի բորբոխում ընտրովի անեկդոտներ պատմելիս: Նա ուրիշ այսպիսի շատ նարպիկ ընդունակություններ ունի, որ ապացույց են նրա մաքի տկարության և մարմնի նկունության: Այդ է պատճառը, որ իշխանը նրան իր մոտ է պահում: Նա էլ ճիշտ ու ճիշտ այդպիսին է: Եթե նրանց նժարների վրա դնենք, մի հատիկ մազ բավական է, որ մեկի նժարը թեփվի մյուսից:

ԻՇԽԱՆ ԸՆՆՐԻ

Չկտրե՛նք այս գնդաձև սրիկայի ականջները:

ՓՈՒՆՅ

Եկ ձեձենք նրան իր այս անտակունու աշխերի առաջ:

ԻՇԽԱՆ ԸՆՆՐԻ

Տես, թե ինչպես այդ հալից ընկած ծերուկը ստիպում է նրան իր գազաթր Բոբի թուրակի պես:

ՓՈՒՆՅ

Մի՞թե զարմանալի չէ, որ ցանկությունը երկար տարիներ ապրում է երբ մարմնական ուժը սպառված է արդեն:

ՖԱԼՍՏԱՅ

Համբուրի՛ր ինձ, Դուլ:

ԻՇԽԱՆ ԸՆՆՐԻ

255 Օհն՛. Սատուրն ու Արուսյակը այս տարի կցվելու են իրար: Օրացույցն ի՞նչ է ասում այդ մասին:

257 նայեցե՛ք, թե ինչպես այդ կարմրափիթ Տրիգոնը, նրա ծառան, փրստ-
փրստով է պանդոկապետումու, իր տիրոջ այդ հնամաշ ծոցատետրի, նրա
259 հաշվեմատյանի և գաղտնիքների հավատարմատարի հետ:

ՖԱԼՍՏԱՖ

Դու ինձ կեղծ ես համբուրում, առանց ավյունի:

ԴՈՒ

Աստված վկա, ես լեզ արտանց եմ համբուրում, ամբողջ հոգով:

ՖԱԼՍՏԱՖ

Ես ծեր եմ, ինքս էլ տեսնում եմ, որ ծեր եմ:

ԴՈՒ

Ես լեզ ավելի եմ սիրում, քան այդ փոստ երիտասարդներից որևէ
մեկին:

ՖԱԼՍՏԱՖ

Ի՞նչ տեսակ կտոր ես ուզում ներհնազգեստի համար: Այս հինգշաբթի
ես փող եմ ստանալու, իսկ վաղը դու կունենաս մի նոր գլխանոց: Մի
զվարթ բան երգի՛ր ինձ համար: Արդեն ուշ է, պետք է երբանք ֆնելու.
Դու ինձ կմոռանաս, երբ ես զնամ:

ԴՈՒ

Աստված վկա, դու ինձ կստիպես լաց լինել, եթե այդպես խոսես: Միև-
չև քո վերադարձը ինձ պնդել. նոր շոր հագնել չկա, այդ մեկը դու հաս-
տատա իմացիր: Իսկ հիմա եկ լսե՛նք միևնչև վերջ:

ՖԱԼՍՏԱՖ

Գինի բեր, Ֆրենսիս՛ս:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ ԵՎ ՓՈՒՆՍ

(Մոտենալով) Իսկո՛ւյն, իսկո՛ւյն, պարոն:

ՖԱԼՍՏԱՖ

Վա՛հ, դու քազավորի ապօրեն որդին չե՞ս: Իսկ դու Փոլինսը չե՞ս՝ նրա
եղբայրը:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ա՛, դու ֆարտեզ մեղավոր մայր ցամաֆների. այս ի՞նչ կյանք ես վա-
րում:

ՖԱԼՍՏԱՖ

Քո վարած կյանքից ավելի լավ: Ես ազնվական եմ. իսկ դու մի հա-
սարակ մատուցող:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Շատ նիշտ է, պարոն, և ես եկել եմ, որ քո ականջներից քաշելով քեզ այստեղից տանեմ:

ՏԻՐՈՒՂԻ

Օ՛, աստված պահապան, պայծառափայլ լորդ: Բարի ե՛ք եկել Լոնդոն: Աստծո օրհնությունը թող քո այդ քաղցրիկ տեսիլից անպակաս լինի: Օ՛, տեր իմ աստված, դուք Վալեսի՞ց ե՛ք գալիս:

ՖԱԼՍՏԱՖ

(Չեռքք Գոլ Տերշիտի վրա հենելով) Երդվում եմ այս դյուրաբար իմ մարմնով և ախտավոր արյունով, ուրախ եմ քեզ տեսնելու, ո՛վ արհալիկան մեծափառության և անառակության խելահեղ խառնուրդ:

ԳՈՂ

Այդ ի՞նչ ասացիր, հաստափոր ապուշ: Ես թե՛լ եմ քեզ վրա:

ՓՈՒՆՍ

Տեր իմ, նա ամեն ինչ կատակի վերածելով և քո բարկության հուրը սանեցնելով՝ ճարակորեն խույս կտա պարտից, եթե դուք նախահարձակ չլինե՛ք:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Ա՛խ դու, կեղտահարալի անսպառ հանգ, ինչպե՛ս հանդգնեցիր այդքան անարգաբար խոսել իմ մասին և այն էլ այս պարկեշտ, առափնի և բարեկիրթ կնոջ ներկայությամբ:

ՏԻՐՈՒՂԻ

Ի՞նչ բարի սիրտ ունե՛ք. և այս կինը, աստված վկա, նիշտ այդպիսին է:

ՖԱԼՍՏԱՖ

Գու իմ ասածը լսեցի՞ր:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Այո, և դու անշուշտ հանաչեցիր ինձ, ինչպես այն օրը, երբ Գեդշիլ փախար իմ մոտից: Գու գիտեիր, որ ես կանգ՞ած եմ թիկունքիդ և այդ ամենը դիտավորյալ էիր ասում, որ իմ համբերությունը խորձես:

ՖԱԼՍՏԱՖ

Ո՛չ, ո՛չ, ո՛չ, նիշտ չես ասում: Ես չլի կարծում, թե դու ականջ ես դնում ինձ:

ԻՇԽԱՆ ՀՆՆՐԻ

Ես քեզ կսափպեմ խոստովանելու, որ դու դիտավորյալ վիրավորեցիր ինձ, որից հետո ես գիտեմ, թե ինչպես վարվել քեզ հետ:

ՏԱԼՍՏԱՑ

Ես քեզ շեմ վիրավորել, Հել, պատվովս եմ երդվում, շեմ վիրավորել:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Չե՞ս վիրավորել. շե՞ս պարսավել ինձ: Մի՞թե դու շասացիր, որ ես լավ հացագործ կարող եմ լինել և աստված գիտե, ուրիշ էլ ինչ:

ՏԱԼՍՏԱՑ

Ես քեզ շեմ վիրավորել, Հել:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Եվ ժխտո՞ւմ ես:

ՏԱԼՍՏԱՑ

Ոչ մի վիրավորանք չեմ հասցրել, Նեդ, հավատացնում եմ: Ազնիվ Նեդ, ոչ մի վիրավորանք: Ես նրան պարսավեցի անպատիվ, շար և անզգամ մարդկանց ներկայությամբ, որ այդ անպատիվ և անզգամ ստոր հոգիները շմտադրվեն սիրահարվել նրան: Այդ բանը անելով՝ ես վարվել եմ իբրև հոգատար քնկեր և հավատարիմ հպատակ և էո հայրը պետք է շնորհակալություն հայտնի ինձ դրա համար: Ո՛չ մի վիրավորանք, Հել, ո՛չ մի այդպիսի բան, Նեդ: Պատվիս վրա եմ երդվում, տղաներ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Եվ դու շե՞ս ամաչում, որ բացառապես երկյուղից և երկչոտությունից վիրավորում ես այս արժանավոր ազնվական կնոջը, որպեսզի հաշտվես մեզ հետ: Մի՞թե այս կինը անպատիվ և անզգամ է: Մի՞թե այս պանդակապետուհին նույնպես անպատիվ և անզգամ կին է: Կամ էո այս մանկավիճիկը: Կամ պարկեշտ Բարդուֆթը, որի եռանդը վառվում փայլատակում է իր էթի ծայրին: Ռատ քեզ, նա՞ էլ դրանցից է:

ՓՈՒՆՍ

Պատասխանի՛ր, փուած կոնդ, պատասխանի՛ր:

ՏԱԼՍՏԱՑ

Բարդուֆթին սատանան է ընտել որպես անջնշելի կնիք: Նրա ելևը սատանայի խոնանոցի այն տաք սալաբարն է, որի վրա նա միայն հարբեցողներ է տապակում: Ինչ վերաբերում է մանկավիճիկին, ապա շար և բարի հրեշտակները դեռևս վիճում են նրա հոգու մասին և, աստված գիթե, թե ով կհաղթի: Դժոխքի ճանապարհն ավելի հավանական է, որովհետև սատանան ուժեղ դիմադրում է:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Իսկ կանա՞յք:

ՖԱԼՍՏԱՆ

Նրանցից մեկը արդեն դժոխումն է և վառվում է նրա կրակների մեջ. խեղճ, թշվառ հոգի: Ի՞նչ վերաբերում է մյուսին, ես նրան փող եմ պարտք և չգիտեմ. նա դրա համար դժախտ կրնկնի, թե ոչ:

ՏԻՐՈՒՂԻ

Չի՛ ընկնի, համոզված եղեք:

ՖԱԼՍՏԱՆ

Ես էլ կարծում եմ, որ շեւ ընկնի: Դու առանց այդ էլ բավականաչափ վնասել ես դրա համար: Բայց ես վրա մի ուրիշ մեղք կա ծանրացած: Քո պանդոկում դու թույլ ես ապիս, որ հանախորդները միս ուտեն մեծ պասին, օրենքին հակառակ, որի համար, կարծում եմ, դու պիտի բարձրաձայն ողբաս:

ՏԻՐՈՒՂԻ

Բոլոր պանդոկներն էլ նույն կերպ են վառվում: Ի՞նչ մեծ բան է մեկ երկու անգամ ոչխարի միս ուտել ամբողջ մեծ պասի ընթացքում:

ԻՇԽԱՆ ՂԵՆՐԻ

Դուք, ազնիվ տիկին:

ԴՈՒ

Ի՞նչ է կամենում ձերդ պայծառափայլությունը:

ՖԱԼՍՏԱՆ

Նրա պայծառափայլությունը ուզում է ասել մի բան, որի դեմ նրա ամբողջ մարմինը բմբոստացած է:

(Խորհում բախում են դուր):

ՏԻՐՈՒՂԻ

Այդ ո՞վ է դուր ուժգնորեն ծեծում:

Ֆրենսիս, տես ով է:

Մտնում է Պետոն:

ԻՇԽԱՆ ՂԵՆՐԻ

Այդ դո՞ւ ես, Պետո: Ի՞նչ լուրեր ունես:

ՊԵՏՈ

Արեան, ձեր հայրը վեստմինստրումն է:

Մոտ բան տանջված հոգնած բանբերներ

Հյուսիսից շտապ այգաեղ ևն ևկել: Իսկ հանապարհին

Ես հանդիպեցի բվով տասներկու գորապետների,

Գլխաբաց, հապնեպ, քրտնօրում կորած,
Որ պանդոկների դռներն են ծեծում
Եվ որոնում են Ջոն Ֆալստաֆին:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Երկի՛նք վկա, ամոք է, Փոինս,
Ես արժանի եմ խիստ կշտամբանի,
Որ իմ քանկագին ժամերն եմ վատնում այսպես ծուլորեն,
Երբ ըմբոստուրյան մերիկն է աննդ կախված մեզ վրա
Այն քիսպերի պես, որ հարավային քամին է բերում,
Եվ անձրևն արդեն մեր անգեն գլխին իջնում է քափով...
Տո՛ւր ինձ իմ սուր և իմ քիկնոցը: Բարի գիշեր, Ֆալստաֆ:

Իշխան Հենրին, Փոինսը, Պետոն և Բարդոլֆը գնում են:

ՅԱԼՍԱՅ

Մեր առաջ ամենահամեղ պատառն է գիշերվա, բայց մենք ստիպված
ենք նանապարհ ընկնել առանց այդ պատառը նաշակելու:

(Խորօրում դռն քակոց)

Դարձյալ բախում են:

Մտնում է Բարդոլֆը:

Հը, ի՛նչ կա, Բարդոլֆ:

ԲԱՐԴՈԼՖ

Պարոն, դուր պետք է արժանիք մեկնեմ, և անմիջապես,
Տասը զորապետ դռանը կանգնած ձեզ են սպասում:

ՅԱԼՍԱՅ

(Մանկլավիկին) Երաժիշտներին վճարի՛ր, մանչուկ: Մնա՛ս բարով,
պանդոկապետուհի: Մնա՛ս բարով, Իոլ: Տեսնո՞ւմ եմ, սիրելիներս, քե
ի՛նչպես են վազում արժանավոր մարդկանց ետևից: Անարժանի զորձն է
հանգիստ մնել, իսկ զորձունյա մարդուն որոնում տանում են: Մնա՛մ
բարով, քանի: Եթե ինձ անմիջապես նակատ չուղարկեն, գնալուց առաջ
ես նորից կտեսնեմ ձեզ:

ԴՈՒ

Չեմ կարող խոսել... սիրտս հիմա կպայքի: Դնա՛ս բարով, քանկա-
գին Ջեկ, լավ հոգ տար վրադ, բան չպատահի:

ՅԱԼՍԱՅ

Մնա՛մ բարով, մնա՛մ բարով:

Ֆալստաֆը և Բարդոլֆը գնում են:

ՏԻՐՈՒՆԻ

Քարի ճանապարհ: Երբ սլսեար ծաղկի նորից, կրանա քանինը տա-
րին, որ Ես քեզ ծանոթ եմ: Այդքան էլ ազնիվ և հավատարիմ մարդ...
բարի՛ ճանապարհ քեզ:

ՔԱՐԳՈՒՑ

(Ներսիս) Տիկին Տերչի՛տ:

ՏԻՐՈՒՆԻ

Ի՞նչ պատահեց:

ՔԱՐԳՈՒՑ

(Ներսիս) Ասացե՛ք տիկին Տերչիտին, որ իմ պարոնի մոտ գա:

ՏԻՐՈՒՆԻ

Օ՛, վազի՛ր, Գոլ, վազի՛ր, վազի՛ր, իմ սնգին Գոլ: (Գոլը հեկեկալով
հալիս է): Քեզ հետ եմ, Գոլ, գալո՛ւ Ես, թե ոչ:

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Վետառիներ: Մի սենյակ պալատում:

Մտնում է քաղալոր Հենրին գիշերանցով՝ մանկավիհի նետ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Գնա՛ և կանչի՛ր երկու կոմսերին — Սուտի և Վորվիկ, —
Քայց մինչև գալը, ասա թող կարդան և հասու լինեն
Այս նամակների բովանդակության: Ճեպի՛ր հապնեպով:

Մանկավիհը գնում է:

Օ՛, թշվառ ու խեղճ իմ հայատակներ,
Քանի հազարը ձեզանից այժմ քնած է հանգիստ:
Օ՛, քո՛ւն, քո՛ղբի՛կ քոն, բնության քննու՛շ, վաղաքո՛ւշ դայակ,
Ասա, ինչո՞ւ եմ քեզ ահաբեկել,
Որ դու չես ուզում իմ քարթիչները այլևս փակել,
Եվ միտքս սուգել մոռացության մեջ:
Օ՛, նի՛նջ, ասա՛ ինձ, ինչո՞ւ սիրահոժար
Դու նախընտրում ես պառկել աղֆատի կոշտ մահնի վրա,
Ծխոտ խրնիքում, նանն ու մոծակի ազգոցին փարված,
Քան անուշաբույր սենյակների մեջ քաղավորների,
Շքեղ, մեծաշուք ամպհովանու տակ,
Որ որ քո՛ղբագույն մեղեդին է միշտ ականջը շոյում:
Օ՛, դու, բուր աստված, ինչո՞ւ ես պառկում
Կեղտոտ մահնի մեջ նվաստ աղխտի՛
Թաղավորական մահնից փախչելով,
Ասես հալածված գիշերապահի խուզարկու աչքից
Կամ համընդհանուր մի ահազանգից,
Ինչո՞ւ ես փակում բարձրաբերձ կայմի

Գագարին նստած նավաստու աշխր,
Որին նայելը գլխասպառույտ ու սարսուտ է ազդում
Եվ նրա խելքը նոնում էս վայրագ
Գոռ ալիֆների օրորոցի մեջ,
Նրբ փոթորիկը ժանտ ալիֆների բաշերից բռնած
Եվ հրեշավոր նրանց կաժերը պինգ գալարելով՝
Շարտում է վեր իբր պատանձ նավի,
Այնպիսի թափով և խլացուցիչ մի ազաղակով,
Որից մեռյալը կարող է զարթնել:
Օ՛, աշտու փուն, ինչպե՞ս կարող էս
Փոթորկից թրջված նավաստու աշխր
Այդպիսի մի նենգ դավադիր ժամին նինչ բերել հանգիստ,
Իսկ անդորրավետ, ամենախաղաղ գիշերածամին,
Իր ամեն պայման և միջոց կա ֆեզ
Իմ պալատի մեջ ներկայանալու,
Հրածարվում էս արֆայի աշխից:
Արգ, ֆնի՛ր խաղաղ, ուսմիկ բախտավոր,
Հանգիստ փուն շունի ոչ մի թագավոր:

Մանում են վարվիկը և Սուտին:

ՎՈՐՎԻԿ

Բարի լույս, արֆա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Լուսացա՞վ արդեն,

ՎՈՐՎԻԿ

Ժամը մեկն անց է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Բարի առավոտ, ուրեմն, կոմսեր,
Իմ նամակները լրիվ կարդացի՞ք:

ՎՈՐՎԻԿ

Կարդացի՞նք, արֆա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

• Կնշանակե դուր հասկացել եմ.
Թե ինչ սուսկալի ախտով է նիվանդ
Մարմինը մեր ողջ թագավորության: Ինչպես անելով
Վասնզք արագ սպառնում է սրտին:

Ժամանակավոր խանգարում է լոկ,
Մի բարի խորհուրդ, մի ֆիչ դեղորայք
Եվ երկրի նախկին առողջությունը կվերականգնի.
Նորթեմբերլենդը կպազի շուտով...

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Օ՛, աստվա՛ծ, աստվա՛ծ, գեթ հնար լիներ
Կարդալու գիրքը անստույգ բախտի,
Տեսնելու ինչպես ժամանակը իր հոլովումի մեջ
Լեռներ է մաշում և մայր ցամաք
Հոգևած կարծրակուտ իր պնդությունից՝
Տարրալուծվում է օվկիանոսի մեջ:
Կամ տեսնել ինչպես ընդարձակվում է գոտին ծովափնյա
Նեպտունի կապույտ զիստերի համար սաստիկ լայնացած:
Ինչպես ամեն բան հարափոփոխ է,
Եվ ինչպես բախար այդ փոփոխության ըմպանակի մեջ
Շարունակ տարբեր խմիչք է լցնում: Օ՛, եթե հանկարծ
Պարմանիներից երջանկագույնը
Կարողանար իր կյանքի ընթացքը տեսնել նախապես,
Ի՛նչ վտանգներ են սպասում իրեն, ողբեր ինչպիսի,
Նա անմիջապես գիրքը կփակեր
Եվ տեղնուտեղը կմեռներ իսկույն:
Տաս տարի չկար, որ Ռիչարդի հետ
Նորթեմբերլենդը բարեկամ էր մեծ,
Միասին էին խնչույքների մեջ, երկու տարի անց
Պատերազմ ծագեց երկուսի միջև: Ուր տարի առաջ
Պերսին իմ հոգու բարեկամն էր մերձ,
Եվ եղբոր նման փութաշան էր իմ գործի նկատմամբ,
Իր սերն ու կյանքը ձեռկերպելով ռոմիս համեմատ:
Հանուն ինձ, նույնիսկ նա անվախորեն
Մարտահրավեր նետեց Ռիչարդին:
Ձեզանից ո՛վ էր ներկա այդ պահին.
(Վորվիկին) Դու, զարմիկ նովել, որքան հիշում եմ, մեր կողքին էիք,
Երբ որ Ռիչարդը Նորթեմբերլենդի կշտամբանքներից
Լցված աչքերով այս մարգարեական խոսքերը ասաց.
«Դու, Նորթեմբերլենդ, այն սանդուղին ես մեծ,
Որով իմ զարմիկ Բոլիներոկը
Պիտի բարձրանա և նստի գահիս»:

Թեպետ այդ պահին, աստծուն է հայտնի,
 Չլի մտածում ես թագի մասին,
 Եվ երե շիներ հոգսը պետության,
 Մեծությունն ու ես հազիվ թե իրար գրկախառնվեինք:—
 «Կգա ժամանակ,— շարունակեց նա,
 Այդ ժամանակը անպայման կգա,
 Երբ գարշ հանցանքը հասունանալով՝
 Կպայթի ներսից ամբողջ շարավը արտավիժելով»:—
 Այդպես ասաց նա,
 Կանխագուժելով մեր այս օրերի վիճակը դժբախտ
 Եվ պառակտումը մեր մաերմության:

ՎՈՐՎԻԿ

Մարդկանց կյանքի մեջ մի ինչ—որ կարգ կա,
 Որ բաց է անում անցած օրերի բնույթը նշգրիտ:
 Ըմբռնելով այն, հնարավոր է որոշ նշտությամբ
 Կանխասել նաև հիմնական երթը գալիք դեպքերի,
 Որ իրենց տկար սկիզբների մեջ
 Իրենց հունդերը թափուն պաճում են ներկայի խորհում:
 Իրերը այսպես թուխս են և ծնունդ միշտ ժամանակի,
 Եվ համաձայն այս անխախտ օրենքի՝
 Արքա Ռիչարդը կարող էր անշուշտ
 Մի հրաշալի կարծիք հղանալ,
 Որ իր հանդեպ կեղծ Նորթեմբերլենդը,
 Երբ այդ շարության հունդը զորանար,
 Կարող էր դառնալ դավանանքային թունավոր մի բույս,
 Իր արմատները ամուր խրելով
 Չէր կրճի վրա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Եվ այդ ամենին ես կաշկանդված եմ
 Դեպքերի անխախտ անհրաժեշտության մը:
 Երե այդպես է, քաջաբար ելնենք
 Այդ անխուսափելի անհրաժեշտի դեմ:
 Ուժգին հեշում է այդ կոչը հիմա:
 Արդեն լսեցի, որ հիսուն հազար զորք են գումարել
 Եպիսկոպոսն ու Նորթեմբերլենդը:

ՎՈՐՎԻԿ

Այդ նիշտ չէ, արքա:

Ինչպես որ ձայնը արձագանք սննի, համբավն էլ այդպես,
Այն քիվը, որից մենք սարսափում ենք՝ կրկնապատկում է:
Խնդրում եմ, արեա, անկողին մտեմ:
Հոգովս եմ երթում, այն զորքը, որ դուք հղել եք արդեն,
Երեստ բավական է ապառաժներին հեշտիվ ննշելու:
Որպեսզի ես ձեզ լրիվ սփռնեմ,
Կհայտնեմ նույնպես մի շատ ստույգ լուր:
Գլենկովերը մեռած է, արեա: Ձեր բարձրությամբ
Այս երկու շարքը հիվանդ էր, տեր իմ:
Արթուն մնայր անպատեհ ժամին վաանգավոր է:
Խնդրում եմ՝ լնեմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ես կհետևեմ ձեր լավ խորհրդին:
Գեր վերջ դնեինք այս կոնվենտին ֆաղափացիական,
Ապա մտնեինք հանգիստ գերեզման:

Գնում եմ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Գլուտերշիր: Բազ հաշտարար դատավոր Շելլոյի տան առաջ:

Մանուկ եմ Շելլոն և Սայլենը, Բորբոսը, Սովերը, Գորտուկը,
Աննաբալդը, Յիկը, իսկ Ետեից՝ ծառաները:

ՇԵՂՈ

Խնդրեմ համեցե՛ք, խնդրեմ համեցե՛ք, խնդրեմ համեցե՛ք, պարոն:
Տվե՛ք ինձ ձեր ձեռքը, պարոն: Տվե՛ք ինձ ձեր ձեռքը, պարոն: Խաշը վկա,
դուք առաջին ծիծեռնակներն եք: Իսկ դուք ինչպե՛ս եք, իմ բարի զարմիկ
Սայլենս:

ՍԱՅԼԵՆՍ

Բարի լույս, իմ պատվական զարմիկ Շելլո:

ՇԵՂՈ

Իսկ ինչպե՛ս է իմ զարմուհին, ձեր պատվական անկողնակիցը: Իսկ
ձեր և իմ գեղեցկուհի դուստրը ինչպե՛ս է. իմ սանունի Ելենը:

ՍԱՅԼԵՆՍ

Ավա՛ղ, հա ավելի շատ սե սարչակի է նման, քան գեղեցկուհու, զար-
միկ Շելլո:

ՇԵՂՈ

Իսկ իմ զարմիկ Վիլյամը, թույլ տվե՛ք ասել, կարծեմ դարձել է հիս-
նալի ուսանող: Նա դեռ Օֆսֆորդումն է, այնպես չէ՞:

ՍԱՅՆԵՍ

Այո, պարոն և իմ խնամքի տակ է:

ՇԵՂՈ

13 Նրան հարկավոր է մտնել նաև իրավաբանական դպրոց: Ես ժամա-
նակին սովորել եմ Կլիմենտի ֆոլեջում: Այնտեղ մինչև այսօր երեկ, դեռ
հիշում եմ խենթ ու խելառ Շելլոյին:

ՍԱՅՆԵՍ

Զեզ այդ ժամանակ անվանում էին «աշխույժ Շելլո»:

ՇԵՂՈ

Պատարա՛գը վկա, ինչ մականունն ասես չէին տալիս ինձ: Ի՛նչպիսի
չարաննիություններ չէի սարժում ես և այն էլ ի՛նչպիսի նարսար հնարժող
ու նվիրվածությամբ: Այնտեղ ինձ հետ սովորում էին և՛ փոֆրիկ Ջոն
Քոյտը Ստեֆորդշիրից, և՛ սե Ջորջ Բառնետը, և՛ Ֆրենսիս Փիֆոնը և՛
21 Վիլ Սկվիլը Կոասոլից: Բոլոր ֆոլեջները ման գայիր՝ չէիր գանի գլխից
ձեռք ֆաշած այսպիսի չորս մարդ: Կարող եմ ձեզ ասել, որ մենք գիտեինք
անստակ կանանց տեղերը և նրանցից լավագույնները միշտ մեր տրա-
24 մադրության տակ էին: Զեկ Ֆալստաֆը, որ այժմ պարոն Ջոն է դար-
ձել, այն ժամանակ մի փոֆրիկ տղա էր և ծառայում էր իբրև մանկա-
25 վիկ նորֆոլկի դուս Թոմաս Մաուրոու մոտ:

ՍԱՅՆԵՍ

Չեր խոսքը, զարմիկ, այն պարոն Ջոնի մասին է, որ եկել է այստեղ
գինվորեն՝ հավաքագրելու:

ՇԵՂՈ

Այո, ես ի նկատի ունեմ այդ պարոն Ջոնին. իմ խոսքը հենց նրա մա-
30 սին է: Հիշում եմ. թե ինչպես նա դպրոցի դարպասի առաջ Սկոգանի
գլուխը կտարեց, երբ շատ փոֆրիկ էր, հասակը հազիվ այսֆան: Այդ միև-
նույն օրը, Գրեկի ֆոլեջի Լակի մասում ևս կովեցի մրգավաճառ ոմն Մամ-
սոն Մաոֆֆիշի հետ: Օ՛, Հիսուս Քրիստոս, ի՛նչ խենթ ու խելառ, ուրախ
օրեր էին: Եվ ի՛նչ ցավալի է մտածել, որ իմ այդ հին բնկերներից շա-
տերը արդեն մեռած են:

ՍԱՅՆԵՍ

Մենք բոլորս էլ մեռնելու ենք, զարմիկ:

ՇԵՂՈ

38 Հասկանալի է, հասկանալի է, բոլորս էլ մեռնելու ենք, անպայման
զնալու ենք այս աշխարհից: Մահը, ինչպես սաղմոսերգուն է ասել,
վերջին սահմանն է բոլորի: Բոլորը մեռնելու են: Հեռաբեբիք է, քե ի՞նչ
արժե մի գույգ լավ լծկան արջառը Ստեմֆորդի տոնավանառում:

ՍԱՅԼԵՆՍ

Ճիշտն ասած, չգիտեմ, զարմիկ, ես այնտեղ չեմ եղել:

ՇԵՂՈ

Մահը ստույգ է: Իսկ ձեր բազաֆի ծերունի Գարլը դեռ ո՞ղջ է:

ՍԱՅԼԵՆՍ

Մեռած է, պարոն:

ՇԵՂՈ

45 Օ՛, տեր իմ Հիսուս, մի՛թե մեռած է: Նա հրաշալի նեռածից էր և մե-
ռա՞վ: Աննման նեռածից էր: Զոն Գոհար՝ նրան շատ էր սիրում և խո-
շոր գումարներ էր գրավ դնում նրա համար: Եվ մեռա՞վ: Նշանակեալին
հարվածում էր երկու հաբյուր քառասուն քայլից, իսկ քեթե նեար՝ երկու
հաբյուր յոթանասուն: Նրան հայելիս մարդու հոգին փառավորվում էր:—
Իսկ ոչխարն ի՞նչ արժև:

ՍԱՅԼԵՆՍ

Նայած ապրանքին: Տասը լավ ոչխարի համար շուրս հաբյուր շիլլինգից
սլակաս չեք վճարի:

ՇԵՂՈ

Եվ ծերունի Գարլը մեռա՞վ:

ՍԱՅԼԵՆՍ

Տեսե՛ք Զոն Ֆալստաֆի գինվորներից Երկուսը այստեղ են գալիս կար-
ծեմ:

Մտնում է Թարգոլթը մի գինվորի հետ:

ԲԱՐԳՈՒՑ

Բարի լույս, պատվական պարոններ: Խնդրում եմ ասե՛ք, քե ով է ձե-
զանից դատավոր Շելլոն:

ՇԵՂՈ

Ես Ռոբերտ Շելլոն եմ, պարոն, համեստ ստորադաս գինակիր աս-
պետը այս կոմսության և հաշտարար դատավորներից մեկը քաղավորի:
Ինչո՞վ կարող եմ ձեզ ծառայել:

ՔԱՐԳՈՒՅ

Իմ գորապետը, պարոն, իր ողջույններն է հղում ձեզ, իմ գորապետ պարոն Զոն Ֆալստաֆը, որ մի երեկի ազնվական է, երկինքը վկա, և փաշակառով մի հրամանատար:

ՇԵՆՈ

Շնորհակալ եմ իր ողջույնի համար, պարոն: Նա հրաշալի սուսերամարտիկ էր, այդպես գիտեմ նրան: Ինչպե՞ս է ապրում պատվական ապետը: Իսկ նրա տիկինը ինչպե՞ս է, կարո՞ղ եմ հարցնել:

ՔԱՐԳՈՒՅ

Նա կին չունի, պարոն: Զինվորին ավելի ձեռնաու է առանց կնոջ ապրել:

ՇԵՆՈ

Ս ԸՄ Բեզ դիպուկ խոսք. զինվորին ձեռնաու է առանց կնոջ ապրել: Իսկապես լավ խոսք է, պարոն: Հրաշալի՞ խոսք է, իրոք այդ այդպես է: Դիպուկ խոսքերը միշտ էլ գնահատվում են և գնահատվել են բոլորի կողմից: «Ձեռնաո՛ւ». այդ խոսքը ծագում է «ձեռնատվություն» բառից: Հրաշալի՞ ոն է:

ՔԱՐԳՈՒՅ

Ներեցեք, պարոն, դուր դա ո՞ն է անվանում: Օրվա լույսը վկա, ես այդպիսի ոն առաջին անգամ եմ լսում: Իսկ ինչ վերաբերում է իմ գործածած բառին, պատրաստ եմ սրով ապացուցել, որ իմ ասածը զինվարական մի պարզ խոսք է: Ինչպես ասեմ, որ հասկանալի լինի. այդ նշանակում է, երբ զինվորի համար ձեռնաու է, որ նա առանց կնոջ իր նար տեսնի... Իսկ դա հրաշալի բան է:

ՇԵՆՈ

Շատ նիշտ է: Տեսեք, պատվական պարոն Զոն Ֆալստաֆն է այստեղ զայիս:

Մտնում է Ֆալստաֆը:

Տվեք ինձ ձեր ձեռքը, ավելի ինձ ձեր պատվական ձեռքը, պարոն, ազնիվ խոսք, ձեր տեսքը հրաշալի է և դուր ձեր տարիքի համեմատությամբ շատ երիտասարդ եք երևում: Բարի Լկաք, հարգաբաժան պարոն Զոն:

ՖԱԼՍՏԱՖ

Ուրախ եմ, որ ձեզ փաշտողը եմ տեսնում, պատվական պարոն Ռոբերտ Շենո: Իսկ դուր, պարոն Շուրկարդն՝ եմ, այնպես չէ՞:

ՇԵՂՈ

Ո՛չ, պարոն Ջոն, սա իմ գարմիկ Սալլենսն է, իմ պաշտոնակից հաշտարար դատավորը:

ՖԱԼՍՏԱՅ

Պատվական պարոն Սալլենս, դուք դեմքով շատ խաղաղ եք և շատ հարմար հաշտարար դատավորի պաշտոնին:

ՍԱՅԼԵՆՍ

Շնորհակալ եմ, պարոն. բարի եկաք:

ՖԱԼՍՏԱՅ

Տո՛ւն, ինչ սաստիկ շոգ է, պարոններ: Ես ձեզ առաջադիմել էի կես դյուսինն նորակոչիկ հավաքագրել ինձ համար: Այդ նորակոչիկները պատրաստ են:

ՇԵՂՈ

Պատրաստ են, պարոն, հավաքագրված են: Չե՛ք բարեհաճի նստել:

ՖԱԼՍՏԱՅ

Թույլ տվե՛ք տեսնել նրանց, խնդրում եմ:

ՇԵՂՈ

Ո՛ւր է ցուցակը: Ո՛ւր է ցուցակը: Ո՛ւր է ցուցակը: Տվե՛ք տեսնեմ, տվե՛ք տեսնեմ, տվե՛ք տեսնեմ: Այդպե՛ս, այդպե՛ս, այդպե՛ս: Այո, պարոն, հիշտ այդպես: Ռելի՞ Բորբո՛ս: Ես նրանց անուն ազգանունը կհարգամ: Նրանք հերթով բող դուրս գան, բող հերթով դուրս գան: Ապա սկսենք: Ո՛ւր է Բորբոսը:

ԲՈՐԲՈՍ

Այստեղ եմ, պարոն:

ՇԵՂՈ

Չե՛ր կարծիքն ի՞նչ է, պարոն Ջոն: Բարեկազմ աղա է. երիտասարդ, ուժեղ և լավ քննանիֆից:

ՖԱԼՍՏԱՅ

Քն անունը Բորբո՛ս է:

ԲՈՐԲՈՍ

Այո, ձերդ բարձրություն:

ՖԱԼՍՏԱՅ

Ուրեմն վաղուց ժամանակն է լեզ մի լավ օգտագործել:

ՇԵՂՈ

Հա՛, հա՛, հա՛. խաշը վկա, հրաշալի խոսք ասացիք: Չէ՛ որ իրերը
անշարժ մնալով՝ ծածկվում են բորբոսով: Ազնիվ խոսք, սմանչելի կօ,
պարոն Ջոն:

ՅԱԼՍԱՅ

(ՇԵՂՈՅԻՆ) Պիտանի է, նշեք անունը:

ՔՈՐՔՈՍ

Առանց այդ էլ ինձ բավական նշել և օգտագործել են, ժամանակն է,
որ դուք ինձ հանգիստ բողնեք: Իմ պառավ մայրը առանց ինձ բոլորու-
վին կկործանվի: Ես մեծակ ինչպե՛ս կարող է վարել շնուխառնությունը և
մյուս բոլոր աշխատանքները: Ես զինվորության համար պիտանի շեմ-
Ուրիշները կան ինձնից ավելի պիտանի, նրանց վերցրեք:

ՅԱԼՍԱՅ

Լոի՛ր, Բորբոս, լոի՛ր: Դու պիտի գնաս: Ժամանակն է Ռեզիշել պա-
տերագմի դաշտ, որ շարժման մեջ լինես:

ՔՈՐՔՈՍ

Պատերագմի դա՛շտ:

ՇԵՂՈ

Լոի՛ր, անպիտան: Երեկ մոռանում ես, բե ուտել ես գտնվում: Քաշ-
վի՛ր մի կողմ: Անցնենք մյուսին, պարոն Ջոն: Ապա տեսնեմ: Միմոն
Սավեր:

ՅԱԼՍԱՅ

Սառանան տանի, այնպես կուզեի սավերում նստել: Ես կարծում եմ՝
նրանից պաղարչուն զինվոր կստացվի:

ՇԵՂՈ

Ո՛ր է Սավերը:

ՍՏՎԵՐ

Այստեղ եմ, պարոն:

ՅԱԼՍԱՅ

Դու ո՛ւմ որդին ես, Սավեր:

ՍՏՎԵՐ

Մորս որդին եմ, պարոն:

ՅԱԼՍՏԱՅ

Քո մօր որդի՛ն: Այդ բավականաչափ ճիշտ է և քո հօր սովերը, չէ որ իգականի որդին արականի սովերն է և ոչ թե նրա պատկերը: Հաճախ այդպես է լինում իսկապես:

ՇԵՂՈ

Հավանո՞ւմ եմ արան, պարոն Ջոն:

ՅԱԼՍՏԱՅ

133 Սովերը ամուսնն է պիտանի: Նշե՛ք անունը, որովհետև մենք բավական քվով սովերներ ունենք մեր ցուցակներում: Փրանք մեզ պետք են:

ՇԵՂՈ

Փամաս Գորտնո՞ւկ:

ՅԱԼՍՏԱՅ

Ռեյնոլդ է:

ԳՈՐՏՆՈՒԿ

Այստեղ եմ, պարոն:

ՅԱԼՍՏԱՅ

Անունդ Գորտնո՞ւկ է:

ԳՈՐՏՆՈՒԿ

Այո՛, պարոն:

ՅԱԼՍՏԱՅ

Դու շատ աննորմի գորտնուկ ես:

ՇԵՂՈ

Նշե՛մ անունը, պարոն Ջոն:

ՅԱԼՍՏԱՅ

Անպետք բան է. նրա հանդերձը կպած է մեջքին և ոչիլը վրայից քափվում է, ամբողջ մարմինը կարծես երկու ձողերի վրա է կանգնած: Բնությունը արդեն նշել է նրան: Մեր նշելն ավելորդ է:

ՇԵՂՈ

Հա՛, հա՛, հա՛. ձեր կամքն է, պարոն, ինչպես ուզում եմ: Ֆրենսիս Անհարա՛կ:

ԱՆՃԱՐԱԿ

Այստեղ եմ, պարոն:

ՅԱԼՍՍԱՅ

Քո արևեստն ի՞նչ է, Աննարակ:

ԱՆՃԱՐԱԿ

Կանացի դերձակ եմ, ձերդ բարձրություն:

ՇԵՂՈ

Նշե՛մ անունը, պարոն:

ՅԱԼՍՍԱՅ

Կարող եմ: Բայց եթե նա տղամարդու դերձակ լիներ, նա ինձը ձեզ կնշեր: Ասա ինձ, Աննարակ, դու կարո՞ղ ես թշնամու շարժերում այն-
ֆան ներդրեր բանալ, որքան բացել ես կանացի պարեզոտներում:

ԱՆՃԱՐԱԿ

Իմ բոլոր ուժերը գործի կդնեմ, պարոն, ավելին պահանջել կարելի չէ:

ՅԱԼՍՍԱՅ

Էսպի պատասխան էր. ապրես դու, կանացի դերձակ: Հրաշալի՜ պա-
տասխան էր: Կեցցե՛ս, անվեհեր Աննարակ: Դու նույնքան փառասիրտ
կլինես, որքան մոլեգնած աղավնին կամ ամենաբարեհոգի սիրազուր
մուկը: Նշե՛մ կանացի դերձակին, պարոն Շեղո, և ամուր նշեցե՛մ:

ԱՆՃԱՐԱԿ

Շատ կուզենայի, որ Գորտնուկին էլ զինվոր վերցնե՛մ:

ՅԱԼՍՍԱՅ

Իսկ ես կուզենայի, որ դու տղամարդու դերձակ լինեիր, որ կարողա-
նայիր կարկատել նրան և պիտանի դարձնել զինվորություն համար: Ես
չեմ կարող հասարակ զինվոր դարձնել մեկին, որ հազարապետ է մի ամ-
բողջ բանակի: Գոհացիր այդքանով, ո՞վ անեղազույն Աննարակ:

ԱՆՃԱՐԱԿ

Գոհացա, պարոն:

ՅԱԼՍՍԱՅ

Շնորհակալ եմ, պատվական Աննարակ: Հեռեցալք ո՞վ է:

ՇԵՂՈ

Պեարոս Յիկը՝ մարգագետնից:

ՅԱԼՍՍԱՅ

Ասյա Յիկին տեսնե՛մ:

ՅԼԻԿ

Այստեղ եմ, պարոն:

ՅԱՆՍՍԱՅ

Աստված վկա, խոստումնալի երիտասարդ է: Նշե՛ք Յլիկին, քանի դեռ չի բառաչել նորից:

ՅԼԻԿ

Օ՛, տեր իմ աստված: Պատվական պարոն գնդապետ:

ՅԱՆՍՍԱՅ

Ինչպե՛ս, դեռ չնշված արդեն բառաչո՞ւմ ես:

ՅԼԻԿ

Օ՛, տեր իմ աստված: Ես հիվանդ մարդ եմ, պարոն:

ՅԱՆՍՍԱՅ

Ի՞նչ հիվանդություն ունես:

ՅԼԻԿ

Անիծյալ մրտաժողով, պարոն, հազում եմ, պարոն: Ես այդ հիվանդությունն ստացա արժուճական ծառայության մեջ, քաղաքության օրը, երբ զանգակատան զանգերն էի հնչեցնում:

ՅԱՆՍՍԱՅ

Բան չկա, քեզ պատերազմ կողարկենք հիվանդանոցի զգեստով: Մըրսածությունը մենք կվանենք քեզնից և ես այնպես կկարգադրեմ, որ քո բնկերները զանգեր հնչեցնեն քեզ համար: Վերջացրի՞նք:

ՇԵՂՈ

150 Ես ձեր պահանջածից երկու մարդ ավելի էի կանչել, քսկ ձեզ հարկավոր էր ընտրել ընդամենը չորս զինվոր: Այժմ խնդրում եմ երթանք ինձ մոտ հաշի:

ՅԱՆՍՍԱՅ

Ձեզ հետ խմել՝ պատրաստ եմ, բայց հաշել չեմ կարող, որովհետև կուշանամ: Ազնիվ խոսք, սրտանց ուրախ եմ ձեզ տեսնելու համար, պարոն Շեղո:

ՇԵՂՈ

Ա՛խ, պարոն Ջոն, հիշո՞ւմ եմ, քե ինչպես մենք մի ամբողջ գիշեր անցկացրինք սուրբ Գևորգի մարգագետնի հողմաղացում:

ՖԱԼՍՏԱՅ

Ավելի լավ է՝ շփշեմք այդ մասին, պատվական պարոն Շելլո, շփշեմք այդ մասին:

ՇԵԼԼՈ

Ի՞նչ զվարճալի գիշեր էր: Իսկ Ջենիին՝ մեր գիշերային բռնակը ապրում է:

ՖԱԼՍՏԱՅ

Ապրում է, պարոն Շելլո:

ՇԵԼԼՈ

Նա երբեք չկարողացավ հաշտ մնալ ինձ հետ:

ՖԱԼՍՏԱՅ

Երբե՛ք, երբե՛ք: Շարունակ ասում էր, որ հանդուրժել չի կարող պարոն Շելլոյին:

ՇԵԼԼՈ

Պատարագը վկա, ես կարողանում էի մինչև հոգու խորքը կատաղեցնել նրան: Հրաշալի պոռնիկ էր անպիտանը: Հետաքրքիր է, առաջվա հմայքը պահում է դեռ:

ՖԱԼՍՏԱՅ

Պառավել է, շատ է պառավել, պարոն Շելլո:

ՇԵԼԼՈ

Հասկանալի է, որ պառավել է: Եվ ինչպես կարող էր չպառավել: Իմ կլիմենտի Բոլեջ մտնելուց առաջ նա արդեն մի որդի ուներ ծերունի Նայրվոկից:

ՍՍՅԻՆՍՍ

Դա ուղիղ հիսունհինգ տարի առաջ էր:

ՇԵԼԼՈ

Այո, գարմիկ Սայլենս, գեր իմանալիք, բե ես և այս ասպետը ինչե՛ր ենք տեսել ժամանակին: Ճիշտ չե՛մ ասում, պարոն Ջոն:

ՖԱԼՍՏԱՅ

Զվարճությամբ տարված լինելով՝ շատ անգամ շփեմք էլ լսում. բե երբ հնչեց կեսգիշերվա զանգը, պարոն Շելլո:

ՇԵԼԼՈ

Չլինեմ լսում, չլինեմ լսում, չլինեմ լսում, աստված վկա, չլինեմ լսում կեսգիշերային զանգը, Ջոն: Մեր լոգունգի էր «Կոնժենեմ, սպանեմ»: Դե,

երթանք ճաշելու, երթանք ճաշելու: Օ՛, տեր իմ աստված, այդ երանելի օրերը ինչ շուտ գնացին:

Ֆալստաֆը, Շելլոն և Սայլենսը գնում են:

ՅԱԻԿ

Պատվական ենթասպա պարոն Բարդոլֆ, խնդրում եմ միջնորդե՛ք, որ
213 ինձ ազատեն ծառայությունից: Վերցրե՛ք այս շորս Հենրին, յուրաքանչյուրը տաս շիլլինգ արժողությամբ ֆրանսիական կրոնով: Այս փողը ձեզ համար է: Ազնիվ խոսք, պարոն, ինձ համար պատերազմ գնալը կախադանից վատ է: Եվ սակայն իմ մասին չէ, որ մտահոգվում եմ, այլ որովհետև սաստիկ անհոժար եմ գնալու և մեծ ցանկություն ունեմ մնալու իմ բնկերների հետ, այլապես չէի խնդրի, որ ինձ ազատե՛ք զինվորությունից. չէ՛ որ իմ մասին չէ, որ այսօր մտահոգ եմ:

ԲԱՐԴՈԼՖ

Դե լավ, դու մի կողմ կանգնիր:

ԲՈՐԲՈՍ

Պատվական ենթասպա գորապետ Բարդոլֆ, ես արդեն ասացի, որ պառավ մայր ունեմ: Ի սեր նրա խնդրում եմ միջնորդե՛ք, որ ինձ ազատեն ծառայությունից: Եթե ես զինվոր գնամ, ա՛վ պետք է վարի մեր տնտեսությունը, իսկ մայրս ծեր է և անկարող աշխատելու: Ես ձեզ Լառասուն շիլլինգ կտամ, պարոն:

ԲԱՐԴՈԼՖ

Դու էլ կանգնիր մի կողմ:

ԱՆՃԱՐՍԿ

Իսկ ես մտահոգվելու առիթ չունեմ, աստված վկա: Մահից չես խուսափի: Աստծուն մենք մի բան ենք պարտք — մեր մահը. իսկ ինչո՞ւ վախենալ մահից: Եթե հսկատազրոզ սահմանված է, որ սպանվելու եմ, ուրեմն՝ կսպանվեմ, իսկ եթե ոչ՝ ուրեմն ողջ կմնամ: Ամեն մարդ պարտավոր է ծառայել իր քաղաքին: Մի բան պարզ է, որ այս տարի մեռնողը մեռնելուց բոլորովին ապահով կլինի բոլոր մյուս տարիներին:


ԲԱՐԴՈԼՖ

Շատ ապրես, լավ ևս դառում:

ԱՆՃԱՐՍԿ


Աստված վկա, ես մահից վախեցողը չեմ:

Մտնում են Ֆալստաֆը, Շելլոն և Սայլենսը:



Ճարտարապետական շինությունների կառուցումը

Մտուրդ յոթնամեծն վկայեցվառդի



ՖԱԼՍՏԱՅ

Ասացե՛ք, պարոն, ո՞ր մարդկանց ե՛ք հանձնելու ինձ:

ՇԵՂՈ

Այս շոբից որի՛ն կամենա՛ք:

ԲԱՐԴՈՒՖ

Մի խոսք պարոն: (Ֆալստաֆին՝ առանձին) Ես ստացա ուրթուն շիլիեզ Բորբոսին և Յիկին գինվորական ծառայությունից ազատելու համար:

ՖԱԼՍՏԱՅ

Կա՛մ, բող աքլալես լինի:

ՇԵՂՈ

Պարոն Ջոն, այս շոբից որո՞նց ե՛ք բնտրելու:

ՖԱԼՍՏԱՅ

Ինձնե՛րդ ընտրե՛ք ինձ համար:

ՇԵՂՈ

Վերցրե՛ք ուրեմն Բորբոսին, Յիկին, Աննարակին և Սավերին:

ՖԱԼՍՏԱՅ

Բորբոսին և Յիկի՞ն: Բորբոս, դու մեա տանք մինչև որ լրիվ անպետ-
խանա ծառայության համար: Իսկ դու, Յիկ, մեծացիր, մինչև որ լրիվ
պիսանի դառնաս: Երկուսդ էլ ինձ պետք չե՛ք:

ՇԵՂՈ

Պարոն Ջոն, պարոն Ջոն, դուք ի վնաս ձեզ ե՛ք գործում: Այս Երկուսը
ամենապավերն են և ևս կուզենայի, որ ձե՛ր հրամանի սակ ընտիր գին-
վորներ լինե՛ին:

ՖԱԼՍՏԱՅ

Պարոն Շեղո, շիլիե՛զ դուք պատրաստվում ե՛ք ինձ սովորեցնել, թե ինչ-
պես են գինվորներ ընտրում: Որ ես նկատի ունենամ գինվորի կազմված-
քը, ուժը, բարեձևությունը, հասակը և անքերի համաչափությունը: Ինձ
համար կարևորը գինվորի ոգին է, պարոն Շեղո: Վերցնե՛նք Գորտնուկին:
Տեսե՛ք թե ի՞նչ ողբալի կերպարանի ունի: Բայց հավատացե՛ք, որ ես
հրացանը կլցնի և կպարպի ավելի քափով, քան թե դարբինն է մտրեով
հարվածում. կշարժվի և Լանդելով կառաջանա ավելի սրնրաց, քան թե
գարեջրի տակառ լծակով իր ուսին դրած տղամարդը: Իսկ այս նիհար,
բարակադեմ մարդը՝ Սավերը, — ահա՛ թե ինչպիսի՛ գինվոր է ինձ հար-
կավոր: Թշնամին երբեք չի կարող նրան հարվածել. այդ միևնույն է.

թե նշան բռնել դանակի շեղքի սուր ծայրին: Իսկ նահանջի դեպքում, գիտե՛ք թե ինչպիսի՛ արագությամբ կվազի այս Աննաբակը՝ կանացի դերձակը: Օ՛, տվե՛ք ինձ աննոռնի նորակոչիկներին, իսկ մեծերին ձեզ պահե՛ք: Բարդուֆ, Գորտնուկի ձեռք մի հրացան տուր:

ԲԱՐԳՈՒՅ

Բռնիր, Գորտնուկ: Ետ դա՛րձ: Քայլով առա՛ջ: Կանգ ա՛ն. այգպե՛ս. այգպե՛ս, այգպե՛ս:

ՏԱՍՍՏԱՅ

Այժմ տեսնենք քո վարժությունը հրացանի հետ. հրացանը ուսին. հրաշալի՛ է: Քայլով առաջ. փառահե՛ղ է: Հրացանը ցած առ. գերագա՛նց էր: Օ՛, տվե՛ք ինձ միշտ փոփրիկ, նիհար, ծերացած, խորշումած, հաղատ հրածիգներ: Երդվում եմ, հոյակապ էր, Գորտնուկ, դու հիանալի կոծիճ ես: Վերցրու այս կես շիլիներ:

ՇԵՂՈ

273 Եվ, այնուամենայնիվ, նա դեռ հմուտ չէ իր գործին, դեռ լավ վարժ-
274 ված չէ: Հիշում եմ, երբ ես դեռ Կլիմենայան քոլեջումն էի և Մայլենդ Գրինում կազմակերպված արթուրյան խաղերում կատարում էի Գա-
գոնեաի՛ դերը, այնտեղ մի արագաշարժ, փոփրահասակ, նարպիկ մարդ
կար — ա՛յ նա հիանալի վարժություններ էր անում հրացանով: Հրա-
ցանը դարձնում էր և այսպես, և այնպես, և այս կողմ, և այն կողմ. ապա
նշան էր բռնում ու թրա՛խ, թրա՛խ, թրա՛խ. ես էր ոստնում և նորից՝
թրա՛խ, թրա՛խ, մեկ այս կողմ, մեկ այն կողմ: Այդպիսի հմուտ նշանա-
ռու ես այնուհետև այլևս չտեսա:

ՏԱՍՍՏԱՅ

Մրանք էլ լավ կիրակեն, պարոն Շեղո, անհոգ եղե՛ք: Աստված ձեզ պահապան, պարոն Սայլենա: Ավելորդ խոսքեր չեմ ուզում վատնել ձեզ հետ: Շնորհակալ եմ ձեզնից: Մինչև մուրճն րնկնելը ես դեռ տասներկու մղոն նանապարհ ունեմ անցնելու: — Բարդուֆ, այս գորակոչիկներին զինվորական համազգեստ տուր:

ՇԵՂՈ

Տեր բնդ ձեզ, պարոն Զոն: Եվ թող աստված ձեր բոլոր գործերին հա-
ջողություն տա: Մեզ էլ խաղաղություն պարզե՛ք, աե՛ր աստված: Վե-
րադարձին մեր տունը այցելե՛ք: Թող մեր վաղեմի ծանոթությունը նո-
րոզվի: Միգուցե ես էլ ձեզ հետ դեպի արևունի՛ք ուղևորվեմ:

ՏԱՍՍՏԱՅ

Վկա՛ է աստված, հանալյ՛նով կուզենայի, որ դուք մեզ հետ լինե՛իք, պարոն Շեղո:

ՇԵՂՈ

Ես իմը ասացի և խոսիս անեն ևս: Տե՛ր քնդ ձեզ:

ՅԱՍՏԵՅ

Հրածե՛շտ ձեզ, ազնիվ պարոններ: (Շեղոն և Սալլենար գնում ենք Բարդուֆ, զինվորներին առաջնորդիր: (Թարգուֆր և նորակոչիկները գնում են): Վերադարձին ևս այդ դատավորներին կխուզեմ: Խորհից գիտեմ, թե ով է այս հաշտարար դատավոր Շեղոն: Տե՛ր իմ աստված, մենք՝ հին մարդիկս, որքան ենթակա ենք ստախոսության ախտին: Այս հայից ընկած դատավորը մի գլուխ շաղակրատում էր միայն իր մոլեգին երիտասարդության և Տորերուլյան փողոցում կատարած արարքների մասին: Նրա ամեն երևի խոսքից մեկը սուտ էր, որք նա ունկնդրին մատուցում էր ավելի մեծ նշատապանությամբ, քան քուրճի հարկն ևն վճարում: Ես նրան հիշում ևմ կլիմենտի բոլեջից. նման էր ընթրիքից ներս պանրի շորուկից շինված մարդուկին: Երբ մերկ էր՝ հառ և հման էր ետկպոչանի բողկի՝ վրան դանակով փանդակված մարդկային ծիծաղելի մի գլուխ: Այնքան նիհար էր, որ որևէ կարհատես կողքով անցնելիս չէր նկատի նրան: Մի իսկական ուրվական էր սովի. սակայն կապկի պես վավաշոտ էր և պոռնիկները նրան անվանում էին մանրագոր: Սիրում էր անվերջ փառ զալ նորաձևության ետևից և պատաված անտուակ կանանց ականջին սուլել սայլապաններից լսած հին երգերը և երգվել, թե ինքն է հորինել այդ ողմանաներն ու սերեհադները: Եվ այդ սուտերավոր խեղկատակն այժմ ասպես է դարձել և Ջոն Գոնտի մասին այնպես համարձակ է խոսում, կարծես թե նա իր երգվյալ եղբայրն է եղել: Իսկ ես պատրաստ եմ երգվել, որ նա կյանքում նրան տեսել է ընդամենը մի անգամ՝ Տիլտ-յարդում, երբ Գոնտը նրա գլուխը կտարեց լորդ-մարշալի շփախմբի մեջ խցկվելու համար: Ես ներկա էի այդտեղ և Ջոն Գոնտին ասացի, թե ինքը դրանով իր սեփական անունը կտարեց, որովհետև կարելի էր նրան իր հագուստով խցկել օձաձկան մորթու մեջ. որ սաստկահնչյուն սրնգի տուփը այդ մարդու համար մի շատ ընդարձակ օրևան կլինեք, նույնիսկ՝ պալատ: Իսկ այժմ նա թե՛ կալվածք ունի և թե՛ խոշոր եղջերավոր անասուններ: Լավ, եթե վերադարձա, ես կամրապնդեմ իմ ծանոթությունը նրա հետ: Ինչ գնով էլ լինի ևս պիտի հաղթանարեմ բոլոր խոչընդոտները և նրան դարձնեմ իմաստնասերի երկու փառ ինչ համար: Եթե ծերացած կոնկանուկը կույ է տալիս մատաղաջ գետաձկան, ասպա, բնության օրենքի համաձայն, ինքս բոլոր հիմքերն ունեմ կույ տալու դատավորին: Փամանակ տվե՛ք և վերջաբանին եկե՛ք ինձ մտա:

Գնում է:

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Յորքշիր: Անտառ Գոյարի:

Մտնում են Յարկի արհեստակցուսը, Մաուրբին, Հեստինգսը և
ուրիշներ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ինչպե՛ս է կոչվում այս անտառը, լորդ:

ՀԵՍՏԻՆԳՍ

Գոյարի անտառ, ձերդ բարձրություն:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Այստեղ կանգ առնենք և հետախույզներ առաջենք շտապ
Հակառակորդի թիվն իմանալու:

ՀԵՍՏԻՆԳՍ

Հետախույզները մեկնել են արդեն

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Հիանալի՛ է:

Իմ բարեկամներ, զենքի և զրապիսներ վեհ նպատակի,

Պետք է հայտնենք ձեզ, որ ստացել եմ

ես մի նոր նամակ նորքեմբերլենդից:

Նամակի տոնը և միտքս պաղ է:

Գրում է այսպես, թե կամենում էր մեզ հարել սիրով,

Սակայն այնպիսի մի պատշաճ զորեով,

Որ իր կոչմանը արժանի լիներ:

Բայց շհաջողվեց նման զորք կազմել:

Եվ նա փաշվել է այժմ Շոտլանդիա,

Մինչև որ բախտը վերստին ժպտա:
Նամակի վերջում նա մեզ հղում է արագին մաղրանք:
Եվ ցանկանում է, որ մեր ձեռնարկը
Հաղթանակ տանի քշեամու վրա,
Նրա դեմ մղած գոռ պատերազմում:

ՄԱՌԻՔՐԻ

Օ՛, ի՛նչ հույսեր կինք կապել նրա հետ,
Բոլոր հույսերն այդ գեանին զարկվելով՝ շարդուփշուր Լղան:

Մտնում է մի սուրհանդակ:

ՀԵՍՏԻՆՔՍ

Ի՛նչ լուր Լս բերել:

ԵՌԻՐՀԱՆԳԱԿ

Սնտառից այս կողմ, դեպի արեմուտք,
Հագիվ մի մղոն այստեղից հեռու,
Ոտխն է գալիս կուռ շարքեր կազմած,
Եվ նրա բռնած տարածությունից ստույգ դասելով՝
Այդ զորքի քիվը ամենափշր Էրեսուն հազար է:

ՄԱՌԻՔՐԻ

Մենք նիշտ այդքան էլ ենթադրում կինք:
Արդ, մենք էլ շարժվենք և բախվենք նրանց ուղղադաշտի մեջ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Այդ ասպետն ո՛վ է գենք ու գրահով:

ՄԱՌԻՔՐԻ

Քե չեմ սխալվում՝ լորդ Վեսամոպենդն է:

Մտնում է Վեսամոպենդը:

ՎԵՍՏՄՈՌԻՆԵԳ

Քաջատողջուրյուն և բարի ողջո՛ւյն մեր զորասպետից,
Լանկաստերի դուստ մեծ իշխան Զանից:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Բարբառեք խաղաղ, լորդ Վեսամոպենդ,
Ձեր այստեղ գալու շարժառիթն ի՛նչ է:

Խոսքիս բուն նյութը

Որդ, ձեզ եմ աղբում ևս տառնձնապես.
 Ապստամբությունը, երե խնկական իր պատկերով գար,
 Նվաստ, փանափի իր ամբոխներով,
 Որի գլուխը կանգնած են հանդուգն Երիտասարդներ,
 Որին պաշտպան է տականք վարնոց,
 Որին քիկունից Բաջալերում են գոնն, մանուկ, աղբատ,
 Եւ ձեզ ստում եմ.— Երե նզովյալ ըմբոստությունը
 Իր այս բնածին միակ նշմարիտ կերպարանով գար,
 Դուր, հարգարժան հայր, դուր, ազնիվ լորդեր,
 Չեր անբիծ պատվով չէիք պանունի
 Նվաստ արչունուշտ ապստամբության կազմը գարշելի:
 Դուր, Եպիսկոպոս, որի արուր
 Քաղաքացիական խաղաղությամբ է լույս ամուր կանգնած,
 Որի մորուփն Բավել է նրա արժարե ձեռքը,
 Որի մտերի խնամակալը խաղաղությունն է,
 Որի զգեստը իր ներմակությամբ
 Անմեղություն է խորհրդանշում
 Եվ խաղաղության աղավնին է հեզ և ոգին օրհնյալ,
 Ինչո՞ւ համար եք դուր խաղաղության պերնաբան լեզվից
 Այդքան վայրարար շուռ գալիս դեպի
 Պատերազմի բիրտ, մոլեգին լեզուն,
 Չեր սուրբ գրքերը դարձնելով շիրիմ, բանափր՝ արյուն,
 Գրիչը՝ նիզակ և աստվածային ձեր վսեմ լեզուն՝
 Բարձրաքինդ շեփոր և պատերազմի անեղագոչ փող:

ԱՐՔԵՊԻՍԿՈՍ

Ինչո՞ւ համար եմ ես այդպես վարվում. հարցը այդպես է:
 Անա՛ իմ հակիրճ պատասխանը ձեզ, բոլորս հիվանդ ենք:
 Մեր զեխությունն ու պագշուտ ժամերը
 Մեզ հասցրել են մի կիզող տենդի,
 Եվ պե՛տ է մեզնից արյուն բաց բողնել: Մեր Թիչարդ արեան
 Այդ ախաից մեռավ, ծանր վարակված:
 Բայց, գերպատվական իշխան Վեստմոուլենդ,
 Այստեղ չեմ եկել ես իբրև բժիշկ,
 Ոչ էլ մտել եմ շարքերը գորաց
 Իբրև քշնամի խաղաղության դեմ:
 Լույս առժամանակ ես ընդունել եմ անեղ ուղամի տեսք,

Որ ժուժկալությամբ բուժեմ իմ հոգին,
 Երջանկությունից սաստիկ հափրացած,
 Արյունս մաքրեմ խափանումի դեմ,
 Որն սկսել է մակարդվել արդեն: Միտքս պարզ դարձնեմ.
 Կշեռփի դրած հավասարապես կշռել ևմ արդար
 Զենփի շարիքը և այն շարիքը, որ հանդուրժում ենք.
 Մեր տառապանքը զենփի նժարից շատ ծանր եղավ:
 Մենք լավ տեսնում ենք, թե դեպի ուր է ժամանակն հոսում:
 Դեպքերի անհարթ, խորդուրորդ վազքը
 Մեզ անդորր կյանքի վիճակից պոկեց:
 Երբ ժամը հասնի, մենք ամփոփագիր կներկայացնենք,
 Թվելով մեկ-մեկ մեր կրած բոլոր տառապանքները:
 Վաղուց էինք ուզում ներկայացնել այն,
 Բայց մուսի շունեցանք քաղաքի մոտ:
 Ո՞վ արգելեց մեզ արժային տեսնել
 Եվ նրան քվել մեր տանջանքները,
 Հենց նույն այն մարդիկ, որ մեզ առավել վիշտ պատճառեցին:
 Եվ վտանգները նոր անհետացած ժամանակների,
 Որոնց հետքերը արյամբ դրոշմված՝
 Գեռ երևում են մեր երկրի վրա, և բազում անցներ,
 Որ ամեն ռուպե ցնցում են ներկան,—
 Հարկադրեցին մեզ զենփի դիմելու, որ շատ խորք է մեզ,
 Ոչ թե փշրելու խաղաղությունը,
 Կամ թեկուզ մի ճյուղ պոկել նրանից,
 Եկլ հաստատելու այս երկրի վրա
 Իրական հանգիստ և խաղաղություն:

ՎԵՍՏՄՈՐԱՆՆԻ

Ի՞նչ բողոքել եմ և նա մեռե՞լ է. այդ ե՞րբ է եղել:
 Ինչո՞վ է արքան ձեզ վիրավորել:
 Այդ ո՞ր իշխանն է նրա սադրանքով խոժոռ հայել ձեզ,
 Որ կեղծ, ապուրեն ապստամբության արյունոտ բուղբը
 Ձեր ասավածային դրոշմով կնքեք,
 Եվ արհավիրքի մուլեզին սուրը նվիրագործեք:

ԱՐՔԱԳԻՍԿՈՊՈՍ

Գևաորյունը թեև եղբայր է՝ բոլորիս,
 Բայց դաժանորեն երբորս պատժեց,
 Եվ ես իր հանդեպ դիս ունեմ հատուկ:

ՎԵՍՏՄՈՌԱԵՆՔ

Վրիժառուրջան հարկ չկա դիմել,
Եվ այդ միջոցը. որ քան էլ արդար, անպատշաճ է ձեզ:

ՄԱՌԻՔՐԻ

Այդ նրա մասին, իսկ մեզ պատշաճ չէ: Մենք, որ զգում ենք
Անցած օրերի հարվածները բիրտ,
Եվ հանդուրժում ենք վայրագությունը ներկա օրերի
Ծանր, անարդար մի բազուկ սեղմած
Մեր պատվի վրա:

ՎԵՍՏՄՈՌԱԵՆՔ

Պատվական լորդ իմ,
Խորամուտ եղեք ժամանակի մեջ և կհամոզվեմ,
Որ մեղավորը ոչ թե արքան է, այլ ժամանակը,
Ձեր գրկանքների պատճառը նա է:
Իմ կարծիքն այն է, որ անձնապես ձեզ
Ոչ ժամանակը և ոչ էլ արքան նույնիսկ մագաչափ
Հիմքեր չեն տվել բողոքի համար: Մի՞թե ձեզ լրիվ
Զվերադարձրին այն կալվածքները, որ ձեր հայրն ուներ,
Բարեհիշատակ և առաքինի Նորֆոլկի դուքսը:

ՄԱՌԻՔՐԻ

Իսկ երբևիցե հայրս կորցրե՞լ էր այդ իրավունքը,
Որ ինձ հարկ լինեք ողորմածությամբ
Այդ կալվածքները ետ ստանալու:
Եվ արքան, որ իմ հորը սիրում էր,
Հարկադրված էր կամա-ակամա
Նրան բռնությամբ ախուրել երկրից:
Եվ երբ իմ հայրն ու Բոլիներոկը քամբերին ելած
Շարժվեցին առաջ՝ զիլ խթանելով իրենց ձիերը,
Ձեռներին տեգեր՝ և փեղույրները երեսին քաշած,
Որոնց պողպատե նեղների միջով
Նրանց աչքերից կրակ էր ցայաում
Եվ զիլ քնդում էր շեփորը մարտի
Եվ նժույզները խրխնջում էին:— Օ՛, այնժամ. այնժամ.
Երբ Բոլիներոկի փրկության համար ոչ մի հույս չկար.
Թագավորն հանկարծ գավազանը նետեց:
Չիմացավ արքան, որ դրանից էր իր կյանքը կախված,
Անզգույշ նետած այդ գավազանից:

Որ այդ վայրկյանից նրա կյանքն ընկավ,
Եվ կյանքը բոլոր այն թշվառների,
Որոնցից ոմանք մահ գտան սրով,
Ոմանք զոհ դարձան մատնագրերին
Քոլիմերոկի դաժան օտերում:

ՎԵՍՏՄՈՌՈՒԵՆԵՐ

Գուր, լորդ Մաուրրի, շիրք եք խոսում.
144 Այդ տարիներին Հերֆորդի կոմսը
Հայտնի ազգմիկ էր Անգլիայի մեջ:
Ո՛վ է իմանում, թե արդյո՞ք բախտը ո՞ւմ պիտի ժպտար,
Եթե ձեր հայրը հաղթեր այդ մարտում.
Նրա փառքն Լեբեք Քոլենորից շէր գա:
Զէ՛ որ միաձայն ամբողջ Լեկիրը պարսավեց նրան,
Իսկ բոլորն իրենց ազոբքն ու սերը
Վերստաֆեցին Հերֆորդի դեսին,
Որին ժողովուրդը սրբացրեց նույնիսկ,
Օրհնեց և դասեց քաղաքներից վեր:
Բայց ես շեղվեցի իմ նպատակից:
Ինձ արհայական մեր առաջնորդն է այստեղ ուղարկել,
Որ իմանամ, թե ինչից էք դժգոհ. հայտնելու նույնպես.
Որ նա խոնարհ է ձեզ բնդունելու,
Եվ եթե գտավ, որ ձեր պահանջը իրավացի է,
Պատրաստ է իսկույն կենսագործելու,
Հարթելով բոլոր խոչընդոտները,
Որ կարող էին ձեր մեջ հարուցել այդքան թշնամանք:

ՄԱՌԻՔՐԻ

Նա ստիպված է մեզ բանակցելու առաջարկ անել,
Եվ դա բխում է խորամանկ հաշվից և ոչ թե սիրուց:

ՎԵՍՏՄՈՌՈՒԵՆԵՐ

Գուր մեծակարծ էք ձեր մասին, ով լորդ,
Այդ առաջարկը գուրի արդյունք է, ոչ թե Երկյուտի:
Տեսե՛ք, ձեր առաջ մեր զորքն է կանգնած, նա շատ հեռու չէ:
Պատվոգր էք երզվում, հուսալի զորք է
Եվ փարատում է ամենայն կասկած Երկյուտի մասին:
Մեր շարժելի մեջ փաղուն անուններ ավելի շատ կան,
Մեր ազգմիկները աննման կռվող նակատամարտում,
Մեր զենքը հզար, մեր դասը արդար,

Իսկ դա պատնաւ է, որ մենք քաջ լինենք:
Մի ասեմք, որ մեր այդ առաջարկը հարկադրական է:

ՄԱՌԻՐԻ

Քանակցել՝ երբեք, եւ դէմ եմ դրան:

ՎԵՍՏՄՈՒԵՆԴ

Կնշանակէ դուք ամաշում եք ձեր արարմունքից,
Նեխած մարմինը չի սիրում տոկալ ձեռքի մեծեցում:

ՀԵՍՏԻԿՍ

Իշխան Զոնն արդյոք լիազորված է
Քանակցել մեզ հետ արքայի կողմից
Եվ մեր հաշտության վեճին ընդունել:

ՎԵՍՏՄՈՒԵՆԴ

Զորապետը, լորդ, լիազոր է նաև,
Մեկը մյուսից անջատելի չէ: Անիմաստ հարց է:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Այդ դեպքում, միլորդ, վերցրեք այս թուղթը,
Այնտեղ շատ ամփոփ շարադրված են մեր պահանջները:
Մեր կողմյաններին՝ այստեղ և այլուր,—
Որ ընդգրկված են ընթացողության մեջ,— թող ներում արվի,
Քոլորն օրենքով թող արդարացվեն:
Թող քաղաքները ստորագրի,
Որ համաձայն է մեր պահանջները կենսագործելու,
Եվ մենք վերստին խոնարհ եւ կերթանք՝
Քաջվելով անեղ մեր ափերի մեջ,
Խաղաղությունը կովան դարձնելով մեր հզորության:

ՎԵՍՏՄՈՒԵՆԴ

Ես ձեր այս թուղթը իշխանիս կտամ: Այժմ, պարոններ,
Եկեք մեր գորաց աշխարհի առաջ հանդիպենք իրար.
Գուցէ հաջողվի, կամքն ատժուն է,
Որ խաղաղությամբ գործը ավարտենք: Թե չհաջողվեց՝
Թող մեր սերը մեր վեճը հարթեն
Ուղղադատաբար մեջ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Մենք համաձայն ենք:

Վեստմոնսթեր գնում է:

ՄԱՌԻՐՐԻ

Ինձ մի գաղտնի ձայն ներհուստ ասում է,
Որ այդ դաշինքը երբեք չի կարող հաստատուն լինել:

ՀԵՍՏԻՆԳՍ

Ձեր վախն իգուր է: Երե հաշոդվի հաշտություն կնկել
Մեր առաջարկած այդ պայմաններով,
Այդքան բնդարձակ և հիմնավորված,
Այդ հաշտությունը ապստամբի պես ամուր կլինի:

ՄԱՌԻՐՐԻ

Մեր վարկը, սակայն, այն աստիճանի ընկած կլինի,
Որ ամեն չնչին, փուշ, շինծու առիթ,
Ամեն մի անմիա տարադեպ պատճառ
Պետությունը միշտ հիշեցնելու է
Մեր այս մոլեգին ընդվզման մասին:
Եվ եթե նույնիսկ նվիրվածությամբ
Մեր կյանքը զոհենք ի սեր արհայի,
Մեզ պիտի էրենն այնպիսի դաժան մի փորձիկով,
Որ ցորենը հարդից բերք դառնա
Եվ դժվար լինի շարն ու բարին ջոկել:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Օ՛, ո՛չ, ո՛չ, միլոդ: Նկատի առեմ,
Որ թագավորը հեզնել է այդ բիրա մաքրագործումից:
Նա համոզվել է, որ մի ոտիս ոչնչացնելով
Իր դեմ հանում է երկու մեծ ոտիս զոհվածի տոնմից,
Ուստի ուզում է հուշատախտակը մաքրել անցյալից,
Հիշողությունից անդարձ վտարել շարախոսներին,
Որ շարձագանգվի իր մեջ ոչ մի հուշ
Կապված անցյալի ձախորդության հետ, քանզի քաջ գիտե,
Որ անկարող է երկրի սրտը արժատից պոկել,
Ինչպես կամենա: Պատճառը վախն է:
Իր ոտիսները ներարմատներով
Անպես հյուսված են բարեկամներին,
Որ մի ոտիսի հիմնից պոկելիս
Մի բարեկամի խախտում է տեղից:
Երկիրը հման է ամբարիշտ կնոջ,
Որ տղամարդուն խիստ զայրացնելով՝ հասցնում է կովի,

Նրբ նրա վրա հարված է գալիս,
Նա Լրեխային իսկույն դեմ է տալիս,
Որ իրեն պատժող բազուկը զսայի:

ՀԵՍՏԻՆԴՍ

Նվա առավել. արքան իր պատժիչ
Բոլոր զենքերը մաշել է արդեն
Անարգողների վրա իր հախկին,
Պիսավար զենքը՝ իր գանձարանը դատարկ է այժմ:
Ճանկե՛ք զրկված մի առյուծ է նա,
Որ սպառնում է. անգոր է սակայն
Պատարոտելու:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Դուր հշմարիտ է:

Ուտի, լորդ-մարշալ հավատացե՛ք ինձ,
Նրե մենք հաշտվենք՝ խաղաղությունը
Կտրած ոսկրի պես արագ անելով
Ավելի ամուր կղաղնա հետո:

ՄԱՌԻՔՐԻ

Թող այդպես լինի:

Լորդ Վեսամոուլենդը, աեսե՛ք. ես եկավ:

Մտնում է Վեսամոուլենդը:

ՎԵՍՄՈՒԼԵՆԴ

Իշխանը մոտ է: Ձերդ բարձրություն,
Խնդրեմ համեցե՛ք հանդիպել նրան
Մեր և ձեր զորքի կես նախապահին:

ՄԱՌԻՔՐԻ

Հանձն ասածն Լորան, սրբազան:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Իշխանին պատշաճ ողջույն մատուցե՛ք: Մենք հիմա կգանք:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Անտառի մյուս մասը:

Մտնում են՝ մի կողմից՝ Մաուրբին, արևելյակողմուք, Հեաթնգսք և ուրիշներ: Մյուս կողմից՝ Լանկաստերի իշխան Ջոնը, Վեստմոռլենդը, սպանեւ և շխտամբբ:

ԻՆԵԱՆ ՋՈՆ

Ողջույն Մաուրբի, բարի եկար, զարմիկ:
Բարի օր, ազնիվ արևելյակողմու:
Ձեզ էլ, լորդ Հեաթնգս, — և ձեզ ամենհիղ:
Հարգարժան իմ Ֆորս, ձեզ շատ ավելի պատշան էւ անշուշտ
Ջանգերի կանչով ձեւ շուրջ ժողոված հոտի հետ լինել,
Նրան սուրբ գրեից քարոզ կարդալիս,
Քան թե ձեզ տեսնել սպասագիտված
Ապստամբների շփոթ ամբոխին
Թմբկի քնդյունով ոգեկոչելիս դեպի ռազմադաշտ,
Քարոզը սրի և կյանք մահի այլափոխելով:
Նա, որ հասած է արևայի սրտում,
Անում, փքրում է նրա բարության արեգակի տակ,
Ա՛խ, որքան շարիֆ կարող է նյութել այդպիսի մարդը,
Իւ թագավորի վաստակությունը անիրավելիս
Այդպիսի հզոր հովանու ներքո: Այդպես էլ դուք էք,
Արևելյակողմու: Ո՛վ լսած չկա,
Թե դուք ինչպիսի նվիրվածությամբ
Խորամուխ կի՛ք աստծո գրեթեին:
Մեր միջնորդն էլիք դուք աստվածային խորհրդարանում,
Հոնտորք մեր և ձայնն աստծո,
Խեղ սուրհանդակն ու համբավարները
Երկնային անբիծ սրբությունների
Եվ մեր բնդունայն աշխարհի միջև: Ո՛վ կհավատար,
Ու դուք, օգավելով բարի երկնի սեր ու շնորհից,
Ձեր վեհ պաշտոնը կշարագործեք
Ինչպես վարվում է կեղծ սիրեցյալը
Իւ թագավորի բարի անունը օգտագործելով
Նվաստ գործի մեջ: Աստվածապաշտի կեղծ դիմակի հազած,
Դուք զինել էք մեր հպատակներին
Աստծո փոխանորդ իմ արեա հոր դեմ,

Եվ ժողովել եմ մի խուժան ամբոխ Երկփ, Երկնքի
Խաղաղությունը սասաիկ վրդոված:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Լանկաստեռ իշխան,

Ես գեներ եմ վերցրել ձեր յագաժոր հոր խաղաղության դեմ:
Ինչպես ասել եմ լուր՝ Վեսամոուլենդին,
ժամանակն է վատ, նա խառն է, ջփոթ,
Նա ստիպեց մեզ համախմբվելու
Եվ այս սուկալի գեներն հագնելու,
Որ պաշտպանենք մեզ: Ես ձեզ մի ամփոփ ցուցակ հղեցի
Մեր գրկաններին, ցավերի մասին,
Բայց արհունիք արհամարհանաժով մերժեց բնդունել:
Եվ դրանից էլ այս Հիդրան ծնվեց, այս պատերազմը,
Որի ահարկու աշխերը բնով կարող էիք փակել,
Մեր արդարացի և օրինական
Ցանկությունները բավարարելով:
Մեր հեզությունը այդժամ բուժվելով այս խենթությունից,
Մեկաշո՛ք կիջնի մեծափառության սափերի սուաշ:

ՄԱՌԵՐԻ

Մերժվելու դեպքում պատրաստ եմ կռվել
Մինչև վերջին մարդ:

ՀԵՍՏԻՆՅՍ

Իսկ եթե պարտվենք՝

Քաշնակիցները կգան մեր գործը շարունակելու,
Նեանք պարտվեցին՝ փոխարինելու կգան ուրիշներ:
Եվ շարիքն անվերջ շարիք ծնելով
Այս գծաությունը պիտի փոխանցի սերնդե սերունդ,
Քանի Անգլիան գոյություն ունի:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Քուր կույր եմ, Հեստինգս, սասաիկ կարճատես
Քալիք դարերի անհայտ հատակը տեսնելու համար:

ՎԵՍՏՄՈՒԼԵՆԴ

Պայմանը պարզ է. թե հանո է ձեզ
Ձեր կարծիքն ասե՛ք այդ մասին, միլորդ:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Շատ հանելի է. լրիվ հավան եմ նրանց պայմանին:
Երդվում եմ պատվովն իմ ազգատոհմի,

Որ հայր արքայի նպատակները թյուր են բնկալվել,
նվ ոմանք նրա մերձավորներից արժունիքի մեջ
Խիստ շոտյուրեն շարաշահել են
Նրա անունն ու իշխանությունը:
Ամեն բան շոտով կաղզվի, միլորդ,
Հոգովս եմ երդվում: Սրբ աշխատանքով բավարարված եմ,
Արձակեմ զորքը, թող գնան իրենց կոմսությունները:
Մենք էլ կարձակենք: Զորքերի մեջտեղ, ի տես ամենքի,
Կկեմ միասին խմենք և գրկվենք,
Որ զինվորները տուն վերադարձին վարձով հավաստեն
Մեր վերանորոգ բարեկամության և սիրո մասին:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ձեր խոսքը, իշխան դարման է վերքիս:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Հաստատ եմ խոսքիս և ձեր ողջության կենացն եմ բնկում.
Արժեպիսկոպոս:

Խմում է:

ՀԵՍՏԻՆԳՍ

(Մի սպայի) Գնա՛, զորապետ և խաղաղություն
Հռչակիր զորքին: Թող զորքին փող տան և տուն արձակեն,
Այդ լուրը նրանց շատ կուրախացնի: Փուլա՛, զորապետ:

Սպան գնում է:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ձեր կենացը, լորդ, ազնիվ վեսամուղենդ:

Խմում է:

ՎԵՍՏՄՈՌԻՆԵՐ

Իսկ սա էլ ձերը: Եթե իմանաք, թե ես որքան շատ
ձիգ ու ջանք դրի այս հաշտությունը գլուխ բերելու՝
Բավականությամբ պիտի խմեիք: Կարծուս եմ շոտով
Պիտի համոզվեմ, որ ձեր նկատմամբ իմ սերն անկեղծ է:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Տարակույս չունեմ:

ՎԵՍՏՄՈՌԻՆԵՐ

Անշափ ուրախ եմ:

Ողջ լինես, զարմիկ, ազնիվ Մաուրի:

Խմում է:

ՄԱՌԻՐԻ

Այդ մաղթանքը նիշա ժամանակին էր,
ես կարծես ինչ-որ ինձ վատ եմ զգում. հանկարծ պատահեց:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Փորձանքից առաջ մարդ միշտ ուրախ է.
Մեծ բախտից առաջ՝ տխրում է հանկարծ:

ՎԵՍՄՈՌԱՆԵՐ

Արդ, զվարք եղեք, վիշտն հանկարծական
Ֆաներն է վաղվա բախտավորության:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Հավատացե՛ք ինձ՝ սիրտս քեքե է:

ՄԱՌԻՐԻ

Իսկ դա շատ վատ է, երբ հավատանք ձեր իսկ կանոնին:

Խորում աղաղակներ:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Խաղաղություն է: Կտ՛ում եք, ինչպես ցնծում է զորքը:

ՄԱՌԻՐԻ

Ի՛նչ հանելի է հաղթանակի մեծ ուրախությունը:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Խաղաղությունը՝ նույն հաղթանակն է,
Որ հաշտեցնում է երկու կողմերը
Առանց կորստի:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Գնացե՛ք, միլորդ,

Մեր զորքին նույնպես ազատ արձակե՛ք:

Վեստմոյլենդը գնում է:

Պատվական միլորդ, հրամայեցե՛ք, որ մեր զորքերը
Այստեղով անցնեն, որ մենք մեր աչքով
Տեսնենք երեկվա մեր ուսիսներին:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Շտապե՛ք, Հեստինգս,

Քանի շեն ցրվել, քող զորքը երթով մեր մոտով անցնի:

Հեստինգսը գնում է:





Վեստմինստերի սրբալուծարանի մեծ դահլիճը

Մահում է Վեսամուլենզը:

Մեր գորհերն ինչո՞ւ տեղից չեն շարժվում:

ՎԵՍՏՄՈՌՈՒԵՆԳ

Չեն շարժվում, իշխան. նրանք ուզում են անձամբ ձեզանից
Հրաման լսել շարժվելու համար:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Նրանք գիտակ են զինվորի պարտիքն:

Մահում է Հեսափնզար:

ՀԵՅՏԻՆԳՍ

Միլորդ, մեր ամբողջ բանակը ցրվեց.
Մեր զինվորները լծից արձակված արջառնների պես
Տրտիճգ են տալիս դեպի արևելք, դեպի արևմուտք,
Հյուսիս և հարավ: Կամ հիշեցնում են աշակերտներին,
Ռեոնցից ոմանք տուն են շտապում, ոմանք՝ իսպաղաշտ:

ՎԵՍՏՄՈՌՈՒԵՆԳ

Այդ բարի լուր էր, որի համար մեզ
Չերբակալում եմ, դավանան Հեսափնզա:
Չեզ նմանապես, արհեստիսկուպոս, ձեզ էլ՝ Մաուրբի,
Նենգ թշնամի եմ երկուսդ էլ գանիս:

ՄԱՌԻՐՐԻ

Այդ ինձնադատը մի՞թե պատվավոր և ազնիվ զործ է:

ՎԵՍՏՄՈՌՈՒԵՆԳ

Իսկ դավադրելը ազնի՞վ է միթե:

ԱՐՔԵՊԵՍԿՈՊՈՍ

Չեք տված խոսքը հավատարմալոյսան
Խախտե՞լ եմ ուզում:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Ես խոսք չեմ տվել,
Խոստացել եմ լոկ ուղղել մի Բանի անիրավալոյսուն
Ըստ ձեր բողոքի: Պատվովս եմ եղվում,
Որ այդ խոստումը ես կիրադործեմ

Մի սրբազնագույն հոգատարությամբ:
Գալով ձեզ՝ կասեմ. դուք, դավադիրներ, պատրաստվե՛ք այժմ
Ձեր ըմբոստության և նենգ գործերի վարձքը ընդունել:
Անմտություն էր մեր դեմ գործ հանել,
Նույնքան անմիտ էր նրանց արձակել:
Զարկե՛ք թմբուկներ, հետապնդեցե՛ք
Ցրված ամբոխին այդ վտարանդի,
Հաղթողն աստված էր այսօրվա մարտի:
Իսկ սրանց տարե՛ք կռնդի մոտ մահվան,
Դեպ կառափնարան:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Անտառի մի ուրիշ մասը:

Կովի շաշ ու շառաշ: Կարճատև մարտեր: Տարբեր կողմերից գալիս են
Ֆալստաֆը և Քոլվիլը:

ՖԱԼՍՏԱՖ

Ինչպե՛ս է ձեր անունը, պարոն: Ասացե՛ք խնդրեմ, ի՞նչ աստիճան
ունե՛ք և որտեղացի՞ ե՛ք:

ՔՈԼՎԻԼ

Ես ասպետ եմ, պարոն: Ի՞նչ անվանում և՛ն Հովտաց Քոլվիլ:

ՖԱԼՍՏԱՖ

Լավ, ուրեմն ձեր անունը Քոլվիլ է, ասպետը ձեր աստիճանն է, իսկ ձեր
բնակավայրը մի հովիտ է: Ձեր Քոլվիլ անունը դարձյալ նույնությամբ
կմնա, բայց ձեր աստիճանը այսուհետև կլինի դավանան, իսկ բնակու-
րյան վայրը՝ մի բանտ՝ բավական խոր անցքերով. այնպես որ դուք առաջ-
վա պես դարձյալ կկոչվե՛ք Հովտաց Քոլվիլ:

ՔՈԼՎԻԼ

Դուք պարոն Զոն Ֆալստաֆը չե՛ք:

ՖԱԼՍՏԱՖ

Ով էլ որ լինեմ, այնուամենայնիվ նրանից վատը չեմ լինի, պարոն:
Համաձայն եմ անձնատո՛ւր լինել, թե՛ ուզում եմ, որ ևս ֆրանեմ ձեզ հա-
մար: Եթե ստիպե՛ք ինձ ֆրանել, իմ ֆրանի՛ս ամեն կարթիլը մի կարթիլ առ-

ցունք դառնալով՝ վայր է գործելու ձեր մանր ողբացող հարագասների աչքերից: Հեռակաբար, սարսափահար նետվեք իմ սուաչ և դողդողալով աղաչեք, որ ձեր կյանքը խնայեմ:

ՔՈՎԻԷ

Ես կարծում եմ, որ դուք պարոն Զոն Ֆալստաֆն եք, ուստի և անձնատուր եմ լինում:

ՅԱԼՍՍԱՅ

Իմ այս փորձ մեջ անքիվ լեզուներ կան, որոնք բան ու գործք բողած՝ ամեն հանդիպողին իմ անունն են գոռում: Եթե ես մի կարգին, էիչ թե շատ սովորական չափսի փոր ունենայի, ես կլինեի Եվրոպայի ամենահարպիկ և արագաշարժ մառդը: Ա՛խ իմ փորը, իմ փորը: Իմ տունն ֆանդողը իմ փորն է: Ահա՛ և մեր գորավարը:

Մտնում են կանկաստերի իշխան Զոնը, Վեստմոլենդը.
Քլանտը և ուրիշներ:

ԻՇԵԱՆ ԶՈՆ

Տապը վերջացավ: Կա՛նգ առ, Վեստմոլենդ, ո՛չ մի ֆայլ սուաչ.
Զորքին ավարտի շեփոր հնչեցրեք:

Վեստմոլենդը գնում է:

Այս Ֆալստաֆն է: Ռ՛ւր էիք կորել ամբողջ ժամանակ.
Ամեն ինչ պրծավ, հո՛ր հայտնվեցիք:
Արևս վկա, ձեր այս խորամանկ խաղերը մի օր
Ձեզ պիտի ֆարշ տան կախաղանի մոտ,
Ձեր ողնաշարը այնտեղ փշրելով:

ՅԱԼՍՍԱՅ

Ցավում եմ, միլորդ, բայց շատ հնարավոր է, որ այդպես էլ լինի: Ռ՛ւմ հայտնի չէ, որ միշտ էլ կախաղանը և կշտամբանքն են եղել արհուրյան վարձատրությունը: Զլինի՛ կարծում եք, թե ես ծիծեռնակ եմ, կամ նեա եմ և կամ հրանոթի գնդակ: Մի՛թե ես, այս համբաշարժ խեղճ ծեռուկս, կարող եմ մտքի արագությամբ սուրալ: Ես փութացել եմ այստեղ՝ ճիգ դնելով հնարավորության ծայրագույն մասնաշափր, հաշմեցրել, հալից զցել եմ ավելի ֆան հարյուր ուրսուն փոստային շի և հասնելով այստեղ, թեպետ ամբողջապես փոշու մեջ կորած, այստեղ նույնպես ցուցաբերեցի հեռուսական բարձրագույն մի ֆաշուրյուն, գերի վերցնելով Հովտաց Զոն Քովիլիին, մի ամենամոլեգին ասպետի և ֆաշասիրտ հակառակորդի: Բայց դա ինձ համար ոչինչ բան էր: Ես ինձ տեսավ թե չէ, անձ-

42 նատուր եղավ, այնպես որ ես էլ այն արծվափիթ հոռմեացու պես ամենայն արդարացիությամբ կարող եմ գաշել «Յկա, տեսա, հաղթեցի»:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Դուք այդ պարտական եմ ավելի շուտ նրա բարեկիրք վարմունքին, քան թե ձեր ֆաշություն:

ՅԱԼՍԱՅ

Զգիտեմ: Մի բան գիտեմ միայն. ահա՛ իմ բռնած գերին և ես նրան հանձնում եմ ձեզ և ձեր ողորմածությանը. խնդրում եմ իմ այս սխրագործությունը գրանցել այսօրվա փառավոր ֆաշագործությունների շարքում, այլապես, ասածով եմ երդվում, ես կհրամայեմ, որ մի հատուկ բալլադ շարադրվի, նակատին իմ նկարը՝ գերի բռնված Քոլվիլը իմ ոտները համբուրելիս: Եթե դուք հարկադրեմ ինձ այդ միջոցին դիմել, ապա հավատացե՛ք ազնվականի խոսքիս, որ դուք բայուրդ իմ կողմին կեռնա՛ք արժարյա ոսկեգօծ մանրադրամների պես, և ինձ կհաջողվի փառքի պայծառ երկրնում ձեզ խավարեցնել, ինչպես լիալուսինն է աստղերին խավարեցնում. որոնք նրա համեմատությամբ թվում են գնդասեղի գլխիկներ: Ուստի հատուցե՛ք ինձ իմ արդար իրավունքը և քող արժանիքը վեր բարձրանա:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Քո արժանիքը բավական ծանր է վեր բարձրանալու համար:

ՅԱԼՍԱՅ

Թող փայլի ուրեմն:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Շատ բանձր է փայլելու համար:

Լ

ՅԱԼՍԱՅ

Թող որն է կերպ իմ օգտին ծառայի, միլորդ, մնացյալը դուք գիտե՛ք. ինչպես ուզում եմ, այնպես էլ կոչեմ:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Քո անունը Քոլվիլ՝ է:

ՔՈԼՎԻԼ

Այո, տե՛ր իմ:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Դու երևելի ապաստամբ Քոլվիլն ես:

ՅԱԼՍԱՅ

Եվ մի երևելի հավատարիմ նպատակի կողմից գերի բռնված:

ՔՈՂՎԻԼ

Այո՛, գերված եմ և պատճառը իմ առաջնորդներն են:
Երե առաջնորդը ինձս լինէի,
Այս հաղթանակը ձեզ վրա, անշուշտ, քանկ պիտի նստեր:

ՅԱԼՍՏԱՅ

Ես չգիտեմ, թե նրանք իրենց ինչքանով վաճառեցին, բայց դու բարձր
գտնվեցիր և ինձ անձնատուր եղար ձրիաբար, որի համար շնորհակալու-
րյուն եմ հայտնում քեզ:

Մտնում է վեամտուկենդը:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Իմ հրամանը կատարվե՞ց, միլորդ:

ՎԵՍՏՄՈՐՈՒՆԵՐ

Այո՛, կատարվեց, գորբը ևս դարձավ,
Մարտն ավարտված է:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Քոլվիլին և իր դաշնակիցներին շտապ հասցնել Յորկ և հասնելուն պես
խսկույն գլխատել:

Տարե՛՛ք նրան, Բլանա, և ճանապարհին պինդ հսկեք վրան:

Բլանար և պահակները գնում են՝ տանելով Քոլվիլին:

Այժմ, պարոններ, արժու՜նք մեկնենք,

Հայրս, լսեցի, ծանր հիվանդ է.

Հաղթության լուրը թող մեզնից առաջ հասնի արժային:

Այդ լուրը, զարմիկ, դուր տարե՛ք նրան, որ մխիթարվի,

Իսկ մենք կշտապենք չավաժոր քայլով:

ՅԱԼՍՏԱՅ

Միլորդ, խնդրում եմ, արտճնեցե՛ք ինձ,

Որ գլուստեյան դիտության միջով նամապարհի քնկնեմ:

Պալատ հասնելիս, ձեր զեկուցման մեջ, խնդրում եմ հատուկ,

Գովաքսանական մի երկու խոսք էլ իմ մասին տակ:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Ողջ լե՛ր, Ֆալստաֆ, իմ աստիճանը ինձ թելադիր է,

Որ ես առավել գնահատեմ քեզ, քան արժանի ես:

Գնում է:

Երանի՛ր քե աշդֆան խելի ունենայիր, աշդ ավելի լավ կլինէր, քան քե քաղֆաւորչունը: Պատվովս եմ երդում, եւ նկատում եմ, որ այս նույն երիտասարդ պաղարչուն մանուկը ինձ չի սիրում: Անկարելի բան է նրա երեսին ծիծաղ առաջացնել: Եվ դա ամեննին էլ զարմանալի չէ: Նա գինի չի խմում: Այս ազնվաբարո անծպիտ բոլոր երիտասարդներն էլ աշդ կողմից անպետք են: Թէքն բմպելիքները և սաստիկ հակումը ձկնեղեն կերակուրների նկատմամբ այնպէս է սառեցնում նրանց արշունը, որ նրանք ընկնում են ամեն տեսակ աղջկա-արքունիքային-արնապակասութեան մեջ՝ գրկվելով արական կարողութունից և երբ ամուսնանում են՝ արտադրում են բացառապէս աղջիկներ: Դրանք մեծ մասամբ հիմար են և վախկոտ: Մեզանից մի քանիսն էլ կարող էին աշդպէս լինել, եթէ իրենց արշունը չգրգռեին ջերմացնող խմիչքներով: Լավ գինին կրկնակի բարեբար ներգործութիւն է անում արշան վրա: Նա նետվում է դեպի գլուխը և ցրում է ուղեղի վրա կուտակված բոլոր հիմար թանձրամած, կոպիտ գոլորշիները, միտքը դարձնում է ընդունակ արագ ըմբռնելու, աշխույժ, հնարագետ և հանդուգն, թէքն, վառվռուն և շարաննի պատկերներով լի, որովք փոխանցվում են լեզվին և ծնունդ տալիս հոյակապ սրամտութեան: Խեղճն պատվական գինու երկրորդ հատկութիւնն այն է, որ նա ջերմացնում է արշունը. չէ՞ որ, եթէ խմիչքը արդեն սառել է և նստվածք տվել, դրանից լեղին գունատվում է, գրեթէ սպիտակում, իսկ դա նշան է փոքրագոյնի և երկշտութեան: Վսեմական գինին ջերմացնում է արշունը և մղում նրան մարմնի բոլոր մասերով: Նա լուսավորում է դեմքը, որն ինչպէս փարոսն աշտարակից՝ զգուշացնում է գինելու մարդու՝ աշդ փոքրիկ թագավորութեան մնացյալ բոլոր ուժերը վտանգի դեմ: Եվ անա կենսական ուժերի գունդը և ներքին փոքրիկ ոգիները համալսմբվում են իրենց գորահրամանատարի՝ սրտի շուրջը, որը մեծապէս խթանված ու հպարտ իր աշդ օգնական գումարտակով, ընդունակ է դառնում ուզածը սխաղործութեան դիմելու: Եվ այս արիւրքան մղիչ ուժը Խեղճի գինին է: Հետևաբար, ռազմական արվեստը ոչինչ բան է առանց գինու, քանզի նա է, որ գործողութեան մեջ է դնում աշդ արվեստը: Իսկ ի՞նչ է իմացութիւնը. ոսկու մի գանձ, որի պահապանը սատանան է: Աշդ գանձը միշտ էլ փակված կմնա. քանի դեռ գինին նրան լույս աշխարհ չի հանել և մղել շրջանառութեան մեջ: Իշխան Հենրին քաջակորով է. պատե՛հ՛որ: Պատե՛հ՛ա՛նը այն է. որ հուրից ժառանգած իր պաղ, սմբած արշունը նա որպէս ամուլ, խոսպան մի հողաշերտ պարստացրեց, ռոզգեց և հարստացրեց եռանդագին կոնծարանութեամբ, գավար գավարի Լուսից իր մեջ պարպելով Խեղճի վսեմական գինին: Ահա՛ քե ինչու է նա աշդֆան կրակոտ

ու ֆաջ: Եթե ես հազար ուղի ունենայի, իմ առաջին մարդասիրական սկզբունքը պիտի լինե՞ր հետևյալ կանոնը սովորեցնել նրանց. խուսափել թեթև ըմպելիքներից և որքան կարելի է՝ շատ ջերմացնող գինի խմել:

Մտնում է Բարդուիֆ:

Հը, ի՞նչ կա, Բարդուիֆ:

ԲԱՐԴՈՒՖ

Զորքը արձակվեց և բոլորը տուն գնացին:

ՅԱԼՍՏԱՅ

Թող գնան: Իսկ ես կուղևորվեմ գլխատերյան կոմսության միջով: Ճանապարհին կայցեղեմ գինակիր ասպետ պարոն Շելլոյին: Ես արդեն նրան մատներիս մեջ տրորելով այնպես եմ փափկացրել, որ շուտով կօգտագործեմ իբրև կնիք: Երթա՛նք:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Զ Ո Ր Ր Ո Ր Դ

Վեստմինտեր: Երուսաղեմյան լեռնակը:

Մտնում են քաղալուր Հենրին, դուխ կարենօր, Գլխուր Հեմֆրին, Վարվիկը և ուրիշներ:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Թե աստծո կամոն հաջողվի վերջ տալ այս խռովության,
Ու արշունով է մեր շեմքը ներկում,
Իհենկ կառաջնորդենք մեր նոր սերնդին դեպի այն դաշտը,
Ուր մեզ վիճակվեց հակատամարտ տալ,
Պատյանից հանած լուկ մեր սրբացած սրերն հավատքի:
Մեր նավատորմը կազմ ու պատրաստ է, մեր զորքը հավաք,
Տեղակալներս ջոկված-ընտրված,
Ամեն բան կարգին բոս մեր փափագի,
Միայն մարմնական ուժերս են պակաս:
Մպասել է պետք, մինչև այս հանդուգն ապստամբները
Դան և խոնարհիլեն մեր օրինական իշխանության տակ:

ՎՈՐՎԻԿ

Մենք չենք կասկածում, որ դուք, տեր արքա, կամոնվեք շուտով,
Եվ կուրախանաք մե՞ծ հաղթանակով:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Արդի Գլուսներ,

Ռ'ւր է իշխանը՝ եղբայրդ ավագ:

ԳԼՈՍՏԵՐ

Կարծեմ որսի է գնացել Վինձոր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Իսկ ո՞վ կար իր հետ:

ԳԼՈՍՏԵՐ

Զգիտեմ, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Իսկ Կլարենար մի՞թե իր հետ չէ:

ԳԼՈՍՏԵՐ

Ոչ, Կլարենար այստեղ է, արքա:

ԿԼԱՐԵՆԱ

Ի՞նչ է փափագում թագավոր հայրն իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Լոկ ողջություն քեզ, արդի Կլարենա:

Ինչպե՞ս է, որ դու քո եղբոր հետ չես:

Նա քեզ սիրում է, իսկ դու անփույթ ես նրա նկատմամբ:

Եղբայրներիդ մեջ իր գորովանքի կենտրոնում դու ես.

Սիրով գուրգուրիր այդ սերը, տղաս և դու դրանով,—

Երբ ես չեմ լինի,— մեծ բարիք կանես քո եղբայրներին,

Միջևորդ դառնալով քո արքա եղբոր և նրանց միջև:

Մի՛ լքիր նրան, այդ ազնիվ սերը բրացնել պետք չէ,

Ոչ էլ խափանիր նրա շնորհի պատեն առիթը՝

Սառն ու անտարբեր ընդդիմանալով քո եղբոր կամքին:

Նա միշտ բարի է, երբ ուշադիր են իր վերաբերմամբ:

Գրության համար արտասում ունի և մի ձեռք ունի

Օրվա պես շոայլ՝ խեղճին օգնելու,

Բայց ցասման պահին դառնում է կայծքար:

Մերք ձմռան բուր է, մերք սաստիկ հանդուգն

Վաղ արշալույսին ջրերն եզերսդ բարակ սառցի պես:

Արդ, հարկավոր է այդ բնույթի հետ լուրջ հաշվի նստել,

Կշտամբիր նրա վրիպումները, բայց՝ ակնածանով,

Այն էլ այն դեպքում, երբ իր արյունը հոժար է խաչալու.

Իսկ երբ մտայ ի, ազատ յող նրան,
Մինչև որ նրա կրքերն ամեհի
Յովափ շարված կես ձկան նման
Կործանեն իրենց խռովի անեղ գալարումներով:
Կավ միտղ սրահիւր այս խոսքը, թո՛մտա,
Եվ դու կդառնաս մի պատասպարան բարեկամներիդ,
Եվ ոսկյա մի օղ Բոկրայրենէրին ի՞հար շողկապող,
Որ նրանց արշան օծյալ անօրը
Զբարտանների րույնով մակարդված. —
Իսկ տաբիֆի հետ կամա-ակամա
Այդ րույնը մի օր կքափվի այնտեղ. —
Չի կտորվելու, քեկտուզ այդ րույնը գորավոր լինի,
Քան դեղը մահու, Բան վատողն անգուսպ:

ԿԱՐԵՆՍ

Նա իմ եղբոր հետ կվարվեմ սիրով և գուրգուրանքով:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ինչո՞ւ նրա հետ դու վինձորում չես:

ԿԱՐԵՆՍ

Բայց նա այնտեղ չէ: Նա գնացել է Լոնդոն նաշելու:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ով՛հ է՛ր կան իր հետ, կարո՞ղ ես ասել:

ԿԱՐԵՆՍ

Փոփոսն է, արեա, և իր անբաժան մտերիմները:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Պարտաւ հողի մեջ անպետ իտաւերը առատ են անում,
Եվ նա, այդ ազնիվ, շէնդ պատկերը իմ ջանելուրդյան
Շրջապատված է այժմ նրանցով. անա՛ քե ինչու
Ես արամուրջամբ եմ նայում գալիֆին իմ մահից առաջ:
Իմ սրտից արշուն, արցունք է քափվում,
Երբ մտքի ուժով պատկերացնում եմ օրերը խառնակ,
Փաած, եղծանված ժամանակներ, որ պիտի տեսնեմ,
Հենց որ ես հանգչեմ պապեթիս կողքին:
Քանզի երբ համառ շվայսուրջունը կորցնում է սանձը,
Երբ արշան տապն ու մոլեգնությունը
Գառնում են նրան խորհրդականներ,

Երբ միջոցները և անգուսպ կիրքը միաբանվում են,
Օ՛, ինչ թևերով, այդ մոլուցքներին անձնատուր դարձած,
Նա պիտի սուրա դեպի ստույգ մահ և անկում անեղ:

ՎՈՐՎԻԿ

Արդար չե՞մ դատում դուք նրա մասին:
Իշխանը, արևա, իր ընկերներին կարդում է, սերտում:
Համարե՛ք, որ նա սովորում է մի անձանոթ լեզու,
Երբ հարկ է լինում անհրաժեշտաբար
Սերտելու նույնիսկ անպարկեշտ բառեր,
Բայց հետագայում, ինչպես հայտնի է,
Դրանք զգվանե՛րով դեն են նետվում միշտ գործածուրյունից:
Իշխանն էլ այդպես, երբ ժամը եկավ,
Այդ բիրտ, անհեթեթ բառերի նման
Դեն կշարտի իր ընկերներին,
Նրանցից միայն սլահելով մի հուշ
Իբրև կաղապար կամ իբրև մի շափ
Այլ մարդոց կյանքը ավելի արդար շափելու համար,
Անցած շարիքը բարիք դարձնելով:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Իհեղու՞ն սակավ է լինում այն լեշք,
Ուր մեղր է շինել:

Մտնում է վեսամոլեկոր:

Եկողը ո՞վ է: Դո՞ւք է՛ք, վեսամոլեկոր:

ՎԵՍՄՄՈՌԱՆԵՐ

Ողջույն արժային, և, ի հավելում բերած լուրերիս,
Ցանկամ ձեզ բազում երջանիկ օրեր:
Մեր իշխան Ջոնը, ձեր որդին, արևա,
Իր գանակալի ձեռքն է համբուրում:
Արհեստակոպոս, Մաուրի, Հեստինգս
Եվ բոլոր մյուս ապստամբները
Ենթարկվել են մեր օրենքի պատժին:
Դավադիր սուրը իջել է պատյան,
Եվ խաղաղության ձիթենին է հաշտ ամենուր ձաղկում:
Թե այդ ամենը ինչպես կատարվեց
Այս գրության մեջ մանրամասնորեն շարադրված է,
Կարդացե՛ք, արևա:

Հանձնում է փաթեթը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օ՛, իմ Վեսամոուլենդ, դու զարնան քոչնակ,
Որ ձմռան վերջին բորանի միջից
Գարնան ցնծագին օրն ես ավետում: Ահա՛ և նոր լուր:

Մտնում է Հաբեբար:

ՀԱՐՔՈՐՏ

Թող երկինքը ձեզ թշնամիներից պահպանի, արեա,
Ձեր դեմ ելնողը թող տասպալվի վար
Բմբուսաների պես այն խոռվարար,
Որոնց մասին ես եկա պատմելու,
Յորքի շերիֆը գլխովին ջարդեց
Նորթեմբերլենդի և լորդ Բարդոլֆի
Անգլո-չռուլանդյան մեծագոր զորքին:
Նահատամարտի կերպն ու բնթացքը
Լրիվ գրված է այս ուլերձի մեջ:

Հանձնում է փաթեթը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ինձ վառ եմ զգում. պատճառը մի՞թե այս լավ լուրերն են:
Մի՛թե Ֆորտունը երբևէ չի գալիս
Երկու ձեռքերի լիաբուս բախառով: Մինչև է՛րբ պե՛տք է
Նա իր գեղեցիկ բառերը գրի ճապաղ տատերով:
Շարունակ մի բան քերի է թողնում.
Աղբառն առողջ է, բայց հացի կարտա,
Հարուստը շվայտ սեղանի առաջ կանգնած է տխուր,
Ամեն ինչ ունի, բայց անառողջ է
Եվ վայելելու հանույժից զրկված:
Այս լավ լուրերից կառող էի հրճվել,
Բայց իմ աչքերը աղոտանում են, իսկա մաղում է:
Վա՛յ ինձ, օգնեցե՛՛ք, ես շատ հիվանդ եմ:

Նվաղում է:

ԳՆՈՍԵՐ

Պի՛նդ կացե՛ք, արեա:

ԿԱՐԵՆՏ

Հա՛յր իմ մեծափառ:

ՎԵՍՄՈՒԵՆԻ

Ձեր աչքը բացե՛ք, սրափվե՛՛ք, տեր իմ:

ՎՈՐՎԻԿ

Հանգի՛ստ, իշխաններ: Թագավորի հետ
Եկամադուրյան այսպիսի պահեր հանախ է լինում:
Հեռո՛ւ կանգնեցե՛ք, օ՛ղ տվե՛ք նրան, նա ուզե՛ր կգա:

ԿԱՐԵՆՍ

Ո՛չ, ո՛չ, չի կարող այլևս տոկայ նա այդքան ցավի:
Անդուզ հոգսերը, նիգերը մո՛խի
Այնպես են փշրել հոգու պարիսպը,
Որ կյանքը արդեն պանում է դուրս նրա նեղձերից:

ԳՂՈՍՏԵՐ

136 Ես վախենում եմ: Ժողովրդի մեջ
Խիստ սարսափազդու բաներ են դատմում
Յին ժողովների և ծնունդների մասին այլանդակ:
Սղանակների կարգը խախտվել է, և տարին, կարծես,
Քնած գանելով մի փանի ամիս
Արագ ցատկել է նրանց վրայով:

ԿԱՐԵՆՍ

Թե՛մզայի ջուրը նիշտ Լե՛կ անգամ
Ելել է հունից առանց Լո գալու:
Իսկ ժամանակի տարեգրքերը՝ ծերերն ասում են,
Որ մի այդպիսի երևույթ եղավ
Մեր պապ էդվարդի նիվանդությունից և մահից առաջ:

ՎՈՐՎԻԿ

Կամա՛ց, իշխաններ՛, նա սրտիվում է:

ԳՂՈՍՏԵՐ

Այս կարվածը նրա վերջն է անվրե՛պ:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Ինձ վեր բարձրացրե՛ք և տարե՛ք խնդրե՛մ
Մի ուրիշ սենյակ, բայց գգո՛ւյշ, գգո՛ւյշ:

Նրանք բազավորին տանում են խորի սենյակը և դնում անկողին:

Ինձ անգործ է պե՛տք, իմ բարեկամներ:
Որքան կուզե՛ի, որ բարի մի ձևով իմ հոգնած հոգուն
Շշնջար մեղմիկ մի երաժշտություն:

ՎՈՐՎԻԿ

Կողքի սենյակում երաժիշտ կանչեմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

152 Թագր դրեմ բարձիս:

ԿԼԱՐՆՆ

Աչքը փոս քնկավ, ինչ արագ փոխվեց:

ՎՈՐՎԻԿ

Մո՛ւս. կամաց խոսեմ:

Մտնում է իշխան Հենրի:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Կլարենսն ո՛ւր է, ո՛վ է տեսել նրան:

ԿԼԱՐՆՆ

Այստեղ եմ, եղբայր, և մեծ վշտի մեջ:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Անձրև՝ ծածկի տակ. նրա տեղը դուռն է:
Ընչպե՛ս է արժան:

ԳՈՍՏԵՐ

Վիճակը վատ է:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Իսկ հաղթանակի մասին լսե՛լ է:

Շո՛ւտ հայտնեմ նրան:

ԿԼԱՐՆՆ

Այդ ուրախ լուրն էլ

Նրան տապալեց:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Երե պատճառը ուրախությունն է.

Նա կապալիսն էր, դեղորայք պե՛տ էլ:

ՎՈՐՎԻԿ

Բարձր մի խոսեմ. դո՛ւք նայեպես, իշխան:

Չե՛ր հայրը կարծես ուզում է բնեղ:

ԿԼԱՐՆՆ

Նկեմ բոլորս հաշվենք մյուս սենյակ:

ՎՈՐՎԻԿ

Չէ՛ք բարեհասնի մեզ հետ գալ, իշխան:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ո՛չ, ես կնստեմ արեւայի կողմին:

Բարբը գնում են, մնում է իշխան Հենրի:

Ինչո՞ւ է բազր իւր բարձին հանգչում,
Այս ինչ անհանգիստ անկողնակից է:
Օ՛, հղկյալ տագնապ, օ՛, ոսկեղեն հոգս,
Ուր բազում սքափ գիշերների մեջ
Լայն բաց ես պահում կոպերը քնի: Քնի՛ր նրա հետ,
Բայց ոչ այնպիսի կազդուրիչ քնով,
Ինչպես այն հոգնած աշխատավորը,
Ուր կոշտ գտակը աշկերին քաշած
Պինդ խոսփում է մինչև առավոտ: Օ՛, իշխանուրյուն.
Ում գխին դու եո բազր սեղմում ես, դու նրա վրա
Նստում ես ինչպես մի շվեդ զբան կիզիչ շոգի դեմ,
Ուր պահպանելով՝ այրում է սաստիկ:
Նրա շնչակի դարպասների մոտ
Մի քեքե, քննուշ փետուր է ընկած, բայց չի քերտում:
Շնչառությունից նա պետք է շարժվեր: Քաղաքա՛ր, հա՛յր իմ:
Այս քունը խորն է: Ան հենց այն քունն է,
Ուր անգլխահան շատ արեւանների
Անդարձ բաժանեց այս ոսկյա թագից:
Ես եո որդին եմ և օրենքով քեզ հասանելի եմ
Իմ արցունքները և վշտերը խոր,
Ուր բնությունը, սերն ու քննչանքը, քե՛զ, բանկազին հայր,
Խիստ շոռայուրեն պիտի վնարեն,
Իսկ ինձ էլ, հայր իմ, որպես արյունիդ արդար ժառանգի
Հասանելի է այս ոսկյա թագը: Ահա՛ այստեղ է:

Քաղք գլխին դնելով:

Տե՛ր ասաված, պահիր այս թագը գլխիս: Այժմ քող իմ դեմ
Աշխարհի բոլոր սայտաամբները
Մի բազուկ կազմեն վիրխարահակա,
Հոր բազուկն այդ դարձյալ չի կարող
Հասյալ պատիվն այս իլեկ ինձանից:
Այս թագը իմն է և դու ես տալիս,
Իսկ ես էլ հետո կտամ ժառանգիս:

Դնում է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

(Ուշքի դալով) Էհե՛յ, Գլոստե՛ր, Կլարե՛նս, Վորվի՛կ:

Մանուս էն վարվիկը և մյուսները:

ԿԼԱՐԵՆՍ

Արքան մեզ կանչե՛ց:

ՎՈՐՎԻԿ

Ինչպե՛ս եմ գգում, ի՛նչ է պետք, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ինչո՛ւ լինցիմ ինձ այստեղ մենակ:

ԿԼԱՐԵՆՍ

Դուք մենակ չէիք. իշխան եղբայրս մնաց ձեր կողմին, ուր ձեր փունն հսկի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Իշխան Վալե՛սը: Իսկ որտե՛ղ է նա, կուզեի տեսնել: Ո՛չ, նա այստեղ չէ:

ՎՈՐՎԻԿ

Այս դուռը բաց է. նա գնացել է հենց այս բաց դռնով:

ԴՆՈՍՏԵՐ

Այդ դուռը ուղիղ տանում է դեպի մեր նստած տեղը. Այնտեղով շանցավ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Իսկ քազը ո՛ւր է: Ո՛վ վերցրեց բարձից:

ՎՈՐՎԻԿ

Այստեղ էր դրված, երբ մենք դուրս եկանք:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Իշխանն է վերցրել: Ե՛տ կանչե՛ք նրան:

Այդքան շտապ է, որ բնդունել է

Քունս իբրև մա՛ն:

Գտե՛՛ք նրան. Վորվիկ և բեռե՛ք այստեղ:

Վարվիկը գնում է:

Նրա արարելը միաբանելով իմ հիվանդության՝

Վերջ կատ կյանքիս: Օ՛հ, որդի՛ք, որդի՛ք, ինչ ծնունդ եմ դուք:

Ինչ արագությամբ բնության ձայնը ապստամբվում է,

Ներ որ ոսկին է դառնում հալատակ:
Գրա համար են տառապանքով լի հիմար հայրերը
Իրենց՝ գիշերը տանջում մտքերով, ուղեղը՝ հոգսով,
Մեջքը՝ տխուրյամբ,
Մրա համար են կեղծ միջոցներով ոսկի դիզում միշտ,
Որ ուրիշները վայելեն հետո:
Մրա համար են լուրջ հոգածուրյամբ իրենց որդիներին
Ռազմի արվեստով, գիտությամբ գինում:
Մենք մեղվի պես ենք. ամեն մի ծաղկից
Նրա փողոցագույն մեղրը ծողոված՝
Բերում ենք փերակ: Հասնում ենք բե չէ,
Մեզ սպանում են մեր տանջանքների. նիգերի համար:
Բոլոր հայրերի վաստակը սա է մեռնելուց առաջ,
Այս դառն փորձը:

Մանում է Վարվիկը:

Ո՛ր է փոքրասնդ այդ անհամբերը, շապանց հայնիսկ,
Մինչև իր ընկեր հիվանդությունը ինձ համփու դներ:

ՎՈՐՎԻԿ

Իշխանին գտա ես կից սենյակում
Ազնիվ արցունքը չֆնաղ այտերով վար կայրակելիս:
Նա անձնատուր էր այնպիսի մի խոր ու անկեղծ վշտի,
Որ ոճրագործը, որի բնական լոկ արյուն է հար,
Նրան հայելով իր դաշույնը մեկ
Ջերմ արցունքներով պիտի լվանար: Ահա՛ գալիս է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Թագն ինչո՞ւ սարավ:

Մանում է իշխան Հենրին:

Այո՛, նա եկավ: Մոտեցի՛ր, Հարրի,
Սենյակն ազատե՛ք, մենակ բողբե՛ք մեզ:

Բարբը գնում են. մնում են բազալտը և իշխան Հենրին:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Հավատալի չէր, որ ես ձեր ձայնը կլսեմ նորից:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այդ մասածուրյան սկունքը. Հարրի, ես ցանկությունն է:
Ես շատ սպրեցի, շատ ձանձրացրի քեզ:

Մի՞թե դու իբրև այնքան ծարավ ես իմ քափուր գանին,
 Որ շտապում ես իմ թագր ծածկել
 Քո ժամից առաջ: Անմի՛ա պատանի,
 Դու մոլեգնում ես մեծության հասնել. նա մեզ կնզմի:
 Քիչ էլ համբերիր. մի քերե փամի, աննշան մի շունչ
 եվ իմ տերության ամպը փոպ կզա: Իմ օրը մքնեց:
 Այն թագր. որ դու հափշտակեցիր՝
 Երկու ժամ շանցած քոնը կլինե առանց հանցանքի:
 Իմ մահվան շեմին դու հաստատեցիր
 Իմ տառապագին ենթադրությունը, որ ինձ չես սիրում,
 Քո ամբողջ կյանքը պարզ հայտագիր է այդ վկայության,
 եվ ուզում էիր, որ մահվան ժամին լրիվ համոզվեմ:
 Խորհուրդներից մեջ դու թախցնում էիր բյուրավոր դաշույն,
 Սրված փառ սրտիդ նեսանի վրա,
 Որ կես ժամով շուտ կյանքս վերջացնես:
 Ի՞նչ, անկարո՞ղ ես կես ժամ համբերել,
 Ուրեմն գնա և ինքդ փորիր իմ գրեզմանը:
 եվ հրամայիր, որ գանգեր զարկեն
 Ազդարաբեկով ոչ թե իմ մանր,
 Այլ քո ցնծագին թագադրությունը:
 Այն արցունքները, որ քափվելու են դագաղիս վրա
 Թող մեզ օծելու սրբայուղ դառնան,
 Միայն թե շտապ ինձ առաջ աղախիր մոռացյալ հողին,
 Քեզ կյանք տվողին առաջ նիհուններիս:
 Վանի՛ր իմ բոլոր պաշտոնյաներին,
 Խախտի՛ր հրաման, վե՛ր և օրենք,
 Հասել է ժամը կարգուկանոնի և մեծարանքի վրա խնդալու,
 Քան է քարձրանում Հենրիև՝ հինգերորդ,
 Ուրի՛, ստություն և անմտություն,
 Չփվի՛ր, պերնաշուք թագավորության,
 Կորե՛՛ք, իմաստուն խորհրդականներ,
 Արդ, անգլիական արևունիքի մեջ
 Բայր կողմերից եկեք հավաքվեք
 Ցանցառ, անխորհուրդ, անբան միմուսներ:
 Հարեան տերեր և տերություններ,
 Ունե՛՛ք դուք արդյոք գեթ մի սրիկա,
 Որ ընդունակ է կեսգիշերային խրախնամենևին,
 Խմիչքին, պարին, հայնոյաններին,
 Որ կողոպտում է, լլկում, սպանում

Եվ ամենահին մեղքերը գործում նորագույն ձևով,—
 Արդ, ուրախացե՛ք, նա ձեզ այլևս նեղություն չի տա:
 Անգլիան նրա հանցանքն եռակի,
 Կրկնակի փայլով կոսկեպատի:
 Անգլիան նրան կտա մեծ պաշտոն,
 Պատիվ, մեծարանք և իշխանություն.
 Թագավոր Շենրին ցոփության զսպիչ
 Արգելակապը դեն շարտելով՝
 Ազատ կարձակի այդ վայրագ շանր,
 Սուր ժանիֆներով խեղճ անմեղներին պատառոտելու:
 Օ՛, իմ տարաբախտ թագավորություն,
 Միջեղբայրասպան պատերազմներից հիվանդ, ուժասպառ
 Երբ ես իմ համակ հոգատարությամբ
 Անկարող եղա սանձել քեզ տանջող խառնակությունը,
 Ավաղ, ի՞նչ կլինի քո դրությունը,
 Երբ խառնակիչը իշխի քեզ վրա:
 Վերստին պիտի անապատ դառնաս,
 Գայլերի երկիր, որ մի ժամանակ
 Եղել էն քո հին բնակիչները:

ԻՇԽԱՆ ՇԵՆՐԻ

(Մունկի պալով) Ներե՛ք ինձ, արքա: Եթե շիներ իմ հորդ արցունքը,—
 Խոսքս կաշկանդող տամուկ պատնեշն այդ.—
 Պիտի կանխեսի ձեր սրտագրավ և խորաթափանց այդ կշտամբանքը,
 Որպեսզի ոչ դուք ձեր այդ ցավագին խոսքերն ասեիք,
 Ոչ էլ ես երկար դրանք լսեի: Ահա՛ ձեր թագր:
 Թող տե՛ր աստվածը՝ միակ թագակիրն հավիտենական,
 Այդ թագը երկար ձեր գլխին պահի: Եթե այդ թագը
 Թանկ է իմ սրտին ձեր անունից ու պատվից առավել,
 Թող ես այլևս ոտքի չկանգնեմ այս խոնարհ դիրքից,
 Միշտ այսպես ահկյալ, ծնկաչոք մնամ,
 Ու ներշնչված է ներքին խորագույն սիրուց ու պարտքից:
 Վկան աստվածն է: *(Ոտքի կանգնելով)* Երբ ներս մանելիս
 Ձեզ գտա անշունչ, անզգա պառկած,
 Օ՛, սիրտս ինչպես նմվեց ցավից: Եթե կեղծում եմ,
 Թող անփառունակ կորչեմ առհավետ
 Եվ այս անհավատ աշխարհը երբեք
 Չտեսնի սոգնիվ այն շրջադարձը, որ խորհել եմ ես:
 Հայացք նետելով և համարելով ձեզ արդեն մեռած,—

Ինքս էլ այդ մտքից կիսամեռ դարձած,—
 Իբրև թե քազր զգացում ուներ,
 Կշտամբիչ խոսքով դիմեցի նրան.
 «Քեզ պահպանելու դժնդակ հոգսը
 Իմ հոր մարմնի ողջ հյուսքերը քամեց.
 Խիստ ատելի ևս ուստի ինձ համար,
 Թեևս ձուլածո ոսկի ևս անխառն:
 Թանկ է այն ոսկին, ուր խառնուրդն է շատ,
 332 Նա բուժիչ դեղ է հիվանդության դեմ:
 Իսկ դու գեղեցիկ, դու գերպատվական, դու հոշակավոր,
 Կերար քեզ կրող արեալի կյանքը»: Այս կշտամբանքով,
 Գերազնիվ տեր իմ, ևս քազր վերցրի դրեցի գլխիս,
 Որ նրան իբրև հակառակորդի.— որն աշխիս սուս:
 Իմ հորն սպանեց,— պայքարի կոչեմ, ինչպես վայել է
 Գահի ճշմարիտ քազածառանգին:
 Եթե այդ քազր հրեմանքի խանդով արյունս սղծեց.
 Կամ գոռոզության շնչին երանգով խաթարեց հոգիս,
 Եթե սնուտի և խոտվարար մի մտածությամբ
 Հյուսրենկալեցի նրան ողջույնով,
 Թող աստվածն հավես այդ քազր հեռու պահե իմ գլխից.
 Վերածելով ինձ ամենանվաստ մի հպատակի.
 Որ նրա սուս ծունկ է խոնարհում սոսկումով անկղ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օ՛, որդի՛ս, որդի՛ս,
 Երկինքը դրդեց քեզ քազր վերցնել,
 Որ իմ առավել սերը վաստակես,
 Այդքան իմաստուն և ներողամիտ արդարացումով:
 Ե՛կ այստեղ, Հարրի, նստի՛ր մահնիս մոտ,
 Եվ լսիր, ըստ իս, վերջին խորհուրդն իմ,—
 Առիթ չի լինի այլևս լսել: Աստծուն է հայտնի.
 Թե ևս ինչպիսի կողմնակի ու ծուռ նանապարհներով
 Այդ թագին հասա: Ինքս քաջ գիտեմ,
 Թե ինչ տագնապով նա հատեց գլխիս:
 Նա քեզ առավել դյուրությամբ կանցնի,
 Առավել հարգով և օրհնարար.
 Քանզի բովանդակ աղտեղությունը
 Կապլած պայքարիս հաղթանակի հետ,
 Ինձ հետ միասին գերեզման կիջնի:

Այդ թագն ինձ վրա մի հավիշտակված պատիվ էր թվում,
 Որ կորզել էի իմ վայրագ ձեռնով:
 Դեռ ապրում էին շատ թվով մարդիկ,
 Որ ինձ օգնեցին թագին տիրանալ,
 Դրանից ծագեց ամենօրյա դավ, արնանեղուրյուն,
 Խոցելով տարտամ խաղաղությունը:
 Ես մարտնչելով դիմադիր եղա այդ սարսափներին՝
 Իմ կյանքը անվերջ վտանգի տալով: Եվ դու այդ տեսար:
 Իմ օրոք ամբողջ երկիրը դարձավ ողբերգության դաշտ,
 Իմ մահը այժմ ամեն բան նիմֆից
 Շուտ կտա այնտեղ: Ինչ որ ես տիրել և նվաճել եմ,
 Քեզ կփոխանցվի այժմ օրենքով,
 Իմ թագը ինն է ժառանգի կարգով:
 Թեպետ ես ոտքը ամուր է դրվում, բան ինձ վիճակվեց,
 Քո զանր, սակայն. անհաստատ է դեռ:
 Որքան ու վշտերը բարձր են տակավին,
 Իմ ոստիկները, որոնց պետք է ինձ բարեկամ դարձնես,
 Վերջերս են միայն իրենց խայթոցից, ժանիֆից զրկվել:
 Նրանց մոլեգրին նիզեթին հենված ես վեր բարձրացա,
 Եվ կարող էի նույնպես սարսափել, որ նույն այդ մարդիկ
 Ինձ այդ բարձունքից ցած կառնեն նորից: Ես այդ վտանգը
 Կանխելու համար, ումանց անխնա բնաջնջեցի,
 Մյուսներին էլ մտադրվեցի Սուրբ Երկիր տանել,
 Որ ազատ անբան այստեղ մնալով՝
 Խորամուտ շիճեն թագավորական իմ գործերի մեջ:
 Ուստի, իմ Հարրի, դու ա՛յս կանոնով միշտ առաջնորդվիր.
 Պատերազմ վարիր օտար ափերում,
 Տաք գլուխներին այդ կոիվներով զբաղեցնելով
 Եվ նրանց միջից անդարձ բերելու
 Հիշողությունը անցած օրերի:
 Բան ունեմ դարձյալ, բայց ծանր եմ շնչում
 Եվ ակար ձայնս մերժում է խոսել:
 Թ՛, ների՛ր աստված, թագին հասնելու իմ մեղսոտ ուղին
 Եվ թագն իմ հաստատ, սպառնով պահիր իմ ուղու գլխին:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Ողորմա՛ծ տեր իմ,
 Այս ոսկյա թագը դուք նվաճեցիք,
 Դուք պահեցիք այն և ինձ հանձնեցիք,

Այդ թագը իմն է իբրև հաջորդի:

Այդ թագի համար ընդդեմ աշխարհի մղելով պայքար՝
Ես կպաշտպանեմ իմ օրինական իրավունքն արդար:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Տե՛ս, տե՛ս, գալիս է Լանկաստեր ռոդիս:

Մտնում է Լանկաստերի էջտան Ջոնը:

ԻՇԽԱՆ ՋՈՆ

Միշտ ողջության մեջ, խաղաղ, երջանիկ ձեզ տեսնեմ, հա՛յր իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Գու բերում ես ինձ լոկ երջանկություն
Եվ խաղաղություն, իմ բանկազին Ջոն,
Իսկ ողջությունը իմ ջանելության բերումվ. ավա՛ղ.
Անդարձ թոեւ է մերկ ու չորացած իր կոնդարմատից:
Քեզ տեսա, ռոդիս,— արդ իմ երկրային գործը ավարտվեց:
Լորդ Վորվիկն ո՛ւր է:

ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻ

Վորվի՛կ, լորդ Վորվի՛կ:

Մանում է Վորվիկը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ինչպես է կոչվում իմ այն սենյակը,
Ուր մի ֆիշ առաջ ես նվաղեցի:

ՎՈՐՎԻԿ

Երուսաղեմ է կոչվում, տեր արեա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Փառք երկնավորին: Այդտեղ ես պետք է կյանես ավարտեմ:
Շատ վաղուց արված գուշակություն է,
Որ ես կմեռնեմ Երուսաղեմում,
Իսկ ես կարծել եմ թե Պաղեստինի մասին է խոսեր:
Ինձ այդ սենյակը տարեք վերստին,
Թող Հենրին այնտեղ ավանդի հոգին—
Երուսաղեմում...

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԳ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Գլուստերչիք: Շեկոյի տունը.

Մտնում են Շեկոն, Ֆալստաֆը, Բարդոլֆը և մանկավարդը:

ՇԵԿՈ

Երգվում եմ ախաղաղով և կաշաղակով, պարոն, ուր դուք այս գիշեր չպետք է գնաք: Որտե՞ղ ես, Դեվի:

ՖԱԼՍՏԱՖ

Խնդրում եմ, ներե՛ք ինձ, պարոն Ռոբերտ Շեկո, ես պետք է գնամ:

ՇԵԿՈ

Ես ձեզ չեմ ների, ոչ մի կերպ չեմ ների: Ոչ մի ներողություն չեմ ընդունի: Ներողությունները ձեզ չեն օգնի: Դուք չպետք է ներվե՛ք: Ի՞նչ եղաւ, Դեվի:

Մտնում է Դեվին:

ԴԵՎԻ

Այստեղ եմ, պարոն:

ՇԵԿՈ

Դեվի՛, Դեվի՛, Դեվի՛, Դեվի՛, սպասիր, Դեվի, սպասիր հիշե՛մ, սպասիր հիշե՛մ: Հա՛, այստեղ կանչիր խոհաբար Վիլյամին:— Ո՛չ, պարոն Ջոն, ես ձեզ ոչ մի կերպ չեմ ների:

ԴԵՎԻ

Հսում եմ, պարոն: Ես ձեռ այն ծանուցագրերը աչդպես էլ չկարողացա հանձնել: Եվս մի խնդիր, պարոն, ի՞նչ ենք ցանկելու ստրավանդի վրա:— ցորե՛ն, թե մի ուրիշ բան:

ՇԵՆՈ

Կարմրահատ ցորեն, Դեվի: Բայց շտապ կանչիր խոհարար Վիլյամին. Մատղաշ աղավնիներ ունե՞նք:

ԴԵՎԻ

Այո, պարոն: Իսկ սա դարբնի հաշիվն է գութանի և ձիերը պայտելու համար:

ՇԵՆՈ

Սաուզի՛ր հաշիվը և վճարի՛ր: Պարոն Ջոն, ես ձեզ ոչ մի կերպ չեմ ների:

ԴԵՎԻ

Եվս մի խնդիր. հարկավոր է գնել մի նոր շորա և մի դույլ: Մի խնդիր ևս. ինչպես գիտեմ, անցյալ օրը Վիլյամը մի պարկ կորցրեց Հինկլի շուկայում: Չէի՞մ կարգադրի դրա արժեքը գանձել:

ՇԵՆՈ

Նա պարտավոր է հատուցել վճար:— Մի ֆանի մատղաշ աղավնի, Դեվի, մի գույգ վառյակ, ոչխարի տոտիկներ և նմանապես մի որևէ անուշ համեղ բան: Վիլյամին սաս, թող դրանք պատրաստի:

ԴԵՎԻ

Այդ ռազմական մարդը ամբողջ գիշերը մեզ մո՛տ է մնալու, պարոն:

ՇԵՆՈ

Այո, Դեվի: Եվ ևս ուզում եմ նրան փառավորապես հյուրասիրել: Լավ է արժունի՞նում մի բարեկամ ունենալ, ֆան թե ֆասկում մի ոսկի: Նրա մարդկանց լավ հոգ տար, Դեվի, թե չէ այդ ֆտամնելի սրիկաները այնպես կբամբասեն, կբրբեն իմ անունը, որ կամաչեմ մարդամեջ երևալ:

ԴԵՎԻ

Բայց շեն կարող այնքան բրբել, որ իրենց տեսից ավելի վատ լինի. պարոն: Իսկ դրանց սպիտակեղենը այնքան կեղտոտ է, որ սիրտ է խառնում:

ՇԵՆՈ

Սրամիտ խոսք էր: Բայց դու շտապիր գործի ետևից, Դեվի:

ԴԵՎԻ

Շատ եմ խնդրում, պարոն, որ պաշտպան կանգնեմ Վինֆոտի Վիլյամ Վիգորին ընդդեմ Կլիմենտ Պերկեսի:

ՇԵՆՈ

Վիգորի վրա շատ գանգատ կա, Դեվի: Այդ Վիգոր կսշվածդ մի շատ անզգամ սրիկա է, քստ իս:

ԴԵՎԻ

Լրիվ համաձայն եմ. ձերդ ողորմածուքում, որ նա խեղապես սրիկա է: Եվ այնուհանդերձ հաւկալոր է. որ անազնիվ մարդն էլ երբեմն պաշտպանության արժանանա իր բարեկամի խնդրանքով: Ազնիվ մարդը ինքը կարող է իրեն պաշտպանել, իսկ անազնիվը չի կարող: Ես ձերդ ողորմածությանը հավատարմութեն ծառայել եմ ուրը տարի և Երեսնա շաբաթի կարողանամ տարվա մեջ մեկ կամ երկու անգամ մի անպաշտպան սրիկայի պաշտպանել քնդիւմ ազնիվ մարդու, կնշանակե՞ն ձերդ ողորմածությունը շատ միշտ հավատ է քնծայում ինձ: Այդ սրիկան իմ պատվական քնկերն է, պարոն, ուստի ձերդ ողորմածությանը շատ եմ խնդրում, որ գործը նրա օգտին վնոեմ:

ՇԵՆՈ

Հանգիստ մնա, Դեվի, մի բան կանեմ, իսկ այժմ գնա գործիդ (*Շեվին գնում է*): Ուտե՞ղ եմ, պարոն Զոն: Հանե՛ք ձեր զինվարական կոշիկները: Տվե՛ք ինձ ձեր ձեռքը, պարոն Բարդուլֆ:

ԲԱՐԴՈՒՖ

Ձեզ տեսնելը մեծագույն հաճույք է. ինձ համար. ձերդ գերազանցություն:

ՇԵՆՈ

Ամբողջ հոգով շնորհակալ եմ, պարոն Բարդուլֆ: (*Մանկկալիկին*) Բարի՛ գալուստ, հսկա: Երթա՛նք, պարոն Զոն:

ՅԱՆՍՍԱՅ

Դուք գնացեմ, ես հիմա կգամ, պատվական Ռոբերտ Շելլո: (*Շելլոն գնում է*): — Բարդուլֆ, դու մեր ձիերին հսկիր (*Բարդուլֆը և մանկկալիկը դուրս են գնում*): Երես ինձ մաս-մաս սղոցեին, կատացվեւ ամենափշջ շորս դյուծին այդպիսի մոռումալոր եզնալորական գազազան, ինչպես պարոն Շելլոն է: Զարմանալի բան է. քե հոգևոր ինչպիսի նմանություն է ստեղծվել այդ պարոնի և իր ծառաների միջև: Ծառաները իրենց տիրոջը ամեն օր տեսնելով՝ սկսել են նմանվել սպուշ դատավորների, իսկ տերն էլ շարունակ նրանց հետ խոսելով՝ վերածվել է հանոյակատար ծառայի՝ դատավորի զգեստով: Մշտական շփման հետևանքով նրանց մտքերը այնքան միակերպ են դարձել, այնպես են սկզբվել իրար, որ հիշեցնում են վայրի սագերի հոտը: Երես ես դատավոր Շելլոյի կարիքն

զգայի, կաշխատեի շողոփորբել նրա ծառաներին, ակնասկելով նրանց մտտիկությունը իրենց սիրոջ հետ, իսկ երև ծառաների կարիքն զգայի, ես կշողոփորբեի դատավոր Շելլոյին, ասելով, որ ոչ ոք այնպես հիանալի չի կառավարում իր ծառաներին, ինչպես ինքր: Հայտնի բան է, որ խելացի վարվեցողությունը, ինչպես և հիմար կենցաղավարությունը հիվանդությունների նման վարակիչ են, հետևաբար մարդիկ իրենց բարեկամներին ընտրելիս պետք է շատ զգույշ լինեն: Ես այս Շելլոյին քիտափ կդարձնեմ իմ կատակներին՝ իշխան Հենրիին զվարճացնելու համար. Հավատացած եմ, իշխանի փառք ծիծաղից կպայքի, երբ սկսեմ պատմել հաշտարար դատավոր Շելլոյի մասին: Իսկ իմ պատմությունները հերիք կանեն մինչև վեց անգամ նորանկությունը փոխվի: Տևողությամբ դա հավասար է շորս դատական պայմանաժամի, որ մի տարի է, կամ երկու դատաստանի.— ոտքերը կոնդերի մեջ և այդ ամբողջ ժամանակ իշխանը անընդմեջ պիտի ծիծաղի: Օ՛, գիտե՛ք թե ինչ ուժեղ է ներգործում երդումի քերի խառնուրդով հրամցված սուտը կամ խոժոռ հանքերով ասված կատակը այն անփորձ երիտասարդի վրա, որի ոտերը դեռ չեն նվվացել ծանր աշխատանքից: Ա՛յ, կոտեսնեք, իշխանը այնքան սխալ ծիծաղի, մինչև որ իր երեսը կննոռավելով՝ նմանվի ամստանոցային մի քաց հմոքված լողիկի:

ՇԵԼԼՈ

(Ներսից) Պարոն Չո՛ն:

ՅԱԼՍՏԱՅ

Գալի՛ս եմ, պարոն Շելլո, գալի՛ս եմ:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Վեստֆալեր, պալատը:

Մտնում են Վոլփիք և գլխավոր դատավոր տարբեր կողմերով:

ՎՈՐՎԻԿ

Այդ դա՛մ և՛, պարոն գլխավոր դատավոր: Գեպի ո՞ր այդպես:

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱՎՈՐ

Արեան ինչպե՛ս է:

ՎՈՐՎԻԿ

Նա գերազանց է: Բոլոր հոգսերը ընդմիջտ վերջացան:

ԳԼԵԱՎՈՐ ԳԱՏԱՎՈՐ

Կարծեմ մեռած չի:

ՎՈՐՎԻԿ

Նա Բայլեց վերջին իր նանապարհը
Եվ մեր աշխարհում այլևս չկա:

ԳԼԵԱՎՈՐ ԳԱՏԱՎՈՐ

Նրանի՛ աբխան ինձ իր հետ տաներ:
Հավատարմությամբ ծառայեցի իրեն,
Այժմ ինձ թողեց անպաշտպան բոլոր գրկանհների դեմ:

ՎՈՐՎԻԿ

Մեր ջահել աբխան Բեզ չի սիրում իրոք:

ԳԼԵԱՎՈՐ ԳԱՏԱՎՈՐ

Գիտեմ չի սիրում: Ես նոր կարգերը մեր ժամանակի
Կղիմավորեմ սպառազինված,
Իսկ դրանք երբեք չեն կարող լինել առավել դժնի,
Իմ մտքի ուժով պատկերացածից:

ՎՈՐՎԻԿ

Մեռած աբխայի սերունդն է զալիս վշտով ծանրաբեռ:
Օ՛, Լեանի քե կենդանի Հենրի՛ն բնավորությամբ
Գեթ նման լիներ իր եղբայրներից վասթաբազույնին:
Որքան պատվական ազնվականներ
Պիտի մնալին իրենց պաշտոնին,
Բայց ստիպված են առաջաստները
Մի խաժամուժի առաջ խոնարհել:

ԳԼԵԱՎՈՐ ԳԱՏԱՎՈՐ

Ռ՛, տե՛ր իմ աստված, ես վախենում եմ,
Որ վայրիվերո շուր գա ամեն ինչ:

Մտնում են կանկաստերի իշխան Ջոնր. Կլաբենը,
Գլոստերը. Վեստմոուլենդը և ուրիշներ:

ԻՇԵԱՆ ՋՈՆ

Բարի՛ լույս, Վորվիկ:

ՊԼՈՍՏԵՐ ԵՎ ԿԼԵՐԵՆՈ

Բարի՛ լույս, զարմիկ:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Մենք հանդիպում ենք այն մարդկանց նման,
Որ մոռացել են խոսելու կերպը:

ՎՈՐՎԻԿ

Մենք խոսել գիտենք, բայց նրա նյութը այնքան տխուր է,
Որ մեզ զրկում է խոսելու ձիրքից:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Բող խաղաղ հանգչի այն մարդու հոգին,
Որ մեզ այսօր խոր վշտով համակեց:

ԳԼԽԱՎՈՐ ԳԱՏԱՎՈՐ

Խաղաղությո՜ւն մեզ: Փրկի՛ր, աւեր աստված,
Գու մեզ առավել ծանր ողբերից:

ԳՂՈՍԵՐ

Օ՛, իմ բարի լուրդ, դուք մի խսկական բարեկամ կոչեցիք:
Կարող եմ Լեզվել, որ դուք չեք ծածկել
Տիրության դիմակ: Ձեր վիշտն անկեղծ է:

ԻՇԽԱՆ ԶՈՆ

Թեպետ ոչ մի մարդ վստահ չէ վաղվա գրության հանդեպ,
Բայց ձեր նկատմամբ վերաբերմունքը ցուրտ է լինելու:
Աստիկ ցավում եմ: Օ՛, Լեք այլ կերպ շուտ գաւ ամեն բան:

ԿԼԱՐԵՆՍ

Այժմ դուք պետք է
Զոն Ֆալստաֆի սիրտը գոհացնել բարեխառությամբ՝
Լողալով բնօրինակ ձեր բարձր կոչման և աստիճանին:

ԳԼԽԱՎՈՐ ԳԱՏԱՎՈՐ

Բարի իշխաններ, ինչ-որ արել եմ, պատվով եմ արել,
Միշտ առաջնորդված իմ արգար խղճով,
Եվ ես արժայից Լեքեք չեմ հայցի
Նվաստ գրությունն ողորմածարար: Գուք այդ կանանկ:
Երե դիզացյալ անմեղությունը
Եվ պատիվը ինձ նեցուկ շկանգնեն,
Կշտապեմ մեռած բազմաբնի մոտ
Նրան պատմելու, բե այդ ամենը ինչպես կատարվեց:

Իշխանն է գալիս:

Մտնում է Հենրի Հինգերտոյ քաղաքը շփամբով:

ԳԼԵԱՎՈՐ ԳԱՏԱՎՈՐ

Բարի օր, արեա, ասուվա՛ծ պահապան:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այս նոր հանդերձը, շփեղ, պերնաշում,
Իմ վրա այնքան հանգիստ չի նստում, ինչպէս կարծում եմ:
Ես նկատում եմ, որ ձեր սուգի մեջ Լեկյուղ կա խառնված:

Այս արեւունիքն անգլիական է, ոչ թե քուրմական.

57 Ոչ թե հաջորդը սուրբան Մուրադն է, Մուրադից սերված.

Այլ Հենրիկոսի Հենրիկոս որդին:

Վշտացե՛ք, սակայն, ազնիվ եղբայրներ,

Այդ սուգը այնպէս պատշանում է ձեզ,

Եվ արեւորեն այնքան շփեղ է սգո հանդերձն այդ.

Որ ես պատրաստ եմ լրջութեամբ խորին

Այդ տրտում տեսք կրել սրտիս մեջ: Վշտացե՛՛ք, այո,

Բարի եղբայրներ, բայց ձեր վշտի մեջ եղե՛ք շափավոր.

Այդ ծանրությունը, քանզի, ընկած է բոլորիս սրտին:

Իմ մասին կասե՛մ, բոլորիդ համար

Երկում Լմ լինել թե՛ հայր, թե՛ եղբայր, համոզված եղե՛ք:

Շատ բան չեմ ուզում, տվե՛ք ձեր սերը

Եվ ձեր հոգսերի պաշտպանությունը թողե՛ք ինձ վրա:

Գու՛մ լալիս եմ, որ Հենրին մեռած է, ես էլ եմ լալիս:

Բայց Հենրին ողջ է և ձեր արցունքի ամեն կարիւր

Նա կվերժանի բարեբախտության Լեզանիկ ժամի:

ԿԱՐԵՆՍ, ԻՇԵԱՆ ԶՈՆ, ԳՈՍՏԵՐ

Խեղճ ձեր Լեզանին վստահ եմք, արեա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Բոլորդ այնպէս քշնամաբար եմ նայում ինձ վրա:

(Գլխավոր դատաւորին) Առանձնապէս դու՛ք:

Անշուշտ քաջ գիտե՛ք, որ ձեզ չեմ սիրում:

ԳԼԵԱՎՈՐ ԳԱՏԱՎՈՐ

Քաջ գիտե՛մ, արեա, որ եթե արդար դատելու լինե՛ք,

Գու՛մ ինձ ասելու ոչ մի հիմնավոր պատճառ չե՛ք գտնի:

Ո՛չ մի:

Ինչպե՞ս կարող էր ինձ պես մի իշխան,
 Որի կոչումն է բարձրանալ գահին,
 Մոռացության տալ իր վրա բարդած
 Չեր ամբարտապան հախատի՞նքներ:
 Ինչպե՞ս ժպրեհցի՞ք կշտամբել, բարեկ և զնդան նետել
 'Խո՛ւ անգլիական գահաժառանգին: Թեթե՛ հանցանք էր:
 Հնարավո՞ր է այդ նախատի՞նք մոռանալ անմիշտ.
 Անդարձ սուզելով կետա գետի մեջ:

ՊԵՍՄՎՈՐ ԳՍՏԱՎՈՐ

Ես այն ժամանակ փոխանորդ էի,
 Երկայացնելով ձեր թագավոր հոր իշխանությունը:
 Երբ այդ օրէնքը գործադրում էի,
 Չբաղված երկրի բարեբախտությամբ,
 'Խո՛ւ մոռակալով իմ բարձր դիրքը,
 Օրէնքի ուժը և վեհությունը իրավադատի,
 Պատկերն արեայի՛ իմ մեջ մարմնացած.
 Թույլ տվեցի՞ք ձեզ հարվածելու ինձ հենց առյանի մեջ,
 Երբ բազմած էի դատավարական իմ թիկնաբառին:
 Այդ մեծ հանցանք էր թագավորի դեմ: Այդ էր պատճառը,
 Որ ինձ արտոնված իշխանությունը օգտագործելով՝
 Ես ձեզ համարձակ կալանքի վերցրի և նետեցի բանտ:
 Եթէ գտնում եք, որ վստ ևմ վարվել, ծածկելով թագն սյդ,
 Արդ, ուրախացե՛ք, որ ձեր ժառանգն էլ
 Նույն հանդգնությամբ ձեզ նվաստացնի,
 Դատաստանական ձեր պատկառագրու
 Առյանից պոկի արդարությունը,
 Ոտնահարի ձեր ամբողջ օրէնքը, բրացնի սուրբ.
 Որ հսկում է ձեր անվտանգության և խաղաղ կյանքին:
 Ո՛չ, ո՛չ. ավելին. Եթէ անկուշնի
 Չեր արեայական պայծառ պատկերը,
 Ծալրի, այպանի ձեր փոխանորդին:
 Հանգամանքները լավ կշռադատե՛ք,
 Ենթադրե՛ք, որ դա պատահել է ձեզ հետ.
 Որ հայրը դուք եք և ունեք որդի,
 Հանկարծ լսում եք, որ ձեր այդ որդին
 Անարգել է ձեր թագն ու պատիվը,

Արհամարհել է ձեր օրենքները անասան, անեռ.

Եվ հանդգնորեն անգոսնել է ձեզ:

Եվ պատկերացրե՛ք, որ ձեր անուճից ես հանդես գալով

Ձեր իշխանությամբ զսպել եմ նրան:

Այդ սառն, խոհական կշռույթից հետո դատե՛ք իմ մասին:

Որպես բազավոր ասացե՛ք անկեղծ, անաշատուեն.

Ես ի՞նչ եմ արել, որ անվայել էր իմ բարձօ դիրքին.

Իմ անձին, արքա, կամ գերագույնիս գերագանցությամբ:

ՔԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Դու՛ք նիշտ ե՛ք, միլորդ, և հիանալի կշռում ե՛ք գործը.

Առդ, շարունակե՛ք պահել ձեր ձեռքին կշեռքն ու սուրբ:

Մի՛ վաժազ ունե՛մ, որ ձեր վառքն անի և սպրե՛ք այսօրան.

Մինչև իմ որդին ձեր դեմ մեղանշացած,

Ինձ նման մի օր հնազանդվի ձեզ:

Որ ես էլ սպրե՛մ հորս խոսքեր կրկնելու համար.

«Երջանիկ եմ ես, որ ունե՛մ այդօրան խիզախ մի ծառա.

Որ հանդգնում է օրենքով պատժել իմ իշխան որդուն:

Քիչ երջանիկ չեմ, որ ունե՛մ որդի,

հրե՛ս իր վեհ դիրքը խաճարհեցնում է օրենքի առաջ».

Դու՛ք ինձ բանա դրի՛ք,

Արդար վնի՛ր կր: Ես էլ վնոում եմ՝ անաղարտ սուրն այդ.

Որ մինչև այսօր պատվով ե՛ք կրել, վերադարձնել ձեզ:

Եվ հիշեցնում եմ, որ գործադրե՛ք այն,

Նույնօրան համարձակ, անաշտո ոգով և արդարամիտ,

Ինչպես որ արի՛ք իմ դեմ ուղղելիս: Ահա՛ իմ ձեռքը.

Երիտասարդ եմ, հայր եղե՛ք դու՛ք ինձ,

Ես ձեր շշուկը կհնչե՛մ իբրև բարձրագոչ հորդար.

Հլու վայր կիջնե՛մ կամքս խոնարհած

Փորձով իմաստուն ձեր խորհուրդներին:

Իշխաններ, խնդրում եմ, հավատացե՛՛ք ինձ,

Հայրս հանգչում է իր շիրմում անհոգ,

Քանզի նրա հետ քույրված են անմիշտ

Հոռի կրճերն իմ անառակ կյանքի:

Հորս ոգին է արքնացել իմ մեջ գգաստ, խստադեմ,

Հեզնելու պատիր հույսերն աշխարհի,

Մազրելու բոլոր մարգարեներին.

Բնաշնչելու այն արատավոր, փտած կարծիքը,

Որով իմ մասին մարդիկ դատում են

Ըստ իմ արտաքին խաբուսիկ տեսքի:
 Հպարտ արշունն իմ, որ մինչև այսօր
 Մակընթացել էր սանձարձակ ու ցոփ,
 Ընթացքը փոխած ետ պիտի շարժվի՝
 Միախառնվելու հզոր օվկիանին
 Եվ այսուհետև հոսելու հանդարտ, փառանհոգեան:
 Շաապ պառլամենտ կհրավիրենք, առյան գերագույն,—
 Եվ վստահելի խորհրդականներ կրնորեն մեզ համար,
 Որ մեր երկիրը համաշափ քայլի այն ազգերի նեւ,
 Ոտոնք կատարյալ վարչաձև ունեն,
 Որ պատերազմը կամ խաղաղ կյանք,
 Կամ այդ երկուսը միասին առած,
 Մեզ բնակեցացած կամ ծանրք լինեն,
 Որի մեջ, հայր իմ, առաջին ձայնը ձեզ է արվելու:
 Մեր թագադրության ավարտից հետո,
 Ինչպես քիչ առաջ արդեն հիշեցրի,
 Կհրավիրենք բարձրագույն խորհուրդ:
 Թե աստված օգնեց, որ կառավարենք,
 Վստահ եմ հաստատ ոչ մի դուրս, իշխան,
 Պատճառ չի գտնի երբևէ գաշելու՝
 Տեր, ե՞րբ է Հարբին գահից կորչելու:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Գլուստերչիր: Շեկոյի պարտեզը:

Մտնում են Ֆարստափր, Շեյխն, Սայեհեր, մանկավիկը և Դեվին:

Շեյխ

Ոչ, դուր պետք է անպայման իմ պարտեզը տեսնեք և տաղավարում
 նստած մենք պետք է միասին հաշակենք իմ անցյալ տարվա խնձորները,
 որ ինքս եմ պատվաստել, հեռան էլ ոտենք մի պեակ քեմանի քաղցրավե-
 նիք և դարձյալ ուրիշ ինչ-որ բան: Երբանք, զարմիկ Սայեհնա: Իսկ հետո
 կգնանք քնելու:

ՖԱՐՍՏԱՓՐ

Աստված վկա, դուր հրաշալի կալվածք ունեք և շատ հարուստ:

ՇԵՂՈ

Անպտուղ, անպտուղ, անպտուղ տեղ է: Մենք աղփատ ենք, աղփատ,
պարոն Ջոն: Միայն օգն է անողջարար, հավատացնում եմ: Սեղանը պար-
զիր, Դեվի, սեղանը պարզիր: Այդպես լավ է, Դեվի:

ՖԱԼՍՏԱՅ

Այս Դեվին ձեզ համար ամեն գործ անում է: Նա քե՛ր ծառա է և քե՛ր
անտեսություն կառավարիչ:

ՇԵՂՈ

Լավ սպասավոր է, լավ սպասավոր է, հրաշայի սպասավոր է, պարոն
Ջոն: — Պատարագը վկա, ես լնթրիֆին շատ գինի խմեցի: — Լավ սպա-
սավոր է: Իսկ այժմ նստեցեք, իսկ այժմ՝ նստեցեք: Գուց էլ նստեք, զար-
միկ:

ՍԱՅՆԵՍ

Պարոններ, երգե՛նք:

(*Նրդում է*) Ոտենք և խմենք, բեֆ անենք, խնդանք,
եվ աստծուն փառք ասեմ,
Խորտիկն է առատ,
Տղաները շատ, աղջիկները բանկ,
Խմենք, բեֆ անենք, երգենք ու խնդանք:
Դե խնդանք, խնդանք,
Կյանքը հրեմանք է,
Իսկ հրեմանքը՝ կյանք:

ՖԱԼՍՏԱՅ

Ա՛յ կեզ ուրախ մարդ: Ձեր կենացը, պատվական պարոն Սայլենս:

ՇԵՂՈ

Պարոն Բարդուֆին մի էիչ գինի բեր, Դեվի:

ԴԵՎԻ

Նստեցեք, անուշիկ պարոն, ես հիմա ձեզ գինի կրեւեմ: Մանկլավիկ,
պատվական պարոն մանկլավիկ, դուք էլ նստեցեք: Բարի՛ եկեք, ձեր կե-
նացր: Եթե ոտելիքը չբավարարի՝ գինի խմեցեք: Խնդրում եմ ներողամիտ
լինեք. աստծո տվածով գոհացեք:

Գնում է:

ՇԵՂՈ

Ուրախացե՛ք, պարոն Բարդուֆ, ավելի զվարյ եղեք: Գուց էլ կայտառա-
ցիր. իմ փոքրիկ ռազմիկ:

ՍԱՅԼԵՆՍ

(Երգում է) Լինենք միշտ զվարթ — կի՛նս շար է, շար,
Ամեն կի՛ն դե է, թե կարն, թե երկար:
Ուրախ է քե՛քը, տո՛ն է հրեզանքի,
Երբ մորուքներն են նստած խնջույքի:
Վանե՛նք ցավ ու դարդ,
Լինե՛նք միշտ զվարթ,
Տո՛ն է հրեզանքի:

ՖԱԼՍՏԱՅ

Երբեք մտնովս չէր անցնում, թե պարոն Սայլենսը այսֆան ուրախ-
զվարթ մարդ է:

ՍԱՅԼԵՆՍ

Ո՞վ: Ե՞ս: Մինչև այսօր մեկ-երկու անգամ եմ զվարեացել կյանքում :

Մտնում է Գեվին:

Գեվի

Ահա մի աման ազնվական խնձոր: Ձեզ համար է:

Գնում է Բարդոլֆի առաջ:

Շելլո

Գեվի՛:

Գեվի

Հրամա՛նքդ, տեր իմ: (Բարդոլֆին) Հիմա ես ձեզ կմատուցեմ:— Մի
զավարթ գինի՞, պարոն:

ՍԱՅԼԵՆՍ

(Երգում է) Մի գավարթ գինի տուր, հրաշոդ, հրածին,
Որ խմեմ ցմբուր կեկացն իմ սիրածի —
Ով ստով ուրախ է, նա ապրում է երկար:

ՖԱԼՍՏԱՅ

Փառավո՞ր խոսք է, պարոն Սայլենս:

ՍԱՅԼԵՆՍ

Եվ մենք պետք է զվարեանանք: Գիշերվա ամենահաճելի մասը դե՛ս,
առջևումն է:

ՖԱԼՍՏԱՅ

Ձեր կեանքը, պարոն Սայլենս, երկար կյանք ունենալ:

ՍԱՅԼԵՆՍ

(Երգում է) Թող մի մղոն խոր լինի
Գինուս գավր անհատակ,

Փուլք շէ, լցրեմ դուք գինի,
Տվեմ խմեմ մինչև տակ:

ՇԵՆՈ

Քո կենացը, պատվական Բարդուխ: Եթե սիրտդ որևէ բան է ուզում և շէս պահանջում, շարացիր ուրեմն քո սրտի վրա: (*Մանկկլավիկին*) Կենա՛ցդ, իմ փոքրիկ շարաննի սրիկա, դու էլ բարով ես եկել: Խմում եմ քո կենացը, Բարդուխ, և նմանապես Լոնդոնի բոլոր ազնիվ ասպետներին կենացը:

ԴԵՎԻ

Ես դեռ հույս ունեմ, մեռնելուց առաջ գոնե մեկ անգամ տեսնել Լոնդոնը:

ԲԱՐԴՈՒՅ

Ա՛յ թե կհանդիպեի ձեզ այնտեղ, Դեվի:

ՇԵՆՈ

Պատահազր վկա, դուք այնտեղ երկուտով մի ամբողջ տակառ կցամափեցնեիք: Ճիշտ շէ՛մ ասում, պարոն Բարդուխ:

ԲԱՐԴՈՒՅ

Ճիշտ է, պարոն, և ամեն մեկս՝ կես տակառ:

ՇԵՆՈ

Աստված վկա՛ լավ խոսք էր, շնորհակալ եմ: Այս անպիտանը փեզնից ետ չի մնա, համոզված եղիր: Երբեք չի հահանջի, այդ գծով հատկապես մարզված է:

ԲԱՐԴՈՒՅ

Ես էլ նրանից ետ շէմ մնա, պարոն:

ՇԵՆՈ

Թագավորական խոսք էր: Սա ձեր տունն է, կերե՛ք, խմե՛ք, ուրախացե՛ք: (*Դուռը բախում են*): Դեվի, գնա տես ով է եկել: Հե՛յ, ո՞վ է դուռը ծեծում:

Դեվին գնում է:

ԲԱՐԴՈՒՅ

(*Դիմելով Մայլենսին, որը ցմբուր դատարկել է գավաթը*) Դուք ինձ հետ հավասար խմեցիք, իսկ դա պատիվ է ինձ համար:

ՍԱՅԼԵՆՍ

(*Երգում է*) Օգնիր հասնեմ մեծ պատվի,

Կոչում տուր ինձ ասպետի,

Սամինգո:

Այդպէս շէ՛, միթե:

ՖԱԼՍՏԱՅ

Այդպէս է:

ՍԱՅԼԵՆՍ

Տաննո՛ւմ եմ, ծեւ մարդն էլ երբեմն ինչ-որ բանի պետք է գալիս:

Մտնում է Դեվին:

Գեզի

Տեր իմ, մի ինչ-որ Պիստոլ է եկել արժանիքից և լուրեր է բերել:

ՖԱԼՍՏԱՅ

Արժանիքի՞ց: Թույլ տուր քող նեւս գա:

Մտնում է Պիստոլը:

Բարի եկար, Պիստոլ: Խոսի՛ր:

ՊԻՍՏՈԼ

Աստծո բարին ձեզ միշտ հովանի լինի, պարոն Զոն:

ՖԱԼՍՏԱՅ

Քեզ այստեղ թոցնողը ո՞ր բամբին էր, Պիստոլ:

ՊԻՍՏՈԼ

Ոչ այն շար բամբին, որ ոչ մի լավ բան չի բերում իր հետ: Պատվական ասպետ, դու այժմ ամենաերեւելի և ծանր մարդկանցից մեկն ես թագավորության մեջ:

ՍԱՅԼԵՆՍ

93 Երդվում եմ սուրբ կույտով, որ նա ամենածանր մարդն է, եթե շհաշ-վենք բարսոնցի Պուֆին:

ՊԻՍՏՈԼ

Պո՞ւֆ:

Փո՛ւն, լոի՛ր, անարգ, ստորագույն երկշտ:

Ես Պիստոլն եմ, Զոն, բո բարեկամն ազնիվ,

Շտապ-հապշտապ աշտանակելով մեզ մոտ եմ եկել.

Եվ բերել եմ մեզ ավետիք, հրնվանք,

Ոսկեդէն օրեր, լուրեր թանկագին:

ՖԱԼՍՏԱՅ

Բոլորը պատմիր. բայց մարդավարի. պարզ անգլերենով:

ՊԻՍՏՈԼ

101 Թ՛ֆած աշխարհի և մարդկանց վրա,

Ես Աֆրիկայի մասին եմ խոսում, ուր շատ ոսկի կա:

ՅԱԼՈՏՈՅ

104 Պիղծ, ստո՛ր ասպետ դու ասորեցի, ի՞նչ լուր ես բերել,
Կոֆեառուա արքան փափագ է լսել ճշմարտությունը:

ՍԱՅԼԵՆՍ

105 (Երգում է) Զոն, Սկարլետ և Ռոբին Հուդ...

ՊԻՍՏՈՒ

106 Ավադ, Հելիկոն. և հանդգնո՞ւմ է այս ոհմակն հաշել
Եմ արքայական լուրերի վրա:
Արդ, փութա, Պիստու, և գլուխդ դիր
Դժոխքի կանանց այրող ծոցի մեջ:

ՇԵԼՈ

Պարկեշտ ազնվական, ես չգիտեմ, թե դուք ինչ ազգատոհմից եք:

ՊԻՍՏՈՒ

Ողբա՛, ուրեմն:

ՇԵԼՈ

Ներեցե՛ք, պարոն. եթե դուք արևունիքից եք գալիս և լուրեր եք բերել,
կարծում եմ, որ ձեզ մնում է ընտրելու երկուսից մեկը. կամ այդ լուրերը
մեջտեղ հանել կամ թաքցնել: Իմացե՛ք, պարոն, որ թագավորը
իշխանական որոշ իրավունքներ է շնորհել ինձ:

ՊԻՍՏՈՒ

Ո՛ր թագավորը: Խոսի՛ր, անզգամ, թե չէ մեռած ես:

ՇԵԼՈ

Թագավոր Հենրին:

ՊԻՍՏՈՒ

Հենրի Չորրո՞րդը, թե՞ Հինգերորդը:

ՇԵԼՈ

Հենրի Չորրորդը:

ՊԻՍՏՈՒ

Թ՛ֆած պաշտոնիդ:

Ցնձա՛, պարոն Զոն. քո հեզ գառնուկը բազմել է գահին,
Իբրև թագավոր Հենրի Հինգերորդ: Ճիշտ եմ ասում, Զոն,
Եթե ստում եմ՝ պղծի՛ր ինձ այսպես —
Բթամատդ կոխի՛ր երկու մատիդ մեջտեղ,
Ինչպես անում էր գոռոզ սպարտացին:

ՅԱԼՍՏԱՅ

Ինչպե՛ս: Հին արքան մեռա՞վ:

ՊԻՍՏՈՒ

126 Մեռած է, ինչպես սեպր դասն մեջ: Իմ խոսքը հիշտ է:

ՅԱԼՍՏԱՅ

Շո՛ւտ արա, Բարդուղ, քամբի՛ր իմ ձին: Պարոն Ռոբերտ Շելլո, ուզա-
ծրդ պաշտոնը ընտրի՛ր քաղաքապետության մեջ և դու կստանաս: Իսկ քեզ
վրա, Պիստոյ, ես կրկնակի պատիվներ շող կտամ:

ԲԱՐԴՈՒՅ

Օ՛, հրեմիայից օր.

Այս բախտն ինձ համար քանկ է ասպետի բարձր կոչումից:

ՊԻՍՏՈՒ

Հը՛, իմ բերած լուրերը լա՞վ են:

ՅԱԼՍՏԱՅ

Պարոն Սայլենսին անկողին տարե՛ք: Պարոն Շելլո, լորդ Շելլո, ինչ-
պիսի կոչում կամ պաշտոն սիրող կուզի, այն էլ ընտրի՛ր. բախտի բա-
ժանարարը ես եմ այժմ: Հագի՛ր ոտնամանների, զանգապանների ամ-
բացրո՛ւ. ամբողջ գիշերը մենք աշտանակելու ենք: Օ՛, իմ ֆաղցրիկ Պիս-
տոյ: Շտապի՛ր, Բարդուղ: (Բարդուղը գնում է): Ուրիշ էլ ի՞նչ կա, Պիս-
տոյ, պատմի՛ր: Ի դեպ, մտքիդ մեջ մի լավ պաշտոն որոշի՛ր քեզ համար:
Ոտնամանները, սլարոն Շելլո, ոտնամաններ՝ ուշանում ենք: Գիտեմ,
երիտասարդ քաղաքապետը ուղղակի մաշվում է իմ կարոտից: Կվերցնենք
հենց առաջին հանդիսյաժ մարդու ձիերը: Անգլիայի օրենքները այժմ իմ
իշխանության են ենթակա: Մեռնի՛ նրանց, որոնք ինձ բարեկամ են եղել
և վա՛յ իմ երկրի գլխավոր դատավորին:

ՊԻՍՏՈՒ

144 Գիշատիչները թող նրա լյարդը ֆրեքեն նույնպես:

«Ո՞ր ես, իմ անցած երանելի կյանք». — այդ երգն եմ հիշում:

Ահա՛ այդ կյանքը: Ողջո՛ւյն, բերկրալի իմ երջանկություն:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Զ Ո Ր Ր Ո Ր Դ

Լոնդոն: Մի փողոց:

Մանուս էն դատական ոստիկանները պանդոկի տիրուհի տիկին Վոազին
և Դու Տերչիտին քարշ տարով:

ՏԻՐՈՒՆԻ

Ա՛յս դու, անտանելի սրիկա: Երանի՛ր թե ասավածն իմ հոգին առներ,
միայն թե քեզ տեսնեի կախաղանի վրա: Դու իմ անրակր խախտեցիր
տեղից:

Ա. ՈՍՏԻԿԱՆ

Այս կնոջը գունդաաբլիները հանձնեցին ինձ: Եվ թող երբեք չկասկածի,
որ մենք մտրակով մի լավ ծեծ կտանք նրան: Մրա պատճառով վերջես
երկու մարդ է սպանվել:

ԴՈՒ

Ստո՛ւմ ես, ստո՛ւմ ես, «չանգալ»: Թո՛ղ, ասում եմ քեզ: Օ՛ր, ինչ սմբած
գարշելի դեմք ունես: Չե՛ս տեսնում, որ հղի եմ և կարող եմ վիժել երե-
խային: Լավ կլինեք, եթե դու քո հարազատ մորը այդպես հրմշտելով
տանեիր, բարակաղե՛մ սրիկա, քան թե իմ արգանդի պտուղը վայր ընկ-
ներ:

ՏԻՐՈՒՆԻ

Տ՛եր իմ ասաված, գոնե պարոն Զոնը վրա հասներ: Նա անպայման
արյունոտ դատաստան կատեսներ մեկնումեկի հետ: Ա՛յս, երկնավոր տեր,
Երանի թե այդ կինը վիժեր երեխային...

Ա. ՈՍՏԻԿԱՆ

Այդ դեպքում դու նորից կունենայիր մեկ դյուծին բարձ, իսկ այժմ
16 բնդամենք տասնմեկն ունես: Ես ձեզ հրամայում եմ հետևել ինձ՝ եր-
կուսդ էլ. որովհետև այն մարդը, որին դուք և Պիստոլը մեշտեղ քա-
շելով ծեծել եք՝ մեռավ:

ԴՈՒ

Բայց տես, թե ինչ եմ ասում, նիհար, զգվելի մարդ բուրվառի, այնպի-
սի մի ծեծ տամ քեզ այս արարիչի համար, որ մուխդ մարի: Այս դու,
21 կայազգեստ դատարկասուն, դու, աղտոտ, սովալլով դահին: Թող ես
այլևս կարն չըջազգեստ շհագնեմ, եթե քեզ ջարդոսփշուռ անել չտամ:

Ա. ՈՍՏԻԿԱՆ

Գնա՛նք, գնա՛նք, թափառական ասպետ կանացի շրջազգեստով,
գնանք:

ՏԻՐՈՒՇԻ

25 Տե՛ր երկնավոր, կարելի՞ քան է, որ արդարությունը հաղթի ուժին: Չեմ հավատում, բայց դեռ կտեսնենք:

ԴՈՒ

Գնա՛նք, փուչ արարած, գնա՛նք: Առաջնորդի՛ր ինձ հաշտարար դատավորի մոտ:

ՏԻՐՈՒՇԻ

Գնա՛նք, սովալլուկ շուն:

ԴՈՒ

Թափառաշրջի՛կ մահ:

ՏԻՐՈՒՇԻ

Կմախք անպիտան, չորացած ոսկոր:

ԴՈՒ

Գնա՛նք, սմբած սրիկա:

Ա. ՈՍՏԻԿԱՆ

Շատ լավ: Գնացի՛նք:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ն Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

Հրապարակ վեստմինստեր մենաստանի մոտ:

Մտնում են երկու սպասավոր՝ հրապարակում եղեգներ շաղ տալով:

Ա. ՍՊԱՍԱՎՈՐ

1 Եղեգը բիշ է, էլի՛ շաղ տուր, էլի՛ շաղ աուր:

Բ. ՍՊԱՍԱՎՈՐ

Փողերը երկու անգամ արդեն հնչեցին:

Ա. ՍՊԱՍԱՎՈՐ

Նրանք ժամը երկուսին հագլիվ վերադառնան քաղաղությունից:
Ավելի՛ աշխույժ, ավելի՛ աշխույժ:

Սպասավորները գնում են:

Մտնում են Ֆալստաֆը, Շելլոն, Պիստոլը, Բարդոլֆը և մանկավիկը:

ՅԱԼՍԱՅ

Այստեղ, իմ կողքին կանգնե՛ք, պարոն Ռոբերտ Շեյլո: Ես կստիպեմ թագավորին, որ ձեզ ամեն տեսակ բարիք անի, ինչ-որ ձեր սիրտը ուզում է: Մեր մոտով անցնելու ժամանակ ես նրան աչքով կանեմ և դուր կտեսնե՛ք, թե նա ինչպիսի քաղցրությամբ կվերաբերվի ինձ:

ՊԻՍՏՈՒ

Թող աստված քո բոլորքին զորություն տա, բարի ասպեա:

ՅՍՂՍՍՅ

Ե՛կ այստեղ, Պիստոլ. կանգնի՛ր իմ թիկունքին: (ՇԵՆՆՈՅԻՆ) Ա՛յս, ինչքան ցավալի է, որ ես չհասցրի նոր զգեստներ պատվիրել մեզ համար: Սիրով կծախսեի այն քան հազար շիլլինգը, որ փոխ առա ձեզնից: Բայց հոգ չէ. մեր այս համեստ տեսքը, ի դեպ, ավելի լավ է: Դա ցույց կտա արժային ժամ առաջ տեսնելու իմ սաստիկ եռանդը:

ՇԵՂՈ

Եվ դա այդպես է:

ՅԱԼՍԱՅ

Դա ցույց կտա իմ անկեղծ սերը:

ՇԵՂՈ

Եվ դա այդպես է:

ՅԱԼՍԱՅ

Իմ նվիրվածությունը:

ՇԵՂՈ

Այդպես է, այդպես է, այդպես է:

ՅԱԼՍԱՅ

Անմիջապես կերեա, որ ես իմ ձին սաստկորեն քշել եմ գօր ու գիշեր և բոլորովին մոռացել եմ, նույնիսկ մտնովս չի անցել. համբերություն չեմ ունեցել իմ հագուստը փոխելու:

ՇԵՂՈ

Միանգամայն նշմարիտ է:

ՅԱԼՍԱՅ

Եվ անհա կանգնած եմ այստեղ, հանապարհի վրայ ու մեջ կորած և սաստիկ քրտնելով՝ նրան տեսնելու անհուն փափագից. շմտածելով ուրիշ ոչ մի բանի մասին, իմ բոլոր մյուս գործերը հանձնելով մոռացության.

կարծես թե ես ստիչ ոչ մի հոգս չունեմ և իմ միակ հոգսը նրան տեսնելն է:

ՊԵՍՏՈՒ

29 Այո, semper ident. չէ, որ absque hoc nihil est— այսինքն կատարյալ է:

ՇԵՂՈ

Այդպես է արդարև:

ՊԵՍՏՈՒ

Սիրելի՛ ասպետ, պիտի բորբոքեմ քո ազնիվ Աստղը
Ֆասմամբ մոլեգին.

Քո Դու Տերշիտը, մտխիղ, երազիդ շքնազ Հեղինեն
Տանջվում է փակված մի ժանտ բանտի մեջ,
Ուր նեղված է նա

Ամենավայրագ և կեղտոտ ձեռքով:

Բարձրացի՛ր, վրեժ, մութ խորխորատից

38 Ալեխոյի ժանտ մահացու օձով,

Չէ՞ որ Տերշիտը զնդանի մեջ է: Հավատա խոսքիս.

Պիստոլը բնավ չի ստել կյանքում:

ՅԱՆՍԱՅ

Ես նրան կազատեմ:

Խորհում ցնծագին աղաղակներ և փողնարություն:

ՊԵՍՏՈՒ

Իմ դեմ օվկիանն է կարծես որոտում.

Փողերն են բնվում զիյ, բարձրաշառաչ:

Մտնում է, բազավորը շխտմյով: Ետանց մեջ է նաև
զլիավոր դատավորը:

ՅԱՆՍԱՅ

Աստված պահապան, իմ բազավոր Հել:

ՊԵՍՏՈՒ

Երկի՛նք բող քեզ պահի, պաշտպանի.

Ո՛վ փառքի բնձյուղ մեծահոչակ տան:

ՅԱՆՍԱՅ

Աստված քեզ նեցուկ, մանչուկ իմ անզին:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

(Գլխավոր դատավորին) Այդ անհեթեթին բան հասկացրե՛ք, միլորդ

ԳԼԵԱՎՈՐ ԳԱՏԱՎՈՐ

Ձեր խելքը տե՛ղն է: Ո՛ւմ հետ էք խոսում:

ՅԱՍՏԱՆ

Քեզ հետ, իմ արքա, իմ Արամազդի, իմ հոգլակի հետ:

ԹԱՅԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Քեզ շեմ նանաշում: Աղոթի՛ր, ծերուկ,
 ձերմակ մազերը խեղկատակների դեմքին պատշան շեն:
 Իմ երազի մեջ վաղուց տեսել եմ այդպիսի մի մարդ,
 Շվայտ, գինեմուլ և գինուց փվված, այդպես ծեր և պիղծ,
 Բայց ես զարթնել եմ և այդ երազը զարշելի է ինձ:
 Եվ ազ գբալվիր քո մարմնով աչժմ.
 Եվ ավելի շատ խնամք տար հոգուդ:
 Վե՛րջ տուր գեխուրյան: Իմացի՛ր մի բան.
 Այն գերեզմանը, որ հորանջելով քեզ է սպասում,
 Եռակի լայն է մեր սովորական գերեզմաններից:
 Մի հանդգնիր ինձ պատասխանելու նիմար կատակով
 Եվ մի կարծիր թե ես այն եմ, ինչ որ Լղել եմ առաջ:
 Աստծուն է հայտնի և կհամոզվի աշխարհը շուտով,
 Որ իմ անցյալը ես դեմ եմ նետել
 Եվ դեմ կնետեմ բոլոր այն մարդկանց,
 Որոնք անցյալում եղել են ինձ հետ:
 Երբ լսես, որ ես նախկինն եմ դարձալ,
 Շտապիր ինձ մոտ և եղիր կրկին
 Իմ առաջնորդը և սնուցիչը գեխ, շվայտ կյանքիս:
 Մինչ այդ, պատրաստվիր մեկնելու ախար: Ես վանո՛ւմ եմ քեզ,
 Ինչպես վանել եմ բոլոր այն մարդկանց,
 Որոնք շարաշար մոլորեցրին ինձ:
 Մեք անձին մոտ զայ արգելված է ձեզ.
 Տաս մղոն հեռու, — մերձավոր չափը այդ է ձեզ համար:
 Խախտելը՝ մահ է: Ապրելու համար միջոցներ կտամ,
 Որ կարիքը ձեզ չբռնադատի շարիք գործելու:
 Իսկ եթե լսենք, որ դուք ուզվել եք,
 Կտանն և պաշտոն, ըստ ձեր ուժերի և գիտելիքի:
 Իմ խոսքն ի կառա՛ր: Պարոն դատավոր,
 Այս մարդուն շուտապ ուղարկե՛ք ախար:
 Շարժվե՛նք:

Թագավարը իր շխտմբով գնում է:

ՅԱԼՍԱՅ

Պարոն Շելլո, ես ձեզ պարտք եմ քսան հազար շիլլինգ:

ՇԵԼԼՈ

Այո, պարոն Ջոն, և խնդրում եմ, որ այդ գումարը վերադարձնեմ: Ես տուն եմ գնում:

ՅԱԼՍԱՅ

Հազիվ քե կարողանամ. պարոն Շելլո: Բայց մի վշտացե՛ք ձեր տեսածի համար: Շոտոսկ մարդ են ուղարկելու իմ ևսեկից և ինձ առանձին կանչելու են արքայի մոտ: Գիտե՛ք ինչ, նա ինձ հետ պետք է այդպես էլ վարվեր բոլորի ներկայությամբ: Մի՛ վախեցե՛ք, որ դուք այլևս չե՛ք առաջադիմի, չե՛ք բարձրանա: Ես դեռ կլինեմ այն ուժեղ մարդը, որ պիտի առաջ մղի, մեծացնի և ուռեցնի ձեզ:

ՇԵԼԼՈ

Այդ բանը հնարավոր է անել ինձ ձեր բանկոնը հազցնելով և մեջք հարդ լցնելով միայն, ուրիշ կերպ դժվարանում եմ պատկերացնել: Շատ եմ խնդրում, պարոն Ջոն, վերադարձե՛ք գոնե ասա հազարը իմ աված քսան հազարից:

ՅԱԼՍԱՅ

Ձեզ բան եմ ասում. պարոն, ես իմ խոստումը կկատարեմ: Այն, ինչ որ դուք հիմա լսեցիք, դա պարզապես դիմակ էր. ուրիշ ոչինչ:

ՇԵԼԼՈ

Ես վախենում եմ, որ մինչև այդ դիմակը պատույթի, դուք արդեն մեռած կլինե՛ք, պարոն Ջոն:

ՅԱԼՍԱՅ

99 Մի վախեցե՛ք դիմակներից: Գնանք հաշելու: Երբանք, տեղակալ Պիտտոլ: Երբանք, Բարդոլֆ: Շատ չի ուշանա, հենց այսօր երեկոյան արքան իմ հետեից մարդ կուղարկի:

Մտնում են իշխան Ջոնը, Գլխավոր դատավորը
և պահակախումբը:

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱՎՈՐ

102 Ջոն Ֆալստաֆը ձերբակալված է: Շտապ տարե՛ք Ֆլիտ. Այս մարդկանց նույնպես՝ իր ընկերներին:

ՅԱԼՍԱՅ

Միլո՛րդ, միլո՛րդ:

ԳԼԽԱՎՈՐ ԳԱՏԱՎՈՐ

Ժամանակ չկա՛: Հետո կլսեմ:
Շուտ տարե՛ք սրանց:

ՊԻՍՏՈՎ

107 Si fortune me tormente, sperato, me contento.

Ռոյորք գնում են. մնում են իշխան Ջոնը և գլխավոր դատավորը:

ԻՇԽԱՆ ՋՈՆ

Արքայի վնիոր իմ սրտին մտա է:
Նա մտադիր է բոլոր վաղեմի իր ընկերների
Կյանքն ապահովել.
Բայց բոլորին էլ ախար ուղարկեց և ետ չի բերի.
Մինչև որ նրանք իսպառ չաղղվեն
Եվ վաչկեն իրենց խելացի վարժով ու համեստությամբ:

ԳԼԽԱՎՈՐ ԳԱՏԱՎՈՐ

Եվ դա այդպես է:

ԻՇԽԱՆ ՋՈՆ

Արքան հրավիրե՛ց պատվամենտի նիստ:

ԳԼԽԱՎՈՐ ԳԱՏԱՎՈՐ

Այո՛, հրավիրեց:

ԻՇԽԱՆ ՋՈՆ

Երաշխավոր եմ. մեկ տարի շանցած.
Մեր սուրբ կուղղվի Ֆրանսիայի դեմ:
Այդ մասին մի հավք խիստ շարաքաստիկ
Իր երգով գերեց արքային սաստիկ:
Չգնա՞նք, միլորդ:

Գնում են:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Խոսում է վերջերգակը

Նախ իմ երկյուղը, ապա իմ խոնարհ ողջույնը, և, վերջապես, իմ խոսքը: Երկյուղիս պատճառը ձեր դժգոհությունն է, խոնարհ ողջույնս՝ իմ պարտականությունը, իսկ խոսքը նրա համար է, որ ձեզանից ներողություն խնդրեմ: Եթե դուք լավ խոսք եք ակնկալում այժմ, ես կորած եմ, ուրեմն, սրովհետև այն, ինչ որ ունեմ ասելու, ինքս եմ շարադրել, իսկ ինչ որ իսկապես պետք է ասելի, վախենում եմ՝ եղածը փչացնի:

Բայց դեպի գործ, և այնուամենայնիվ, ես կփորձեմ: Թող հայտնի լինի ձեզ, իսկ դա ձեզ քաջ հայտնի է, որ ես վերջերս հանդես եկա ձեր առաջ մի ահան քառերգության վերջում, խնդրելով ներողամտությունը այդ պիեսի համար և խոստանալով ձեզ մի ավելի հաջողված պիես: Ես մտադիր էի իսկապես ձեզ պարտահատույց լինել հենց այս պիեսով, որը երե անևարական նավի պես անհաջողությամբ վերադառնա ծովային ուղևորությունից, ուրեմն ես կոտր կրնկնեմ, իսկ դուք, իմ ազնիվ պարտատերեր, կտուժեք շարաշար: Ես ձեզ խոստացա ներկայանալ այստեղ և ահավասիկ կանգնած եմ ձեր առաջ և ինձ հանձնում եմ ձեր ներողամտությանը: Պարտի մի մասը գիջեմ, իսկ մի մասը ես ձեզ կվճարեմ, և, ինչպես պարտապանների մեծ մասն է անում, կխոստանամ ձեզ հույժ անչափելին:

Եթե իմ լեզուն անկարող լինի համազել ձեզ, որ իմ պարտքը հատուցված է, չե՞մ հրամայի արդյոք, որ ես գործի դնեմ իմ ոտները: Ճրջմաբիտ է. պարտի պիմաց կախավելը բավական թերև վնար է, բայց մաքուր խիղճը թելադրում է պարտահատույց լինել որևէ հնարավոր բավականությամբ, ուստի և ես պատրաստ եմ դիմելու նաև այդ միջոցին: Համոզված եմ, որ այստեղ ներկա գտնվող բոլոր ազնվական կանայք արդեն ներեցին ինձ, իսկ եթե ազնվական պարոնները չեն ներում, կնշանակե պարոնները համաձայն չեն տիկիկների հետ, մի բան, որ բոլորովին անսնված չէ մի այսպիսի ընտիր հավաքի մեջ:

Եվս մի խոսք, խնդրում եմ: Եթե դուք պես հագեցած չեմ յուզալի կերակուրներից, ապա մեր խոնարհ հեղինակը կշարունակի իր պատմությունը, պարոն Ջոն Ֆայտաֆոլ հանդերձ, և ձեզ կզվարնացնի. ցույց տալով Ֆրանսիայի շքնադագեղ Կառարիներին: Այդ պատմության մեջ, որքան հայտնի է ինձ, Ֆայտաֆոլ մեռնելու է ուժեղ քրակից. եթե ձեր անողոք դատավեժը արդեն սպանած չլինի նրան: Չէ՞ որ Օլդֆալը նահատակի մահով մեռավ, իբրև մարտիրոս, մինչդեռ սա բոլորովին ուրիշ մարդ է: Իմ լեզուն հոգնեց: Երբ իմ սրունքներն էլ կհոգնեն, ես ձեզ կմաղթեմ բարի գիշեր: Եվ ապա այսպես ծունկի կիջնեմ ձեր առաջ. բայց իսկապես աղոթելու միայն բազուկու համար:

ՀԵՆՐԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ



Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ե Ր

ՀԵՆՐԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԸ

- | | | |
|--|---|--|
| ԴՈՒՔՍ ԳԼՈՍՏԵՐ | } | բազավորի եղբայրները |
| ԴՈՒՔՍ ԲԵԴՅՈՐԴ | | |
| ԴՈՒՔՍ ԷՔՍԵՏԵՐ, | } | բազավորի հորեղբայրը |
| ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ, | | |
| բազավորի հորեղբորորդին | | |
| ԿՈՄՍ ՍՈԼՍԲԵՐԻ | | |
| ԿՈՄՍ ՎՈՐՎԻԿ | | |
| ՔԵՆՏՐԲԵՐՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ | | |
| ԻԼՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ | | |
| ԿՈՄՍ ՔԵՄԲՐԻՋ | } | դավադիրներ ընդդեմ բազավորի |
| ԼՈՐԴ ՍԿՐՈՒՊ | | |
| ԹՈՄԱՍ ԳՐԵՅ | | |
| ԹՈՄԱՍ ԷՐՊԻՆԳԵՄ | } | սպաներ Հենրի բազավորի բանակում |
| ԴՈՎԵՐ | | |
| ՅԼՅՈՒԼԵՆ | | |
| ՄԱՔ-ՄՈՐԻՍ | | |
| ՋԵՄԻ | | |
| ԲԵՏՍ | } | հույն բանակի զինվորներ |
| ՔՈՐՏ | | |
| ՎԻԼՅԱՄՍ | | |
| ՊԻՍՏՈԼ | } | Ֆալստաֆի նախկին ծառաները, այժմ զինվաճառներ |
| ՆԻՄ | | |
| ԲԱՐԴՈԼՖ | | |
| ՄԱՆՋՈՒԿ, սրանց ծառան | | |
| ԲԱՆՔԵՐ | | |
| ԿԱՌԼՈՍ ՎԵՅՆԲՐՈՐԴ, Ֆրանսիա բազավոր | | |
| ԼՅՈՒԴՈՎԻԿ, դռփինը | | |
| ԴՈՒՔՍ ԲՈՒՐԳՈՒՆԴԻ | | |
| ԴՈՒՔՍ ՕՌԼԵԱՆ | | |
| ԴՈՒՔՍ ԲՈՒՐԲՈՆ | | |
| ՋՈՐԱՊԵՏ (գունդստար) Ֆրանսիա | | |
| ՌԱՄՐՅՈՒՐ | } | Ֆրանսիացի մեծատոհմիկ աստիճանավորներ |
| ԳՐԱՆՊՐԵ | | |
| ՀԱՐՇԼԵՐԻ ԱՄՐՈՑԱՊԵՏԸ. | | |

ՄՈՆԺՈՒՄ, ֆրանսիացի մունեստիկ
ՅՐԱՆՍԻՈ ԴԵՍՊԱՆՆԵՐ

ԻԶԱԲԵԼ, Ֆրանսիո թագուհին

ԿԱՏԱՐԻՆԵ, դուստր Կառլոսի և Իզաբելի

ԱԼԻՍ, իշխանուհի Կատարինեի նաժիշտը

ՏԻԿԻՆ ՎՌԱԶ, Պիստոլի կինը, Իսաչիփ պանդոկի նախկին տիրուհին

ԲԵՄԻ ԽՈՍՆԱԿԸ

Լորդեր, պալատական տիկիներ, սպաներ, զինվորներ, սուրհանդակներ և սպասավորներ

Տեսաբուժը՝ նախ Անգլիա, այնուհետև՝ Ֆրանսիա:



ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Կ

Մտնում է Քեմի խոսնակը:

ԲԵՄԻ ԽՈՍՆԱԿ

Օ՛, եթե մուսան վեր առափվելով
Նրեակայության ամենապայծառ երկնում շողար
Ներշնչելով, որ այս տեսարանը մի արֆունիֆ է
Եվ իշխանները՝ գործող դերասան,
Միապետները՝ դանլինում նստած հանդիսականներ,
Այնժամ ուղղաշունչ Հենրին կրնդուներ
Իրեն խիստ հատուկ կերպարն Արևսի
Եվ դարանակալ շների նման
Սով, հրդեհ և սուր իր գարշապարք պիտի լիզեին:
Ներեցե՛ք, սակայն, ազնիվ պարոններ,
Որ ստորնագույն ու տափակ միտքը
Համարձակվեց ձեզ այս թատերական
Շինվածֆի թշվառ բեմահարթակում
Ներկայացնելու մի նյութ այդքան վեհ:
Այս փոֆրիկ բեմը, աֆաղաղների այս կովատեղին,
Կարո՞ղ է միթե Ֆրանսիո արձակ դաշտերն ընդգրկել,
Կտեղավորվե՞ն միթե փայտաշեն այս շրջանակում
Այն մարտական գոռ սաղավարտները,
Որ Ածինկուրի պատերը ահեղ շոփնդով լցրին:
Օ՛, ներեցե՛ք մեզ. քանի որ փոֆրիկ տարածության մեջ
Մի թյուր, կեղծ պատկեր կարող է նշան լինել միլիոնի,
Ուստի թույլ տվեք, որ այդ վիթխարի թվաքանակը
Ձեր երեակայության գործությանն հանձնենք:

Արդ, պատկերացրե՛ք, որ այս պատերի շրջափակի մեջ
 Երկու մեծագոր տերութուններ կան,
 Որոնց մեջտեղում, — նրանց խոլական մերձ նակատները
 Իրարից կիսած, — շառաչում է մի նեղ ահեղ օվկիան:
 Մեր անկատարը ձեր մտքի ուժով կատարյալ դարձրե՛ք,
 Քեմի մի մարդը հազար հաշվեցե՛ք,
 Երևակայածը մտքով սաստկացրե՛ք:
 Երբ նժույգների մասին եեմ խոսում, այնպես խարհեցե՛ք,
 Որ դուք տեսնում ե՛ք, թե ինչպես հողը
 Թնդում է նրանց գոռ սմբակներից:
 Մեր արժաներին դուք պետք է մտքով նոխ զգեստ հագցնե՛ք
 Եվ տեղափոխե՛ք մի տեղից մյուս.
 Ժամանակների վրայից արագ ցատկ կատարելով
 Եվ տարիները խտացնելով մի հակիրճ ժամի մեջ:
 Այդ գործում եթե օգնություն է պետք,
 Քեմի հոսանակը պատրաստ է իսկույն օգնության գալու,
 Իբրև նախերգակ մի բան եմ խնդրում — համբերանք խոնարհ,
 Ուշադիր դիտել և ապա՝ դատել պիեսը արդար:

Գնում է.

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Լոնդոն: Նախասենյակ թագավորի պալատում:

Մտնում են Քենարբերու արքեպիսկոպոսը և Իլու եպիսկոպոսը:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Իմացե՛ք, միլորդ, որ համայնքների պալատը նորից
 Մեզ սպառնում է օրինագծով:
 Այդ հարցը դրվեց մեռած արքայի
 Գահակալության տարում տասնմեկ,
 Բայց գժտությունը և խոռվահույզ ժամանակները
 Վերջակետ դրին վիճարանության:

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Իսկ ինչպե՞ս կանխենք այդ վտանգն այժմ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Մտածել է պետք. օրինագիծը եթե ընդունվեց,
 Մեր ստացվածքի լավագույն մասը անդարձ կորած է:

Քանզի աշխարհիկ բոլոր նողերը,
Որ մեռնողները հրիտակել են սուրբ եկեղեցուն,
Կիսվեն մեզնից: Դրանց հասույթով
Նրանք ուզում են հոգալ պալատի բովանդակ ծախսը,
Պահելով հազար հինգ հարյուր ասպետ և տասնհինգ կոմս,
Նաև վեց հազար և երկու հարյուր ընտիր զինակիր:
Իսկ բորոաների և ասրիքն առած ձեռերի համար,
Որ աշխատանքի այլևս պետք չեն,
Կառուցելու են հարյուր բարեկարգ անկելանոցներ:
Դրանից բացի, մենք պարտավոր ենք
Թագավորական գանձարան մուծել
Տարեկան հազար զրնգուն ոսկի:
Օրինագիծը այդպես է հուշում:

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Լա՛վ ախորժակ է:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Մեկեն ուզում են մեզ սնանկացնել:

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ինչպե՞ս կանխենք այդ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Մեր արքան սաստիկ ողորմած է, բարի:

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Եվ անկեղծ սիրող սուրբ եկեղեցուն:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ջահել օրերի վարնոց ընթացքը այլևս չկա:
Հազիվ էր շունչը իր թագավոր հոր մարմինը լիել,
Երբ զավակի մեջ բույն դրած վայրի անզուսպ կրքերը
Մարեցին հանկարծ: Եվ ակնթարթում
Բանական միտքը հայտնվեց ինչպես հրեշտակապետ
Եվ նրա միջից անդարձ վտարեց մեղսոտ Ադամին,
Նրա մարմինը դարձնելով դրախտ,
Սուրբ բնակավայրը հրեշտակների:
Ոչ ոք դեռ երբեք այդքան սրբնթաց չի դարձել զիտուն,
Բարեփոխումի նման բուսն հորձանք
Այդքան խելահեղ չի սրբել երբեք մեղքեր ու հանցանք,

Եվ ոչ էլ Հիդրան բազմագլխանի կամակորության
Հոգու ընդերքն է լքել այս ֆան շուտ,
Ինչպես եղավ այս բագավորի հետ:

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Վերափոխումը հիանալի է:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Իմացե՛ք, թե նա ինչպես է դատում հավատի մասին,
Եվ հիացումով, ամբողջ էությանը ցանկություն հայտնե՛ք,
Որ արքան դառնա մեզ հոգևոր տեր:
Ասացե՛ք, որ նա այդ գործին լրիվ ֆաշահմունակ է:
Եթե ակնարկի պատերազմի մասին,
Հայտնե՛ք, որ ուղղի անեղ թնդյունը
Դուրս պետք է լսե՛ք իբրև ընծայված մի երաժշտություն:
Քաղաքականությունից խոսե՛ք նրա հետ
Եվ նա կֆանդի գործյան հանգույցը
Իր ծնկակապից ավելի արագ: Երբ նա խոսում է,
Ազատ, արտոնյալ ֆամին և լուսմ
Եվ զարմանք մունջ՝ դարանում և մարդկանց ականջների մեջ,
Որ ծածուկ շորթի ֆաղցրագույն մեղր նրա շուրթերի:
Որ կյանքի արվեստն ու գործնականը իբար գուգուրել՝
Նրա տեսության անկյունաքարն է:
Զարմահալի է, ինչպե՛ս նա դարձավ այդչափ իմաստուն,
Նա անձնատուր էր չէ՞ որ ընդունայն կյանքի ընթացքին,
Տգետ, բիրտ, վայրագ և ծանձաղամիտ ընկերների հետ:
Խրախնանքների, մոլի խաղերի
Եվ գեխության մեջ օրերը վառնեց.
Բնավ չունեցավ որևէ մղում գիտության հանդեպ,
Առանձնանալը, անշատ ապրելը խորթ էր իր համար,
Նա այնտեղ էր միշտ, ուր աղմուկ, ընկեր և բազմություն կար:

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Մորին անում է Եղիշչների տակ.
Ազնիվ պառուր փարթամանում է և հասունանում
Ժանտ պտուղների հարևանությամբ:
Լշխանն էլ այդպես իր ազնիվ խոհը
Բիրտ մոլեգնության ֆոդի տակ ստավ և, անտարակույս,
Բանական միտքը գորացավ ինչպես

Ամուսն կանաչն է անում գիշերով
Անտես և, սահայն, անման մեջ համառ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Անշուշտ այդպես է: Մեծ հրաշքների դարը անցել է,
Մենք պարտավոր ենք մեր շուրջ կատարվող
Երևույթների պատճառը փնտրել:

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Բայց, ազնիվ տեր իմ,
Ինչպե՞ս կանխենք այդ օրինագիծը,
Որն համայնների պարստն է պնդում: Դրան մեր արևան
Կո՞ղմ է, քե դեմ է:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Անտարբեր է կարծես,

Բայց ավելի շատ հակված է մեր կողմ,
Քան սիրալիր է հակառակ կողմին պաշտպան կանգնելու:
Ես ֆրանսիական գործերի խնդրով, որ հրատապ են,
Հենց նոր խոսեցի թագավորի հետ հանգամանորեն
Եվ մեր հոգևոր խորհրդի կողմից առաջարկեցի
Մի պատկանելի գումար տալ նրան,
Ավելի խոշոր. քան երբեկոց հոգևոր դասը
Տվել է նախորդ թագավորներին:

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Այդ առաջարկը ինչպե՞ս ընդունվեց:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Մեծ հավանությամբ,
Ցուցաբերելով շատ նկատելի հետաքրքրություն,
Բայց շհասցրեց ինձ երկար լսել,
Որ օրինական իր իրավունքի
Մթին ծալքերը բացատրեմ իրեն,
Մի քանի տարբեր դիտության վրա,
Եվ առանձնապես իր իրավունքը
Ֆրանսիո թագի և գահի հանդեպ,
Որն հաստատված է իր մեծ պապ արքա էդվարդի կողմից:

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի՞նչը խանգարեց ձեր ասուլիսին:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ճիշտ այդ միջոցին Ֆրանսիո դեսպանը
Ունկնդրություն խնդրեց: Եվ կարծեմ հասավ ժամը դեսպանի:
Չորսը զարկե՞լ է:

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ժամը չորսն է, այո:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ներս մտնենք ուրեմն, դեսպանին լսենք.
Թեպետ կարող եմ նախապես հայտնել,
Թե ֆրանսիացին ինչ է խոսելու:

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Գնա՛նք: Փափագ եմ լսել դեսպանին:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Նույն վայրը: Ընդունարան:

Մտնում են Հենրի քազավորը, Գլոստերը, Ռեյֆորդը, էֆեսերը,
Վորվիկը, Վեսամոյենը և շֆախամբը:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Ո՞ր է պատվարժան լորդ Քենտրբերին:

ԷՔՍԵՏԵՐ

Այստեղ չէ, արքա՛:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Ուղարկե՛ք կանչեն, բարի հորեղբայր:

ՎԵՍՏՄՈՌԱԿԵՂ

Ներս հրավիրե՞նք դեսպանին, տեր իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Դեռ շուտ է, զարմիկ: Դեսպանից տուաչ մենք պետք է վճարենք
Մեզ և Ֆրանսիային խիստ վերաբերող
Մի մտահոգիչ, ծանրակշիռ հարց:

Մտնում են Քենտրբերու արհեստակուպսը և Էլու Եպիսկոպոսը:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Աստված իր բոլոր հրեշտակներով
Պահապան լինի սուրբ գահիդ, արեա,
Եվ երկար բազմած պահի ձեզ այնտեղ:

ԹԱԿԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Շնորհակալ եմ:

13 Իմաստուն լորդ իմ, անձամբ խնդրում եմ, պարզաբանե՛ք մեզ
Ըստ եկեղեցու հասկացողության և արդարորեն,
Սալիք օրենք, որ ընդունված է Ֆրանսիայի մեջ
Արդյո՞ք խափանում կամ հաստատո՞ւմ է
Մեր պահանջները այդ երկրի վրա:
Թող ների աստված, իմ հավատարիմ և թանկագին լորդ,
Եթե դուք կեղծե՛ք, թյուր մեկնաբանե՛ք,
Կորացնե՛ք, թե՛քե՛ն ձեր իմացության շիտակ ընթացքը,
Կամ մեղքե՛ք բառնա՛մ ձեր ազնիվ հոգուն
Կարծեցյալ, տարտամ իրավունքները հիմք ընդունելով
Ճշմարտությանը սաստիկ անայտշան բնածին գույնով:
Ասածուն է հայտնի, թե որքան ծաղկուն, քաջաոռոյշ կյանքեր
Զոհ պիտի դառնան երկայնակության.
Որ հարգարժանդ պատրաստ է դրդել:
Լավ խորհե՛ք, ուրեմն, գոռ պատերազմի սուրբ բնած է,
Մի ստիպե՛ք մեզ վեր բարձրացնելու:
Ասածո անունով պարտադրում ենք ձեզ. որ զգուշանա՛ք,
Քանզի չեն կարող երկու այսպիսի
Մեծ տերություններ բախվել միմյանց
Առանց ծով արյան գետեր թափելու: Իսկ անմեղների
Թափած արյունը աենչ է վրեժի, ողբ է ցավագին,
Նզովք նրա դեմ, ով մոլորությանը սուր է հեռանում՝
Կարնատե կյանքի ծաղկունքն հնձելով:
Այս երդմամբ, լորդ իմ, խնդրում եմ սկսե՛ք,
Իսկ մենք կլսենք ի սրտե՛ս անկեղծ հավատ սաժելով,
Որ ինչ որ ասե՛ք՝ լվացված է ձեր խղճմտանքի մեջ.
Ինչպես անդրանիկ մեղքը մաքրվեց սուրբ մկրտությանը:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Լսե՛ք, ուրեմն, իմ բարի արեա, և ավագանի,
Որ կոչված ե՛ք ձեր կյանքով ծառայել
Այս վսեմ գահին: Ֆրանսիո հանդես

Չեր պահանջի դեմ խոչընդոտ չկա:

Միակ արգելք այս մի օրենքն է,

43 Որ Փարամոնդն է իբրև թե դրել.

In terram Salicam mulieres ne succedant,

«Սալիքի երկրում կինը չի կարող գահը ժառանգել»:

Ֆրանսիացիք սխալմամբ համարում են այն ֆրանսիական հող,

Իսկ Փարամոնդին՝ կանանց օրենքին արգելք ստեղծող:

Մինչդեռ այդ երկրի հեղինակները նշտիվ պնդում են,

Որ Սալիք հողը Գերմանիայումն է.

Սալա և էյրա գետերի մեջտեղ:

Ուր Կառլոս Մեծը սախերին հաղթեց

Եվ ֆրանկներին հաստատեց նրանց հողերի վրա:

Իսկ ֆրանկները խորշելով գերման կանանց պիղծ վարքից

Օրենք մտցրին, որ Սալիքի մեջ

Կինը զրկվում է գահ ժառանգելու իրավունքներից:

Սալիքի հողը, ընկած այդ երկու գետերի միջև,

Մեյսեն է կոչվում Գերմանիայում այժմ:

Ինչպես տեսնում եմ, Սալիք օրենքը

Չի նախատեսված Ֆրանսիո համար:

Ոչ էլ ֆրանսիացիք Սալիքը գրավել են

Փարամոնդ արքայի իշխանության օրոք,

Այլ նրա մահից ուղիղ չորս հարյուր բան տարի անց,

Իգուր կարծելով, թե այդ օրենքի հիմնադիրը նա է:

Նա վախճանվել է փրկչի ծնունդից

Քառուրդ դար հետո, վրան գումարած չորս հարյուր տարի:

Իսկ Կառլոս Մեծը սախերին հաղթել

Եվ ֆրանկներին բնակեցրել է Սալայի հովտում

Ուր հարյուր հինգին: Տարեգիրները պնդում են նույնպես,

Որ արքա Պիպին, որ Չայլդրիկին գահընկեց արավ,

Պահանջեց Ֆրանսիո թագին ափրանալ

Իբրև գլխավոր ժառանգ Բլիքհիլդի,

Իսկ սա աղջիկն էր արքա Լոթարի:

Կապետը նույնպես, որն հափշտակեց

Լոթարինգացի Կառլոսի թագը,

Որ Կառլոս Մեծի միակ արական ժառանգն էր ստույգ. —

Կամենալով իր տիտղոսն ամրացնել

Կեղծ նշմարության տարտամ սովերով, —

Իրականի մեջ թեև դա կեղծ էր, անարժան ու փուշ, —

Նա իր ծագումը Շառլոմանի դուստր Լինգարին զողեց,
 Իսկ Շառլոմանը որդին էր արքա Լյուդովիկոսի,
 Լյուդովիկն էլ՝ որդին Մեծն Կառլոսի: Ահա՛ քե ինչու
 Այդ հափշտակիչ Կապետի ժառանգ
 83 Արքա Տասներորդ Լյուդովիկոսը
 Ֆրանսիո գահին հանգիստ շունեցավ,
 Թագը գլխին էր, խիղքը վրդոված,
 Մինչև հաջողվեց ապացուցելու,
 Որ Իզաբելը, իր պառավ տատը, շինաղ թագուհին,
 Ծագմամբ կապվում է էրմինգարի հետ ուղղակի գծով,
 Իսկ էրմինգարը լոթարինգացի Կառլոսի դուստրն էր.
 Այդ ամուսնությունը Մեծն Կառլոսի սերունդը կրկին
 Ֆրանսիո քաղը առավ իր գլխին:
 Այսպես, ուրեմն, ամուսն արեի լույսի պես պարզ է,
 Որ պահանջները արքա Պիպինի, Կապետ արևայի
 եվ Լյուդովիկի՝ հետապնդում են մի նպատակ լույ —
 Կնոջ իրավունքը պահել ուժի մեջ:
 եվ Ֆրանսիայի թագավորները
 Մինչև այսօր էլ այդպես են վարվում:
 98 եվ սակայն նրանք Սալիք օրենքը հանում են ձեր պեմ,
 Արգելակելու ձեր պահանջները Ֆրանսիո հանդեպ:
 Գերադասում են քփրտալ իրենց սեփական ցանցում,
 Քան զրկվել ձեզնից և ձեր նախնիքից
 Նենգորեն շորթած իրավունքներից:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Իսկ իրավունքով և խղնի մտով
 Կարո՞ղ եմ պահանջել ինձնից խլածը:

ԱՐՔԵՊՈՍԿՈՍ

Մեղքը իմ գլխին, անել թագավոր:
 106 Քանզի գրված է Թվոց սուրբ գրքում,
 Որ եթե արու զավակը մեռնի, ժառանգությունը
 Կանցնի աղջկան: Ողորմա՛ծ տեր իմ,
 Կանգնե՛ք ձեր դատին և ձեր արյունոտ դրոշը պարզե՛ք,
 Ձեր հայացքն ուղղե՛ք հզոր պապերիդ,
 Գնացե՛ք դեպի սուրբ գերեզմանը ձեր մեծ նախահոր,
 Որ հիմնադիրն է ձեր իրավունքի:
 Օգնության կոչե՛ք նրա ուղղաշունչ և անվախ ոգին,

Պատրաստ է հանձնել մի այնպիսի մեծ և հուժկու գումար,
Որ երբևիցև հոգևոր դասը տվել է, արքա,
Ձեր նախորդներից որևէ մեկին:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մենք պարտավոր ենք ոչ միայն զինվել
Ֆրանսիո երկիրն ասպատակելու,
Այլև մեր զորքի մի պատշան մասը տանք թողնելու,
Որ մեզ պաշտպանեն շոտլանդացոց դեմ,
Որոնք կարող են օգտվել առիթից
Եվ անմիջապես խուժել մեզ վրա:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Այդ շոտլանդական սահմանը, արքա,
Պետք է դառնա մի հուսալի պատանեշ,
Որ բուն Անգլիան ամուր պաշտպանի
Սահմանարձակ այդ առավ-վիախավ հելուզակներից:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մեր խոսքը միայն այդ առավ-վիախավ մարդկանց մտքին չէ.
Շոտլանդացին միշտ նենգ հաբեան է եղել մեզ համար,
Կարդա՝ կիմանա. չի հիշվում մի դեպք,
Որ իմ մեծ պապը զորքով արշավի դեպի Ֆրանսիա
Եվ շոտլանդացիք պատանեշը քանդող մակընթացի պես
Ներս չխուժեն մեր անպաշտպան երկիրն
Իրենց մոլեգնած հորդուն ուժերի ամբողջ հորձանով,
Իր գավակներից զրկված երկիրը ասպատակելով
Եվ պաշարելով ամրոց ու քաղաք,
Եվ Անգլիան մերկ, անպաշտպան ձգված
Չդողար հողի այդ հաբեանի ոտքերի առաջ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Նա ավելի շատ երկյուղ պատանոց, քան թե ավերմունք:
Մի հերոսական օրինակ բերեմ.
Երբ մեր բովանդակ ասպետությունը Ֆրանսիայումն էր,
Անգլիան, դժբախտ այդ որբեայրին,
Ի գորու եղավ ոչ միայն պատվով պաշտպանել իրեն,
Այլև Շոտլանդիո արքային բռնեց
Եվ ներփակելով իբրև մի գազան,
Շտապ Ֆրանսիա ուղարկեց նրան

Էղվարդի փառքը խնոդած զերված թագավորներով
Եվ նրա կյանքի հուշամատյանը մեծագործությանց
Դարձնելով նույնքան հարստությամբ լի,
Ինչպես օվկիանի տղմոտ հատակը
Անթիվ գանձերով սուզված նավերի:

ՎԵՍՏՄՈՌՈՒԵՆՆԵՐ

Մի ասացվածք կա հին ու նշմարիտ.
«Եթե ուզում ես ֆրանկին հաղթել — իմ խրատը բեզ—
Նախ Շոտլանդացու դատաստանը տես»:
Քանզի մի անգամ, երբ անգլիական
Արծիվը հախրեց որսի եակից,
Նենգ շոտլանդացին շողոփորթելով
Նրա անպաշտպան բույնը սողոսկեց:
Եվ ինչպես մուկը խաղում է կառվի բացակայությամբ,
Նա այդպես խաղաց, գլուրեց, ջարդեց,
Այնքան չկերավ, որքան փշացրեց:

ԷՔՍԵՏԵՐ

Ուրեմն կատուն պետք է տանը մնա:
Սակայն մենք այդ ժանտ անհրաժեշտության կարիքը չունենք,
Որովհետև պինդ փականներ ունենք մեր պահեստներին,
Եվ հրաշալի թակարդներ ունենք
Մանրիկ գողերին ոչնչացնելու:
Քանի դեռ զինված ձեռքը կռվում է մեր երկրից հեռու,
Խոհուն գլուխը ունակ է տանը պաշտպանել իրեն:
Կառավարության ողջ անդամները,
Թե՛ բարձր, թե՛ ցածր, թե՛ ստորնագույն,
Տարբեր խմբերով, բայց պահում են կուռ ներդաշնակություն,
Եվ միաբանված, եզրափակումի ելքով սողորված,
Դիմում են դեպի հաղթական ավարտ,
Ինչպես փառահեղ մի երաժշտություն:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Այդ նշմարիտ է: Զուր չէ երկինքը պետության ներսում
Մարդկանց վիճակը տարբեր սահմանել
Նրանց ջանքերը վերածելով մի ներդաշնակ շարժման,
Հնազանդություն, ընդհանուր գործին,—
Կետ-նպատակը այդ է բոլորի:

ժիր մեղուններն են այդպես աշխատում
 Բնության կարգի նարտարարվեստը
 Ուսուցանելով բազմամարդ երկրի թագավորության:
 Այդ էակներն էլ ունեն թագավոր
 Եվ պաշտոնյաներ տարբեր տեսակի.
 Ոմանք փեթակը վարում են ներսում որպես մեծավոր,
 Ոմանք էլ որպես վահառականներ շրջում են դրսում
 Եվ զբաղված են միշտ առուծախով,
 Ոմանք էլ զինված սուր խայթիչներով. իբրև զինվորներ,
 Գրոհի էլած քավ կոկոնների հյուրերն են շորթում
 Եվ կողոպուտով զվարթ թռչում են ետ՝ դեպի փեթակ,
 Դեպի առդավարն իրենց արքայի,
 Որ հույժ մտազբաղ, մեծափառորեն
 Հետևում է իր սրմնադիրների երգեցիկ պարսին,
 Որոնք համերաշխ շարում-կապում են ոսկյա կամարներ:
 Քաղաքացիները մեղր են պատրաստում,
 Իսկ շալակատար խեղճ մշակները ծանր բեռներով
 Խոնվում են նեղլիկ դարպասի առաջ:
 Մոայլ դատավորը ահեղ բզզոցով
 Դժգույն դահիճների դատին է հանձնում
 Մուլլ, դանդաղաշարժ հորանջող բոռին: Իբերն էլ այդպես
 Խիստ համասեռ են իրենց հիմքի մեջ, —
 Կատարման ուղին՝ թեև շատ տարբեր,
 Ինչպես նետերն են տարբեր կողմերից զարկում նույն կետին,
 Ճանապարհներն են իրար հանդիպում նույն ֆաղափի մեջ,
 Ինչպես գետերն են տարբեր ընթացքով նույն ծովը քափվում,
 Բազում գծեր են նույն շրջանակի կենտրոնին դիպչում:
 Արդ, հազարավոր այդպիսի ֆայլեր
 Կարող են հասցնել մեծ նպատակի հաշող ավարտին
 Առանց պարտության: Ուրեմն, դեպի՝ Ֆրանսիա, տեր իմ,
 Երջանիկ Անգլիան բաժանեք չորսի.
 Լոկ մի ֆառորդը տարեք Ֆրանսիա, այդ ուժն էլ բավ է,
 Որ ամբողջ Գալիան ձեր առաջ դողա:
 Իսկ մենք երկրի մեջ մնացած գործի երեք ֆառորդով
 Եթե անկարող լինենք այդ շանը ֆշել մեր շեմից,
 Թող այդ շունը մեզ կտոր-կտոր անի և թող հավիտյան
 Մեր ազգը զրկվի իր խիզախ անվան
 Հինավուրց փառքից և հմտությունից:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Դոֆինի դեսպաններին ներս հրավիրեմ:

Մի սպասավոր դուրս է գնում:

Հարցը վնավեց: Ասածո օգնությամբ
Եվ ձեր բալորի, կորովի ջգեր մեր հզորության,
Մենք ողջ Ֆրանսիան ծունկի կբերենք մեր ուժի առաջ,
Կամ ծվատելով՝ կտոր-կտոր կանենք:
Կամ պիտի բազմենք Ֆրանսիո գահին
Նրան ենթարկած մեր միահեծան տիրապետության,
Իր իշխանական դժուրություններով,
Կամ իմ անյունը նետված անարժան մի սափորի մեջ
Մնա անդամբան և անհիշատակ:
Երկուսից մեկը. կամ պատմությունը մեզ լիաբերան
Փառք պիտի գոռա համարձակորեն
Մեր սիրանների մասին խոսելիս, կամ մեր շիրիմը
Պիտի մնա մունջ, անտապանագիր
Լեզուն կտրված համբ թուրքի պես:

Մտնում են Ֆրանսիո դեսպանները:

Այժմ պատրաստ ենք ողջույնը լսել
Մեր շնորհաշուք գարմիկ դոֆինի:
Չէ՞ որ դուք նրա կողմից եք եկել, ոչ թե արհալի:

Ա. ԴԵՍՊԱՆ

Հանո՞ է արդյոք վսեմախաչյից արտոնելու մեզ,
Որ ազատորեն ձեր ձեռքը հանձնենք նրա ուղերձը,
Կամ հակիրճ խոսքով շարադրելու ձեզ
Դոֆինի կամքը և նպատակը մեր դեսպանության:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մենք բռնակալ չենք, այլ ֆրիստոնյա արքա գրասիրտ.
Ինչպես բանտի մեջ թշվառ գերին է շղթայակապված,
Մեր կրքերն այդպես ենթակա են մեր բանական մտքին,
Ուստի անկաշկանդ և անվախորեն
Հաղորդեցեք ձեր դոֆինի կամքը:

Ա. ԴԵՍՊԱՆ

Կարճատուն այս է. Ձեր բարձրությունը վերջերս դեսպան հղեց Ֆրանսիա
Խստիվ պահանջով երկրիս մի ֆանի դժուրությունները ենթարկելու ձեզ
Ըստ իրավունքի ձեր հզոր նախորդ էդվարդ Երրորդի:
Ձեր այդ պահանջին որպես պատասխան արհայորդին մեր



Հենրի Հիմզերորդ

Գործ՝ Զ. Դ. Շլոս



Հենրի Հինգերորդ, Ռեյսի արքայազն

Հայտարարում է, որ ձեր մեջ հոխորտ
Չահեքությունն է ետում կատաղի,
Եվ խնդրում է ձեզ շրջահայաց լինել, քանզի Ֆրանսիա մեջ
Չե՛ք գանի մի բան, որ կարողանաք ցնծապարով վերցնել,
Ոչ էլ դժուրություններ կորզել այնտեղից թեթև գրոսանով:
Ուստի ուղարկել է ձեր ոգուն պառչան
Այս գանձատուփը և փոխարենը մի փափագ ունի.
Որ այսուհետև դարարե՛ք խոսել
Մեզնից դժուրություններ պահանջելու մասին: Ա՛յս է նրա խոսքը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՞նչ կա, հուրեղբայր, գանձատուփի մեջ:

ԷՔՍԵՏԵՐ

Խաղազնդակներ թենիսի համար:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օ՛հ, ինչպիսի՛ ջերմ վերաբերմունք է դոֆինի կողմից:
Շնորհակալությունն նրան ընծայի,
Իսկ ձեզ այդ ընծան բերելու համար:
Ներք բակեր չոկենք այդ գնդակներին համապատասխան
Մենք Ֆրանսիայում կիջնենք մրցության
Հարվածը նրա հոր քազին ուղղած:
Ասացե՛ք նրան, որ վասնզավոր խաղ է ձեռնարկել
Մի այնպիսի գոռ ախոյանի հետ,
Որ ֆրանսիական ողջ արհունիքը պիտի շփոթվի
Հետապնդումից: Մենք հիանալի հասկանում ենք այդ,
Հախտան օրերիս մոլեգնությունն է նա մեզ ակնարկում,
Անգիտակ, թե ինչ դասեր ենք քաղել մենք այդ օրերից:
Մենք շէինք հարգում այս անգլիական խեղճ գանը երբեք:
Ուստի, ապրելով նրանից հետո, մեզ հանձնել էինք
Վայրագ, ամարդի ինֆնակամության: Միշտ էլ այդպես է,
Ներ մարդ զվարթ է և տանից հետո:
Ասացե՛ք նրան, որ արհայորեն ես վեր կպարզեմ
Իմ առագաստը գերակայության,
Երբ ֆրանսիական իմ գահին բազմեմ:
Այդ բանի համար մի կողմ դրեցի ես իշխանություն
Եվ տֆնեցի շատ, ինչպես Լուսնաջան մի օրամշակ,
Բայց ես կծագեմ փառքի այնպիսի շրացնող լույսով,
Որ Ֆրանսիայի բոլոր աչքերը կուրանան փայլից,
Ինքը դոֆինն էլ պիտի կուրանա մեր պայծառ լույսից:
Հայտնե՛ք իշխանին, որ այս հեզմանը

— 417 —

Իր գնդակները թնդանոթի գոռ ումբերի փոխեց
 Եվ բիրտ վրեժը, որ սուրալու է այդ ումբերի հետ,
 Իշխանի համար ծանր է լինելու: Քանզի այդ ծաղրը
 Յյուր հազարավոր ամուսիններին
 Անջատելու է իրենց կանանցից,
 Իսկ որդիներին՝ իրենց մայրերից,
 Կործանելու է բերդեր, ամրոցներ
 Եվ բյուր սերունդներ, որ նոր պիտի գան
 Իրավամբ դարեր պիտի նգովեն
 Այս նախատինքը իշխան դոֆինի:
 Բայց դա կախված է արարչի կամֆից,
 Որին կոչում եմ դատավոր դառնալ: Հանո՛ւն աստծո
 Հայտնե՛ք դոֆինին, որ շուտով կգամ
 Վրեժ լուծելու և արդար ձեռնով
 Իրագործելու դատն իմ սրբագան:
 Հեռացե՛ք խաղաղ և իմ անունից հայտնե՛ք իշխանին,
 Որ իր կատակը լոկ տափակ, ծանծաղ մտֆի արդյունք էր,
 Երբ պետք է թափվեն միլիոն արցունքներ:
 Նրանց ապահով առաջնորդեցե՛ք: Բարի՛ նաևապարհ:

Դեսպանները գնում են:

ԷՔՍԵՏԵՐ

Ի՛նչ գվարնալի դեսպանություն էր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մենք ուղարկողին կստիպենք շիկնել իր բռնած գործից,
 Ուստի, պարոններ, հարկ չկա վատնել անզին ժամանակ,
 Արագ պատրաստվենք մեր արշավանֆին,
 Դեպի Ֆրանսիա՛. մեր խոհերն համակ դրան են ուղղված
 Եվ աստծուն բարձրյալ, որ սուրում է մեր արշավից առաջ:
 Արդ անհրաժեշտ է բոլոր ուժերը
 Ժողովել շուտով այս կովի համար,
 Ամեն բան կշռել մտածված ձևով,
 Որ մեր խոհական արագությունը
 Թե տա ապագա մեր հաջողության: Վկա՛ է աստված,
 Հոխորտ դոֆինին սարսափը դեմֆին
 Մի լավ դաս կտանք հենց իր հոր շեմֆին:
 Ուստի ամեն ոք թող այժմ վնդի իր աշխատանքը,
 Որ իրագործենք այս արշավանֆը:

Փողեր.

Դնում են:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԳ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Կ

Մտնում է թեմի խոսնակը:

ԹԵՄԻ ԽՈՍՆԱԿ

Անգլիո ամբողջ շահել-շիվանը կրակի մեջ է,
Մեախա շորերը հանդերձարանում:
Պատիվը այժմ գինագործին է:
Քոլորի կրծքում լոկ ուզմի փառքի խոհերն են իշխում:
Ծախում են իրենց արոտավայրերը, որ ձիեր գնեն,
Եվ քրիստոնյա թագավորներին ընդօրինակած՝
Ոտերին թևեր
Մեր անգլիական մերկուրիոսները սուրում են առաջ:
Նրանց վերևում նստած է Հույսը,
Ձեռքի մեջ մի սուր մինչև դաստապան
Տարբեր մեծության թագերով գուզված,
Որ խոստացել է Հարրիին հանձնել և նրա մարդկանց,
Իբրև գերագույն սխրանքի պարգև:
Իսկ ֆրանսիացին խիստ ֆաջատեղյակ
Ռազմի ահավոր այս պատրաստության,
Դողում է ահից և մի խորամանկ նենգամտությամբ
Ելք է որոնում իսպառ խափանել
Անգլիացիների մտադրությունը:
Օ՛, Անգլիա, դու ոգու մեծության հոյակապ տիպար,
Դու փոքրիկ մարմին գորավոր սրտով,
Ամեն սխրանքդ պատիվ էր փառքիդ
Քո գավակները երե լինեին
Քոլորը ազնիվ ու հավատարիմ:
Սակայն մե՛ղիդ տես: Ֆրանսիացին քո մեջ

Գատարկ սրտերի մի բույն է գտել
 Ճգնելով քու արժաթով լցնել: Երեք եղծյալ մարդ, —
 Մեկը Ռիչարդն է, կամ կոմս Քեմբրիջը,
 Երկրորդը Հենրին կամ լորդ Սկրոպը,
 Երրորդը ասպետ Նորթեմբուրենդն է՝ Թոմաս Գրեք, —
 Սրանք Ֆրանսիո արժաթի սիրույն — օ՛հ, սուկալի մեղք, —
 Դավադրություն են կազմել զարհուրյալ Ֆրանսիայի հետ:
 Եվ նրանց ձեռքով պիտի կործանվի
 Թագավորների այս շքեղ զարդը Սաութեմպտոնում,
 Դեպի Ֆրանսիա դեռ նավ չնստած,
 Եթե դժոխսը և մատնությունը
 Հաստատուն լինեն իրենց ուխտի մեջ:
 Համբերե՛՛ք, սակայն: Մենք բեմի վրա ձեզ նույնանման
 Մի քանի տարբեր տեղեր ցույց կտանք:
 Դավադիրները համաձայնվել են: Փողը վնարված է:
 Արքան Լոնդոնից արդեն դուրս եկավ:
 Եվ տեսարանը, հարգո պարոններ,
 Սաութեմպտոն է տեղավորվում այժմ:
 Թատրոնն այնտեղ է, այնտեղ պետք է նստեք:
 Այնտեղից մենք ձեզ վստահ կտանենք դեպի Ֆրանսիա
 Եվ ետ կբերենք, դյուրեւով ծովը,
 Որ այդ նեղուցը անվտանգ անցնեք: Այնպես չենք անի,
 Որ մեք պիեսից ձեր սիրտը խառնի:
 Մինչ թագավորը ժամանի փութով
 Բեմը կտանենք մենք Սաութեմպտոն:

Գնում է:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Լոնդոն: Իստչիփ, «Վարազի գլուխ» պանդոկի առաջ:

Մտնում են Ենթասպա Նիմր և տեղակալ Բարդոլֆը:

ԲԱՐԴՈՒՅ

Ողջո՛ւյն, Ենթասպա Նիմ:

ՆԻՄ

Բարի՛ լույս, տեղակալ Բարդոլֆ:

ՔԱՐԴՈՒՅ

Ինչպե՞ս, դու արդեն հաշտվե՞լ ես դրոշակակիր Պիստոլի հետ:

ՆԻՄ

Մտեմք էլ չի անցել: Ես ավելի շատ լռում եմ: Բայց շատ հնարավոր է, որ մենք բախվենք: Ի դեպ, ինչ ուզում է լինի: Կովի մեջ մտնել շեմ համարձակվում, բայց աչքս պահում եմ խապի, իբրև թե շեմ տեսնում, և իմ սուրը միշտ պատրաստ է: Հասարակ սուր է, բայց ինչ արած: Նրանով միշտ էլ կարելի է մի կտոր պանիր տապակել և սառնամանիկին պակաս դիմացկուն չէ ուզածդ մարդու սրից: Ամբողջ ներուժյունը դրա մեջ է:

ՔԱՐԴՈՒՅ

Ես երկուսիդ նախանաչի կհրավիրեմ իմ հաշվին, որ ձեզ հաշտեցնեն ու մենք երեքով կարշավենք դեպի Ֆրանսիա իբրև անբաժան ընկերներ: Մի՛ համառիր, պատվական ենթասպա նիմ:

ՆԻՄ

Աստված վկա, ես պիտի ապրեմ այնքան, որքան կարող եմ, այդ արդեն հաստատ բան է, իսկ երբ ապրելը անտանելի դառնա՝ մի կերպ տակից դուրս կգամ: Ահա՛ իմ ամբողջ ասելիքը:

ՔԱՐԴՈՒՅ

Բոլորին հայտնի է, ենթասպա, որ նա ամուսնացել է Նել Քուիկլու՝ տիկին Վոագի հետ: Իսկ տիկին Վոագի արարելը քո հանդեպ պարզապես ստորություն էր: Չէ՞ որ դու արդեն նշանվել էիր նրա հետ:

ՆԻՄ

Աստված վկա, ես գլուխ չեմ հանում այս գործից, այդպես է աշխարհի բանը: Պատահում է, որ մարդիկ ֆնած են, բայց նրանց կոկորդը գործում է: Չէ՞ որ, ասում են, դանակը կոթ ունի, բայց կտրողը շեղքն է: Ինչ որ լինելու է՝ կլինի, ի՞նչ կարող ես անել: Համբերությունը թեպետ հալից ընկած զամբիկ է, բայց այնուամենայնիվ ճիգ է գործադրում թեթև վագֆի համար: Այս ամենը պետք է մի վերջաբանի հանգի: Աստված վկա, ես գլուխ չեմ հանում այս գործից:

ՔԱՐԴՈՒՅ

Այստեղ են գալիս դրոշակակիր Պիստոլը և իր կինը: Պատվական ենթասպա, քեզ հանգիստ պահիր:

Մտնում են Պիստոլը և պանդակի տիրուհին:

29 Գործերդ ինչպե՞ս են, պանդակապետ Պիստոլ:

ՊԻՍՏՈՒ

Եվ դու կոչում ես ինձ պանդոկապե՞տ, ստո՛ր շնանանն,
ես այդ անունից գարշում եմ սաստիկ,
Ոչ էլ թույլ կամ, որ իմ տիկիներ անվորներ պահի:

ՏԻՐՈՒՇԻ

Ազնի՛վ խոսք, ես այս պանդոկը շուտով կփակեմ, որովհետև հենց որ
մտածում եմ իջեան տալ մի տաս-աասնչորս առափինի վայելուչ կա-
նանց, որոնք իրենց հացը վաստակում են ասեղ շարժելով, իսկույն շորս
կողմից սկսում են բղավել, թե դու բոզանց ես պահում:

Նիմր և Պիստոլը մերկացնում են սերը:

39 Օ՛, ամենասուրբ կույս: Նա արդեն սուրը մերկացրեց: Հիմա մենք ա-
կանատես կլինենք սարսափելի արճապղծության և սպանության:

ԲԱՐԳՈՒՅ

Բարի՛ տեղակալ, բարի՛ ենթասպա, կոխվ մի՛ սարքեք այստեղ: Թո՛ւն-

ՊԻՍՏՈՒ

Թո՛ւն քեզ, իսլանդական շուն, ականջները ցից իսլանդական զամբու-

ՏԻՐՈՒՇԻ

Պատվական ենթասպա Նիմ, ցույց տուր, որ դու առափինի ֆաշ տղա-
մարդ ես և ես սուրը պատյան դիր:

ՆԻՄ

Պիտի չփվե՞ս, թե չէ: Solus¹ կուզեի ձեռքս ընկներ:

ՊԻՍՏՈՒ

Solus?, օ՛, նենգ շուն, դու անարգ, ժանտ իժ,
ես այդ solus-ը տգեղ, այլանդակ դեմֆիդ կծեփեմ,
կխրեմ թավով ժանտ ատամներիդ և կակորդիդ մեջ,
Պիղծ որովայնիդ և թոփերիդ մեջ:

Վատթարը կանեմ. ես այդ solus-ը
Քո գարշ երախի միջով կանցկացնեմ,
եվ կգալարեմ փորոտիֆիդ մեջ:

52 Կրակել գիտեմ. բավական է որ
ես իմ պիստոլի ձգանը սեղմեմ,
Որ բոցն ու փայլը դուրս թռչեն իսկույն:

¹ Մենակ, առանձին (լատ.):

55 Ես Բարբասոնը չեմ և դու չես կարող կախարդանքներով ինձ վրա ազդել: Ձեռքերս բոք են գալիս մի լավ թակելու հեզ: Եթե դու շարունակես հաչել վրաս, Պիստոլ, ես հեզ իմ սուտերով դեն կշարեմ, իսկ եթե հանգիստ պոչդ փաշես ինձնից, ապա կարձակվես փորոտիֆդ մի ֆիշ վնասված: Ամբողջ նրբությունը դրա մեջ է:

ՊԻՍՏՈԼ

Սառ՛ր պարծենկոտ, օ՛, դու անիծյալ կատաղած մարդուկ,
Շիրիմն հորանջում է և մոտ է մահը
Ուստի՝ սատակի՛ր:

ԲԱՐԳՈՒՅ

Լսեցե՛՛ք, լսեցե՛՛ք, թե ինչ եմ ասում. ով առաջինը հարվածի, ես իմ սուրը մինչև դաստակը նրա կրծքի մեջ կխրեմ: Զինվորի սլաակով եմ երդվում:

ՊԻՍՏՈԼ

Օ՛, ահավոր ուխտ: Կատաղությունը պիտի հանդարտվի:
Տո՛ւր ինձ բռունցֆդ, քո թաթը ինձ տուր,
Դու վեհ ես, ազնիվ և մեծաճոգի:

Նրանք սերը պատյան են դնում:

ՆԻՄ

Վաղ թե ուշ ես քո կոկորդը կտրելու եմ: Ամբողջ նրբությունը դրա մեջ է:

ՊԻՍՏՈԼ

Couple a gorge¹
73 Ծածկաբառն այդ է: Կովի եմ նորից հրավիրում հեզ,
Կրետոսյան շուն: Եվ դու ուզում ես կնկաս տիրանա՞լ:
Ո՛չ, ո՛չ. շտապիր դու հիվանդանոց
Եվ վատահամբավ գարշահոռության աղե-տակառից
77 Դու Տերշիտին հանիր: Այդպես է կոչվում ախտերից բուժվող
Կրեսիդյան տահմի այդ բորոտ կինը: Նրա՛ հետ ամուսնացիր:
Իսկ guondum² Տիկին Վազր
Այսուհետև և միշտ իմն է լինելու: Խոսելն ավելորդ է:
Զֆվի՛ր իմ աչքից:

Մտնում է մանչուկը:

¹ Կոկորդ կտրել (ֆրանս. աղնատված):

² Երբեմնի (լատ.):

ՄԱՆՉՈՒԿ

Պանդոկապետ Պիստոլ, շտապ իմ տիրոջ մաս գնացե՛ք. դու՛ք էլ, տիրոնի: Նա շատ հիվանդ է և ուզում է պառկել: Պատվական Բարդոլֆ, քո բիրթ կոխիր նրա սավանների արանքը և շեռուցիչի փոխարեն տափացրու նրան: Ճիշտ եմ ասում, նա շատ հիվանդ է:

ԲԱՐԳՈՒՅ

Կարի՛ր, անզգամ:

ՏԻՐՈՒՀԻ

Ազնի՛վ խոսք, այսօր կամ վաղը նա երջիկ է դառնալու ազոավներին: Թագավորը կտարել է նրա սիրտը: Պատվական ամուսնյակս, շուտ տուն արի:

Տիրուհին և մանչուկը գնում են:

ԲԱՐԳՈՒՅ

Ինչպե՞ս հաշտեցնեմ ձեզ: Չէ՛ որ մենք պետք է միասին Ֆրանսիա գնանք: Սաաանան տանի, ինչո՞ւ մենք պետք է մեր սերը պատրաստ պահենք մեկս մյուսի կոկորդը կտրելու համար:

ՊԻՍՏՈՒ

Վարարե՛ք, գետեր, ոռնացե՛ք, դեեր:

ՆԵՄ

Դու վհարելո՞ւ ես ինձ այն ութ շիլլինգը,
Որ աստվեցիք ինձ հետ գրագ բռնելիս:

ՊԻՍՏՈՒ

Վհարողը անարգ ստրուկ է:

ՆԵՄ

Հենց հիմա փողը հանի՛ր: Ամբողջ ներուրյունը դրա մեջ է:

ՊԻՍՏՈՒ

Թող ֆաջուրյունը որոշի, թե մեզնից ո՞վ է արդար: Գրավի՛ր տեղի:

Մեկացնում է սուրը:

ԲԱՐԳՈՒՅ

Երդվում եմ այս սրով՝ ով առաջինը հարվածի, ես կսպանեմ նրան: Այս սուրը վկա՛ կսպանեմ:

ՊԻՍՏՈՒ

Սուրը երդում է, իսկ երդումները պետք է իրագործվեն:

ԲԱՐԳՈՒՅ

Ենթասպա նիմը և դու պետք է հաշտվե՛ք իրար հետ, այո՛, պետք է

հաշտվե՛ք. իսկ երե՛ շհաշտվե՛ք, ուրեմն դուք կլինե՛ք նաև իմ թշնամիներն հնդրում եմ, վերջ ավե՛ք գժտուրյան:

ՆԻՄ

Գու՛ վհարելո՞ւ էս այն ուր շիլլինգը, որ տարվեցիր:

ՊԻՍՏՈՒ

ՄԵ

Գու՛ այդ դրամը իսկույն կստանաս

ե՛վ ի հավելում՝ օղի կտամ քեզ.

Մեզ կշաղկապի համերաշխ մի սեր և եղբայրություն.

Նիմը ինձ համար. էս Նիմի համար կսկսենք ապրել.

Մի՞րե՛ դա նիշտ չէ: Ես մեր գործի մեջ կտեղավորվեմ

Իրե՛ քանակի նստարավանառ. շատ փող կշահեմ:

Տո՛ւր ինձ քո ձեռքը:

Նրանք սերը պատյան են դնում:

ՆԻՄ

Իսկ էս կստանա՞մ իմ ուր շիլլինգը:

ՊԻՍՏՈՒ

Կստանաս կանխիկ:

ՆԻՄ

Որ այդպես է՛ լավ: Ամբողջ ներությունը դրա մեջ է:

Մանում է տիրանին:

ՏԻՐՈՒՇԻ

Երե՛ իսկապես ձեզ կին է ծնել, շտապ գնացե՛ք պարոն Զանի մոտ: Ա՛, խեղճ մարդ: Ընդմիջումներով կրկնվող ամենօրյա աենդը այնպես է ցնցում նրան, որ ցավալի է վրան նայելը: Շտապեցե՛ք նրա մոտ, շտապեցե՛ք նրա մոտ, իմ սիրելիներ:

ՆԻՄ

Արե՛ման իր բարկությունը ասպետի վրա քափեց: Եվ պատճառը այդ է:

ՊԻՍՏՈՒ

Գու՛ նիշտ ասացիր.

Նրա սիրտը, Նիմ, փշրված է, շարդված:

ՆԻՄ

Մեր թագավորը բարի թագավոր է. բայց ինչ կարող էս անել. կամակորությունն ու Լմահան, հանկարծական բռնկումները երբեմն ցնցում են նրան:

ՊԻՍՏՈՒ

Երթանք սփոփենք մեր ասպետ Ջոնին
Եվ ասրենք ինչպես գառներն արոտում:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Սաութեմպտոն: Խորհրդարանի սրահը:

Մտնում են էֆեետերը, Քեդֆորդը և Վեսամոլենդը:

ՔԵԴՖՈՐԴ

Վկա է աստված, արքայի կողմից հանդգնություն է
Դավանաններին այդքան վստահել:

ԷՔՍԵՏԵՐ

Բոլորին պետք է ձերբակալել շուտ:

ՎԵՍՄՈՒԼԵՆԴ

Արտաբուստ իրենց խոնարհ են պահում և այնքան հանգիստ,
Նվիրվածությունը սերության հանդեպ
Կարծես կրում են իրենց կրծքի տակ
Հավատքի և կուտ հավատարմության թագով պննված:

ՔԵԴՖՈՐԴ

Դավադրությանը արքան տեղյակ է,
Նամակներ են բռնվել:

ԷՔՍԵՏԵՐ

Ո՞ւմ մտնով կանգներ: Մի՞թե այդ մարդը,
Որ անկողին էր կիսում նրա հետ
Վայելելով նրա առատ սերն ու բարին,
Կարող էր օտար քակի համար այդքան նենգորեն
Իր թագավորի կյանքը վանառել,
Մտադրվելով դավանանությամբ սպանել նրան:

Փողեր:

Մտնում են Հենրի թագավորը, Քեմբրիջը, Սկրուպը, Գեյլը,
ազնվականներ և սպասավորներ:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Քամին փչում է բարեհաճորեն, շաա՛պ դեպի հավ:
Մ, լո՛րդ իմ Քեմբրիջ և դու, Մեշամի ազնիվ լորդ Սկրուպ,

Եվ դու՛ ասպետ իմ, խորհուրդ ավեք ինձ,
Ձեր կարծիքն ի՞նչ է. մեր գորագունդը
Կարո՞ղ է Ֆրանսիո գորհերը հեղհել և շարժվել առաջ,
Իրագործելով այն սխրանքը մեծ,
Որի համար մենք ժողովեցինք նրանց:

ՍԿՐՈՒՊ

Կարո՞ղ է, սեր իմ, եթե ամեն մարդ
Իր վերջին նիզը նվիրաբերի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ես կասկած չունեմ: Մենք համոզված ենք, և այն էլ հաստատ,
Որ մեր ամեն մի գինվորի սիրտը, արշավի ելած,
Մեր սրտերի հետ դարկում է սաստիկ հաշտ ու ներդաշնակ.
Իսկ նրանց սիրար, ով տանն է մնում,
Ցանկանում է մեզ լոկ հաջողություն, փառք ու հաղթանակ:

ՔԵՄՔԻՋ

Ձեզ նման, արքա, ոչ մի միապետ
Այդքան վախ ու սեր դեռ ազդած չկա:
Չկա, կարծում եմ, գեթ մի հպատակ,
Որ վիշտ ունենա, կամ տագնապ գգա,
Ձեր իշխանության դյուրալի, անուշ հովանու ներքո:

ԳՐԵՅ

Այդ նշմարիտ է: Եվ նույնիսկ ձեր հոր թշնամիները
Փոխարինել են իրենց մաղձը մեղրով
Եվ պարտի անհուն հավատարմությամբ
Անհուն եռանդով ծառայում են ձեզ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ուտի և ունենք հիմնավոր պատճառ շնորհակալության:
Արդեն մեկնում ենք, բայց ես պատրաստ եմ մեկնելուց առաջ
Բոլորին լրիվ փոխհասուցելու՝
Հստ իրենց կշոփ և արժանիքի:

ՍԿՐՈՒՊ

Եռանդը պողպատ մկան է կոփում.
Գործը միշտ պետք է կազդուրվի հույսով,
Որ անդուլ տենեն ձեզ համար, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մենք էլ այդպես ենք դատում ու կշռում: Լսի՛ր, հորեղբայր,
Ազատ արձակե՛ք այն հանցագործին, որ մեր անձի դեմ
Վիրավորական խոսքեր ասելիս բանտ նետվեց երեկ:
Գրա պատճառը գինին էր հաստատ,
Այժմ զգաստ է և մենք ներում ենք շնորհում նրան:

ՍԿՐՈՒՊ

Այդ գրությունը վտանգավոր է:
Թող նա պատժվի, որ ուրիշները
Զբաղալերվեն այդ ներողությամբ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օ՛, քույր ավե՛ք դեռ ողորմած լինել:

ՔԵՄՔՐԻՉ

Պատիժն, ուրեմն. մի լիշ մեղմացրե՛ք:

ԳՐԵՅ

Նրան պատժելով և վերստին կյանք բաշխելով նրան,
Ցուցաբերում ե՛ք դուք մեծ գթություն:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ավա՛ղ. ձեր անհուն սերը իմ հանդեպ
Գժնյա աղոթք է այդ խեղճ մարդու դեմ:
Արդ, դիպվածական փոփոխ մեղքերը եքե՛ շանտեսենք,
Մեծ ոնիրները մենք ի՞նչպես դատենք,
Որ ծրագրված, ծամված. մտածված գործի արդյունք են:
Ո՛չ, ես այդ մարդուն կարձակեմ բանախց.
Թեպետ Քեմքրիչը, Սկրուպը, Գրեն
Իմ պահպանությամբ սաստիկ հոգատար
Չեն ուզում, որ նա ազատ արձակվի: Յրանսիային դառնանք,
Ով կե՞ր են ուզում լիազորության պաշտոն ստանալ:

ՔԵՄՔՐԻՉ

Մեկը ես եմ, ար՛հա:
Հրամայեցի՛ք, որ ձեզ այդ մասին հիշեցնեմ այսօր:

ՍԿՐՈՒՊ

Ես նույնպես, տեր իմ:

ԳՐԵՅ

Մյուսը ես եմ, ձերդ բարձրություն:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ռիչարդ, կոմս Քեմբրիջ, ահա՛ ձեր թուղբը,
 Վերցրե՛ք և ձերը, Մեշամի Սկրուպ,
 Նորթեմբերլենդի պատվական ասպետ, այս մեկն էլ ձերն է:
 Կարդացե՛ք լոկ և ծանոթացե՛ք ձեր պաշտոններին:
 Ձեր արժանիքը ինձ քաջ հայտնի է:
 Լորդ իմ Վեսամոուլենդ և հորեդքայր իմ,
 Մենք պետք է նավով մեկնենք այս գիշեր: Ի՞նչ եղավ, պարոններ,
 Ի՞նչ կար, ի՞նչ տեսաք այդ թղթերի մեջ,
 Որ գունատվեցի՛ք: Նայեցե՛ք, ինչպե՛ս այլակերպվեցին:
 Նրանց երեսը թուղբ լինի կարծես: Ի՞նչ կարդացի՛ք դուք,
 Որ վախեցրեց ձեզ և ձեր երեսից
 Արյունը վանեց:

ՔԵՄԲՐԻՉ

Ես իմ հանցանքը խոստովանում եմ:
 Եվ ինձ հանձնում եմ ձեր ողորմության:

ԳՐԵՏ ԵՎ ՍԿՐՈՒԳ

Մեզ էլ գրացե՛ք:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Քիչ առաջ գուրբ զգաստ էր իմ մեջ,
 Բայց ձեր խորհրդով նա կործանված է:
 Ամոթ է այժմ ինձնից գուրբ հայցել, հանդգնություն է:
 Ձեր փաստարկները զինվեցին ձեր դեմ,
 Ինչպես շները իրենց տիրոջ դեմ՝ գիշատելով ձեզ:
 Եշիաններ, և դուք, ազնիվ սեպուհներ, լավ նայե՛ք սրանց.
 Այս անգլիական ժանա հրեշներին: Քեմբրիջն է այստեղ,
 Մենք հարգանքով ենք շրջապատել նրան,
 Մեր պառչան սերը ներդաշնակելով
 Իր պատվի շափին և աստիճանին: Այդ ձեզ հայտնի է:
 Իսկ նա մի քանի փուշ ոսկու համար փուշ անմառախյալ
 Նենգամիտ մի դավ կազմակերպելով Ֆրանսիայի հետ,
 99 Ուխտել է սպանել մեզ Հեմպտոնի մեջ: Ուխտել է նույնպես
 Եվ այս ասպետը, որ մեր բարիքին քիչ պարտական չէ,
 Քան քե՛ Քեմբրիջը: Բայց, օ՛հ, ինչ ասեմ՝
 Ես քեզ, լորդ Սկրուպ, անգուր, ապերախտ, ամառդի վիժվածք,
 Դու, որ ունեիր բանալին բոլոր իմ գաղտնիքների,
 Գիտեիր սառույզ հատակը հոգուս
 Եվ կարող էիր ինձ ուզած ժամիդ

Կտրել, վերածել ոսկեդրամի,
 Հնարավոր է, որ մեր թշնամին
 Չարության մի կայծ կորզեր ֆեզանից
 Ընդունակ մատիս ցավ պատնառելու:
 Իմ դեմ հանդիման
 Իրողությունը ցցված է թեև նույնֆան թանձրացյալ.
 Ինչպես սև գույնը սպիտակի վրա,
 Բայց այդ ամենը այնֆան անհեթեթ և խելահեղ է.
 Որ իմ աչքերը դժվարաբեռում են հավատուղ դրան:
 Մատնություն, ոնիր, — երկու լուծընկեր
 Եվ հավատարիմ դևերի նման հար միասին են
 Եվ գործում են միշտ այնֆան ակներև կոպիտ, անթափույց.
 Որ ապշությունը սովոր չէ վրան մի նիշ արձակել:
 Իսկ դու, խախտելով բանականության բոլոր շափերը.
 Ստիպեցիր որ զարմանքը ապշի
 Դավանանության և ոնրի վրա:
 Եվ նենգ սատանան, որ ֆեզ անխոհեմ այդ ֆայլին մղեց,
 Գժոխում զտավ ուժգին արձագանք:
 Գժոխի բոլոր սատանաները,
 Միշտ դրդում են դավ, դավանանություն
 Եվ ոնիրները եղծում, ծածկում են
 Առափինության շֆեղ պատկերից
 Շորքած լուսափայլ կարկատաններով:
 Բայց նա, որ դրվեց ֆեզ ապստամբվել,
 Պատնառ շովեց դավանանության,
 Այլ ֆաջալերեց ֆեզ դավանանի անունով պատվել:
 Այդ նույն սատանան, որ խարդավանեց ֆեզ այդ աստինան,
 Առյուծի նման երև բովանդակ աշխարհը շրջեր:
 Որսի ետևից, ետ. լայնածավալ
 Սանտարամետը վերադառնալիս
 Գևերի բազում գորագնդերին կարող էր ասել.
 «Այն միակ մարդը, որի հոգին ինձ
 Հաջողվեց նույնֆան հեշտությամբ որսալ՝
 Ահավասիկ այս անգլիացին է»:
 Օ՛, վստահության ֆաղցրությունը դու
 Կասկածով ինչպե՛ս թունավորեցիր:
 Մարդիկ ակնածո՞ւ երևացին ֆեզ.
 Ինչո՞ւ դավեցիր — գիտնակա՞ն էին:

Ինչո՞ւ դավեցիր — մեծատո՞հմ էին,
 Ինչո՞ւ դավեցիր — բարեպա՞շտ էին:
 Ինչո՞ւ դավեցիր — թե՞ ժուժկալ էին.
 Ձերժ մեծ կրֆերից, բերկրություններից, զայրույթից, ցավից,
 Հոգով աներեւ, արյան դեմ բմբոս,
 Կատարելության նոխ շնորհներով շֆեղ պննված,
 Աշֆի, ականջի վկայությանը
 Լուրջ դատողությամբ միայն վստահող:
 Դու մի այդպիսի վեհ բարձունք էիր
 Եվ քո անկումը ստիպում է ինձ,
 Որ այսումետև կասկածով նայեմ
 Արժանավայել և ընտիր մարդկանց:
 Դառնորեն պիտի ուրբամ քեզ համար,
 Քո ընդվզումը քանզի նման է
 Մարզու երկրորդ մեծ մեղսագործության:
 Նրանց հանցանքը պարզ է, անսֆող,
 Կալանֆի՛ վերցրեֆ, թող պատասխան տան օրենֆի առաջ
 Եվ թող աստվածը նրանց մեղֆերին բողոություն անի:

ԷՔՍԵՏԵՐ

Ձերբակալում եմ ես քեզ, կոմս Քեմբրիջ,
 Որպես պետական մեծ դավանանի.
 Ձերբակալում եմ ես քեզ, լորդ Հենրի՛ Մեշամի Սկրոպ,
 Որպես պետական մեծ դավանանի,
 Ձերբակալում եմ քեզ, Թոմաս Գրեյ, ասպետ Նորթեմբերլենդ,
 Որպես պետական մեծ դավանանի:

ՍԿՐՈՒՊ

Տեր աստծո կամոֆ մեր նպատակը բացահայտված է,
 Եվ իմ հանցանքը սաբսաֆելի է մահից առավել:
 Խնդրում եմ, արֆա, հանցանքն իմ ներել,
 Թեև իմ կյանքը պիտի վնարեմ ես դրա դիմաց:

ՔԵՄՔՐԻՁ

Ինձ շնրապուրեց Ֆրանսիո ոսկին,
 Ես ընդունեցի այդ ոսկին որպես մի ազդու միջոց
 147 Մտադրությունս ավելի արագ իրագործելու:
 Փառֆ երկնալուրին, որ խաֆանեց մեր դավադրությունը,
 Որի համար ես անլուր տանջվելով սրտանց հրնվում եմ,
 Խնդրելով աստծուն և ձեզ՝ ներել ինձ:

Ոչ ոք դեռ երբեք այնպես չէ հրնվել
Պետական խոշոր դավանանություն հայանաբերությամբ,
Քան ինքս եմ այժմ հրնվում ցնծագին,
Որ խափանված է իմ այս անիծյալ ձեռնարկությունը:
Ներե՛՛ք իմ մեղքը, բայց ոչ մարմինը, գերագույն տեր իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Թող երկնավորը ձեր մեղքը ների:
Լսեցե՛ք այժմ դատավնիոր.
Ժանտ թշնամու հետ միաբանվելով՝
Գավադություն էք պատրաստել մեր դեմ,
Եվ իբրև գրավ նրա գանձարկղից
Սաացել էք դուք մեր մահվան ոսկին:
Ոսկին առել էք, որ ձեր արքային տանեն մարթելու,
Իմ իշխաններին ու սկստներին՝ դեպի գերություն,
Հպատակներին՝ դեպի նախատինք և ստրկություն,
Իմ ողջ երկիրը՝ դեպի կործանում և ամայություն:
Մենք չենք որոնում վրեժխնդրություն մեր անձի համար,
Բայց պատրաստ ենք մեր թագավորության փրկության գործին,
Որին կամեցաք հիմքից կործանել: Մենք ձեզ կհանձնենք
Նրա օրենքին: Ուստի՝ դեպի մահ,
Ո՛վ ողորմելի թշնամուկաներ.

Եվ բող ասոված ձեզ մահին առկալու համբերություն տա
Եվ ձեր մեղքերին՝ արդար քավություն: Շուտ սարե՛՛ք սրանց:



Քեմբրիջը, Սկոպը և Գրեյը պահակների հսկողությամբ դուրս են տարվում:

Այժմ, իշխաններ, դեպի Ֆրանսիա: Այս արշավանքը
Չեզ և մեզ համար կլինի փառահեղ:
Վստահ եմ կովի բախտավոր ելքին
Քանզի ասովածը գթասիրաբար
Երևան հանեց այս վտանգավոր դավադրությունը,
Որ դարանած էր մեր նանապարհին՝
Խափանելու մեր ձեռնարկն սկզբից: Այժմ, վստահ եմ,
Որ մեր ընթացքի բոլոր խուփերը հարթված են լրիվ,
Հառա՛ջ, ուրեմն, հայրենակիցներ՝: Մեր զորությունը
Հանձնենք ասածուն և բնկենք նամփա:
Դեպի ծո՛վ խնդագին: Պարզված են արդեն դրոշները ռազմի,
Ես արժանի չեմ Անգլիո թագին,
Երե չբազմեմ Ֆրանսիո գահին:

Գնում են:



Հենրի Հինգերորդի և Կատարինեի պաակադրությունը



Ճարտիպաց փրման և ճարտիպական փոփոխություն

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Լոնդոն: Իստչիփ, «Վարագի գլուխ» պանդոկի առաջ:

Մանուկ և Պիստուլը, պանդոկի տիրուհին, նիմը,
Բարդոլֆը և մանչուկը:

ՏԻՐՈՒՆԻ

2 Խնդրում եմ, իմ մեղրահամ բանկազին ամուսնյակ, բույլ տաս, որ ես
2 քեզ առաջնորդեմ մինչև Ստեֆան:

ՊԻՍՏՈՒ

Ոչ, առանց այդ էլ սիրտս տխուր է:
Զվարթացի՛ր, Բարդոլֆ, խրոխտացիր, նի՛մ,
Պինդ պահիր քեզ, մա՛նչ: Ֆալստաֆը մեռավ,
Եվ մենք պարտավոր ենք ողբալ ցավագին:

ԲԱՐԴՈՒԼ

Նա կուզենայի նրա հետ լինել, որ էլ նա լինե՛ր այժմ. երկնում, քե
դժոխում:

ՏԻՐՈՒՆԻ

9 Չէ՛, վստահ կարող եմ ասել, որ նա դժոխում չէ: Նա Արթուրի գրկումն
է, երբ որևէ մարդու հաջողվել է երբևիցե Արթուրի գիրկը բնկնել: Այ
այնքան գեղեցիկ հեռացավ, իսկ և իսկ Բրիտանյա նորածին մանկան
պես: Մեռավ նա նիշտ ժամը տասներկուսի և մեկի մեջտեղ, նիշտ տե-
13 դավորյունը սկսելու պահին: Երբ տեսա, թե նա ինչպես սկսեց սա-
վանները շոշափել և խաղալ ծաղիկների հետ և իր մասաների ծայրերին
նայելով՝ ծիծաղել, ինքս ինձ մտածեցի, որ խեղճի բանը վերջացած է,
որ նա այլևս այս աշխարհի բնակիչ չէ: Որովհետև նրա փրփը սրվեց
գրչածայրի պես և նա սկսեց զառանցել ինչ-որ կանաչ մարգագետիննե-
րի մասին: «Ի՞նչպես ես, պարոն Զոն, ասում եմ: Մի հուսահաավի՛ր,
մարդ, պի՛նդ պահիր քեզ»: Իսկ նա գոչում է «Տե՛ր ասովա՛ժ, տե՛ր ասու-
վա՛ժ, տե՛ր ասովա՛ժ», — այդպես երեք թե չորս անգամ իրար ետևից:
Որպեսզի նրան միտքաբեմ, ասացի, թե կարիք չկա ասածն մասին
մտածել: Կարծում էի, որ նրա համար դեռ շուտ է այդպիսի մա՛հերով
աանջել իրեն: Նա խնդրեց, որ մի ավելի տա՛մ շուր դնեմ իր ոտներին:
Նա ձեռքս կոխեցի վերմակի տակ և շոշափեցի նրա ոտները. ֆարի պես
պաղ էին: Հետո շոշափեցի նրա ձեռքները. դարձյալ պաղ էին: Հետո ավե-
լի վեր և ավելի վեր և ամեն ինչ պաղ էր, ինչպես ֆար:

ՆԻՍ

Ասում են, որ նա վերջին շնչում գինի է բղավել:

ՏԻՐՈՒՆԻ

Ճիշտ է, բղավեց:

ԲԱՐԳՈՒՑ

Եվ կին:

ՏԻՐՈՒՆԻ

Ճիշտ չէ: Կանանց մասին խոսք չեղավ:

ՄԱՆՉՈՒԿ

Ի՞նչպես չեղավ: Նա ասաց, որ նրանք դեեր են մարդու միս ու ոսկրով:

ՏԻՐՈՒՆԻ

Ինչ վերաբերում է մսին, նա ասելով ասում էր մսի գույնը:

ՄԱՆՉՈՒԿ

Մի անգամ նա ասաց, որ ինքը սատանայի նաեկն է բնկնելու կանանց պատճառով:

ՏԻՐՈՒՆԻ

35 Հա, պատահում էր, որ շոշափում էր կանանց, բայց չէ որ նա ռևմատիկ էր և ամբողջ ժամանակ խոսում էր բաբելոնյան պոռնկի մասին:

ՄԱՆՉՈՒԿ

Չե՞ք հիշում, նա մի լու տեսավ Քարդոֆի քթի վրա և ասաց, թե դա դժոխքում վառվող մի սև հոգի է:

ԲԱՐԳՈՒՑ

Վառելիքը վերջացավ և այդ կրակը հանգած է: Դա էր այն ամբողջ հարստությունը, որ էս վաստակեցի նրա մոտ ծառայելով:

ՆԻՄ

Զշարժվե՞նք արդյոք: Թագավորը, կարծում եմ, արդեն դուրս է եկել Սաուրեմպտոնից:

ՊԻՍՏՈՒ

Երթա՞նք, մեր ժամն է: Մոտ քեր շուրթերդ, իմ թանկագին սեր,

Իմ ունեցվածքը խնամֆով պահիր, շարժական, թե անշարժ:

Եվ այս կանոնը կարգիր առաջնորդ. «Փողը կանխիկ տուր»:

Մի վստահիր ոչ ոքի.

Երդումները հարդ են,

Իսկ տղամարդկանց փուչ խոստումները՝ փափուկ կարկանդակ.

Միակ վստահելի շունը կողպեֆն է, իմ անգին բաղիկ,

Ուստի caveto¹-ն բող լինի միակ ֆո խորհրդատուն:

¹ Զգուշություն, աշարժություն (լատ.):

Դե՛հ, ցամաֆեցրու բյուրեղն աչքերիդ:
Դեպի՛ Ֆրանսիա, զենֆի ընկերներ,
Տգրուկների պես վրան հարձակվենք
Եվ ծծե՛նք, ծծե՛նք, Ֆրանսիայի ողջ արյունը ծծենք:

ՄԱՆՁՈՒԿ

Առողջարար սնունդ չէ, այդպես են ասում:

ՊԻՍՏՈՒ

Համբուրի՛ր շուրքերը և ֆայլով հառաչ:

ԲԱՐԳՈՒՅ

Մնաս բարո՛վ, տիրունի:

Համբուրում է նրան:

ՆԻՄ

Ես չեմ կարող համբուրել. ամբողջ ներուրյունը դրա մեջ է: Եվ սակայն,
մնա՛ք բարով:

ՊԻՍՏՈՒ

Պինդ տիրունի եղիր: Իմ պահանջն այդ է:

ՏԻՐՈՒՆԻ

Բարի՛ նանապարհ: Գնա՛ք բարով:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Չ Ո Ր Ր Ո Ր Դ

Ֆրանսիա: Մրահ թագավորական պալատում: Փողեր:

Մտնում են Ֆրանսիո թագավորը շփամբով, դոֆինը,
դուֆա Բուրգունդին, գորպետը և ուրիշներ:

ԹԱԳԱՎՈՐ ՖՐԱՆՍԻՈ

Անգլիան ամբողջ ուժով գալիս է մեր երկրի վրա,
Եվ մենք պետք է մեր ճիգերը լարենք,
Որ արժայական հակահարված տանք այդ եկվորներին:
Ոստի, դուֆա Բեւի և դուֆա Ֆրեառն,
Դսեր Օուլեանի և Ֆրաբանտի՝ ընկեք նանապարհ:
Դուք նույնպես, դոֆին, և արագորեն
Մեր ամբողջները պատրաստեք կովի,
Ապահովելով խիզախ, անվեհեր բերդապահներով
Եվ պաշտպանական զենքով, պաշարով:
Անգլիան վայրագ մի կատաղությամբ խուժում է առաջ,
Ինչպես ջրերն են հորձանքով լցվում երախն անդնդի,

Ուստի մենք պետք է խոհական լինենք,
Գասեր ֆաղելով վերջին անգգույշ օրինակներից,
Երբ անգլիացիք, մեր անհոգությամբ ֆաջալերվելով,
Սարսափ են սփռել մեր դաշտերի մեջ:

ԳՈՅԻՆ

Հայր իմ ահարկու,

Դուք նշմարիտ եք, մենք պետք է գինվենք,
Խաղաղությունը ֆանգի չպետք է
Այդքան բթացնի մեր տերությանը:
Եթե խոսք չլիներ պատերազմի մասին,
Դարձյալ պատշան էր ուժեղացնելու մեր ամրոցները,
Ամրացնել զորքը, կազմել զորահանդես,
Պատերազմն իբրև արդեն մերձ է մեզ:
Արդ, շարժվենք առաջ, գննելու համար,
Թե Ֆրանսիայի ո՛ր մասն է տկար:
Եվ այդ ամենը մենք պետք է անենք
Առանց երկյուղի արաահայտության,
Իբրև լսել ենք, թե անգլիացիք շֆնաղ մայիսին
Եկել են մեզ մոտ պարահանդեսի. և այդչափ միայն:
Այդ երկիրը, հայր, կառավարվում է սաստիկ անխորհուրդ:
Երկրի մականը այժմ գտնվում է
Մի աներևակայելի տխմարի ձեռքում,
Մի ծանծաղամիտ ապուշ պատանու,
Ճենք պատնառ շունենք ուստի երկյուղի:

ԶՈՐԱՊԵՏ

Օ՛, իշխան դոֆին,

Դուք այդ արքայի մասին դատում եք չափազանց սխալ:
Վսեմավայլղ թող հարցախննի մեր դեսպաններին,
Թե նա ինչպիսի՞ գերապատվությամբ
Ընդունել է մեր պատվիրակներին, նրանց ուղերձը
Եվ լսել նրանց:
Որքան իմաստուն խորհրդականներ ունեք իր կողմին,
Խոսքի մեջ որքան գուսպ էր, կշռադատ,
Միաժամանակ որքան ահարկու և անդրդվելի
Թագավորական վնիոների մեջ,
Եվ կհասկանաք, որ նրա վատնած
Զահել օրերի մոլեգնությունը
Լոկ մի արտաֆին նմանություն էր

- 46 Ավագ Բրուտոս Հոռմեացու,
Որն իր հաննարը խելագարության դիմակով ծածկեց,
Այն ֆաջահմուտ պարսիգպանի պես,
Որ վաղ բողբոջող և ազնվագույն բերբեր խոստացող
Արմատները միշտ ապրով է ծածկում:

ԳՈՖԻՆ

Ո՛չ, ո՛չ, դուք նիշտ չե՛ք, հարգո գորապետ,
Մեր կարծիքն այլ է, և սակայն ի՛նչ փուլթ.
Միշտ պաշտպանվելիս խիստ շահեկան է այսպես մտածել.
Որ մեր թշնամին գորավոր է շատ, ֆան մեզ բվում է:
Այդ պարագային պաշտպանությունը կլինի հաստատ:
Իսկ տկար, ժլատ չափագրումը
Նման է գծուծ թշվառականին,
Որ փշացնում է իր իսկ վերարկուն
Կերպասի շնչին խնայողությամբ:

ՔԱԳԱՎՈՐ ՅՐԱՆՍԻՈ

Մենք էլ կարծում ենք,

- Որ գորավոր է Անգլիո արֆան,
Ուրեմն լինենք մեր հզորությամբ նրան արժանի:
Այդ թագավորի նախահայրը մեր արյամբ է սնվել,
Իսկ Հարրին՝ ինքը շոռավիզն է այդ արնախում տոհմի.
Որ հալածել է մեզ մեր հայրենի հանապարհներին:
Մեր ամոթալի սև օրը նիշենք,
66 Մեր պարտությունը Քրեսի անեղ հակատամարտում,
Երբ ու եղվարդը, ու Վալեսի Սև իշխան էր կոչվում
Անձամբ իր ձեռքով և սև անունով
Գերի վերցրեց անխտիր բոլոր մեր իշխաններին,
Իսկ սարի վրա իր հայրը կանգնած, սարի պես բարձր,
Արևի ոսկյա թագով զարդարված,
Հրնվում էր ինչպես իր հերոս ուղիս,
Ոչնչացնում էր բնության կերտած հրաշալիքը, —
Նախատիպերը տարբեր ցեղերի, ու երկնավորի
Եվ Ֆրանսիայի հայրերի նիգով
Քսան տարվա մեջ բազմացել էին:
Հենրիսն մի նյուզն է այդ հերոսական հաղթարուն ծառի:
Նրա բնատուր հզորությունից
Եվ վերուստ նշված հաջողությունից պե՛տք է վախենալ:

Մտնում է մի սուրհանդակ:

Հենրի արքայի դեսպանությունը
Մտաք է աղբրում ձեզ մոտ, տեր արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՅՐԱՆՍԻՈ

Իսկույն կրնդունվեն: Հրավիրե՛ք ներս:

Սուրհանդակը և մի քանի պալատականներ դուրս են գնում:

Շները սաք-սաք, տեսե՛ք, վագում են որսի ետևից:

ԴՈՅԻՆ

Անվախ շուռ եկե՛ք դուք նրանց վրա և կպապանձվեն:
Երկշտ շները միշտ բարձր են հաշում,
Երբ որսն է նրանց առջևից փախչում: Իմ բարի արքա,
Խոսքը կարն կապե՛ք անգլիացոց հետ: Յույց տվե՛ք նրանց,
Թե ո՛ր տերության քաղափորն է՛ք դուք:
Ինճնասիրությունը նվազ մեղք է, հայր,
Քան ինճնավստահ խոնարհությունը:

Մտնում են պալատականները էֆեսերի և շֆախմբի հետ:

ԹԱԳԱՎՈՐ ՅՐԱՆՍԻՈ

Մեր անգլիացի եղբոր կողմի՞ց ե՛ք:

ԷՔՍԵՏԵՐ

Այո՛: Եվ նա ձեզ հղում է ողջույն,
Եվ պահանջում է ամենակարող աստծո անունով,
Որ հրաժարվե՛ք իշխանությունից,
Վայր դնե՛ք անդարձ բոլոր փոխառած մեծությունն ու փառք,
Որ երկնի կամֆով, օրենֆով մարդկանց և վեհ բնության
Պաական է նրան և ժառանգներին. այսինֆն թագր,
Եվ լայնատարած ողջ պատիվները, որ իրավունֆով
Եվ ժամանակի սահմանյալ կարգով
Վերաբերում է Ֆրանսիո թագին: Որպեսզի իմանաք,
Որ դա անարդար, հեղզ և անհաջող մի պարտադրանֆ չէ,
Պեղված որդնակեր դարերի խորֆից,
Ոչ էլ փորֆրված հին մոռացության եղկելի փոշուց,
Նա հղել է ձեզ հեշտությամբ հիշվող այս տոհմաձառը:

Հանձնում է մի քուղք

Որ ամեն մի նյուղ գծված է ստույգ.
Եվ խնդրում է ձեզ ուշադիր գննել այս տոհմաձառը:
Երբ կհամոզվե՛ք, որ նա ծագում է
Իր հոշակավոր նախահայրերի՝

Էղվաղ Երրորդի փառավոր տոհմից, — առաջարկում է,
Որ վերադարձնե՛ք և՛ թագ, և՛ երկիր
Անարդարորեն խլված իրենից, —
Քանի որ նա է յրանց բուն տերը և մենամարտի հրավիրողը:

ԹԱԳԱՎՈՐ ՖՐԱՆՍԻՈ

Իսկ եթե մերժվի, ի՞նչ է լինելու:

ԷՔՍԵՏԵՐ

Արյունահեղ մարտ: Քանզի այդ թագը
Եթե դուք նույնիսկ ձեռ կրժնում թափցնե՛ք,
Ֆոնուրյամբ պիտի սյուկի այնտեղից.
Ուստի գալիս է վայրագ փոթորկով,
Որոտով, շանթով և երկրաշարժով, ինչպես Արամազդ,
Որ եթե մերժե՛ք՝ ուժով նվանի:
Նզովում է ձեզ ասածն զթուրյամբ,
Որ թագը հանձնե՛ք, խղնալով թշվառ այն հոգիներին,
Որոնց անխնա լափել է տենչում այս սլատերագմբ,
Ազահ երախը լայնորեն բացած:
Ձեր գլխի վրա պիտի ծանրանա
Ճիշը որբերի, արցունքն ու ողբը խեղճ այրիների,
Եվ զոհվածների արյունը անմեղ,
Հառաչանքները հարս ու կույսերի
Իրենց հայրերի, ամուսինների, սիրածի համար,
Որ պիտի լցվի որկորն այս ահեղ հակամարտության:
Սհա՛ թե ինչ է նրա պահանջը
Եվ նպատակը իմ դեսպանության:
Մի խնդիր ես, եթե դոֆինը ներկա է այստեղ,
Ես նրան հատուկ ողջույն եմ բերել:

ԹԱԳԱՎՈՐ ՖՐԱՆՍԻՈ

Ձեր առաջարկը ֆննդության կանոնե՛ք,
Եվ վաղը կտանք մեր պատասխանը
Եղբայր արքային:

ԴՈՖԻՆ

Ինչ վերաբերում է դոֆինին անձամբ,
Ինքն այստեղ եմ նրա փոխարեն:
Ի՞նչ է ուղարկել Հենրի արքան ինձ:

ԷՔՍԵՏԵՐ

Նախատինք, հեզնանք, մարտահրավեր,
Ամեն, ամեն բան, որ անպատշաճ չէ
Հզոր արքայի պատվին ու փառքին

Եվ իբրև պարզև վայելուչ է ձեզ:
Այդպես է ասում իմ թագավորը. եթե ձեր հայրը
Նրան ձեր հղած կծու հեզնանքը շթեթևացնի,
Մեր պահանջներին համաձայնելով,
Կդատապարտի նա ձեզ այնպիսի մի թևժ հատուցման,
Որ Ֆրանսիայի ֆարանձավներն ու գետնախորշերը
Պիտի տարվողեն ձեր ապերասան հանգցնությունը
Եվ ձեր հեզնանքը վերադարձնեն ձեզ
Թնդանոթների անեղ որոտով իբրև արձագանք:

ԳՈՖԻՆ

Եթե իմ հայրը հոժարի զիջել,
Ասացե՛ք նրան, որ որդին դեմ է. տենչում եմ ֆանգի
Գոտեմարտելու Անգլիայի հետ: Ահա՛ թե ինչու
Իբրև զուգրնկեր նրա սնափառ ջահելությունը,
Եո նվիրեցի նրան փարիզյան խաղազնդակներ:

ԷՔՍԵՏԵՐ

Փարիզի Լուվրը պիտի դորդա այդ մեղքի համար,
Հգոր Եվրոպայի բուն աբոնմիքը թեկուզ նա լինի:
Եվ վստահ եղե՛ք, մեծ տարբերություն ղուր պիտի գանձե՛ք
Ինչպես մենք գտանք զարմանքով սաստիկ
Նրա խակ, անփորձ ջահել օրերի ակնկալության
Եվ գահին բազմած օրերի միջև:
Նա ժամանակը այժմ կշռում է
Ամեն վայրկյանի վերջին հատիկը կշեռքի դրած,
Այդ բանին ստույգ պիտի համոզվե՛ք ձեր կորուստներով
Եթե նա մնա Ֆրանսիայի մեջ:

ԹԱԳԱՎՈՐ ՖՐԱՆՍԻՈ

Վաղը կատանա՛ք մեր պատասխանը մանրամասնորեն:

ԷՔՍԵՏԵՐ

Անապարանքով մեզ վերադարձե՛ք, թե չէ մեր արֆան
Կշտապի այստեղ մեր հապաղելու պատևառն իմանալ.
Նա արդեն ոտք է դրել այս հողին:

ԹԱԳԱՎՈՐ ՖՐԱՆՍԻՈ

Շուտով կարձակվե՛ք բարի խոսքերով.
Մի գիշերը դա շնչին դադար է, միջոց աննշան,
Այսֆան կարևոր մի հարց վնոելու,
Ուստի հարկ չկա մտահոգվելու:

Փողկը:

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՅՒՆ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Կ

Մտնում է թեմի խոսնակը:

ԹԵՄԻ ԽՈՍՆԱԿ

Մեր տեսաբանը այսպես դեպի առ դեպի
Նրեակայությունը քննելով հզոր սուրում է առաջ
Մտքից էլ արագ: Դուրս պատկերացրեք, որ արդեն տեսաք,
Թե ինչպես արհամ աստուածային կամ նավ նստեց
Հեմպտոն ֆարսիում: Ինչպես իր խիզախ նավատորմիդը
Մեծաբանի դրոշները հայտնի ծածանելով
Կողմ է Ֆեբուսի լուսափայլի մեջ:
Մտնով պատկերացրեք, թե ինչպես նավի ձիգ պարաններով
Վեր են մազլցում ազանները ժիր:
Սուր սուլոց լսվեց, իմացեք, որ դա շիրք ձայներում
Կարգ հաստատելու ազդանշան է:
Առաջաստներ, տեսե՛ք, նոնվում են
Անտեսանելի սողոսկող ֆամուց,
Հսկա նավերը վարելով ընդդեմ գոռ ալիքների:
Պատկերացրեք, որ ծովափին կանգնած, ապշած նայում եք
Սեպ կոհակների վրա օրորվող բերդաֆաղափի,
Այդպես է երևում դեպի Հարֆլեր ընթացող հզոր
Այդ վեհատեսիլ նավատորմիդը:
Մտնով պինդ կառչեք նրա հեռանամասից,
Լեե՛ք ձեր Անգլիան. մունչ, խաղաղավետ, ինչպես կեսգիշեր,
Պաշտպանությունը ծերունիների
Նվ պառավների հսկումին թողած, և մանկիկների,
Որ դեռ վժժում են բարուրների մեջ անծուծ և անզոր:
Չեզ հարց եմ ասվիս, կա՞ր արդյոք մի մարդ,

Որի ծնոտին ծլարձակել է գեթ մի աղվամագ
 Եվ չի շտապում դեպի Ֆրանսիա,
 Հետևելով այս փառնախո, անվախ ասպետ գնդերին:
 Կարե՛ք ձեր միտքը և մի պաշարված
 Քաղաք կերևա ձեր հայացքի դեմ,
 Հրասայլերից թնդանոթները
 Փանտ երախները բացած շրջավակ Հարֆլերի վրա՝
 Եվ պատկերացրե՛ք, որ Ֆրանսիայի
 Գեսպանը շտապ վերադառնալով՝ հայտնում է Հենրուն.
 Որ թագավորը առաջարկում է նրան կնուրյան
 Իր սիրուն դստեր Կատարինեին և, իբրև օժիտ,
 Մի ֆանի մանր, աղֆառ դֆսուրյուն:
 Առաջարկը մերժեց: Հաղթ ու՛քաձիգը
 Գիվական ցուպը հրձիգ պատրույգով
 Տեսե՛ք, մոտեցրեց գոռ թնդանոթին:

Խորհում տազնապի աղաղակներ և թնդանոթի որոս:

Ամեն ինչ սրվեց նրանց աչքի դեմ: Դարձյա՛լ համբերե՛ք,
 Մեր ներկայացման պակասն ու թերին մտնով լրացրե՛ք:

Կնում է:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ֆրանսիա: Հարֆլերի դիմաց:

Թմբկահարություն:

Մտնում են Հենրի թագավորը, Էֆեստերը, Բեդֆորդը, Դյաւտերը
 և գինվորներ՝ գրոհի վերելակ — սանդուղիներով:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Նորի՛ց մի գրոհ ամրոցի պատին, իմ բարեկամներ,
 Նորի՛ց մի հարված: Խորացնենք նեղքը,
 Կամ անգլիական մեր դիակներով այդ նեղքը փակենք:
 Խաղաղ ժամանակ ոչ մի բան այնպես չէ պինդում մարդուն,
 Ինչպես ամոթխած խոհեմությունը և վարքը խոնարհ,
 Իսկ երբ որ ուզումի հողմերն են շաշում
 Բարձր, արարձով նմանվե՛ք վագրին,
 Չե՛ր մկանները թող ամուր արկվեն, արյունը շարժվի,
 Խոնարհ բնույթը դիմակավորե՛ք անգութ զայրույթով,
 Աչքերին տվե՛ք ահարկու նայվածք, —
 Թող նրանք գլխի խոռոչի միջով փողարկված նայեն
 Պղնձյա անեղ հրանոթի պես: Թող նրանց վրա

Հոնքերը կախվեն ահաբեկ, ինչպես
 Աղաջրերից մաշված ապտոած,
 Զայրագին ցցված ավերակ հիմքին,
 Վայրագ օվկիանի ավերիչ, ագահ լափումին անգոր:
 Ատամները սեղմեք, փնչացրեք ունգները,
 Ամուր շունչ փաշեք, ձեր ոգին լարեք նետաղեղի պես
 Մինչև բարձրակետ: Հառա՛ջ, փաջարի անգլիացիներ:
 Չեր մեջ հայրերի արյունն է հոսում մարտերում կոփված,
 Հայրեր, որ ահեղ Ալեխանդրի պես
 Արևածագից մինչև մայրամուտ կովել են այստեղ
 Եվ իրենց սուրը պատյան են դրել,
 Երբ տապալվել է ոսոխը վերջին,
 Ի շիք դարձնելով պաանաոր վեճի:
 Մի՛ խայտառակեք դուք ձեր մայրերին,
 Այլ վկայեցեք, որ դուք ծնունդն եք ձեր փաջ հայրերի:
 Վեճ տիպար եղեք արյունով ստոր գինվորի համար,
 Սովորեցնելով նրան մարտնչել:
 Իմ հետևակի շինական գորհեր,
 Անգլիո հողն է ձեր բազուկներին ուժ ու ջիղ ավել,
 Յույց տվեք այժմ հզոր եռանդը ձեզ սնած հողի,
 Արտոնեք երդվել, որ արժանի եք դուք այդ սուրբ հողին:
 Վստահ եմ դրան, փանգի ձեր շարժում
 Չկա՛ այնպիսի մի նվաստ գինվոր,
 Որի աչքերում առափինուրյան հուրը չշողա:
 Գամփոռների պես փոկերով զսպված կանգնած եք շարժով
 Ուսին հետամուտ: Ես այդ տեսնում եմ: Ուրը պատրաստ է:
 Անվա՛խ դեպի մարտ և թող որոտա ձեր կանչը ուժգին.
 «Տե՛ր, օգնի՛ր երկրին, մեր թագավորին և Սուրբ Գևորգին»:

Գնում են:

Խորհում մարտական թմրկահարուրյան և բնդանոթների սրտ.

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Ի

Նույն վայրը:

Մտնում են նիմը, Բարդուխը, Պիսաուլը և մահչուկը:

ԲԱՐԿՈՒՑ

Դեճ, հառա՛ջ, հառա՛ջ: Դեպի խրամա՛տ, դեպի իրամա՛տ:

ՆԻՄ

Խնդրում եմ ֆեզ, ավագ ենթասպա, մի քիչ սպասիր:

Հարվածները շատ թունդ են, իսկ ես պահուստի համար ավելորդ
կյանք չունեմ: Այստեղ ուրիշ երգ է երգվում: Մեր լսածը մեղեդի չէ:

ՊԻՍՏՈՒ

Դու նիշտ ասացիր, կատակի տեղ չէ,
Հարվածն է առատ և աստժո ստրուկ մեռնողները շա՛տ:
Ե՛վ սուր, և՛ վահան
Ռազմի մեջ դաժան
Փառք են վաստակում անման:

ՄԱՆՉՈՒԿ

Նրանի՛ր թե ես նստած լինեի մի գինետան մեջ կոնդոնում: Աշխարհա-
յին իմ ամբողջ փառքը ես սիրով կտայի մի բաժակ գաբեչրի և ան-
վտանգության համար:

ՊԻՍՏՈՒ

Ես էլ:
Ա՛խ, բախտս բաներ
Իդձս կատարվեր,
Մի կերպ էս կովից բաճուն
Մկվկի կոնդոն՝ գինետում:

ՄԱՆՉՈՒԿ

Ես էլ կուզեի. բայց նյուդի վրա,
Թռչնակի համար հեշտ է երգելը,
Քան թե այստեղից կոնդոն փախչելը:

20

Մտնում է Ֆլուպենը:

ՅԼՅՈՒԼԵՆ

Դեպի իւրամա՛տ. անպիտան շներ,
Եվ դուք ուզում եք այդ նեղֆից փախչե՞լ:

Գերի է վերցնում նրանց:

ՊԻՍՏՈՒ

Օ՛, գրա՛. մեծ դուքս, այս թշվառներին.
Զսպի՛ր զայրույթդ, զսպի՛ր զայրույթդ տղամարդկային,
Զսպի՛ր զայրույթդ, գերապատիվ դուքս,
Հրաշալի՛ մարդ: Եվ ներո՛ղ եղիւր, գրա՛, հանդարտվի՛ր.
Աղավնյա՛կ անգին:

ՆԻՄ

Ա՛յ քեզ լավ կատակ: Այդպիսի կատակ պատվիդ վայել չէր:
Ֆլուպենը նիմեն, Բարդուֆին և Պիստոլին առաջն արած՝ տանում է:

ՄԱՆՉՈՒԿ

Ճիշտն ասած, ես դեռ փոքր եմ, բայց կարողացա լավ դիտել այս երեք պարծենկոտներին: Ես այդ երեքի ծառան եմ, իսկ եթե նրանք իմ ծառաները լինեին, երևի դժվար թե կարողանային իմ շափ գործ կատարել, որովհետև այդ երեք ծույլ այլանդակ հացկատակներին էթե իրար վրա գումարես, նրանց գումարից մի կարգին մաքո չի ստացվի: Վերցնենք Բարդուֆին. երեսը կարմիր, բայց վախկոտի մեկն է: Մեծ-մեծ բրդում է. իսկ կոճեղ չի ուզում: Վերցնենք Պիստոլին. լեզուն մի կեռ բուր, իսկ իր զենքը լուռ: Ջենից փախչում է, խոստով կրակում: Վերցնենք Նիմին: Սա ինչ-որ տեղ լսել է, որ իբրև թե Բախտոս մարդիկ ամենաբաշն են, ուստի վախենում է նույնիսկ բարձրաձայն աղոթել, որ մարդիկ շատեն, թե վախկոտ է: Իր բերանը ֆիշ պղծեց, բայց լավ բան էլ ֆիշ առեց: Այ մի մարդու գլուխ չկուտեց, բացի իր սեփական գլխից: Այդ էլ պատահեց, երբ մի անգամ հարբած վիհակում իր գլուխը հարվածեց մի սյունի: Այդ մարդիկ գողանում-թոցնում են, ինչ կամենում են և այդ ամենը անվանում են ռազմական ավար: Բարդուֆը մի անգամ վինի մի տուփ թոցրեց, տասներկու մղոն ֆաշ տվեց իր հետ և վանառեց մեկ ու կես մանրադրամով: Նիմը և Բարդուֆը նույնիսկ երդմամբ եղբայրացան, որ միասին կողոպուտ անեն: Կալեում նրանք թոցրին մի հրաքիակ: Այդ քիակը աեսնելով, ես իսկույն գլխի ընկա, որ տղաները պատրաստվում են ածուխ գողանալ: Նրանք ուզում էին իմ ձեռները կոխել ուրիշների գրպանները, ինչպես իրենց ձեռնոցները կամ թաշկինակներն են իրենց գրպանները կոխում, իսկ դա խիստ հակառակ է իմ մարդկային բնություն: Նրե ես ուրիշների գրպաններում եղածը հանեմ զնեմ իմ գրպանը, պարզ բան է, որ ես դրանով իմ խղճի զեմ հանցանք գործած կլինեմ: Ես պետք է լինեմ նրանց և մի ավելի լավ ծոռայություն որոնեմ ինձ համար: Իմ ստամոքսը տկար է և չի կարող մարսել նրանց անզգամությունը, ուստի ես պետք է զեն նետեմ այդ կեղտը:

Դեռում է:

Մտնում է Ֆլյուպեր, նրա Լաեից՝ Գովերը:

ԳՈՎԵՐ

Հարյուրապետ Ֆլյուպեն, ձեզ շտապ պահանջում են ականափոսի մտ: Գուֆս Գլոստերը ուզում է խոսել ձեզ հետ:

ՏԼՅՈՒՆՆ

Ականափոսի մոտ: Առացեք ղֆսին, որ ականափոսին մտանալը ալն-ֆան էլ ապահով չէ, ֆանի որ, գիտեմ ինչ, այն շինված չի ռազմական կարգ ու կանոնի համաձայն, բավականաչափ խոր չի: Թշնամին, գիտեմ

ինչ, տակը շորս կանգուն խորուքյամբ հակառակ ականներ է դրել.—
այդպես էլ զեկուցեմ դեսին: Աստված վկա, դրանք կպայքեն և վե՛րջ
բոլորին, երբ ավելի լավ կարգադրություններ չլինեն:

ԳՈՎԵՐ

Գուգս Գլաստեր, որին տրված է պաշարման հրամանը, ամբողջապես
դեկավարվում է մի իռլանդացու կողմից, որը մի շատ քաջ մարդ է կար-
ծեմ:

ՅԼՅՈՒԼԵՆ

Հարյուրապետ Մաֆ-Մորիսն է, այդպես չէ՞:

ԳՈՎԵՐ

Այդպես է, կարծեմ:

ՅԼՅՈՒԼԵՆ

Աստված վկա, նա էլ է. այդպիսի մի ուրիշ էլ աշխարհում չես գտնի:
Ես պատրաստ եմ այդ բանը նրա երեսին ասել: Գիտեմ ինչ, նա ռազ-
մավարությունից,— ես ի նկատի ունեմ հռոմեական ռազմական արվես-
տը,— այնքան է հասկանում, որքան շան փոքր:

ԳՈՎԵՐ

Տեսեմ, նա այստեղ է գալիս և նրա հետ է իռլանդացի հարյուրապետ
Ջեմին:

ՅԼՅՈՒԼԵՆ

Հարյուրապետ Ջեմին մի հազվագյուտ քաջ մարդ է, այդ բոլորին է հայտ-
նի: Նա գիտեկիմների ծով է և հրաշալի ուսումնասիրել է ռազմավարա-
կան հնագույն արվեստը. այդ երևում է նրա հրամաններից: Աստված
վկա, ուզածդ զինվորականին բեր և նա կպաշտպանի իր կարծիքը նրա-
նից ոչ պակաս հմտությամբ, երբ խոսքը վերաբերի հին հռոմեական
ռազմավարական գործին:

Մտնում են Մաֆ-Մորիսը և Ջեմին:

ՋԵՄԻ

Բարի օր, գնդապետ Ֆլյուպեն:

ՅԼՅՈՒԼԵՆ

Բարի օր և ձերդ գերազանցության, պատվական գնդապետ Ջեմի:

ԳՈՎԵՐ

Գործերն ինչպե՞ս են, գնդապետ Մաֆ-Մորիս: Գուց Զեռ ականափուսը
լինեցի՞ք: Ական փորողները դադարեցրի՞ն աշխատանքը:

ՄԱՔ-ՄՈՐԻՍ

Այո: Աստված վկա, գործը վատ է: Աշխատանքը ձգեցի՞նք, նախանշի փողը հենչեց: Երդվում եմ այս ձեռքով և իմ հոր հոգով՝ գործը վատ է, ամեն ինչ ձգեցի՞նք: Մեղա քեզ աստված, ես կարող էի ամբողջ ֆաղափը պայքեցնել մի ժամվա մեջ: Օ՛, գործը վատ է, գործը վատ է, այս ձեռքով եմ երդվում: Բոլորովին վատ է:

ՅԼՅՈՒԼԵՆ

Հարյուրապետ Մաֆ-Մորիս, այժմ աղաչում եմ քեզ, շնորհ արե՛ք ինձ, գիտե՛ք ինչ, մի փութ գրուցե՛լ ձեզ հետ ուղղակի արվեստի մասին. հոռմեական պատերազմական արվեստի մասին: Գիտե՛ք ինչ, վիճարանության և բարեկամական գրույցի ձեռով, մասամբ իմ կարծիքը ամրապնդելու, մասամբ էլ, գիտե՛ք ինչ, մտփս բավարարության համար ուղղակի արվեստի սկզբունքային հարցերում: Այդ է բուն խնդիրը:

ՋԵՄԻ

Ա՛յ դա հրաշալի բան կլինի, հավատացնում եմ, իմ պատվական հարյուրապետ: Ձեր թույլտվությամբ ես նույնպես կմասնակցեմ այդ գրույցին և երբեմն կողմնակի կընդմիջեմ իմ խոսքով:

ՄԱՔ-ՄՈՐԻՍ

Այժմ գրույցի ժամանակ չէ, փրկի՛ր ինձ, տեր աստված: Օրը սաստիկ քեժ է: Ե՛՛վ եղանակն է շոգ, և՛ պատերազմը, և՛ քաղաքը, և՛ դիտերը: Զրույցի ժամանակ չէ ամենևին: Քաղաքը պաշարված է և շեփորը մեզ դեպի խրամատ է կանչում, իսկ մենք շողակրատում ենք, տեր իմ աստված, և ոչինչ չենք անում: Ամո՛ք մեզ բոլորիս, փրկի՛ր ինձ, տեր աստված: Ամոք է անգործ անբան կանգնել, այս ձեռքովս եմ երդվում.— ամոք է: Կոկորդներ կան կտրելու և գործեր կատարելու, մինչդեռ ոչինչ չի արված: Փրկի՛ր ինձ, տեր աստված: Փրկի՛ր:

ՋԵՄԻ

Պատարա՛գը վկա, նախա՛ն այս աշխերը կապավի՞նեն ինձ, ես կմատուցեմ հրաշալի ժամերգություն և կամ կընկնեմ մարտում: Իսկ եթե վիճակված է մեռնել, կյանքս կվաճառեմ շատ քանի, որքան հնարավոր է: Ես այդ բանը անկասկած կանեմ, համոզված եղե՛ք: Սատանան տանի. սիրով կուզենայի ձեր գրույցը լսել:

ՅԼՅՈՒԼԵՆ

Հարյուրապետ Մաֆ-Մորիս, գիտե՛ք ինչ, թույլ տվե՛ք ասել, որ ֆչերը ձեր ազգի մեջ...

ՄԱՔ-ՄՈՐԻՍ

Ի՞մ ազգի մեջ: Իմ ազգը ի՞նչ է. մի ինչ-որ անզգա՞մ է, և պոռնկորդի՞, և սրիկա՞, և վաաատոհմիկ խաբեբա՞: Ի՞նչ է իմ ազգը: Ո՞վ է հանդըգնում խոսել իմ ազգի մասին:

ՅԼՅՈՒԼԵՆ

Գիտե՛ք ինչ, հարյուրապետ Մաֆ-Մորիս, եթե դուք իմ խոսքին ուրիշ իմաստ եք վերագրում, թերևս ես մտածեմ, որ դուք բախկանաչափ սիրալիբ չե՛ք ինձ հետ, անհրաժեշտ չափով չե՛ք հարգում ինձ: Իսկ ես, գիտե՛ք ինչ, ոչ մի բանով պակաս չեմ ձեզնից, թե՛ գինվորական գիտելիքով ու փորձառությամբ և թե՛ իմ ծագմամբ և բոլոր մյուս մասնամասնեքով:

ՄԱՔ-ՄՈՐԻՍ

Իսկ ես այդպես չեմ կարծում, դուք ինձ հավասար չե՛ք: Ես հիմա ձեր գլխիս կրոցնեմ. փրկի՛ր ինձ, աեր ասաված:

ԳՈՎԵՐ

Պարոնե՛ր, դուք ի՞րար շնակացա՛ք:

ՋԵՄԻ

Օ՛, ինչ ահավոր սխալ է:

Լսվում է բանակցության շեփոք:

ԳՈՎԵՐ

Քաղաքը բանակցության է կանչում մեզ:

ՅԼՅՈՒԼԵՆ

Հարյուրապետ Մաֆ-Մորիս, գիտե՞ք ինչ, մի ավելի հարմար առիթով ես ձեզ ցույց կտամ, որ ես գիտակ եմ ռազմավարական արվեստին, — իսկ այժմ՝ վերջացնե՛նք:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Նույն վայրը: Հարձիկերի դարպասների ստաջ:

Պատերի վրա կանգնած են ամրոցայետը և մի քանի քաղաքացիներ,
ներևում՝ անգլիական զորքը:

Մտնում է Հենրի քաղաքը շփամբով:

ՔԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Վեհոն ինչպե՞ս է ամրոցայետի,
Սա մեր վերջնական բանակցությունն է.

Անձնատո՛ւր եղեք, ուստի, մեր բարի ողորմածության
 Կամ ամբարտավան կործանման ծարավ՝
 Մարտի կոչեք մեզ: Ես ձեզ դիմում եմ սուկ իբրև ռազմիկ, —
 Իսկ այդ անունը հույժ պատշան է ինձ, —
 Եթե սկսեցի նորից ուժակոծել,
 Չեմ ավարտելու իմ գրոհը տա՛հ,
 Մինչև կիսաֆանդ Հարֆլեր ֆաղաֆը
 Զքաղեմ ես իր մսխիրների տակ:
 Եվ պիտի փակվեն գթասրտության դարպասները պինդ,
 Վայրագ ռազմիկը կոպիտ, ֆարասիրտ
 Արյունոտ ձեռքով անկաշկանդ պիտի ընթանա առաջ,
 Հոգով ամենի, լայն, ինչպես դժոխք,
 Կանաչ խոտի պես հնձելով շինաղ ձեր կույսերին վիթ
 Եվ մանկիկներին ձեր ծաղկափթիթ:
 Մեղավո՞ր եմ ես, եթե ամբարիշտ պատերազմը բիրտ, —
 Սատանաների իշխանի նման բոցերով պննված, —
 Արևապիղծ դեմքով կատարի գործեր վայրագ, անհեթեթ,
 Կապված ավերի և կործանման հետ:
 Մեղավո՞ր եմ ես, — ո՛չ, մեղքը ձերն է, —
 Եթե բռնության վավաշոտ ձեռքը
 Պղծի անարատ ձեր աղջիկներին:
 Ի՞նչ երասանակ կարող է զսպել անսանձ շարիֆին,
 Երբ նա լեռնիվար իր թափը առնի:
 Կողոպուտի մեջ հրամաններով
 Կատաղաբարո զինվորին զսպել՝ նույնֆան անհույս է,
 Որքան պատվերով՝ ափ հրավիրել ծովահրեշին:
 Ուստի, գթացե՛ք դուր ձեր ֆաղաֆին և ժողովրդին,
 Մեծեր Հարֆլերի,
 Քանի դեռես իմ զինվորները ենթակա են ինձ,
 Քանի գրության զովաշունչ ֆամին
 Թխալերն է վանում թունոտ աղտեղի,
 Ժանտ կոտորածի, բռնաբարության և կողոպուտի:
 Եթե ոչ՝ իսկույն կտեսնեք ինչպես
 Ռազմիկ զինվորը բարկությունից կույր և արևածարավ,
 Իր գարշ, բիրտ ձեռքով
 Պիտի ոլորի, պղծի նշացող
 Ձեր աղջիկների վարսափնջերը,
 Եվ ձեր հայրերի գորշ արծաթափայլ մորուսից բռնած՝
 Նրանց հարգարժան ձեր գլուխները պատին հարվածի,

Ձեր մանկիկներին տեգերին ցցի,

Նվ խելագարված մայրերը իրենց հեկեկանֆներով
Նրկիճֆր ցնցեն նման ողբաձայն այն հրեա կանանց,
Նրք Հերովդեսը կոտորեց մանկանց:

Ձեր վնիոն ի՞նչ է. համաձայնվո՞ւմ ե՞ք ֆաղաֆը հանձնել,
Ի բաց վանելով կոտորած, ավեր,
Թե՞ մեղանշական ձեր պաշտպանությամբ այդպես կործանվել:

ԱՄՐՈՑԱՊԵՏ

Մեր վառ հույսերի վախճանը հասավ:
Դո՞ֆին իշխանին խնդրեցինք օգնել,
Նա պատասխանեց, որ իր զորքը դեռ լրիվ պատրաստ չէ
Հարժիւերը փրկել գոռ պաշարումից: Արդ, անեղ արքա,
Մենք մեր ֆաղաֆը հանձնում ենք քու մեծ ողորմածության:
Ներս մտե՛ք, տիրե՛ք և՛ մեզ, և՛ մերոնց,
Քանզի անգոր ենք, անպաշտպանելի:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Դարպասը բացե՛ք: Հորեղբայր է՛քսեա,
Ներս մտե՛ք Հարժիւեր: Մնացե՛ք այնտեղ
Նվ ամրապնդվե՛ք ֆրանսիացոց դեմ:
Դրասիրտ եղե՛ք բոլորի հանդեպ: Իսկ մենք, հորեղբայր, —
Ձմեռը մոտ է. մեր զորքերի մեջ
Հիվանդություն է ծայր առել արդեն, —
Մենք առժամանակ ետ կերքանք Կալէ:
Այսօր Հարժիւերում ձեր հյուրն ենք խոնարհ,
Իսկ լուսադեմին կրնկնենք ճանապարհ:

Շեփորներ:

Թագավորը շֆախմբով մտնում է ֆաղաֆ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Զ Ո Ր Ր Ո Ր Դ¹

Ֆրանսիական թագավորի պալատը:

Մտնում են Կատարինեն և Ալիսը:

ԿԱՏԱՐԻՆԵ

Alice, tu as été en Angleterre, et tu parles bien le langage.²

¹ Այս ամբողջ տեսարանը գրված է XVI դարի ֆրանսերենով, զգալիորեն տարբեր արդի ֆրանսերենից: (Ուղղագրությունը այս հրատարակության մեջ արդիականացված է): Փակագծերի մեջ առնված են այն բառերը, որոնք գրված են անգլերեն լեզվով (թիթեակի աղճատված) և, հետևաբար, թարգմանության մեջ փոխարինված հայերեն նույնիմաստ բառերով:

² Կատարինե. Ալիս, դու Անգլիայում եղել ես և լավ ես խոսում անգլերեն:

ԱԼԻՍ

Un peu, madame.³

ԿԱՏԱՐԻՆԵ

Je te prie, m'enseigne: il faut que j'apprenne à parler. Comment appelez-vous la main en Anglois?⁴

ԱԼԻՍ

La main? elle est appelée de hand.⁵

ԿԱՏԱՐԻՆԵ

De hand. Et les doigts?⁶

ԱԼԻՍ

Les doigts? ma foi, j'oublié les doigts: mais je me souviendrai
Les doigts? Je pense qu'ils sont appelés de fingres⁷

ԿԱՏԱՐԻՆԵ

La main, de hand; les doigts, de fingres. Je pense que je suis le bon écolier; j'ai gagné deux mots d'Anglais vite. Comment appelez-vous les ongles?⁸

ԱԼԻՍ

Les ongles? nous les appelons de nails.⁹

ԿԱՏԱՐԻՆԵ

De nails. Ecoutez; dites-moi, si je parle bien: de hand, de fingres et de nails.¹⁰

³ Ալիս. Մի քիչ, տիրուհի:

⁴ Կատարինե. Խնդրում եմ, սովորեցրու ինձ: Անհրաժեշտ է, որ ես անգլիերեն խոսել սովորեմ: Անգլիերեն ի՞նչպես կասեն ձեռք:

⁵ Ալիս. Ձեռք: Դրան ասում են (ձեռք):

⁶ Կատարինե. (Ձեռք): Իսկ մատների՞ն:

⁷ Ալիս. Մատների՞ն: Տեր իմ աստված, մոռացա. մատներին ի՞նչ են ասում. հիմա կվերհիշեմ: Մատներ: Կարծեմ դրան ասում են (մատներ), այո՞, (մատներ):

⁸ Կատարինե. Ձեռք— (ձեռք), մատներ— (մատներ): Ինձ թվում է՝ ես շատ լավ աշակերտուհի եմ. շատ արագությամբ սովորեցի երկու անգլիերեն բառ: Իսկ եղունգներին ի՞նչ են ասում:

⁹ Ալիս. Եղունգներ: Մենք դրանց ասում ենք (եղունգներ):

¹⁰ Կատարինե. (եղունգներ): Խնդրեմ ասացեք, ես ճի՞շտ եմ ասում — (ձեռք, մատներ և եղունգներ):

ԱԼԻՍ

C'est bien dit, madame; il est fort bon Anglois.¹¹

ԿԱՏԱՐԻՆԵ

Dites-moi j'Anglois pour le bras.¹²

ԱԼԻՍ

De arm, madame.¹³

ԿԱՏԱՐԻՆԵ

Et le coude?¹⁴

ԱԼԻՍ

De elbow.¹⁵

ԿԱՏԱՐԻՆԵ

De elbow. Je m'en fais la répétition de tous les mots que vous m'avez appris dès à présent.¹⁶

ԱԼԻՍ

Il est trop difficile, madame, comme je pense.¹⁷

ԿԱՏԱՐԻՆԵ

Excusez-moi, Alice; écoutez: de hand, de fingres, de nails, de arm, de bilbow.¹⁸

ԱԼԻՍ

De elbow, madame.¹⁹

ԿԱՏԱՐԻՆԵ

O Seigneur Dieu, je m'en oublié; de elbow. Comment appelez-vous le col?²⁰

11 Ալիս. Գերազանց է, տիրուհի: Դուք հրաշալի եք արտասանում անգլերեն:

12 Կատարինե. Ասացեք, անգլերեն ինչպե՞ս կլինի բազուկ:

13 Ալիս. (բազուկ), տիրուհի:

14 Կատարինե. Իսկ արձու՞նկ:

15 Ալիս. (արձունկ):

16 Կատարինե. (արձունկ): Ես հիմա կկրկնեմ այն բոլոր բառերը, որ դուք ինձ սովորեց-

րիք:

17 Ալիս. Ես կարծում եմ, որ դա բավական դժվար կլինի, տիրուհի:

18 Կատարինե. Ներեցեք, Ալիսա, լսեցե՛ք— (ձեռք, մատներ, եղունգներ, բազուկ, ամուկ):

19 Ալիս. (Արձունկ), տիրուհի:

20 Կատարինե. Աստված իմ, մոռացա— (արձունկ): Իսկ վզին ի՞նչ են ասում:

ԱԼԻՍ

De neck, madame.²¹

ԿԱՏԱՐԻՆԵ

De nick. Et le menton?²²

ԱԼԻՍ

De chin.²³

ԿԱՏԱՐԻՆԵ

De sin. Le col, de nick: le menton, de sin.²⁴

ԱԼԻՍ

Oui. Sauf votre honneur, en vérité, vous prononcez les mots aussi droit que les natifs d'Angleterre.²⁵

ԿԱՏԱՐԻՆԵ

Je ne doute point d'apprendre, par la grace de Dieu, et én peu de temps.²⁶

ԱԼԻՍ

N'aver vous pas déjà oublié ce que je vous ai enseigné?²⁷

ԿԱՏԱՐԻՆԵ

Non, je reciterai à vous promptement: de hand, de fingres, de mails...²⁸

ԱԼԻՍ

De nails, madame.²⁹

ԿԱՏԱՐԻՆԵ

De nails, de arm, de ilbow.³⁰

ԱԼԻՍ

Sauf votre honneur, de elbow.³¹

21 Ալիս. (վիզ), տիրուհի:

22 Կատարինե. (վիս): Իսկ կզակի՞ն:

23 Ալիս. (կզակ):

24 Կատարինե. (սասակ): վիս, սրակ:

25 Ալիս. Այո, թույլ տվեք ասել, որ դուք, ճշմարիտն ասած, այդ բոլոր բառերը արտասանում եք այնպես ճշտությամբ, ինչպես բնիկ անգլիացին:

26 Կատարինե. Չեմ կասկածում, որ ասածն օգնությամբ ես շատ արագ կսովորեմ:

27 Ալիս. Իսկ ինչ որ ձեզ սովորեցրել եմ, դեռ չե՞ք մոռացել:

28 Կատարինե. Ոչ. հիմա արագ կրկնեմ բոլորը— (ձեռք, մատներ, խունկեր)...

29 Ալիս. (եղունգներ), տիրուհի:

30 Կատարինե. (եղունգներ, ձեռք, ամուկ):

31 Ալիս. Ներեցեք, տիրուհի, (արմուկ):

ԿԱՏԱՐԻՆԵ

Ainsi dis-je; de elbow, de nick, et de sin. Comment appelez-vous le pied et la robe?³²

ԱԼԻՍ

De foot, madame, et de coun.³³

ԿԱՏԱՐԻՆԵ

De foot, et de coun? O Srigneur Dieu! Ce sont mots de son mauvais, corruptible, gros et impudique, et non pour les dames d'honneur d'user: je ne voudrais prononcer ces mots devant les seigneurs de France pour tout le monde. Foh! de foot et de coun! Néanmoins, je réciterai une autre fois ma leçon ensemble: de hand, the fingres, de nails, de arm, de elbow, de nick, de sin, de foot, de coun.³⁴

ԱԼԻՍ

Excellent, madame!³⁵

ԿԱՏԱՐԻՆԵ

C'est assez pour une fois; allons nous à dîner.³⁶

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Ռ

Նույն վայրը: Մի ուրիշ սենյակ պալատում:

Մտնում են Ֆրանսիո թագավորը, դոֆինը, Բուրբոնը, Ֆրանսիո զորապետը և ուրիշներ:

ԹԱԳԱՎՈՐ ՖՐԱՆՍԻՈ

Նա Սոմի գետը անշուշտ անցել է:

³² Կատարինե. Այդպես էլ ասացի՝ արմունկ, վիս, պսակ: Իսկ ինչպե՞ս կասեն ոտի և զգեստ:

³³ Ալիս. (ոտք), տիրուհի, և (զգեստ):

³⁴ Կատարինե. Ո՛տք և զգե՛ստ: Օ՛, տեր իմ աստված, այդ բառերը շատ վատ են հնչում: Կոշտ են, կոպիտ և անպարկեշտ: Դրանք պատշաճ չեն պատվարժան տիկնանց համար: Ես չէի ցանկանա այդ բառերը արտասանել ֆրանսիական իշխանների ներկայության, աշխարհի և ոչ մի գնով: Փո՛ւհ (ո՛տք) և (զգե՛ստ): Եվ, այնուհանդերձ, ես մի անգամ էլ կկրկնեմ իմ ամբողջ դասը: (Զեռք, մատներ, եղունգներ, բազուկ, արմունկ, վիս, պսակ, ոտք, զգեստ):

³⁵ Ալիս. Սքանչելի՛ է, տիրուհի:

³⁶ Կատարինե. Այսքանը հերիք է մի դասի համար, երթանք ճաշելու:

ԶՈՐԱՊԵՏ

Եթե մերժում ենք նրա դեմ կռվել,
Ուրեմն, արեա, մենք Ֆրանսիայում ապրել չենք կարող,
Լինենք ամեն ինչ, մեր խաղողի նոխա այգեստանները
Զիջելով եկվոր բարբարոսներին:

ԴՈՅԻՆ

O Dieu vivant!¹ հնարավոր է, որ մի քանի ուս
Մեր նախնիների թավ սաղարթախիա նյութերից պոկված
Պատվաստվեն մի բիրտ, կոշտ ծառաբնի
Եվ այսֆան հանկարծ ցայտեն, մխրնվեն ամպերից էլ վեր,
Բարձրից հեզնանով նայելով իրենց մայրաբուն նյութին:

ԲՈՒՐԲՈՆ

- 11 Նորմանդացիներ. դրանք բոլորը բին են, խառնածին,
Mort de ma vie!² եթե մենք նրանց գոռ արշավանք
Անկարող լինենք ես շարտելու,
Իմ դիտությունը ես կվանառեմ,
Որ սղոցածն կղզում Ալբիոնի
Մի խոնավ, կեղտոտ ազարակ գնեմ:

ԶՈՐԱՊԵՏ

Dieu de batailles!³ Որտեղի՞ց նրանց այդֆան տապ, եռանդ,
Նրանց երկիրը մշուշոտ է, ցուրտ, տխրագին, մոռյլ,
Որին արեք դժկամ է ժպտում՝ դալկադեմ, գունառ,
Հոնքերի թիպով նրանց պտուղը ոչնչացնելով:
Մի՞թե խաշած գառու դառնահեղուկը
Պիտանի հոգնած ձիերի համար, —
Կարող է նրանց սառած արյունը այդպես շերմացնել,
Իսկ մեր արյունը, որ տաք է գինուց, բնականից շերմ,
Պիտ թվա սառույց: Հանուն սիրասուն մեր երկրի պատվի,
Թա՛վ է նմանվենք մեր տնակների
Քիվերից կախված պաղ լույաներին,
Երբ մի ավելի պաղ, ցուրտ ժողովուրդ
Մեր նոխա դաշտերն է արյամբ ոռոգում,
Որոնք անշուք են իրենց տերերի փառությամբ միայն:

¹ Թ՝ աստված արարիչ (ֆրանս.):

² Կյանքովս եմ երդվում (ֆրանս.):

³ Թ՝, ուղմի աստված (ֆրանս.):

ԳՈՅԻՆ

Պատվովս եմ երդվում,
Մեր տիկիները մեզ ձեռք են առնում, պարզ ասում են մեզ,
Որ մեր եռանդը, տապը մարել է... և իրենք պետք է
Իրենց մարմինը հանձնեն կրակոտ անգլիացիներին.
Որ նոր Ֆրանսիան լցնեն խառնածին ֆաջ ռազմիկներով:

ՔՈՒՐՔՈՆ

Մեզ կոչ են անում գնալ Անգլիա
Եվ անգլիացոց պարի դասեր տալ,
Սովորեցնելով նապուկ լեվալտե և կաֆավապար,
Ասելով, որ մեր շնորհիք միայն կրնկի մեջ է,
Որ չկա մեզ պես սրբնթաց փախչող ոսոխի դեմից:

ԹԱԳԱՎՈՐ ՖՐԱՆՍԻՈ

Ո՛ւր է Մոնժուան՝ մեր մունետիկը: Շտապ ուղարկեմ,
Թող մարտակոչով խրոխտ ողջունի հակառակորդին:
Ի զե՛ն, ի շխաններ՝, դեպի ռազմադաշտ,
Ձեր սրերից սուր պատվասիրության ոգով զինավառ:
Դու, Շառլ Գելաբրե, Ֆրանսիո բոլոր
Քերդամրոցների և ասպետության գերագույն պահնակ,
Եվ դու, դուխ Օսլեան, Բուրբոն և Բեռի,
Բուրգունդ, Բրաբանտ, Ալենսոն և Բան,
Ժակ Շատիլյոն, Ռամբյուր, Վոդեման, Բոմոն,
Գրանայրե, Ռուսսի և դուք, Ֆոկոնբեր,
Ֆուա, Բուսիկո, Լեստրալ և Շառոլ—
Դեպքեր, ի շխաններ, սերեր, ասպետներ,
Հանուն ձեր հողի և իրավունքի
Այս մեծ ամոթը լվացե՛ք անդարձ.
Անգլիո Հենրիև խուժում է դեպի խորք մեր երկրի,
Իր դրոշները Հարֆլերի արյամբ վառ կարմիր ներկած:
Ուժգին փուլ եկե՛ք ոսոխի գլխին ձյունակույտի պես,
Որ հաղթ Ալպերը վայր է շպրտում իր բարձունքներից
Գեղի հովիտներն իրեն ենթակա:
Խուժե՛ք Անգլիո արֆայի վրա, — դուք ուժեր ունե՛ք. —
Եվ սայլին դրած Ռուան քերե՛ք նրան
Իբր կալանավոր:

ՋՈՐԱՊԵՏ

Ա՛յ, փառավոր գործ:

Ցավում եմ, սակայն, որ քիչ գործ ունի,

Արշավից հյուծված, հիվանդ, սովատանջ,
Ուստի, վստահ եմ, որ նրա սիրտը վախից անհատակ
Իսկույն կալայքի մեր գորհի տեսից,
Հաղթության դիմաց մեզ փրկանք տալով իր գլխի համար:

ԹՄԳԱՎՈՐ ՅՐԱՆՍԻՈ

Արդ, լորդ գորապետ, Մանժուային շտապ
Փութացրեք Հենրի րազավորի մաս: Թող հայտնի նրան,
Որ մենք ուզում ենք իմանալ շափր փրկավհարի:
Դոֆին, դուք մեզ հետ Ռուան մնացեք:

ԳՈՑԻՆ

Օ՛, ոչ, տեր արևա, ազաչում եմ ձեզ:

ԹՄԳԱՎՈՐ ՅՐԱՆՍԻՈ

Առարկել պետք չէ, կմնաք մեզ հետ:
Հառա՛ջ, գորապետ և իշխաններ մեծ,
Մեզ շուտ լուր բերեք, որ Հենրին սլարովեց:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Վ Ե Ց Ե Ր Ո Ր Ի Ի

Անգլիական ռազմաճամբարը Պիկարդոյում:

Մտնում են Գովերը և Ֆլյուկենը տարբեր կողմերից:

ԳՈՎԵՐ

Գործերն ինչպե՞ս են, զնդապետ Ֆլյուկեն: Կամուրջի՞ց եք գալիս:

ՖԼՅՈՒԿԵՆ

Վստահեցնում եմ ձեզ, որ կամուրջի վրա հիանալի գործեր են կատար-
վում:

ԳՈՎԵՐ

Դուքս էֆսետերը անվնա՞ս է:

ՖԼՅՈՒԿԵՆ

Դուքս էֆսետերը ուղղակի հերոս է, մի իսկական Ագամեմնոն: Նա մի
մարդ է, որին ես սիրում և հարգում եմ ամբողջ հոգով, ամբողջ սրտով,
իմ սրբազան պարսի ամբողջ գլխակցությամբ, իմ ամբողջ կյանքով,
իմ ապրած բոլոր տարիներով և իմ ուժերի ամենավերջին նիզով: Փառք
ասածն, նա այժմ ողջ և առողջ է և պաշտպանում է կամուրջը առավե-

լագույն փառութեամբ, ռազմական գործի գերազանց հմտութեամբ: Կամուրջի վրա մի դրոշակակիր կա. խղճի մտոք կարող եմ ասել, որ նա մի անվեճեր զինվոր է, մի իսկական Մարկոս Անտոնիոս: Աշխարհիս երեսին նրան ոչ ոք չի հարգում, իսկ ես անձամբ տեսա, թե նա ինչպիսի արհուրթեամբ վարում էր գործը:

ԳՈՎԵՐ

Ինչպե՞ս է նրա անունը:

ՏԼՅՈՒԼԵՆ

Նրան անվանում են դրոշակակիր Պիստոլ:

ԳՈՎԵՐ

Չեմ նանաչում:

Մտնում է Պիստոլը

ՏԼՅՈՒԼԵՆ

Ահա՛ այդ մարդը:

ՊԻՍՏՈՒ

Գրա՛, խնդրում եմ, ով հարյուրապետ,
Գու՛ս էփսեաները քեզ շատ է սիրում:

ՏԼՅՈՒԼԵՆ

Սիրում է, փառք ասածու: Խոստովանում եմ, որ ես արժանացել եմ
նրա որոշ սիրույն:

ՊԻՍՏՈՒ

Բարգուլֆը մի պինդ, անվախ զինվոր է:
Մի կայսառ կտրին, բայց դաժան բախտով,
Քմահան շարխով կույր աստվածունու,—
Անունը Ֆորտուն, որ միշտ կանգնած է
Հավերժ թավալվող անկայուն ֆարին...

ՏԼՅՈՒԼԵՆ

Ներեցեք. դրոշակակիր Պիստոլ, Ֆորտունին նկարում են կույր, աչքերին մի փող փաշած, որ ցույց տան, թե նա կույր է: Նմանապես նրան ներկայացնում են անիվի վրա նստած, որ ցույց տան ձեզ.— և դրա իմաստը այդ է.— թե նա դյուրաթեփ է, և՛ անհաստատ, և՛ փոփոխամիտ, և՛ հավերժ անկայուն և նրա ոտները, գիտե՛ք ինչ, հաստատված են մի գնդաձև ֆարի և այդ ֆարը ին՛ն իրեն պտտվո՛ւմ է, պտտվո՛ւմ է, պտտվո՛ւմ: Ճշմարիտն ասած, բանաստեղծը հրաշալի է նկարագրում Ֆորտունին: Իմաստը հոյակապ է:

ՊԻՍՏՈՒ

Ֆորտունի շարխը մահ է թարգոյփին,
 Որովհետև նա գողացել է մի
 Հին խաչելության պատկեր Հիսուսի և պետք է կախվի:
 Անիծյալ մահ է:
 Շներին թող կախեն և ոչ թե մարդուն,
 Մեղք է թարգոյփը, մի սեղմեք պարան նրա խոչափողին:
 Դուք էքստերը դատապարտել է նրան մահապատժի,
 Մի սակավարժեք պատկերի համար:
 Խոսիր դոսի հետ, նա քեզ կլսի,
 Թշվառ թարգոյփի կենսական թելը
 Թող շկտրվի մի փուշ պարանով և պարսավանճով:
 Դու բարեխոսիր նրա կյանքի համար, քեզ կվարձատրեն:

ՅԼՅՈՒԼԵՆ

Դրոշակակիր Պիստուլ, ես հասկանում եմ, թե դու ինչ ես ուզում ասել:

ՊԻՍՏՈՒ

Ուրախացիր, ուրեմն:

ՅԼՅՈՒԼԵՆ

Ճիշտն ասած, այստեղ ուրախանալու բան չկա. դրոշակակիր: Որովհետև, — գիտե՞ք ինչ. — Եթե նա նույնիսկ իմ հարազատ եղբայրը լիներ, ես դարձյալ կփափագեի, որ դուք իր կամքը կատարեք և նրան բարձրացնեք կախաղան, որովհետև նա խախտել է կարգապահությունը:

ՊԻՍՏՈՒ

Մեղի՛ր, անիծյալ. վարձատրության փոխարեն, ա՛յ, սա՛ կստանաս¹:

ՅԼՅՈՒԼԵՆ

Լա՛վ է:

ՊԻՍՏՈՒ

Այն էլ՝ իսպանական:

ԳՆՈՒՄ Է:

ՅԼՅՈՒԼԵՆ

Հրաշալի՛ է:

ԳՈՎԵՐ

Դա մի վատքար, կեղծ, խարդախ սրիկա է: Հիմա նիշեցի նրան. բողոքարած է և քակահատ:

¹ Արձամարճական շարժում՝ բխամատը երկու ծալված մատների կամ բերանի մեջ մտցնելով:

ՏԼՅՈՒԼԵՆ

Հավատացնում եմ ձեզ, կամուրջի վրա նա այնպիսի անվեհեր տափ խոսքեր էր ասում, որ հիշեցնում էր հոգին փառավորող ամառային ջերմացնող արևը: Իսկ հիմա լսեցի՜, թե նա ինչ խոսքեր ասաց ինձ: Ազնիվ խոսք, որևէ հարմար առիթով ես այդ խոսքերը կհիշեցնեմ նրան:

ԳՈՎԵՐ

Դա մի ապուշ է, մի ծաղրածու և ստամբակ, որ ժամանակ առ ժամանակ գնում է պատերազմ, որ Լոնդոն վերադառնալիս պարծենա, փայլի գինվորի համազգեստով: Այդպիսի վայ-երիտասարդները անգիր գիտեն բոլոր մեծ գորավարների անունները և հիանալի կպատմեն ձեզ, թե որտեղ ինչպիսի գործեր են կատարվել, ինչ պատահեց այսինչ ամբարձրության մեջ, այնինչ նեղվածքում, այսինչ ուղեկցության կամ փոխադրության ժամանակ, ով աչքի ընկավ իր Լաջուրյամբ, ով սպանվեց, ով շնորհագրկվեց, թշնամին պաշտպանական ինչպիսի դիրքերի վրա էր: Նրանք այս ամենը կշարադրեն ձեզ անբերի կատարելությամբ, մեջք շող տալով ռազմական բառ ու բան և արտահայտություններ և դրանք զարդարելով ամենաարդիական նորածն երդումներով, ինչպիսի ազդեցություն կգործեն, օրինակ, մորուփի խուզվածք գորավարական ձևով և ռազմական ցնցոտիները փրփրաղեզ շրթերի և օդուց շշմած ուղեղների վրա: Սակայն դուք պարտավոր եք սովորել և լավ նանաչել մեր դարը խաչատուակող այդ սրիկաներին, թե չէ կարող եք շատ հեշտությամբ սխալվելով՝ անպատեհության մեջ ընկնել:

ՏԼՅՈՒԼԵՆ

Իսկ իմ կարծիքը անա թե ինչ է նրա մասին, հարյուրապետ Գովեր: Ես տեսնում եմ, որ նա բոլորովին այն մարդը չէ, ինչպիսին կուզենար թվալ աշխարհին: Եվ եթե ես նրա մօտ որևէ նեղք գտնեմ, այդ ժամանակ ես նրան կասեմ ամեն ինչ, ինչ որ մտածում եմ նրա մասին:

Խոսում՝ քմբկահարություն:

Լսո՞ւմ եք, թագավորն է գալիս, իսկ ինձ անհրաժեշտ է խոսել նրա հետ կամուրջի վերաբերյալ:

Թմբկահարություն և դրոշներ: Մտնում են Հենրի թագավորը,

Գլխատերը և նրա հոգնած, հյուսված գինվորները:

ՏԼՅՈՒԼԵՆ

Աստված օրհնի ձեզ, մեծափառ արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՞նչ լուր, Ֆլյուպեն: Կամուրջի՞ց եկար:

ՅԼՅՈՒԼԵՆ

Այո, ձերդ պայծառափայլութիւն: Դուք էք սեռերը շափազանց քաջաբան պաշտպանեց կամուրջը: Ֆրանսիացիները, — գիտե՛ք ինչ, — փախան: Շատ փառափոր և հերոսական բախումներ եղան այնտեղ: Թշնամին ուզում էր գրավել կամուրջը, բայց ստիպված եղավ նահանջել, և կամուրջի վրա այժմ դուք էք սեռերն է իշխում: Ձերդ պայծառափայլութեանը կարող եմ ասել, որ դուք շատ քաջ մարդ է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Իսկ դուք ինչքան մարդ կորցրի՛ք, Ֆլյուլեն:

ՅԼՅՈՒԼԵՆ

Հակառակորդի կորուստը շատ մեծ էր, իրավացիորեն շատ լուրջ: Աստված վկա, ես կարծում եմ, որ դուք ոչ մի մարդ չի կորցրել, բացառությամբ մեկի, որին պետք է կախեն՝ եկեղեցում գողութիւն անելու համար: Հավանորեն ձերդ մեծափառութիւնը նանաչում է նրան: Անուրբ Բարդոլֆ է: Նրա երեսը ամբողջապէս կարմիր բշտիկներով, պալարներով, պզուկներով և կրակի բոցերով է ծածկված: Նրա շրթունքները փրփրում են ֆրի վրա, իսկ ֆրփը նման է վառված ածուխի, որ երբեմն կապտում է, երբեմն կարմրում: Սակայն հասել է նրա ֆրի վախճանը և նրա կրակը հանգած է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Բոլոր այդ կարգի սրիկաներին հարկավոր է արմատախիլ անել: Եվ մենք խստագոյն հրաման կիջեցնենք, որ մեր արշավանքի ընթացքում ոչ մի զինվոր չհամարձակվի գլուղերից զոռով բան վերցնել, այդ վերցրածի համար անպայման վճարել. որպէսզի ոչ ոք չհանդգնի որևէ ֆրանսիացու կշտամբել կամ նախատել արեամարհական անարգ խոսքերով, որովհետև այնտեղ, ուր հեղութիւնը և անգրքութիւնը պայքարում են քաղաքացիական համար, արագ շահում է այն մրցակիցը, որ ավելի մեծահոգի է:

Ազդանշան փողակաշուով:

Մտնում է Մոնթուան:

ՄՈՆԺՈՒԱ

Իմ հագուստից գիտե՛ք, թե ես ով եմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այո, գիտե՛մ քեզ: Բերածդ ի՞նչ է:

ՄՈՆԺՈՒԱ

Իմ տիրոջ վնիդը:

Հայտնի՛ր այդ վեհոր:

ՄՈՆԺՈՒՍ.

Այսպես է ասում իմ արքան. «Դու Անգլիո շարքիին ասա, որ քեպես մենք քվում ենք մեռած, բայց իրապես մեռած չենք, այլ միայն մրափի մեջ: Խոհեմությունը ավելի փառակորով ռազմիկ է. քան հանդգնությունը՝ Ասա նրան, որ մենք կարող էինք իրեն վտարել Հարֆլերից, սակայն խոհեմ համարեցինք վրեժխնդիր չլինել. մինչև որ վիրավորանքը լրիվ հասունանար: Այժմ մեր խոսելու ժամանակը լրիվ հասել է և մեր ձայնը արքայական է ու հզոր: Անգլիո թագավորը պիտի զոչա իր անխելկություն համար՝ տեսնելով իր թուլությունը և ապշելով մեր համբերությունը: Ուստի առաջարկեցինք նրան, որ մտածի իր փրկավհարի մասին, որը պետք է համապատասխանի այն կորստի չափին, որ պատճառեց մեզ, այն հպատակների քվին, որոնցից մենք զրկվեցինք և այն նախատինքին, որ հանդուրժեցինք: Որը երե նշտորեն կշովի, ապա նրա ոչնչությունը պիտի նգմվի այդ ծանրության տակ: Նրա գանձարանը չափազանց աղքատ է մեր կորուստները հատուցելու: Նրա թագավորության գորահավաքը չափազանց սակավամարդ է մեր թափած արյունը վնասելու համար: Իսկ ինչ վերաբերում է մեր նախատինքին՝ եթե նույնիսկ իր սեփական անձը ծունկի իջներ մեր ոտների առաջ, դա կլիներ մի տկար և շնչին գոհացում միայն: Ավելացրո՛ւ դրան մեր մարտահրավերը, և, վերջապես ասա նրան, որ նա դավանանել է իր համախոհներին, որոնց համար մահասյատիժ է ստորագրված»:

Այդպես է ասում իմ արքան և իմ տերը: Եվ այսօր էր հանձնարարված ինձ ասելու ձեզ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Պաշտոնի գիտեմ: Անունդ ի՞նչ է:

ՄՈՆԺՈՒՍ.

Մոնժուա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Դու քո պաշտոնը լավ կատարեցիր:

Վերադարձի՛ր և արքայիդ ասա,

Որ նրան այժմ ես որոնելու տրամադիր չեմ:

Եվ իմ փափագն է առանց արգելի

Նո դառնալ կալե: Պատճառը կասեմ, —

Անմտություն է քեպես այդքան շատ խոստովան լինել

Մի գորեղ, իարդախ թշնամու առաջ, —

Իմ գինվորները մաշվել. հյուծվել են հիվանդությունից,

ԹՎՈՎ նվագել: Նրանց մնացորդը մարտունակութեամբ
Գրեթե լավ չէ հավասար թվով ֆրանսիացիներին:
Երբ առողջ էին, — լսի՛ր, մունեսիկ, —
Ես անգլիական մի զուգ սրունքին ենթադրում էի
Երեք ֆրանսիացի զինվորի գրոհ: — Բայց ների՛ր, աստված,
Իմ հոխորտանքն այս: — Ձեր ֆրանսիական
Օդի հետ մտավ այդ արատն իմ մեջ: Եվ պիտի զղջամ:
Արդ, զնա՛ և քո արքային ասա, որ ես այստեղ եմ.
Իմ փրկագիրն — դուրաբեկ շնչին այս կոնզն է անա,
Զորաբանակն իմ, — ուժասպառ, հիվանդ մի պահակագունդ:
Եվ սակայն ասա,
Որ երկնավորի առաջնորդությամբ մենք կերքանք առաջ,
Թեկուզ մեր հանգեպ կանգնեն ձեր արքան
Եվ մի այդպիսի ուրիշ հարեան՝ նույնքան զորավոր:
462 Վերցրո՛ւ, Մոնժուա, վաստակիդ դիմաց.

Տալիս է մի բառ:

Քո տիրոջն ասա՛ լրջորեն խորհի և կշռադատի.
Թույլ տվեց՝ կանցնենք: Եթե արգելեց՝
Ձեր թուխ գետինը մենք ձեր կարմրափայլ
Արյամբ կներկենք: Այժմ, Մոնժուա, բարի նանապահ:
Մեր պատասխանի ամփոփը այս է.
Մենք հակատամարտ չենք փնտրում այժմ. — պատճառն ասացի, —
Ոչ էլ խույս կտանք, եթե հարձակվեք:
Այդպես հաղորդիք քո բազավորին:

ՄՈՆՃՈՒԱ

Այդպես կհաղորդեմ: Ննորհակալ եմ ձերդ բարձրություն:

Գնում է:

ԳՆՈՍՏԵՐ

Նրանք, հուսով եմ, այժմ չեն շարժվի մեզ վրա, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մեր գործը, եղբայր, աստծո ձեռքումն է և ոչ թե նրանց.
Օ՛ն, դեպի կամուրջ: Գիշերը մոտ է:
Մենք գետից այն կողմ՝ վրան կգարկենք մեր զորքի համար,
Իսկ վաղ առավոտ հետապնդելով
Նրանց կվանենք ավելի հեռու:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Յ Ո Թ Ե Ր Ո Ր Դ

Ֆրանսիական ռազմաճամբարը Աժիակոսի մոտ:

Մտնում են Ֆրանսիո զորապետը, յորդ մամբյուրը, դուստր
Օդլեանը, դաֆիներ և ուրիշներ:

ԶՈՐԱՊԵՏ

Վա՛հ: Իմ ունեցածը ամենալավն է: Աշխարհում ոչ ոք չունի այդպիսի
զենք ու զրահ: Գոնե շուտ լուսանար:

ՅՈՒԼԵԱՆ

Ձեր զենքն ու զրահը իսկապես հոյակապ է, իսկ իմ նժո՞ւյզը: Նրան
էլ. քստ պատշանի, իր արժանին հատուցե՛ք:

ԶՈՐԱՊԵՏ

Ձեր ձին եվրոպայի ամենարճափր նժույզն է:

ՅՈՒԼԵԱՆ

Մի՞րք էլ երբեք չի լինելու առավոտ:

ԴՈՅԻՆ

Գու՛մ, դուստր Օդլեան և դու՛ք, Ֆրանսիո հզոր զորապետ, ձիո՞ւ և զրահի՞
մասին ե՛ք խոսում:

ՅՈՒԼԵԱՆ

Գու՛մ այդ երկուսն էլ ունե՛ք և աշխարհի ոչ մի իշխան ձեզ չի գերա-
զանցի ոչ նժույզով և ոչ էլ սպառազինությամբ:

ԴՈՅԻՆ

Այս ինչ երկար գիշեր է: Ես իմ նժույզը շէի փոխի ոչ մի քառասմբակ
կենդանու հետ: Ça, ha!¹ Նա գեանից ոստնում է այնպիսի քերթությամբ,
ասես փորի մեջ բմբուլ է լցված, le chevel volant, the Pegasus, qui a
les narines de feu!² Երբ նրան հեծած աշտանակում եմ, ես սավառնում
եմ երկրից բարձր. Ես դառնում եմ բազե: Նա արագ սլանում է օդի մի-
ջով: Երկիրը գրնգում է, երբ նժույզիս սմբակը դիպչում է նրան: Նրա
կնդակի ամենանվաստ եղջյուրը շեմեսի սրնգից ավելի քաղցրա-
հնչյուն է:

ՅՈՒԼԵԱՆ

Նա գույնով նման է հնդկաց ընկույզին:

¹ Այո՛, ասում եմ ձեզ (ֆրանս.):

² Իմ ձին թռչող Պեղասն է, որի ունդերից հուր է ժայթքում (ֆրանս.):

ԳՈՅԻՆ

Եվ կոնդապոպեղի պես տա՛մ է, կրակոտ: Պերսեոսի նժույզն է իսկական: Նա համակ օդ է և կրակ: Մանր տարերքը՝ հողը և ջուրը, նրա մեջ հայտնվում են միայն այն ժամանակ, երբ խոնարհ կանգնած է՝ պատրաստ իր հեծյալին քամքին վերցնելու: Այո՛, դա իսկապես նժույզ է, իսկ բոլոր մյուս ձիերը նրա համեմատությամբ՝ անպիտան գրաստներ:

ԶՈՐԱՊԵՏ

Հիբավի, իշխան, դա մեծապես կատարյալ և սփանշելի մի երիվար է:

ԳՈՅԻՆ

Նա արշավաձիերի իշխանն է: Նրա խրիմեջյունը հնչում է որպես հրաման միապետի, իսկ նրա վեհատեսիլ երևույթը մեծարանք է ներշնչում:

ՕՌԼԵԱՆ

Բավական՛ն է, զարմիկ:

ԳՈՅԻՆ

34 Ո՛հ, պարզապես հիմար է այն մարդը, որ արսույտի վաղ զարթնումից մինչև գառների գոմ մտնելը մայրամուտին՝ անկարող է իմ նժույզի մասին ներբողներ հյուսել: Այդ նյութը ծովի պես անհատնում է: Եթե ավագի առեն մի հատիկը լեզու առներ պերնախոսության, իմ երիվարի մասին խոսելը դարձյալ շէր սպառվի: Նա արժանի է, որ իր մասին խորհրդածի քազավորը, որ նրան հեծնի քազավորաց քազավորը: Բավանդակ աշխարհը մեզ հայտնի և աակավին անհայտ՝ պարտավոր է իր բոլոր գործերը թողնել և միայն նրանով սփանշանալ: Մի անգամ ես իմ ձիու պատվին մի սոնետ գրեցի, որն սկսվում է այսպես «Հրաշք բնության...»:

ՕՌԼԵԱՆ

Ես լսել եմ, նիշտ այդպես սկսվում է մի սոնետ, որ ինչ-որ մեկը ձոնել էր իր սիրունուն:

ԳՈՅԻՆ

Նշանակում է՝ նա ընդօրինակել է այն սոնետը, որ ես գրել եմ իմ արշավաձիու մասին, որովհետև իմ ձին իմ սիրունին է:

ՕՌԼԵԱՆ

Ձեր սիրունին լավ է կրում հեծյալին:

ԳՈՅԻՆ

Ինձ՝ հիանալի: Կատարյալ և տիպար սիրունին այդպես պետք է լինի:

ԶՈՐԱՊԵՏ

Բայց ինձ թվում է, որ երեկ ձեր սիրունին կամակորոքյամբ ձեզ վայր
նետեց իր վրայից:

ԴՈՅԻՆ

Հնարավոր է, որ ձերն էլ նույն կերպ վարվեց ձեզ հետ:

ԶՈՐԱՊԵՏ

Իմը սանձված չէր:

ԴՈՅԻՆ

Օ՛, պատճառը երևի այն է, որ ձերը պառավ էր և խոնարհ և դուրս նրան
հեծած՝ բշուր էիք իդանդական հետևակ զինվորի պես, առանց ֆրանսիա-
կան վարտիֆի, միայն սեփական ձիգ, սեղմ տարատը հագած:

ԶՈՐԱՊԵՏ

Դուրս, երևում է. Բաշահմուտ եք ձիավարության մեջ:

ԴՈՅԻՆ

Այս իրատը. ուրեմն. ինձնից սովորեցեք. նա. ով այդպես է աշտա-
նակում, ով ձի է հեծնում առանց որևէ զգուշության, նա հեշտությամբ
կարող է գլորվել հոտած նահնափոսերի մեջ: Այս՛, իմ ձին իմ սիրունին
է, և ես կուզեմայի, որ այդպես լինեք:

ԶՈՐԱՊԵՏ

Իսկ ես կուզեմայի, որ իմ սիրունին լինեք մի վախա անպիտան ձի՝
մազերը քափած:

ԴՈՅԻՆ

Իմ սիրունին զոնե սեփական մազեր ունի:

ԶՈՐԱՊԵՏ

Ես կարող էի նույնպես պարծենալ, եթե իմ սիրունին մի խոզ լինեք
նույնիսկ:

ԴՈՅԻՆ

Le chien est retourné à son propre vomissement, et la truie lavée
au boubier³. գուռ ոչ մի բանից չես խորշում:

ԶՈՐԱՊԵՏ

Բայց ես ձին սիրունու փոխարեն չեմ գործածում, ոչ էլ որևէ այդպիսի
առած, որ բիշ առնչություն ունի նախասակի հետ:

³ Շունը վերադարձավ իր փսխումքը լիցելու, իսկ վայրված խոզը՝ իր կեղտոտ ջրափոսին
(Ֆրանս.):

ՌԱՄԲՅՈՒՐ

Ասացե՛՛ք, պատվական զորապետ, ի՞նչ է պատկերված այն զրահի վրա, որ ես երեկ երեկոյան տեսա ձեր վրանում. ասողե՛ր էն, թե՛ արևներ:

ԶՈՐԱՊԵՏ

Առաղեր:

ԳՈՅԻՆ

Կարծում եմ, որ դրանցից մի քանիսը վայր կընկնեն առավոտյան:

ԶՈՐԱՊԵՏ

Իմ երկնում ասաղերի պակաս երբեք չի լինի:

ԳՈՅԻՆ

Հնարավոր է, որովհետև այնքան շատ ավելորդ ասաղեր կան այնտեղ, որ ձեզ համար ավելի պատվավոր կլինեն. եթե դրանք փոքր-ինչ պակասեին:

ԶՈՐԱՊԵՏ

Նույն վիճակում է նաև ձեր ձին, որ տնում է ձեր գովասանքների ծանրությունից: Նա ավելի թերևաֆայլ կդառնար, եթե ձեր սնապարծուրյան մի մասից բեռնաթափեիք նրան:

ԳՈՅԻՆ

Երանի՛ թե ես կարողանայի նրա վրա բեռնել այնքան գովասանք, որքան իր արժանիքն է: — Մի՞թե էլ երբեք չի լուսանալու: Վաղը ես մի ամբողջ մղոն պիտի աշտանակեմ, անգլիական գլուխներից նանապարհ շտկելով ինձ համար:

ԶՈՐԱՊԵՏ

Ես այդպիսի խոսք չեմ ասի, որովհետև կարող է հակառակը պատահել իմ գլխի հետ: — Քայց երանի՛ թե առավոտը շուտ բացվեր: Այնպե՛ս եմ ուզում այդ անգլիացիների ականջներից պինդ փաշել:

ՌԱՄԲՅՈՒՐ

Ո՞վ է ուզում ինձ հետ զառ գցել. պայմանն է. ով տարվեց՝ պարտավոր է քսան անգլիացի գինվոր գերի բռնել:

ԶՈՐԱՊԵՏ

Այդ գերիներին բռնելու համար երեկ հարկավոր կլինի նախ ձեր ոսկորները վրա տալ:

ԳՈՅԻՆ

Արդեն կեսգիշեր է: Գնամ գեներալ կապեմ:

Գնում է:

ՅՈՒՆԱՆ

Դոֆինը այնքան անհամբեր է, որ չի կարողանում սպասել մինչև լույսը բացվի:

ՌԱՄՔՅՈՒՐ

Նա տենչում է լափել անգլիացիներին:

ԶՈՐԱՊԵՏ

93 Ես կարծում եմ, նա իր բոլոր սպանածներին կուտի:

ՅՈՒՆԱՆ

Նա փաշ իշխան է, երզվում եմ իմ արկնոջ սպիտակ թաթիկով:

ԶՈՐԱՊԵՏ

Ավելի լավ է նրա առտիկով երզվեմ, որ նա կարողանա տրտել ձեր երզումը:

ՅՈՒՆԱՆ

Նա սլարգապես Ֆրանսիայի ամենագործունյա մարդն է:

ԶՈՐԱՊԵՏ

Գործունյա լինել, նշանակում է ինչ-որ գործ կատարել, իսկ նա դեռ պիտի կատարի, աստված գիտե թե երբ:

ՅՈՒՆԱՆ

Որքան ինձ հայտնի է, նա դեռ ոչ ոքի վնաս չի ավել:

ԶՈՐԱՊԵՏ

Նա վաղն էլ ոչ մեկին վնաս չի տա և կշարունակի պահել այդ բարիանունը:

ՅՈՒՆԱՆ

Ես գիտեմ, որ նա փաշ է:

ԶՈՐԱՊԵՏ

Ինձ այդ մասին ասել է մի մարդ, որ նրան ավելի լավ գիտե, քան դուք:

ՅՈՒՆԱՆ

Իսկ ո՞վ է այդ մարդը:

ԶՈՐԱՊԵՏ

Հենց ինքը: Այո՛, ինքն ասաց, նշմարիտ եմ ասում: Ավելացրեց նույնպես, որ բնավ իր փույրը չէ, թե ուրիշները այդ մասին գիտեն, թե ոչ:

ՅՈՒՆԱՆ

Նա դրա կարիքը չունի: Քաջությունը այնպիսի առափինությունն է, որ նա իր մեջ թափցնի:

ԶՈՐԱՊԵՏ

Պատվո խոսք, պարոն, իր ծառայից բացի դեռ ոչ ոք նրա ֆաշուրյունը տեսած չկա: Նրա ֆաշուրյունը սակառի տակ դրած մի բազե է. սակառք բարձրացրու և բազեն ակնբարբոս կանհետանա:

ՅՈՒՆԱՆ

Չարակամ մարդուց բարի խոսք մի սպասիր:

ԶՈՐԱՊԵՏ

Այդ առածին ևս կպատասխանեմ մի ուրիշով. շողոփոք բարեկամը շարակամից վատ է:

ՅՈՒՆԱՆ

Ձեր ասածը ծածկվում է իմ այս հարվածով: «Նույնիսկ սատանայի պարտքը վնարիր»:

ԶՈՐԱՊԵՏ

Շատ դիպուկ նատեց, չէ՞ որ սատանայի փոխարեն ձեր ընկերն էր այնտեղ կանգնած: Մի առած ևս և այն էլ ոչ թե հոնքին, այլ ուղղակի աչքին. «Սատանայի ռեխին տուր»:

ՅՈՒՆԱՆ

Դուք առածներով հմուտ եք ինձնից: Իզուր չի ասված «Հիմարք միշտ արագ է կրակում»:

ԶՈՐԱՊԵՏ

Քո հարվածը վրիպեց նշանակետից:

ՅՈՒՆԱՆ

Որովհետև նշանակեար առաջվա պես աննշան էր:

Մտնում է մի սուրհանդակ:

ՍՈՒՐԸԱՆԴԱՅ

Տեր իմ, գորապես, անգլիացիները գանվում են ձեր վրաններից ընդամենը հազար հինգ հարյուր ֆայլ հեռավորության վրա:

ԶՈՐԱՊԵՏ

Ո՞վ չափեց այդ տարածությունը:

ՍՈՒՐԸԱՆԴԱՅ

Սինյոր Գրանայրեն:

ԶՈՐԱՊԵՏ

Սինյոր Գրանայրեն մի անվեհեր և բավականաչափ փորձված ազնվական է: Ա՛խ, երանի թե շուտ լուսանար: Ավա՛ղ, խեղճ Հարրի, թշվառ թագավոր Անգլիա: Նա, հավանորեն, չի էլ տեսնում, որ արշալույսը շուտ բացվի, ինչպես մենք ենք անձկորեն սպասում:

ՅՈՒՆԱՆ

Օ՛, ի՛նչ ողորմելի և ապուշ, անխելի մարդ է այդ անգլիացի քաղա-
վորը: Եվ հանդգնել է իր հաստագլուխ կտրիճներով այդքան անակնկալ
խորանալ մեր երկրի մեջ իր տգիտության պատճառով:

ԶՈՐԱՊԵՏ

Եթե անգլիացիները խելի՛ն նշույլ ունենային, նրանք անմիջապես կհե-
ռանային մեր երկրից:

ՅՈՒՆԱՆ

Այդ բանից գուրկ եմ: Որովհետև եթե նրանց զլուխները պաշտպանված
ինեխն բանականության զրահով, նրանք դրանց վրա երբեք այդքան
անը կորդակներ չէին փաշի:

ՌԱՄՐՅՈՒՐ

Նրանց կղզին շատ անվեհեր արարածներ է արտադրում. անգլիական
բուլլոզները անսահման համարձակ են և հարձակողական:

ՅՈՒՆԱՆ

Հիմար, անպիտան շներ են, որ ուղղակի ռուսական արջի երախն են
նետվում, որը կրծում է նրանց զլուխները ինչպես հոտած խնձոր: Այդ
նույն ձևով կարող եմ փաջ համարել նաև լվին, որը հանդգնում է իր նա-
խանաշիկն անել առյուծի մտուքին նստած:

ԶՈՐԱՊԵՏ

Ճի՛շտ է, նի՛շտ է: Այդ մարդիկ կատաղի և կոպիտ հարձակմամբ նման
են իրենց գամփոներին: Անմտորեն առաջ են շարժվում բանականու-
թյունը իրենց կանանց հետ տանը թողած: Տվե՛ք նրանց մի խոշոր կտու-
տավարի միս և երկաթ ու սուր: Դայլերի պես կխժռեն և դների պես
կկոպեն:

ՅՈՒՆԱՆ

Այս՛, բայց այժմ այդ անգլիացիները տավարի մսի խիստ պակաս
ունեն:

ԶՈՐԱՊԵՏ

Այդ դեպքում մենք վաղը կհամոզվենք, որ նրանք միայն խժռելու
ախորժակ ունեն և ոչ թե կոպելու: Սակայն ժամանակն է զինվելու: Նր-
թա՛նք: Հարկավոր է կազմ ու պատրաստ լինել:

ՅՈՒՆԱՆ

Այժմ ժամը երկուսն է, իսկ լուսաբացին,
Ամեն մեկս կրոնենք հարշուր անգլիացի:

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԳ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Կ

Մտնում է Բեմի խոսնակը:

ԲԵՄԻ ԽՈՍՆԱԿ

Ա՛րդ, պատկերացրե՛ք այնպիսի մի պահ,
Երբ սողացող խոսքն ընդունը հեռվից
Եվ առատորեն թափվող խավարը
Տիեզերքի մեծ նավն են ողողում:
Քանակից բանակ, գիշերվա մռայլ խոռոչի միջով
Զորքերի սուլն է հնչում այնքան մեղմ,
Որ թշնամական ժամապահները կարողանում են
Մեկը մյուսի գաղտնի շշուկը գրեթե որսալ:
Խարույկի դիմաց խարույկ է վառվում
Եվ դրանց գունաա բոցերի միջով
Թունդ սպառնում են նժույգներն իրար
Քարձրաքինդ հոխորտ խրխնջյուններով
Դիշերվա աղոտ ունկը նեղֆելով: Վրանների մեջ
Անդուլ մուրհեռով գիլ հարվածում են զինագործները
Զորքերի վրա զենք ու գրահներ ամբապնդելով,
Եվ շարագուշակ աղմուկն է հնչում նախապատրաստման:
Աֆաղաղները արդեն կանչեցին,
Մեծ ժամացույցը ֆնկոտ լուսայգին
Դանդաղ հարվածեց իր երրորդ ժամը:
Տրանսիացիները ժիր, ինֆնավստահ,
Քանակով գոռոզ և հոգով տնփույթ
Զառ են գցում նվաստ անգլիացոց վրա,
Կշտամբելով կաղ, կամկար գիշերին,
Որ պառավ, տձև մի վհուկի պես

Հառաջանում է այդքան տաղակալի: Իսկ դատապարտյալ
 Խեղճ անգլիացիք գոհերի նման,
 Իրենց աշալուրչ կրակների մոտ հնազանդ նստած,
 Ներքուստ մոտեցող վառնգն են կշռում և խորհրդածում:
 Նրանց տրտում տեսքը, այտերը նիհար
 Եվ պատառուտված համազգեստները լուսնափայլի տակ
 Գարձնում է նրանց դժնի տեսարան
 Բազում ահավոր ուրվականների:
 Նա, ով տեսնում է այս քշվառ զորքի հրամանատարին
 Պահակից պահակ. վրանից վրան շրջագայելիս,
 Մի՞թե կարող է շքացականչել «Օ՛, փա՛նփ, փա՛նփ նրան»:
 Շրջում է մենակ, այցելում բոլոր զորամասերը,
 Ամենֆին քարի ասավոտ մաղթում խոնարհ ժպիտով.
 Անվանում Լոբայր, հայրենակիցներ և բարեկամներ:
 Շրջապատել է նրա զորքերին մի բանակ հսկա,
 Բայց արքա դեմֆին վախի նշույլ չկա,
 Ոչ էլ տանջալի գիշերը անփուն
 Նրա երեսից վանել է թեկուզ մի շնչին երանգ:
 Առույզ տես ունի. անզորությունը հաղթահարելով,
 Այնպիսի զվարթ մի երևույթով և վեհությամբ հեզ,
 Որ ամեն մի հեզ ընկնված զինվոր
 Նրա նայվածքից փաղում է կորով և հանգստություն:
 Ընծան առատ է. արևի նման շոռյլ հայացքով
 Նա շող է տալիս ամենֆի վրա իր պարզևր հորդ,
 Հալեցնելով պինդ սառույցն երկյուղի: Ռամիկ, թե իշխան
 Հենրի արքայի դեմֆին են նայում գիշերում անձիր,
 Որ մեր անարժան ձեռքով գծեցինֆ:
 Մեր տեսարանը կտեղավոխենֆ այժմ ուղղադաշտ,
 Որտեղ մենք պե՛տ է, — օ՛, ներեցե՛ք մեզ, —
 Աղքատիկ հագնված չորս հինգ զինվորի ժանգոտ սրերով
 Մարտի մի խղնուկ և ծիծաղելի շաշ ու շառաշով
 Սաստիկ անարգենֆ Ածինկուրի մեծ անունն ու փառքը:
 Բայց նստե՛ք հանգիստ և պատկերացրե՛ք,
 Որ հետևում ե՛ք ստույգ դեպքերին նակատամարտի,
 Խաղացողները որքան էլ լինեն ողբալի մարդիկ:

Գնում է:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Անգլիական ռազմաճակատը Աժիակուրի մոտ:

Մտնում են Հենրի քաղալուրը, Բեդֆորդը և Գլոստերը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այո՛, Գլոստե՛ր, վտանգը մեժ է,
Մեր արիությամբ, ուստի, առավել մեժ պետք է լինի:—
Բարի լույս, Բեդֆորդ:— Տե՛ր ամենակալ:
Ամեն շարի՛նում բարության ինչ-որ մի հունդ է պահված,
Որին գտնելը խելի է պահանջում:
Վատ հարևանը մեզ ուտի հանեց վաղ լուսաղեմին,
Բայց դա բարիք է թե՛ անողջության, թե՛ գործի համար:
Այդ հարևանը մեր դոսի խիզճն է
Եվ ֆարոգիչը մեր ամենեցուն,
Ազդարարելով, որ լավ պատրաստվենք մեր վերջաբանին:
Այդպես կարող ենք մեզը ժողովել ժանտ մոլախոտից,
Եվ նույնիսկ դեկից մի լավ բան սերտել:

Մտնում է Էրպինգեմը:

Բարի լույս ծերուկ, Թոմաս Էրպինգեմ,
Այդ ներմակ գլխիդ համար պատշաճ էր մի շատ փափուկ բարձ,
Քան ֆրանսիական նյումահողն այս կոշտ:

ԷՐՊԻՆԳԵՄ

Ո՛չ, վեհապետ իմ, այս օրևանը սիրելի է ինձ,
Կարող եմ ասել քաղալուրական անկողին է սա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Լավ է, Լեք մարդիկ նեղություններին ընտելանում են
Մեր օրինակով. դրանից հոգին թերևանում է:
Իսկ երբ որ հոգին աշխույժ է, կայտառ,
Անկասկած, բոլոր մեր անդամները մինչև այդ մեռած,
Գերեզմանային իրենց մրափր դեն շարտելով
Կեղանանում են, աշխույժի գալիս անույզ ու թերե:
Տո՛ւր ինձ թիկնոցդ, պարոն Էրպինգեմ:—
Գու՛ք, եղբայրներ իմ, իմ լուսաբացի ողջույնը տարեք
Ռազմանամբարի մեր իշխաններին:
Բոլորին շաապ խնդրեք հավաքվել տաղավարիս մեջ:

ԳԼՈՍՏԵՐ

Ի կատար, արքա:

Կոստերը և Ռեդֆորդը գնում են:

ԷՐՊԻՆԳԵՄ

Ես մնա՞մ ձեզ հետ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ո՛չ, իմ լավ ապւեւտ,
եղբայրներիս հետ դուք էլ գնացե՛ք իշխաններիս մը
Հոգուս հետ պետք է ես խորհուրդ անեմ,
Եվ կարիք չունեմ այլոց ներկայութեան:

ԷՐՊԻՆԳԵՄ

Աստված պահապան, անվեհեր Հարրի:

Գնում է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Շնորհակալ եմ լավ խոսքիդ, ձերուկ:

Մտնում է Պիստոլը:

ՊԻՍՏՈՒ

Qui va là?¹

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մի բարեկամ:

ՊԻՍՏՈՒ

Դու ինձ պարզ ասա, հրամանատար ես,
Թե մի ցած, նվաստ, հասարակ զինվոր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ազնվական եմ, ջոկատի սպա:

ՊԻՍՏՈՒ

Տեզ բանեցնել զիտե՞ս:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Հիանալի գիտեմ: Իսկ դու ի՞նչ մարդ ես:

ՊԻՍՏՈՒ

Նույնպիսի ազնվական, ինչպես կայսրը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Կնշանակե՛ դու արքայից բարձր ես:

¹ Եկողը ո՞վ է (Փրանս.):

ՊԻՍՏՈՒ

Արեան քնտիր մարդ է, միջուկն է ոսկու,
ձառալիկ, ժիր աղա, փառքի սիրելին,
Մնունդով հայտնի և քաջաբունցի,
Ես համբուրում եմ իմ թագավորի կեղտոտ կոշիկը.
Սրտանց սիրում եմ ես այդ կովարար ամբարտաժանին:
Անունդ ի՞նչ է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Հարրի Le Roy².

ՊԻՍՏՈՒ

Լե-ռուա՞:
Կորնիշ անուն է: Ուրեմն կորնի՞շ ես:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ո՛շ, ես վայելշ եմ:

ՊԻՍՏՈՒ

Ֆլյուլենին գիտե՞ս:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Գիտեմ, ինչպես չէ:

ՊԻՍՏՈՒ

56 Դու նրան ասա, սուրբ Դավթի օրը
Ես նրա գանգը մաշկահասն կանեմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Քեզ խորհուրդ կաամ այդ օրը Էռ դաշույնը գլխիդ տակ շպահել,
որ շիճի թե ինձը այդ դաշույնը գանգիդ մեջ խրի:

ՊԻՍՏՈՒ

Դու նրա ընկե՞րն ես:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Եվ հմանապես նրա ազգականը:

ՊԻՍՏՈՒ

Ա՛ն Բեզ, ուրեմն՞³:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Շնորհակալ եմ: Աստված Բեզ հետ:

ՊԻՍՏՈՒ

Իմ անունը Պիստոլ է:

Գնում է:

² *Արթա* (ֆրանս.):

³ *Անարգահան ցուցադրությունը բթամատով:*

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Եվ այդ անունը սաստիկ պատշան է և կատաղության:

Մտնում են Ֆլուլենը և Գովերը տաքեր կողմերից:

ԳՈՎԵՐ

Հարյուրապետ Ֆլուլե՛ն:

ՅԼՅՈՒԼԵՆ

Այո՛, միայն թե, ի սեր Քրիստոսի, կամաց խոսեցե՛ք: Համայն տիեզերքը հիացմունքից ապուշ է կառում, երբ շեն պահպանվում ռազմական հիկնավուրց նշմարիա սովորույթներն ու օրենքները: Եթե դուք նեղություն Լաշևի ուսումնասիրելու Մեծն Պոմպեոսի պատերազմները, դուք կտեսնե՛ք, վստահացնում եմ ձեզ, որ ոչ շաղակերատություն ու տրաֆտուրագ, ոչ էլ օրե է նորնորոց է եղել Պոմպեոսի նամբարում: Դուք կտեսնե՛ք, վստահացնում եմ ձեզ, որ այդ ժամանակ և՛ ռազմավարական արարողություններ, և՛ հոգատարությունը այդ մասին, և՛ կովի ձևերը, և՛ զգաստությունը, և՛ համեստությունը, այդ ամենը բոլորովին այլ կերպ է եղել:

ԳՈՎԵՐ

Այո՛, բայց հակառակորդը աղմկում է և այդ աղմուկը ամբողջ գիշեր լսվում է:

ՅԼՅՈՒԼԵՆ

Եթե թշնամին ավանակ է, հիմար և շաղակերատ, ցուցամուլ, մի՞թե մենք էլ պետք է, գիտե՛ք ինչ, ավանակ, հիմար և բարձրախոս ցուցամուլ լինենք: Խզնով ասացե՛ք, մի՞թե կարող եմք:

ԳՈՎԵՐ

Ես կամաց կխոսեմ:

ՅԼՅՈՒԼԵՆ

Խնդրում եմ, աղաչում եմ, որ բարձրաձայն չխոսե՛ք:

Գովերը և Ֆլուլենը գնում են:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այս վայերը թեպետ հնականոն է,

Բայց փութաջան է, ազնիվ է և Լաշ:

Մտնում են երեկ գիկվորները՝ Ջոն Քեոսը, Ալեքսանդր Քոստը և Մայիլ Վիլյամսը:

ՔՈՐՏ

Եղբայր Ջոն, նայի՛ր, կարծես առավոտը սկսում է բացվել, այնպես չէ՞:

ԲԵՏՍ

Այո, կարծես թե բացվում է: Բայց մենք առանձնապես մեծ պատճառ չունենք փափագելու, որ օրը բացվի:

ՎԻՅԱՄՍ

Մենք այժմ տեսնում ենք լուսացող օրվա սկիզբը, իսկ նրա վերջը հնարավոր է, որ ամենևին չտեսնենք: — Եկողը ո՛վ է:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Մի բարեկամ:

ՎԻՅԱՄՍ

Ո՞ր գործասից ես:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Պարոն Թումաս էրպինգեմի:

ՎԻՅԱՄՍ

Հին պանծալի հրամանատար է և մի շափազանց բարի մարդ: Ասա ինձրեմ, թե նա ինչ է մտածում մեր վիճակի մասին:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Նա այդ վիճակը նմանեցնում է այն մարդկանց դրություն, որ նավաբեկությունը շարավել են ավազներին և սպասում են, թե հաջորդ մակընթացությունը պիտի անհետ սրբվեն:

ԲԵՏՍ

Իսկ նա իր մտածածը շի՞ հայտնել թագավորին:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Ո՛չ. ոչ էլ կարիք կար, որ հայտնեք: Չէ՞ որ. — խոսքը մեր մեջ մնա. — թագավորն էլ, կարծում եմ, այնպիսի մարդ է, ինչպես ես: Մանուշակը նրա համար այնպես է բուրում, ինչպես ինձ համար: Երկինքը նրան երևում է այնպես, ինչպես ինձ է երևում: Նրա բոլոր զգացումները նույնն են, ինչպես բոլոր մարդոց: Եթե վրայից վար առնենք նրա թագավորական պանունանքները, նա իր մեղկության մեջ կերևա իբրև սոսկական մարդ. և թեպետ նրա ձգտումները ավելի բարձրաբարձ են, քան թե մերը. սակայն երկրին խոնարհվելիս, խոնարհվում է բոլոր մարդկանց ձրգտումների պես: Հեռաբար, երբ նա մեզ նման վախի պատճառ է տեսնում, նրա երկյուղը ոչնչով չի ասարբեղվում մեր զգացումից: Ուստի ամեն ոմ պետ՞ է զգուշանա նրան երկյուղի նշույլ հաղորդելուց, չէ՞ որ եթե նա ցույց տվեց, որ վախենում է, նրա ամբողջ գործը կվհասալի հոգևպես:

ՔԵՏՍ

Ատերեույք, ինչքան կարող է, բոզ իրեն անվախ ցույց տա, իսկ ես հավատացած եմ. որ ինչքան էլ այս գիշերը ցուրտ է, այժմ նրա միակ փափագն է մինչև կոկորդը սուզվել Թեմզայի մեջ. — ես էլ լինեի նրա կողքին, — հոգ չէ, թե ինչ կայտասներ ինձ հետ, — միայն թե այստեղից հեռու լինեիմ:

ԹԱԳԱՎՈՐ շԵՆՐԻ

Իսկ ես խղճով կասեմ մեզ իմ կարծիքը քաղավորի մասին: Ես կարծում եմ, որ նա չէր փափագի ուրիշ ոչ մի վայրում լինել, բացի այստեղից, ուր գտնվում է այժմ:

ՔԵՏՍ

Այդ դեպքում ես կուզենայի, որ նա այստեղ մենակ լիներ: Նրան անկասկած փրկանք տալով կազատեին և շատ խեղճ մարդիկ կենդանի կմնային նրա հետ վախճանակվելով:

ԹԱԳԱՎՈՐ շԵՆՐԻ

Ես համարձակվում եմ ասել, որ դու նրան այնքան էլ չես ստում. և թ արտե չես ցանկանում, որ նա այստեղ մենակ լիներ: Որեւէ կեռայով ասում ես այդ բանը, որ ուրիշների կարծիքը չոչնչացնես: Ըստ իս, ոչ մի վայրում մանր այնքան բաղձալի չէ ինձ համար, ինչպես քաղավորի կողքին, քանի որ նրա գործը արդար է և նրա կոնվր պատվավոր:

ՎԻՅԱՄՍ

Այդ ավելին է, քան թե մենք գիտենք:

ՔԵՏՍ

Այո՛, և ինչ կարիք կա ավելին գիտենալու Լուկից ընկնել: Որովհետև Լքե մենք գիտենք, որ մենք քաղավորի հպատակներն ենք, այդ արդեն բավական գիտելիք է մեզ համար: Եթե նրա դատը անարդար լինի, մեր հպատակությունը քաղավորին դրա հանցանքը սերում է մեր վրայից:

ՎԻՅԱՄՍ

Իսկ եթե դատը անարդար է, քաղավորը ստիպված կլինի շատ մեծ տուգանք վճարել դրա համար: Չէ՞ որ հակառակաբար կարված բոլոր ոտքերը, ձեռքերը, գլուխները վերջին դատաստանի օրը կհավաքվեն և միասին կաղաղակեն. «Մենք այս ինչ վայրում ընկանք»: Շատերը իրենց բախտը կանիծեն, շատերը կրղավեն, որ վիրաբույժ հասնի, երրորդները կկանչեն տանը աղխատության մեջ թողած իրենց թշվառ կանանց, չորրորդները իրենց շվեարված պարտքերի համար կմորմոխեն, հինգերորդները՝ իրենց որբազած երեխաների համար: Վախենում եմ, որ շատ ֆչերը

հանգիստ խղճով մեռնեն կովի դաշտում: Չինվորը ինչպե՞ս կարող է բարեպաշտորեն տրամադրվել, երբ նրա մտքում միայն մի բան կա. արյունահեղություն: Իսկ երբ այդ մարդիկ չեն մեռնում այնպես, ինչպես վայել է, այդ սև արաբի պատասխանատվությունը ընկնում է թագավորի վրա, որը պատեհառ է դարձել նրանց մեռնելուն: Չէ՞ որ թագավորին շինագանդվել, նշանակում է հնազանդության բոլոր չափերը խախտել:

ԹԵՐԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ուրեմն, երբ հայրը իր որդուն ուղարկում է վաճառականական գործերով և նա հանցավոր կերպով մոլորվելով կործանվում է ծովում, ապա նրա անզգամության մեղքը, քստ մեզ, պետք է ընկնի հոր վրա, որովհետև հայրն է նրան ուղարկել: Կամ, երբ տերը իր ծառային հրամայում է մի գումար փող տեղափոխել և նա հանապարհին ավագակների կողմից հարձակման ենթարկվելով՝ մեռնում է առանց մեղքի բաժնու, դու տիրոջ հրամանը պիտի համարես ծառայի հոգու կործանման պատեհառ: Ո՛չ, այդպես չէ: Թագավորը պատասխանատու չէ իր չուրաֆանչյուր առանձին զինվորի մահվան համար, ոչ էլ հայրը իր որդու կամ տերը իր ծառայի մահվան համար, որովհետև նրանք նրանց զինվորության կամ ծառայության դեպու հրաման արձակելիս նպատակ չեն ունեցել նրանց մահը: Ավելին կասեմ. ոչ մի թագավոր, որքան էլ նրա դատը արդար լինի, երբ հարկադրված է սուվ պաշտպանել այն, չի կարող բանակ կազմել միայն անմեղ մարդկանցից: Ոմանց խղճի վրա ծանրացած է կանխամտածված և ծրագրված սպանություն, ոմանք խաբել են անմեղ կուսերին իրենց կեղծ երդումները դրժելով: Երարդները գնում են պատերազմ, որ այն պատվար դարձնեն քաղաքում խաղաղության անբիծ կուրծքը կողոպուտով և ավագակությամբ խոցած լինելու համար: Նրե այդ բոլոր մարդիկ կոխել են օրենքը և խուսափել պատժից իրենց հայրենիքում, — թեպետ նրանք ընդունակ են խուսափել մարդկանցից իրենց հանցանքի քաղցնելով. — սակայն նրանք թևեր չունեն, որ թռչեն խուսափեն աստուծոց: Պատերազմը աստուծո պատժիչ խառազանն է: Պատերազմը աստուծո վրեժխնդրությունն է: Ուստի և այստեղ, թագավորական այս կովում, մարդիկ պատժվում են թագավորական օրենքները մինչև այդ խախտած լինելու համար: Այնտեղ, ուր նրանք վախեցել են մահից՝ նրանք իրենց կյանքն են փրկել, իսկ ուր համարում են, որ իրենք անվտանգության մեջ են՝ կործանվում են: Երբ նրանք մեռնեն առանց մեղքերի խուսառվանության և զղջման, թագավորը հանցավոր չի լինի նրանց հոգիների կործանման համար, ինչպես և առաջ մեղավոր չի եղել այն զանցանքների համար, որոնց պատասխանատու են դառնում այժմ Ամեն հպատակի պարտականությունը թագավորին է սլատկան, իսկ

ամեն հայտակի հոգին՝ իրեն հայտակին: Հեռաբար, ամեն մի զին-
վոր պատերազմ գնալիս մահվան մահնում պառկած հիվանդի նման
պարտավոր է իր խղճմամբ մաքրել մեղքի նվազագույն փոշուց: Եթե
նա այդպիսի մահով ընկավ մարտում, ուրեմն փառք նրան, այդ նրա
բարեբախտությունն է, իսկ եթե ողջ մնաց, ապա այն ժամանակը, որ նա
վատնել է դրան նախապատրաստելու՝ ապառդյուն կորուստ չի լինի նրա
համար, այլ մեծագույն վաստակ: Իսկ ով փրկվել է խույս տալով, նա
մեղք չպիտի համարի մտածել, որ իբրև վարձատրություն այդպիսի վա-
րաջանության, աստված պահպանել է նրա կյանքը, որպեսզի նա նանա-
չի երկնավորի մեծությունը և սովորեցնի ուրիշներին, քե ինչպես պետք
է պատրաստվել մահվան:

ՎԻՅԱՄՍ

Հասկանալի է, երբ մեղավոր մարդն է մեռնում. նրա մեղքը ծանրա-
նում է իր սեփական գլխին, թագավորը այդ մեղքի համար պատասխա-
նատու չէ:

ՐԵՏՍ

Չեմ էլ ուզում, որ թագավորը իմ փոխարեն պատասխան տա, և, այ-
նուամենայնիվ ես վճռել եմ ֆաշաբար կովել նրա համար:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Անձամբ լսեցի. թագավորն ասաց, որ ինքը չէր ցանկանա, որ իր հա-
մար փրկանք վճարվի:

ՎԻՅԱՄՍ

Այո՛, բայց նա դիտմամբ այդպես ասաց, որ մենք ավելի ֆաշալերու-
թյամբ կովենք: Իսկ երբ մեր կոկորդները կտրած կլինեն, նրան, միևնույն
է, փրկագին տալով կազատեն, իսկ մենք ողջ չենք լինի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Եթե ես մինչև այդ ողջ մնամ, ես դրանից հետո երբեք այլևս չպիտի
հավատամ նրա թագավորական խոսքին:

ՎԻՅԱՄՍ

Մրա՛ն տեսե՛ք, և նրան վախեցրի՛ր: Մի ողորմելի հայտակի մասնա-
կի ցասումը բռնակալի դեմ նույնքան է սարսափելի, որքան խաղալիքա-
յին հրուցանի նայությունը: Այդ միևնույն է, քե հանկարծ որոշես արևը սա-
նեցնել՝ սիրամարզի փետուրով հովհարելով նրա երեսին: Դու դրանից
հետո երբեք այլևս չպիտի՞ հավատաս թագավորական խոսքին: Ասածդ
հիմարությունն է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ձեր հանդիմանությունը բավականաչափ սուր է: Ժամանակը հարմար
չէ, թե չէ ես թույլ չէի տա ձեզ այդ ձևով խոսել:

ՎԻՅԱՄՍ

Եկ իրար հետ մեր հաշիվը տեսնենք, եթե ողջ մնացիր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Համաձայն եմ:

ՎԻՅԱՄՍ

Իսկ ինչպե՞ս նանաչեմ քեզ նորից:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մի որևէ գրավ տուր ինձ. ես այն կկրեմ իմ գլխանոցի վրա և եթե դու
երբևիցե համարձակվես խոստովանել, որ դա քո գրավն է, — ես քո հաշ-
վեհարդարը կանեմ:

ՎԻՅԱՄՍ

Ահա՛ իմ ձեռնոցը, փոխարենը քոնը տուր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Վերցրո՛ւ:

ՎԻՅԱՄՍ

Ես նույնպես այս գրավը գլխարկիս վրա կկրեմ. և եթե դու վաղը նա-
կատամարտից հետո մոտենաս ինձ և ասես «Աս իմ ձեռնոցն է», Լեդ-
վում եմ այս ձեռքով, որ ես քեզ կսպանեմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Եթե սլատահի, որ ողջ մնամ, ես իմ ձեռնոցը ետ կդառնանք քեզնից:

ՎԻՅԱՄՍ

Այդ նույն համարձակությամբ էլ դու մինչև կախաղան կբարձրանաս:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ես այն կդառնանք քեզնից նույնիսկ թագավորի ներկայության:

ՎԻՅԱՄՍ

Խոսքիդ տերը կաց: Մնա՛ս բարով:

ԲԵՏՍ

Հաշտվեցե՛ք, հիմար անգլիացիներ, հաշտվեցե՛ք: Առանց այդ էլ
Ֆրանսիացիների հետ կռիվ ունենեք: Եթե այդքան քաջ եք, առաջ նրանց
հաշիվը տեսեք, ո՞ր եք իրար հետ կռվում:

228 Իսկապես, ֆրանսիացիները կարող են մեր մեկի դեմ քսան ֆրանսիական զլխա - դրամ հանել, որ մեզ կչարդեն: Անգլիացին խարդախած չի լինի, եթե այդ գլուխները պոկի նրանց ուսերից, իսկ վաղը ինքը՝ քազավորը զբաղվի դրանց արժեքները հավասարեցնելով:

Ձիկվորները գնում են:

Արքայի՛ վրա... Հոգու և կյանքի,
 Կնոջ և մանկան, պարտքի և մեղքի
 Բոլոր հոգսերը բերում բարդում են արքայի վրա:
 Այդ ամբողջ բեռը ես պիտի կրեմ: Օ՛, դժնի վիճակ,
 Երկվորյակ փառքին, խոսքի առարկան ամեն հիմարի,
 Որ ընդունակ է լոկ իր անձնական ցավերը զգալ:
 Հասարակ մարդիկ որքա՛ն բաղձալի վայելքներ ունեն,
 Որից զրկված են թագավորները:
 Եվ ի՞նչ ունենա մե՞նք, որ նրանք չունեն,
 Բացի արտաքին արքայական նոխ զարդարանքներից:
 Ասա, ի՞նչ ես դու, ով կուտ — նոխուրյուն,
 Ի՞նչ աստված ես դու, որ տառապում ես
 Քեզ պաշտողներից առավել սաստիկ:
 Ի՞նչ է քո վարձը, քո հասույթն ի՞նչ է,
 Օ՛, ցո՛ւյց տուր, ցո՛ւյց տուր ստույգ արժեքդ, ո՛վ երանելի,
 Քո ոգին ի՞նչ է, ինչո՞վ ես այդքան երկրպագելի.
 Չէ՞ որ դու միայն ձև ես և կոչում, պաշտոն, աստիճան,
 Որ ներշնչում ես հպատակներիդ ակնածանք, երկյուղ,
 Քեզնից սուկում են, մինչդեռ, ո՛վ դժբախտ,
 Ինքդ առավել սուկում ես քեզնից:
 Ի՞նչ ես ընդունում դու պերն մեծարանքի փոխարեն հանախ, —
 Լոկ ֆժնանքի թույն: Օ՛, հիվանդացիք, հզոր մեծություն
 Եվ հրամայիք քո նոխուրյանը, որ քեզ բժշկի:
 Ի՞նչ ես կարծում դու. կմարի՞ միթե քեզ այրող տապը
 Քժնանքով փված այդ տիտղոսներից,
 Կամ տեղի կտա՞ հիվանդությունը
 Թևածալների և սրունքների նվաստ խոնարհման:
 Քեզ հնազանդ է աղֆաաի ծունկը, բայց դու կարո՞ղ ես
 Հրամայելով այդ ծունկը բուժել: Ո՛չ, գոռոզ երազ,
 Որ նենգ խաղում ես թագավորական անդորրության հետ:
 Դու եղար բախտն իմ: Եվ ես քաջ գիտեմ, ո՛չ օժանելիք,
 Ո՛չ մական, ո՛չ սուր. ո՛չ իշխանություն, գայիսոն և թագ,

Ո՛չ պատմունան նոխ ոսկով, մարգարանով,
 Ո՛չ թագավորի տիտղոսը փրուն,
 Ո՛չ նրա գահը, որին բազմում է,
 Ո՛չ այդ կյանքի վեհ եզերքին բախվող հորձանքը շփեղ.
 Ո՛չ այս ամենը եռապատիկ պերն ու շփեղափայլ, —
 Արքայական նոխ մահնին խնողված. —
 Չեն կարող նրան երաշխավորել մի ջիւնջ, առույգ փուն.
 Որ մատչելի է քշվառ աղփատին:
 Կուշտ, առողջ փորով, գլխով անգբաղ
 Կյանքի դառնաղետ մտուրք փամած, նա հանգչում է խոր
 Դժոխքի ծնունդ անփուն գիշերի տագնապներից գերծ.
 Ինչպես ժիր մշակ տփնում — փրտնում է
 Վաղ առավոտից մինչև մայրամուտ
 Ֆեքոսի շփեղ նանանչների տակ, իսկ ամբողջ գիշեր
 Քնում բերկրալի երջանկության մեջ:
 Արևածագին զարթնելով կանուխ.

280 Նա Հիպերիոնի ձիերն է լծում օգնելով նրան:

Այսպես օրավոր, տարի առ տարի
 Նա արդյունավետ իր արշավանքով
 Ապրում, շարժվում է դեպի գերեզման:
 Եթե չհաշվենք նոխություն ու շիֆ
 Այդպիսի մարդու երջանկությանը, —
 Որի ցերեկը հոգնությամբ է լի, գիշերը փնով, —
 Պիտի նախանձեր ամեն թագավոր:
 Ստրուկը անհոգ վայելում է տան խաղաղությունը,
 Նրա բուք խելքին հասու չէ սակայն,
 Թե թագավորի հանգիստը որքա՛ն տառապանք արժե,
 Որով հրեվում է անհոգ գլուղացին:

Մտնում է եպիեգեմը:

ԷՐՊԻՆԳԵՄ

Իշխաններն, արևա, ձեր բացակայությամբ սաստիկ տագնապած,
 Չեզ են որոնում վրանից վրան:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մեր, բարի ասպետ,
 Նրանց բոլորին շտապ հավաքի՛ր տաղավարիս մեջ:
 Ես այնպեղ կգամ ֆեզանից առաջ:

ԷՐՊԻՆԳԵՄ

Լսո՛ւմ եմ, արքա:

Գնում է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օ՛, ուզմի աստված, կոփի՛ր սրտերը իմ զինվորների,
Հալածի՛ր, վանի՛ր վախը նրանցից: Եվ զրկի՛ր նրանց
Հակառակորդի թիվը հաշվելու ունակությունից,

Որ շարսավենն: Կեթ այսօր, աստվա՛ծ,

Օ՛, միայն այսօր մոռացության տուր վաղեմի մեղքը,

Թե հայրս ինչպես թագին տիրացավ:

302 Ռիչարդի մարմինը ես արձայտեմ թաղեցի նորից

Եվ նրա վրա վշտաբեկության

Ավելի առատ արցունք թափեցի,

Քան թե արյուն էր փամվել նրանից:

Ինձ մոտ տարեկան ես խնամում եմ հինգ հարյուր աղքատ,

Որ երկու անգամ յուրաքանչյուր օր

Թոշնած ձեռքերը կարկառում են վեր

Եվ ներում հայցում այդ արյան համար: Շինել եմ նույնպես

Ես երկու մատուռ, որտեղ արամաշուր ֆահանսները

Սրհներգում են միշտ Ռիչարդի հոգուն:

Պատրաստ եմ նաև ավելին անել,

Թեպետ ամենը փուչ է, անարժեք,

Քանի դեռ ինքս մեղքս չեմ փավել —

Աղերսելով իմ թողության համար:

Մտնում է Գլուստերը:

ԳԼՈՍՏԵՐ

Տե՛ր իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այդ Գլուստերի՛ իմ եղբոր ձա՛յնն է:

Ի՞նձ են որոնում: Ես կգամ քեզ հետ: Սրբանք միատեղ,

Ինձ են սպասում արշալույս, և՛ զորք, և՛ կոփվ ահեղ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԳ

Ֆրանսիական ռազմաճամբարը:

Մտնում են դոֆինը, Օռլեանը, Ռամբյուրը և ուրիշներ:

ՕՌԼԵԱՆ

Արևը արդեն սկսեցօծում է մեր զրահները: Հառա՛ջ, իշխաններ:

ԳՈՅԻՆ

Montez à cheval!¹ — Իմ ձի՛ն, սաամբա՛կ: Իմ նժույգը բեր:

ՕՌԼԵԱՆ

Օ՛, խիզախ ավյուն:

ԳՈՅԻՆ

Via!—les eaux et la terre,²

ՕՌԼԵԱՆ

Rien puis? Pair et le feu,³

ԳՈՅԻՆ

Ciel!⁴, զարմիկ իմ, Օռլեան:

Մտնում է զորապետը:

Ի՛նչ լուր, զորապետ:

ԶՈՐԱՊԵՏ

Լսո՞ւմ եմ, ինչպես նժույգները մեր
Զիլ խրխնջում են դեպի ռազմադաշտ:

ԳՈՅԻՆ

Թամբերի՛ն ելե՛ք: Խթանները ձե՛ր
Այնպես պինդ խրե՛ք նրանց կողերին,
Որ արյուն ցայտի ոսոխի աչքին,
Վայրագ փառքյամբ անգլիացիներին ջարդե՛ք անխնա:

¹ Հեծեք նժույգները (ֆրանս.):

² Հառա՛ջ... օ՛, ջուր և ցամաք (ֆրանս.):

³ Ա՛յդ է բոլորը. և՛ օդ, և՛ կրակ (ֆրանս.):

⁴ Երկինք (ֆրանս.):

ՌԱՄՔՅՈՒՐ

Երև արյունը մեր նժույզների
Նրանց աչքերին արաստուի դառնա,
Նրանց սեփական արտասուիները էլ ինչպե՞ս տեսնենք:

Մտնում է մի սպրհանդակ:

ՍՈՒՐԶԱՆԴԱԿ

Ֆրանսիո՞ մեծեր, անգլիացիները պատրաստ են մարտի:

ԶՈՐԱՊԵՏ

Թամբերի՛ վրա, ասպետ իշխաններ, թամբերի՛ վրա:
Բավական է ձեզ մի հայացք նետել
Սովահար թշվառ այդ խառնամբուխին,
Որ ձեր վեճ տեսից բոլորի հոգին սմբի տեղնուտեղ՝
Գարձնելով նրանց մարդկային կեղև:
Մեր ձեռքի համար անելիք քիչ կա.
Նրանց արյունը սաստիկ նվազ է
Մեր կեռ թերը ներկելու բոսոր,
Որ ֆրանսիացի մեր քաջերն այսօր պիտի մերկացնեն
Եվ պատյան դնեն պարապությունից: Միայն մի մեծ փուխ.—
Եվ մեր քաջության գոլորշին նրանց կտապալի վար:
Եվ ոչ մի կասկած, ասպետ իշխաններ,
Բավական էին մեր հետևակը անպաղար փոխվող
Եվ մեր գյուղացին, —
Որոնք անհարկի մի եռուզեռով
Ամբոխվում են մեր ջոկատների շուրջ, —
Որ դաշտը մաքրվեր այդ փուշ ոսոխից
Եվ մենք կանգնելով այս բլրի տակ՝
Պարասությունից դիտեինք ծուլ-ծուլ:
Բայց դա մեր պատվին հանդուրժելի չէ: Ուրիշ ի՞նչ ասեմ.
Բավ է մի թեթև, շատ թեթև ննչում՝
Եվ գործն ավարտ է: Շեփորը ուժգին
Թող ազդարարի նժույզներն հեծնել և նետվել մարտի:
Մեր զորքերն հենց որ երևան դաշտում,
Անգլիան վախից պարտված է իսկույն:

Մտնում է Գրանայրեն:

ԳՐԱՆՊԵՏ

Ի՞նչ էք դանդաղում, Ֆրանսիո մեծեր:
Այն կղզու սատկած բնակիչները

Իրենց սեփական մորթը փրկելու մտքից հուսահատ՝
 Արևածաղի դաշտն են աղարտում:
 Նրանց լաթերը խոնարհված են ցած ողբալի տեսնով
 Եվ երկրիս ֆամին դրանք ցնցելով՝
 Արհամարհանքով թռչում է առաջ:
 Հուժկու Արեսը անգոր է թվում այդ ամբոխի մեջ,
 Նրկչոտ նայելով ժանգոտ կորդակի դիմակի տակից:
 Հեծյալները լուռ անշարժ նստած են՝
 Նման ձևավոր աշտանակների,
 Իրենց լախաերը կերոնների պես ձեռներում պահած:
 Վտիտ ձիերը հակել են իրենց գլուխները վար,
 Կաշին ծալֆերով կողերից կախված
 Եվ ջրակալված անփայլ աշֆերից
 Գանդաղ ծորում է խեժը հարբուխի:
 Նրանց բուք, գունատ բերանների մեջ
 Անշարժ կախվել են սանձողակները
 Խոտի գարշելի ծամուկով պատած:
 Եվ լեշի կարոտ ազոավները նենգ
 Քարձրից անհանգիստ պտույտ գործելով՝
 Նրանց սատկելու ժամերն են հաշվում:
 Իմ խոսքն անգոր է նկարագրելու
 Մեռյալ, անկենդան պատկերն այդ գորգի,
 Ընչպես որ նա կա իրականի մեջ:

ԶՈՐԱՊԵՏ

Նրանք աղոթել են, սպասում են մահվան:

ԴՈՅԻՆ

Զուգարկե՞նք նրանց կերակուր, հագուստ,
 Հարդ շտա՞նք նրանց ֆաղցած ձիերին
 Եվ նետվենք մարտի:

ԶՈՐԱՊԵՏ

Ես սպասում եմ իմ դրոշակին, — հառա՛ջ դեպի դաշտ,
 Տո՛ւր ինձ, փողահար, քո դրոշակը, ես շաապում եմ:
 Արևը սրդեն բարձրացել է վեր. երթանք հոժ շարքով
 Եվ օրն ավարտենք հաղթական փառքով:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Անգլիական ռազմաճամբարը:

Մտնում են Գլուստերը, Բեդֆորդը, Էֆեստերը, Էրպինգեմը
անգլիական զորքով, Սոլսբերին և Վեստմոլենդը:

ԳՂՈՍՏԵՐ

Իսկ ո՞ւր է արքան:

ԲԵԴՅՈՐԴ

Ձին ֆշեց զնաց հակառակորդի զորքը դիտելու:

ՎԵՍՏՄՈՒԼԵՆԴ

Նրանք վաթսուն հազար կովոդ զորք ունեն:

ԷՔՍԵՏԵՐ

Մեկի դեմ հինգ մարդ և բոլորը թարմ:

ՍՈՂՍԲԵՐԻ

Զորավիգ եղիր դու մեզ, տե՛ր աստված,

Ինչ սուկալի է տարբերությունը:

Ասպետ իշխաններ. մնացե՛ք բարով և աստված ձեզ հետ,

Ինձ պարտն է կանչում՝ զնամ պաշտոնիս:

Թե վիճակված չէ մեզ այս աշխարհում հանդիպել նորից,

Արդ, մահից առաջ եկե՛ք ցնծությամբ գառվենք իրարից,

Իմ ազնիվ Բեդֆորդ, անգին Գլուստեր, Էֆեստեր, տեր իմ,

12 Դու էլ, զարմիկ իմ, և դու՛ք, ռազմիկներ, մնացե՛ք բարով:

ԲԵԴՅՈՐԴ

Գնա, Սոլսբերի, հաջողությունն քեզ:

ԷՔՍԵՏԵՐ

Գնա՛ս բարով, կոմս, և ֆաջ մարտնչիւր,

Թեև իգուր եմ քեզ այդ բանն ասում,

Չէ՞ որ արիության մարմնացում ես դու:

Սոլսբերին գնում է:

ԲԵԴՅՈՐԴ

Նա ամբողջապես խիզախություն է և անկեղծություն,

Ինչպես վայել է ազնիվ իշխանին:

Մտնում է շենի. բազմվորը:

Որքան անգլիացիք մեր երկրում այսօր
 Նստած են պարապ: Օ՛, երանի թե այդ բազմությունից
 Մի տաս հազար մարդ գեր այստեղ լիներ
 Մեր այս նեղ ժամին:

ԹԱԿԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Ո՞վ է այդպես տենչում:

Գո՛ւ ես, Վեստմոռլենդ: Սխալ ես, զարմիկ:
 Եթե վիճակված է մեզ մեռնել այսօր,
 Այդքան կորուստը բավ է հայրենյաց: Թե ողջ մնացի՞նք,
 Որքան մարդիկ քիչ՝ պատիվն այնքան մեծ:
 Կատարվի կամքը թող երկնավորի: Դու մի ցանկացիր
 Մի հատիկ թեկուզ հավելյալ զինվոր օգնության համար:
 Արամազդը վկա, ազան մարդ շեմ ես, ոսկու տենչ չունեմ,
 Բնավ փույթ չէ. թե որքան մարդ է ապրում իմ հաշվին,
 Ոչ էլ ցավ է ինձ, եթե նրանք իմ զգեստներն հագնեն,
 Նման արտաքին շահ, նկատառում
 Բնավ տեղ չունի իմ փափագներում:
 Բայց եթե մեղք է պատիվ տենչալը,
 Ինձնից ավելի մեղսագործ չկա ամբողջ աշխարհում:
 Ո՛չ, մի՛ փափագիր, որ Անգլիայից նոր զինվորներ գան,
 Վկա՛ է տստված, չէի ցանկանա ես պատիվ կիսել
 Թեկուզ ավելորդ մի ռազմիկի հետ
 Իսկույն լավագույն ակնկալության: Օ՛, մի՛ փափագիր
 Նույնիսկ մի հատիկ հավելյալ զինվոր:
 Ավելի լավ է, որ դու, Վեստմոռլենդ, հայտնես իմ գորբին,
 Ով փափագ չունի այս կովի համար,
 Թող ետ դառնա տուն: Նրան կտրվի
 Ճանապարհի փող և արտոնություն:
 Չէի ցանկանա մեռնել նրա հետ,
 Ով վախենում է մեր կողմին մեռնել:
 47 Այսօր Կրիսպիանի սուրբ տոնի օրն է,
 Ով այսօր ապրեց և ողջ դարձավ տուն,
 Նրա այդ օրն հիշեն,
 Նա իր ռաֆերի մատների վրա պիտի ձգվի բարձր
 Լցվի, վեհանա սուրբ Կրիսպիանի անմահ անունով:
 Ով այս օ՛րն ապրեց, հասավ ծերության,
 Նա ամեն տարի այդ օրվա շեմին

Հարևաններին հավաքած կասի.
 «Վաղը Կրիսպիանի տոնն է, եղբայրներ»:
 Ապա թևնոցը վերև ծալելով
 եվ սպիները ցույց տալով կասի.
 «Ես այս վե՛րքեր սուրբ Կրիսպիանի տոնին ստացա»:
 Մերերը թեպետ մոռացկոտ են շատ
 եվ կմոռացվի անցած ամեն բան,
 Բայց չի մոռացվի սխրանք ու սպի
 եվ նա այդ օրը մի՛շտ պիտի հիշի:
 Մեր անուններն էլ մարդկանց շուրթերին
 Կդառնան ծանոթ, բնականի բառեր. —
 Մեր արքա Հենրին, Բեդֆորդ, էֆսետեր,
 Վորվիկ, Սոլսբերի, Տոլբոտ, Գլոստեր, —
 Նորից հիշվելով ու քարձագվելով
 Հորդ բաժակների զնգոցների տակ:
 Այդ պատմությունը ծերունի հայրը կավանդի որդուն:
 եվ Կրիսպների տունը սրբազան չի ջնջվի երբեք,
 Տևելով մինչև վախճանն աշխարհի:
 եվ այդ տոնի մեջ մենք էլ կհիշվենք,
 Մենք՝ այս ֆչերս, մի բուռ երջանիկ բախսավորներս,
 Մենք՝ եղբայրներս՝ հագիվ մի ջոկատ:
 Ով արյուն թափեց այսօր իմ կողմին,
 Նա իմ եղբայրն է: Որքան էլ լինի անարգ, փոփոզի,
 Այս օրը նրան պիտի վեհացնի և ազնվացնի:
 Իսկ ազնվական մեր պարոնները,
 Որ Անգլիայում պառկած են այժմ մահիճների մեջ,
 Իրենց շար բախտը պիտի անիծեն,
 Որ այսօր այստեղ շեն եղել մեզ հետ
 եվ նվաստացած շիկնեն ամոթից,
 Երբ մեկնումեկը մեր կողմին կոված ուղմիկներից հին
 Խոսի Կրիսպիանի սուրբ տոնի մասին:

Մանուս է Սոլսբերին:

ՍՈԼՍԲԵՐԻ

Տեր իմ, պատրաստվե՛ք մարտն բնդունելու,
 Ֆրանսիացիները կուռ շարքեր կազմած
 Ուզում են քափով շարժվել մեզ վրա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Լրիվ պատրաստ ենք, եթե մեր ոգին կուռ ու պատրաստ է:

ՎԵՍՏՄՈՌԱԼԵՆԳ

Թող կործանվի նա, ով քույլ է ոգով:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

էլ շե՞ս ցանկանում օգնական գորհեր:

ՎԵՍՏՄՈՌԱԼԵՆԳ

Օգնություն պետք չէ: Նույնիսկ կուզեի, որ թշնամու դեմ.
Մենք մարտնչեինք միայն երկուսով, ես ու դու, տեր իմ.
Եվ ասածն կամեով մտրտը շահեինք:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ջարմանալի՜ է, մերժում ես նույնիսկ հինգ հազար մարդու
Մասնակցությունը հակառամարտին:
Բայց դա առավել ախորժ է սրտիս,
Քան ին փափագը մեզ գեթ մի մարդով օգնելու մասին:
Ձեր տեղերն անցե՛ք: Եվ ասավա՛ժ ձեզ հեա:

Շեփոր:

Մտնում է Մոնժուան:

ՄՈՆՃՈՒԱ

Արեա, վերստին եկա պարզելու,
Արդյոք հոժար շե՞ս վնարել փրկանք
Եվ ին հավաստի անկումը կանխել,
Քանզի անդնդին այնքան մերձ ես դու,
Որ կույզ գնալի անկասելի է: Դրանից բացի,
Ի սեր գթության, մեր զորապետը հատուկ խնդրում է
Զգուշացնելու արքանյակներից զղջումի մասին,
Որպեսզի նրանց հոգիներն հանգիստ
Մեր այս դաշտերից նահանջեն անդարձ,
Որ պետք է միայն պառկեն ու փտեն
Հեզ մարմինները եղկելի մարդկանց:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Քեզ ո՞վ հղեց այժմ:

ՄՈՆՃՈՒԱ

Մեժ զորապետը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Տար իմ առաջվա պատասխանը ետ.

Ասա, նախասպես թող ինձ սպանեն,
 Հետո ոսկորներս վաճառի հանեն:
 Օ՛, տեր իմ աստված, ինչո՞ւ են նրանք
 Այդքան շարժւածք հեզնում խեղճերին:
 Մի մարդ առյուծի մորթը վաճառեց,
 Երբ նա դեռ ողջ էր. գնաց որսալու,
 Եվ նույն առյուծը նրան սպանեց:
 Տառակույս շունեմ՝ շատերը մեզնից
 Շիրիմ կգտնեն հողում հայրենի
 Եվ դրանց վրա, հավատացած եմ. դեղին բրոնզով
 Այսօրվա փառքը կերթա դարեդար:
 Իսկ նրանք, որոնք կովում քաջաբար նահատակվելով
 Լրենց անվեներ ոսկորները սփռկ
 Անդարձ վայր դնեն Ֆրանսիայի մեջ,
 Թեկուզ թաղվեն ձեր աղբակույտերում,
 Հավետ պիտ հիշվեն: Արևը նրանց պիտի ողջունի
 Եվ նրանց փառքը գոլորշու նման բարձրացնի երկինք,
 Հողեղեն մասը թողնելով իբրև վարակ ձեր օդին
 Եվ Ֆրանսիայում ժանտախտ սփռելով:
 Մեր անգլիացի ռազմիկը քաջ է,
 Արիությանը հզոր, անբաղդատելի.
 Գնդակի նման, որ ետ է ցատկում բախվելով գետնին,
 Նահատակվելիս նա կատարում է
 Անեղ թոխչը իր հետադարձի՝
 Շուրջը սփռելով մահ ու կործանում:
 Ահա՛ թե ինչու խոսքս հպարտ է:
 Գնա և ասա մեծ գործապետին,
 Որ պատերազմը մեզ համար դժնյա մի աշխատանք է,
 Անձրևոտ երթը դժնդակ դաշտով,
 Մեր զգեստների ոսկին ֆերել է, տեսքը աղարակ,
 Մեր կորդակները գուրկ են փետուրից, —
 Հիանալի՛ փաստ, որ մենք շենք չվի, —
 Փամանակը մեզ դարձրել է աղտոտ և խիստ քավրվիված.
 Բայց խաչը վկա. մեր ոգին կոկ է, սարփին, շտկված.
 Իմ գինվորները ինձ խոստացել են, որ մուրթ չիջած
 Իրենք կհագնեն նոր պատմունաններ,
 Կամ ֆրանսիացի ձեր գինվորներին շարժից հանելով՝
 Կկորզեն նրանց քանկոնները նոր:

Իրենց խոստումը եթե կատարեն, —
եվ կկատարեն, եթե երկնավոր տերը կամեցավ, —
Դուք իմ փրկանքը շուտով կստանաք:
Իզուր նեղություն մի կրիր, բանբեր,
Փրկանքի հարցով այլևս չգաս:
Նրանք, երդվում եմ, վերջին բուպեին
Միայն մի փրկանք կարող են տանել.
Այդ այս մարմինն է.
Այն էլ ես կտամ այնպիսի տեսով,
Որ օգուտը շատ չնշին կլինի:
Այդպես հաղորդիր և գորապետին:

ՄՈՆԺՈՒԱ

Կհաղորդեմ, արքա: Արդ, մնա՛ս բարով,
Դու ինձ այլևս չես տեսնի ձեզ մոտ:

Գնում է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ես վախենում եմ. որ նորից կգաս փրկանքի համար:

Մտնում է Յորթի դուքսը:

ՅՈՐԹ

Մունկս խոնարհած խնդրում եմ, արքա.
Որ առաջապահ գուրք ինձ հանձնեմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Վերցո՛ւ, խիզախ Յորթ: Հառա՛ջ, իմ գուրքեր:
Այս մարտի ելքը դո՛ւ վնոիր, ո՛վ տեր:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐՐՈՐԴ

Ճակատամարտի դաշտը: Կովի շաչ ու շառաչ. կարճատև մարտեր:

ՊԻՍՏՈՂ

Անձնատո՛ւր եղիր, շո՛ւն:

ՖՐ. ՉԻՆՎՈՐ

Je pense que vous êtes gentilhomme de bonne qualité¹

¹ Ես կարծում եմ, որ դուք երևելի ազնվական եք (ֆրանս.):

ՊԻՍՏՈՒ

Qualité calmie custure mei!²

Դու իսկապէ՞ս ազնվական ես: Անունդ ի՞նչ է:

ՅՐ. ԶԻՆՎՈՐ

O Seigneur Dieu!³

ՊԻՍՏՈՒ

Օ՛, սինյոր Դյու՛ւ:

Այդ «Դյու»-ն՝ անկասկած ազնվական է:

Լավ կը շիր խոսքս, օ՛, սինյոր Դյու.

Օ՛, սինյոր Դյու, սրով վերջ կտամ ես քո կյանքին.

Եթէ դու, սինյոր, չվնարես ինձ

Շատ մեծ փրկագին:

ՅՐ. ԶԻՆՎՈՐ

O, prenez miséricorde! Ayez pitié de moi.⁵

ՊԻՍՏՈՒ

Խմիչֆի փո՞ղ. տաս ոսկին էլ քիչ է:

Թե չէ փորձի՜ր կոկորդիլ միջով

Ես դուրս կֆաշեմ արշունաքարախ:

ՅՐ. ԶԻՆՎՈՐ

Est-il impossible d'échapper la force de ton bras?⁶

ՊԻՍՏՈՒ

Բարի՞ք ես ուզում, դու շուն անպիտան,

Նզովյալ, պարարտ, նարպակալած կինն

Եվ դու ուզում ես որ քեզ խնայե՞մ:

ՅՐ. ԶԻՆՎՈՐ

O pardonner moi!⁷

² Պիստոլը ֆրանսիացի զինվորին պատասխանում է՝ ազավաղելով իռլանդական ժողովրդական երգի կրկներգը «Coleen, oge astore», որ նշանակում է «Դու գանձ իմ աղջիկ»:

³ Օ՛, տեր աստված (ֆրանս.):

⁴ Պիստոլը ֆրանսերեն Dieu (աստված) բառը շփոթում է անգլերեն Dew (ցող, շաղ) ասարբեր իմաստ, բայց նույնանման արտասանություն ունեցող բառի հետ:

⁵ Օ՛, գթասիրտ եղեր, խղճացե՛ք ինձ (ֆրանս.):

⁶ Մի՞թե հնարավոր չէ փրկվել քո գորավոր բազկից (ֆրանս.):

⁷ Օ՛, ներեցեք ինձ (ֆրանս.):

ՊԻՍՏՈՒ

Այդ ինչ ասացի՞ր: Փրկա՞նք ես տալիս:

Այսանդ եկ, մանչուկ. դու այս սրիկայի՞ն ֆրանսերեն հարցրու,
ի՞ր անունն ի՞նչ է:

ՄԱՆՉՈՒԿ

Ecoutez: comment êtes-vous appelé?⁸

ՖՐ. ԶԻՆՎՈՐ

Monsieur Le Fer.⁹

ՄԱՆՉՈՒԿ

Ասում է, որ իրեն կոչում են պարոն Ֆեր:

ՊԻՍՏՈՒ

Պարոն Ֆե՞ր: Ես այդ պարոն Ֆերին այնպես ֆրոացնեմ, հետո էլ ֆրո-
ֆրոացնեմ, որ դառնա ֆոիկ կամ ֆոֆոիկ: Իմ ասածը հասկացրու նրան
ֆրանսերենով:

ՄԱՆՉՈՒԿ

Բայց ես չգիտեմ. թե ֆրանսերեն ինչպես են ասում ֆոիկ կամ ֆոֆոիկ:

ՊԻՍՏՈՒ

Ասա քոզ պատրաստվի, որ ես իր կոկորդը կտրեմ:

ՖՐ. ԶԻՆՎՈՐ

Que dit-il, monsieur?¹⁰

ՄԱՆՉՈՒԿ

Il me commande de vous dire que vous faites vous prêt; car ce
soldat ici est disposé tout à cette heure de couper votre gorge.¹¹

ՊԻՍՏՈՒ

Owy, cuppele gorge, permafoy,¹²

Դե լսիր, ապուշ, կամ ինձ փող կտաս ընտիր թագադրամ,

կամ մաս-մաս կանեմ ես քեզ այս սրով:

⁸ Կսեցեր, ինչպե՞ս են ձեզ կոչում (ֆրանս.):

⁹ Պարոն Լե Ֆեր (ֆրանս.):

¹⁰ Նա ի՞նչ է ասում, պարոն (ֆրանս.):

¹¹ Նա ինձ հրամայում է հայտնել ձեզ, որ պատրաստվեր, որովհետև այս դինվորը մտա-
դիր է անմիջապես ձեր կոկորդը կտրել (ֆրանս.):

¹² Այո՞, կոկորդը կտրել, դրոշմ տանի (ֆրանս.): Պիստոլը աղավաղում է իր իմացած մի
քանի ֆրանսերեն բառերը:

ՅՐ. ԶԻՆՎՈՐ

O je vous supplie, pour l'amour de Dieu, me pardonner! Je suis le gentilhomme de bonne maison: gardez ma vie, et je vous donnerai deux cent écus.¹³

ՊԻՍՏՈՒ

Ի՞նչ է ասում:

ՄԱՆԶՈՒԿ

Նա ձեզ խնդրում է խնայել իր կյանքը: Ազնվական է, սպավալոր ընտանիքից և խոստանում է երկու հարյուր կրոն վճարել ձեզ իբրև փրկանք:

ՊԻՍՏՈՒ

Գու առա նրան, որ ես պատրաստ եմ այդ փողը վերցնել եվ իմ զայրույթը անսպասման կիջնի:

ՅՐ. ԶԻՆՎՈՐ

Petit monsieur, que dit-il?¹⁴

ՄԱՆԶՈՒԿ

Encore qu'il est contre son jurement de pardonner aucun prisonnier. néanmoins pour les écus que vous l'avez promis, il est content de vous donner la liberté, le franchisement.¹⁵

ՅՐ. ԶԻՆՎՈՐ

Sur mes genoux je vous donne mille remerciemens, et je m'estime heureux que je suis tombé entre les mains d'un chevalier, je pense, le plus brave, vaillant, et très distingué seigneur d'Angleterre.

ՊԻՍՏՈՒ

Բացատրի՛ր ինձ, մանչուկ:

ՄԱՆԶՈՒԿ

Նա ծնկաչոք բազում շնորհակալություն է հայտնում ձեզ և բախտավոր է համարում իրեն, որ ընկել է իր կարծիքով ամենախիզախ, ամենավեհանձն և երիցս արժանավոր անգլիացի ասպետի ձեռքը:

¹³ Մանչուկը ֆրանսիացի զինվորի խոսքը թարգմանում է բավականաչափ ճիշտ:

¹⁴ Նա ի՞նչ է ասում, փոքրիկ պարոն (ֆրանս.):

¹⁵ Ասում է, որ թեև ինքը երգվել է գերիներից ոչ մեկին չխնայել, բայց և այնպես ձեր խոստացած այդ ոսկեդրամների համար համաձայն է ազատ արձակել ձեզ:

ՊԻՍՏՈՒ,

Արճախում եմ թեև, բայց գուր ցույց կտամ,
Ե՛կ իմ ետևից:

Գնում է:

ՄԱՆՉՈՒԿ

Suivez-vous le grand capitane.¹⁶

Ֆրանսիացի գեներալը գնում է:

Երբեք լսած չկամ, որ մի այսպիսի փուչ, դատարկ սրտից այսֆան գիլ, ուժեղ ձայն արձակվի: Ճիշտ է ասում առածը. «Դատարկ կարասը մեծ ձեն կա»: Բարդուլֆը և Նիմր տասնապատիկ ֆաշ էին, ֆան թե հին կոմեդիայի այս մոնչացող դեր, որի եղունգները ամեն ոք կարող է կտրել փայտյա դաշույնով, և, այնուամենայնիվ, այդ երկուսին էլ կախեցին: Մրա հետ էլ կարող է նույնը պատահել. եթե հանդգնի որևէ բան թոցնել: Ես սխալ է մնամ մեռ ռազմաճամբարի գումակում մյուս ծառաների հետ: Ֆրանսիացիները չափազանց կօգտվեն, եթե իմանան, որ գումակը անտերուքյան է մատնված, որովհետև տղաներից բացի ոչ մի պահապան չի մնացել:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ռազմադաշտի մի ուրիշ մասը:

Մտնում են Ֆրանսիո զորապետը, Օւլեանը, Բուրբոնը, դոֆինը և Ռամբյուրը:

ԶՈՐԱՊԵՏ

O diable!¹

ՕՌԷԱՆ

O seigneur! Le jour est perdu!

Tout est perdu!²

ԳՈՅԻՆ

Mort de ma vie!³ Ամեն ինչ կորավ, ամե՛ն, ամե՛ն ինչ:

Մեռ կորդակներին հավետ սև պարսավ

¹⁶ Հետևեցեք մեծն զորահրամանատարին (ֆրանս.):

¹ Սատանան տանի (ֆրանս.):

² Օ՛, աստված: Օրր կործանվեց: Ամեն ինչ խորտակվեց (ֆրանս.):

³ Գրողը տանի ինձ (ֆրանս.):

Եվ ամոթ նստեց: O méchante fortune!⁴

Իսկ ինչո՞ւ փախչել:

Թագմի աղաղակ:

ԶՈՐԱՊԵՏ

Մեր զորքը ջարդվեց:

ԳՈՅԻՆ

Օ՛, անպատվություն՝ ան մշտնջենական:

Եկե՛ք դաշույնով վերջ տանք մեր կյանքին:

Այդ այն խեղճե՞րն էին, որոնց վրա մենք զառ էինք զցում:

ՕՌԼԵԱՆ

Այդ այն արքա՞ն է, որից փրկագին մենք պահանջեցինք:

ԲՈՒՐՐՈՆ

Ամո՛թ, ամո՛թ մեզ, հավիտյա՛ն ամոթ, նախատի՛նք միայն:

Արդ, մեռնենք փառքով: Վերստին հառաջ ոսոխի վրա,

Ով դուքս Բուրբոնին չի հետևելու,

Թող հեռու քաշվի և ստոր, անարգ մի կավատի պես

Ննջասենյակի դռանը հսկի, գլխարկը ձեռքին,

Մինչև մի ստրուկ, իմ շնից էլ գարշ,

Իր հրաշագեղ աղչկան պղծի:

ԶՈՐԱՊԵՏ

Անկարգությունը, որ մեզ կործանեց,

Այժմ մեր միակ բարեկամն է թանկ,

Շարժվենք խուռներամ և մեր կյանքը տանք:

ՕՌԼԵԱՆ

Դաշտում կենդանի մնացածներս

Բավական ուժ ենք անգլիացիներին ճգմելու համար,

Եթե հաստատվի խիստ կարգ ու կանոն:

ԲՈՒՐՐՈՆ

Գրողը տանի՛ կարգն ու կանոնը: Ուղի՛ղ դեպի մահ.

Երբ մեզ ամոթ է սպառնում հավետ,

Այս փուլ կարն կյանքը մեր ինչի՞ն է պետք:

Գնում են:

⁴ Օ՛, զժնդակ բախտ (Ֆրանս.):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

Ռազմադաշտի մի աչ ևս հատված: Մարտի աղաղակ:

Մտնում են Հենրի քաղաքը և զորքը, էփեսոսերը և ուրիշներ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մենք լավ կովեցինք, հայրենակիցներ,
Ճակատամարտը սակայն ավարտ չէ,
Ֆրանսիացիները դեռ դաշտի մեջ են:

ԷՔՍԵՏԵՐ

Գուխ Ֆորքը, արևա, ձեզ ողջույն հղեց:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մի՞թե նա ողջ է, անգին հորեղբայր: Տեսա թե ինչպես
Նա երեք անգամ ընկավ, բարձրացավ, մարտնչեց կրկին
Կորդակից մինչև ոտնախթանը արյամբ շաղախված:

ԷՔՍԵՏԵՐ

Այդ զգեստով էլ խիզախ ռազմիկը հանգչում է այժմ
Իբրև զարդարանք այդ հարթալայրին: Իսկ նրա կողքին
Առափինի կոմս Սեֆոլկն է պառկած
Վերքի լուծընկերն իր հավատարիմ:
Նախ կոմսը մեռավ: Ֆորքը արնափամ
Սողալով մի կերպ մոտեցավ նրան, —
Որ արնաշաղախ հանգչում էր անշարժ, —
Ձեռքի մեջ առավ նրա մորուրը,
Նրա խոր բացված վերքերն համբուրեց,
Որ անգթորեն հորանջում էին նրա երեսին:
Եվ բարձր գոչեց «Սպասի՛ր. Սեֆոլկ, զարմիկ թանկագին,
Իմ ու քո հոգին պետք է միատեղ սլանան երկինք:
Մի քիչ հապաղիր, իմ անգին ընկեր,
Որ իմն էլ հասնի, թոչենք միասին,
Ինչպես փառավոր այս ռազմադաշտում
Իբրև ասպետներ քաջ, մեծահոգի
Միասին եղանք ու միշտ կողք-կողքի»:
Այս խոսքի վրա մոտեցա նրան, քաջալերեցի.
Նա նայեց, ժպտաց, ձեռքը մեկնեց ինձ
Թույլ սեղմեց, ասաց. «Միյորդ, իմ անգին,
Իմ ջերմ ողջույնը իմ արփային տար»:

Ապա շուտ եկավ վիրավոր թեով
Գրկեց իր մեռած ընկերոջ վիզը, շուրթերն համբուրեց,
Եվ մանին փարված, իբրև բարձրնկեր
Արյունով կնիեց սուրբ պատվիրանը անխարդախ սիրո:
Գեղեցիկ, հուզիչ այս տեսարանը
Արցունքներ կորզեց ընդդեմ իմ կամփի:
Տղամարդն իմ մեջ բուլացավ մի պահ,
Իմ աչքին իշխեց մայրական հոգին
Եվ ես լաց եղա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ձեզ չեմ մեղադրում,
Այդ պատմությունը քանզի լսելով ինքս հագիվ եմ
Իմ մշուշալի աչքերը զսպում հորդ արցունքներից:
Տագնապի շեփոր:

Քայց, ուշադրությո՜ւն, այս ի՞նչ շեփոր է,
Ֆրանսիացիները հավաքել են իրենց ցրված ուժերը, —
Արդ, ամեն զինվոր բող շուտ սպանի իր զերիներին,
Այս հրամանը զորքին հաղորդե՛ք:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Յ Ո Թ Ե Ր Ո Ր Դ

Ռազմադաշտի ուրիշ հատված:

Մտնում են Ֆլյուլենը և Գովերը:

ՅԼՅՈՒՆՆ

Սպանել մանչուկներին, թալանել գումակը, — այդ բանը հաստատուե՞ն
դեմ է պատերազմի բոլոր օրենքներին: Ավելի ստոր շարագործություն,
զիտե՛ք ինչ, հնարավոր չէ մտածել նույնիսկ: Դիմում եմ ձեր խղճին, մի-
թե՞ ես նիշտ չեմ ասում:

ԳՈՎԵՐ

Այո՛, ոչ մի տղայի կենդանի չեն թողել: Եվ այդ չարդը սարքել են ռազ-
մադաշտից փախած երկչուտ սրիկաները: Ավելին. նրանք հրդեհել և թալա-
նել-տարել են բազավորական տաղավարում եղած ամեն ինչ: Եվ թագա-
վորը միանգամայն նիշտ է վարվել հրամայելով, որ ամեն զինվոր իր զերի-
ֆրանսիացու կոկորդը կտրի: Ծ՛, ինչ քաջ ասպետ է մեր թագավորը:

ՅԼՅՈՒԼԵՆ

10 Այո՛, հարյուրապետ Գովեր, չէ՞ որ նա ծնվել է Մոնմաուրում: Ասացե՛ք, ինչպե՞ս է կոչվում այն ֆաղաֆը, որտեղ Ալեքսանդր խոշորն է ծնվել:

ԳՈՎԵՐ

Ալեքսանդր Մեծը:

ՅԼՅՈՒԼԵՆ

Նույն բանը չէ միթե, իս ո շ ո ռ - ր կամ մ ե ծ - ր: Խոշոր կամ մեծ, հզոր կամ վիթխարի և կամ հոյակապ, — այս բոլորը, ի վերջո, նույն իմաստն ունեն, միայն թե բառերն են մի ֆիշ տարբեր:

ԳՈՎԵՐ

Ես կարծում եմ, որ Ալեքսանդր Մեծը ծնվել է Մակեդոնիայում: Որքան ինձ հայտնի է, նրա հայրը կոչվում էր Փիլիպոս Մակեդոնացի:

ՅԼՅՈՒԼԵՆ

Ես նույնպես կարծում եմ, որ Ալեքսանդրը ծնվել է Մակեդոնիայում: Հավատացնում եմ ձեզ, զնդապետ, եթե դուք նայեք աշխարհի ֆարտեզին և Մակեդոնիան համեմատեք Մոնմաուրի հետ, դուք կհամոզվեք, ազնիվ խոսք եմ ասում, որ այդ երկուսն էլ իրենց տեղադրությամբ, գիտեք ինչ. շատ նման են իրար: Մակեդոնիայում մի գետ կա. Մոնմաուրում էլ մի գետ կա: Մոնմաուրի գետը կոչվում է Վայ, իսկ թե ինչպես է այն մյուս գետի անունը, գիտեք ինչ. բոլորովին թռավ իմ գլխից: Բայց միևնույն է, երկուսն էլ իրար նման են. ինչպես իմ մի ձեռքի մատները մյուս ձեռքի մատներին: Երկուսի մեջ էլ սաղմոն ձուկ կա: Եթե Ալեքսանդրի կյանքը լավ դիտեք, կտեսնեք, որ Հարրի Մոնմաուրի կյանքը նրա կյանքի հիանալի կրկնօրինակն է, ֆանգի ամեն ինչով նրան նման են իրար: Ալեքսանդրը, ինչպես ասածուն է հայտնի, նույնպես և ձեզ, իր զայրույթի, ցասման, մոլեգնության, մոլուցքի, մաղձոտության, դժգոհության, զրգրվածության և վրդովմունքի մեջ, ինչպես նաև ուլեղը թունդ և թանձր գարեջրով հարբեցնելով՝ գազազելով սպանել է. գիտեք ինչ, իր ամենալավ ընկերոջը՝ Կլիտոսին:

ԳՈՎԵՐ

Մեր թագավորը այդ կողմից բոլորովին նման չէ նրան: Նա երբեք իր ընկերներից որևէ մեկին չի սպանել:

ՅԼՅՈՒԼԵՆ

Շատ վատ բան է, գիտեք ինչ, իմ բերանի խոսքը կտրել, երբ այդ խոսքը դեռ լրիվ կերտված և ավարտված չի: Իմ խոսքը այդ նյութի մասին

բացառապես այլաբանական է, սլաոկերաժոր և հույժ համեմատական։
Ինչպես որ Ալեքսանդրը թունդ և թանձր գարեջրից հարբած լինելով՝ սպա-
նեց իր բաբեկամ կլիսոսին, այդպես էլ Հարրի Մոնմաուրը իր ողջամտու-
թյունից և առողջ դատողությունից զազազելով՝ իրենից վտարեց այն հար-
պակալած ասպետին, որ կրկնակի փոր ուներ։ Նա շափազանց զվարնա-
խոս, ուրախ, անզգամ և անպարտ մարդ էր։ Ես մոռացել եմ նրա անունը։

ԳՈՎԵՐ

Սըր Զոն Ֆալստաֆ։

ՅԼՅՈՒԼԵՆ

Այո՛, այդպես էր, հիշեցի։ Համարձակվում եմ վստահացնել ձեզ, որ
հրաշալի մարդիկ են ծնվում Մոնմաուրում։

ԳՈՎԵՐ

Նորին մեծությունը գալիս է։

Թմբկահարություն։

Մանում են Հենրի թագավորը և զորքը. Վերվիլը,
Գլոստերը, Էֆեստերը և ուրիշներ։

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այն օրից, երբ ես Ֆրանսիա մտա,
Առաջին անգամն է, որ զայրացած եմ։ Լսի՛ր, Մունետիկ,
Վերցրո՛ւ շեփորը և աշտանակի
Դեպի այն բլրի ձիավորները։
Եթե ուզում են մարտնչել մեզ հետ,
Շեփորով հայանիր՝ թող իջնեն ներքև,
Կամ սլարպեն դաշար, շփվեն մեր աչքից։
Իսկ եթե մերժեն՝ մենք արշավելով այդ բլուրն ի վեր
Նրանց այնտեղից վար կշարտենք առավել քափով,
Քան սուրում էին հին ասուրների
Պարսաաթիկներից նետված ֆարերը։
Դրանից բացի, ինչքան գերի կա՝ սրախողխուղ կանենք,
Բոլորի կոկորդը մեկ-մեկ կտրելով,
Զխնայելով ոչ մեկին նույնիսկ
Մեր ձեռքը ընկած նոր գերիներից։ Այդպես ասա նրանց։

ԷՔՍԵՏԵՐ

Արքա, Ֆրանսիո մունետիկն է գալիս։

ԳԼՈՍՏԵՐ

Այս անգամ նրա տեսքը խոնարհ է:

Մտնում է Մոնժուան:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Այս ի՞նչ բան է, բանքեր: Մի՞թե չգիտես,
Իմ փրկանքը լոկ այս ոսկորներն են,
Վերստին եկար փրկանքի համար:

ՄՈՆՃՈՒԱ

Օ՛, ոչ, մեծ արքա:

Ես էեզ մոտ միայն մարդասիրական հարցով եմ եկել,
Որ արտոնես մեզ ազատ շրջելու
Ճակատամարտի արյունոտ դաշտում
Մեր դիակները մեկ-մեկ հաշվելու
Եվ ապա նրանց հողին հանձնելու,
Մեր ազնվական մարդկանց ջոկելով հասարակներից,
Քանզի շատերը մեր իշխաններից, — վա՛յ ինձ, — լողում են
Ժանտ վարձկանների արյան մեջ պառկած:
Նույն կերպ վարվել է և խաժամուծը,
Իր կոշտ մարմինը թրջած, թաթախած
Մեծ իշխանների ազնիվ արյան մեջ:
Նրանց վիրավոր նժույգները խենթ, —
Մինչև ոտնակոն խրված լերդ արյուն
Եվ ցասամբ վայրագ, — ծանր պայաերը
Զարկում են իրենց մեռած տերերին՝
Մի երկրորդ անգամ մեռցնելով նրանց: Թույլ տուր, մեծ արքա,
Աչքի անցկացնել դաշտը ապահով
Եվ մեր գոհերին վերցնել այստեղից:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Ճշմարիտն ասած,

Ես դեռ չգիտեմ, թե ով է հաղթել:
Ձեր շատ հեծյալներ երբեմն գալիս
Եվ արշավում են դաշտի վրայով:

ՄՈՆՃՈՒԱ

Հաղթողը դուք եք:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Փա՛ռք երկնավորին այդ բանի համար, ոչ թե մեր ուժին:
Այնտեղ մի ամուր զոյակ է կանգնած, ինչպե՞ս է կոչվում:

ՄՈՆԺՈՒԱ

Աժիակուր, տեր իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Սուրբ Կրիստոսի տոնին մղվեց այս նակատամարտը,
Ուստի այս դաշտն էլ հավեա կանվանենք Աժիակուրի դաշտ:

ՖԼՅՈՒԼԵՆ

Ձերդ մեծություն, ես ֆրոնիկոններում կարդացել եմ, որ ձեր համբա-
վավոր նախապայար և ձեր մեծ հորեղբայր էզվարդը, Սև իշխանը Վալեսի,
փայլուն նակատամարտեր են մղել այստեղ, Ֆրանսիայում:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այո, Ֆլյուպեն:

ՖԼՅՈՒԼԵՆ

Ձերդ մեծությունը շատ նիշտ է ասում. եթե ձերդ գերազանցությունը
նիշում է, վալեսցիները հիանալի պարտեզներ ունեին, որտեղ ֆուտաք էր
անում: Այդ բույսով նրանք զարդարում էին իրենց մոնմաուքյան գրլ-
խարկները: Իսկ դա, ինչպես ձերդ գերազանցությանը հայտնի է, մինչև
այսօր համարվում է պատվանշան: Ես տարակույս չունեմ, որ ձերդ գե-
րազանցությունը չի խորշի սուրբ Դավթի օրը իրեն ֆուտաքով պննելու:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Կպննվեմ անշուշտ. երբ այդ օրը գա,
ես վալեսցի եմ և դու այդ գիտես, բարի երկրացի:

ՖԼՅՈՒԼԵՆ

Կարող եմ ձեզ ասել, որ Վալ գետի բովանդակ ջուրը անկարող է ձերդ
գերազանցության վալեսական արչունը լվանալ ձեր մարմնից: Եվ բող
աստված միշտ օրհնի և պահպանի այդ արչունը, որքան այդ ցանկալի է
նրան և ձերդ գերազանցությանը նույնպես:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Շնորհակալ եմ, իմ լավ երկրացի:

ՖԼՅՈՒԼԵՆ

Քրիստոսը վկա, ես ձերդ գերազանցության երկրացին եմ և իմ փույրը

չէ, թէ մարդիկ այդ մասին գիտեն, թէ ոչ: Բայց ես պատրաստ եմ ամբողջ աշխարհին խոստովանել, որ ես ձեր երկրացին եմ: Փառք ասածո, ես ձեր մեծութունից ամաչելու բան չունեմ, քանի դեռ ձեր գերազանցությունը ազնիվ մարդ է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Տա ասաված, որ ես միշտ այդպես մնամ:—

Մեր մունեսիկներ, ուղեկցե՛ք նրան.

Մոնժուային:

Ճշգրիտ իմացեք, թէ երկու կողմից

Ուրբան գրհեր կան:— Ինձ մոտ կանչեցեք, ա՛յ. այդ զինվորին:

Մատնացույց է ամուսն վիլյամսին:

Մունեսիկները Մոնժուայի հետ գնում են:

ԷՔՍԵՏԵՐ

Զինվո՛ր, մոտեցի՛ր, արբան կանչում է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այդ ի՞նչ ձեռնոց է գլխարկիդ, զինվոր:

ՎԻՅԱՄՍ

Ձեր մեծություն, քույլ տվեք ասել, սա սոհավատչյան է մի մարդու, որի հետ ես պետք է մեծամարտեմ, եթե ողջ լինի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Անգլիացի՞ է:

ՎԻՅԱՄՍ

Թույլ տվեք ասել, ձեր մեծություն, սինլբորի մեկն է, որի խելքին փշեց ինձ հետ թեթևակի կռվել անցյալ գիշեր: Ես երդվեցի, որ եթե նա կենդանի մնա և համարձակվի իր ձեռնոցը ես պահանջել,— ես մի լավ ապտակ ծեփեմ նրա ականջակորթին: Իսկ եթե ես տեսնեմ իմ ձեռնոցը նրա գլխարկին,— նա նույնպես զինվորի պատվով երդվեց, որ եթե ողջ պարծավ այս նահատամարտից, այդ ձեռնոցը կրելու է իր վրա,— ես վայրկենապես իմ ձեռնոցը պոկեմ նրա գլխից:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՞նչ եմ կարծում, հրամանատար Ֆլյուպեն, պե՛տք է, որ այս զինվորը հավատարիմ մնա իր երդման:

ՖԼՅՈՒԿԵՆ

Եթե չմնա, ուրեմն վախկոտի և սրիկայի մեկն է, քույլ տվեք ասել: Ուրեմն, խղճով ասած, նա պետք է իր խոսքը կատարի:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Բայց չէ՞ որ նրա հակառակորդը կարող է երևելի ազնվական լինել, որին պատշան չէ ստոր աստիճանի մարդու հետ հաշվեհարդար կատարել:

ՏԼՅՈՒԼՆՆ

Թեկուզ և լինի այնպիսի մի երևելի ազնվական, ինչպես սատանան է, ինչպես Սադայելն է և կամ ինքը՝ Բեհեզգեբուղը: Կարևորը այն է, — ձերո շնորհափայլությունը թող թույլ տա ասել, — որ նա հավատարիմ մնա իր երդմանը և ուխտին: Եթե նա իր խոսքը դժի, գիտե՛ք ինչ, նա կվաստակի համբավը վատթարագույն սրիկայի և անբեեսի, որ երբևիցե տրորել է ասածո հողը իր կեղտոտ կոշիկներով: Ես այդ բանը ձեզ խղնի մտո՛ք եմ ատում, այո՛:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Դե, ուրեմն այդ մարդուն հանդիպելիս քո խոսքի տերը եղի՛ր, զինվո՛ւր:

ՎԻՅԱՄՍ

Թող մեռնեմ, եթե չլինեմ, տեր իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Ո՞վ է քո հրամանատարը:

ՎԻՅԱՄՍ

Գնդապետ Գովերը:

ՏԼՅՈՒԼՆՆ

Գովերը հիանալի հրամանատար է, ռազմական գործերին շափազանց զիտակ և շաա կարդացած:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Նրան ինձ մոտ կանչիր, զինվո՛ւր:

ՎԻՅԱՄՍ

Լսում եմ, արքա:

ԳՆՈՒՄ Է:

ԹԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Լսի՛ր, Ֆլյուլեն, վերցրու այս առհավատչյան և իմ փոխարեն ամբարձու գլխարկիդ: Երբ ես և դուք Ալանսոնը զոտեմարտելիս փովեցինք գեանին, ես այդ ձեռնոցը նրա սաղավարտից պոկեցի: Եթե որեէ մեկը հանդգնի ես պահանջել այն, կնշանակե նա Ալանսոնի ընկերն է և մեր թշնամին: Այդպիսի մարդու հանդիպելիս բռնի՛ր նրան, եթե սիրում ես ինձ:

ՏԼՅՈՒԼԵՆ

Ձերդ շնորհափայլությունը այնպիսի մեծ պատվի է արժանացնում ինձ, որ կարող է տենչալ որևէ հալատակի սիրա: Ո՞վ է այն կտրինը, որ Լեկոստոֆ ունի և կհամարձակվի հավակնություն ցուցաբերել այս ձեռնոցի հանդեպ: Օ՛հ, ի՞նչպես կուզե՞նայի հանդիպել նրան: Գոնե մի անգամ տեսնեի այդ մարդուն: Տա աստված, որ ինձ հաջողվի նրան տեսնել:

ՔԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Գու Գովերի՛ն հանաչո՞ւմ ես:

ՏԼՅՈՒԼԵՆ

Նա իմ սիրելի ընկերն է, թույլ տվե՛ք ասել:

ՔԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Խնդրում եմ, գնա որոնի՛ր և նրան իմ վրանը բեր:

ՏԼՅՈՒԼԵՆ

Կերթամ կբերեմ:

Գնում է:

ՔԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Եղբայր Գլուստեր և դո՛ւ, լորդ Վորվիկ,
Հետևեցե՛ք նրան կրնկակոյս:
Ֆլյուլենին տված այդ ձեռնոցը
Կարող է նրան ապտակ պատճառել:
Իսկ այդ ձեռնոցը այն զինվորինն է, որ նոր յուրս գնաց:
Ըստ մեր պայմանի, պարտավոր էի ինձ կրել այն:
Շտապի՛ր, Վորվիկ: Եթե զինվորը նրան հարվածի, —
Իր կոշտ բնույթից դատում եմ, որ նա իր խոսքի տեսն է, —
Մի անակնկալ շարի՛ք կարող է դրանից ծագել,
Քանզի ես գիտեմ, Ֆլյուլենը փաջ է,
Գլուրագրգիռ է, վառողի պես տափ,
Արագ ետ վանող նախատին՛ք, ապտակ:
Գնացե՛ք, տեսե՛ք, որ նրանց միջև բան չպատահի:
Գնա՛նք, հորեղբա՛յր, ծերուկ է՛քստեր:

Գնում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ո Ւ Թ Ե Ր Ո Ր Դ

Հենրի թագավորի տաղավարի առաջ:

Մտնում են Գովերը և Վիլյամը:

ՎԻՅԱՄՍ

Երաշխավորում եմ, հրամանատար, որ ձեզ ուզում եմ ասպետ օծել:

Մտնում է Ֆլյուկենը:

ՖԼՅՈՒԼԵՆ

Երևում է աստծուն այդպես է ցանկալի, հրամանատար: Այժմ խնդրում եմ՝ շտապ եկե՛ք թագավորի մոտ: Հնարավոր է, որ ձեզ սպասում է այնպիսի բարիք, որ դուք չե՛ք համարձակվի երագել նույնիսկ:

ՎԻՅԱՄՍ

Պարոն, դուք այս ձեռնոցը նանաշո՞ւմ ե՛ք:

ՖԼՅՈՒԼԵՆ

Ձեռնոցը նանաշե՞լ: Ամեն մարդ գիտե, որ ձեռնոցը ձեռնոց է:

ՎԻՅԱՄՍ

Իսկ ես գիտեմ, թե սա ում ձեռնոցն է և ետ եմ պահանջում այն: (Հարվածում է նրան):

ՖԼՅՈՒԼԵՆ

Դրողը տանի: Մեա պես ստոր դավանան ամբողջ աշխարհում չես գտնի, ոչ էլ համայն Ֆրանսիայում և կամ Անգլիայում:

ԳՈՎԵՐ

Ինչպե՞ս ե՛ք հանդգնում, պարոն: Ա՛յս դու, սրիկա՛:

ՎԻՅԱՄՍ

Ի՞նչ է, կարծում ե՛ք, թե ես իմ երդումը կզրժե՞մ:

ՖԼՅՈՒԼԵՆ

Դուք մի կողմ փաշվե՛ք, հրամանատար Գովեր: Երդվում եմ, ես նրա դավանանությունը հարվածներով կհասաատեմ:

ՎԻՅԱՄՍ

Ես դավանան չեմ:

ՏԼՅՈՒԼԵՆ

Սուտը քո կոկորդում շորանա: Թագավորի անունից պահանջում եմ, որ դուք սրան ձերբակալեք: Սա դուքս Ալանսոնի կողմնակիցն է:

Մանուկ են վարվիլը և Գլոստերը:

ՎՈՐՎԻԿ

Այս ի՞նչ բան է: Ի՞նչ է պատահել:

ՏԼՅՈՒԼԵՆ

Կորդ վարվիլ, այստեղ, — շնորհակալություն ասածուն, — ամենահրեշավոր մի դավադրություն է բացահայտված, որը, գիտե՛ք ինչ, ամառային օրվա լույսի պես պարզ է: Ահա՛ և նորին գերագանցությունը:

Մանուկ են Հենրի թագավորը և էսեօտերը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այս ի՞նչ բան է: Ի՞նչ է պատահել:

ՏԼՅՈՒԼԵՆ

Տեր իմ, անախարհի մի ռինկոն և դավանան, որը, բարեհաճեցե՛ք տեսնել, իմ գլխարկից մի հարվածով վայր գցեց այն ձեռնոցը, որ ձերդ գերագանցությունը պոկել էր դուքս Ալանսոնի սաղավարտից:

ՎԻՅԱՄՍ

Տեր իմ, դա իմ ձեռնոցն էր. ահա՛ և դրա մյուս ընկերը: Այն մարդը, որի հետ ես ձեռնոցի փոխանակություն կատարեցի, խոստացավ այդ ձեռնոցը իր գլխարկին կրել: Ես երդվեցի մի ապուսակ հասցնել նրան, եթե նա համարձակվի այդ բանը անել: Հենց նոր հանդիպեցի այդ մարդուն, իմ ձեռնոցը տեսա նրա գլխարկին և իմ խոստումը կատարեցի:

ՏԼՅՈՒԼԵՆ

Այժմ ձերդ գերագանցությունը ինձն է լսում. թե սա ինչպիսի, — ձերդ շնորհափայլությանը բող թույլ տա ասել, — մի վատթար, անզգամ, մուրացիկ և ոչլուս սրիկա է: Հույս ունեմ, որ ձերդ մեծությունը կհաստատի, կվկայի և կխոստովանի, որ սա դուքս Ալանսոնի ձեռնոցն է, որ ձերդ մեծությունը տվեց ինձ: Խղճով ասացե՛ք, չէ՞ որ այդ այդպես է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Տո՛ւր ձեռնոցդ, գինվոր: Մյուս ձեռնոցն այս է:

Այն մարդը ես եմ, որին խոստացաք դու ապուսակ զարկել,

Եվ դու բավական նախատեցիր ինձ կոպիտ խոսվերով:

ՅԼՅՈՒԼԵՆ

Ձերդ մեծություն, այդ վիրավորանքի համար նրա վիզը պետք է անհապաղ պատասխան տա, եթե պատերազմական որևէ օրենք կա աշխարհում:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ինչո՞վ կարող ես դու ինձ գոհացնել:

ՎԻՅԱՄՍ

Ձերդ մեծություն, բոլոր վիրավորանքներդ սրտից են բխում. իսկ իմ սրտից երբեք չի բխել մի այնպիսի բան, որ կարողանար ձերդ գերազանցությանը վիրավորել:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Բայց քո նախատիմքը ինձ էր ուղղված:

ՎԻՅԱՄՍ

Ձերդ գերազանցությունը այդ պահին իր նշմարիտ երևույթի մեջ չի եղել: Ես կարծել եմ, թե դուք հասարակ զինվոր եք: Մուտ գիշերը, ձեր հագուստը և հասարակ խոնարհ վերաբերմունքը խաբել են ինձ: Ուստի այն ամենը, որ ձերդ մեծությունը կրել է ինձնից այդ տեսքի մեջ, խնդրում եմ իբրև մեղավորություն վերագրեմ ձեր հաշվին և ոչ թե իմ: Ձե՞ր որ եթե դուք, իսկապես, լինեիք մի հասարակ զինվոր, ինչպես որ ընդունել եմ ձեզ, ինձ վրա ոչ մի մեղավորություն չէր ընկնի: Հեռեաքա՛ր, ազա՛չում եմ ձերդ գերազանցությանը ներել ինձ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Վերցրո՛ւ, հուրեղրայր, այս ձեռնոցի մեջ լիքը փող լցրու
Եվ տուր այս մարդուն: Ա՛ն, կրի՛ր, զինվոր,
Դու այդ պատիվը քո գլխանոցին,
Մինչև հանդգնեմ ետ պահանջելու: Տո՛ւր փողը նրան:
Իսկ դուք, հրամանատար, հաշտվե՛ք նրա հետ:

ՅԼՅՈՒԼԵՆ

Այս օրը և այս լույսը վկա, այս զինվորը շատ խիզախ է երևում: Վերցրո՛ւ այս տասներկու մանրադրամը. իմ խնդրանքն է, որ արդարությամբ ծառայես աստծուն և քեզ հեռու պահես ամեն տեսակ վեճերից, գժտություններից, կռիվներից և հակառակություններից և, վստահեցնում եմ քեզ, որ դրանից դու մեծապես կօգտվես:

ՎԻՅԱՄՍ

Ինձ հարկավոր չէ ձեր փողը:

ՖԼՅՈՒՆՆ

Քարի կամեցողությամբ եմ տալիս: Հավատացի՛ր ինձ, այդ փողոց
հարկավոր կլինի քո կոշիկները կարկատելու. վերցրո՛ւ, մի՛ ամաչիր.
Կոշիկներդ բոլորովին բանի պեսա՛հ շեն: Կեղծ դրամ չէ, երաշխավորում
եմ: Նքե ուզում ես՝ կարող եմ փոխարինել նորով:

Մանում է անգլիացի մունետիկը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Հաշվեցի՞՜ք մեռածներին:

ՄՈՒՆԵՏԻԿ

Ահա՛ ցուցակը գոհված ֆրանսիացուց:

Հանձնում է մի քուղր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ասա՛, հորեղբայր,

Քանի՞՜ մեծանուն գերի է վերցված հակառակորդից:

ԷՔՍԵՏԵՐ

Շաուր—դուրս Օուլեան, — որը արքայի Լիբորորդին է.

Գուրս Բուրբոն Ժանը և յորդ Բուսիկոն,

Հազար հինգ հարյուր յորդեր, պարոններ, ասպետ. զինակիր,

Բազում հասարակ զորքին շհաշված:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ըստ այս ցուցակի դաշտում պառկած են

Տաս հազար սպանված ֆրանսիացիներ:

Այդ թվից իշխան և երևելի ազնվականներ, —

Ռոնեֆ սեփական զորչներ ունեն, — այնտեղ պառկած է

Հարյուր քսանվեց մարդ: Գրան գումարած

Ասպետ, զինակիր և ազնվական

Ուղիղ ութ հազար չորս հարյուր հոգի.

Գրանցից երեկ (ինչպես նշված է այս ցուցակի մեջ)

Հինգ հարյուր հոգի արժանացել են ասպետի կոչման:

Այսպես, ուրեմն, նրանց կորցրած այդ տասնհազարից

Հասարակ զորքը կազմում է միայն հազար վեց հարյուր,

Մնացյալները մեծ իշխաններ են.

Լորդեր, ասպետներ և զինակիրներ

Եվ երևելի ազնվականներ:

Հայտնի մեծերից կովում ընկել են

Շառլ Դելաբրե — մեծ գորապետը համայն Ֆրանսիո,
 Եվ ժակ Շատիլյոն՝ ծովակալն երկրի,
 Արևոյր Ռամբյուրը — հրամանատարը նետաձիգների,
 Արբ Գիշար դոֆին — Ֆրանսիո խիզախ գահաժառանգը,
 Դուֆս Ալանսոնը. և Բրաբանտը,
 Ուր Էդրայրն էր Բուրգոնդյան դքսի:
 Դուֆս էդվարդ Բևոր: Հուժկու կոմսերից
 Զոհվել են Ռոսսին, Ֆուան, Դրանարեն և Ֆոկոնրերը,
 Բոմոն և Մաուրը, նաև երկու կոմս՝ Վոդեմոն, Լեսաուրալ:
 Մահվան նոխ հունձը արժայական է:
 Իսկ ցուցակն ո՞ր է մեր անգլիական նահատակների:

(Մանևտիկը ներկայացնում է մի ուրիշ բարդ):

Յորֆի դուֆս էդվարդ, նաև կոմս Սեֆուկ,
 Արբ Ռիշարդ Կետլի, ասպետ Գեվի Գեմ,
 Էլ ուրիշ հայտնի անուններ չկան:
 Մնացյալ ամբողջ գործից գոհվել է
 Լոկ Բասնինգ մարդ: Օ՛, երկնավոր աներ,
 Այդ քո բազուկն էր ներկա մեր կողմին,
 Եվ այս ամենը մենք վերագրում ենք
 Ոչ թե մեզ, ո՛վ աներ, այլ ամբողջապես միայն քո բազկին:
 Այդ ե՞րբ է Էդել, որ մի բաց դաշտի գոտեմարտի մեջ
 Մի պարզ, անսփոփ հակատամարտում,
 Առանց ռազմական խորամանկության
 Տարբերությունը լինե՞ր անուշիկ,
 Մի կողմը այդքան մեծ կորուստ կրե՞ր,
 Իսկ մյուս կողմը՝ այդքան աննշան:
 Ընդունի՛ր, աստված, այդ հաղթությունը,
 Նրա տերը դու ես:

ԷՔՍԵՏԵՐ

Հրա՛շք է ուղղակի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ռազմական երթով շարժվենք դեպի գյուղ.
 Ազդարարեցե՛մ բոլոր զորհերին. մա՛հ այն զինվորին,
 Որ կսպարձենա այս հաղթանակով,
 Այս հաղթանակը միայն աստծուն է:

ՅԼՅՈՒԼԵՆ

Ձերդ մեծություն, իսկ թույլատրվո՞ւմ է զորհին հայտարարել, թե նա-
 կատամարտում Բանի մարդ է սպանված:

ՔԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Այո՛, հրամանատար, բայց անմիջապես խոստովանելով,
Որ այդ կովի մեջ մեզ աստվածն օգնեց:

ՅԱՅՈՒԿՆ

Այս, խղճով ասած. նա մեզ շատ օգնեց:

ՔԱԳԱՎՈՐ ՀՆՆՐԻ

Կատարենք բոլոր սուրբ ավանդները.
Երգենք «Non nobis», օրհներգենք «Deum»-ը¹,
Նահատակներին աղոթելով, գուրով դնենք գերեզման
Եվ շարժվենք Կալե: Ապա այնտեղից մեկնենք Անգլիա,
Որ Ֆրանսիայից մեզնից բախաավոր
Զորք չի ժամանել դեռ մինչև այսօր:

Գնում են:

¹ «Ոչ թե մեզ...», «Այլ Քեզ, ո՛վ երկնավոր տեր» — եկեղեցական գրք.
(լատ.):

ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Կ

Մտնում է թեմի խոսնակը:

ԲԵՄԻ ԽՈՍՆԱԿ

Ովքեր պատմությունը դեռ կարդացած չե՛ն,
Թող արտոնեն ինձ օգնելու իրենց: Կարդացողներին
Խնդրում եմ ներել ինձ խոնարհաբար,
Որ ժամանակն ու քվականները
Իրենց դեպքերի հախուռն ընթացքով
Չեն տրված այսատեղ իրական կյանքի ամբույշ նշտությամբ:
Այժմ արքային մենք հտանենք կալե:
Տեսե՛ք, թագավորն արդեն այնտեղ է:
Ասյա ձեր մտքի քներին առած՝ նրան այնտեղից
Ծովի մի ավից մյուսը թոցրե՛ք:
Ողջ անգլիական ծովափը, տեսե՛ք,
Շրջապատված է մարդկանց հորձանքով, — այրեր, կին, մանուկ. —
Որոնց ծափերն ու աղաղակները
Թիւղն են իլացնում խորահունչ ծովի,
Մի անհեղաձայն ազդարարի պես
Ճամփա հարթելով արքայի համար: Արքան ալի իջավ
Եվ դեպի Լոնդոն շահժվեց մեծաշուք,
Մտքերը այնքան արագընթաց են, որ նույնիսկ հիմա
Երևակայությամբ կարող եմ տեսնել,
Որ արքան արդեն Բլեյհիքում է,
Որտեղ լորդերը համառ տենչում են
Նրա մարտական սուրը կորացած
Եվ սաղավարտը կռվում տրոբված,

Նրա առջևից հպարտ կրելու փաղափ միջով,
 Քայց խորթ լինելով սնափառության և գոռագության՝
 Նա արգելում է այդ բանը անել,
 Ողջ հաղթանակը, հրաշքն ու փառքը
 Վերագրելով միայն ասածուն: Իսկ այժմ. տեսե՛ք,
 Ի՛նչ եռուզեռ է մտքի դարբնոցի և գարծառան մեջ,
 Ինչպե՛ս Լոնդոնը դուրս է ժայթքում իր բնակիչներին:
 Քաղաքապետը թաղականների իր ամբողջ կազմով,
 Հին հոռմեական ծերակուտական ավագների պես,
 Պլեբեյների պարսր ետևից խիստ, կրնկակոխ
 Մեկնում է իրենց հաղթող Կեսարին
 Առաջնորդելու փաղափ միջով:
 Այդպես կլինեք, քիչ անշուք թեպետ,
 Երե կայսրուհու մեծ զորապետը խիստ պատեհ ժամին
 Իր արշավանքից վերադառնալ տուն՝
 Իսկանդացիների խոռվությունը իր սրին շամփրած,
 Ի՛նչ բազմություններ անդորր փաղափ խոռոներամ լիված՝
 Պիտի փութային ողջունել նրան:
 Պատճառը լրիվ հասկանալի է.
 Մարդիկ ավելի հոծ բազմությունով
 Դիմավորեցին Հենրի արքային: Նա Լոնդոնումն է.
 Ֆրանսիացիները, արդ, աղաշում են.
 Որ թագավորը Անգլիայում մնա,
 Եվ նույնիսկ կայսրը հօգուտ Ֆրանսիո
 Միջամտիս եղավ. որ խաղաղություն
 Հաստատի երկու կողմերի միջև: Սակայն զանց առնենք
 Բոլոր դեպքերը, որ կատարվեցին
 Մինչև վերստին թագավոր Հենրիև Ֆրանսիա մեկնեց:
 Այնտեղ մենք պետք է տեղափոխենք նրան:
 Ինչ անցավ-դարձավ այս օրերի մեջ,
 Ընդմիջումներին ևս ձեզ պատմեցի:
 Արդ, ներողամիտ եղե՛ք, խնդրում եմ, կրնաման համար
 Եվ ձեր աչքերը ձեր սրաթոփչ մաքի ետևից
 Դեպի Ֆրանսիա ուղղեցե՛ք նորից:

Գնում է:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ֆրանսիա: Անգլիական ռազմաճամբարը:

Մտնում են Ֆլյուկենը և Գովերը:

ԳՈՎԵՐ

Ո՛չ, այդ այդպես է: Բայց ինչո՞ւ եմ դուրս գլխարկին ֆուտաթ կրում աչսօր: Չէ՞ որ սուրբ Դավթի օրը անցել է:

ՖԼՅՈՒԿԵՆ

Բայր երևույթները, ինչու և ինչպես, իրենց հիմներն ու պատճառներն ունեն: Չեզ իբրև ընկերոջ կարող եմ ասել, հրամանատար Գովեր, որ այդ անզգամ, զարշելի, ֆրչոա, այդ ոջլոտ պարծենկոտ և անամոթ Պիստուլը, — չէ որ դուրս ե՛լ ինքներդ, ե՛լ ամբողջ աշխարհը գիտի, որ նա, — գիտե՞՞ք ինչ, ամեն արժանիքից զուրկ մարդ է, — անա՛ այդ Պիստուլ կոչեցյալը երեկ գալիս է ինձ մոտ, ազուհաց է բերում ինձ համար և պահանջում է, — գիտե՞՞ք ինչ, — որ ես իմ ֆուտաթը ուտեմ: Եվ դա եղավ այնպիսի մի վայրում, որտեղ ես չէի կարող վեճ-կոխիվ սարքել նրա հետ: Բայց ես այդ բույսը պիտի կրեմ իմ գլխարկին այնքան ժամանակ, մինչև որ նորից հանդիպեմ նրան: Հանդիպեցի թե չէ, ես իմ անելիքը գիտեմ:

ԳՈՎԵՐ

Ահա նա գալիս է հնդկահավի պես ուռած-իփված:

ՖԼՅՈՒԿԵՆ

Իմ փուլքը չէ բնավ ոչ նրա ուռած-իփված, ոչ էլ հնդկահավ լինելը:

Մտնում է Պիստուլը:

Աստվա՛ծ օրհնե՛ ձեզ, դրոշակակիր Պիստուլ: Ա՛խ, դուրս, կեղտո՛ւտ, ոչլո՛ւտ սրիկա: Աստվա՛ծ օրհնե՛ ձեզ:

ՊԻՍՏՈՒ

Դու խե՞ղք ես, ինչ է: Մի՞թե տենչում ես անարգ Տրոյան,

Որ ես ստիպված՝ բախտի դիցունու ոստայնը ծալեմ:

Չփվի՛ր, ուրեմն, սիրտս խառնում է ֆուտաթի հոտից:

ՖԼՅՈՒԿԵՆ

Ի սրտե խնդրում եմ ձեզ, զարշելի ոջլոտ սրիկա, որ կատարեմ իմ փափազը, ե՛լ իմ խնդրանքը, ե՛լ իմ ազերսը և ուտեմ, գիտե՞՞ք ինչ, այս.

ֆուտաթը, որովհետև.— ինչպե՞ս ասեմ, որ հասկանամ,— դուք այդ բույսը չեք սիրում և ձեր նաշակին, ախորժակին և մարտոդությանը հանդուրժելի չէ։ Հենց դրա համար էլ ես առաջարկում եմ, որ դուք ուտե՛ք այն։

ՊԻՍՏՈՒ

27 Քաղվալադերը իր բյուր այծերով
Անգոր էր ստիպել, որ այդ բույսն ուտեմ։

ՖԻՅՈՒԼԵՆ

Անա՛ քեզ մի այծ (*ծեծում է նրան*)։ Հիմա կբարեհանե՞ս ուտել, գարշելի՛ իսաբեքա։

ՊԻՍՏՈՒ

Ստոր Տրոյան, դու պետք է մեռնես։

ՖԻՅՈՒԼԵՆ

Դուք շատ նիշտ ասացիք, գարշելի՛ արիկա.— բայց միայն այն դեպքում, երբ արարիչը կամենա։ Իսկ մինչ այդ ես ուզում եմ, որ դուք ապրե՛ք և ուտե՛ք այս կերակուրը։ Անա՛ և քեզ դրա համեմունքը (*նորից է ծեծում նրան*)։ Դուք երեկ ինձ լեռան զինակիր անվանեցիք, իսկ այսօր ես ձեզ կշինեմ ասպետ տափարակի։ Կերե՛ք, խնդրում եմ։ Եթե դուք կարող եք ֆուտաթը ծաղրել, կարող եք նաև ուտել այն։

ԳՈՎԵՐ

Բավական է, հրամանատար, դուք նրան բայրոսվին անգգայացրիք։

ՖԻՅՈՒԼԵՆ

Ասում եմ ձեզ, ես կստիպեմ, որ նա մի ֆիշ ուտի իմ ֆուտաթից, կամ ես չորս օր շարունակ պիտի հարվածեմ նրա գագաթին։ Կերե՛ք, խնդրում եմ, սա շատ օգտակար է ձեր թարմ վերքի և ձեր արյունլվիկ ափսոսանքի համար։

ՊԻՍՏՈՒ

Ուրեմն պիտի ուտե՞մ։

ՖԻՅՈՒԼԵՆ

Այո՛, ստուգապես, և դա կասկածից դուրս է. անառակելի նույնպես և անտարակույս։

ՊԻՍՏՈՒ

Այս ֆուտաթը վկա. ես դաժանորեն վրեժխնդիր կլինեմ։
Կուտեմ, կուտեմ, բայց երդվում եմ...

ՅԼՅՈՒԿՆՆ

Կերե՛ք, խնդրում եմ: Ուզո՞ւմ եմ մի փոքր էլ համեմունք ավելացնեմ:
Այս ֆուտաթը շատ քիչ է վրան երդվելու համար:

ՊԻՍՏՈՒ

Մահակդ հեռո՞ւ տար: Տեսնո՞ւմ ես, որ ուտում եմ:

ՅԼՅՈՒԿՆՆ

Ի սրտե եմ ասում՝ անուշ լինի, գարշելի խաբերա: Չեղա՛վ, խնդրում
եմ ոչ մի բան դեն չնետեմ: Կեղևը օգտակար է ձեր շարյված կատարի
համար: Եթե պատահի, որ նորից ֆուտաթ աեսնեմ, շմոռանա՛մ մեկ էլ
ծաղրի ենթարկել: Իմ խնդրանքը այդ է: Ուրիշ ասելիք չունեմ:

ՊԻՍՏՈՒ

Լա՛վ:

ՅԼՅՈՒԿՆՆ

Այո, ֆուտաթը լավ բան է: Վերցրե՛ք այս մանր դրամը ձեր խելապա-
տակը բուժելու համար:

ՊԻՍՏՈՒ

Ինձ՝ մանրադրա՞մ:

ՅԼՅՈՒԿՆՆ

Այո՛, մի գրոթ, որ դուք ստուգապես և հավաստիորեն պարտավոր ե՛մ
վերցնել, այլապես իմ գրպանում մի ուրիշ ֆուտաթ էլ կա և դուք ստիպ-
ված կլինե՛ք այն էլ ուտել:

ՊԻՍՏՈՒ

Ես կվերցնեմ քո մանրադրամը իբրև գրավական վրիժառույթյան:

ՅԼՅՈՒԿՆՆ

Եթե ես ձեզ որևէ բան պարտք մնացի, սիրով կհատուցեմ մահակի
հարվածներով: Դուք կդառնա՛ք փայտավաճառ և ձեր գնածը ինձանից
միայն մահակներ կլինեն: Ասավա՛ժ ձեզ հետ. թող պահպանի ձեզ և ձեր
խելապատակը բուժի:

Գնում է:

ՊԻՍՏՈՒ

Ես համայն դժոխքը կցնցեմ սրա համար:

ԳՈՎԵՐ

Գնա՛, գնա՛: Քեզ կեղծ ֆաշ ես ձևացնում, բայց իրապես վախկոտ ան-
պիտանի մեկն ես: Ի՞նչը խելիքիդ փշեց ծաղրի ենթարկել հնամենի պատ-

վավոր ավանդությունը, ծաղրել փութաթր, որ մարդիկ կրում են իբրև
հաղթանշան իրենց սխրանքների և շնամարձակվեցիր գործով փաստել
ոչ մեկը քո տված խոստումներից: Ես քեզ տեսել եմ այս արժանատի
մարդու վրա հոհոալիս և շարանալիս երկու թե երեք անգամ: Դու կար-
ծում էիր, որ եթե նա տկար է անզլերեն լեզվից,— ես ի նկատի ունեմ
այդ լեզվի բնիկ տարազը,— ուրեմն տկար է նաև անզլիական գավա-
զա՞նը գործածելու մեջ: Այժմ համոզվեցի՞ր, որ սխալվել ես: Իմ փա-
փազն է, որ վալեսական այս կարգի ուղղումը քեզ վարժեցներ անզլիա-
կան հիանալի վարքին: Մնա՛ս բարով:

Գնում է:

ՊԻՍՏՈՒ

Մի՞թե իմ բախտի յիցունին այժմ մի պոռնիկ կին է:
Վերջերս իմացա, որ ֆրանսիական հիվանդությունից
նեղիս մեռել է անկեղանոցում:
Իսպառ զրկվեցի ես այժմ միակ իմ ապավենից:
Մեռանում եմ արդեն: Եվ պատիվն հոգնած իմ անդամներից
Քավազաններով վտարվում է դուրս: Լա՛վ, որոշված է,
ես կդառնամ կավատ և գրպանահատ,
Մի կերպ կփախչեմ դեպի Անզլիա
Եվ այնտեղ կսկսեմ գողություն անել:
Սպեղանի կղնեմ իմ այս վերքերին
Եվ ամենուրեք կտամ սուրբ երգում,
Որ այդ վերքերը ես ստացել եմ
Եղի՞ր արյունոտ սլառերագմեհրում:

Գնում է:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Ֆրանսիա: Ֆրանսիական թագավորի պալատը:

Մի դռնից մտնում են Հենրի թագավորը, Էսկաերը, Քեդֆորդը,
Գլաստերը, Վորվիկը, Վեստմոնթերը և ուրիշ իշխաններ, իսկ
մյուս դռնից՝ Ֆրանսիո թագավորը, թագուհի Իզաբելը,
իշխանների կատարիներ, Ալիսը և ուրիշ պալատական տիկիներ
և դուրս Թուգունդին իր շխալմբով:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ողջո՛ւյն բարիքն, որ հավաքվել էք հաշտության համար:
Ո՛ղջ լեռ, եղբայր մեր, արժա Ֆրանսիո և ֆույր թագունի,

Ողջո՛ւյն գեղաստանչ Կատարիներն՝
Զֆնաղ զարմիկին մեր իշխանունի:
Ջերմ հարգանք և ձեզ, Բուրգունդի մեծ դուքս,
Թագավորական այս գերդաստանի համանդամ և նյույ,
Որ հեղինակն է և այս Լեւելի համաժողովի,
Ֆրանսիո բոլոր մեծ իշխաններիդ
Եվ սեպուհներիդ, ամենֆիղ ողջույն:

ԹԱԳԱՎՈՐ ՅՐԱՆՍԻՈ

Սրտանց հրեվում ենք ձեզ մեր պալատում ողջույն մաղթելով,
Եմ գերապատիվ եղբայր թագավոր,
Ձեզ նույնպես ողջո՛ւյն, Անգլիո մեծեր:

ԻԶԱՔԵԼ

Թող արգասիքը այս բարի օրվան, եղբայր թագավոր,
Եվ շնորհաշուք այս հանդիպումի
Նույնքան երջանիկ և ուրախ լինի,
Որքան ուրախ ենք մենք ձեր աչքերը այժմ տեսնելով,
Ձեր այդ աչքերը, որ մինչև այսօր
Երբ հանդիպել են ֆրանսիացիների հակամարտության.
19 Նրանց շանթել են մահաափյուռ, ահեղ
Հրանոթների ոմբագնդերով:
Այդ նայվածքների թույնը, հուսով ենք, սպառվեց արդեն
Եվ օրն այս բարի էկել է օարփոտ սիրո փոխելու
Մեր ոխն ու ֆենը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Եվ մենք էկել ենք «ամեն» ասելու ի սեր այդ օրվա:

ԻԶԱՔԵԼ

Անգլիո մեծեր, ողջունում եմ ձեզ:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻ

Մեծ թագավորներ դուք Ֆրանսիայի և Անգլիայի.
Պարտականությամբ ևս ձեզ սիրում եմ հավասարապես:
Ես աշխատեցի բանակահույսն իմ ամբողջ ուժով
Եվ տագնապներով: Գործի դրեցի ամեն նիգ ու ջանք.
Որ ամենագոր միապետներիդ
Բերեմ արֆունի այս տեսակցության և այս ատյանին,
Որին դուք այժմ անձամբ վկա եք:

Այժմ, երբ իմ գործն այդքան հաշող է
 Եվ դուրս դեմ դիմաց և արհայական աչք-աչքի տված.
 Ողջագործվել եմ փոխադարձաբար. բող արտոնվի ինձ.
 Այս ազնվական ժողովի առաջ մի պահանջ անել.
 Ի՞նչ դժվարություն կամ խոչընդոտ կա.
 Որ մերկ, բզկտված խաղաղությունը, —
 Անգին ստնտուն լիառատության,
 Պտղաբերության և արվեստների, —
 Իր գեղահանն երեսը ցույց տա
 Աշխարհի շինապ այս բուրաստանի՝
 Մեր հուտրի, բեղուն Ֆրանսիայի մեջ:
 Ավա՛ղ, վաղուց է նա Ֆրանսիայից հայածվել ի բաց
 Եվ հողն անմշտի՝ ավերակների կույտի վերածված
 Փառում է, եղծվում առատությունից:
 Միտ ուրախացնող մեռ որբնասունկը
 Անխնամ ձգված՝ չորանում է լուռ.
 Ցանկապատերը միաձև հյուսված
 Խոփվ մագերով վայրաբար անած, գերիների պես
 Անկարգ հյուղերը սարածում են դուրս,
 Մեր կորդ դաշտերում հիմնավորվում են
 Մոլեխիկնդ, ռում և շահրասակը կծու, զորավոր,
 Մինչդեռ գութանը.
 Որ արմատահան կարող էր անել այս բրտությունը,
 Պարապությունից ժանգոտում է փակ:
 Մարգագեռիները, ուր մի ժամանակ կանաչ առվույտը
 Կովացնծուկն ու լվածաղիկը մեղր էին ծորում,
 Գերանդու կարուս ծույլ, անկարգորեն լվված են անհուշ,
 Որոնց վրա լոկ անում, իշխում են
 Եղինջ. գոնջախոտ է կոշտ ուղտափուշ. —
 Գեղեցկությունից գուրկ և անօգտակար:
 Ինչպես խաղողի մեռ այգիները, կորդ դաշտերը մեռ.
 ՄԼԵ արտաներն ու ցանկապատերը
 Իրենց սեփական բնույթին քնդդեմ ամայանում են,
 Այդպես էլ և՛ մենք, և՛ մեր աները, երեխաները
 Ժամանակի խիստ պակասությունից ամայացել ենք,
 Կորցնելով սերը հանդեպ գիտության.
 Որ այնքա՛ն պետք է մեռ Լեկրի համար:
 Ապրում ենք, ինչպես վայրենիները,
 Հայացքներով բիրտ, հագուստով նապաղ գինվորների պես,

Որ միայն արյան մասին են խորհում
Եվ ամեն բանի, որ խուժադուժ է և անբնական:
Գու՛մ հավաքվել ե՛մ, որ հայրենիք
Վերադարձնե՛մ իր նախկին վայելուչ բարեձևության:
Արդ, աղաչում եմ, որ հաղորդե՛մ ինձ,
Թե ինչո՞ւ գողտրիկ խաղաղությունը
Զի կարող վանել այս ավերմունքն ու նեղությունները
Եվ մեզ օրհնել իր նախկին Երջանիկ բարեմասնությամբ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ո՛վ Բուրգունդի դու՛մ, Լթե բաղձում ե՛մ դու՛մ խաղաղության,
Որի կարիքը ծնում է այդքան դժբախտություններ, —
Որոնց մասին դու՛մ հիշատակեցի՛ք, —
Արդ, պարտ ե՛մ զնել այդ երանելի խաղաղությունը
Մեր պահանջներին լրիվ ներդաշնակ,
Որի իմաստն ու բոլոր կետերը շարապրված են
Եվ անմիջապես ձեր ձեռքը հանձնած:

ԲՈՒՐԳՈՆԻՆԳԻ

Արքան ունկնդրեց այդ պահանջները, բայց պատասխանը
Ուշանում է դեռ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Գու՛մ, այդ բաղձալի խաղաղությունը,
Որի մասին դու՛մ այստեղ պնդեցի՛ք.
Կախված է միայն այդ պատասխանից:

ԹԱԳԱՎՈՐ ՏՐԱՆՍԻՈ

Ես միայն հապնեպ ակհարկ նետեցի
Այդ պայմաններին: Հանեցե՛ք ընտրել
Մի ֆանիսին ձեր մերձավորներից,
Որ ավելի լուրջ մի ուշադրությամբ
Մեզ հետ ֆննարկեն այդ պահանջները: Խոստանում եմ շտապ
Վճռական, ուղիղ պատասխան տալ ձեզ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Պատրաստ եմ, եղբայր: Հորեղբայր է՛մ ետ,
Եղբայր Կլարենս, եղբայր Գլոստեր,
Գու՛մ էլ, կոմս Վարվիկ, Հենտինգտոն, դու՛մ էլ, —
Գնացե՛մ Տրանսիո քաղաքի հետ:
Լիազորում եմ ձեզ ազատորեն վավերացնելու,

Ավելացնելու կամ փոփոխելու, —

Ինչպես ձեր միտքն ու իմաստությունը

կավազույն ձեռով հարմար կտեսնի մեր աստիճանին, —

Մի բան մուծելու կամ հապավելու մեր պահանջի մեջ. —

Եվ մենք կտանք մեր հավանությունը: Իսկ դուք, սիրուն բույր,
Ռեզում եք գնա՞լ, թե՞ մնալ մեզ հետ:

ԻԶԱՔՆԷԼ

Ո՛չ, ես կգնամ իշխանների հետ, մեր անգին եզրայր:

Կանացի ձայնը գուցե պատահմամբ օգտակար լինի

Վիեննի հարցի փննության պահին:

ՔԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Կատարինեին թույլ տվե՛ք մնալ:

Նա մեր պահանջի գլխավոր կետն է և ցուցակի մեջ

Պարունակում է մեր նախաշարքի առաջին տեղը:

ԻԶԱՔՆԷԼ

Մենք արտոնում ենք, կարող է մնալ:

Բոլորը գնում են. մնում են միայն Հենրի թագավորը,

Կատարինեն և Ալիսը:

ՔԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Չֆնա՞ղ Կատարինե,

Չէի՞ք կամենա կոպիտ զինվորին սովորեցնելու

Քննուչ ափրուհու լսողությանը հանելի բառեր

Եվ սեր վատելու զինվորի արտում սիրածի հանդեպ:

ԿԱՏԱՐԻՆԵ

Ձերդ մեծությունը ծաղրում է ինձ: Ես անգլեւեն խոսել չգիտեմ:

ՔԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մ. չֆնաղագեղ Կատարինե, եթե դուք ձեր ֆրանսիական սրտով հաս-
տատարեն սիրե՛ք ինձ. ես ուրախ կլինեմ, եթե այդ խոստովանությունը
լսեմ ձեր կոտրած անգլեւենով: Դուք սիրո՞ւմ եք ինձ. անգին հրեշտակ.

ԿԱՏԱՐԻՆԵ

Pardonnez-moi!, ես չգիտեմ, թե ինչ է նշանակում «անգին հրեշտակ»:

ՔԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Հրեշտակը ձեզ է նման, Կատ, և դուք նման եք հրեշտակի:

¹Ներկեցնե՛ք ինձ... (ֆրանս.):

ԿԱՏԱՐԻՆԵ

Que dit-il? que je suis semblable à les anges?²

ԱԿՍ

Oui, vraiment, sauf votre grace, ainsi dit-il.³

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այո, ես այդպես ասացի, սիրելի Կատարինե և շփտի կարմրեմ այդ խոսքը հաստատելու համար:

ԿԱՏԱՐԻՆԵ

Oh bon Dieu! Les Langues des hommes sont pleines de tromperies⁴.

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Նա ի՞նչ է ասում, գեղեցկուհի, որ տղամարդկանց լեզուն խաբուրյա՞մբ է լի:

ԱԱՍ

Oui⁵, որ տղամարդկանց լեզուն շափազանց կեղծ է: Այդ իշխանունու խոսքն է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Իշխանունին ուժեղ է անգլերենից: Հաճատացի՛ր, Կատ, որ իմ սիրաբանեղն ու Բո անգլերեն հասկանալը շատ հարմար են իրար: Ուրախ եմ, որ դու անգլերեն լավ չգիտես, այլապես կգտնեիր, որ ես շափից ավելի պարզամիտ հասարակ քաղաքում եմ: Երևի մտածեիր, որ ես վաճառել եմ իմ ագարակը, որ քաղ դնեմ: Ինձ ծանոթ չեն սիրելու ոլորապառույտ նապարհները և ուղղակի ասում եմ՝ «Ես ձեզ սիրում եմ»: Եվ երբ դու՛ ինձնից պահանջեմ, թե արդյո՞ք անկեղծ է իմ սերը, ուրեմն իմ ամբողջ նիզը իզուր անցավ: Ինձ շուտ պատասխան տվե՛ք: Չեմ-ձեռքի զարկենք այսպես և համաձայնության գանք: Ի՞նչ կասեմ, լեզի:

ԿԱՏԱՐԻՆԵ

Sauf votre honneur⁶, ես լավ հասկանաւ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Արդարև, Երբ դու՛ ստիպեի՛ք ինձ բանաստեղծություններ հյուսել կամ պարել ի սեր ձեզ, Կատ, դու՛ք ինձ կկործանեի՛ք: Ես բանաստեղծական

² Նա ի՞նչ է ասում, որ ես նման եմ հրեշտակներին (Ֆրանս.):

³ Այո՛, իսկապես, ձերդ պայծառափայլություն թույլտվությունով, նա այդպես է ասում (Ֆրանս.):

⁴ Թ՛, տե՛ր իմ աստված, տղամարդկանց լեզուները ս՛րբան կեղծ են (Ֆրանս.):

⁵ Այո՛, (Ֆրանս.):

⁶ Ձեր պատվի թույլտվությամբ... (Ֆրանս.):

խոսից և չափաբերութիւնից զուրկ մարդ էմ: Իսկ պարերի մեջ ուժեղ չեմ չափը պանելու կողմից, չնայած որ քշնամուն անվրեպ հարվածելու մեջ բավականաչափ ուժեղ էմ: Եթէ կարելի լինէր աղջկա սիրտը գերել իծաշարունկի ցատկախաղով, կամ քամբի վրա թոխչի գործելով գենն ու գրահը շալակիս, — ներեցե՛ք իմ պարծենկոտությանը, — ես արագորեն կցատկեի կնոջ գրկի մեջ: Կամ եթէ պատահէր կոփամարտի մեջ մտնել իմ ռիբեցյալի հասար կամ պատնառ լինէր սիգարշավելու ճոնյգով ի սեր նրա. ես մսագործի պէս կմարտնչեի և քամբի վրա կապկի պէս ամուսնաժամ կմնայի, որին ոչ մի կերպ չես պակի իր գտնված տեղից: Բայց, ասովա՛ծ վկա, Կատ, ես ոչ կարող եմ հոգեւանջ հառաչել, ոչ էլ պերնախոտությամբ սիրո հավատարմության հանդիսավոր ապացույց տալ: Երդի՛ել՝ ես կարող եմ, բայց միայն անհրաժեշտության դեպքում: Իսկ երբ երդվեցի՝ ստիպողականությամբ նույնիսկ անկարելի է իմ ուխտը խախտել: Եթէ դու կարող ես սիրել այդպիսի կովովածությամբ մի երիտասարդի, Կատ, որի երեսին արեւը նույնիսկ դժկամությամբ է նայում, մեկին, որ երբեք հայելի չի նայում, որ հիանա այնտեղ տեսածով. — քո աշխերն ուրեմն առաջնորդ կարգիւր քեզ: Ես քեզ հետ խոսում եմ զինվորի պարզ լեզվով: Եթէ դու կարող ես սիրել ինձ, ինչպէս որ ես կամ, ուրեմն վերցրո՛ւ ինձ, շե՛ս կարող. — Եթէ ես քեզ ասեմ, որ կմեռնեմ, այդ ստույգ է, բայց եթէ ասեմ, որ ես կմեռնեմ քո սիրո համար. — ի սեր ասածո, դրան չհավատաս: Եվ այնուհանդերձ ես քեզ սրտանց սիրում եմ: Կատ, թանկագինս, քանի ապրում ես. ամուսին վերցրու սիրո մեջ ազնիվ և կայունությամբ անխարդախ մարդու, շե՛ որ նա անհրաժեշտորեն միշտ հավատարիմ կլինի քեզ, որովհետեւ զրկված կլինի ուրիշ կանանց շուրջ պտույտ գալու շնորհից: Իսկ հոռոմախոսները, որոնք նարայիկ հանգաբանությամբ կարողանում են գերել կանանց. միշտ էլ նույնպիսի նարայկությամբ նողոպրում են նրանցից: Վա՛ն. ի՞նչ բան է շատախոսը — շաղակերատ: Ի՞նչ բան է ոտանավորը — թեթև, պարզունակ երգ գրոշի արժողությամբ: Բարեկազմ սրունքը շորանալու է. արդաձիգ մեջքը կորանալու է, սև մորուրը պեհեւ է դառնալու, գանգրահեր գլուխը նաղատանալու է, սիրուն երեսը խորշոմներով է ծածկվելու, պայծառ աշխերը աղոտանալու են և զրկվելու փայլից, բայց հավատարիմ սիրտը, Կատ, նման է արեւին և լուսնին: Ո՛չ, ավելի շուտ արեւին է նման, քան թե լուսնին, որովհետեւ շողում է պայծառ և չի փոխվում երբեք և հաստատուն, անշեղ է իր բնբացփի մեջ: Եթէ ուզում ես այդպիսի ամուսին ունենալ՝ ինձ վերցրու: Վերցրո՛ւ ինձ, վերցրո՛ւ զինվորին, զինվորին վերցրո՛ւ, վերցրո՛ւ արեւային: Ի՞նչ է քո պատասխանը իմ սիրույն: Խոսի՛ր, թանկագին իմ, և սիրալիր խոսի՛ր, խնդրում եմ:

ԿԱՏԱՐԻՆԵ

Մի՞թե կարելի բան, որ ես սիրեմ Ֆրանսիայի բշխամուն:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ո՛չ, Կատ, հնարավոր բան չէ, որ դու Ֆրանսիայի բշխամուն սիրես: Բայց ինձ սիրելով դու սիրած կլինես Ֆրանսիայի բարեկամին: Չէ՞ որ ես այնպես եմ սիրում Ֆրանսիան, որ չեմ ուզում անջատվել նրա մի գյուղակից նույնիսկ: Ես ուզում եմ, որ նա ամբողջապես իմը լինի: Իսկ երբ Ֆրանսիան իմն է և ես էլ բռնը, ուրեմն Ֆրանսիան բռնը կլինի, իսկ դու էլ իմը:

ԿԱՏԱՐԻՆԵ

Ես չեմ կարող հասկանամ, թե դա ինչ բան:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Չե՞ս հասկանում, Կատ: Ուրեմն ֆրանսերեն բացատրեմ քեզ, քեկ գիտեմ, որ ֆրանսերեն բառերը իմ լեզվից կախ են ընկնում. ինչպես նորահարսը իր ամուսնու պարանոցից, որ մեծ դժվարությամբ է պոկ գալիս: Je quand le possession de France, et quand vous avez le possession de moi... տեսնեմ. կկարողանա՞մ շարունակել.—օգնության փութացիր ինձ, սո՛ւրբ Դենիս.—donc votre est France, et vous êtes mienne.⁷ Թագավորությունն նվանելը, Կատ, ավելի հեշտ է ինձ համար, քան այսֆան երկար ֆրանսերեն խոսելը: Ես քեզ այլևս չեմ համոզի ֆրանսերենով, որ վրաս ծիծաղելու առիթ չտամ:

ԿԱՏԱՐԻՆԵ

Sauf votre honneur, le Français que vous parlez, il est meilleur que l'Anglais lequede je parle.⁸

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ո՛չ, հավատացի՛ր ինձ. այդպես չէ, Կատ: Ոչ իմ լեզվով քո խոսելն է մի բանի նման, ոչ էլ քո լեզվով իմ խոսելը: Բայց այսֆան անգլերենը կհասկանաս անշուշտ. կարո՞ղ ես ինձ սիրել:

ԿԱՏԱՐԻՆԵ

Ես դա չեմ կարող ասել քո լեզվով:

⁷ Երբ ես սիրեմ Ֆրանսիան, իսկ դուք ինձ... այդ ժամանակ Ֆրանսիան ձերը կլինի, իսկ դուք էլ իմը (ֆրանս.):

⁸ Չերդ մեծապատվությունը թող թույլ տա ինձ ասել, որ ձեր իմացած ֆրանսերենը իմ անգլիերենից ավելի լավ է (ֆրանս.):

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Իսկ որևէ մեկը քո մտերիմներից չի՞ կարող ասել, Կատ: Ես նրանց կհարցնեմ: Քայց վերջացնենք: Ես գիտեմ, որ դու սիրում ես ինձ և այս երեկո ննջարանդ մտնելիս կսկսես հարցեր տալ այս ընկերումուդ իմ մասին և ես գիտեմ, Կատ, որ դու կպարսավես հաակապես այնպիսի բաներ, որ քեզ ամենից շատ են դուր գալիս իմ մեջ: Քայց, սիրելի Կատ, բարեգո՛ւր եղի՛ր իմ հանդեպ, մանավանդ նրա համար, գեղեցիկ իշխանուհի, որովհետև ես քեզ անշափելի եմ սիրում: Եթե երբևիցե դու իմը լինես, Կատ, — իսկ ևս խնայված մի հավատք ունեմ իմ մեջ, որ ինձ հուշում է, թե այդպես կլինի, — ստացվում է, որ ես քեզ պայքարով եմ վերցնում և դու պիտի անպայմանորեն մայր դառնաս հիանալի գինվորների: Ես և դու սուրբ Գեներիսի և սուրբ Գևորգի միջև շքազարվե՞նք առդյոք, ստեղծելով մի արու գավակ կես-Ֆրանսիացի, կես-անգլիացի, որ գնա Կոստանդնուպոլիս և ամուր բռնի բարբի սուլթանի մարտից: Չանե՞նք: Քո կարծիքն ի՞նչ է, ո՞վ սպիտակ շուշան է չ՛հեղափոխել:

ԿԱՏԱՐԻՆԵ

Չգիտեմ, թե դա ինչ բան:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Դե, իհարկե, թե դա ինչ բան է՝ հետո կիմանաս: Իսկ այժմ միայն խոստացիր: Խոստացի՛ր, Կատ, որ դու քո Ֆրանսիական կողմից նիզ կբափես այդպիսի մի արու գավակի համար: Իսկ իմ անգլիական կեսի համար ես լրիվ հոգ կտանեմ, թագավորի և ամուրի տղամարդու խոսք եմ տալիս քեզ: Չե՛ր պատասխանը ի՞նչ է la plus belle Katharine du monde, mon très cher et divine déesse.⁹

ԿԱՏԱՐԻՆԵ

Չե՛ր majesté բավականաչափ գիտե Ֆրանսիական ձևի fausse, որ պեսզի խաբի ամենա sage demoiselle, որ կա en France¹⁰.

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Կորչի՛ իմ կուրած Ֆրանսերենը: Եղվում եմ պատվիս վրա իսկական անգլերենով, ես սիրում եմ քեզ, Կատ, թեպետ չեմ համարձակվում նույնպիսի պատվով երգվել, թե դու սիրում ես ինձ: Եվ այնուհանդերձ իմ արյունը սկսում է շողափորել ինձ, որ ես սիրելի եմ քեզ, չնայելով իմ կերպարանի ողորմելի և անհրապույժ ապավորության: Գրույր տանի

⁹ Չքննադատվելը աշխարհի բոլոր Կատարիներներից, իմ անգին ու աստվածային գիցուհի (Ֆրանս.):

¹⁰ Չե՛րդ մեծափառությունը բավականաչափ գիտի Ֆրանսիական ձևի կեղծիք և երկերի-սանություն, որպեսզի խաբի Ֆրանսիացի ամենասողջամիտ օրիորդին:

իմ հոր փառասիրությունը: Եւ ինձ սաղմնավորելիս երկայտակազական պատերազմների մասին է մտածել: Ահա թե ինչու ես ծնվել եմ այնպիսի խոժոռ, անհրապույր արտափինով, երկաթյա դեմքով, որ երբ մոտենում եմ կանանց սիրաբանելու՝ վախեցնում եմ նրանց: Բայց, ազնիվ խոսք. Կատ, ինչքան ես մեծանամ, այնքան ավելի դուրեկան կդառնամ: Ինձ մի բան է մխիթարում, որ ծերությունը, այդ հոռի մթերողը զեղեցկության, անգոր կլիների այլևս ավերմունք գործել իմ երեսի վրա: Ինձ այժմ վերցնելով, դու ինձ վերցրած կլինես իմ վատբարագույն տեսի մեջ և եթե կարողանաս ինձ հանդուրժել այժմ, հետագայում այդ բեռը ավելի ու ավելի թեթև կդառնա: Հետևաբար, ասա՛ ինձ, հրաշագեղ Կատարինե, համաձա՞յն ես վերցնել ինձ: Դեռ նետիր քո կուսական ամոթխածությունը և քո սրտի խորհուրդը հաստատիր թագուհու հայացքով: Բռնի՛ր իմ ձեռքը և ասա՛ «Անգլիո շարի, ես քոնն եմ»: Դու նույնիսկ չես հասցնի ինձ երջանկացնել այդ խոսքով, երբ ես բարձրածայն կկոչեմ. «Անգլիան քո՛նն է, Իոլանդիան քո՛նն է, Ֆրանսիան քո՛նն է. և Հենրի Պլանտագենետար քոնն է»: Եվ երե նա,—ես այդ բանը նրա երեսին եմ ասում,—աշխարհի լավագույն թագավորը չէ, համենայն դեպս լավագույն արքան է իր հպատակների համար: Դե՛, պատասխանի՛ր ինձ քո անդաշնակ նվագով—որովհետև եթե քո անգլերեն լեզուն անհաջող է, քո ձայնը, սակայն, երաժշտություն է: Հետևաբար, Կատարինե, թագուհի՛ համայն աշխարհի, հայտնի՛ր ինձ քո միտքը կոտրած անգլերենով, համաձա՞յն ես վերցնել ինձ:

ԿԱՏԱՐԻՆԵ

Այո՛, եթե դա հանելի կլինի de roy mon père...¹¹

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այդ նրան շատ հանելի կլինի, Կատ, նա դրա համար ուրախ կլինի, Կատ:

ԿԱՏԱՐԻՆԵ

Ուրեմն՝ ինձ հանելի նույնպես:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Դրա համար ես համբուրում եմ ձեռքդ և քեզ կոչում եմ իմ թագուհի:

ԿԱՏԱՐԻՆԵ

Laissez. mon seigneur, laissez! Ma foi, je ne veux point que vous abaissiez votre grandeur en baisant la main d'une de votre

¹¹ Թագավորին, իմ հորը (ֆրանս.):

neurie indigne serviteur; excusez moi, je vous supplie, mon très puissant seigneur.¹²

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այդ դեպքում ես կհամբուրեմ քո շուրթերը, Կատ:

ԿԱՏԱՐԻՆԵ

Les dames et demoiselles pour être baisées devant leur nocés, il n'est pas la coutume de France.¹³

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Տիկին բարգժանչունի, բացատրի՛ր, թե ինչ է ասում:

ԱԼԻՍ

Որ բնդունված սովորությունն չէ Ֆրանսիայի տիկնանց համար... չգիտեմ՝ անգլերենն ինչպես կասեն baiser.

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Համբուրել:

ԱԼԻՍ

Ձերդ գերազանցությունը entendre ավելի լավ que moi¹⁴.

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ֆրանսիացի տիկիկները սովորությունն չունեն համբուրվել ամուսնությունից առաջ. — նա ա՛յդ էր ուզում ասել:

ԱԼԻՍ

Oui, vraiment.¹⁵

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օ՛, Կատ, հոռի սովորությունները խոնարհվում են մեծ բազավորների առաջ: Թանկագին Կատ, դու և ես չենք կարող փակվել տեղական սովորությունների տկար ցանկապատի ետևում: Սովորություններ ստեղծողները մենք ենք, Կատ, և ազատությունը, որից մենք լիովին օգտվում ենք մեր գրաված դիրքի զորությամբ, փակում է բոլոր վատաբանողների բե-

¹² Հարկավոր չէ, արքա, հարկավոր չէ, հարկավոր չէ: Իսկապես, ես չեմ ուզում, որ դուք ձեր մեծությունը նվաստացնեք ձեր անարժան աղախնի ձեռքը համբուրելով: Արձակե՛ք ինձ. ինչդրում եմ ձեզ, մեծ թագավոր (Ֆրանս.):

¹³ Սովորությունն չէ, որ Ֆրանսիայի տիկիկներն ու օրիորդները թույլատրեն համբուրել իրենց՝ ամուսնությունից առաջ (Ֆրանս.):

¹⁴ Ձերդ գերազանցությունը ավելի լավ է հասկանում, քան թե ես (Ֆրանս.):

¹⁵ Այո՛, իսկապես (Ֆրանս.):

բանները ճիշտ այնպես, ինչպես ես եմ այժմ փակում ձեր բերանը նրա համար, որ դուք ձեր երկրի դժվարահան սովորություններին կառչելով՝ մերժում եք իմ համբույրը: Ուրեմն, համբերությամբ անձնատուր եղեք (*համբուրում է նրան*): Ձեր շուրթերի մեջ կախարդական ուժ կա, Կատ: Նրանց ֆաղցրաբույր հպանձում ավելի շատ պերճախոսություն կա, քան Ֆրանսիայի պետական խորհրդի բոլոր լեզուների մեջ: Եվ նրանք ավելի շուտ կհամոզեն Անգլիո Հարիին, քան թե աշխարհի բոլոր միապետների ընդհանուր աղերսագիրը: Ձեր հայրն է գալիս:

Մտնում են Ֆրանսիո թագավորը և թագուհին, դուստրուհուհին,
Բեդֆորդը, Գլուստերը, Էսեքսերը, Վեստմոլենդը, Վորվիկը և այլն:

ԲՈՒՐԳՈՒՆԳԻ

Աստված պահապան ձերդ մեծափառությանը, իմ արքայական զարմիկ: Դուք անգլիերեն եք սովորեցնում մեր իշխանուհուն:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ես կուզենայի, որ նա սովորեր, իմ բարի զարմիկ, թե ես ինչքան ուժգնորեն եմ սիրում իրեն, — իսկ դա անթերի անգլիերեն է:

ԲՈՒՐԳՈՒՆԳԻ

Նա ընդունա՞կ չէ միթե:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մեր լեզուն կոշտ է, զարմիկ և իմ վիճակն էլ դյուրին չէ. և քանի որ ոչ շողոփորթի ձայն ունեմ և ոչ էլ շողոփորթի սիրտ, ուստի անգոր եմ նրա մեջ սիրո ոգին արթնացնել իր նշմարիտ տեսնով:

ԲՈՒՐԳՈՒՆԳԻ

Ներեցեք իմ հրեմանքի անկեղծությանը, եթե ինքս պատասխանեմ ձեզ այդ առթիվ: Եթե դուք ուզում եք իշխանուհուն ենթարկել դյուրանքի, ապա դուք պարտավոր եք նրան շրջագծի մեջ առնել և սիրո ոգին իրական տեսնով կկանգնի նրա առաջ՝ մերկ և կույր: Կարո՞ղ եք դուք կշտամբել մի օրիորդի, որի այտերին վառվում է ամոթխածության կուսական կարմրությունը, եթե նա մերժում է իր թափանցող և անպաշտպան սրտի մեջ ընդունել մի մերկ, կույր տղայի: Աղջկան դժվար է ենթարկվել այդպիսի պահանջի, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Եվ, այնուամենայնիվ, աղջիկները ենթարկվում են, աչքերը զոցելով, երբ կույր սերը նրանց բռնադատում է:

ՔՈՒՐԳՈՒՆԴԻ

Այդպիսի դեպքերում նրանք ներվում են, արքա, քանի որ իրենց կատարածը չեն տեսնում:

ՔԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ուրեմն, իմ բարի դուստ, հորդորեցե՛ք ձեր զարմունքն, որ համաձայնի աշխարհը գոցել:

ՔՈՒՐԳՈՒՆԴԻ

Ես աշխով կանեմ նրան, որ համաձայնի, տեր իմ, եթե միայն դուք կարողանաք բացատրել նրան իմ դիտավորությունը: Չէ՞ որ այն աղջիկները, որ ամառները լավ խնամված և տաք պահված են, նման են բարթուղի-մեռույթի խնջույթի նաններին: Նրանք կույր են, չնայած աշխարհ իրենց տեղումն են: Նրանց այդ ժամանակ կարելի է ձեռքերով որսալ, թեպետ առաջներում թույլ շեյն տալիս նույնիսկ մի հայացք նետել իրենց վրա:

ՔԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Եզրակացությունը պարզ է. ես տիտի իմ հույսը դնեմ ժամանակի և շոգ ամառվա վրա և, ի վերջո, նաննի պես բռնեմ ձեր զարմունքն, երբ նա էլ կուրացած լինի:

ՔՈՒՐԳՈՒՆԴԻ

Ինչպես սերն է կույր, արքա, սիրելուց առաջ:

ՔԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ճշմարիտ է և ոմանք ձեզանից կարող են շնորհակալ լինել սիրուց իմ կուրության համար. չէ՞ որ ես չեմ տեսնում ֆրանսիական շատ գեղեցիկ ֆաղափներ մի ֆրանսիացի հրաշագեղ կույսի պատճառով, որ փակել է իմ նանապարհը:

ՔԱԳԱՎՈՐ ՅՐԱՆՍԻՈ

Ո՛չ, արքա, դուք այդ ֆաղափները տեսնում եք, սակայն ինչպես ծուռ հայելու մեջ. նրանք բնորոնել են աղջկա կերպարանք, որովհետև ամբողջապես շրջափակված են կուսական պարիսպներով, որոնց միջով դեռ երբեք պատերազմ մուտք չի գործել:

ՔԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Կատարիսեն ինձ կին կլինի՞:

ՔԱԳԱՎՈՐ ՅՐԱՆՍԻՈ

Այո, եթե ցանկանում եք:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ես շատ ուրախ եմ: Այդ դեպքում կուսական փաղափները, որոնց մասին դուք խոսում եք, բող նաժիշտներ դառնան նրա համար և օրհորդը, որ խոչընդոտ էր իմ ցանկության նանապարհին, այժմ ինձ ցույց կտա նանապարհն իմ կամքի:

ԹԱԳԱՎՈՐ ՅՐԱՆՍԻՈ

Ձեր պահանջները մենք բնդունեցինք
Քանականության բոլոր կետերում:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Իրա՞վ այդպես է. Անգլիո լորդեր:

ՎԵՍՏՄՈՌԱՆԵՂ

Արքան մեր բոլոր ցանկություններին համաձայն եղավ.
Նախ իր աղջկան համաձայնեց տալ, իսկ հաջորդաբար
Բնդունեց նաև բոլոր կետերը, որ նշված էին:

ԷՔՍԵՏԵՐ

Նա մի կետի դեմ առարկեց միայն, որ դեռ չի ստորագրել:
Այդ այն հոդվածն է, որով ձեր մեծափառությունը պահանջում է, որ
Ֆրանսիայի թագավորը ձեզ ուղղված բոլոր գրավոր դիմումների մեջ,
ինչ առիթով էլ դրանք լինեն, ձերդ մեծությունը կոչի այս տիտղոսով և
այս հավելմամբ ֆրանսերենով՝ „Notre très cher fils Henri Roi
d'Angleterre. Héritier de France“, իսկ լատիներենով՝ „Prae c laris-
simus filius noster Henricus, Rex Angliae, et Haeres Franciae“.¹⁶

ԹԱԳԱՎՈՐ ՅՐԱՆՍԻՈ

Ես այդ կետն, եղբայր, լրիվ շմերժեցի.
Քայց ձեր խնդրանքը կատարի գիջել:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ես ձեզ խնդրում եմ իբրև անկեղծ սիրո և դաշինքի նշան,
Որ այդ մի կետն էլ լրիվ բնդունեք մյուսների շարքում
Եվ ձեր դատերը ինձ կին տաք նույնպես:

ԹԱԳԱՎՈՐ ՅՐԱՆՍԻՈ

Վերցրեք նրան, որդիս,
Եվ ձեր երկուսի արյան խառնուրդից բող ծագի սերունդ

¹⁶ Մեր ամենաթանկագին սրբի Հենրի, Թագավոր Անգլիո և ժառանգ Ֆրանսիայի (Ֆրանս.):

Որ գուցե վերջ տա
 Երկու ռազմաշունչ թագավորության հիմնավորց յխին,
 Մեր Ֆրանսիայի և ձեր Անգլիո,
 Որոնց ավերք իրար նայելիս դժգունանում են
 Մեկը մյուսի բախտավորության անհուն նախաճիգ:
 Թող ձեր շաղկապն այս նրանց սրախ մեջ
 Սերմանի բարի հառնաճուրսն,
 Սեր և հաշտություն փրկատունեական,
 Եվ պատերազմը երբեք չշարժի
 Իր արնոտ սուրբ թող այսունետև
 Չֆնաղ Ֆրանսիո և Անգլիո միջև:

ԲՈՂՈՐԸ ՄԻԱՍԻՆ

Ամե՛ն:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Բարի՛ ողջույն, Կատ: Ի տես ամենֆի՛
 Համբուրում եմ քեզ իբրև թագունու:

Շեփորներ:

ԻԶԱՅԵԼ

Աստվածն իմաստուն և կերտողն արդար
 Ամենայն թագի և ամուսնության
 Թող ձեր սրտերը և երկրները
 Մի միասնական սիրով շաղկապի:
 Ինչպես այլ և կին, — որոնք երկուս են, — ձուլվում են սիրով,
 Այդպես թող ձուլվեն իբրև գույզ ամուլ
 Երկու կողակից թագավորություն:
 Ոչ մի գժտություն և բիրտ, վայրագ խանդ,
 Որ վրդովում է հանախ մանինը երջանիկ գույզի,
 Թող շմխրնալի երբեք այս երկու
 Թագավորության դաշինքի միջև,
 Նրանց ամրակուս միասնությունը կազմալուծելով:
 Որ ֆրանսիացիք անգլիացոց հետ միշտ ապրեն անլեն
 Եվ աստվածն ուրախ բարբառի «ամե՛ն»:

ԲՈՂՈՐԸ ՄԻԱՍԻՆ

Ամե՛ն:

ՔԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մենք կպատրաստվենք մեր հարսանիքին: Դուք, Բուրգունդի դուքս,
Հարսանյաց օրը պիտի երգվեք ինձ,
Իշխանները նույնպես՝ իբրև երաշխիք մեր այս դաշինքին:
Ապա ես կերգվեմ Կատարինեին,
Նա էլ ինձ կտա հավատարմության երգում ձեր առաջ,
Եվ թող մեր ուխտը միշտ անխախտ լինի, հավետ բարգավան:

Փողահարություն:

Գևում է:

Վ Ե Ր Ջ Ե Ր Գ Ա Կ

Մտնում է թեմի խոսնակը:

ԲԵՄԻ ԽՈՍՆԱԿ

Արդ, խոնարհափայլ հեղինակը մեր կոշտ, տկար գրչով
Յուր պատմությունը հետապնդելով այս կետին բերեց,
Մեծ, գորեղ մարդկանց սեղմած շարժելով նեղ բեմի միջով
Եվ նրանց փառքից ընդմիջումներով շատ բան կրհասեց:
Այս աստղն Անգլիո ուժգնորեն փայլեց, բայց շատ կարև, ավա՛ղ,
Բախտը հատու սուր շնորհեց նրան և նա այդ սրով
Համայն աշխարհի պարտեզին տիրեց ամենաչֆնաղ
Եվ այդ պարտեզը իր մանուկ որդուն կտակեց սիրով:
Հենրի Վեցերորդ. սա թագադրվեց դեռ բարուրի մեջ
Ֆրանսիո երկրի և Անգլիայի դաշինքով ծնված,
Այդ գահի համար մարդիկ մղեցին պատերազմներ մեծ
Եվ իրենց մեղքով կորցրին Ֆրանսիան. Անգլիան ողբաց:
Այդ դեպքերը մենք բազմիցս բեմում ներկայացրել ենք,
Դուք այս անգամ էլ ողորմաժաբար մեզ ընդունեցեք:

Գևում է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԻՉԱՐԴ ԵՐԿՐՈՐԴ թարգմ. Խ. Դաշտենց

ՀԵՆՐԻ ՉՈՐՐՈՐԴ, ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ թարգմ. Խ. Դաշտենց

ՀԵՆՐԻ ՉՈՐՐՈՐԴ, ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ թարգմ. Խ. Դաշտենց

ՀԵՆՐԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ թարգմ. Խ. Դաշտենց

ՇԵՔՍՊԻՐ
ՊԵԿՏՈՐ
Ք Ր Ո Ն Ի Կ Ն Ե Ր

1

Հրատ. խմբագիր Ս. Ա. ԱՆՍՏՈՍՅԱՆ
Նկարչ. ձևավորումը՝ Լ. Ա. ՍԱԴՈՅԱՆԻ
Տեխ. խմբագիր Ս. Ա. ԿՈՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ Ա. Վ. ՀՈՎԱԿԻՍՅԱՆ

Պատվեր 577 ԽՀՆ 1402 Հրատ. 3564 Տպաքանակ 10000
Մեծնված է արտադրության 12/V 1971 թ., ստորադրված է տպագրության
8/IX 1972 թ., տպագր. 33.5 մամուլ + 9 ներդիր, հրատ. 31.3 մամուլ,
պայման: 39.2 մամուլ, բուդժ № 1, 70X90¹/₁₆: Գինը 2 օ. 65 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Էջմիածնի տպարան

Նկատումս վրիպակներ և ուղղումներ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
15	17վ.	պարտ չէր	պարզ չէր
38	11վ.	որդիներին	իր որդիներին
40	8վ.	հերիտաներին	հետիոտ զորքին
40	14ն.	այտերն իր	այտերն իմ
56	7ն.	վարկարեկում է	վարկարեկվում է
60	6վ.	դժվարությամբ ես	դժվարությամբ եմ
79	7ն.	Ֆայտոնի պես	Ֆահտոնի պես
92	2վ.	բամբեր իմ	բամբեր եմ
117	4ն.	Pardonez moi	Pardonnez-moi
134	2վ.	տիկնոջ կուրծքը	տիրոջ կուրծքը
203	10վ.	հորդորում է	հորդում է
299	9վ.	Մարտիրոսի	Մարտինոսի
382	13վ.	մեզանչացած	մեզանչած
423	6ն.	quondam	quondam
442	17վ.	սրվեց	սրրվեց
451	11վ.	j'oublié	j'oublié
452	4վ.	j'Anglois	l'Anglois
452	17ն.	écoutez	écoutez
454	7վ.	Seigneur	Seigneur
454	17վ.	allons nous	allons-nous
455	17ն.	batailles!	batailles!
466	6ն.	an boublier	au boublier
483	18ն.	արշավանքով	արշատանքով
485	13վ.	Païr	l'air
494	9ն.	O pardonne: moi!	O pardonnez -moi!
496	4վ.	cent	cents
496	13ն.	qenoux	genoux
496	11ն.	trés	très
496	12ն.	je suistombé	je suis tombé
497	6վ.	capitane	capitaine
524	9վ.	Les Langues. . trom peries	Les langues... tromperies
526	11ն.	lequele	lequel
527	14ն.	cher	chère
528	12ն.	père	père
529	1վ.	neurle	Seigneurie
532	13ն.	Prae c larissimus	Præclarissimus
532	12ն.	Angliae, et Haeres Franciae	Anglitcæ et Hæres Franciæ

LIBRARY

